ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

6

ИНОЯЗЫЧНЫЕ ИСТОЧНИКИ ОБ АРМЕНИИ И АРМЯНАХ

ՀՍՍՀ
Ա.ԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ


ВИЗАНТИЙСКИЕ ИСТОЧНИКИ

II

КОНСТАНТИН ПОРФИРОРОДНЫЙ

ПЕРЕВОД С ОРИГИНАЛА,
ПРЕДИСЛОВИЕ И ПРИМЕЧАНИЯ
Р. М. БАРТИКЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1970


ՎՂՆԴԻՎԱՅԻՆ ԾՈՒՀ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՂԱԶԱՔՈՂՈՎԿԱՅԻՆ
ՂԱԶԱՔՈՏՈՒՍԿԱ
Ի
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՂԱԶԱԽՏՂՈՇՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1970

Գրքում տրվում են բյուզանդական հայազգի կայսր Կոստանդին VII Ծիրանածինի աշխատություններից՝ Հայաստանին և հայերին վերաբերող բաժինների, նույն հեղինակի գրչին պատկանող Մակեդոնական հարստության հիմնադիր՝ հայազգի Վասիլ I կայսեր ընդարձակ կենսագրության, ինչպես և Քրիստոսի «Անձեռագործ պատկերի» մասին երկի ամբողջական թարգմանությունները:

Նշված աշխատությունները անգնահատելի արժեք են ներկայացնում IX և X դարի առաջին կեսի հայոց պատմության, հայ-բյուզանդական հարաբերությունների, հայերի՝ Բյուզանդիայում խաղացած դերի ուսումնասիրության համար:

Գիրքն ունի ընդարձակ առաջաբան և մանրամասն ծանոթագրություններ:

ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ս. ԵՐԵՄՅԱՆ (գլխավոր խմբագիր),
Ա. ՂԱՐԻԲՅԱՆ, Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Լ. ԽԱՉԻԿՅԱՆ,
Հ. ԻՆՃԻԿՅԱՆ, Գ. ՍԱՐԳՍՅԱՆ (գլխավոր խմբագրի տեղակալ), Հ. ՓԱՓԱԶՅԱՆ,
Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ (գիտական քարտուղար)

Հատորի խմբագիր

Ս. Մ. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

1—6—4

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԾԻՐԱՆԱԾԻՆԸ ԵՎ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

867 թ. սեպտեմբերի 23-ին, գիշերվա երրորդ ժամին, Կոստանդնուպոլսի սբ. Մամասի պալատում տեղի ունեցավ մի զարհուրելի ոճրագործություն։ Հայազգի Վասիլը իր համախոհների օգնությամբ սրախողխող արեց հարբած վիճակում գտնվող Միքայել III կայսեր, Ամորիական հարստության վերջին ներկայացուցչին։ Միքայելն այն ժամանակ ընդամենը 28 տարեկան էր։ Բյուզանդական կայսրության գահը բարձրացավ Վասիլը, հիմնադիրը դառնալով Մակեդոնական կոչված հարստության, որի օրոք Բյուզանդական կայսրությունը հասավ իր հզորության գագաթնակետին։ Կայսրության գայիսոնը այդ հարստության ձեռքում մնաց ամբողջ 190 տարի։

Հայազգի անձնավորության բյուզանդական գահին տիրանալը պատահական երևույթ չէր։ Դա դեպքերի բնականոն զարգացման արդյունքն էր, դեպքեր, որոնք սկսեցին զարգանալ դրանից բազում դարեր առաջ։ Հայաստանի անկախության վերացումից հետո, հայազգի գործիչները ստիպված էին ծառայության մեջ մտնել Պարսկաստանում և Բյուզանդիայում իրենց հայրենիքը երկու մասի բաժանած ախոյանների մոտ։ Հայերը Պարսկաստան և Բյուզանդիա էին դիմում նաև որպես քաղաքական ապաստան հայցողներ։ Բյուզանդիայի տիրապետությունից փախչողները ապաստան էին խնդրում Պարսկաստանում, իսկ պարսկական տիրապետությունից փախչողները՝ Կոստանդնուպոլսում։ Միայն Պրոկոպիոս Կեսարացին հիշատակում է երկու տասնյակ հայ զորավարների անուններ, որոնք իրենց սխրագործություններով աչքի ընկան Բյուզանդական կայսրության թշնամիների դեմ մղված մարտերում։ Նրանց մեծ մասը պարսկական տիրապետությունից Բյուզանդիա անցած փախստականներն էին։


571 թ. ապստամբության ճնշումից հետո բազմաթիվ հայ գործիչներ Կարմիր Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ ան-

ցան Բյուզանդիա և Պերգամոնում հիմնադրեցին հայկական ամենավաղ գաղութներից մեկը Բյուզանդիայում[1]։

Հերակլիոս կայսեր թագավորության ժամանակ (610—641), հայազգի Մանվելը եգիպտոսի praefectus augustalis էր։ Հայազգի բազմաթիվ այլ զինվորականներ ծառայել են նույն կայսեր զորքերում։ Նրանցից մեկը, Վահանը, իր գլխավորած զորքերի կողմից նույնիսկ կայսր հռչակվեց Յարմուկի ճակատամարտի (636) նախօրյակին։ Հայ իշխաններն արդեն սկսում են կարևոր դեր խաղալ կայսեր արքունիքում։ Նրանք նույնիսկ փորձ են անում Հերակլիոսին տապալելու։ Հայազգի Վալենտին Արշակունին էր, որ 641 թ., Հերակլիոսի մահից հետո, նպաստեց, որ գահին

---

[1] Հենց այս գաղութից էր 711—713 թթ. բյուզանդական գահին տիրացած Փիլիպիկոս Վարդանը։ Այս գաղութի մասին մանրամասն տե՛ս *H. Gelzer*, Pergamon unter Byzantinern und Osmanen, Abhandlungen der Koniglich Preussischen Akademie der Wissenschaften, Berlin, 1903։ (Հ. Գելցերի սույն երկի հայերին վերաբերող նյութի հայերեն թարգմանությունը՝ «Հայ հասարակությունն ի Պերգամոն և Պերգամացին կայսերական գահի վրա» վերնագրով տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1907, № 8. սյուն. 225—228)։ Հայերի գործունեության մասին Բյուզանդիայում և հայ-բյուզանդական հարաբերությունների մասին ընդհանրապես կարելի է նշել. *Ф. И. Успенский*, Патриарх Иоанн VII Грамматик и Русь-дромиты у Симеона Магистра, Журнал Министерства Народного Просвещения, т. 267, 1890, № 1։ Կ. Տեր-Սահակյան. Հայ կայսերք Բյուզանդիոնի, հատ. Ա-Բ, Վենետիկ, 1905։ Նույնի. Հայազգի անծանոթ մնացած հեղինակներ։ Հայերը բյուզանդական գրականության մեջ, «Բազմավէպ», 1906, էջ 53—56։ Նույնի, Հայերը բյուզանդական մատենագրության մեջ, «Բազմավէպ», 1908, էջ 385—392, 433—440, 481—486, 545—550, 1911, էջ 16—23։ Նույնի, Վարդ Հայկազն, «Բազմավէպ», 1911, էջ 375—380։ Նույնի, Un document arménien de la généalogie de Basile Ier, Byzantinische Zeitschrift, Bd. XX, 1911, p. 165—176; *F. W. Bussell*, The Roman Empire, vol. II, London, 1910, p. 333—483; *J. Laurent*, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris, 1919; *H. Grégoire*, An Armenian Dynasty on the Byzantine Throne, Armenian Quarterly, 1 (1946), p. 4—21. Ն. Ադոնց, Արտավան Արշակունի, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948։ Նույնի, Վարդ Մամիկոնյան (856—866), նույն տեղում։ Նույնի, Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա, նույն տեղում։ Նույնի, Վասիլ Հայդն (Մեծագործ կայսր (867—886), նույն տեղում։ Նույնի Армения в эпоху Юстиниана, С.-Петербург, 1908; Նույնի, La Bible Arménienne et sa portée historique, In „Celebration solennelle du quinzième centenaire de la traduction arménienne de la Bible", Paris, 1938; Նույնի, Role of the Armenians in Byzantine Science, „The Armenian Review, 3, № 3, 1950. p. 55—73; Ն. Ադոնցը այս նյութի շուրջ ֆրանսերեն մի շարք արժեքավոր հոդվածներ ունի, հրատարակված եվրոպական այլևայլ հանդեսներում, որոնք





Քրիստոսը թագադրում է Կոստանդին VII Միրանածինին
(Մանրամասնությունները տե՛ս էջ XXVIII, ծան. 1)

տիրանա Կոստանդ II-ը։ Վալենտինն ի վերջո որոշում է ինքը կայսր դառնալ, բայց անհաջողության մատնվելով մահապատժի է ենթարկվում։ Կոստանդ II-ի մահից հետո հայազգի Մժեժ Գնունին (Միզիզիոս) իր զորքերի կողմից կայսր հռչակվեց։

Արաբական տիրապետության ժամանակ հայոց գաղթը դեպի Բյուզանդիա ավելի մեծ ծավալ ստացավ, հատկապես երբ սոցիալական ճնշման հետ միաժամանակ սկսվեց կրոնական հալածանքը։ Եթե սկզբում հայ նախարարները, ազնվականությունն ու զինվորականությունն էր գաղթում Բյուզանդիա, ապա VII—VIII դարերում աշխատավորությունը զանգվածորեն դիմում էր այնտեղ, արաբական սարսափներից փրկվելու համար։ Գաղթա-

---

վերջերս լույս տեսան Լիսաբոնում առանձին գրքով։ Տե՛ս N. Adontz, Études Arméno-Byzantines, Lisbonne, 1965; *S. Der-Nersessian*, Armenia and the Byzantine Empire, Cambridge, 1945; Idem, Armenia in the Tenth and Eleventh Centuries, In The Proceedings of the XIIIth International Congress of Byzantine Studies, London-New York-Toronto, 1967, p. 427—431։ *R. Grousset*, Histoire de l'Arménie, des origines à 1071, Paris, 1947։ *P. Charanis*, The Armenians in the Byzantine Empire, Lisboa, 1963։ *(Ունի հայերեն թարգմանություն. Դոկտ.* Պ. Խարանիս, *Հայերը Բյուզանդական կայսրության մեջ, թարգմանեց* Հայկ Պերպերյան, *Վիեննա, 1966)։* Idem, A note on the ethnic origin of the emperor Maurice, Byzantion, t. 35 (1965), p. 412—417; *(Սույն հոդվածի հայերեն թարգմանությունն իրականացրել է բանասեր Հ. Պերպերյանը. «Մավրիկ կայսեր ազգային ծագումին մասին»։ Տե՛ս Խարանիսի «Հայերը Բյուզանդական կայսրության մեջ» աշխատության հավելվածում, էջ 126—136)։ Е. Э. Липшиц*, Византийский ученый Лев Математик, Византийский Временник, т. II, 1949, стр. 106—149; Վ. Կ. Իսկանյան, *Հայ-բյուզանդական քաղաքական հարաբերությունների պատմությունից (10—11-րդ դդ.), Երևանի Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու, 6, 1957, էջ 97—156։* Ա. Գ. Աբրահամյան, *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հատ. Ա, Երևան, 1964։ C. Toumanoff*, Studies in Christian Caucasian History, Georgetown, 1965; Idem, Armenia and Georgia, In The Cambridge Madiaeval History, vol. IV, The Byzantine Empire, Part 1, Byzantium and its neighbours, Cambridge, 1966, p. 593—637; Idem, The Background to Mantzikert, In the Proceedings of the XIIIth International Congress of Byzantine Studies, London-New York-Toronto, 1967, p. 411—426. *P. Speck*, Γραικία und 'Αρμενία. Das Tätigkeitsfeld eines nicht identifizierten Strategen im frühen 9 Jahrshundert, Jahrb. Österr. Byz. Ges., Bd. 16 (1967), S. 71—91; *(Գարեգին Հովսեփյանը մի դեկուցում է կարդացել «Հայոց դերը Բյուզանդական կայսրության մեջ» թեմայով (տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1939, էջ 269), բայց մեզ հայտնի չէ հրատարակվել է այն, թե ոչ։*

Ֆանների մեծ մասը հաստատվում է պատմական Փոքր Հայքում և հայացնում այն զուտ հայկական շրջանները, որոնք հռոմեական և բյուզանդական բազմադարյան տիրապետության ժամանակ սկսել էին հունանալ։ Կոստանդին Ծիրանածինի ժամանակ արդեն բացարձակապես հայացել էին Արմենիակների, Սեբաստիա, Խարսիանոն, Կոլոնիա, Խաղտիք, Լիկանդոս բանակաթեմերը։ Ծիրանածինը դրանք «Հայկական բանակաթեմեր» (Ἀρμενιακὰ θέματα) է անվանում, տարբերելով «Հռոմեական բանակաթեմերից»։

752 թ. հայերի հոծ զանգվածներ Մելիտենից և Թեոդոսուպոլսից գաղթեցվում են նաև Թրակիա և Մակեդոնիա, որտեղ հիմնադրում են մարդաշատ գաղութներ։ Հենց այդ ժամանակաշրջանում էր, որ Բյուզանդիայում ծավալվեց պավլիկյան շարժումը, որը VII դարի կեսերին ծագել էր Արևմտյան Հայաստանում։ Աղանդավորների և աղանդապետների ճնշող մեծամասնությունը հայեր էին։

Հայ նախարարների գաղթը չի դադարում։ 774 թ. արաբների դեմ բարձրացված անհաջող ապստամբությունից հետո հայ բարձրաստիճան գործիչները ստիպված են լինում փախչել Բյուզանդիա, արաբների հաշվեհարդարից փրկվելու համար։

Բյուզանդիայում ապաստան գտած հայ տարրը կյանքի ամենատարբեր բնագավառներում, հատկապես ռազմական, շուտով աչքի է ընկնում։ Հայերը սկսում են գրավել ռազմական ամենաբարձր դիրքերը։ Նրանք գառնում են VII դարում առաջացած բյուզանդական ռազմական շրջանների՝ բանակաթեմերի զորավարներ։ Բյուզանդական կայսրության կարևորությամբ ու չափերով երկրորդ բանակաթեմը «Արմենիակների» էր կոչվում, այդ բանակաթեմում, ինչպես և հարևան շրջաններում ապրող հայերի պատճառով։ Արմենիակների բանակաթեմի ռազմական ուժերը հայերից էին բաղկացած[1]։ Պատկերացնելու համար Արմենիակների բանակաթեմի ընդգրկած շրջանները բավական է նշել, որ մինչև X դարի սկզբները նրա հողերից կազմակերպվեցին Խարսիանոն, Խաղտիք, Կոլոնիա և Սեբաստիա բանակաթեմերը։ Արմենիակների բանակաթեմը այդ ժամանակ էլ շարունակում էր իր գոյությունը, թեև ավելի փոքր սահմաններում։ Հայերով էր բնակեցված նաև 899—912 թթ. միջև կազմակերպված «Միջագետք» բանակաթեմը։

---

[1] Theophanis Chronographia ed. *C. de Boor*, Lipsiae, 1883, t. I, p. 469.

Հնարավոր չէ այստեղ մեկ առ մեկ թվարկել հայազգի այն գործիչներին, որոնք մինչև Մակեդոնական հարստության հիմնադրումը աչքի ընկան բյուզանդական կյանքի այլևայլ բնագավառներում, հատկապես ռազմական՝ շատ անգամ որոշելով կայսրության ճակատագիրը։ VIII դարում Փոքր Ասիայի բանակաթեմերի մեծ մասի զորավարները հայեր էին։ Անատոլիկոն բանակաթեմի զորավարը Լևոն III Իսավրացու փեսա հայազգի Արտավազդն էր, որ քիչ էր մնացել տիրանար բյուզանդական գահին։ Լևոն III-ի թոռան՝ Լևոն IV-ի ժամանակ Տաճատ Անձևացին Բուկելլարների բանակաթեմի զորավարն էր։ Նույն ժամանակ բյուզանդական առաջին, ամենակարևոր ու ամենամեծ բանակաթեմի՝ Անատոլիկոնի զորավարը Արտավազդ Մամիկոնյանն էր։ Կոստանդին VI-ի ժամանակ Արմենիակների բանակաթեմի զորավարն էր Վարդասը, մի քիչ հետո նշանավոր Ալեքսիոս-Մուսելեն (Մուշեղ)։ Հայկական ծագում ուներ այդ ժամանակներում հանդես եկած Սկլերոսների ընտանիքը, որի անդամներից մեկը՝ Վարդասը դարձավ Թրակեսիոն բանակաթեմի զորավար։ Նույն ընտանիքից մի այլ Վարդաս Նիկեփոր I կայսեր օրոք դարձավ Անատոլիկոն բանակաթեմի զորավար։

IX դարում պատկերը ամենևին էլ չի փոխվում։ Հայերն արդեն տիրանում են գահին։ 813 թ. հայազգի Լևոնը, Լևոն V-ի անվան տակ ութ տարի իր ձեռքում է պահում կայսրության գայիսոնը։ Նա Բյուզանդիան դուրս բերեց այն դժվարին վիճակից, որ գտնվում էր Նիկեփոր I-ի ժամանակ։

Միքայել II-ի որդի Թեոփիլոսը ամուսնացավ հայազգի Թեոդորայի հետ, որն իր ամուսնու մահից հետո շուրջ տաս տարի կառավարեց պետությունը՝ իր որդու Միքայել III-ի մանկահասակ լինելու պատճառով։ Միքայել III-ի թագավորության վերջին շրջանում երկրի փաստական իշխանությունը գտնվում էր Թեոդորայի եղբոր՝ Վարդասի ձեռքում, որն ստանալով կեսարի բարձրագույն պատվաստիճանը, պետք էր կայսր հռչակվեր, եթե Միքայել III-ը անզավակ վախճանվեր։ Վարդասի երկու եղբայրները՝ Անտիգոնոսն ու Սմբատը նույնպես կարևոր դեր էին խաղում Բյուզանդիայում, ինչպես և նրանց հայրը՝ Մարինոսը, որ դրունգարի և տուրմարխի աստիճաններին էր արժանացել։ Թեոդորայի մի փեսան՝ Կոստանդին Բաբուցիկոսը ստացել էր մագիստրոսի բարձրագույն աստիճանը և վիգլայի դրունգար էր։ Թեոդորայի մյուս փեսան՝ Արշավիրը պատրիկ էր և մագիստրոս։ Արշավիրի

երկու որդիները՝ Ստեփանոսն ու Վարդասը դարձան մագիստրոսներ։ Թեոդորայի հորեղբայր Մանվելը Արմենիակների բանակաթեմի զորավարն էր Լևոն V-ի ժամանակ։ Պակաս դեր չէր խաղում և Թեոդորայի մյուս եղբայր Պետրոնասը, որը 863 թ. կարևոր հաղթանակ տարավ արաբների դեմ, որից հետո վերջիններիս դեմ մղվող երկարատև պատերազմի նախաձեռնությունը անցավ կայսրության ձեռքը։ Պետրոնասի որդի Մարիանոսը նույնպես աչքի ընկավ ռազմական բնագավառում։ Այդ ժամանակաշրջանում իրենց խոսքն էին ասում և զուտ հայերից բաղկացած զորամասերը, որոնց վրա էին գլխավորապես հենվում հայազգի վերոհիշյալ գործիչները։

Հայտնի բյուզանդագետ Ջենկինզը գրում է. «Բյուզանդիայի ռազմական հզորությունը, ռազմական կազմակերպությունը և ռազմական հանճարը, այն հուսալի և ամուր հիմքը որի վրա էր խարսխված բովանդակ փայլուն վերնաշենքը, ամբողջովին հայկական էր։ Դա գործունյա, շատ տաղանդավոր այդ ժողովրդի ճակատագիրն էր, որ իր պատմական մեծագույն նվաճումները իսպաս դրեց ոչ սեփական կայսրության և ոչ սեփական մի մշակույթին։ Իններորդ դարի կեսերից մինչև տասնմեկերորդ դարի սկիզբը քաջ և նվիրված զորավարների շարքում վեց մեծ դեկավարներ աչքի ընկան որպես բյուզանդական միջին շրջանի պատմության նյութական մեծության ճարտարապետներ։ Նրանք են Վասիլ Ա-ր, Ռոմանոս Ա-ր, Հովհաննես Գուրգենը (Կուրկուասը), Նիկեփոր Բ-ր (Փոկասը), Հովհաննես Ա-ը (Ջմշկիկը) և Վասիլ Բ-ր։ Քաջ հայտնի է, որ բոլորն էլ հայկական ծագում ունեին»[1]։

Հայերը տեր ու տիրական են դառնում ոչ միայն քաղաքական ու ռազմական ասպարեզին, այլև հոգևոր ու մշակութային։ Կեսար Վարդասն էր, որ հիմնադրեց առաջին համալսարանը Բյուզանդիայում՝ նշանավոր Մագնավրան, և այդ համալսարանի, ժամանակակից տերմինով ասած, ռեկտորը հայազգի Լևոն փիլիսոփան էր, որ միաժամանակ աստղաբաշխ էր, մաթեմատիկոս, երկրաչափ և երաժիշտ։ Նրա համբավը տարածվել էր մինչև Բաղդադ՝ խալիֆաների արքունիքը։ 832—843 թթ. Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռին նստեց Հովհաննես Քերականը, նույնպես հայազգի, Բյուղանդիայում անուն հանած աստղաբաշխ Բա-

---

[1] *R. J. H. Jenkins*, The Byzantine Empire on the eve of the Crusades, London, 1953, p. 11—12.

դարատի որդին, Արշավիր պատրիկի եղբայրը և Լևոն փիլիսոփայի հորեղբորորդին։ Հովհաննես Թեովիլոս կայսեր ուսուցիչն էր, և այդ կայսրն էր, որ իր ուսուցչին նստեցրեց պատրիարքական աթոռին։ Բայց այս ժամանակաշրջանի, ապա և բյուղանդական բազմադարյան մշակույթի լուսապսակը պատրիարք Փոտն էր, բյուզանդական և համաշխարհային մշակույթի այդ ռահվիրան, որի հայկական ծագումը նույնպես վեճի առարկա չէ։ Նա հայազգի Բագուհի Թեոդորայի և կեսար Վարդասի փեսա Արշավիրի քրոջ՝ Իրենեի որդին էր[1]։

Ահա այսպիսին էր վիճակը Բյուղանդիայում նշված ժամանակաշրջանում։ Ամենուրեք հայեր, հայեր, որոնք (ինչպես կտեսնենք ստորև) օտարացած չէին, իրենց մայրենի լեզուն չէին մոռացել, չէին ուրացել իրենց հայկական ծագումը, այլ, ընդհակառակը, ընդգծում էին այն։ Այս բոլորից հետո հասկանալի է, որ Վասիլի դահ բարձրանալը պատահական երևույթ չէր։ Դեպքերի դարդացումն այնպես էր ընթանում, որ այդ բազմաթիվ հայերից ամենակարողն ու ամենահզորը պետք է տիրանար գահին։ Եվ բյուղանդական գայիսոնին տիրացավ Մակեդոնիայում ծնված, հասարակ ընտանիքի զավակ Վասիլ հայը, ֆիզիկապես հզոր, մտավոր արտակարգ ընդունակություններով օժտված, համառ, իր նպատակին հասնելու դործում ոչ մի բանի առաջ կանգ չառնող, միջոցների մեջ խտրություն չդնող Վասիլը[2]։

---

[1] Փոտի մասին հին և նոր դործերից ամենից կարևորներն են *J. Hergenröther*, Photius, Patriarch von Konstantinopel, Regensburg, 1867—1869; *F. Dvornik*, The Photian schism, History and Legend, Cambridge, 1948.

[2] Հույն ականավոր բյուզանդագետ ակադեմիկոս Կ. Ամանտոսը իր Ἱστορία τοῦ Βυζαντινοῦ Κράτους (τόμ. Β'. ἐκδ. Β'. Ἀθῆναι. 1957, σ. 21) երկում ամեն ջանք թափում է ժխտելու համար Վասիլ Ա-ի հայկական ծագումը, հիմնականում հենվելով նրա մոր ոչ հայկական (Պանկալո) անվան վրա։ Հակառակ դրան, Ամանտոսը ընդունում է Վասիլի «խառն ծագումը» (μειχτὴ καταγωγή), դուրս չտալով, թե ինչի խառնուրդ էր նա։ Նա գրում է, որ «ավելի շուտ բարբարոսություններ, որով Վասիլը սպանեց Միքայել III-ին, և նրա կենսունակությունն են վկայում խառը ծագման մասին, քան պատմական վստահելի տվյալներ»։ Ամանտոսին կարելի էր հիշեցնել զտարյուն հույն կայսրուհի, աջենուհի Իրինեին, որ իշխանության տիրանալու համար չխորշեց կուրացնել իր հարազատ որդուն անգամ, Կոստանդինին (797), այն Իրինեին, որին բյուզանդական պատմիչները իր այդ արարքի համար համեմատում են Մեդեյայի հետ։ Վասիլի և նրա ժամանակաշրջանի մասին տե՛ս Կ. Տեր-Ասհակյան, Հայ կայսերք Բյուզանդիոնի, հատ. Ա։ *А. Васильев*, Византия и арабы, Поли-

Վասիլին վիճակված էր շարունակել արաբների դեմ մղվող դարավոր պայքարը։ IX դարում Աֆրիկայի արաբները Միջերկրականի տերն ու տիրականն էին դարձել, գրավել Կրետե կղզին և սկսել Սիկիլիայի նվաճումը։ Հարավային Իտալիայի և Սիկիլիայի արաբները սկսեցին տարածվել նաև երկրի խորքերը։ Նրանք հասան և պաշարեցին նույնիսկ Դալմատիայի Ռաուսիոն (Ռագուզա) քաղաքը։ Վասիլը իր ծովակալ Նիկետաս Օորիֆասի գլխավորությամբ նավատորմիղ ուղարկեց նրանց դեմ և կարողացավ կանգնեցնել արաբների առաջխաղացումը։ Նույն Օորիֆասը հաջողությամբ մարտնչեց նաև Կրետեի արաբների դեմ, որոնց նավատորմիղը սպառնում էր նույնիսկ Կոստանդնուպոլսին։ Օորիֆասի սլայքարը շարունակեց ծովակալ Նասարը։ Արաբները ժամանակավոր պարտություններից հետո նոր ուժով հարձակվում և դրժվարին դրության մեջ են դնում կայսրությունը։ Նրանց հաջողվում է 878 թ. գրավել Սիկիլիայի մայրաքաղաք Սիրակուսան, ինչպես և Բարի քաղաքը Իտալիայում։ Բյուզանդիայի վարկը վերականգնեց զորավար Նիկեփոր Փոկասը, որ 885 թ. կարողացավ արաբներից գրավել Իտալիայի մի մասը, և կազմակերպել այնտեղ երկու բանակաթեմ՝ Կալաբրիայի և Լանգոբարդիայի։

Ավելի դժվարին էր կայսրության սլայքարը Աբբասյանների դեմ՝ Փոքր Ասիայում և Ասորիքում, որին անձնական մասնակցություն ունեցավ հենց Վասիլ կայսրը։ Բացի արաբներից, այստեղ

тические отношения Византии и арабов за время Македонской династии, С. Петербург, 1902. *Նույնի*, Происхождение императора Василия Македонянина, Виз. Временник, т. XII, 1906։ *G. Der-Sahaghian*, Un document arménien de la généalogie de Basile Ier. *A. Vogt*, Basile Ier empereur de Byzance et la civilization byzantine à la fin du IXe siècle, Paris, 1908 *J. Laurent*, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris, 1919; *N. Bees*, Eine unbeachtete Quelle über die Abstammung des Kaisers Basileios I des Mazedoniers, Byzantinisch-Neugriechische Jahrbücher, Bd. IV, 1923; *H. Grégoire*, Michel III et Basile le Macédonien dans les inscriptions d'Ancyre, Byzantion, t. V, 1929—1930, p. 327--346; *N. Adontz*, L'âge et l'origine de l'empereur Basile Ier, Études Arméno-Byzantines, Lisbonne, 1965, p. 47—. 109; *Նույնի*, La portée historique de l'oraison funèbre de Basile Ier par son fils Leon VI le Sage, Études Arméno-Byzantines, p. 111—123։ *Նույնի*, *Վասիլ Հայազն, Մնծագործ կայսր, Պատմական ուսումնասիրություններ։ G. Ostrogorsky*, Histoire de l'État Byzantin, Paris, 1956; История Византии, т. II, М., 1967, стр. 174—178: *Gy. Moravcsik*, Sagen und Legenden über Kaiser Basileios I, Dumbarton Oaks Papers, No. 15 (1961), p. 59—126.

կայսրության համար մեծ սպառնալիք էին դարձել պավլիկյան աղանդավորները[1]։ Նրանք դեռևս Լևոն V-ի (813—820), Միքայել II-ի (820—829), Թեոփիլոսի (829—842) և հատկապես վերջինիս կնոջ՝ Թեոդորայի տմարդի ու ահավոր հալածանքներից խուսափելով ապաստան էին գտել արաբների մոտ։ Նրանց փախուստը Բյուզանդիայից, որ սկսվել էր դեռևս նշանավոր աղանդապետ Սերգիոսի օրոք IX դարի 20-ական թվականների վերջում և 30-ական թվականների սկզբում, լայն ծավալ ստացավ հետագայում։ Պավլիկյանները արաբա-բյուզանդական սահմանի վրա, Մելիտենի ամիրա Օմար իբն Աբդալլահ ալ-Ակտայի օգնությամբ կառուցում են մի շարք ամրոցներ ու քաղաքներ, այդ թվում Տիվրիկը, և արաբների հետ դաշնակցած դառնում են կայսրության ահն ու սարսափը։ Նրանք կազմակերպում են իրենց կանոնավոր զորաբանակները և, արշավելով Բյուզանդիա, ավարի առնում բազում շրջաններ։ Այս տարիներին է, որ հանդես են գալիս պավլիկյանների նշանավոր զորահրամանատարներ Կարբեասն ու Խրիսոքիրը։ Վերջինս այնքան համարձակություն ու կարողություն է ունենում, որ իր զորքերով հասնում է մինչև Նիկիա և Նիկոմեդիա։

871 թ. Վասիլը արշավելով նրանց մայրաքաղաք Տիվրիկի դեմ, ծանր պարտություն է կրում և հազիվ ազատվում գերի ընկնելուց։ Միայն հաջորդ տարին, Վասիլի զորավարներին հաջող-

---

[1] Պավլիկյանների մասին նորագույն գործերից տե՛ս M. Loos, Deux contributions à l'histoire des Pauliciens, Byzantinoslavica, No XVII, fasc. I, 1956; No XVIII, fasc. 2, 1957; Idem, Le mouvement Paulicien à Byzance, Byzantinoslavica, No XXIV, fasc. 2, 1963, No XXV, fasc. I, 1964; Idem, Ou en est la question du mouvement Paulicien?, Българска Академия на науките, Известия на Института за история, т. 14—15, 1964; Ἰωαν. Ἀναστασίου, Οἱ Παυλικιανοί, Ἡ ἱστορία καὶ ἡ διδασκαλία των ἀπὸ τῆς ἐμφανίσεως μέχρι τῶν νεωτέρων χρόνων, Ἀθῆναι, 1959; Հ. Բարթիկյան, Պավլիկյան համայնքի կազմակերպության հարցի շուրջը, Պատմա-բանասիրական հանդես, 1958, 3; Նույնի, Источники для изучения истории павликианского движения, Ереван, 1961; К. Юзбашян, К истории павликианского движения в Византии в IX в., „Вопросы истории религии и атеизма", т. IV, 1956; Е. Э. Липшиц, Очерки истории византийского общества и культуры, VIII—первая половина IX в., Москва-Ленинград, 1961; Nina G. Garsoïan, The Paulician Heresy, A study of the origin and development of Paulicianism in Armenia and the eastern provinces of the Byzantine Empire, Paris, 1967; Ս. Տ. Մելիք-Բախշյան, Հայաստանը 7—9-րդ դարերում, Երևան, 1968; Ե. Գ. Տեր-Միքայելյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 114—148։

վում է կոտրել պավլիկյանների դիմադրությունը և արյան մեջ խեղդել նրանց շարժումը, որ ավելի քան երկու դար փորձանք էր դարձել կայսրության գլխին։

Պավլիկյաններին ճնշելուց հետո բյուգանդական ղորքերը կռվի բռնվելով արաբական ուժերի հետ, շարունակում են այն պայքարը, որ փոփոխական հաջողություններով մղվում էր դեռ Վասիլ I-ի նախորդ՝ Միքայել III-ի օրոք։ Բյուգանդական ղորքերը, հայազգի զորավար Պետրոնասի գլխավորությամբ, 863 թ. կարողացել էին շահել Պոսոնի կարևոր ճակատամարտը, որտեղ սպանվել էր Մելիտենեի ամիրա Օմար իրն Աբդալլահ ալ-Ակտան։ Բայց արաբները դեռ վտանգավոր էին կայսրության համար։ Վասիլին հաջողվում է գրավել Սամոսատ քաղաքը, ապա և Զապետրան, անցնել Եփրատ գետը և հասնել Մելիտենե, որին սակայն չհաղորդացավ տիրանալ։ Վասիլը ամրապնդում է իր դիրքերը արևելքում և այստեղ է ահա, որ բյուզանդացիները առաջին անգամ, երկար դադարից հետո, հարաբերության մեջ են մտնում հայերի հետ, որոնք ազատագրվել էին արաբների լծից և քաղաքական անկախություն ձեռք բերել։ Օգտվելով արաբա-բյուզանդական 7-ամյա պատերազմից (856—863) Աշոտ Բագրատունին 862 թ. իրեն իշխանաց իշխան էր հռչակել, իսկ 885 թ. նաև թագավոր։ Վասիլը շատ էր շահագրգռված բարեկամական հարաբերություններ հաստատելու Աշոտ Բագրատունու հետ, հասկանալի է, արաբների դեմ դաշնակից ունենալու համար։ Ավանդությունը հաղորդում է, որ Վասիլը նույնիսկ ցանկացել է թագադրվել Աշոտ Բագրատունու ձեռքով։ Իհարկե, այդ բանին դեմ չէր և հայոց իշխանաց իշխանը։ Նա ևս տվյալ շրջանում կողմնակից էր ունենալ բյուզանդական օժանդակություններ՝ իր դիրքերն ամրապնդելու համար։ Եռանդուն աշխատանք էին տանում նաև հոգևոր պետերը։ Զաքարիա I Զագեցի կաթողիկոսը և Փոտ պատրիարքը դեռ Վասիլի գահ բարձրանալուց առաջ երկար նամակագրություն ունեին եկեղեցիների միության խնդրի շուրջը, բայց քանի որ Բյուղանդիայի հոգևոր պետը ուղում էր իրեն ենթարկել հայոց եկեղեցին, ընդունել տալով Քաղկեդոնի դավանանքը, բանակցությունները ավարտվեցին անարդյունք[1]։

---

[1] Զաքարիայի և Փոտի թղթակցության առանձին նմուշներ մեզ հասել են, Տե՛ս Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 279—294, Նաև Православный Палестинский Сборник, Выпуск 31, С. Петербург, 1892, стр. 179—226:

Վասիլը, իհարկե, Հայաստանը դիտում էր ոչ միայն որպես իր դաշնակից։ Նրա հիմնական նպատակը Հայաստանը նախ վասալական կախման մեջ առնելն էր, ապա նաև նվաճելը, քանի որ Վասիլը թեև ծագումով հայ էր, այնուամենայնիվ նա բյուգանդական կայսր էր, նախ և առաջ շահագրգռված կայսրության շահերով։ Վասիլ Ա-ն իրեն Արշակունի հռչակեց, թեև նրա երակներում արշակունյան արյան մեկ կաթիլ անգամ չկար։ Ընդունված է ասել, որ Վասիլն այդ քայլին դիմելով, նպատակ ուներ իր հասարակ ծագումը սքողել, իր գահ բարձրանալն օրինականացնել։ Դա շատ հնարավոր է, բայց հիմնական դրդապատճառը այդ չէր։ Ուսումնասիրելով IX—XI դդ. հայ-բյուզանդական հարաբերությունների պատմությունը, դժվար չէ համոզվել, որ Վասիլի այդ քայլը շատ հեռուները գնացող նպատակներ ուներ, այն է՝ Հայաստանը գցել վասալական կախման մեջ, այդ ձևով ավելի դյուրին կլիներ նվաճել այն։ Հայաստանում Արշակունիների հարբստության դադարման ժամանակ Հայաստանի բոլոր նախարարությունները տիրող հարստության վասալներն էին, այդ թվում և IX դարում վերապրած և կիսանկախ իշխանություններ հաստատած Բագրատունիները, Արծրունիները, Անձևացիք, Սյունիները

Նաև Ն. Ակինյան, *Թուղթ Փոտայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոս Հայոց Մեծաց, Հանդես Ամսօրյա, 1968, Հունվար-մարտ, սյունակ 65—100։ Այդ հարցի վերաբերյալ տե՛ս նաև* Ա. Տեր-Միքելյան. *Հայաստանյայց եկեղեցին և բյուզանդյան ժողովոց պարագայք, Մոսկվա, 1892։* *A. Ter-Mikelian*, Die armenische Kirche in ihren Beziehungen zur byzantinischen vom IV bis zum XIII Jahrhundert, Leipzig, 1892; *(Այս աշխատությունը սուր քննադատության ենթարկվեց Ա. Լրհարդի կողմից։ Տես* Byzantinische Zeitschrift, Bd. VI, (1897), S. 177—179); Der Brief des Photios an Aschot und dessen Antwort. Uebers. von Agnes Finck und Eznik Gjandschezian, Zeitschrift fur armenische Philologie, 2 (1903), S. 1—12; *H. Thopdschian*, Politische und Kirchengeschichte Armeniens unter Asot I und Sembat I nach armenischen, arabischen, syrischen und byzantinischen Quellen bearbeitet, Berlin, 1905; Մ. Օրմանյան, *Ազգապատում, հատ. Ա, մասն Բ, Գեյրութ, 1959, սյունակ 971 և հտ. (Բ հրատարակություն)։* Լ. Աբգյան, *Զաքարիա կաթողիկոս և Փոտ պատրիարդ Կ. Պոլսո, Բարդեն կաթողիկոս և հայ եկեղեցվո բաժանման հարցը ընդհանուր եկեղեցիեն։ «Բազմավէպ», 1915, էջ 161—169։* Փ. Թուռնբալից, *Հայաստան և հայ եկեղեցական պատմություն, Վենետիկ, 1930, էջ 41—42։* *V. Grumel*, Regestes, No 473, 515—615։ Նույնի L'envoye de Photius au catholicos Zacharia, Revue des Etudes Byzantines, t. XIV, (1956), p. 169—173; *J. Darrouzes*, Notes d'epistolographie et d'histoire des textes, Revue des Etudes Byzantines, t. XII, (1954).

և մյուսները։ Իրեն Արշակունի համարելով, հասկանալի է, Վասիլը հանդես էր դալիս որպես այդ բոլորի սյուզերենը, ցանկանում de jure կախման մեջ գցել նրանց։ Մեր միտքը հաստատվում է Բյուզանդիայի արտաքին գործոց նախարարության գրասենյակում թխված մի «տեսությամբ», համաձայն որի իբրև թե պարթևների արքա Արշակի առաքինության և ձեռք բերած մեծ փառքի շնորհիվ, օրենք դարձավ, որ այսուհետև պարթևներին, հայերին և մարերին թագավորեն բացարձակապես Արշակի տոհմի ներկայացուցիչները կամ նրա շառավիղները[1]։ Նպատակը պարզ է։ Քանի որ Վասիլն իրեն Արշակի շառավիղն էր համարում, հասկանալի է, որ այդ մտացածին «օրենքի» համաձայն նա պետք է թագավորեր ի միջի այլոց նաև հայերին։ Ինչպես տեսնում ենք, կեղծիքը բավական սրամիտ էր։

Դա, իհարկե, դարավոր ստրկությունից հազիվ ինքնուրույնություն ձեռք բերած հայ իշխանների և ժողովրդի համար փայլուն ապագայի նախերգանքը չէր կարող հանդիսանալ. նրանք ամենևին էլ չէին ուզում մի տիրողի ձեռքից հազիվ ազատված, մի ուրիշի ձեռքն ընկնել, թեկուզ և քրիստոնյայի։

Այսպիսով, ոչ միայն հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները որևէ շոշափելի արդյունք չտվեցին, այլև բաղաքական, թեև փոխադարձ շփումները տվյալ ժամանակաշրջանում բավական գործոն էին։

Եկեղեցական հարցում Վասիլ կայսեր առաջին գործն եղավ Փոտին հեռացնել պատրիարքությունից և նրա տեղը վերահաստատել Իգնատիոսին։ Պատճառն այն էր, որ Փոտը սերտ կապեր ուներ կեսար Վարդասի (որին ևս, ի միջի այլոց, Վասիլը սպանեց), ինչպես և Միքայել III-ի հետ, հետևաբար Վասիլի քաղաքական հակառակորդն էր։ Բացի այդ, Վասիլն ուզում էր բարելավել իր փոխհարաբերությունները Հռոմի պապի հետ, մի բան, որին արգելք էր կանգնած Փոտը։ 869 թ. եկեղեցական ժողովում Փոտը դատապարտվեց, նզովվեց և աքսորվեց Բոսպորի ափին գտնվող մի վանք, թեև Վասիլը շուտով ետ կանչեց և իր երեխաների դաստիարակության գործը նրան վստահեց։

IX դարի վերջում նորից օրակարգի հարց են դառնում միաբնակ երկաբնակ վեճերը։ Ամենևին հավանականությամբ պատահական չէ այն, որ Վասիլի, Լևոնի և Ալեքսանդրի հրապարակած

[1] Theophanes Continuatus, p. 212—213; Cedrenus, t. II, p. 183.

էպանագոգե կոչված Դատաստանագրքում հենց սկզբում, որտեղ խոսվում է կայսեր մասին, մանրամասնորեն տրվում են քաղկեդոնական դավանանքի սկզբունքները, որոնց պետք է կայսրը հետևի, թեև բացառված չէ, իհարկե, այն, որ Վասիլը լինելով հայ, ուզում էր ընդգծել իր ոչ հայադավան լինելը։

Վասիլը շատ մեծ աշխատանք տարավ հարևան երկրներում քրիստոնեության տարածման համար, հատկապես Դալմատիայում, ինչպես և Հունաստանում բնակվող սլավոնների մեջ։ Վասիլն էր, որ առաջին անգամ փորձեց քրիստոնեությունը տարածել նաև ռուսների մեջ։ Այդ քաղաքականությունը, հասկանալի է, ուներ ոչ միայն կրոնական դրդապատճառներ։ Քրիստոնեության տարածման հետ մեկտեղ Բյուզանդիան տարածում էր նաև իր քաղաքական ազդեցությունը։

Վասիլը մեծ ջանքեր թափեց կանոնավորելու բյուգանդական դատավարությունը։ Նա «կերակուր և ոռճիկ» սահմանեց դատավորներին՝ նրանց կաշառակերության առաջն առնելու համար։ Իսկ բյուզանդական իրավունքի ասպարեզում նրա տարած աշխատանքը իսկապես որ տիտանական էր։ Այդ գործին նա մասնակից դարձրեց մի շարք հայազգի գործիչների և առաջին հերթին պատրիարք Փոտին և օրենսգետ Սիմբատիոսին (Սմբատին), ինչպես և այլ մասնագետների, որոնք կեսար Վարդասի հիմնադրած և Լևոն փիլիսոփայի կողմից ղեկավարվող Մաղնավրայի համալսարանի սաներն էին[1]։

Վասիլն աչքի ընկավ նաև իր շինարարական գործունեությամբ, որի մասին ամենայն մանրամասնությամբ խոսում է իր թոռ Կոստանդին Շիրանածինը՝ Վասիլ կայսեր կենսագրության մեջ։

Վասիլ I-ը վախճանվեց 886 թ.։ Նրան հաջորդեց երկրորդ որդին՝ Լևոնը[2], Լևոն VI անվան տակ (Վասիլի անդրանիկ որդին՝

---

[1] *Իրավունքի ասպարեզում Վասիլի կատարած աշխատանքի մասին ավելի մանրամասն տե՛ս սույն գրքի Վասիլ I-ի կենսագրության կցված ծանոթագրություններում։*

[2] *Լևոն VI-ի մասին տե՛ս.* Կ. Տեր-Սահակյան, *նշվ. աշխ., հատ. Ա, նաև* *Н. А. Попов*, Император Лев VI и его правление в церковном отношении, М., 1892; *M. Mitard*, Études sur le règne de Léon VI, Byzantinische Zeits hrift, Bd. 12 (1903); *N. Adontz*, La portée historique de l'oraison funèbre de Basile I par son fils Léon VI le Sage, Études Armeno-Byzantines, Lisbonne, 1965, p. 111—123; *A. Vogt*, La jeunesse de Leon VI,

Կոստանդինը վախճանվել էր 879 թ.), որին դեռևս 870 թ. Վասիլը հռչակել էր կայսերակից։ Լևոն VI-ը արտակարգ զարգացած անձնավորություն էր (նա Փոտի աշակերտն էր), դրա համար միջնադարյան հեղինակները նրան «Իմաստուն» (Σοφός) կամ «Իմաստասեր» (Φιλόσοφος) տիտղոսով են հիշատակում։ Զբաղված լինելով գիտությամբ, նա քաղաքական և ռազմական հարցերից հեռու էր կանգնած, այդ բոլորը վստահելով իր մեծամեծներին, և առաջին հերթին հայազգի Ստիլիանոս Զաուցային, որի դուստրը՝ Զոեն, Լևոնի կինն էր։ Հենց այս Զաուցան էր, որ հռչակվեց «Կայսերահայր» (Βασιλεοπάτωρ), մի տիտղոս, որ հենց Զաուցայով մուտք գործեց Բյուզանդիա։ Զաուցան Լևոն VI-ի ժամանակ այն դերն էր խաղում, ինչ կեսար Վարդասը Միքայել III-ի ժամանակ։

Լևոն VI-ի թագավորության ամբողջ շրջանը անցավ անդադար պատերազմների մեջ։ Եթե Վասիլի ժամանակ կայսրության թշնամիները հիմնականում արաբներն էին և պավլիկյանները, ապա Լևոնի ժամանակ առաջին գծում հանդես եկան բուլղարները։ Սիմեոն ցարը գահ բարձրանալով, միանգամայն նոր դիրք բռնեց Բյուզանդիայի հանդեպ։ 894 թ. Սիմեոնը ներխուժեց Թրակիա։ Բյուզանդիան բուլղարների դեմ ռազմական դաշինք կնքեց հունգարացիների հետ (բյուգանդական աղբյուրներում հունգարացիները կոչվում են թուրքեր), որոնք կարողացան թիկունքից հարձակվելով, պարտության մատնել բուլղարների ցարին։ 895—896 թթ. բուլղարների և Բյուզանդիայի միջև կնքված հաշտությունը երկարատև չէր։ Պեչենեգների օգնությամբ հաղթելով հունգարացիներին, Սիմեոնը նորից հարձակվեց Բյուզանդիայի վրա։ Բյուգանդական զորքերը գլխավորում էր Փոտի ազգական, նույնպես հայկական ծագում ունեցող Լևոն Կատակալոնը, որը, սակայն, պարտվեց Բուլգաբոֆիգոնի ճակատամարտում (896)։ Պատերազմը շարունակվեց մինչև 899 թ., երբ երկու ախոյանների միջև նորից հաշտություն կնքվեց։ Հայտնի է, որ հաշտություն է կնքվել նաև 904 թ., մի բան, որ ցույց է տալիս, թե 899 թ. կնքված հաշ-

---

le Sage, Revue Historique, 174 (1934), p. 389 sqq.; *P. Noaille* et *A. Dain*, Les Novelles de Leon VI le Sage, Paris, 1944; *G. Ostrogorsky*, Histoire de l'Etat Byzantin, Paris, 1956; *М. Я. Сюзюмов*. Экономические воззрения Льва VI, Византийский Временник, т. XV, 1959, стр. 33–41; История Византии, т. II, М., 1967, стр. 178—182.

տությունը ժամանակավոր բնույթ է ունեցել։ Մինչև 913 թ. բուլղարների և բյուզանդացիների միջև տիրում է խաղաղություն։

Լևոն VI-ի օրոք Բյուզանդիայի համար սպառնալիք են դառնում նաև ռուսները։ Նրանք առաջին անգամ իրենց նավերով երևացել էին Կոստանդնուպոլսի ափերին՝ դեռևս 860 թ.։ Ռուսները 907 թ. իշխան Օլեգի գլխավորությամբ նորից են հայտնվում Կոստանդնուպոլսի առաջ։

Արաբները, օգտվելով Բյուզանդիայի՝ բուլղարների դեմ պատերազմում զբաղված լինելուց, 904 թ. իրենց նավատորմիղով անսպասելիորեն հարձակվում և գրավում են Թեսաղոնիկե քաղաքը, ավերում ու կողոպտում այն, իսկ բնակչությանը գերեվարում։ Արաբ ծովահենների դեմ պայքարը գլխավորում է պատրիկ Հեմերիոսը, որին հաջողվում է 910 թ. մեծ ծովամարտում հաղթել արաբներին։ Բայց պատերազմի հետագա ընթացքը անհաջող էր բյուզանդացիների համար։

Ցամաքում Լևոն VI-ը արաբների դեմ արժանահիշատակ ընդհարումներ չի ունեցել։ Երկու կողմից էլ պարզապես ավարառուական բնույթի արշավանքներ են եղել։ Հիշատակություն կա, որ հաշտություն է կնքվել Մելիտենեի, Տարսոնի և այլ ամիրաների հետ, ընդ որում ասվում է, որ երկու ամիրա հարկատու դարձան Բյուզանդիային։ Ինչ վերաբերում է Աֆրիկայի արաբներին, ապա նրանք հասնում են որոշ հաջողությունների, 902 թ. ավարտելով Սիկիլիայի նվաճումը և ասպատակ սփռելով մինչև Հռոմ։

Լևոն VI-ը վախճանվեց 912 թվականի մայիսի 12-ին։ Կայսր հռչակվեց նրա կրտսեր եղբայր Ալեքսանդրը, որի կայսերակիցն էր Լևոն VI-ի յոթամյա որդի Կոստանդին Շիրանածինը (905—959 թթ.)[1]։ Ալեքսանդրը թագավորեց ընդամենը 13 ամիս և վախ-

[1] «Շիրանածին» մակդիրը բյուզանդագիտության մեջ բացատրվում է երկու ձևով։ Մեկ, քե նա ծնվել է բյուզանդական արքունիքի «Շիրանի» դահլիճում, և երկրորդ, որ նա ծնվել է, երբ իր հայրը ծիրանի էր հագած, այսինքն կայսր էր։ Կոստանդին Շիրանածինի կյանքի և գրական գործունեության մասին հարուստ գրականություն կա։ Հին ու նոր գործերից ամենակարևորներն են. *А. П. Зёрнин*, Жизнь и литературные труды имп. Константина Багрянородного, Харьков, 1858; *A. Rambaud*, L'Empire grec au dixieme siecle. Constantin Porphyrogenète, Paris, 1870; *F. Hirsch*, Kaiser Constantin VII Porphyrogennetos, Berlin, 1873; *K. Krumbacher*, Geschichte der byzantinischen Litteratur, München, 1897; *В. Латышев*, К вопросу о литературной деятельности Константина Багрянородного, Византийский Временник, т. 22 (1915 1916), стр. 13—20; *N. Iorga*, Médaillons d'histoire litteraire by-

ճանվեց 913 թ. հունիսի 6-ին։ Մանկահասակ Կոստանդնի համար ստեղծվեց խնամակալական մի ամբողջ խորհուրդ, որի մեջ կարևոր դեր էին խաղում Լևոն VI-ի կին Զոեն[1], Կոստանդնի մայրը, (Ալեքսանդրը նրան վանք էր ուղարկել, բայց այդ կայսեր մահից հետո, 914 թ. նա նորից դուրս էր եկել), և պատրիարք Նիկողայոս Միստիկոսը[2]։

Կոստանդին Ծիրանածինի առաջին մենիշխանությունը տևեց 913 թ. հունիսի 7-ից մինչև 920 թ. դեկտեմբերի 17-ը։ Այդ ժամանակամիջոցում կայսրությունը նորից զբաղված էր բուլղարների դեմ մղվող արյունալի պատերազմով։ Ցար Սիմեոնը, մեծ զորքի գլուխն անցած, 913 թ. հասավ մինչև Կոստանդնուպոլսի պարիսպների տակ, բայց չկարողացավ գրավել քաղաքը և ետ վերադարձավ։

Բյուզանդիան բուլղարների դեմ դաշինք է կնքում պեչենեգների հետ, որոնք, թանկարժեք նվերների դիմաց, պետք է Սիմեոնին հարվածեին թիկունքից։ Հակառակ այդ բոլորին, Սիմեոնին հաջողվում է 914 թ. սեպտեմբերին ստիպել Ագրիանուպոլսի զորավար հայազգի Պանգրատուկասին (Παγχρατούκας ὁ Ἀρμένης) քաղաքն իրեն հանձնել։ Կայսրուհի Զոեն ստիպված էր Սիմեոնին բազմաթիվ նվերներ տալ քաղաքը ետ ստանալու համար։ Զոեն Սիմեոնին հաղթահարելու համար ի վերջո որոշում է հաշտու-

---

zantine, 10. L'œuvre de Constantin Porphyrogénète, Byzantion, t. 2 (1925), p. 260—266; *S. Runciman*, The emperor Romanus Lecapenus and his Reign, Cambridge, 1929; *G. Ostrogorsky*, Histoire de l'État byzantin, Paris, 1956; *G. Garitte*, Constantin VII Porphyrogénète (né dans la Porphyra, c.-à-d. d'un père empereur), empereur de Byzance (944—959), Dictionnaire d'Histoire et de Géographie Ecclésiastiques, XIII (1954) p. 615—617; *Gy. Moravcsik*, Byzantinoturcica, Bd. I, Die byzantinischen Quellen der Geschichte der Turkvölker, Zweite durchgearbeitete Auflage, Berlin, 1958, S. 356 sqq.; *M. E. Colonna*, Gli storici bizantini dal IV al XV secolo, I, Storici profani, Napoli, 1956, p. 27—35; *А. Д. Люблинская*, Источниковедение истории средних веков, Ленинград, 1955, стр. 268—271. *P. Lemerle*, L'encyclopédisme à Byzance à l'apogée de l'emptre, et particulièrement sous Constantin VII Porphyrogénète, Cahiers d'histoire mondiale, 9 (1966), p. 596—616.

[1] *Այս Զոեն Ստիլիանոս Զաուցայի դուստրը չէ, այլ Զոե Կարբոնոպսիան, Լևոն VI-ի չորրորդ կինը։ Լևոնը չորս անդամ ամուսնացավ։ Զաուցայի դուստրը Լևոնի երկրորդ կինն էր։*

[2] *J. Gay*, Le patriarche Nicolas le Mystique et son rôle politique, Mélanges Charles Diehl, t. I, Paris, 1930.

թյուն կնքել արաբների հետ, որպեսզի կարողանա արևելքի բոլոր ուժերը տեղափոխել բուլղարների դեմ մղվող պայքարում, ինչ որ և կատարվում է։ Բյուզանդական զորքերի սպարապետն էր հայազգի մագիստրոս Լևոն Փոկասը, Նիկեփոր Փոկասի եղբայրը, որը «սակայն ավելի աչքի էր ընկնում իր արիությամբ, քան թե խոհեմությամբ»[1]։ Բուլղարների դեմ ուղարկվեցին նաև Վարդաս Փոկասը, հայկական զորաբանակով Մելիսսը (Մլեհը) և արևելյան բոլոր բանակաթեմերի զորավարները։ Կատաղի ճակատամարտ է տեղի ունենում Ախելոոս գետի ափին (917), որտեղ բյուզանդական զորքերը գլխովին ջախջախվում են։ Այս ճակատամարտում զոհվում է Աղոտոս (Ἄζωτος, Աշոտ, թե՞ Ազատ— Հ. Ք.) անունով հայազգի մի նշանավոր զորավար, որ գլխավորում էր էքսկուբիտոսների կայսերական թիկնապահ զորքը[2]։ Շատ քչերն են փրկվում, այդ թվում և Մլեհը, որ անցնելով արևելք, հսկայական գործունեություն է ծավալում արաբների դեմ (տե՛ս ատորև)։

Այս ժամանակաշրջանում Բյուզանդիայի արտաքին քաղաքականության մեջ կարևոր տեղ է գրավում Հայաստանը։ Յանկանալով օգուտ քաղել Յուսուֆ ոստիկանի ասպատակություններից հետևանքով ստեղծված ծանր վիճակից, Բյուգանդական կայսրությունը պատրիարք Նիկողայոսի միջոցով[3] (աթոռակալել է 901 թ. մարտի 1-ից մինչև 907 թ. փետրվարը. և 912 թ. մայիսի 15-ից մինչև 925 թ. մայիսի 15-ը) մի քանի անգամ դիմեց հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն և հայոց թագավորին, օգնություն խոստանալով, որի դիմաց սակայն նկատի ուներ Հայաստանը կայսրությունից վասալական կախման մեջ գցել։ Բյուգանդական կառավարությունը նույնիսկ Կոստանդնուպոլիս հրավիրեց Սմբատ I-ի որդի Աշոտ II Երկաթին, որին մեծ պատիվնե-

---

[1] Theophanes Continuatus, Bonnae, 1838, p. 388.

[2] De Thematibus, § 12.

[3] *Մեզ են հասել Նիկողայոս Միստիկոսի մի քանի թղթերը՝ ուղղված կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ I թագավորին։ Բացի այն թղթերից, որոնց մասին հիշատակում է և ընդարձակ մեջբերումներ կատարում հայոց կաթողիկոսը իր «Հայոց պատմության»-ում, հայտնի են երկու թուղթ ևս, որոնք հասել են հունարեն բնագրով։ Այդ մասին մանրամասն տե՛ս Հ. Մ. Բարթիկյան, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը, ուղղված հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ I թագավորի, Պատմա-բանասիրական հանդես, 1966 թ., № 4։*

րով ընդունեց կայսրուհի Զոեն (ὸν (Ἀσώτιον) παραγενόμενον ἡ δέσποινα καὶ μετὰ πολλῆς τιμῆς ὑπεδέξατο)[1]։ Դա 914 թ. սեպտեմբերից առաջ էր[2]։

Կոստանդին VII Շիրանածին կայսեր մանկահասակությունը պատճառ դարձավ, որ բարձրաստիճան զինվորականների կողմից գահին տիրանալու բազմաթիվ փորձեր կատարվեն, որոնք սակայն հաջողություն չունեցան։ Այդպիսի պայմաններում հսկայական ազդեցություն ձեռք բերեց ծովակալ Ռոմանոս Լեկապենոսը, որի հայրենիքը Արմենիակոնն էր (τῆς ἑαυτοῦ πατρίδος τῆς τῶν Ἀρμενιακῶν)[3]. Լեկապենոսը նախ իր դստեր՝ Հելենեին կնության տվեց երիտասարդ կայսեր և դարձավ բյուզանդական կայսրության պատմության մեջ երկրորդ «կայսերահայրը»։ Մի փոքր անց նա հռչակվեց կեսար։ Կայսրուհի Զոեն, Կոստանդնի մայրը, հաշտ աչքով չէր նայում Ռոմանոսի օրեցօր հզորանալուն։ Բայց Ռոմանոսի համար դժվար չէր Զոեին նորից վանք աքսորել, մեղադրելով նրան իրեն թունավորելու փորձ կատարելու մեջ, ինչ որ, իհարկե, բացառված չէր։ 920 թ. դեկտեմբերի 17-ին Ռոմանոսը ձեռամբ Կոստանդին Շիրանածինի և պատրիարք Նիկողայոսի կայսր է հռչակվում[4]։

Փաստացի ամբողջ իշխանությունն անցավ Ռոմանոս Լեկապենոսի ձեռքը։ Կոստանդինը թեև կայսերակից էր և պետական պաշտոնական փաստաթղթերում հիշվում էր Ռոմանոսից առաջ, բայց և այնպես Ռոմանոսի ձեռքում մի խաղալիք էր և շատ շուտով հեռացվեց պետական գործերից և ստիպված իրեն նվիրեց դրական գործունեության։ Աղբյուրների տվյալների համաձայն Ռոմանոսի քառորդդարյա թագավորության ամբողջ ընթացքում Կոստանդին Շիրանածինը գտնվում էր Ռոմանոսի «ենթակայության» կամ «հպատակության» մեջ (ὢν ἐν ὑποταγῇ)[5]։ Ռոմանոսը օգտվելով իր դեմ ուղղված մի դավադրությունից, որ կատարվել էր Կոստանդինի կողմնակիցների կողմից, Կոստանդինիս նույնիսկ կայսրերի շարքում երկրորդ տեղն է իջեցնում, առաջինը վերապահելով իրեն, թեև դա պարզապես երդմնազանցություն էր[6]։

---

[1] Theoph. Cont., p. 387.

[2] Մանրամասն տե՛ս N. Adontz, Asot Erkat' ou de Fer, Études Armeno-byzantines, p. 265 և հտ.։

[3] Theoph. Cont., p. 419.

[4] Ibid., p. 397—398.

[5] Ibid., p. 381.

[6] Ibid., p. 400—401.

Ռոմանոսը շտապեց կայսերակից հռչակել և իր որդիներին՝ Քրիստափորին (921 թ. մայիսի 20-ից մինչև 931 թ. օգոստոս), Ստեփանոսին և Կոստանդինին[1] (924 թ. դեկտեմբեր)։ Նա այն աստիճան առաջ անցավ, որ ուզեց կրկնած լինել Վասիլի I-ին և իր 16-ամյա որդի Թեոփիլակտոսին պատրիարք հռչակեց (933 թ. փետրվարի 2-ին։ Աթոռակալեց մինչև 956 թ. փետրվարը)։

Ռոմանոս I Լեկապենոս կայսեր թագավորության ամբողջ ժամանակաշրջանը[2] անցավ անդադար պատերազմների մեջ, որոնք կայսրությունը մղում էր և՛ Արևմուտքում, և՛ Արևելքում։ Աբբասյան հարստությունը դեպի անկում էր գնում և Բյուզանդիայի համար արդեն նախկին վտանգը չէր ներկայացնում։ Բյուզանդական կայսրությունը, օգտվելով իր դարավոր ախոյանի թուլացումից, սկսեց ծավալել իր նվաճողական քաղաքականությունը, որի սկիզբը Վասիլ I-ն էր դրել։

Ռոմանոս I-ը բյուգանդական զորքերի սպարապետ (գոմեստիկոս) նշանակեց հայազգի Հովհաննես Կուրկուասին (Գուրգեն), այն ամենաընդունակ զորավարին, որը բյուզանդական աղբյուրներում կոչվում է Նոր Տրայանոս և Բելիսարիոս[3]։ Նա քսաներկու տարի անընդմեջ (ἀδιάδοχος). 922 թ. մինչև 944 թ. վարեց այդ պաշտոնը և իր զորավարական տաղանդով կարողացավ Բյուզանդական կայսրության սահմանները հասցնել մինչև վերին Եփրատ և Տիգրիս, նա «կրկնապատկեց կայսրության հողերը», գրավեց հազար քաղաք, ասում է Թեոփանեսի Շարունակողը։ Այդ բանին նպաստեց նախ և առաջ այն հանգամանքը, որ 927 թ., Սիմեոն

---

[1] *Այս Կոստանդինին Ռոմանոսը ամուսնացրեց ծադումով հայ (ἐκ γένους τῶν Ἀρμενιακῶν) պատրիկ Աղրիանոսի դուստր Հելենեի հետ։* (Theoph. Cont., p. 423)։ *Իսկ Կոստանդնի որդուն՝ Ռոմանոսին, պապ Ռոմանոսը ամուսնացրեց Հովհաննես Կուրկուասի դստեր Եվֆրոսինեի հետ (Նույն տեղում, էջ 426)։*

[2] *Ռոմանոս Լեկապենոսի մասին տե՛ս հետևյալ ուսումնասիրությունները.* Կ. Տեր-Սահակյան, *Նշվ. աշխ., հատ. Բ։* *St. Runciman*, The emperor Romanus Lecapenus and his reign, Cambridge, 1929; *(վերահրատակվել է 1963 թվականին)։* *H. Grégoire*, Notules, Byzantion, t. VIII, 1933, p. 572 sqq.; *М. А. Шакиан*, Письма Арефы—новый источник о политических событиях в Византии 931—934 гг., Византийский Временник, т. I, 1947, стр. 235—260; *V. Laurent*, Un portrait inédit de Roman Ier Lecapène, „Festschrift W. Sas-Zaloziecky", Graz, 1956; *G. Ostrogorsky*, Histoire de l'Etat Byzantin, Paris, 1956; История Византии, т. II, М., 1967, стр. 183—186.

[3] Theoph. Cont., p. 427.

ցարի մահից հետո, Բյուզանդիային հաջողվեց խաղաղություն հաստատել բուլղարների հետ և իր ամբողջ ուշադրությունն ու ուժը կենտրոնացնել արաբների դեմ մղված պայքարում։ Բյուզանդական զենքի կարևորագույն հաջողություններից էր նշանավոր Մելիտենե քաղաքի գրավումը (934 թ.) Հովհաննես Կուրկուասի և հռչակավոր Մելիաս-Մլեհի կողմից։ Վերջինս գլխավորում էր հայերից բաղկացած զորք՝ (μετὰ τῶν Ἀρμενίων)[1]։ Միակ լուրջ խոչընդոտը Բյուզանդիայի համար արևելյան ճակատում Համդանյան հարստության պատկանող, Մոսուլի և Հալեպի ամիրա Սայֆ ալ-Դաուլան էր, որ 938 թ. սեպտեմբերին վերին Եփրատում պարտության մատնեց Հովհաննես Կուրկուասին։ Այդ խոչընդոտը սակայն ժամանակավոր բնույթ ուներ[2]։

Բուլղարական պատերազմը մինչև 927 թ. շարունակվեց նախկին կատաղությամբ։ Սիմեոնի զորքերը 920 թ. հասնում էին մինչև Կոստանդնուպոլսի պարիսպների տակ։ Հերթական մի ճակատամարտի ժամանակ իր պրոտոմանդատորի հետ ջրասույզ է արվում հայազգի պատրիկ, ծովակալ (ὁρουγγάριος τῶν πλοίμων) Ալեքսիոս Մուսելեն, որը մասնակցում էր պատերազմին «իր ժողովրդով» (μετὰ τοῦ λαοῦ αὐτοῦ)[3], հասկանալի է հայերով։ Բուլղարներին հաջողվում է նորից գրավել Ադրիանուպոլիս քաղաքը և գերել նրա զորավարին։ Ռոմանոսին ի վերջո հաջողվում է հաշտություն կնքել ցար Սիմեոնի հետ, որը շատ չանցած, 927 թ. վախճանվում է։ Նրա մահով բուլղարա-բյուզանդական հարաբերությունների մեջ բեկում է առաջանում։ Սիմեոնի որդի ցար Պետրոսը և նրա աներձագ-խնամակալ Գեորգը իրենց բանակցությունները Ռոմանոսի հետ վարում էին ի միջի այլոց մի վանականի միջոցով, որի անունն էր Կալոկիրիս, ծագումով հայ (τῷ γένει Ἀρμενιακόν)[4]։

Ռոմանոսի օրոք, 944 թ. Կոստանդնուպոլսի վրա նավատորմիղով նորից հանդես եկան ռուսները իշխան Իգորի գլխավորությամբ, բայց պարտություն կրելով, ցրվեցին Բյութանիա նահանգով մեկ։ Նրանց դեմ պայքար մղեցին և մեծ ջարդ տվեցին

[1] Theoph. Cont., p. 416.

[2] *Համդանյանների մասին մանրամասն տե՛ս* M. Canard, Histoire de la dynastie des Hamdanides, Alger, 1951; Idem: Les Hamdanides et l'Armenie, Annales de l'Institut d'Etudes Orientales, t. VII, 1948, p. 77—94.

[3] Theoph. Cont., p. 401.

[4] Theoph. Cont., p. 412.

հայազգի զորավարներ Վարդաս Փոկասը և վերևում հիշված Հովհաննես Կուրկուասը[1]։

Ռոմանոսի թագավորության ընթացքում կայսեր կյանքի դեմ բազմաթիվ ոտնձգություններ և նրան տապալելու փորձեր են եղել։ Դրանցից կարելի է նշել այն դավադրությունը, որի կազմակերպիչներն էին «ոմն Ադրիանոս Խալդ» (այսինքն Խաղտիքից, հավանաբար հայ) և «մեծահարուստ» Տաճատ հայը (Τατζάκης կարդա՛ Τατζάτης) Ἀρμένιος πλούσιος πάνυ)[2]։ Նրանց դրդողն էր Խաղտիք բանակաթեմի զորավար Վարդաս Բոյիլասը (ելնելով անունից նույնպես հայ)։ Նրանք գրավում են Բայբերդ (Παίπερτε) ամրոցը։ Ռոմանոսը նրանց դեմ է ուղարկում Հովհաննես Կուրկուասին, որին հաջողվում է ճնշել ապստամբությունը։ Դավադրության պարագլուխներին նա կուրացնում է և գրավում նրանց ունեցվածքը։ Միաժամանակ հաջողվում է փախչել Տաճատին, որը սակայն ստանալով անձեռնմխելիության մասին երաշխիքներ, հանձնվում է։ Նրան բանտարկում են Մանգանայի «տանը», բայց փախուստի դիմելու փորձի մեջ բռնվելով, կուրացվում է։ Ռոմանոս կայսրը խնայեց միայն Վարդաս Բոյիլասին, որովհետև նա «իր բարեկամն էր»[3]։

Մի դավադրություն, այնուամենայնիվ, հաջողություն ունենում է։ Դրա կազմակերպիչները Ռոմանոսի որդիներն էին։ Նրանց, ամենայն հավանականությամբ, դրդել էր Կոստանդին Միրանածինը։ Գահընկեց անելով իրենց հորը, աքսորում են Պրոտե կղզին, որտեղ և նա 948 թ. հունվարի 15-ին վախճանվում է։ Դավադիրների թվում էր և Մանվել Կուրտիկը, ամենայն հավանականությամբ որդին այն հայ Կուրտիկի (ὁ Κουρτίκης ὁ ἐξ Ἀρμενίων), որ սպանվեց Կոստանդին Միրանածինի դեմ կազմակերպված Կոստանդին Դուկասի դավադրության ճնշման ժամանակ[4]։ Կոստանդին Միրանածինը մի քանի օր թագավորեց Ռոմանոսի որդիների՝ իր աներձագների հետ, բայց շուտով նրանց ձերբակալեց և մայրաքաղաքից աքսորեց։ Այսպիսով, 945 թ. հունվարի 27-ին Կոստանդինը, Կոստանդին VII անվան տակ ստանձնեց միանձնյա իշխանությունը։

---

[1] Ibid., p. 423—425.
[2] Ibid., p. 404.
[3] Theoph. Cont., p. 404.
[4] Նույն տեղում, էջ 383։

Կոստանդին Միրանածինը պաշտոնների նոր բաժանում կատարեց։ Հայազգի Վարդաս Փոկասին մագիստրոսի բարձր աստիճանը շնորհելով, նշանակեց բյուգանդական զորքերի սպարապետ (դոմեստիկոս)[1]։ Մանվել Կուրտիկը դարձավ պատրիկ և վիգլայի դրունգար։ Միրանածինի ժամանակ արքունիքում մեծ դեր էին խաղում ծագումով Մամիկոնյան Թոռնիկյանները (οἱ λεγόμενοι Τορνίκιοι), որոնց օգնությամբ Կոստանդինին հաջողվեց չեզոքացնել Ռոմանոս Լեկապենոսի որդիներին. նրանց աքսորեցին Պրոտե կղզին ու վանական ձեռնադրեցին[2]։

Ռոմանոսի թագավորության վերջին շրջանում շնորհազրկված Հովհաննես Կուրկուասը Միրանածինի օրոք նորից պատիվների է արժանանում։ Մենք հանդիպում ենք նրան արաբների հետ բանակցություններ վարելիս՝ ռազմագերիների փոխանակման շուրջ[3]։ Այս ժամանակ է, որ նորանոր հայ գործիչներ են հանդես գալիս, ինչպես Մուշեղ-Ռոմանոսը (Μουσελὲς Ρωμανός)[4]։

Կոստանդին Միրանածինի օրոք մեծ զարգացում են ապրում գիտությունները։ Ինքը լինելով անչափ կրթված մարդ, շատ էր հովանավորում գիտությունները և առաջին հերթին հռետորությունը, փիլիսոփայությունը, երկրաչափությունը, աստղաբաշխությունը, արվեստը[5]։ Նա հատուկ ուշադրություն դարձրեց կեսար Վարդասի հիմնադրած համալսարանին, որ նոր ծաղկում ապրեց։ Միրանածինը աչքի բնկավ և իր շինարարական գործունեությամբ։ Նա կառուցեց պալատներ, եկեղեցիներ, ծերանոցներ և այլն, որոնց մասին հիացմունքով են խոսում ժամանակակից հեղինակները։

---

[1] Նույն տեղում, էջ 436, 445։ Տարիներ հետո, երբ Վարդաս Փոկասը «ծերացավ», կայսրը այդ պաշտոնը տվեց Վարդասի որդուն, Նիկեփորին, որ պատրիկ էր և Բյուզանդիայի խոշորագույն բանակաթեմի՝ Անատոլիկոնի զորավար։ Այս Նիկեփոր Փոկասը հետագայում դարձավ կայսր (963—969 թթ.)։ Նույն տեղում, էջ 459։

[2] Theoph. Cont., p. 437։ Մի փոքր անց Ռոմանոսի որդիներից Կոստանդինին, փախուստի դիմելու և ապստամբություն բարձրացնելու փորձի մեջ բռնելով, սպանում են։

[3] Theoph. Cont., p. 443.

[4] Նույն տեղում, էջ 443։ Այս Ռոմանոս-Մուսելեի ժառանգական դարձած հսկայական կալվածների մասին տե՛ս C. E. Zachariae a Lingenthal, Jus graeco-romanum, vol. III, p. 312, n. 48; *Համմ.* История Византии, т. II, М., 1967, стр. 122.

[5] Theoph. Cont., p. 446.

Արտաքին քաղաքականության մեջ կայսրությունը շարունակեց արաբների դեմ մղվող պատերազմը, և՛ Ասորիքում, և՛ Աֆրիկայում։ Կիբիրեոտների զորավար Վասիլ Հեքսամիլիտոսի գլխավորությամբ բյուզանդական զորքերին հաջողվում է պարտության մատնել Տարսոնի ծոցից դուրս եկած արաբական նավատորմիղը և հեղուկ կրակով հրկիզել այն։ Իտալիայում դրությունը բավական բարդ էր։ Լանդոբարդիան և Կալաբրիան ապստամբություն էին՝ բարձրացրել կայսրության դեմ, միանալով արաբներին։ Միրանածինը պատրիկ Մարիանոս Արգիրոսի գլխավորությամբ զորաբանակ ուղարկեց և ճնշեց նրանց։ Մարիանոսը գրավեց ապստամբած Նեապոլիս քաղաքը։ Բյուզանդական նավատորմիզը պարտության մատնեց նաև Աֆրիկայի արաբների նավատորմիզը։ Թեոփանեսի Շարունակողի ասելով, և՛ Եգիպտոսի ամիրան, և՛ Ասորիքի ամիրան (խալիֆան) այդ բոլորից հետո Կոստանդին կայսեր հետ հաշտություն կնքեցին[1], թեև մի փոքր անց ցույց է տալիս, որ Ասորիքի արաբների դեմ շարունակվում են պատերազմական գործողությունները։ Բյուզանդական զորաբանակները գլխավորում էր Վարդաս Փոկասի որդին, Նիկեփոր Փոկասը, որը լինելով պատրիկ և Անատոլիկոն բանակաթեմի զորավար, ստացել էր հոր պաշտոնը, դառնալով սպարապետ։

Բյուզանդական զորքերը Վասիլ պատրիկի գլխավորությամբ գրավում են Սամոսատ քաղաքը և հսկայական ավար վերցնում։ Պակաս հաջողություն չի ունենում և Նիկեփոր Փոկասի եղբայրը, պատրիկ Լևոնը, որին Կոստանդին Միրանածինը, ինչպես տեսանք, իր առաջին մենիշխանության ժամանակ մագիստրոսի բարձր պատվաստիճանն էր շնորհել և նշանակել Անատոլիկոն բանակաթեմի զորավար։ Այն ժամանակ էր, որ իր սխրագործություններով հռչակվեց հայազգի զորավար Թեոփիլոսը, Հովհաննես Կուրկուասի հարազատ եղբայրը, որն ի վերջո կարողացավ արաբների ձեռքից գրավել Թեոդոսուպոլիս-Կարին քաղաքը (949 թ.)[2]։ Թեոփիլոսը դարձավ Խաղտիք բանակաթեմի զորավարը[3]։

---

[1] Theoph. Cont., p. 455.

[2] Նույն տեղում, էջ 428։ Թեոփիլոսը հետագայում, Նիկեփոր Փոկասի թագավորության օրոք, զարձավ մագիստրոս և սխոլերի դոմեստիկոս (սպարապետ)։ Նույն տեղում։ Հովհաննես Ջմշկիկը այս Թեոփիլոսի թոռն է։

[3] Նույն տեղում, էջ 428։

ԿՈՍՏԱՆԳԻՆ ԾԻՐԱՆԱԾԻՆԸ ԵՎ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ռոմանոս I Լեկապենոսի թագավորության և Կոստանգին Ծիրանածինի երկրորդ մենիշխանության ժամանակ բավական լայն ծավալ են ստանում հայ-բյուզանդական փոխհարաբերությունները։ Բյուզանդիան շարունակում է իր գործուն քաղաքականությունը հայոց, առաջին հերթին իր հարևան Տարոնի հայկական իշխանության նկատմամբ։ Պակաս եռանդ չի ցուցաբերում կայսրությունը և Ապահունիքում հաստատված կայսիկ ամիրաների, ինչպես և վրացիների նկատմամբ (տե՛ս ստորև)։ Հովհաննես Կուրկուասը բազում արշավանքներ է կատարում Կարին-Դվին ուղղությամբ, թեև ոչ միշտ հաջողությամբ։

Կոստանգին VII Ծիրանածինը վախճանվեց 959 թ. նոյեմբերի 15-ին, գահը թողնելով իր անչափահաս որդի Ռոմանոսին և վերջինիս մոր՝ Հելենեին։ Թեոփանեսի Շարունակողը տալիս է Կոստանգին կայսեր արտաքինի մանրամասն նկարագրությունը։ Նա բարձրահասակ էր, ուներ կաթի նման սպիտակ մորթ, երկար դեմք, վարդագույն այտեր, գեղեցիկ, ուրախ աչքեր։ Նա արծվաքիթ էր (γρυπὸς ἦτοι ἐπίρινον), երկարավիզ։ Նա նոճիի նման ուղիղ հասակ և լայն ուսեր ուներ[1]։

* *
*

Մակեդոնական հարստության տիրապետության ժամանակաշրջանում է՛լ ավելի է խորանում գյուղացիների ճորտացման պրո-

[1] Theoph. Cont., p. 468. *Կոստանգին VII Ծիրանածինի արտաքինի մասին լավ պատկերացում է տալիս մինչև օրս պահպանված նրա պատկերը, որ X դարի կեսերին փորագրվել է փղոսկրե մի տախտակի վրա և, հավանաբար, գրքի կազմ է եղել։ Պատկերը մեջ է բերված սույն գրքի սկզբում։ Փղոսկրե այդ տախտակը, որ ձեռք է բերել իշխան Ա. Ուվարովը էջմիածնում, մինչև 1932 թ. պահվում էր Մոսկվայի Պետական պատմական թանգարանում։ Այժմ գտնվում է Ա. Ս. Պուշկինի անվան կերպարվեստի թանգարանում (Մոսկվա)։ Տախտակի բարձրությունն է 18,6 սմ, իսկ լայնությունը՝ 9,5 սմ։ Անդրո առարկա պատկերով գրաղվել են բազմաթիվ ուսումնասիրողներ։ Տե՛ս* *P. Jurgenson*, Ein neues Denkmal des byzantinischen Porträts, Byzantinische Zeitschrift, Bd. 26, 1926, SS. 78—80; *A. Goldschmidt* und *K. Weitzmann*, Die byzantinischen Elfenbeiskulpturen, Bd. II, Berlin, 1934, № 35, SS. 35, 36, Taf. XIV; *J. Beckwith*, Two Exhibitions of Byzantine Art. The Burlington Magazin, №667, vol. C, 1958, p. 338, pl. 9; Idem, The Art of Constantinople. An Introduction, London, 1961, p. 67, pl. 80; *D. Talbot Rice*, The Art of Byzantium, London, 1959, p. 313, pl. 96. Apud *А. В. Банк*, Византийское искусство в собраниях Советского Союза, Л.-М., 1966, стр. 18, 299, табл. 124, 125.

ցեսը։ Գյուղացիությունը խնդրո առարկա շրջանում երկու մեծ խմբերի էր բաժանված—«պարիկոսներ», որոնք լինելով հողազուրկ, մշակում էին խոշոր կալվածատիրոջ հողերը, որոնց վրա էլ ապրում էին, և ազատ համայնակից գյուղացիություն, որ օրեցօր զիջում էր իր դիրքերը խոշոր հողատերերի առաջ։ Խոշոր հողատերերը (δυνατοί —ուժեղներ) արդեն իրավունք էին ստացել դնելու ազատ գյուղացուն պատկանող հողը, մի բան, որ անցյալի կայսրերը, ի պաշտպանություն միլիոնավոր հարկատու բնակչության, արգելել էին։ Նոր օրենքի համաձայն համայնքին պատկանող այն հողակտորները, որ երեսուն տարվա ընթացքում չէին մշակվում, դառնում էին պետության սեփականությունը և որպես կանոն վաճառվում էին խոշոր հողատերերին։ Այս բոլորը էլ ավելի էին խորացնում ազատ գյուղացիության ապրած ճգնաժամը։ Գյուղացիությունը, բացի հարկեր վճարելուց պետությանն էր մատակարարում նաև զինվորներ։ Այդ զինվորները, որպես կանոն, պետությունից հող էին ստանում։ Ազատ գյուղացիության աստիճանական նվազումը առաջացրեց և ստրատիոտների (զինվորական դասի) թուլացում, որը, հասկանալի է, պետության ռազմական հզորության թուլացում էր նշանակում։ Ռոմանոս I Լեկապենոս կայսրը շատ լավ էր հասկանում թե ինչ հետևանքներ կունենա այդ պրոցեսը։ Նա գիտակցում էր, որ գյուղացիական հողատիրությունը բավարարում է պետության երկու կարևոր պահանջները, այն է՝ ապահովում է պետական գանձարանը դրամական միջոցներով, իսկ բանակը՝ զինվորներով։ Այդ երկուսն էլ պիտի կրճատվեին, եթե կրճատվեր ազատ գյուղացիության քանակը։ Ռոմանոսը 922 թ. օրենք հրապարակեց, որի համաձայն ազատ գյուղացիների հողը կարող էր գնել միմիայն նրանց ազգականը, հարևանը, համագյուղացին, և վերջիններիս չգոյության դեպքում միայն այգ հողը կարող էր վաճառվել կողմնակի մարդու։ Դինատներին արգելվում էր գնել, կամ որևէ այլ ճանապարհով տիրանալ գյուղացու հողին։ Նախորդ երեսուն տարիների ընթացքում ստրատիոտներից գնված հողը պետք էր վերադարձվեր նախկին տերերին։ Այս օրենքը, սակայն, չունեցավ այն արդյունքները, ինչ ակնկալում էր Ռոմանոսը ուստի և հետագայում նույն բովանդակությամբ նորանոր օրենքներ հրապարակվեցին։

Մակեդոնական հարստության ժամանակաշրջանը բնորոշ է խոշոր կալվածատիրության ուժեղացմամբ։ Աղբյուրները հիշա-

տակում են այնպիսի խոշոր հողատերեր, որոնց ունեցվածքը համեմատվում է նույնիսկ կայսեր կարողության հետ։ Այդպիսին էր պելոպոնեսցի ազնվական մի կնոջ Դանիելիսի հարստությունը։ Նա Պելոպոնեսի մեծ մասի սեփականատերն էր, ուներ հազարավոր ստրուկներ և ճորտեր[1]։ Այդպիսի խոշոր հողատերերից էր և Եվստաթիոս Բոյիլասը, որին բյուզանդական կառավարությունը աքսորել էր Կղարջք, տալով նրան հսկայական կալվածքներ, ստրուկներ, ճորտեր և այլն[2]։

Խնդրո առարկա ժամանակաշրջանում լայն տարածում ունեցավ նաև եկեղեցական և վանական հողատիրությունը։ Պատկերամարտության պարտությունից (843) հետո սկսեց ավելի ու ավելի հզորանալ վանական դասը և պատրիարքի դերը։ Միայն մայրաքաղաքում հաշվվում էր շուրջ երեսուն հազար վանական։ Նրանք ունեին լայնատարած կալվածքներ, որոնց վրա սլարիկոսներ էին աշխատում։

Զարգացում ապրեցին քաղաքները և քաղաքային կյանքը, հատկապես ծովափնյա, մի բան, որ գլխավորապես կապված էր էգեական և Ադրիատիկ ծովերում բյուգանդական գերիշխանության տարածման հետ։ Մաղկում ապրեցին համքարությունները և արհեստները։

Կայսրության խոշորագույն քաղաքներն էին Կոստանդնուպոլիսն ու Թեսաղոնիկեն, որտեղ առևտուր էին անում ամենահեռավոր երկրներից ժամանած առևտրականները։ Զարգացում ապրեցին նաև Աթենքն ու Կորնթոսը, Տրապիզոնն ու Արծնը։ Արհեստավորներն ըստ իրենց մասնագիտության միավորվում էին համքարությունների մեջ, որոնք նաև առևտրական կազմակերպություններ էին։ Համքարությունների ղեկավարները միաժամանակ քաղաքապետի (էպարքոսի) անմիջական օգնականներն էին։ Շատ հաճախ համքարության ղեկավարի ընտրությունը կախված էր քաղաքի էպարքոսի կամքից։ Պետությունը ամեն կերպ օժանդակում էր արհեստների և առևտրի զարդացմանը, քանի որ իր եկամուտների մեծ մասը կուտակվում էր դրանցից հավաքած հարկերից։

---

[1] Տե՛ս սույն աշխատության մեջ, էջ 101։

[2] Նրա մասին մանրամասն տե՛ս Հ. Բարթիկյան, Եվստաթիոս Բոյիլասի կտակը որպես Հայաստանի և Վրաստանի պատմության կարևոր սկզբնաղբյուր, Բանբեր Մատենադարանի, № 5, 1960։

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԾԻՐԱՆԱՑԻՆԸ ԵՎ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Մակեդոնական հարստության ժամանակաշրջանում վերանում են քաղաքային ինքնավարության վերջին նշույլները։ Քաղաքային կուրիաները (խորհուրդները) փակվում են, քաղաքային վարչության անդամների ընտրովիությունը վերանում։ Սենատը ղրկվում է օրենսդրության մշակման աշխատանքներին մասնակցելու իրավունքից[1]։

---

[1] *Այս շրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս G. Ostrogorsky*, Agrarian conditions in the Byzantine Empire in the Middle Ages, The Cambridge Economic History of Europe from the decline of the Roman Empire, Cambridge, 1942, p. 194—223; *նույնի*, Pour l'histoire de la feodalite byzantine, Bruxelles, 1954; *նույնի*, Quelques problèmes d'histoire de la paysannerie byzantine, Corpus Bruxellense Historiae Byzantinae, Subsidia II, Bruxelles, 1956; *նույնի*, К истории иммунитета в Византии, Византийский Временник, т. XIII, 1958, стр. 55—107; *A. Marava*, Recherche sur la vie des esclaves dans le monde byzantin, Athènes, 1950; *G. Rouillard*, La vie rurale dans L'Empire byzantin, Paris, 1953; *А. П. Каждан*, Рабы и мистии в Византии в IX—XI вв., Ученые Записки Тульского гос. педагогического института, II, 1951, стр. 63—85; *նույնի*, Крестьянские движения в Византии в X в. и аграрная политика императоров Македонской династии, Виз. Вр. т. V, 1952, стр. 73—98; *նույնի*, Цехи и государственные мастерские в Константинополе в IX—X вв., Виз. Вр., т. VI, 1953, стр. 132—155; *նույնի*, Социальный состав населения византийских городов в IX—X вв., Виз. Вр., т. VIII, 1956, стр. 85—96; *նույնի*, К вопросу об особенностях феодальной собственности в Византии в VIII—X вв, Виз. Вр., т. X, 1956, стр. 48—65; *նույնի*, Формирование феодального поместья в Византии X в., Виз. Вр., т. XI, 1956, стр. 98—122; *նույնի*, Василики как исторический источник, Виз. Вр., т. XIV, 1958, стр. 56—66; *նույնի*, Некоторые нерешенные проблемы социально-экономической истории Византии, Вопросы истории, 1958, № 10, стр. 79—96; *նույնի*, Деревня и город в Византии в IX—X вв, Очерки по истории византийского феодализма, М., 1960; *նույնի*, Экскуссия и экскурсаты в Византии X—XII вв., Византийские очерки, М., 1961, стр. 186—217; *Е. Э. Липшиц*, К вопросу о городе в Византии в VIII—IX вв., Виз. Вр., т. VI, 1953, стр. 113—131; *նույնի*, О путях формирования феодальной собственности и феодальной зависимости в балканских и малоазийских провинциях Византии, Виз. Вр., т. XIII, 1958, стр. 28—55; *նույնի*, Несколько замечаний о Василиках как источнике, Виз. Вр., т. XIV, 1958, стр. 76—80; *М. Я. Сюзюмов*, О социальной сущности законодательства „Василик", Виз. Вр., т. VI, 1953, стр. 72—87; *նույնի*, О правовом положении рабов в Византии, Ученые записки Свердловского гос. педагогического института, вып. 11, 1955; *նույնի*, Василики как источник для внутреннеи истории Византии, Виз. Вр., т. XIV, 1958, стр. 67—75; *նույնի*, Византийская книга эпарха, М., 1962; *К. А. Осипова*, Развитие феодальной

* * *

Կոստանդին Միրանածինը եթե որպես կայսր ոչնչով չէր տարբերվում բյուզանդական այլ կայսրերից, եթե նրա քաղաքական ու ռազմական գործունեությունը, հակառակ իր կենսագիրների ծաղկազարդման, ոչնչով աչքի չէր ընկնում, ապա իր գրական ու մշակութային գործունեությամբ նա բացառիկ երևույթ է ոչ միայն բյուզանդական հազարամյա պատմության, այլև միջնադարի պատմության մեջ ընդհանրապես[1]։ Միրանածինի անձնավորության լավագույն բնութագիրը տվել են նրա ոչ հեռու ժամանակակից-

---

собственности на землю и закрепощение крестьянства в Византии X в., Виз. Вр., т. X, 1956, стр. 66—80; *Նույնի*, Аллиленгий в Византии в X в., Виз. Вр., т. XVII, 1960, стр. 28—38; *Р. Браунинг*, Рабство в Византийской империи (600—1200 гг.), Виз. Вр., т. XIV, 1958, стр. 38—55; *Д. Ангелов*, О некоторых вопросах социально-экономической истории Византии, Вопросы истории, 1960, № 2; *P. Lemerle*, Esquisse pour une histoire agraire de Byzance: les sources et les problèmes, „Revue Historique", t. 219, 1958, p. 32—74, 254—284, t. 220, 1958, p. 43—94; Сборник документов по социально-экономической истории Византии, М., 1951, стр. 127 и сл.; История Византии, т. II, М., 1967, стр. 115 и сл.

[1] *Կոստանդին Միրանածինի աշխատությունների մասին կա հսկայական գրականություն։ Ամենամանրամասն մատենագիտությունը տե՛ս հետևյալ գործերում։* *Gy. Moravcsik*, Byzantinoturcica, Bd. I, Die byzantinischen Quellen der Geschichte der Türkvölker, Zweite durchgearbeitete Auflage, Berlin, 1958, S. 360—361, 367—379, 382—386, 389—390; *M. E. Colonna*, Gli storici bizantini dal IV al XV secolo, I, Storici profani, Napoli, 1956, p. 28—30։ *«Բանակաթեմերի մասին» աշխատության ռուսերեն ամբողջական թարգմանությունը իրականացրել է Պալաուսովը. տե՛ս* *Паламсов*, Чтения в Императорском Обществе истории и древностей российских при Московском университете, 1858, июль-сентябрь, III, 4, стр. 1—32: *«Բանակաթեմերի մասին» երկի այս թարգմանությունը, ինչպես և «Կայսրության կառավարման մասին» գործը վերահրատարակվել է Գ. Լասկինի առաջաբանով։ Տե՛ս* Сочинения Константина Багрянородного „О фемах" (De Thematibus) и „О народах" (De administrando imperio) с предисловием Г. Ласкина, М., 1899: *Վ. Վ. Լատիշևը Կոստանդին Միրանածինի աշխատություններից թարգմանել է «Կայսրության կառավարման մասին» երկի Կովկասին և Մերձևեծովյան շրջանին վերաբերող հատվածները, «Բանակաթեմերի մասին» երկից մեկ էջ, որը վերաբերում է Թերսոնին, իսկ «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին» երկից երկու էջ՝ ռուս իշխանուհի Օլգայի Կոստանդնուպոլիս այցելության վերաբերյալ։ Տե՛ս* Известия византийских писателей о Северном Причерноморье, Известия государственной Академии истории материальной культуры, Выпуск 91, М.-Л., 1934.



Թեոփիլոս



Թեոդորա



Միքայել III և Թեոդորա



Միքայել III և Թեկլա



Վասիլ I Մակեդոնացի



Վասիլ I և Կոստանդին



Կոստանդին և Եվդոկիա



Լևոն VI

Բյուզանդական ոսկեդրամներ (Մեծացված են)
(Պետական էրմիտաժ)



Լեոն VI և Կոստանդին VII
Միրանածին



Քրիստոսը թագադրում է
Ալեքսանդրին



Կոստանդին VII
Միրանածինն իր մոր՝
Զոեյի հետ



Կոստանդին VII
Միրանածին և Ռոմանոս I
Լեկապենոս



Ռոմանոս I Լեկապենոս
և Կոստանդին VII
Միրանածին



Քրիստոսը թագադրում է
Ռոմանոս I-ին



Կոստանդին VII
Միրանածին



Կոստանդին VII
Միրանածինն իր որդու
Ռոմանոս II-ի հետ

Բյուզանդական ոսկեդրամներ (Մեծացված են)

ները։ XI դարի հեղինակ Սկիլիցան նրա մասին գրում է. «Ինդիկտիոնի 6-րդ տարին՝ հուլիս ամսին իր մահկանացուն կնքեց և նրանց հայրը՝ Ռոմանոսը ու թաղվեց Միրելեոնում։ Իսկ Շիրանածինը մեջտեղից վերացնելով կասկածելիներին, իր ձեռքն առավ ողջ ինքնակալական իշխանությունը։ Նույն ինդիկտիոնի սուրբ Ջատկի օրը նա իր որդի Ռոմանոսի գլխին թագ դրեց։ Արարողությունը տեղի ունեցավ ձեռամբ պատրիարք Թեոփիլակտոսի։ Մարդիկ հույսեր էին տածում, որ եթե (Կոստանդինը) միահեծան թագավորի, արիություն հանդես կբերի և կայսրության վերաբերող հարցերին ավելի եռանդուն կվերաբերվի, բայց նա թուլամորթ դուրս եկավ և իր վրա դրված հույսերը ամենևին չարդարացրեց։ Նա տարվեց հարբեցողությամբ, չէր սիրում դժվար գործ բռնել. նա անհաշտ էր զանցագործների հանդեպ և անողոք պատուհասող։ Նա ղեկավար մարդկանց ընտրության հարցում անտարբեր էր, նրանց առաջ էր քաշում ոչ թե ելնելով բարեմասնություններից, ինչ որ ապացույց է մեծափառ իշխանություն [կրողների]։ Նա իշխանությունը, լինի ռազմական թե քաղաքական, առանց ստուգելու տալիս էր պատահական մարդկանց։ Քաղաքական ամենաբարձր պաշտոնները նա տալիս էր ռամիկ ու արատավորված մարդկանց։ Այդ հարցում նրա վրա շատ էին ազդում իր կին Հելենեն և պարակիմոմենոս Վասիլը, ովքեր նախապատրաստեցին պաշտոնները վաճառքի առարկա դառնալու գործը»[1]։

Սկիլիցան, այնուամենայնիվ, ստիպված է խոստովանել Շիրանածինի բարեմասնությունները ևս. «Այնուամենայնիվ,—շարունակում է նա,—Կոստանդինը բարի գործեր էլ կատարեց։ Նրա հոյակապ և հիանալու արժանի արարքները կարողացան ստվեր գցել նրա պակասություններից շատերի վրա և սքողել դրանք։ Նա անձնական ջանքերով կյանքի կոչեց կառավարողների անհոգության և տգիտության պատճառով բազում տարիների ընթացքում կորստյան մատնված գիտությունները, այն է թվաբանությունը, երաժշտությունը, աստղաբաշխությունը, երկրաչափությունը, տարածաչափությունը, և բոլորից բարձր կանգնած փիլիսոփայությունը։ Նա յուրաքանչյուր [գիտության] համար որոնեց և գտավ լավագույն և ընտիր ուսուցիչների, նա [աշակերտելու] ընդունեց և ուսման տվեց ամենից ընդունակներին։ Այդպիսով նա

[1] Georgii Cedreni Historiarum Compendium, t. II, Bonnae, 1839 p. 325—326.

կարճ ժամանակամիջոցում վտարեց տգիտությունը և պետական կարգը վերափոխեց դեպի ավելի իմաստուն։ Նա ուշադրություն դարձրեց նաև արհեստների վրա և նրանք ևս բարձր զարգացման հասցրեց»[1]։

Կոստանդին Ծիրանածինի մեզ հասած ամենակարևոր աշխատությունը «Կայսրության կառավարման մասին» (De Administrando Imperio) *երկն է։ Նշված խորագիրը պատկանում է հրատարակիչ Մեուրսիուսին։ Բնագրում այն ունի բավական ընդարձակ վերնագիր. «Կամավն Քրիստոսի, հավիտենական թագավորի, հռոմայեցիների կայսր Կոստանդինն իր որդուն՝ աստվածապսակյալ և ծիրանածին կայսր Ռոմանոսին»* (Κωνσταντίνου τοῦ ἐν Χριστῷ βασιλεῖ αἰωνίῳ βασιλέως Ῥωμαίων πρὸς τὸν ἰδιον υἱὸν Ῥωμανὸν τὸν θεοστεφῆ καὶ πορφυρογέννητον βασιλέα)։ *«Իմաստուն որդին ուրախացնում է հորը,—գրում է Ծիրանածինը իր խնդրո առարկա երկի առաջաբանում, դիմելով Ռոմանոսին,—իսկ գուրգուրացող հայրը ուրախանում է իր ողջամիտ որդով... Լսի՛ր դու այժմ ինձ, որդի՛, յուրացնելով այս գիրքը, դու խոհեմ մարդկանց շրջանում իմաստուն կհամարվես, իսկ իմաստունների շրջանում՝ խոհեմ։ Դու նախ կիմանաս, թե ո՞ր ժողովուրդը ի՞նչ օգուտ կամ վնաս կարող է տալ հռոմայեցիներին, այդ ժողովուրդներից յուրաքանչյուրի դեմ ո՞ր ժողովրդին կարելի է պատերազմի հանել և պարտության մատնել... [Դու կիմանաս] այդ ժողովուրդների յուրահատկությունների մասին, նրանց ծննդաբանության և ապրելակերպի, նրանց բնակեցրած շրջանի տեղադրության, կլիմայի, աշխարհագրության, մի ժողովրդի մյուսից ինչքան հեռավորության վրա գտնվելու, նրանց՝ հռոմայեցիների և այլ ժողովուրդների միջև երբևիցե տեղի ունեցած դեպքերի մասին և վերջապես թե ինչ տեղի ունեցավ մեր թագավորության ժամանակ, ամբողջ հռոմեական իշխանության մեջ որևէ ժամանակ կատարված փոփոխությունների մասին։ Ահա, ես այդ մասին էի մտածում և ցանկություն ունեցա, որ դա քեղ, իմ սիրելի որդուն, հայտնի դառնա, որպեսզի դու իմանաս յուրաքանչյուր [ժողովրդի] առանձնահատկությունների մասին և հնարավորություն ունենաս նրանց օգտագործել, սերտ կապեր հաստատել նրանց հետ, կամ էլ հակադրվել նրանց և պատերազմով [հաղթահարել]...»։*

Վերոհիշյալ առաջաբանը, ինչպես և աշխատության վերնագիրը պարզ ցույց են տալիս, որ Ծիրանածինի խնդրո առարկա

[1] Ibidem, p. 326.

Հրկը լայն հրապարակման ենթակա չէր։ Դա մի ձեռնարկ էր, որդուն հասցեագրված, և պատահական չէ, որ ավելի ուշ շրջանի բյուգանդական հեղինակներին այդ աշխատությունը հայտնի չէ, ինչպես և այն հանգամանքը, որ տվյալ երկի միայն մեկ գրչագիրն է հայտնի բյուղանդագիտությանը։

«Կայսրության կառավարման մասին» աշխատությունը ստորաբաժանվում է 53 գլուխների[1], ընդ որում հակառակ կայսեր ունեցած որոշակի ծրագրին, երկի կառուցվածքի մեջ կան անհամաչափություններ, կրկնություններ, ապա նաև հակասություններ և սխալներ[2]։ Աչքի է գարնում այն, որ առանձին ժողովուրդների մասին շատ քիչ բան է ասված, թեև ակնկալվում էր հակառակը, օրինակ բուլղարների կապակցությամբ։

«Կայսրության կառավարման մասին» աշխատության առանձին մասերը շարադրվել են տարբեր ժամանակներում և այդ մասին պարզ վկայում են աշխատության մեջ հանդիպող թվական տվյալները։ 13-րդ և 51-րդ գլուխներում ցույց է տրված, որ Ռոմանոս Լեկապենոսն արդեն հանգուցյալ է. դա վկայում է, որ տվյալ գլուխները կարող են գրված լինել 948 թ. հունվարի 15-ից հետո։ 27-րդ և 29-րդ գլուխներում հեղինակը նշում է աշխարհի արարչագործության 6457 թ., որ համապատասխանում է մ. թ. 948/949 թթ.։ 44-րդ գլուխը գրված է 6460 թ. (951/952 թթ.), ինչպես այդ մասին նշում կա այնտեղ։ Այդպիսով պարզ է դառնում, որ խնդրո առարկա գործը շարադրվել է 948—952 թվականների ընթացքում[3]։

«Կայսրության կառավարման մասին» աշխատության բովանդակությունը ցույց է տալիս, որ կայսրն ունեցել է երկու նպատակ. նախ իր ժառանգին տալ գործնական ցուցմունքներ՝ արտաքին դիվանագիտական գործերը վարելու համար և երկրորդ՝ տալ Բյուգանդական կայսրությունը շրջապատող ժողովուրդների պատմությունը, մի բան, որ իր ավարտին չհասցվեց։

---

[1] Ուսումնասիրողների կարծիքով «Կայսրության կառավարման մասին» աշխատությունը գլուխների է բաժանվել հետագայում։ Տե՛ս J. B. Bury, The treatise „De administrando imperio", Byzantinische Zeitschrift, Bd. XV, H. 3—4, 1906, p. 531—533.

[2] Տե՛ս М. В. Левченко, Очерки по истории русско-византийских отношений, М., 1956, стр. 182—184.

[3] J. B. Bury, op. cit., p. 518.

Որդուն ուղղված նախաբանը, ամեն մի բաժնի և ենթաբաժնի սկզբում ասվածները բերում են այն եզրակացության, որ Կոստանդին Ծիրանածինն է այս երկի միակ խմբագիրը, թեև կասկածի ենթակա չէ, որ կայսրն ունեցել է օգնականների մի ամբողջ խումբ, որն իրեն օժանդակել է նյութի հավաքման, ինչպես նաև առանձին բաժինների մշակման գործում։

Կոստանդին Ծիրանածինի այս երկի ստեղծման համար օգտագործված աղբյուրներից ոչ բոլորն են հայտնի։ Զգալի տեղ է գրավում Թեոփանես Խոստովանողի նշանավոր «Ժամանակագրությունը» հատկապես արաբներին նվիրված բաժնում, ապա նաև Գևորգ Վանականի «Ժամանակագրությունը»։ Իբերիային (Արևմուտքի) և Իսպանիային վերաբերող գլուխների շարադրման համար օգտագործված է Ստեփանոս Բյուզանդացու աշխարհագրական բառարանը։ Կասկածի ենթակա չէ, որ Ծիրանածինը օգտագործած պիտի լինի անգնահատելի արժեք ներկայացնող այնպիսի մի աղբյուր, ինչպիսին է արքունի դիվանատունը և հատկապես նրա «Բարբարոսաց դիվանը» (σχρινίον τῶν βαρβάρων), որտեղ ի միջի այլոց պահվում էին նաև դեսպանական զեկույցներ և այլն։

Կայսրը որպես կանոն ամենայն ճշգրտությամբ է վերարտադրում իր աղբյուրների ընձեռած նյութը, նա որևէ փոփոխություն չի մտցնում, չի աշխատում վերացնել տարբեր աղբյուրների հաղորդած տեղեկությունների միջև նկատվող հակասությունները։ Նրա մոտ հավաստի, շատ արժեքավոր նյութի կողքին կարելի է գտնել երկրորդական, երրորդական, նույնիսկ ամենևին հավատ չներշնչող տեղեկություններ[1]։

«Կայսրության կառավարման մասին» աշխատության 1—13-րդ գլուխները քննության են առնում պեչենեգների, ուղերի, խազարների, ալանների, ռուսների, բուլղարների և թուրքերի (իմա՛ հունգարացիների) փոխհարաբերությունները միմյանց և կայսրության միջև, մանրամասն ցույց է տրված, թե ո՞ր ժողովրդին կարելի է լարել մեկ ուրիշի դեմ, Բյուգանդական կայսրությունը նրանց հնարավոր ոտնձգություններից զերծ պահելու համար։

14—42-րդ գլուխներից բաղկացած ստվար բաժնում տրվում է արաբների մանրամասն պատմությունը։ Սկզբում խոսվում է Մուհամմեդ մարգարեի ծննդաբանության մասին, ապա տրվում է

[1] Տե՛ս Gy. Moravcsik, նշվ. աշխ., էջ 367։

Ֆաթեմյանների տոհմի պատմությունը, Իսպանիայի, Իտալիայի և Դալմատիայի նախապատմությունը: Արաբների պատմության կապակցությամբ Ծիրանածինն օգտվում է Թեոփանեսի «Ժամանակագրությունից», մեջ բերելով և փաստեր, որոնք սերտ առնչություն ունեն հայ ժողովրդի պատմության հետ[1]: Այս բաժնի 27-րդ գլուխը նվիրված է Լանգոբարդիայի բանակաթեմին, որի պատմությունը թեև բերված է ոչ լրիվ, և, բացի այդ, բովանդակում է բաղում կոպիտ սխալներ, այսուհանդերձ մեզ համար արժեքավոր է հայազգի նշանավոր զորավար, Հուստինիանոս կայսեր (527—565) գանձապահ Նսրսեսի մասին մեջ բերված շատ հետաքրքրական զրույցով:

Դալմատիային նվիրված բաժնում խոսվում է արաբների այդ նահանգի վրա կատարած արշավանքի և Վասիլ I Մակեդոնացու նրանց դեմ վարած սլատերազմների մասին, դեպքեր, որոնց մենք հանդիպում ենք նաև Վասիլ I կայսեր կենսագրության մեջ, որի թարգմանությունը տեղ է գտել այս հատորում: Ծիրանածինն այնուհետև շարադրում է խրվաթների, սերբերի պատմությունը և նրանց երկրի աշխարհագրությունը, ինչպես և նրանց հարևան ժողովուրդների, ավարների, բուլղարների, պեչենեգների, Թուրքերի (իմա՛ հունգարացիների) և խազարների: Այս բաժինն ավարտվում է Դանուբի ու Կովկասի միջև ընկած երկրամասի պատմության շարադրանքով:

Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար անգնահատելի արժեք ունեն 43—46-րդ գլուխները: Կայսրությունն IX դարի կեսերից եռանդուն գործունեություն էր ծավալել Հայաստանի Բագրատունիների և հայկական այլ իշխանությունների նկատմամբ: Կայսրությունն ամենից առաջ շփման մեջ մտավ Տարոնի իշխանության հետ: Դեռևս պատրիարք Փոտը սերտ նամակագրություն ուներ Տարոնի իշխանավորների հետ: Մեզ է հասել «ուղղափառությունն» ընդունած Տարոնի հայերին հասցեագրված Փոտի նամակների մասին հիշատակություն (καὶ τῶν Ἀρμενίων τοὺς ὀρθοδοξήσαντας δευτέρα πάλιν σταλεῖσα ἐπιστολή, τοὺς κατοικοῦντας τὴν τετάρτην Ἀρμενίαν Ταρρωνίτας)[2]: Տարոնի իշխանու-

[1] Այդ հատվածները սույն թարգմանության մեջ տեղ չեն գտել այն պարզ նկատառումով, որ Թեոփանեսի «Ժամանակագրությունը» հետագայում կազմելու է սույն մատենաշարի առանձին հատորը:

[2] Տե՛ս J. Darrouzes, Notes d'epistolographie et d'histoire de textes, Revue des Études Byzantines, t. XII, 1954, p. 185.

թյան պատմությանն է նվիրված ահա Միրանածինի «Կայսրության կառավարման մասին» աշխատության 43-րդ գլուխը, որը վերնագրված է «Տարոն երկրի մասին» (Περὶ τῆς χώρας τοῦ Ταρών)։ Ինչպես հայտնի է, հայկական աղբյուրները այդ իշխանության մասին չնչին նյութ են տալիս, այդ իսկ պատճառով Միրանածինի խնդրո առարկա աշխատության արժեքը անգնահատելի է դառնում։

Տարոնի հայկական իշխանությունը[1] ստեղծվել էր IX դարի առաջին կեսին։ Տարոնը նախապես Մամիկոնյանների տիրույթն էր, բայց VIII դարի ընթացքում աստիճանաբար անցնում է Բագրատունիների ձեռքը։ 830 թ. Բագարատ Հիմնադրում է Տարոնի Բագրատունիների իշխանությունը։ 851 թ. Բագարատը դերի է ընկնում արաբների ձեռքը և վախճանվում Բաղդադում։ Նրա իշխանությունը ժառանգում է որդին՝ Աշոտը, իսկ նրա մահից հետո (878) վերջինիս եղբայրը՝ Դավիթ-Արքայիկը, ապա վերջինիս որդի Աշոտը։ Միրանածինի ժամանակ Տարոնի իշխանն էր Գրիգորը, իսկ Գրիգորի մահից հետո նրա երկու որդիները, Բագարատն ու Աշոտը։

Տարոնի իշխանի վիճակը իսկապես որ շատ դժվարին էր։ Գտնվելով երկու աշխարհակալ պետությունների միջև, նա ստիպված էր անընդհատ խուսանավել, նրանցից մեկն ու մեկի դեմ չդառնալու համար։ Դեռ ավելին, սկզբնական շրջանում նա փաստորեն արաբների կողմն էր։ Այդ բանը շատ հստակ երևում է Միրանածինի աշխատությունից։ «...Հենց սկզբից նա (իմա՛ Տարոնի իշխան Գրիգորը—Հ. Բ.).—գրում է Միրանածինը,—երկու լարի վրա էր խաղում, խոսքով ձևացնում էր, թե գնահատում է կայսեր բարեկամությունը, բայց իրականում աշխատում էր հաճոյանալ սարակինոսների առաջնորդին։ Տարբեր ժամանակներում նա [նույն Գրիգորը] Ասորիքից դուրս եկող և Հռոմայեցիների

---

[1] *Տարոնի պատմության մասին տե՛ս հետևյալ կարևոր աշխատությունները. M. Brosset*, Collection d'historiens armeniens, t. I, Appendice II Sur le Taron et les Taronites. p. 613 sqq., S. Pétersbourg, 1874; *J. Markwart*, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930; *N. Adontz*, Les Taronites en Arménie et à Byzance, Études Arméno-Byzantines, Lisbonne, 1965, p. 197—263; *Նույնի* Observations sur la généalogie des Taronites, Reponse au R. P. V. Laurent, Byzantion t. XIV (1938), fasc. 2, p. 407—413; *V. Laurent*, Alliances et filiation des premiers Taronites princes arméniens mediatisés, Échos d'Orient, t. 37 (1938), p. 127—135.

կայսեր ենթակա բանակաթեմերի վրա արշավող [սարակինոսնե-րի] զորքերին ճանապարհ էր ցույց տալիս, ինչպես նաև Ասորիք էր հայտնում հակառակորդ սարակինոսների դեմ հռոմայեցիների գաղտնի ծրագրերը։ Նա շարունակ թաքուն նամակներ էր ուղար-կում ամերմումնիին [խալիֆային] և նրան տեղյակ պահում այն ամենի մասին, ինչ կատարվում էր մեզ [իմա՛ բյուզանդացինե-րի—Հ. Բ.] մոտ։ Նա ձևացնում էր, թե հռոմայեցիների կողմն է, բայց իրականում նախապատվություն էր տալիս սարակինոսներին և գործում նրանց օգտին»։

Պակաս դժվարություններ չէին ներկայացնում նաև ներքին հակասությունները, որոնք պայմանավորված էին իշխան Գրիգո-րի և վերջինիս եղբայր Ապոգանեմի շահերի բախմամբ, հակա-սություններ, որոնք Բյուգանդական կայսրությունը սրում և ցան-կանում էր օգտագործել հեռու գնացող իր նպատակների համար։ Կայսրության առաջին մտահոգությունն էր իշխան Գրիգորին ստի-պել արաբական խալիֆայության հետ հարաբերությունները խզե-լու։ Երկար դիմադրությունից հետո իշխան Գրիգորը ընդառաջ գնաց դրան։ Եթե նա սկզբում ամենևին էլ ականջ չէր դնում կայ-սեր հրավերին՝ գնալ Կոստանդնուպոլիս, վախենալով իր դեմ գրգռել արաբներին, ի վերջո գնաց։ Կայսեր առաջին գործը եղավ Գրիգորին շնորհել մագիստրոսի՝ օտարերկրացուն պարգևվող ամենաբարձր պատվաստիճանը։ Նրան հայտարարեցին «Տարոնի զորավար» (στρατηγός)։ Դա արդեն ապացույց էր այն բանի, որ Տարոնի իշխանությունը արդեն վասալական կախման մեջ է ըն-կել կայսրությունից։ Ամենայն հավանականությամբ հենց այդ ժամանակ է, որ Բյուզանդիան մագիստրոս Գրիգորին նշանակեց կայսերական հռոգ (ῥόγα) 10 լիտր ոսկի (720 դահեկան) և 10 լիտր արծաթ։ Այդ ժամանակի համար դա հսկայական գումար էր, և այնքան մեծ նշանակություն ուներ, որ դրան արժանանալու էին ձգտում ոչ միայն Շիրակի հայ Բագրատունիները, այլև վրաց կուրապաղատ և Վասպուրականի Արծրունիները[1]։

Բյուզանդական կայսրությունը Տարոնի վրա իր ազդեցու-թյունը տարածելու համար օգտագործում էր Բյուզանդիայում ծառայող հայ բարձրաստիճան պաշտոնյաներին։ Նրանցից էին

[1] Այդ մասին մանրամասն տե՛ս «Կայսրության կառավարման մասին» աշ-խատության 43-րդ գլխի 30-րդ ծանոթագրության մեջ։

օքսեոս դրոմոսի խարտուլար ներքինի Սինուտեսը (Սյուննեցին), հայ թարգման Թեոդորոսը, պրոտոսպաթար Կոսմասանդինը, թարգման Կրինիտեսը և ուրիշներ։ Փոքր դեր չէին խաղում նաև խնամիական կապերը։ Տարոնի իշխան Գրիգորի ավագ որդի Բագրատին Լևոն VI կայսրը կնության տվեց մագիստրոս Թեոփիլակտոսի քրոջ, Գրիգորի եղբայր Ապոգանեմին՝ պրոտոսպաթար Կոստանդինի դստեր։

Բյուզանդիայի համար քիչ էր Տարոնը վասալական կախման մեջ գցելը։ Նրա վերջնական նպատակը Տարոնի վավթումն էր և այն՝ արաբների դեմ մղվող պատերազմի հենարան դարձնելը։ Դրա հետ միասին կայսրությունը հենարան կունենար ծավալվելու նաև դեպի բուն Հայաստան, նվաճել բուն Հայաստանը, որ երկարյա ստրկությունից հետո հաղիվ էր ոտքի կանգնել, ստեղծելով սեփական թագավորություն։

Կոստանդին Միրանածինի ժամանակ Բյուզանդիային հաջողվեց իր աղդեցությունը տարածել Տարոնի վրա, ինչպես ասացինք, օգտագործելով Տարոնի ներսում ծագած երկպառակությունները։ Մագիստրոս Գրիգորի որդիները Բագարատն ու Աշոտը միացած աշխատում էին տիրանալ իրենց հորեղբայր Ապոգանեմի որդու՝ Թոռնիկի տիրույթներին։ Ի վերջո Թոռնիկն ստիպված իր տիրույթները կտակեց Բյուզանդիային։ Թեև Բագարատի և Աշոտի պահանջով կայսրությունը այն ժամանակ ստիպված հրաժարվեց Ապոգանեմի տիրույթներից, այնուամենայնիվ Տարոնը բաժանվել էր երկու մասի՝ Գրիգորի որդիները Բագարատի և Աշոտի, և Գրիգորի եղբայր Ապոգանեմի որդիների միջև։ Այս հանգամանքը անշափ թուլացրեց Տարոնի իշխանության դիմադրողականությունը և Տարոնի ղավթումը արդեն օրակարգի հարց էր։ Իշխան Աշոտը Տարոնը «կտակեց» կայսրությանը և նրա մահից հետո (966) Բյուզանդիան տիրացավ իր «ժառանգության»։

Սա հայկական հողերի առաջին «կտակման» օրինակն էր։ Դրան էին հաջորդելու բաղում այլ «կտակներ», որով վերջ էր տրվելու հայոց ինքնուրույն պետականությանը։

«Կայսրության կառավարման մասին» աշխատության 44-րդ դլուխը նվիրված է Ապահունիք գավառում հաստատված կայսիկ ամիրայության մանրամասն պատմության[1] և ունի բավական եր-

---

[1] *Այս ամիրայության պատմության և Միրանածինի աշխատության տվյալ գլխի մասին մանրամասն տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյանի Արաբական ամիրայու-*

կար վերնագիր. «Ապախունի երկրի, Մանցիկիերտ ամրոցի, Պերկրիի, Խլիատի, որ և Խալիատ, Արղեսի, Տիվիի, Խերտի, Սալամասի և Ցերմացուի մասին» (Περὶ τῆς χώρας τῆς Ἀπσχουνῆς καὶ τοῦ κάστρου τοῦ Μαντζικιερτ καὶ τοῦ Περκρὶ καὶ τοῦ Χλιάτ καὶ τοῦ (ճիշտը՝ τοῦ καὶ) Χαλιάτ καὶ τοῦ Ἀρζες καὶ τοῦ Τιβῆ καὶ τοῦ Χέρτ καὶ τοῦ Σαλαμὰς καὶ τοῦ Τζερματζοῦ):

IX գարի 60-ական թվականներին արաբական այս ամիրայություներ Ապահունիքի տերն էր արդեն և ուշադրին ամիրան, որ հիշվում է աղբյուրներում Աբու-լ-Վարդ I-ն էր: Ծիրանածինը ցույց է տալիս, որ Աշոտ I Բագրատունուց առաջ Բերկրի, Խլաթ և Արճեշ ամրոցները գտնվում էին արաբական խալիֆաթի իշխանության ներքո: Նույն հեղինակի ասելով, Աշոտ I-ի օրոք դրանք գտնվում էին հայոց թագավորի հպատակության ներքո: Հենց Աշոտ I-ն էր, որ Մանազկերտում իշխող արաբ ամիրա Աբու-լ-Վարդ I-ին տվեց Խլաթը, Արճեշը և Բերկրին: Բոլոր դեպքերում արաբ ամիրան շարունակում էր մնալ հայոց թագավորից վասալական կախման մեջ, նրան վճարելով ամենամյա հարկ: Նման դրություն շարունակվեց մինչև Ամբատ I-ի թագավորության վերջը: Ամբատ I-ի օրոք Մանազկերտի ամիրա Աբու Սևադան, Աբու-լ-Վարդ I-ի թոռը, օգտվելով Հայաստանի խառը իրավիճակից, իրեն անկախ հռչակեց: Թովմա Արծրունին ցույց է տալիս, որ Ամբատ թագավորը, իր արքունի, ապա և վասպուրականի, Անձևացյաց և Մոկաց զորքերի, վրաց և աղվանից գնդերի օգնությամբ կարողանում է ճնշել կայսիկների ապստամբությունը և թույլ չտալ իր պետության անդամահատումը: Բայց դա երկար չի տևում: 913 թ. երբ Ամբատ I-ը պարտություն կրեց Յուսուֆ ամիրայից և գլխատվեց, հնարավորություն ստեղծվեց Ապահունիքի ամիրայության անկախության հռչակման համար, մի բան, որ նույնպես երկար չտևեց, որովհետև, ինչպես Ծիրանածինն է ցույց տալիս, Բյուղանդիան ստիպված ուժերով ստիպեց նրան կայսեր հպատակություն հայտնել և կայսրության վճարել ամենամյա հարկ: Այս ժամանակաշրջանում Ապահունիքի ամիրայությունն արդեն բաժանված էր երեք եղբայրների միջև, Աբու Սևադայի (Մանազկերտ, Կորո Ձոր, Հարք), Աբու-լ-Ասվադի (Արճեշ, Խլաթ և Արծկե) և Աբու Սալիմի (Հարքի հյուսիս-արևմուտքում գտնվող Սերմանցը):

Բյուններր Բագրատունյաց Հայաստանում, գիրք. Երևան, 1965, էջ 96 և հտ., 120 և հտ., 143 և հտ.:

Ծիրանածինը մեզ տալով Ապահունիքի ամիրայության վերոհիշյալ պատմական ակնարկը, ավելի հեռուն գնացող նպատակներ է հետապնդում։ Հայոց թագավորին համարելով իր վասալը, այդ տրամաբանությամբ իրեն ենթակա է համարում և Ապահունիքի ամիրայությունը. «Քանի որ,—գրում է նա,—իշխանաց իշխան (այն է հայոց թագավորը) հռոմայեցիների կայսեր ծառան է և նշանակվում է իր, կայսեր կողմից, և նրանից է ստանում իր իշխանությունը, ուստի նրա տիրապետության տակ գտնվող բերդերը, քաղաքներն ու գյուղերը հռոմայեցիների կայսեր են պատկանում»։

Ծիրանածինը Ապահունիքի արաբական ամիրայության պատմությունը հասցնում է մինչև իր ժամանակները, X դարի կեսերը, ցույց տալով, որ այդ ժամանակ Մանազկերտում էր իշխում Աբու Սալիմի որդի Աբու-լ-Վարդ II-ը, իսկ Խլաթը, Արճեշը, Արծկեն և Բերկրին գտնվում էին Ախմետի իշխանության ներքո։ Աբու-լ-Վարդին հաջողվում է սպանել Ախմետին և տիրանալ նրա բերդերին։ Այսպիսով X դարի կեսերին ամբողջ Ապահունիքը նորից մի իշխանության տակ անցավ։ Ծիրանածինը այս գլխի վերջում իր որդուն տալիս է ծրագրային ցուցմունքներ. «Այդ երեք ամրոցները, Խլիատը, Արզեսը և Պերկրին եթե գտնվեն կայսեր ձեռքում, ապա պարսկական զորք (իմա՛ արաբական) Ռոմանիայի դեմ դուրս գալ չի կարող, որովհետև նրանք գտնվում են Ռոմանիայի և Հայաստանի միջև և իրենցից ներկայացնում են պատնեշ և զորակայան»։

Կոստանդին Ծիրանածինի (Կայսրության կառավարման մասին» աշխատության 45-րդ գլուխը վերնագրված է «Իբերների մասին» (Περὶ τῶν Ἰβήρων), որտեղ համառոտակի տրվում է վրացիների առասպելական ծննդաբանությունը և պատմությունը շարունակելով հասցվում է մինչև աշխարհի արարչագործության 6460 թվականը (մ. թ. 952)։ Այս գլուխը, որ իր նպատակադրությամբ նախորդ՝ 44-րդ գլխի օրգանական շարունակությունն է, ցույց է տալիս, թե ինչպես Բյուգանդական կայսրությունը, արաբական խալիֆայության թուլացումից հետո սկսեց տարածել իր շոշափուկները դեպի Արևելք, նորանոր շրջանների տիրանալու համար։ Ուշադրության կենտրոնում էր Թեոդոսուպոլիս-Կարին կարևոր քաղաք-ամրոցը և Բասեն գավառը, որոնց դեմ մղված պայքարում ամենից շատ աչքի ընկավ մագիստրոս Հովհաննես Կուրկուասը, ինչպես և վերջինիս եղբայր Թեովիլոսը։

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԾԻՐԱՆԱԾԻՆԸ ԵՎ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես պարզ երևում է Ծիրանածինի աշխատության այս գլխից, և՛ Տարոնի հայոց իշխանը, և՛ վրաց իշխանները աշխատել են չեզոք լինել արաբական խալիֆայության և արաբական ամիրայությունների նկատմամբ: «Իբերները,—գրում է Ծիրանածինը,—մշտապես լավ և բարեկամական հարաբերությունների մեջ էին Թեոդոսուպոլսեցիների հետ, ավնիկցիների, մանցիկիերտցիների և ամբողջ պարսից երկրի հետ (իմա՛ խալիֆաթի)»: Նրանք ամենևին էլ չէին ուզում ո՛չ ուղղակի, ո՛չ էլ անուղղակի մասնակից լինել բյուզանդացիների ոտնձգությունների՝ ընդդեմ Կարինի արաբ տիրողների: Կարինին տիրանալու համար Բյուզանդիային պետք էր մի հենակետ, ինչպիսին էր Կեցեոն ամրոցը, որը սակայն գտնվում էր վրացիների ձեռքում: Վրացիները այն չզիջեցին կայսրության, թեև վերջինս խոստանում էր Կարինի գրավումից հետո վերադարձնել այն և հակառակ այն բանի, որ կայսրության և վրացիների միջև, Ծիրանածինի ասելով, դաշինք կար, համաձայն որի վրաց կուրապաղատը խոստանում էր և գրավոր երդմամբ հաստատում, թե հավատարիմ կմնա կայսրության: Հետաքրքրական է նշել, որ Կարինի գրավմանը դեմ էին ոչ միայն վրացիները, այլև հայերը. նրանք գերադասում էին, որ այդ քաղաքը մնա արաբների ձեռքում, քան թե անցնի կայսրության: Եվ դա հասկանալի է. արաբական վտանգը Հայաստանի և Վրաստանի վրայից արդեն կարելի է ասել վերացել էր, Հայաստանն ու Վրաստանը ձեռք էին բերել քաղաքական անկախություն և ստեղծել իրենց պետությունները: Բայց դրա փոխարեն այժմ հանդես էր գալիս բյուգանդական վտանգը, և Թեոդոսուպոլսի՝ բյուզանդացիների ձեռքն անցնելը կայսրության առաջ կբացեր ճանապարհը դեպի արևելք: Հայերի և վրացիների համար շատ ձեռնտու էր իրենց և Բյուգանդիայի միջև ունենալ այդպիսի մի միջանկյալ իշխանություն: Վրացիները Ռոմանոս Լեկապենոսին և Կոստանդին Ծիրանածինին նամակ դրեցին՝ ի պատասխան Բյուզանդիայի Կեցեոն ամրոցի առթիվ գրած նամակին, որ «եթե այդ բանն անենք, մենք կղրկվենք մեր հարևանների հարգանքից, այն է Աբազգիայի մագիստրոս էքսուսիաստեսի, Վասպարականիտեսի և հայերի իշխանների»:

Հակառակ այդ բոլորին, ի վերջո բյուզանդացիները 949 թ. գրավում են Թևոդոսուպոլիսը: Թեոդոսուպոլսի առաջին բյուզանդական զորավարը դարձավ Հովհաննես Կուրկուասի եղբայրը, Թեոփիլոսը:

Խնդրո առարկա աշխատության 46-րդ գլուխը վերնագրված է «Իբերների ծննդաբանության և Արտանուջ ամրոցի մասին» (Περὶ τῆς γενεαλογίας τῶν Ἰβήρων καὶ τοῦ κάστρου Ἀρδανουτζίου): Եթե նախորդ գլուխը նվիրված էր վրաց Բագրատունիների Քարթլիի ճյուղի պատմությանը, ապա այս՝ 46-րդ գլուխը նվիրված է Բագրատունիների Արտանուջի (Տայքի և Կղարջքի) ճյուղին:

Միրանածինը այս գլխում իր գլխավոր ուշադրությունը դարձնում է Արտանուջ ամրոցի վրա, որը և՛ ռազմական, և՛ տնտեսական տեսակետից հսկայական նշանակություն ուներ: Միրանածինի ասելով «Արտանուջ ամրոցը շատ անառիկ է. նա մեծ քաղաքների նման ունի նաև մեծ արվարձան: Տրապիզոնի, Իբերիայի, Աբազգիայի, Հայաստանի բոլոր շրջաններից և Ասորիքից այստեղ են գալիս առևտրականներ: Նա այդ առևտրից հսկայական կոմմերկիոն (մաքս) է ստանում: Իսկ Արտանուջ ամրոցի շրջանը, այն է Արգինը, լայնատարած է և բարեբեր, այն Իբերիայի, Աբագդիայի և Միսխիոնի բանալին է»: Արտանուջը Աշոտ Կիսկասիի (Վխակացու) սեփականությունն էր: Օգտագործելով Աշոտ Կիսկասիի և վերջինիս աներոջ՝ մագիստրոս Գուրգենի միջև եղած սուր ընդհարումը, Բյուզանդիան ձգտում էր տիրանալ այդ կարևոր ամրոցին և Վրաստանի դեմ իր հետագա ծավալման համար հենակետ ունենալ: Այդ նրան ժամանակավորապես հաջողվում է: Սակայն մյուս վրաց իշխանների՝ արաբների կողմն անցնելու սպառնալիքի տակ Բյուզանդիան ստիպված է լինում հրաժարվել Արտանուջից:

47—48-րդ գլուխները վերաբերում են Կիպրոս կղզու VII դարի պատմությանը, խոսվում է, թե ինչպես Հուստինիանոս II կայսրը դիմել է արաբ խալիֆային, խնդրելով հնարավորություն տալ Ասորիքում հաստատված կիպրացիներին վերադառնալու կղզի, մեջ է բերվում Տրուլլի տիեզերական 6-րդ ժողովի 39-րդ հոդվածը: 48-րդ գլխի վերջում մի քանի տողով խոսվում է, թե ինչպես Կոստանդին Պոգոնատոս կայսեր որդի Կոստանդնի ժամանակ ոմն Կալլինիկոս հիերապոլսեցի հայտնաբերեց հեղուկ կրակը, որով բյուզանդացիները Կիղիկոսի ծոցում հրկիզեցին արաբների նավատորմիղը:

49—50-րդ գլուխներում ավելի հանգամանորեն քննության է առնվում սլավոնների՝ Պելոպոնեսում հաստատվելու հարցը, նրանց ապստամբությունները կայսրության դեմ, որոնց ճնշելու գործը դրված էր հայազգի զորավարների վրա: Ռոմանոս I Լեկապենոսի

օրոք Պելոպոնեսի սլավոնների ապստամբության ճնշողը պրոտոսպաթար Կրինիտես Արոտրասն էր, որ նշանակվեց նաև Պելոպոնեսի զորավար։ Ինչպես հայտնի է, Կրինիտեսները հայկական ծագում ունեցող նշանավոր գործիչներ էին Բյուզանդիայում։ Այստեղից ենք իմանում, որ հետագայում Կրինիտեսը նշանակվում է Հելլադայի բանակաթեմի զորավար, իսկ իր տեղը՝ Պելոպոնեսի զորավարությունը տրվում է Վարդաս Պլատիպոդեսին, որ ինչպես անունն է վկայում, նույնպես ծագումով հայ էր։

50-րդ գլխի երկրորդ կեսը ոչ մի առնչություն չունի Պելոպոնեսի կամ սլավոնների պատմության հետ և Շիրանածինի «Բանակաթեմերի մասին» աշխատության մի լրացումն է։ Նա այնտեղ ցույց է տալիս, որ այս կամ այն բանակաթեմը նախկինում ի՞նչ էր, ե՞րբ այն դարձավ առանձին բանակաթեմ, յուրաքանչյուր բանակաթեմը ի՞նչ մասերից է բաղկացած և այլն, հիմնականում կանգ առնելով Արևելքի բանակաթեմերի վրա։ 50-րդ գլխի այս երկրորդ մասը հայագիտության համար շատ մեծ արժեք ունի հայկական տարրի Բյուզանդիայի արևելքում տարածման շրջանակները պարզելու տեսակետից։ Արժեքավոր է նաև Միջագետքի բանակաթեմի ստեղծման պատմության վերաբերող բաժինը։ Պարզվում է, որ Միջագետքի բանակաթեմն իր ծագումը պարտական է հայերին, առաջին հերթին IV Հուլքի Տեգիկ վայրի տեր Մանվելին, որն ապրում էր Լևոն VI կայսեր ժամանակ։ Այստեղ Շիրանածինը խոսում է նաև Լիկանդոս բանակաթեմի ստեղծման մասին, որը ևս իր ծնունդը պարտական է հայերին, և առաջին հերթին հռչակավոր Մելիաս-Մլեհին։

51-րդ գլուխը, որ նվիրված է կայսեր անձնական նավատորմիղի ստեղծման հարցին, մեզ համար կարևոր է, որովհետև պարզում է, որ հայերը ոչ միայն բյուզանդական ցամաքային զորքերի մեջ նշանակալի դեր էին խազում, այլև ծովային, որ հայերը տիրացել են նույնիսկ ծովակալի, (πρωτοσπαθάριος τῆς φιάλης) բարձր աստիճանին[1]։

52-րդ գլխում խոսվում է Պելոպոնեսի բանակաթեմի՝ պետությանը վճարած ռազմական հարկի մասին, իսկ 53-րդը, որ ամենածավալուն գլուխն է, վերնագրված է «Խերսոն ամրոցի մասին»։

---

[1] Մի հայ ծովակալի, Ալեքսիոս Մուսելեին մենք հիշեցինք վերևում։ Հայ նավատիների մասին Շիրանածինը խոսում է իր «Արարողությունների մասին» աշխատության մեջ ևս։ Տե՛ս ստորև։

ԿՈՍՏԱՆԴԻՆ ՇԻՐԱՆԱՑԻՆԸ ԵՎ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Հետաքրքրական է այստեղ այն հիշատակությունը, թե Դիոկլետիանոս կայսեր ժամանակ սարմատները ավարի առնելով անցել են լազերի երկրով և Պոնտոսով և հասել մինչև Ալիս գետի ափը. մի բան, որ այլ աղբյուրներից հայտնի չէր։ Այս գլխի վերջին երկու էջը, որ Խերսոնի հետ որևէ առնչություն չունեն, սլարզապես անմշակ նյութ է, որ մեխանիկորեն կցված է բնագրին և որը հայոց պատմության համար հետաքրքրություն է ներկայացնում իր տվյալներով Դերջանում և այլուր «նավթաբեր աղբյուրների» գոյության մասին[1]։

Կոստանգին Շիրանածինի մյուս կարևոր աշխատությունը իր պապ Վասիլ I կայսեր կենսագրությունն է, որ գրվել է շուրջ 950 թ. (բոլոր դեպքերում 948 թ. հետո)[2] և հանդես է գալիս որպես «Թեոփանեսի Շարունակող» վեց գրքից բաղկացած նշանավոր պատմական երկի հինգերորդ գիրքը։ Բնագրում այն վերնագրված է «Երանելի կայսր Վասիլի կյանքի և գործունեության սլատմությունը, որ նրա թոռ՝ կամավն աստուծո հռոմայեցիների կայսր Կոստանդինը ջանասիրությամբ քաղեց զանազան շարադրանքներից և վստահեց գրչին». Ἱστορικὴ διήγησις τοῦ βίου καὶ τῶν πράξεων Βασιλείου τοῦ ἀοιδίμου βασιλέως, ἣν Κωνσταντῖνος βασιλεὺς ἐν θεῷ Ῥωμαίων, ὁ τούτου υἱωνὸς φιλοπόνως ἀπὸ διαφόρων ἀθροίσας διηγημάτων τῷ γράφοντι προσανέθετο"[3]։

---

[1] «Կայսրության կառավարման մասին» աշխատությունից ամբողջությամբ տրվում է 43—46-րդ գլուխների թարգմանությունը։ Հատվածաբար՝ 27-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ գլուխները։ Թարգմանությունը կատարել ենք բնագրի դիտական հետևյալ հրատարակությունից. Constantine Porphyrogenitus, De Administrando Imperio, Greek text edited by *Gy. Moravcsik*, English Translation by *R. J. H. Jenkins*, Budapest, 1949. Վերջերս այն վերահրատարակվել է բյուգանդական պատմիչների նոր մատենաշարում, կդմելով վերջինիս առաջին հատորը։ Տե՛ս Corpus Fontium Historiae Byzantinae, Volumen I, Dumbarton Oaks Texts: Constantinus Porphyrogenitus. De administrando imperio. Edidit *G. Moravcsik*, Anglice vertit *R. J. H. Jenkins*, Dumbarton Oaks 1967.

[2] Տե՛ս *J. B. Bury*, The treatise „De administrando imperio", Byz. Zeitschrift, Bd. XV, 1906, p. 549, 551.

[3] Այս երկի մասին տե՛ս *А. П. Каждан*, Хроника Симеона Логофета, Виз. Временник, т. XV, 1959; *Նույնի*, Из истории византийской хронографии X века, 1. О составе так называемой хроники Продолжателя Феофана, Виз. Временник, т. XIX, 1961; *Նույնի*, Из истории византийской хронографии X века, 3. „Книга царей" и „Жизнеописание Василия", Виз. Временник, т. XXI, 1962.

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԾԻՐԱՆԱԾԻՆԸ ԵՎ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես ցույց է տալիս Շիրանածինը տվյալ աշխատության առաջաբանում, ինքը ցանկություն է ունեցել գրել բյուզանդական բոլոր կայսրերի պատմությունը։ Բայց «գա գլուխ բերելու համար երկար ժամանակ, մեծ աշխատանք էր պետք, ապա և բազում գրքերի առկայություն, պետական գործերից որոշ դադար, մի բան, որից մենք զուրկ էինք։ Այդ իսկ պատճառով,—շարունակում է Շիրանածինը,—ես ստիպված գտա մի երկրորդ ելք, այն է՝ սկզբից մինչև վերջը շարադրել մեկ կայսեր կյանքն ու ամբողջ գործունեությունը, կայսր, որը կայսերական իշխանությունն անշափ վեհացրեց, որի անունը հոմանիշ է թագավորության, որը հռոմայեցիների պետության և գործերին անշափ օգտակար եղավ»։

Կոստանդին Շիրանածինի նպատակն է եղել տալ իր պապ Վասիլ Ա-ի՝ Մակեդոնական հարստության հիմնադրի ներբողյանը։ Իր նպատակին հասնելու համար Շիրանածինը շատ հաճախ ստիպված է լռել, նույնիսկ կեղծել առանձին փաստեր, որոնք կարող էին ստվեր գցել, անվանարկել իր փառաբանած անձնավորությունը։

Հենց սկզբից Շիրանածինը կեղծում է Վասիլ I-ի ծագման հարցը, ավելի ճիշտ, նա գրի է առնում այն կեղծ ծննդաբանությունը, որ ստեղծվել էր դեռևս Վասիլ I-ի կենդանության օրոք և որի համաձայն Վասիլը, ոչ ավել ոչ պակաս, սերում էր Հայաստանի առաջին քրիստոնյա թագավոր Տրդատ III-ից և Հռոմեական կայսրության առաջին քրիստոնյա կայսր Կոստանդին Մեծից։ Բոլորի համար մի բան պարզ էր, որ Վասիլը ծնվել էր Մեկեդոնիայում հայ ծնողներից։ Վասիլի կենսագիրները պետք է ապացուցեին, թե Վասիլի նախնիները ո՞ր տեղից էին գաղթել Մակեդոնիա։ Պարզ է, որ Հայաստանից և նրանք պետք է Հայաստանում իշխած թագավորական վերջին հարստության շառավիղները լինեին։ Շիրանածինը ցույց է տալիս, որ այդ գաղթը տեղի է ունեցել բյուզանդական Լևոն I կայսեր ժամանակ (457—474)։ Այնուհետև կայսրը համառոտ գծերով, պարզապես պատմական կապր պահպանելու, ավելի ճիշտ՝ ստեղծելու համար, մի քանի դեպքերի նկարագրությամբ պատմությունը հասցնում է մինչև բուլղարների խան Կրումի ժամանակները և ցույց տալիս, որ վերջինս 813 թ. Ադրիանուպոլիսը բյուզանդացիներից գրավելով, գերեվարեց տեղի բնակչությունը, այդ թվում և ապագա կայսեր ծնողներին իրենց նորածին որդու հետ. նրանք գերությունից ազատվեցին Կրումի հաջորդ Օմուրտագի ժամանակ։

Ծիրանածինը առիթ չի փախցնում տեղի անտեղի ցույց տալու, որ Վասիլի՝ պետության առաջին մարդը դառնալու պատիվը աստվածաստ էր նախատեսված։ Թեև այլ աղբյուրներից ակնհայտ է, թե ինչպիսի ոչ աստվածահաճո ճանապարհներով նա տիրացավ բյուզանդական կայսրության գահին։ Հակառակ այդ բոլորին, և՛ Ծիրանածինի, և՛ ժամանակակից այլ հեղինակների տվյալները ցույց են տալիս, որ Վասիլը սովորական մի անձնավորություն չէր։ Պատանի հասակում նա Ադրիանուպոլսից ճամփա է ընկնում դեպի համաշխարհային քաղաքր՝ Կոստանդնուպոլիս, ուր ամեն տեղից հոսում էին մարդիկ առևտուր անելու, գիտելիքներ ձեռք բերելու, բախտ որոնելու, ապաստան հայցելու, բարձր դիրքի հասնելու։ «Նա գիտեր,—գրում է Ծիրանածինը իր պապի մասին,—որ մարդկանց առաքինությունները նվագ հայտնի, երկրորդական քաղաքներում բթանում են ու խամրում, ինչպես գյուղերում, որ եթե այդ առաքինությունները հանդես բերելու ասպարեզ չլինի, ոչ էլ գնահատող մարդիկ, ապա դրանք խունանում են և թառամում։ Այդ պատճառով նա ձեռնտու և օգտակար համարեց թագավորանիստ քաղաքը գնալ» (§ 7)։

Կոստանգնուպոլսում նա իր գործունեությունը սկսում է որպես Միքայել կայսեր և կեսար Վարդասի ագգական (συγγενής) համարվող Թեոփիլոս Պեգևոմենոսի պրոտոստրատորը։ Շաջորդ աստիճանը Միքայել կայսեր ստրատոր դառնալն էր, ապա և նրա պրոտոստրատորը։ Շուտով նա նշանակվում է կայսեր պարակիմոմենոսը, ստանալով պատրիկի բարձր պատվաստիճան։ Վասիլն արդեն մոտ էր իր նպատակին։ Նրա ճանապարհին կանգնած էին երկու խոչընդոտ. Վարդասը և կայսր Միքայելը։ Ամենից դյուրինը, իհարկե, կայսրին վերացնելն էր։ Բայց Վասիլը չէր կարող դրան դիմել առանց նախապես մեջտեղից վերացնելու գլխավոր խոչընդոտը, կեսար Վարդասին, որը, լինելով կեսար, Միքայելի անզավակ վախճանվելու դեպքում դառնալու էր կայսր, իսկ Միքայելը որդի չուներ։ 866 թ. Վասիլին և նրա կողմնակիցներին, որոնց մեջ էր և մանկամիտ Միքայել III-ը, հաջողվում է սրախողխող անել Վարդասին։

Միքայել III-ը չէր պատկերացնում իր գլխին կախված վտանգը։ Վասիլին համարելով իր ամենամտերիմ և հավատարիմ անձնավորությունը, որդեգրում է նրան, դարձնում մագիստրոս և նույնիսկ կայսերակից հռչակում։ Դա 866 թ. մայիսի 26-ին էր։ Մեկ տարի հետո Մամասի պալատում, գիշերվա երրորդ ժամին կա-

տարվեց և երկրորդ ոճիրը։ Վասիլը իր համախոհների հետ, որոնք ոչ այլ ոք էին, քան մի տարի առաջ Վարդասին սպանողները, սրախողխող է անում Միքայել III կայսեր։ Առավոտյան, սուրբ Մարինայի պալատում Վասիլը հռչակվեց Բյուզանդիայի կայսր։

Ծիրանածինը, աշխատելով իր պապին ներկայացնել որպես առաքինության տիպար, որից պետք է, որ բոլորը օրինակ վերցնեին, խուսափում է ճշմարտությունից։ Նա ո՛չ Վարդասի, ո՛չ Միքայելի սպանության մեղքը չի գցում Վասիլի վրա։ Ծիրանածինի տվյալներով Վարդասի սպանության հարցում Վասիլը դիտողի դերում էր հանդես գալիս, իսկ Միքայելի սպանության մեջ Ծիրանածինը իր պապին միանգամայն անմեղսակից է հանում, ջանք թափելով համոզել ընթերցողին, թե կայսեր սպանությունը կազմակերպեցին և իրականացրին «իշխանության գլուխ կանգնած բոլոր մեծամեծները և սենատի խելամիտ գործիչները»։

Ծիրանածինն այնուհետև տալիս է Վասիլ կայսեր թագավորության մանրամասն պատմությունը, նրա ներքին քաղաքականությունը, արտաքին թշնամիների դեմ մղած պատերազմները, շինարարական, օրենսդրական գործունեությունը, ամեն անգամ չզլանալով ընդգծել իր պապի ողջամտությունը, առաքինությունները։

Խնդրո առարկա երկը հայագիտության համար արժեքավոր է ոչ միայն դրանով, որ ի դեմս նրա մենք ունենք հայկական ծագումով մի կայսեր կենսագրությունը, տվյալներ Բյուզանդիայում այդ շրջանում աչքի ընկած մի շարք գործիչների մասին։ Տարածված է այն կարծիքը, որ տվյալ ժամանակաշրջանում Բյուզանդիայում գործող հայ բարձրաստիճան գործիչները անունով էին միայն հայեր, որ նրանք մոռացել էին իրենց լեզուն, կորցրել իրենց ազգային դեմքը։ Ծիրանածինի պատմությունը մեզ հնարավորություն է տալիս հանգելու միանգամայն այլ եզրակացությունների։ Ինչպես վկայում է նա Ագրիանուպոլսում (հասկանալի է՝ ոչ միայն այնտեղ) հաստատված հայերը, որոնք բավական հարստացել էին, IX դարում առանձին գաղութ էին կազմում, պարփակված լինելով իրենց մեջ և անաղարտ պահելով ազգային դեմքը (φατρίαν τε καὶ φυλὴν εἰς πλῆθος ἐγένοντο [οἱ Ἀρμένιοι] καὶ ἐπ᾽εὐπορίας κατέστησαν ἱκανῆς, τὴν πάτριον εὐγένειαν διασώζοντες καὶ ἀσύγχυτον τὸ γένος διαφυλάττοντες)։

Ծիրանածինը նույն միտքն ընդգծում է մի քիչ հետո (§ 4)։ Վասիլի նախնիները, գրում է նա, թեև տեղացիների հետ խնա-

միական կապեր հաստատում էին, բայց մեկուսացած տոհմի նման էին ապրում (κατ'ἰδίαν ὡσπερ φατρίαν συνεστηκός): Երբ Վասիլը առաջին անդամ դնում է Կոստանդնուպոլիս, ծառայության է անցնում ոչ այլ ոքի, այլ միայն հայի մոտ՝ Թեոփիլիցեսը, որի պրոտոստրատորը նա դարձավ, Վարդասի ազդականն էր (συγγενής), իսկ Վարդասը հայտնի է, որ հայ էր՝ Հենց Վարդասն էր նրան մտցնում բյուզանդական բարձրաստիճան պաշտոնեության կազմը: Եվ դա դեռ բոլորը չէ՝ Ծիրանածինը ցույց է տալիս, որ բյուզանդական արքունիքում պատրիկ Կոստանդինը «շատ էր սիրում Վասիլին, որովհետև ինքն էլ [Վասիլի պես] ծագումով հայ էր» (σφόδρα φιλίως πρὸς τὸν Βασίλειον διακείμενος ἅτε καὶ αὐτὸς ἐξ Ἀρμενίων ἔλκων τὸ γένος)[1]՝

Կեսար Վարդասի ամենամտերիմ մարդիկ ծագումով հայեր էին՝ Բավական է հիշել Փոտ պատրիարքին, Հովհաննես Քերականին, Լևոն փիլիսոփային, պատրիկ Կոստանդնին՝ Հայեր էին և Վասիլի մերձավորագույն մարդիկ, որոնց օգնությամբ նա ձեռք բերեց Բյուզանդական կայսրության գայիսոնը՝ Հիշատակենք պատրիկ Սմբատին (Վարդասի փեսային), Սմբատի եղբոր Մարիանոսին, Պետրոս «բուլղարին», Լևոն «ասորուն», Հովհաննես «խալդին», Կոստանդին Տոքսարասին, Ասիլեոնին, Եվլոդիոս «պարսկին», հետերիարխ Արտավազդին և շատ ու շատ ուրիշներին, ովքեր «իրենց լեզվով» էին խոսում՝

Ծիրանածինի այդ երկի արժեքը հայագիտության համար դրանով չի սպառվում՝ Նա արժեքավոր է նաև իր վկայություններով Բյուզանդական կայսրության դեպի Արևելք կատարած արշավանքների և նվաճումների մասին՝ Եթե չհաշվենք Գեննեսիոսի «Ժամանակագրությունը»[1], ապա Ծիրանածինի սույն երկը գլխավոր աղբյուրն է պավլիկյանների՝ կայսրության դեմ մղած պայքարի վերջին փուլի մասին՝ Իսկ այդ կապակցությամբ բաղմա-

[1] Ծիրանածինի սույն երկը բազմաթիվ կետերում մերձենում է Գեննեսիոսի աշխատությանը, բայց դեռևս հնարավոր չէ որոշել, թե ով ումից կախում ունի՝ Հնարավոր է, որ երկուսն էլ իրարից անկախ օգտվել են նույն աղբյուրից՝ Տե՛ս Gy. Moravcsik, op. cit., Bd. I, S. 380՝ Ա. Պ. Կաժդանը գտնում է, որ կամ երկուսի համար էլ ևղել է մի ընդհանուր աղբյուր, որն ի միջի այլոց շատ է աղավաղվել Գեննեսիոսի կողմից, կամ էլ Գեննեսիոսն օգտվել է Ծիրանածինի նյութերից, Վասիլի կենսագրության սևագիր օրինակից՝ Տե՛ս А. П. Каждан, Из истории византийской хронографии X века, 3. „Книга царей“ и „Жизнеописание Василия“, Виз. Временник, т. XXI, 1962, стр. 109.

թիվ տեղանունների, բերդերի և այլնի հիշատակումը կարևոր է Հայաստանի պատմական աշխարհագրության համար։

Եվ վերջապես, նա միակ բյուղանդական աղբյուրն է, որ խոսում է Սահակ Պարթևի «Տեսիլքի» մասին։

Շիրանածինի աշխարհայացքը ամենից հստակ այս աշխատության մեջ է հանդես գալիս։ Նա ականատագրապաշտ է և սնոտիապաշտ։ Նախախնամությունն է մարդկանց ճակատագիրը բարձրացնում և ցած գլորում։ Վասիլի կայսր դառնալը դեռ վաղուց էր կանխորոշված և աստվածուստ[1]։ Շիրանածինի սնոտիապաշտ լինելը պարզ երևում է Սիրակուսա քաղաքի գրավման առթիվ իր արտահայտած մտքերից։ Նա հավատացած է, որ Սիկիլիայի այդ ղեկավոր քաղաքի արաբներից գրավվելու մասին լուրը կայծակի արագությամբ իմացել էին Պելեսլոնեսում ինչ-որ թփուտներում բնակվող... դևերը։

Կ. Շիրանածինի սնոտիապաշտության մասին վկայում է և հետևյալ փաստը։ Սբ. Սոֆիայի տաճարում պահվում էին կայսերական թագեր և այլ զարդեր, որոնք սովորաբար կայսրերը կրում էին այս կամ այն տոնի կամ դեպքի առթիվ։ Շիրանածինն ասում էր, որ եթե կայսրը դրանք հագնի սովորական օր, ապա իրեն հիվանդություն և մահ է սպասում։

Հակառակ սուրն աշխատության հեղինակի մտածելակերպին, նրա հետապնդած նպատակներին, առանձին փաստերի ակնհայտ աղավաղման, «Վասիլ կայսեր կենսագրությունը» մնում է այդ դարաշրջանի պատմության ուսումնասիրության գլխավոր և ամենակարևոր աղբյուրը[2]։

Կոստանդին Շիրանածինի աշխատությունների մեջ յուրահատուկ տեղ է գրավում «Արարողությունների մասին» (De Cerimoniis aulae byzantinae) երկու գրքից բաղկացած երկը, որ նվիրված է բյուղանդական արքունիքի արարողությունների կարգին։ Չկա բյուղանդական կյանքի և ոչ մի բնագավառ, որ իր արտացոլումը գտած չլինի այս երկում։ Հակառակ դրան, տվյալ երկին բյուղանդագետները ծանոթացան բավական ուշ։ Առաջին

---

[1] Հնարավոր է, իհարկե, որ Շիրանածինը քաղաքական նկատառումներից դրդված Մակեդոնական հարստության հիմնադրումը ի վերուստ նախատեսված է համարում։

[2] Թարգմանությունը տրվում է ամբողջությամբ, առանց կրճատումների, բնագրի հետևյալ հրատարակությունից. Theophanes Continuatus, ex recognitione Immanuelis Bekkeri, Bonnae, 1838, p. 211—353.

Հիշատակությունը նրա մասին երևաց XVIII դարի սկզբում, երբ գոյություն ունեցող միակ ձեռագրի[1] (XII դար) տերը՝ Կոնրադ Ուֆֆենբախը, Մայնի Ֆրանկֆուրտի քաղաքային սենատի անդամը, մի քանի տեղեկություններ տվեց Յոհան Ալբերտ Ֆաբրիցիուսին, որը և այդ մասին առաջին ծանոթությունները հրատարակեց իր նշանավոր Biblioteca Graeca-ի առաջին հրատարակության (1705—1728) 6-րդ հատորում։ Դրանից հետո մի քանի անհաջող փորձեր եղան գիրքն ամբողջությամբ լույս ընծայելու, բայց միայն Յակոբ Ռայսկեին հաջողվեց հրատարակել այն երկու հատորով 1751 և 1754 թթ.։ Ռայսկեի արժեքավոր ծանոթագրությունները հնարավոր եղավ հրատարակել միայն 1830 թ., բյուզանդական հեղինակների Բոննյան մատենաշարում։

«Արարողությունների մասին» երկը, որի շարադրանքն ավարտվել է 956—957 թթ. ոչ առաջ, մանրամասնորեն նկարագրում է բյուզանդական արքունիքի արարողությունները, թեև կան առանձին գլուխներ, որոնք վերոհիշյալ հարցի հետ քիչ, կամ նույնիսկ ամենևին առնչություն չունեն։

Ծիրանածինը այս երկը ևս շարադրել է իր որդի Ռոմանոսի համար։ Նա իր որդուն է դիմում աշխատության երկրորդ գրքի սկզբում (հրատարակության մեջ այն վերնագրված է «Հավելված I գրքի») և ասում, թե նման աշխատանքի համար ինքը բազում պրպտումներ է կատարել և այդ նյութի շուրջ մինչ այդ գրված միայն մեկ, այն էլ շատ թերի, գործ է գտել, շարադրված մագիստրոս Լևոն Կատակիլասի կողմից՝ Լևոն VI-ի թելադրանքով։

Աշխատության առաջին գրքում հեղինակը նախ խոսում է իր երկի նպատակի և աղբյուրների մասին, ընդ որում առաջին գիրքը որպես կանոն ունեցել է գրավոր աղբյուրներ։ Առաջին գրքում խոսվում է կայսեր՝ թափորով սուրբ Սոֆիայի տաճարը գնալու արարողության կարգի, ապա նաև եկեղեցական տարբեր տոներ նշելու, կայսեր ամուսնության, թագադրության, կայսրուհու թագադրության, թագաժառանգի ծննդյան հանդեսները նշելու կարգի մասին, բյուղանդական բարձրաստիճան աստիճանավորների, կեսարի, նոբելիսիմոսի, կուրապաղատի, մագիստրոսի, պատրիկի, անթիպատի, պրեպոզիտոսի, հյուպարքոսի, քվեստորի, դեմարքոսի և ուրիշների հռչակման առթիվ տեղի ունեցող արարո-

[1] Մի նորահայտ ձեռագրի մասին տե՛ս C. Mango-I.Ševčenko, A new manuscript of the De Cerimoniis, Dumbarton Oaks Papers, No 14, (1960), P. 247—249.

ԿՈՍՏԱՆԴԻՆ ՇԻՐԱՆԱՑԻՆԸ ԵՎ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ղութ յան կարգի, կայսեր թաղման արարողութ յան, կայսեր ծննդյան օրը նշելու, պաշտոնական ընդունելութ յունների առթիվ պահպանվելիք կարգ ու կանոնի, ձիարշավարանում տեղի ունեցող խաղերի կարգի մասին և այլն։ Առաջին գրքի 84—90-րդ գլուխները VI դարի հեղինակ Պետրոս Պատրիկիոսի մեզ չհասած մի աշխատանքից կատարված ընդարձակ մեջբերումն է։ Առաջին գրքում այնուհետև խոսվում է Լևոն I, Անաստասիոս, Հուստինոս, Լևոն II, Հուստինիանոս I կայսրերի հռչակման առթիվ տեղի ունեցած արարողութ յան մասին։ Առաջին գրքի 96-րդ գլխում խոսվում է Նիկեփոր Փոկասի (963—969 թթ.) կայսր հռչակվելու առթիվ տեղի ունեցած արարողութ յան մասին։ Այս գլուխը պարզ վկայում է, որ Շիրանածինի «Արարողութ յունների մասին» աշխատութ յունը հեղինակի մահից հետո էլ լրացվել է։ Այդ բանը հաստատվում է և երկրորդ գրքի 42-րդ գլխի տվյալներով, որտեղ խոսվում է Կոստանդին Շիրանածինի գերեզմանի վայրի մասին։ Եվ վերջապես նկարագրվում է սենատի նախագահի հռչակման արարողութ յունը։

Առաջին գրքին կցված է երկու Հավելված. առաջինում խոսվում է կայսեր՝ ձեռնարկելիք արշավանքի ընթացուղիների և բանակելու վայրերի, ապա նրա գլխավորած զորքի նախապատրաստութ յան՝ զինվածութ յան և պարենավորման մասին։ Երկրորդ Հավելվածում, բացի Շիրանածինի՝ իր որդուն ուղղված երկու խոսքից և աշխատութ յան աղբյուրների և նպատակադրման վերաբերյալ բացատրութ յունից, մեկ առ մեկ նշվում է, թե բանակաթեմի զորավարները, կամ առանձին բարձրաստիճան պաշտոնյաներ պատերազմի դեպքում ինչով պետք է մասնակցեն, ապա նաև կայսեր՝ արշավանքին իր հետ տանելիք պիտանի իրերի մասին։ Այստեղ հետաքրքրական է հիշատակութ յունը բյուգանդական մինչև IX դարի կեսերը գործող «հեռագրի» վերաբերյալ, որի օգնութ յամբ մի ժամում մայրաքաղաքում իմանում էին արաբների հարձակման մասին։ Այնտեղ խոսվում է նաև մայրաքաղաքում Թեոփիլոս կայսեր՝ արաբների դեմ հաղթանակ տանելու առթիվ կազմակերպած հաղթական երթի մասին, ինչպես և նման մի երթի, որ կազմակերպեց Վասիլ I Տեֆրիկեից և Գերմանիկիայից (Մարաշ) հաղթական վերադարձի կապակցութ յամբ։

Երկրորդ գիրքը սկսվում է մի համառոտ ներածականով, որտեղ Շիրանածինը ցույց է տալիս, որ եթե առաջին գրքի շարադրման համար օգտագործել է գրավոր աղբյուրներ, ապա երկ-

րորդ դիրքը հիմնված է միայն բանավոր տեղեկությունների վրա[1]։ Այստեղ ևս մանրամասն խոսվում է բյուզանդական բարձրաստիճան պաշտոնյաների նշանակման առթիվ տեղի ունենալիք արարողությունների կարգի մասին, տարբեր տոները նշելու կարգի, պատրիարքի ձեռնադրության, թաղման, պաշտոնական ընդունելությունների, օտար պետությունների բարձրաստիճան սնձնավորությունների ընդունման կարգի մասին և այլն։ Երկրորդ գլրքում մանրամասն նշվում է այն վայրը, որտեղ թաղված են բյուզանդական կայսրերը և տրվում նրանց շիրիմների նկարագրությունը։ Ապա խոսվում է բյուղանդական մի շարք կայսրերի և նրանց ժամանակի առանձին զորավարների, կայսրության թշնամիների դեմ գործած արշավանքներին մասնակցող զինվորների, վերջիններիս զինվածության և ստացած ոճիկների մասին։

Այս գրքում խոսվում է օտար պետությունների ղեկավարներին դիմելու կարգի, նրանց ինչպիսի՞ հարցեր տալու մասին։ Հայոց պատմության համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում 48-րդ գլուխը, որտեղ մանրամասն տրվում են օտար երկրների՝ այդ թվում և Հայաստանի ղեկավարներին հղվելիք նամակների ձևերը։ Յուրաքանչյուր նամակից կախված էր լինում տարբեր կշռի ոսկե կնիք, որից պարզ երևում է, թե Բյուգանդական կայսրությունը ո՞ր պետության ի՞նչ նշանակություն էր տալիս[2]։ Ամենաբարձր տեղում էր գտնվում արաբական խալիֆաթը։ Խալիֆային ուղղված նամակի ոսկե կնիքը կշռում էր չորս սոլիդ (մոտ չորս դահեկան)։ Նրանից անմիջապես հետո Ծիրանածինը հիշատակում է Հայոց Բագավորին (Բագրատունի), որին ուղղված նամակի ոսկե կնիքը կշռում էր երեք սոլիդ, նույնպես և Վասպուրականի Արծրունիներին ուղղված նամակը։ Երեք սոլիդանոց ոսկե կնիք էր կրում բացի վերոհիշյալներից միայն Խազարիայի խաքանին ուղղված նամակը։ Մյուս բոլոր, շուրջ հիսուն պետությունների ղեկավարներին ուղղված նամակները, այդ թվում և Ֆրանկիայի, Գալլիայի, Գերմանիայի ռեքսերին, վրաց կուրապաղատին, Ռուսիայի իշխանին ուղղված նամակին կցված էր լի-

---

[1] De Cer., p. 516։ Հակառակ նրա հավաստումի կան բազմաթիվ գլուխներ, որոնք հաղիվ թե առանց գրավոր ազբյուրների հնարավոր լիներ շարադրել։

[2] Տալիս ենք այդ գլխի թարգմանությունը առանց որևէ կրճատումների, որպեսզի պարզ դառնա Հայաստանի դրաված տեղը Բյուզանդիայի հետ դիվանագիտական կապեր ունեցող բոլոր պետությունների թվում՝ X դարում,

նում երկու կամ մեկ սոլիդանոց ոսկեկնիք։ Սույն գլխում տրվում են նաև հայոց, վրաց և աղվանից կաթողիկոսներին, ինչպես և մի շարք իշխաններին ուղղվելիք նամակների ձևերը։

Խնդրո առարկա դլուխը, որ արտադրությունն է 908 թվականից ոչ շատ ուշ կազմված մի փաստաթղթի (դա հաստատվում է այն բանով, որ Արծրունյաց իշխանի մասին խոսելիս ավելացված է, որ նա «այժմ իշխանաց իշխանի [իմա՛ թագավորի] պատիվն է ստացել») մեծ արժեք է ներկայացնում X դարի առաջին կիսում Հայաստանում տիրող իշխանությունների մասին գաղափար կազմելու համար։ Այդ փաստաթղթում Շիրակի Բագրատունյաց և Վասպուրականի Արծրունյաց թագավորություններից բացի, հիշվում են նաև Կոդովիտի, Տարոնի, Մոկքի, Անձևացյաց, Սյունիքի, Վայոց ձորի, Խաչենի (այն է՝ Արցախի), Սևորդյաց (այն է՝ Ուտիքի) հայկական իշխանությունները։ Եվ այս տվյալների արժեքն անգնահատելի է դառնում, եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ մենք արդեն գործ ունենք ոչ թե Կոստանդին Շիրանածինի կամ որևէ անհատ-հեղինակի հետ, այլ Բյուզանդական կայսրության, այն է իր ժամանակաշրջանի ամենակազմակերպված և ամենաբարձր տիպի պետության արտաքին գործոց նախարարության դրասենյակում կազմված փաստաթղթի հետ։

Երկրորդ գրքում Շիրանածինը տալիս է զորավարների և այլ բարձր զորահրամանատարների մանրամասն ոճկացուցակը։ Եվ վերջապես Շիրանածինը այս գրքի վերջում (գլ. 52—56) ամբողջությամբ մեջ է բերում ատրիկլին Ֆիլոթեոսի 900 թ. կազմած «Կլետորոլոգիոնը» (Դահնամակը), նվիրված բյուզանդական հիերարխիային, յուրաքանչյուր բարձրաստիճան պաշտոնյայի և ռազմական աստիճանի այդ հիերարխիայում գրաված տեղին, յուրաքանչյուրի ենթակայության տակ գտնվող աստիճաններին։ Այնտեղ կան առանձին բաժիններ, որոնց շոշափած հարցերին հանդիպում ենք և «Արարողությունների մասին» աշխատության նախորդ գլուխներում, ինչպես, օրինակ, զանազան տոների նշելու կարգը։ Այստեղ հանդիպում ենք նաև պատրիարքությունների, մետրապոլիտությունների, ինքնագլուխ (ավտոկեֆալ) արքեպիսկոպոսությունների հիերարխիկ մի ցուցակի, որի կազմողը Եպիփան Կիպրացին է։

«Արարողությունների մասին» աշխատությունը հայագիտության համար կարևոր նշանակություն ունի Հայաստանին և հայերին վերաբերող տեղեկություններով, որոնք ցրված են այդ ծա-

վալուն աշխատության մեջ։ Առաջին գրքի 24-րդ գլուխը կարևոր է Բյուզանդիայի և Տարոնի իշխանության միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունները պարզելու տեսակետից։ Նույն գրքի 96-րդ գլուխը մեզ տալիս է հայազգի կայսր Նիկեփոր Փոկասի գահ բարձրանալու արժեքավոր մանրամասնությունները։ Առաջին գրքում ցրված է նաև բավական արժեքավոր նյութ Արմենիակների բանակաթեմի և վերջինիս զորավարի մասին։

Երկրորդ գրքի 42-րդ գլուխը, որ վերաբերում է բյուզանդական կայսրերի և նշանավոր աստիճանավորների շիրիմների նկարագրությանը, կարևոր է հայազգի կայսրերի, նրանց ազգականների, ինչպես և ռազմական գործիչների մասին տարբեր հարցեր պարզելու տեսակետից։ Օրինակ, միայն այս գլխից ենք իմանում Վասիլ I կայսեր մոր անունը, ապա և Վասիլի մի որդու՝ Վարդասի (Վարդի) գոյության մասին։ 44-րդ գլխից պարզվում է, որ Լևոն VI-ի ժամանակ Կրետեի դեմ ուղարկված նավատորմիղում ծառայում էին 1400 հոգուց բաղկացած հայկական երկու զորամաս։ Նշված է նաև այդ նավաստինների (զինվորների) ստացած ռոճիկի չափը։ Նույն գլխում ցույց է տրված, որ Շիրանածինի ժամանակ Կիպրոսի կառավարիչն էր մի հայազգի՝ Սմբատիկի որդի Լևոնը։ Այստեղ խոսվում է հայ ռազմական այլ գործիչների մասին ևս (Պանգրատիոսի-Բագարատի որդի պրոտոսպաթար Թեոդորոսի)։ 44-րդ գլխում ցույց է տրված, որ Լանդոբարդիայի (Լոմբարդիա) դեմ մղված կռիվներում մասնակցել են և հայեր (Ռոմանոս I Լեկապենոսի ժամանակ)։ Այդտեղից մենք գիտենք նաև, որ Թրակեսիոն բանակաթեմի ափը հայերն էին պահպանում։

45-րդ գլխից պարզվում է, որ Կրետեի դեմ Կոստանդին Շիրանածինի ժամանակ տեղի ունեցած արշավանքին նույնպես հայեր էին մասնակցում։

48-րդ գլխում տրված են օտարերկրացիներին հղվելիք նամակների ձևերը, որոնց՝ հայագիտության համար ունեցած նշանակության մասին խոսք եղավ վերևում։

Եվ վերջապես, Շիրանածինի մյուս կարևոր աշխատությունը նվիրված է Բյուգանդական կայսրության բանակաթեմերին։

«Բանակաթեմերի մասին» (Περὶ τῶν θεμάτων) աշխատությունը Շիրանածինի վաղ գործերից է և գրվել է X դարի շուրջ 30-ական թվականներին[1]։ Մեկ առ մեկ թվարկելով կայսրության

[1] Տե՛ս Gy. Moravcsik, Byzantinoturcica, Bd. I, S. 384. Բյուրին գլտնում է, որ այն գրվել է 934—944 թվականների միջև. J. B. Bury, The trea-

բանակաթեմերը, այսինքն ռազմա-վարչական շրջանները, հեղինակը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նրանց բնակիչների, քաղաքների, պատմության մասին և այլն, աշխատում ստուգաբանել նրանց անվանումները, այդ բոլորի հետ միասին տալով պատմական, աշխարհագրական, ազգագրական, դիցաբանական հետաքրքրական տեղեկություններ։ Սիրանածինը իր այս երկում օգտագործել է բազմաթիվ աղբյուրներ, որոնցից ամենագլխավորներն են VI դարի հեղինակներ Ստեփանոս Բյուզանդացու և Հիերոկլեսի գործերը։ Այդ է պատճառը, որ այս աշխատության աշխարհագրական տվյալները ավելի շատ վերաբերում են VI դարին։ Իր, Սիրանածինի, ժամանակաշրջանին վերաբերող նյութը որպես կանոն ավելի քիչ տեղ է գրավում։ Բացի վերոհիշյալ հեղինակներից, նա օգտագործել է նաև Ստրաբոնի և անտիկ շրջանի այլ հեղինակների երկերը, որոնցից առատորեն օգտվում է, հատկապես այնտեղ, որտեղ աշխատում է ստուգաբանել այս կամ այն վայրի անունը և վերջինիս ծագումը։

Ինչպես ճիշտ նշում է Սիրանածինը, Բյուզանդական կայսրության բանակաթեմերի բաժանվելը տեղի է ունեցել ոչ այնքան վաղ ժամանակներում։ «Իմ կարծիքով,—գրում է կայսրը,—շատերը սխալվում են բանակաթեմ անվան առաջացման հարցում։ Այն հին չէ. պատմություն գրող հեղինակներից ոչ ոք չի հիշատակում բառը այս իմաստով, ինչ մենք տալիս ենք նրան այսօր»։

Դիոկլետիանոսի և Կոստանդին Մեծի հաստատած կարգը պայմանավորված էր նրանով, որ պրովինցիաների քաղաքական և ռազմական ղեկավարությունը գտնվում էր տարբեր անձնավորությունների ձեռքում։ Հուստինիանոս I-ը (527—565) աստիճանաբար վերացրեց այդ կարգը. պրովինցիաների ռազմական և քաղաքական ղեկավարությունը հանձնեց մեկ մարդու՝ զորահրամանատարին։ Այդ նույն բանը կատարվեց և Հայաստանում։ Հակառակ

---

tise „De administrando imperio", p. 518. Վերջերս սակայն բյուզանդագետ Արվայլերը եկել է այն եզրակացության, որ «Բանակաթեմերի մասին» երկը Սիրանածինը գրել է իր կյանքի վերջին տարիներին։ Տե՛ս École Pratique des Hautes Études, IV Section, Sciences historiques et philologiques, Extrait des rapports sur les conférences, Histoire byzantine, Directeur d'Études: P. Lemerle, Paris, 1965, p. 235. Ենթագրությունը համոզիչ չէ։ «Բանակաթեմերի մասին» աշխատության մեջ ցույց է արված, որ Մելիսսը «հենց վերջերս, մի փոքր առաջ» է վախճանվել։ Մելիսսը վախճանվել էր 934 թ., հետևաբար Սիրանածինի այս գիրքը չէր կարող 934 թվականից շատ ուշ գրված լինել։

այդ բոլորին, Հուստինիանոսի բարենորոգումները ընդհանրապես բանակաթեմերի կազմակերպության հետ որևէ սերտ աղերս չունեին։ Մավրիկիոս կայսրը (582—602) կայսրությունը արտաքին վտանգից դիմագրավելու համար ստիպված էր թշնամու հարվածներին ենթակա շրջաններում արտակարգ իրավունքներով օժտված զինվորական հրամանատարներ կարգել։ Այդ կատարվեց հատկապես Արևմուտքում և Աֆրիկայում։ Առաջացան, այսպես կոչված, Իտալիայի և Աֆրիկայի վեցերորդապետությունները (ἐξαρχᾶτον) էքսարքոսի գլխավորությամբ, որը փոխարինեց նախկին magister militum-ին։

Տարբեր չէր գրությունը և Արևելքի նահանգներում։ Ենթադրվում է, որ արևելյան նահանգներում էլ զորահրամանատարները այս ժամանակ արևմտյան էքսարքոսների նման լիազորություններ ստացան։ Մավրիկիոս կայսեր այս բարենորոգումները բանակաթեմերի կազմակերպության սկիզբ են համարվում[1]։

Բյուզանդական կայսրության վիճակը շատ բարդացավ հատկապես Հերակլիոս կայսեր ժամանակ (610—641)։ Պատմական ասպարեզ էին իջել արաբները, այնպիսի մի վտանգավոր թշնամի, որ սպառնում էր կայսրության գոյությանն անգամ։ Կայսրության արևելյան նահանգները անընդհատ ասպատակություններից թաթերաբեմ էին դառնում։ Կայսրությունը արևելյան նահանգների անվտանգությունն ապահովելու համար ստիպված եղավ ձեռք առնել նոր միջոցառումներ։ Ահա Հերակլիոսի օրոք է, որ ըստ Ցիրանածինի սկիզբ է առնում կայսրության բանակաթեմերի բաժանման իրողությունը։ Բանակաթեմերում ամբողջ իշխանությունը գտնվում էր զորավարի (στρατηγός) ձեռքում։

Այդ ժամանակաշրջանում Բյուզանդական կայսրության արեվելքը բաժանված էր երեք մեծ զորավարությունների. Օպսիկիոնի, Անատոլիկոնի և Արմենիակների։ Օպսիկիոնի մեջ էին մտնում Բյութանիան, Հոնորիասը, Պաֆլագոնիան, Հելենոպոնտոսի մեծ մասը և Առաջին Փռյուգիան։ Անատոլիկոն բանակաթեմը ամենամեծն էր Բյուզանդիայում։ Նրա մեջ էին մտնում Դիոկլետիանոսի ստեղծած Ասիա և Լիդիա նահանգները, Կարիայի որոշ շրջաններ, Փռյուգիա Սալուտարիան, Պիսիդիան, Երկրորդ Կապադովկիան և Իսավրիան։ Եվ վերջապես Արմենիակների բանակաթեմը[2], որի կազ-

[1] Տե՛ս Հ. Գելցեր, Սկզբնավորությունք, էջ 4։

[2] Այս բանակաթեմի սաղմերը Գելցերը տեսնում է Հուստինիանոս I-ի բարենորոգումների մեջ, թեև կազմակերպումը դնում է VII դարում։ Հ. Գելցեր, Սկզբնավորությունք, էջ 11։

մի մեջ էին հունական ու Պողեմոնյան Պոնտոսը, Առաջին և Երկրորդ Հայքերը և Առաջին Կապադովկիան։

Լևոն III Իսավրացու ժամանակ անհրաժեշտություն առաջացավ բանակաթեմերի մանրացման։ Դրա հիմնական նպատակն էր թուլացնել բանակաթեմերի զորավարների օրեցօր աճող հզորությունը, մի բան, որ վտանգավոր էր գառնում կայսերական իշխանության համար նույնիսկ։ Այսպես, Անատոլիկոն բանակաթեմը բաժանվեց երկու մասի, ընդ որում նրա արևմտյան նահանգներից՝ Ասիայից, Կարիայից, Լիգիայից և Առաջին Փոյուգիայից կազմվեց Թրակեսիոն կոչված բանակաթեմը՝ Եփեսոս կենտրոնով։ Օպսիկիոն բանակաթեմը ևս բաժանվեց երկու մասի և նրա արևելյան շրջաններից կազմվեց Բուկելլարների բանակաթեմը՝ Անկյուրա կենտրոնով։ Նոր բանակաթեմեր կազմակերպվեցին և Արմենիակների բանակաթեմի հիման վրա։ X դարի սկզբում Փոքր Ասիայում սրդեն կային Անատոլիկոնի, Ամենիակների, Թրակեսիոնի, Օպսիկիոնի, Բուկելլարների, Օպտիմատների, Կապադովկիայի, Պաֆլագոնիայի, Խաղտիքի, Կոլոնիայի, Խարսիանոնի, Սելևկիայի Միջագետքի, Սեբաստիայի, Լիկանդոսի և Լեոնտոկոմիսի բանակաթեմերը։

Բյուզանդական բանակաթեմերի պատմությունը ուսումնասիրելու համար անգնահատելի արժեք ունեն արաբական սկզբնաղբյուրները և առաջին հերթին Իբն Խորդադբեհ, որի աշխատությունը դրվել է Միքայել Թվատի (820—829) և Թեոփիլոս կայսեր (829—842) ժամանակներում։ Հեղինակը, հենվելով Մուսլիմ Իբն Աբու Մուսլիմ ալ Ջամիի տեղեկությունների վրա, ցույց է տալիս, որ ամբողջ Բյուզանդական կայսրությունը երկու մեծ մասերի էր բաժանված՝ Ասիայի և Եվրոպայի։ Նա մանրամասն նկարագրում է Ասիայի բանակաթեմերը։

Մի այլ արաբ պատմիչ՝ Կուդաման, ցույց է տալիս Փոքր Ասիայի բանակաթեմերի ռազմական ուժը, հաշվելով այն 70 հազար հոգի[1]։

Կոստանդին Շիրանածինը իր «Բանակաթեմերի մասին» աշխատությունը բաժանում է երկու մեծ հատվածների, ընդ որում առաջին հատվածը, որ 17 ենթամասի է բաժանված, վերաբերում է Ասիային[2]։ Երկրորդ բաժինը վերնագրված է՝ «Արևմուտքի, այն

[1] Ավելի մանրամասն տե՛ս ծանոթագրությունների մեջ։

[2] Բացի փոքրասիական շրջաններից, այստեղ խոսվում է նաև Կիպրոսի, Սամոսի, և էգեական ծովի մյուս կղզիների մասին։

է Եվրոպայի բանակաթեմերի մասին», որտեղ խոսվում է կայսրության եվրոպական 12 բանակաթեմերի մասին, այդ թվում և Խերսոնի։

Հայոց պատմության համար, հասկանալի է, մեծ կարևորություն ունի աշխատության առաջին հատվածը, նվիրված Փոքր Ասիային, այդ թվում Բյուզանդական կայսրության սահմաններում գտնվող հայկական հողերին, որոնցից ամենակարևորներն էին պատմական Փոքր Հայքը, Բարձր Հայքը և Չորրորդ Հայքը։ Այդ տեսակետից շատ արժեքավոր են Շիրանածինի տվյալները Արմենիակների, Խաղտիք, Միջագետք, Կոլոնիա, Սեբաստիա և Լիկանդոս բանակաթեմերի մասին։ Բացի աշխարհագրական տեղեկություններից, այստեղ մենք հանդիպում ենք տվյալների, որոնք վերաբերում են այդ բանակաթեմերի կազմակերպման հարցում հայ գործիչների խաղացած դերին։ Մենք իմանում ենք հայ նշանավոր գործիչների մի ամբողջ շարանի մասին, որ IX դարի վերջում և X դարի սկզբում հսկայական աշխատանք տարավ առանձին շրջանները արաբական լծից ազատագրելու և Բյուզանդիայի կազմի մեջ ընդգրկելու ուղղությամբ։ Դրանցից էին Լևոն VI-ի ժամանակ Միջագետքում գործող Պանգրատուկաս հայր (Παγκρατούκας ὁ Ἀρμένιος), նրա եղբայրներ Փոքրիկասն (Ποῦκρίκας) և Տավթուկասը (Ταυτούκας —Դավթակ), որոնք կազմակերպեցին Միջագետքի բանակաթեմը։ Լիկանդոսի բանակաթեմը իր կազմավորումը պարտական է նշանավոր Մելիաս-Մլեհին, որին հիշատակելու առիթ ունեցանք։ Լիկանդոսի մասին Շիրանածինի տված տեղեկությունները շատ արժեքավոր են պատկերացնելու համար նաև տվյալ շրջանի տնտեսության զարգացման աստիճանը։ Պարզվում է, որ դեռևս VI դարում, Հուստինիանոս I-ի ժամանակ, այստեղ բարձր զարգացման էր հասել անասնապահությունը։

Հակառակ իր թերություններին, տեղ-տեղ նաև բացահայտ սխալներին, Շիրանածինի այս երկը տվյալ հարցին նվիրված միակ գործն է, որ մեզ է հասել Բյուզանդիայից[1]։

Կոստանդին Շիրանածինի գրչին է պատկանում նաև մի երկ, նվիրված Քրիստոսի՝ Եգեսիայի Արգար թագավորին (Աբգար 5-րդ

---

[1] Թարգմանությունը կատարված է բնագրի գիտական վերջին հրատարակությունից. Constantino Porphyrogenito, De Thematibus, Introduzione, testo critico, commento a cura di A. Pertusi (Studi i testi 160), Città del Vaticano. 1952.

Ուկկամա, 4 թ. մ. թ. ա.—7 թ. մ. թ. և 13—50 թթ.) ուղարկված թղթի և անձեռագործ պատկերի ավանդությանը[1]։ Այդ ավանդությունը, որ ժամանակի ընթացքում որոշ փոփոխություններ է կրել, առաջին անգամ գրված է եղել ասորերեն[2]։ Դրանից հետագայում թարգմանություններ են կատարվել հունարեն, հայերեն և այլ լեզուներով։

Հունարեն հնագույն թարգմանությանը մենք հանդիպում ենք Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմության» մեջ[3], որտեղ, սակայն, խոսք է լինում Քրիստոսի թղթի մասին միայն։ Անձեռագործ պատկերի մասին խոսք չկա այնտեղ։

Ասորերեն խնդրո առարկա աղբյուրը հնում թարգմանվել է նաև հայերեն[4], որտեղ բացի Քրիստոսի թղթից, խոսք է լինում նաև նրա պատկերի մասին, որը, սակայն, նրա տվյալներով Աբգար թագավորի սպասավոր Անանի աշխատանքի արգասիքն է։

Եվսեբիոս Կեսարացու և Ղաբուբնայի տվյալների հիման վրա այդ մասին մանրամասն շարադրանք է տվել Մովսես Խորենացին։ Կանգ առնելով Քրիստոսի և Աբգարի նամակագրության, Քրիստոսի աշակերտի Եդեսիա գալու և Աբգարին բուժելու և այլ մանրամասնությունների վրա, հայ պատմիչն ի միջի այլոց հիշում է և Քրիստոսի պատկերի մասին, որը, սակայն, նա նույնպես անձեռագործ չի համարում։ Եվագրիոսն է, որ իր «Եկեղեցական պատմության» մեջ (Գիրք Դ, գլ. 27), խոսելով պարսից արքա Խոսրովի՝ Եդեսիան պաշարելու մասին, հիշում է խնդրո առարկա պատկերը, որը նա արդեն համարում է «աստվածակերտ և անձեռագործ»։ Թեև Եվագրիոսի աղբյուրը Պրոկոպիոս Կեսարացին է, վերջինիս մոտ պատկերի մասին խոսք չկա։

Քրիստոսի անձեռագործ պատկերի մասին ավանդությունը միշտ հրապարակ էր գալիս, երբ Բյուզանդիայում բորբոքվում էին պատկերամարտական-պատկերապաշտական վեճերը։ Պատկերա-

---

[1] Ավանդության վերաբերյալ մանրամասն մատենագիտություն տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, սյուն. 11—18։

[2] Բնագիրն հրատարակել է W. Cureton-ը իր Ancient Syriac documents գրքում։

[3] *Eusebii Caesariensis* Opera, recognovit *G. Dindorfius*, vol. IV, Historiae ecclesiasticae, Lipsiae, 1890, cap. I, 13.

[4] Տե՛ս Ղաբուբնայ դիւանագետ դպրի Եդեսիոյ Թուղթ Աբգարու յեղեալ յասորւոյն ի ձեռն ս. Թարգմանչաց, Վենետիկ, 1868։ Նաև Ղեռնբնա եղեսացի, Թուղթ Աբգարու թագաւորի Հայոց, Երուսաղեմ, 1868։

պաշտները դիմում էին այդ ավանդության իրենց դիրքերը պաշտպանելու համար։ VIII և IX դարի առաջին կիսում, երբ նման վեճերը նորից սուր բնույթ ստացան, այդ ավանդությանը դիմեցին Ալեքսանդրիայի պատրիարք Քրիստափորը, Անտիոքի պատրիարք Հոբը և Երուսաղեմի պատրիարք Բարսեղը, որոնք մանրամասն շարադրանք ներկայացրին թունդ պատկերամարտ Թեոփիլոս կայսեր (829—842)։ Նրանց դրվածքը չի պահպանվել։ Այն օգտագործել է մեկ հարյուրամյակ անց Կոստանդին Ծիրանածինը իր խնդրո առարկա երկի գրության առթիվ, որի լույս աշխարհ գալու պատճառը քաղաքական բարենպաստ իրադրությունների բերմամբ Բյուզանդիայի դեպի Ասորիք կատարած առաջխաղացումն էր, որի ժամանակ, կայսրության ճնշման տակ, Եդեսիայի ամիրան ստիպված էր կայսրությանը զիջել վերոհիշյալ սրբությունները։ Այդ դեպքը հիշում են բյուգանդական ժամանակագիրները ևս[1]։

Սույն հատորում տրվում է Կոստանդին Ծիրանածինի երկի ամբողջական թարգմանությունը։

Մի անգամ առիթ ունեցանք նշելու, որ Կոստանդին Ծիրանածինը ունեցել է օգնականների մի ամբողջ խումբ, որի օժանդակությամբ, գուցե և հեղինակությամբ կազմվել են դիտական և բանասիրական մի շարք գործեր, որոնց մի մասն է մեզ հասել։ Այն է Βασιλικά-ն (օրհնագիրք, օրենսդրական կարգադրությունների և նովելլաների—հրովարտակների ժողովածու), Γεωπονικά (երկրագործության վերաբերյալ ձեռնարկ. մեզ է հասել սրա հայերեն թարգմանությունը, «Գիրք վաստակոց» անվան տակ, որ կատարված է Գեոպոնիկայի արաբերեն թարգմանությունից)»[2] Ἰατρικά (բժշկական դասագիրք), Ἱππιατρικά (ձիաբուժության վերաբերյալ ձեռնարկ)։ Վերոհիշյալ բոլոր գործերը (հասկանալի է բացի Βασιλικά-ից) հիմք են ունեցել անտիկ շրջանի հույն հեղինակների գործերը, որոնք որպես կանոն մեզ հայտնի են դառնում Ծիրանածինի նրանցից առած քաղվածքներից։

---

[1] *Theophanes Continuatus*, p. 432; *Symeonis Magistri* Annales, p. 749; *Georgii Monachi* Vitae recentiorum imperatorum, p. 918—919.

[2] Տե՛ս Գիրք վաստակոց, թարգմանութիւն նախնեաց յարաբացի լեզուէ, Վենետիկ, 1877, Վերջերս լույս տեսավ Գեոպոնիկայի ռուսերեն թարգմանությունը. Геопоники, Византийская сельскохозяйственная энциклопедия X века., Введение, перевод с греческого и комментарий Е. Э. Липшиц, М.-Л., 1960.

Շիրանածինի և նրա օգնականների կազմած նման բանաքաղային տիպի աշխատությունների թվում կարևոր է մի յուրատեսակ «Պատմական հանրագիտարան», որտեղ փոքր ու մեծ քաղվածքներ են կատարված անտիկ և բյուզանդական շրջանի պատմաբանների գործերից, սկսած Հերոդոտոսից մինչև Գևորգ Վանականը։ Իրենց բովանդակության համապատասխան ստեղծվեցին այդ քաղվածքների 53 բաժիններ, որոնցից միայն երկուսն են մեզ հասել, որտեղ քննության են առնվում դեսպանությունների հարցը (Ἐκλογαὶ περὶ πρεσβειῶν—Excerpta de legationibus)[1], «Առաքինությունների և արատների» հարցը—(Περὶ ἀρετῆς καὶ κακίας—Excerpta de virtutibus et vetiis), «Կարծիքների (հայացքների) մասին»—Ἐκλογαὶ περὶ γνωμῶν (Excerpta de sententiis), «Կայսրերի դեմ կատարված դավադրությունների մասին»—Περὶ ἐπιβουλῶν κατὰ βασιλέων γεγονυιῶν (Excerpta de insidiis)։ Պահպանվել են և առանձին հատվածներ ռազմարվեստի (Περὶ στρατηγημάτων) և պաշտոնական ճառերի մասին (Περὶ ὀνμιγγοριῶν)։ Վերոհիշյալ «Հանրագիտարանի» արժեքը պատմագիտության համար անգնահատելի է դառնում այն պարզ պատճառով, որ բազմաթիվ հեղինակների գործեր մեզ են հասել միայն ու միայն այս երկում, այդ թվում և Եվնապիոսի, Պրիսկոսի, Մալքոսի, Մենանդրոսի։ Շիրանածինի այս աշխատությունը էապես նպաստեց, որ Բյուզանդիայում հետաքրքրություն առաջանա դեպի անտիկ պատմագիտությունը։

Շիրանածինի մեզ չհասած երկերից է նաև Βροντολόγιον καὶ σεισμολόγιον-ը՝ եղանակի նախխմացության մասին։ Մեզ չեն հասել նրա նամակներն ու բանաստեղծությունները (որոնց մասին հիշատակություններ կան ավելի ուշ շրջանի հեղինակների մոտ), ինչպես և ճառերը։

---

[1] Սրա վերաբերյալ տե՛ս Byzantinische Diplomaten und östliche Barbaren, Aus den Excerpta de legationibus des Konstantinos Porphyrogennetos ausgewählte Abschnitte des Priskos und Menander Protektor, übersetzt, eingeleitet und erklärt von *Ernst Doblhofer*, Graz-Wien-Köln, 1955. Վերջերս բյուզանդագետ Հ. Արվայլերը Կոստանդին Շիրանածինի գրչին վերագրեց անանուն հեղինակի ռազմական մի ճառ, որը կարևոր է X դարի կեսերի արաբա-բյուզանդական պատերազմների ուսումնասիրության համար։ Տե՛ս *Hélène Ahrweiler*, Un discours inédit de Constantin VII Porphyrogénète. Travaux et Memoires, 2 (1967) p. 393—404.

* *
*

Նույն գրքին կցված է Հավելված՝ Կոստանդին Ծիրանածինի ապրած ժամանակաշրջանին վերաբերող ծավալով փոքր գործեր, բյուզանդական օրենսգրքերի առանձին հոդվածներ, որոնք առընչվում են հայ ժողովրդի պատմությանը.

1. «Վասիլիկաների», այն է IX դարի վերջում և X դարի սկզբում կազմված օրենսդրական ժողովածուից մի հոդված, որտեղ խոսվում է «հայկական հարկերի» մասին։

2. Նույն «Վասիլիկաների» Մեծ Սինոպսիսից մի հոդված՝ Բյուզանդական Հայաստանում գանձվող հարկերի չափերի մասին։

Այս երկու հոդվածները կրկնողությունն են ավելի վաղ շրջանում (V—VI դ.դ.) հրապարակված օրենքների, որոնց մուտքը Մակեդոնացիների օրենսգրքում ըստ երևույթին վկայում է, որ իրենց ուժը չեն կորցրել[1]*։*

3. «Վասիլիկաների» Փոքր Սինոպսիսից մի հոդված՝ Բյուզանդական կայսրության սահմաններում ապրող հայերի քաղաքացիական դրության մասին։ Որպես հիմք ունենալով Հուստինիանոս Ա-ի ելման կետը, այն, որ «հայերը ամեն ինչում պետք է հետևեն հռոմայեցիների օրենքներին» (որտեղ խոսքը դավանանքի վրա չէր տարածվում), «Վասիլիկաների» Փոքր Սինոպսիսի հեղինակները ջանում են ընդգրկել դավանանքի հարցը ևս։

4. Սխալմամբ հայազգի կայսր Նիկեփոր Փոկասին (963—969) վերագրված «Մասնակի պատերազմ մղելու մասին» X դ. 2-րդ կեսի մի երկասիրություն, որը հայ զինվորների մասին իր տվյալներով շատ կարևոր է արաբա-բյուզանդական սահմանի վրա ծառայող այդ զինվորների դեպի Բյուզանդական կայսրությունը բռնած դիրքի մասին։

5. Նիկեփոր կայսեր մի հրամանագիրը հայ զինվորների (ստրատիոտների) հողերի մասին։ Հայ զինվորները, ծառայելով բյուզանդական բանակում, ստանում էին մշակելի հողեր։ Բայց որովհետև նրանք շատ հաճախ լքում էին իրենց հողերն ու հեռա-

---


[1] Վասիլիկաներում տեղ են գտել նաև Հուստինիանոս Ա-ի հրապարակած օրենքները բյուզանդական Հայաստանի վարչական բարենորոգումների վերաբերյալ (31-րդ նովելլան), ինչպես և նույն կայսեր հրովարտակները հայոց ժառանգական իրավունքի մասին, որոնց թարգմանությունը մենք տվել ենք «Բյուզանդական աղբյուրներ» Ա գրքում, էջ 300—306։

նում, կայսրը կարգավորում էր նրանց թողած հողերի հարցը։ Կայսեր հիմնական մտահոգությունը զինվորների (ստրատիոտների) հողերի օտարացման ուռւջն առնելն էր, քանի որ այդ հողերը հիմք էին տալիս բանակը զինվորներով համալրելու։


Գրքին կցված են և երկու աշխարհագրական քարտեզ.

1. Բյուզանդական կայսրության արևելյան բանակաթեմերը։

2. Բյուզանդական կայսրության արևելյան սահմանները շուրջ 960 թ.



ԿՈՍՏԱՆԴԻՆ
ԾԻՐԱՆԱԾԻՆ



ԿԱՄԱՎՆ ՓՐԻՍՏՈՍԻ՝ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐԻ
ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐԻ ԿԱՅՍՐ ԿՈՍՏԱՆԴԻՆՆ ԻՐ ՈՐԴՈՒՆ՝
ԱՍՏՎԱԾԱՊՍԱԿՅԱԼ ԵՎ ՅԻՐԱՆԱՇԻՆ ՌՈՄԱՆՈՍ ԿԱՅՍԵՐ

[„ԿԱՅՍՐՍՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ“]

DE ADMINISTRANDO IMPERIO

ԳԼՈՒԽ 27[1]

ԼԱՆԳՈԲԱՐԴԻԱՅԻ ԲԱՆԱԿԱԹԵՄԻ, ՆՐԱ ՊՐԻՆԿԻՊԱՏՆԵՐԻ[2] ԵՎ ԱՐԽՈՆՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ[3] ՄԱՍԻՆ

Պետք է գիտենալ, որ անցյալում ամբողջ Իտալիան, այն է Նեապոլիսը, Կասլուան, Բենեվենտոսը, Մալերնոն, Ամալֆեն, Գայետեն, ողջ Լանգոբարգիան գտնվում էին հռոմայեցիների տիրապետության ներքո, երբ, հասկանալի է, Հոոմն էր նրանց մայրաքաղաքը։ Երբ մայրաքաղաքը տեղափոխվեց Կոստանդնուպոլիս և պետությունը բաժանվեց երկու մասի, Կոստանդնուպոլսի կայսրը երկու պատրիկ էր ուղարկում, որոնցից մեկը իշխում էր Սիկիլիայի, Կալաբրիայի և Ամալֆեի վրա, իսկ մյուսը՝ նստում էր Բենեվենտոսում. վերջինիս տիրապետության տակ էին Պապիան, Կապուան և մնացած բոլորը։ Ամեն տարի նրանք որոշակի հարկ էին վճարում կայսեր։ Վերոհիշյալ բոլոր շրջաններում հռոմայեցիներ էին բնակվում։ Իրենե կայսրուհու ժամանակ ուղարկված պատրիկ Նարսեսը տիրում էր Բենեվենտոնում և Պապիայում, իսկ Հոոմը գտնվում էր պապ Զաքարիա Աթենացու ձեռքում[4]։ Պապիայի կողմերում պատերազմներ եղան, Նարսեսը պետական հարկերը ծախսելով զորքի վրա, ընգունված կարգի համաձայն հավաքված հարկերը՝ [Կոստանդնուպոլիս] չուղարկեց։ [Մայրաքաղաքից ստացված նամակին] Նարսեսը պատասխանեց, թե այստեղից հավաքածս գրամից հազիվ թե կարողանամ ուղարկել, քանզի ամբողջ գրամը ծախսեցի պատերազմների վրա և զուր եք դուք դրամ ակնկալում։ Իրենե կայսրուհին, լսելով այդ, զայրացավ և նրան իլիկ ու ճախարակ ուղարկեց, գրելով, թե «առ սրանք, քեզ դա՛ է վայել։ Մենք գտանք, որ քեզ ավելի է պատշաճում մանել, քան թե տղամարդու պես զենքով պաշտպանել հռոմայեցիների [շահերը]»։ Պատրիկ Նարսեսը լսելով այդ, պատասխա-*

---

* ( ) Կոր փակագծերի մեջ առնված բառերը հեղինակինն են։ [] Անկյունավոր փակագծերի մեջ առնված բառերը թարգմանչինն են։

նեց կայսրուհուն. «Դուք գտնում եք, որ [ինձ] ավելի վայել է կնոջ նման մանել և ոլորել։ Բայց ես բացի իլիկից ու ճախարակից այնքան բուրգ տամ, որ հռոմայեցիները մինչև իրենց կյանքի վերջը չկարողանան մանել»։ Լանգոբարգներն այն ժամանակ Պանոնիայում էին ապրում, որտեղ այժմ թուրքերն են բնակվում[5]։ Պատրիկ Նարսեսը ամեն տեսակի մրգեր ուղարկեց նրանց և հայտնեց. «Եկեք այստեղ և տեսեք մի երկիր, որտեղ, ինչպես ասում են, մեղր ու կաթ է ծորում, որից լավը, իմ կարծիքով, աստված չի տվել։ Եթե ձեզ այն դուր գա, բնակվեք այնտեղ և ինձ գարե դար երանի կտաք»։ Լանգոբարգները, լսելով այդ, հավատք ընծայեցին նրա խոսքերին և իրենց ընտանիքներով եկան Բենեվենտոս, ...նենգությամբ գրավեցին բերդը, իսկ բոլոր բնակիչներին կոտորեցին[6]։ ...Նրանք այնուհետև արշավանք գործելով, իրենց ենթարկեցին ողջ երկիրը՝ Լանգոբարգիայի և Կալաբրիայի բանակաթեմը մինչև Պապիա...

ԳԼՈՒԽ 43

ՏԱՐՈՆ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ[1]

Հյուսիսում ապրող սկյութների մասին քեզ, ցանկալի որդյակ, բավարար չափով ասվել է[2]։ Այդ մասին գիտենալը քեզ համար ապագայում անպայման օգտակար և պիտանի կլինի։ Բայց քեզ անհրաժեշտ է իմանալ նաև արևելքում գտնվող և նորից հռոմայեցիների տիրապետության տակ անցած [երկրների] մասին, երկրներ, որոնք անցյալում դուրս էին եկել [հռոմայեցիների] հպատակությունից։

Հռոմայեցիների կայսրին առաջինը ենթարկվեց և հպատակվեց Տարոնի իշխան Կրիկորիկը[3]։ Բայց հենց սկզբից նա երկուլարի վրա էր խաղում, խոսքով ձևացնում էր, թե գնահատում է կայսեր բարեկամությունը, բայց իրականում աշխատում էր հաճոյանալ սարակինոսների առաջնորդին։ Տարբեր ժամանակներում նա Ասորիքից դուրս եկող և հռոմայեցիների կայսեր ենթակա բանակաթեմերի վրա արշավող [սարակինոսների] զորքերին ճանապարհ էր ցույց տալիս, ինչպես նաև Ասորիքին էր հայտնում հակառակորդ սարակինոսների դեմ հռոմայեցիների գաղտնի ծրագրերը։ Նա շարունակ թաքուն նամակներ էր ուղարկում ամերմամ-

Նիին[4] և նրան տեղյակ պահում այն ամենի մասին, ինչ կատարվում էր մեզ մոտ։ Նա ձևացնում էր, թե հռոմայեցիների կողմից է, բայց իրականում նախապատվություն էր տալիս սարակինոսներին և գործում նրանց օգտին։ Հակառակ ղրան, նա արժանահիշատակ կայսր Լևոնին[5] նվերներ էր ուղարկում[6], այնպիսիք, որոնք այդ վայրերի բարբարոսների[7] համար մեծ արժեք ունեն և փոխադարձաբար ավելի շատ ու լավ նվերներ էր ստանում բարեպաշտ կայսրից։ Վերջինս բազում անգամ նրան նամակ գրեց և հրավիրեց մայրաքաղաք, անձնապես հանդիպելու կայսեր, արժանանալու նրա հյուրընկալության և պատիվներին։ Սակայն նա, երկյուղելով, որ նման քայլը կարող է դուր չգալ ամերմումնիին, և վերջինիս մեջ կասկածներ կհարուցի, անհիմն պատճառաբանություններ էր հորինում, որ իբր չի կարող իր երկիրն անօգնական թողնել սարակինոսների [հնարավոր] ասպատակությունների առջև։

Տարոնի այս իշխանը մի պատերազմի ժամանակ գերի վերցրեց Արքայիկի[8] որդիներին, այսինքն պատրիկ[9] Կրիկորիկի՝ պրոտոսպաթար[10] Աշոտի[11] հոր եղբորդիներին, և իր մոտ արգելափակեց։ Այն ժամանակվա իշխանաց իշխան Սմբատը[12], նամակ գրեց և խնդրեց նույն ամենաերանելի կայսեր, որ նա մարդ ուղարկի Տարոնացու[13] մոտ ազատելու համար իր, Սմբատի հարազատ եղբորորդիներին՝ վերոհիշյալ Արքայիկի որդիներին, որպեսզի նրանք չհանձնվեն ամերմումնիի ձեռքը, քանզի պատրիկ Գրիգորը իշխանաց իշխան Սմբատի ազգականն էր։ Ամենաերանելի կայսր Լևոնը, ընդառաջելով Սմբատի խնդրանքին, ներքինի Սինուտին՝[14] այն ժամանակվա օքսեոս դրոմոսի խարտուլարին[15], այդ և այլ հարցերով ուղարկում է Տարոնի իշխանի, ինչպես նաև Իբերիայի կուրապաղատ Ադրանասերի[16], [նախապես] տալով նրան երկուսի համար պատշաճ ընծաներ։ Սակայն հայ թարգման Թեոդորոսը[17] ամբաստանեց Սինուտին վերոհիշյալ արժանահիշատակ կայսեր առաջ, դրա համար էլ նրա փոխարեն որպես կայսեր պատգամավոր[18] ուղարկվեց Լիվոսի որդի պրոտոսպաթար Կոստանդինը[19], հյուպուրգիայի դոմեստիկոսը[20], այժմյան անթիպատ պատրիկը[21] և մեծ հետերիարխը[22]։ Նա լիազորագրով իրավասու եղավ վերցնել Տարոնի իշխան Կրիկորիկին ուղարկվելիք ընծաները, գնալ Տարոն, իսկ Սինուտին ուղարկել Իբերիայի կուրապաղատ Ադրանասերի մոտ՝ հանձնարարվածը կատարելու համար։ Վերոհիշյալ պրոտոսպաթարը հասնելով Տարոն, Կրիկորիկին հանձնեց կայսեր նրան ուղարկած նվերներն ու նամակը, և վերդ-

նելով Տարոնացու խորթ որդուն, որ Աշոտ էր կոչվում, իր հետ մայրաքաղաք բերեց։ Կայսրը վերջինիս շնորհեց պրոտոսպաթարի աստիճան և մեծապես հյուրասիրելով, նույն պրոտոսպաթարի ուղեկցությամբ Աշոտին ճանապարհեց հոր մոտ։ Այստեղ այդ նույն Կոստանդինը, իր հետ վերցնելով Ապոգանեմին[23], Տարոնի իշխան Կրիկորիկի եղբորը, և Արքայիկի երկու որդիներին, գալիս է երանելի կայսեր մոտ, որը նրան [Ապոգանեմին] շնորհում է պրոտոսպաթարի աստիճան և սիրալիր կերպով բազմից։ պատվասիրելով, նորից նույն այդ Կոստանդինի հետ միասին իր երկիրն ուղարկում, հարազատ եղբոր մոտ։

Այս բոլորից հետո վերոհիշյալ Կոստանդինը երկար ժամանակ մնաց Խաղտիքում[24], երբ հրաման ստացավ գնալ Տարոն, վերցնել Տարոնի իշխան Կրիկորիկին և գալ մայրաքաղաք։ Նա այդպես էլ արեց։ Կրիկորիկը մուտք գործեց աստվածապահպան քաղաքը[25], որտեղ արժանացավ մագիստրոսի[26] և Տարոնի զորավարի[27] աստիճանին։ Նրան բնակության համար հատկացվեց տուն, այսպես կոչված «Բարբարոսի տունը»[28], որն այժմ պատկանում է պարակիմոմենոս[29] Վասիլին։ Բացի այդ, նա պատիվ ունեցավ որպես ռոճիկ ստանալ տարեկան տաս լիտր ոսկի, տաս լիտր էլ միլիարիսիա[30], ընդամենը քսան լիտր։ Նա մի տարի անցկացնելով Թագավորանիստ քաղաքում, նույն պրոտոսպաթար Կոստանդինի ուղեկցությամբ առոք փառոք վերադարձավ իր հայրենի երկիրը։

Դրանից հետո Ապոգանեմը նորից գնաց երանելի կայսեր մոտ և նրա կողմից բարձրացավ պատրիկի աստիճանին։ Նա իրավունք ստացավ կնության առնել վերոհիշյալ Կոստանդինի դուստեր[31], և այդ առթիվ խնդրեց նաև տուն և ստացավ «Բարբարոսի տուն»՝ առանց խրիսովուլլի[32]։ Նա հյուրասիրվեց կայսեր կողմից, այնուհետև գնաց, իր երկիրը վերադառնալու և ամուսնական հանդեսը կատարելու մտադրությամբ, բայց իր հայրենի երկիրը վերադառնալուց մի քանի օր հետո վախճանվեց։

Սրա եղբայր Կրիկորիկը նամակ գրեց և թույլտվություն խնդրեց մուտք գործելու Թագավորանիստ քաղաքը, սուրբ կայսեր ձեռքից ստանալու իրեն հասանելիք ռոճիկը և որոշ ժամանակ անցկացնելու աստվածապահպան քաղաքում։ Այդ կապակցությամբ նա խնդրեց նաև, որ բնակության համար իրեն հատկացվի իր եղբոր համար առանձնացված տունը, որը և նրան տրվեց երանելի կայսեր կողմից այն պատճառով, որ [Կրիկորիկը] նոր էր

իրեն հպատակվել, բացի այդ գտնում էր, որ այդ քայլը արևելքի մյուս իշխանավորներին էլ կգրգի նույն պատրաստակամությամբ հպատակվելու հռոմայեցիներին։ Բայց և այնպես, այդ տունը նրան հատկացնելու գործողությունը չհաստատվեց խրիսովուլլ գրությամբ։

Շատ տարիներ անց, երբ հռոմայեցիների կայսրության գլխիսոնը գտնվում էր երանելի կայսր Ռոմանոսի[33] ձեռքում, այս Կրիկորիկը հայտնեց, որ ինքն ի վիճակի չէ պահելու «Բարբարոսի տունը» և խնդրում էր դրա դիմաց իրեն տրվի Կելցենեում[34] մի պրոաստիոն[35] կամ Տաճատինը[36], կամ էլ որևէ մի այլ, ո՛րը որ կայսրը կամենա, այն փաստարկումով, որ երբ հագարացիների կողմից իր երկրի վրա որևէ հարձակում կատարվի, նա իր ընտանիքն ու ունեցվածքը փրկելու տեղ ունենա։ Կայսրը իրերի վիճակին անտեղյակ, ենթադրելով, որ «Բարբարոսի տունը» Տարոնացուն[37] է պատկանում, համաձայն երանելի Լևոնի կայսերական խրիսովուլլի, տվեց նրան Գրիգորասի[38] պրոաստիոնը Կելցենեյում և իբր թե դրա դիմաց ստացավ [Բարբարոսի] տունը, բայց նա ևս իր հերթին պրոաստիոնի հատկացումը չվավերացրեց խրիսովուլլով։

Դրանից հետո Տարոնացու եղբորորդի Թոռնիկը, Ապոդանեմի որդին, նույն կայսեր նամակ գրեց, թե «ամենաերանելի կայսր Լևոնը «Բարբարոսի տունը» նվիրել էր իմ հորը։ Իմ հոր մահից հետո, այն պատճառով, որ ես դեռ փոքրահասակ էի և որը, իմ հորեղբայրը տիրացավ [իմ հոր] տան, շարունակ ինձ խոստումներ տալով, թե երբ ես մեծանամ, կստանամ իմ հայրենական տունը։ Բայց այժմ, ինչպես իմացա, իմ հորեղբայրը այդ տունը հանձնել է քո մեծությանը և դրա դիմաց ստացել Գրիգորասի պրոաստիոնը Կելցենեում»։

Կայսեր դեպի Տարոնի իշխանը ցուցաբերած սիրալիրությունը վասպարակայի իշխան Կակիկի[39], Իբերիայի կուրապաղատ Ադրանասերի[40] և իշխանաց իշխան Աշոտիկի[41] նախանձը գրգռեց, նախանձ, որ գնալով բորբոքվեց։ Նրանք բողոքեցին կայսեր, թե ինչո՞ւ համար Տարոնացին միայն պիտի կայսերական ռոճիկ ստանա, իսկ իրենք բոլորը՝ ոչ։ Նրանք հարց էին տալիս. «Նա մնզանից ի՛նչ ավել ծառայություններ է մատուցում, և կամ մեղանից ի՞նչով է ավել օգուտ տալիս Հռոմայեցիներին։ Հետևաբար պետք է, որ կա՛մ մենք էլ նրա նման ռոճիկ ստանանք, կա՛մ թող նա էլ չստանա այդ պարգևը»։ Իսկ երանելի կայսր Ռոմանոսը

գրավոր պատասխանեց նրանց, թե Տարոնացուն տրվող ռոճիկը ինքը չի սահմանել, հետևաբար ինքը իրավասու չէ դադարեցնելու դրա վճարումը։ Այն [սահմանել է] ամենաերանելի [Լևոն] կայսրը և արդարացի բան չէ չեղյալ հայտարարել անցյալում իշխած կայսրերի [սահմանածները]։ Բայց նա դրեց նույն Տարոնացուն, հայտնեց նրան վերոհիշյալ մարդկանց բողոքի և նեղացած լինելու պատճառի մասին։ Իսկ [Տարոնացին] հայտնեց, որ ինքն ի վիճակի չէ նրան տալ ո՛չ ոսկի, ո՛չ էլ արծաթ, բայց խոստացավ ընդունված սովորության համաձայն ուղարկվող նվերներից բացի տալ մինչև տաս լիտր արժողությամբ հանդերձներ և պղնձե սպասներ, մի բան, որ նա տվեց երեք կամ չորս տարի, որից հետո հայտնեց, թե ի վիճակի չէ տալ այդ պախտր[42]։ Հակառակ դրան, պահանջում էր ռոճիկը կամ պուդրը[43] այն չափով, ինչ ստանում էր ամենաերանելի կայսր Լևոնի օրոք, հակառակ դեպքում նա լրիվ հրաժարվում էր դրանից։ Վերոհիշյալ երանելի կայսր Ռոմանոսը, Կակիկին, կուրապաղատին և մյուսներին գայթակղության առիթ չտալու համար, ռոճիկը կտրեց։ Բայց կարծես նրա սիրտն առնելու համար հետագայում նրա որդուն՝ Աշոտին պատրիկի աստիճան շնորհեց, երբ նա քաղաք էր եկել և պետք եղածի պես հյուրասիրելուց հետո իր հայրենիքն ուղարկեց։

Մագիստրոս Կրիկորիկի մահից հետո, Ապոգանեմի որդի Թոռնիկը հայտնեց, որ շատ է ցանկանում գալ [քաղաք] կայսրին տեսնելու։ Այդ կապակցությամբ կայսրն ուղարկեց պրոտոսպաթար և թարգման Կրինիտեսին[44], որը և հիշյալ Թոռնիկին քաղաք բերեց։ Այդ նույն Թոռնիկին կայսրը բարձրացրեց պատրիկի աստիճանին։ Թոռնիկը «Բարբարոսի տան» նկատմամբ պահանջ էր ներկայացնում, բայց պատասխան ստացավ, թե իր հորեղբայրը դրա դիմաց Կելցենեում պրոաստիոն է ստացել։ Նա ասաց, որ իր հորեղբայրը իրավունք չուներ իր հայրենական ժառանգությունը փոխանակության ենթարկել և պահանջում է կա՛մ տունը, կա՛մ էլ պրոաստիոնը, հակառակ դեպքում նա երկուսն էլ գիջում էր կայսեր, որպեսզի իր հորեղբորորդիների ձեռքում չլինեն։ Այդ պատճառով կայսրը վերցրեց պրոաստիոնը (ծերունի Տարոնացին արդեն մահացել էր), բայց տունը դրա դիմաց չտվեց, որովհետև, ինչպես վերևում ասվել է, սրանց մասին ոչ մի խրիսովուլլ տրված չի եղել։

Դրանից հետո թագավորանիստ քաղաքը ժամանեց Պանդրատը[45], մագիստրոս Կրիկորիկ Տարոնացու անդրանիկ որդին և կայ-

սեր կողմից բարձրացուվ պատրիկի աստիճանին: Նա դարձավ նաև Տարոնի զորավար: Նա խնդրեց կայսերական ընտանիքից կին առնել, իսկ կայսրը նրան կնության տվեց մագիստրոս Թեոփիլակտոսի[46] քրոջ: Ամուսնությունից հետո նա կտակ գրեց որտեղ հայտնում էր, թե «եթե այս կնոջից ինձ երեխաներ ծնվեն, թող նրանք տիրեն իմ ամբողջ երկրին, որպես [իրենց] հայրենական ժառանգություն»: Նա խնդրեց կայսեր, որ իրեն տրվի Գրիգորասի պրոաստիոնը, որպեսզի այնտեղ բնակվի պատրիկիան, իր կինը, որի մահից հետո այգ պրոաստիոնը թող նորից վերադարձվի նրա թագավորությանը: Կայսրը դրան էլ ընդառաջեց և բազում նվերներով նրան կնոջ հետ ուղարկեց նրա երկիրը: Մագիստրոս Կրիկորիկի որդիները, այն է պատրիկ Պանգրատը և պատրիկ Աշոտը շատ էին նեղում ու ձնշում պատրիկ Թոռնիկին, իրենց հարազատ հորեղբորորդուն, որ չկարողանալով դիմանալ նրանց թշնամության, նամակ գրեց կայսեր, խնդրելով, որ վերջինս վստահելի մարդ ուղարկի և վերցնի իր երկիրը, իսկ իրեն, իր կնոջ և երեխային թույլ տա լինել կայսեր մոտ: Կայսրն ուղարկեց պրոտոսպաթար և թարգման Կրինիտեսին, որպեսզի խնդրքի համաձայն վերցնի [երկիրը] և [Թոռնիկին] ուղեկցի աստվածապահպան քաղաքը: Բայց երբ Կրինիտեսը այդ երկիրը հասավ, [Թոռնիկն] արդեն վախճանված էր, իր մահից առաջ կտակ թողնելով, համաձայն որի, իր ամբողջ երկիրը կտակում էր հռոմայեցիների կայսեր. նա [խնդրում] էր նաև, որ իր կինն ու երեխան լինեն կայսեր մոտ: Կայսրը [Թոռնիկի կնոջ] իր մոտ լինելուց հետո, նրա բնակության համար հատկացրեց ժամանակին Խաղտիքի կոմմերկիարիոս[47] դարձած պրոտոսպաթար Միքայելին պատկանող Պսոմաթեոսի[48] վանքը: Ահա վերոհիշյալ Կրինիտեսը կայսեր կողմից նորից է ուղարկվում ստանալու Ապոգանեմի երկիրը, այսինքն պատրիկ Թոռնիկի բաժինը: Տարոնացու որդիները, այսինքն վախճանված [Թոռնիկի] հորեղբորորդիները, դիմեցին [կայսեր], առաջարկելով նրան զիջել Ուլնուտը[49], բայց իրենց ձեռքում պահեն հորեղբորորդու երկիրը, պնդելով, որ միանգամայն անհնարին կլինի իրենց գոյությունը պահպանել, եթե կայսրը սեփականացնի հորեղբորորդու երկիրը: Կայսրն իրեն հատուկ բարությամբ ընգառաջ գնաց նրանց խնդրանքին, տվեց Ապոգանեմի՝ իրենց հորեղբորորդու երկիրը, իսկ ինքը վերցրեց Ուլնուտն իր ամբողջ շրջակայքով: Այսպիսով, ահա, ամբողջ Տարոն երկիրը երկու մասի բաժանվեց, նրա մեկ կեսը գտնվում էր մագիստրոս

Կրիկորիկի որդիների ձեռքում, իսկ մյուս կեսը նրանց հորեղբոր-որդիների՝ պատրիկ Ապոջանեմի [որդիների]։

ԳԼՈՒԽ 44[1]

ԱՊԱԽՈՒՆԻ ԵՐԿՐԻ[2], ՄԱՆՑԻԿԻԵՐՏ ԱՄՐՈՑԻ[3], ՊԵՐԿՐԻԻ[4], ԽԼԻԱՏԻ, ՈՐ ԵՎ ԽԱԼԻԱՏ[5], ԱՐՋԵՍԻ[6], ՏԻՎԻԻ[7], ԽԵՐՏԻ[8], ՍԱԼԱՄԱՍԻ[9], ԵՎ ՑԵՐՄԱՅՈՒԻ[10] ՄԱՍԻՆ

Իշխանաց իշխան Աշոտից[11] առաջ (սա Պարսկաստանի ամիրա Ապոստատայի[12] կողմից գլխատված իշխանաց իշխան Սմբատի[13] հայրն էր, Սմբատի, որն ունեցավ երկու որդի՝ Աշոտին[14], որն իրենից հետո դարձավ իշխանաց իշխան, և Ապասակին[15], որն հետագայում մագիստրոսի աստիճանին արժանացավ), այդ երեք ամրոցները, այսինքն Պերկրին, Խալիատր և Արղեսր, գտնվում էին Պարսկաստանի տիրապետության տակ։

Իշխանաց իշխանը նստում էր Մեծ Հայքում՝ Կարս ամրոցում[16] և տիրում էր վերոհիշյալ երեք ամրոցներին, այն է Պերկրիին, Խալիատին և Արզեսին, ինչպես և Տիվիին, Խերտին և Սալամասին։

Մանցիկիերտին էր տիրում Ապելվարդը[17], որ գտնվում էր իշխանաց իշխան Աշոտի՝ իշխանաց իշխան Սմբատի հոր իշխանության ներքո։ Իշխանաց իշխան Աշոտը այս Ապելվարդին տվեց նաև Խլիատ ամրոցը, Արղեսը և Պերկրին[18], քանզի արևելքի բոլոր շրջանները գտնվում էին վերոհիշյալ իշխանաց իշխան Աշոտի՝ իշխանաց իշխան Սմբատի հոր ձեռքում։ Ապելվարդի մահից հետո նրա տիրույթներն անցան Ապելխամիտի՝[19] [Ապելվարդի] հարազատ որդու ձեռքը, իսկ Ապելխամիտի մահից հետո վերջինիս իշխանության տիրացավ նրա անդրանիկ որդի Ապոսևատան[20]։ Իշխանաց իշխան Սմբատի՝ Պարսկաստանի ամիրայի կողմից սպանվելուց հետո, [Ապոսևատան] իրեն համարեց Մանցիկիերտ ամրոցի և մյուս ամրոցների ու շրջանների տերն ու տիրակալը և անկախացավ։ Նա իր մյուս երկու եղբայրներ Ապոլեսֆուետի[21] և Ապոսելմիսի[22] հետ [ստիպված եղավ] ենթարկվել կայսեր, (քանզի սխոլերի գոմեստիկոսը[23] համառ ալայքալ էր մղել ամրոցների դեմ, ասպատակել ու ավերել նրանց պատկանող շրջանները), հռոմայեցիների կայսեր վճարելով իրենց ամրոցների և շրջանների

համար նաև հարկ։ Այս երեք ամրոցները վերոհիշյալ իշխանաց իշխան Աշոտի՝ Սմբատի հոր, երկրորդ Աշոտի և մագիստրոս Ապասակի պապի ժամանակներից սկսյալ մինչև երկրորդ Աշոտի՝ իշխանաց իշխանի ժամանակ գտնվում էին իշխանաց իշխանի գերիշխանության ներքո, և հարկ էին վճարում նրան։ Բայց Մանցիկիերտ ամրոցը, Ապախունի երկիրը, Կորին[24] և Խարկան[25] ևս գտնվում էին իշխանաց իշխանի գերիշխանության և տիրապետության ներքո, մինչև այն ժամանակ, երբ Մանցիկիերտի ամիրա Ապոսևատան իր երկու եղբայրներ Ապոլեսֆուետի և Ապոսելմիսի հետ հպատակություն հայտնեցին կայսեր, իրենց ամրոցների և շրջանների համար նրան վճարելով հարկ։ Քանի որ իշխանաց իշխան հռոմայեցիների կայսեր ծառան է համարվում, որովհետև [կայսրն է] նշանակում նրան և ընձեռում այդ պատիվը, ապա։ պարզ է, որ նրա տիրապետության տակ գտնվող ամրոցները, քաղաքներն ու գյուղերը հռոմայեցիների կայսեր [սեփականություն] են։

Երբ պարսից ամիրա Ապոսատան գերի վերցրեց և գլխատեց Մեծ Հայքի իշխանաց իշխան Սմբատին, Մանցիկիերտ ամրոցում նստող Ապոսևատան գրավեց Խալիատ ամրոցը, Պերկրի ամրոցը և Արղես քաղաքը։

Ապոսևատայի երկրորդ եղբայրը՝ Ապոլեսֆուետը, և նրա [հոր]եղբորորդի[26] և որդեգիր Ախմետը[27] գրավեցին Խլիատ ամրոցը, Արգես ամրոցը և Ալցիկե[28] ամրոցը։ Նրանք ևս հպատակություն հայտնեցին հռոմայեցիների կայսեր, անցան նրա գերիշխանության ներքո և իրենց եղբայր Ապոսևատայի նման իրենց ամրոցների և շրջանների համար հարկ էին վճարում։

Ապոսևատայի և Ապոլեսֆուետի երրորդ եղբայրը՝ Ապոսելմիսը տիրում էր Ցերմացու ամրոցին և նրա շրջակայքին. նա ևս հպատակություն հայտնեց հռոմայեցիների կայսեր և, ինչպես իր եղբայր Ապոսևատան և իր երկրորդ եղբայր Ապոլեսֆուետը, հարկ էր վճարում։

Ապոսևատայի մահից հետո Մանցիկիերտը և նրա շրջաններն ու ամբողջ տիրապետությունն անցավ Ապոսևատայի որդի Աբդեռախիմի ձեռքը։ Աբդեռախիմի մահից հետո Մանցիկիերտ ամրոցին և վերոհիշյալ բոլոր շրջաններին տիրացավ Ապոսևատայի երկրորդ եղբայրը, Աբդեռախիմի հորեղբայրը Ապոլեսֆուետը։ Իսկ սրա մահից հետո Մանցիկիերտին և վերոհիշյալ բոլոր շրջաններին

տիրացավ Ապոսևատայի և Ապոլեսֆուետի երրորդ եղբայր Ապոսելմիսը[29]։

Ապոսևատայի որդիներն էին Աբդեռախիմը[30] և Ապելմուզեն[31]։ Ապոլեսֆուետի որդեգիրը և [հոր]եղբորորդին Ախամետն էր։ Նա, Ապոլեսֆուետը, չուներ որդի և որդեգրել էր խորթ որդի և [հոր]եղբորորդի Ախամետին։

Ապոսելմիսի որդին էր Ապելվարդը[32], Մանցիկիերտի ներկա տիրակալը։

Ապոսևատան իր մահից հետո թողեց որդի՝ Աբդեռախիմին, որը դարձավ ամիրա։ Նրա մյուս որդին՝ Ապելմուզեն դեռ շատ փոքր էր, դրա համար նա իր հոր և եղբոր իշխանության մասնակից դառնալու գործում հաշվի չառնվեց։

Առաջին եղբայր Ապոսևատան նստում էր Մանցիկիերտ ամրոցում և տիրում էր, ինչպես ասվեց, Ապախունիի, Կորիի և Խարկայի շրջաններին, որոնց համար հարկ էր վճարում հռոմայեցիների կայսեր։ Սրա մահից հետո տիրեց նրա որդի Աբդեռախիմը. նա ևս վճարում էր վերոհիշյալ հարկը, որովհետև, ինչպես ասվեց, նրա եղբայր Ապելմուզեն շատ փոքր էր։

Աբդեռախիմի մահից հետո, այն պատճառով, որ նրա եղբայր Ապելմուզեն որպես մանկահասակ նկատի չառնվեց, Մանցիկիերտ ամրոցին և նրա ենթակա նշված շրջաններին տիրացավ Ապոսևատայի երկրորդ եղբայր վերոհիշյալ Ապոլեսֆուետը, Աբդեռախիմի և վերջինիս եղբոր, իր մանկահասակության համար նկատի չառնված Ապելմուզեի հորեղբայրը[33]։

Ապոլեսֆուետի մահից հետո Մանցիկիերտ ամրոցին և վերոհիշյալ շրջաններին տիրացավ Ապոսևատայի երրորդ եղբայր Ապոսելմիսը, իսկ վերոհիշյալ Ախամետը, այն է Ապոլեսֆուետի եղբորորդին և որդեգիրը, Ապոլեսֆուետի գիտությամբ և համաձայնությամբ տիրում է Խլիատին, Արզեսին և Պերկրիին, որովհետև Ապոլեսֆուետը, ինչպես ասվեց, որդի չուներ, և այս Ախամետին, իր եղբորորդուն և որդեգրին նշանակել էր իր ամբողջ կարողության, ամրոցների ու շրջանների ժառանգորդը։

Ապոսելմիսի մահից հետո Մանցիկիերտ ամրոցին և նրա շրջակայքին տիրացավ նրա եղբայր Ապելվարդը, իսկ Ախամետը՝ Խլիատ, Արզես, և Ալցիկե ամրոցներին։

Ախամետը ևս կայսեր ծառան էր, ինչպես և վերևում ասվեց նա հարկ էր վճարում [կայսեր] և՛ իր, և՛ իր հորեղբայր Ապոլեսֆուետի համար։ Սակայն Ապելվարդը նենգությամբ ու խաբեու-

թյամբ սպանեց նրան ու խլեց նրա երեք ամրոցները՝ Խլիատը, Արզեսը և Ալցիկեն։ Կայսրը պարտավոր է այս [ամրոցները] ետ վերցնել, որպես իրեն պատկանող, որովհետև վերոհիշյալ ամրոցներն ու շրջանները երբևիցե չեն գտնվել պարսից տիրապետության, կամ էլ ամերմումնիի տիրապետության ներքո։ Նրանք, ինչպես ասվեց, տեր Լևոն կայսեր ժամանակ գտնվում էին իշխանաց իշխան Սմբատի գերիշխանության ներքո, որից հետո անցան երեք եղբայրներ, ամիրաներ Ապոսևատայի, Ապոլեսֆուետի և Ապոսելմիսի ձեռքը։ Ահա վերջիններիս օրոք է, որ նրանք ենթարկվեցին, հարկադրվեցին և անցան հռոմայեցիների կայսեր գերիշխանության ներքո։

Այս երեք ամրոցները՝ Խլիատը, Արզեսը և Պերկրին եթե գրտնրվեն կայսեր ձեռքում, ապա պարսկական զորքը Ռոմանիայի դեմ դուրս գալ չի կարող, որովհետև ամրոցները գտնվելով Ռոմանիայի և Հայաստանի միջև՝ պատնեշի և զորակայանի դեր են խաղում։

ԳԼՈՒԽ 45

ԻԲԵՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իբերների կուրապաղատները, ցանկանալով իրենց վեհացնել, ասում են, թե սիրում են թագավոր Դավիթ մարգարեի հարճից՝ Ուրիայի [կին Բերսաբեից]։ Նրանք գտնում են, թե Դավիթ՝ նրանից ունեցած երեխաներից են սերում և որ իրենք Դավիթ թագավորի և մարգարեի ազգականներն են, հետևաբար և ամենասուրբ աստվածածնի, քանի որ վերջինս Դավիթի սերնդից է[1]։ Այդ է պատճառը, որ իբերների մեծամեծները անխափան ամուսնանում են իրենց արյունակից [աղջիկների] հետ[2], կարծելով, որ այդպիսով հետևում են վաղեմի սովորությանը։ Նրանք ասում են, թե Երուսաղեմից են եկել, և պատմում, որ [աստվածային] տեսիլքի [առաջարկությամբ] այդտեղից դուրս են եկել և հաստատվել պարսից երկրում, այսինքն այն երկրում, ուր այժմ բնակվում են։ Երուսաղեմից դուրս եկողները այն Դավիթն էր և նրա եղբայր Սպանդիատը[3]։ Ինչպես իրենք են պատմում, աստված Սպանդիատին պարգևել էր անխոցելի մարմին և մարտում, բացի սրտից, նրա մարմինը սրից չէր վախենում, իսկ պատերազմների ժա-

մանակ նա [իր սիրտը] պաշտպանում էր ինչ որ ծածկոցով։ Այդ պատճառով պարսիկները վախենում ու սարսափում էին նրանից և նա հաղթեց նրանց, տիրեց նրանց և իր աղգակից իրերներին բնակեցրեց այդ դժվարամատույց շրջաններում, որոնց այժմ տիրում են, և ժամանակի ընթացքում բազմանալով, ժողովուրդ դարձան։ Երբ Հերակլիոս կայսրը հարձակվեց Պարսկաստանի վրա[4], [իբերները]միացան նրան և նրա հետ արշավանքի դուրս եկան։ Հռոմայեցիների կայսր Հերակլիոսի սփռած սարսափն էր պատճառը և ոչ թե [իբերների]սեփական ուժն ու կարողությունը, որ նրանք իրենց ենթարկեցին պարսիկների բազմաթիվ քաղաքներ ու շրջաններ։ Երբ մեկ անգամ Հերակլիոս կայսրը պարտության մատնեց պարսիկներին և ոչնչացրեց նրանց իշխանությունը, ապա դրանից հետո շատ դյուրին էր պարսիկներին հաղթահարելն ու ընկճելը ոչ միայն իբերների համար, այլև սարակինոսների։ Այն պատճառով, որ ինչպես իրենք են ասում, ծագում են Երուսաղեմից, շատ հավատացյալ են և [պատվում են] մեր տեր Հիսուս Քրիստոսի գերեզմանը. ժամանակ առ ժամանակ նրանք սուրբ քաղաքի պատրիարքին և այնտեղի քրիստոնյաներին առատ դրամ են ուղարկում[5]։

Վերոհիշյալ Դավիթը՝ Սպանգիատի եղբայրը, ունեցավ Պանդրատ անունով մի որդի։ Պանգրատն ունեցավ որդի՝ Աշոտին։ Աշոտն ունեցավ որդի՝ Ադրանասեին[6], որը հռոմայեցիների քրիստոսասեր կայսր Լևոնի[7] կողմից արժանացավ կուրապաղատի պատվին։ Սպանդիատը՝ վերոհիշյալ Դավթի եղբայրը վախճանվեց անզավակ։ Երուսաղեմից գաղթելուց և իրենց այժմյան երկիրը գալուց և բնակվելուց մինչև օրս անցել է 400 կամ 500 տարի[8], այժմ աշխարհի արարչագործության 6460 թվականն է, ինդիկտիոնի 10-րդ տարին[9], քրիստոսասեր և ծիրանածին կայսրեր Կոստանդինի և Ռոմանոսի թագավորության ժամանակը[10]։

Քրիստոսասեր, ծիրանածին և երանելի կայսր Լևոնը, լսելով, որ սարակինոսները, գալով Ֆասիանե[11] կոչված շրջանը, այնտեղի եկեղեցիները բերդերի վերածեցին, Արմինիակների [բանակաթափի][12] զորավար պատրիկ Լալակոնին[13], Կոլոնիայի[14] զորավարին ուղարկեց Միջագետքի[15] զորավարի և Խաղտիքի[16] զորավարի հետ. որոնք քանդեցին այդ բերդերը, ազատեցին եկեղեցիները և ավերի առան ամբողջ Ֆասիանեն, որ այն ժամանակ գտնվում էր սարակինոսների տիրապետության տակ։ [Կայսրը]այնուհետև սխոլերի դոմեստիկոս մագիստրոս Կատակալոնին[17] ուղարկեց, որը

գալով Թեոդոսուպոլսի ամրոցը[18], ավարի առավ նրա շրջակայքը, ապա նաև նույն ձևով ավերելով Ֆասիանե երկիրը և նրա ամրոցները, վերադարձավ՝ սարակինոսներին մեծ վնաս հասցնելով։ Իսկ տեր Ռոմանոս կայսեր թագավորության ժամանակ մագիստրոս Հովհաննես Կուրկուասը, արշավելով Տիվիոն ամրոցի վրա, ճանապարհին ամբողջությամբ ամայացրեց Ֆասիանե երկիրը, որպես սարակինոսներին՝ ենթակա[19]։ Բայց առաջին անգամ խաղտիքի զորավարն էր, վերոհիշյալ մագիստրոս Հովհաննեսի եղբայր պատրիկ Թեոֆիլոսը[20], որ ավարի առավ Ֆասիանե երկիրը, որն այն ժամանակ նույնպես գտնվում էր սարակինոսների տիրապետության տակ։ Մինչև Թեոդոսուպոլսի հետ կատարված գեպքը, Ֆասիանե երկրում ոչ մի բնակավայր գոյություն չուներ, ոչ էլ Ավնիկ[21] ամրոցում։ Իբերները մշտապես բարեկամական հարաբերությունների մեջ էին Թեոդոսուպոլսեցիների, ավնիկցիների, մանցիկիերտցիների և ամբողջ պարսից երկրի հետ, բայց Ֆասիանեում նրանք երբևիցե շրջանների չեն տիրացել։

Տեր Լևոն և տեր Ռոմանոս կայսրերը, ինչպես և մեր թագավորությունը բազմիցս ջանացել էին վերցնել Կեցեոն[22] ամրոցը և այնտեղ մտցնել տաքսատոսներ[23], որպեսզի Թեոդոսուպոլիսը պարեն չստանա այնտեղից։ Նրանք հավաստիացնում էին կուրապաղատին և նրա եղբայրներին[24], որ [հռոմայեցիների կողմից] Թեոդոսուպոլիսը գրավվելուց հետո, նրանց կվերադարձվի [Կեցեոն] ամրոցը, բայց իբերները, չընդունեցին այդ առաջարկը, որովհետև բարեկամական հարաբերությունների մեջ էին Թեոդոսուպոլսի հետ և դեմ էին Թեոդոսուպոլիս ամրոցի գրավմանը։ Նրանք պատասխանեցին տեր Ռոմանոսին և մեր թագավորությանը, որ եթե այդ բանն անենք, մենք կգրկվենք մեր հարևանների, այն է՝ Աբաղգիայի մագիստրոս էքսուսիաստեսի[25], վասպուրականիտեսի[26] և հայերի իշխանների հարգանքից։ Նրանք պիտի ասեն, թե կայսրը չի վստահում իբերներին, կուրապաղատին և նրա եղբայրներին, չի հավատում նրանց. դրա համար է, որ նրանց ձեռքից ուզում է ամրոցը վերցնել։ Ավելի լավ է, որ կայսրը տուրմարխ[27] կամ ինչ որ վասիլիկոս[28] ուղարկի, թող նա նստի Կեցեոն ամրոցում և հետևի։ Նրանք [կայսրից] պատասխան ստացան, թե ինչ օգուտ դրանից, որ նա տուրմարխ կամ վասիլիկոս ուղարկի։ Տուրմարխը կամ վասիլիկոսը ընգամենը տաս կամ տասներկու հոգով կարող է մտնել և պիտի նստի այն կացարանում, որ դուք եք [նրան] տրամադրելու։ Եվ քանի որ Թեոդոսուպոլիս ամրոցը տա-

նող ճանապարհները շատ են, նրանք չեն կարող ամրոցից հետեվել այն կարավաններին[23], որոնք մուտք են գործում Թեոդոսուպոլիս ամրոցը: Չէ՞ որ այդ կարավանները կարող են գիշերուվ մուտք գործել Թեոդոսուպոլիս, և իրենք այդ մասին լրիվ անտեղյակ կլինեն: Իբերները չէին ուղում, որ գրավվի Թեոդոսուպոլիսը, այլ ընդհակառակը, ուղում էին, որ նա պարեն ստանա, ահա դրա համար է, որ նրանք չընդառաջեցին և չտվեցին Կեցեոն ամրոցը, հակառակ որ [կայսրից] գրավոր երդում ստացան, թե Թեոդոսուպոլսի գրավումից հետո այդ ամրոցը իրենց կվերադարձվի:

Իբերները ոչ մի անգամ մտադրություն չեն ունեցել ավարի առնել կամ գերեվարել Թեոդոսուպոլիս ամրոցի շրջակայքը, նրա գյուղերը, Ավնիկ ամրոցը և նրա շրջակա գյուղերը, կամ Մանցիկիերտ ամրոցը և նրա տիրապետության շրջանները:

Կուրապաղատը հավակնություններ ունի Ֆասիանեի շրջանների վրա: Նա ուղում է ամբողջ Ֆասիանեն և Ավնիկ ամրոցը, պատճառաբանելով, որ այդ մասին ունի կայսր տեր Ռոմանոսի և մեր թագավորության խրիսովուլլները: Նա իր ազատ՝ պրոտոսպաթար Զուրվանելիի[30] հետ մեզ ուղարկեց այդ [խրիսովուլլների] պատճենները, բայց մենք, քննության առնելով դրանք, եկանք այն եզրակացության, որ նրանց վրա նա հենվել չի կարող: Մեր աներոջ[31] խրիսովուլլի բովանդակությունն է. նույն կուրապաղատը խոստանում է, և իր խոստումը յուրով ձեռամբ գրում ու երդումով հաստատում, որ հավատարիմ կմնա մեր թագավորությանը, կպայքարի մեր թշնամիների դեմ և կպաշտպանի մեր բարեկամներին, որ Արևելքը դաշնակից կդարձնի մեր թագավորությանը, կգրավի ամրոցներ և մեր օգտին մեծագործություններ կկատարի: Մեր աները խոստացավ, որ եթե [կուրապաղատը] հավատարիմ ծառայի և երախտագետ մնա, ապա և ինքը՝ [կուրապաղատը], և նրա ժառանգները անսասան կտիրեն իշխանության, նրա տիրապետության սահմանները կմնան անփոփոխ, նախկին կայսրերի [կնքած] համաձայնությունը կպաշտպանվի, այն չի դրժվի, [կայսրը] չի խանգարի նրան ավերել Թեոդոսուպոլիսը և թշնամիների մնացած ամրոցները և այն դեպքում, եթե նրանք կպաշարվեն միայն [կուրապաղատի] կողմից, և այն ժամանակ, երբ [այդ գործն անեն] մեր զորքերը: Ահա այս է խրիսովուլլների բովանդակությունը, որից կուրապաղատը ամենևին էլ չի կարող հանգել այլ եզրակացություններ: Մեր աներոջ խրի-

սովուլլը վկայում է, որ մենք պաշտպանում ենք նրա տիրապետության վաղեմի սահմանների ամբողջականությունը, որ, եթե կարողություն ունենա, կամ մենակ, կամ մեր զորքի հետ թող պաշարի և կործանի Թեոդոսուպոլիսը և Թշնամիների մնացած ամրոցները, բայց ամենևին չի ասված, որ նա կարող է նրանց լիակատար տերն ու տիրականը դառնալ: Ինչ վերաբերում է մեր թագավորության տված խրիսովուլլին, ապա դրա բովանդակությունն այն է, որ [կուրապաղատը] կամ նրա եղբորորդի մագիստրոս Ադրանասեն[32], սեփական ուժով ինչքան որ հագարացիներին պատկանող շրջաններ կարողանա իրեն ենթարկել, կամ ապագայում կենթարկի, ապա թող դրանց տերն ու տիրականը դառնա: Բայց որովհետև նա սեփական ուժով ո՛չ Թեոդոսուպոլիսը կործանեց, ո՛չ Ավնիկը, ո՛չ Մաստատոնը[33], ապա նա իրավունք չունի դրանց վրա տիրելու, քանի որ դրանք էրաքս, այն է Ֆասիս[34] գետից այն կողմն են գտնվում, որովհետև Ավնիկ ամրոցը մինչև օրս էլ ինքնիշխան է և անկախ, ունի սեփական ամիրա, և որ մեր թագավորության զորքը բազմիցս ավարառել է այն: Նույնպես և սպաթար[35] Հովհաննեսը, զորավար Արրավոնիտեսը, վերջերս Թեոդոսուպոլսի զորավար նշանակված պատրիկ Թեոֆիլոսը և մնացած զորավարները սաստիկ ավարառության և գերեվարության ենթարկեցին [Թեոդոսուպոլիսը], մոխրի վերածեցին նրա գյուղերը, իսկ կուրապաղատը ոչ մի անգամ ավարի չառավ այն: Բայց երբ [Թեոդոսուպոլսի] գյուղերն ավերվեցին մեր թագավորության կողմից, ահա այն ժամանակ իբերները մտան ու տիրեցին նրանց և այդ բանի հիման վրա ուզում են տիրել ամրոցին: Զորավար պատրիկ Թեոֆիլոսը բազմիցս դիմեց ամիրային. վերջինս տեսնելով, որ փրկության ոչ մի հույս չի մնացել, հպատակվեց[36], համաձայնվեց դառնալ մեր թագավորության ծառան և որպես պատանդ տվեց իր որդուն: Ինչ վերաբերում է Մաստատոնին, ապա այն պատկանում էր Թեոդոսուպոլսին: Մագիստրոս Հովհաննեսը յոթ ամիս պաշարել էր Թեոդոսուպոլիսը և չէր կարողացել գրավել այն, դրա համար զորք ուղարկեց և գրավեց Մաստատոն ամրոցը և այնտեղ հաստատեց պրոտոսպաթար Պետրոնաս Բոյիլասին[37], որն այն ժամանակ Նիկոպոլսի[38] կատապանն[39] էր: Պանգրատ մագիստրոսը[40], որ նույն մագիստրոս [Հովհաննեսի] հետ միասին արշավել էր Թեոդոսուպոլսի վրա, երբ որոշեց հեռանալ, խնդրեց [Հովհաննեսին], որ [Մաստատոն] ամրոցը իրեն տա, գրավոր երդում տալով նրան, որ ինքն է դրան

տիրելու, այն ոչ մի դեպքում չի զիջի սարակինոսներին։ [Հովհաննեսը] հավատաց վերոհիշյալ Պանգրատի երդումին, քանի որ նա քրիստոնյա էր, մեր թագավորության ծառան, և տվեց նրան [Մաստատոնը]։ Բայց նա նորից զիջեց այն Թեոդոսուպոլսեցիներին։ Բայց երբ գրավվեց Թեոդոսուպոլիսը, իբերները մտան [Մաստատոն] և տիրացան դրան։ Ահա պարզ է, որ [իբերները] ո՛չ Մաստատոն ամրոցը և ո՛չ էլ Ավնիկը պահանջելու իրավունք ամենևին չունեն, բայց որովհետև կուրապաղատը մեր հավատարիմ և հլու ծառան է և բարեկամը, ահա նրա խնդիրքին [ընդառաջեցինք], որ Ֆասիանեի սահմանը էրաքս, այն է Ֆասիս գետը դառնա, ձախ կողմում դեպի Իլլիրիա[41] տարածվող շրջաններին տիրեն իբերները, իսկ աջ կողմում մինչև Թեոդոսուպոլիս ընկած շրջանները, ամրոցները և վայրերը գտնվեն մեր թագավորության տիրապետության ներքո, և գետը լինի երկուսի միջև սահման։ Երանելի Հովհաննես Կուրկուասը իր կենդանության ժամանակ, երբ այդ մասին հարց տվին, պատասխանեց, թե ձեռնտու է, որ գետը լինի սահման։ Եթե հարցին արդար մոտենանք, ապա կուրապաղատը ոչ մի իրավունք չունի տիրելու գետի այս կամ այն կողմին, քանի որ Թեոդոսուպոլսի այդ բոլոր շրջանները մեր թագավորության զորքերը գրավեցին և հրդեհեցին, իսկ իբերները ոչ մի անգամ առանց մեր զորքին [միանալու] առանձին արշավանքի դուրս չեն եկել և ավարի չեն առել Թեոդոսուպոլիսը։ [Ընդհակառակը], նրանք միշտ բարեկամ են համարել և առևտուր արել [Թեոդոսուպոլսեցիների] հետ, խոսքով ցանկանում էին, որ Թեոդոսուպոլիսն ընկնի, բայց իրականում երբեք էլ չեն ցանկացել, որ այն գրավվի։ Բայց մեր թագավորությունն, ինչպես ասվեց, սեր տածելով դեպի կուրապաղատը, համաձայնվեց, որ էրաքս, այն է Ֆասիս գետը դառնա երկուսի միջև սահման։ [Իբերները] պարտավոր են բավարարվել իրենց ունեցած տիրույթներով և ավել բան չպահանջեն։

ԳԼՈՒԽ 46

ԻԲԵՐՆԵՐԻ ԾՆՆԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՆՈՒՋ ԱՄՐՈՑԻ ՄԱՍԻՆ[1]

Պանգրատը, Դավիթը՝ Մամպալիս[2], որ թարգմանաբար նշանակում է ամենասուրբ, իբերացի մեծ Սմբատի որդիներին էին։

Արտանուջը վիճակ ընկավ Պանգրատին, իսկ Դավթին՝ մի այլ երկիր։ Պանգրատն ունեցավ երեք որդի, Ադրանասերին, Կուրկենին և պատրիկ Աշոտ Կիսկասիին[3], որոնց միջև բաժանեց իր երկիրը։ Արտանուջը բաժին ընկավ իր որդի Կուրկենին, որի անզավակ մեռնելուց հետո[4], այդ [ամրոցը] թողեց իր եղբայր Աշոտ՝ Կիսկասիին[5]։ Պատրիկ Աշոտ Կիսկասին, իր դստեր կնության տվեց մագիստրոս Կուրկենին[6], որն իր աներոջ Աշոտի ձեռքից խլեց Արտանուջը, փոխարենը նրան տալով Տյուրոկաստրոնը[7], Ացարայի գետահովիտը[8], որը Կոլորիսում[9] Ռոմանիայի սահմանն էր։ Աշոտ Կիսկասիի կինը Աբազգիայի էքսուսիաստես մագիստրոս Գեորգիոսի[10] քույրն էր։ Երբ մագիստրոս Կուրկենի և Աբազգիայի էքսուսիաստես մագիստրոս Գեորգիոսի միջև պայքար ծագեց, պատրիկ Աշոտն անցավ Աբազգիայի էքսուսիաստեսի կողմը, դրա համար էլ Կուրկենը [Աշոտից] խլեց նաև այն փոխհատույցը, որ Արտանուջի դիմաց էր տվել ու քշեց նրան. [Աշոտը] գնաց Աբազդիա։ Մագիստրոս Կուրկենի մահից հետո Արտանուջը մնաց վերջինիս կնոջ, այն է՝ Աշոտ Կիսկասիի դստեր, որպես հայրենիք։ Երբ կուրապաղատ Աշոտը, Աբազգիայի էքսուսիաստես մագիստրոս Գեորգիոսը և վերոհիշյալ կուրապաղատի եղբայր Պանգրատը զենքի ուժով բաժանում էին մագիստրոս Կուրկենի տիրույթները, ի վերջո համաձայնության եկան. յուրաքանչյուրն ստացավ իր [տիրույթներին] կից գտնվող շրջաններ։ Արտանուջը գտնվում էր վերոհիշյալ Դավթի որդի Սմբատի [տիրույթներին] կից։ Բոլորն այն ժամանակ բռնացան մագիստրոս Կուրկենի կնոջ՝ պատրիկ Աշոտ Կիսկասիի դստեր վրա, ասելով, թե դու կին ես, չես կարող տիրել ամրոցին։ Այն ժամանակ Սմբատն ամրոցի դիմաց այդ կնոջը հողեր տվեց և վերցրեց Արտանուջ ամրոցը։

Իբերների ազգակցական կապերն այսպիսիք են[11]. Դավթի մայրը և կուրապաղատ Ադրանասեի, այժմյան կուրապաղատ Աշոտի [մայրը] երկու եղբայրների դուստրեր են, այսինքն հորեղբոր աղջիկներ։ Դավթի որդի Սմբատն ամուսնացել էր այժմյան մագիստրոս Ադրանասեի հայր մագիստրոս Պանգրատի դստեր հետ։ Այդ [կնոջ]մահից հետո Ադրանասեն ամուսնացավ Դավթի որդի Սմբատի քրոջ հետ։

Արտանուջ ամրոցը շատ անառիկ է. նա մեծ քաղաքների նման ունի նաև մեծ արվարձան[12]։ Տրապիզոնի, Իբերիայի, Աբազդիայի, Հայաստանի բոլոր շրջաններից և Ասորիքից այստեղ են գալիս առևտրականներ։ Նա այդ առևտրից հսկայական կոմ-

մերկիոն է ստանում։ Իսկ Արտանուջ ամրոցի շրջանը, այն է Արզինը[13], լայնատարած է և բարեբեր, նա Իբերիայի, Աբազգիայի և Միսխիոնի[14] բանալին է։

Երանելի կայսր տեր Ռոմանոսը նավատորմիղի դրունգար[15] պատրիկ Կոստանդին, որն այն ժամանակ պրոտոսպաթար էր և մանդլավիտ[16], մագիստրոսական հիմատիոն[17] տալով ուղարկեց Կուրկենի մոտ, որպեսզի նա իբերացուն մագիստրոս օծի։ Բայց նավատորմիզի դրունգար պատրիկ Կոստանդր ճամփա դուրս գալուց և Նիկոմեդիա հասնելուց հետո, Կյումենայի[18] վանական Ագապիոսը, որն այն ժամանակ ուխտի էր գնացել սուրբ քաղաքը, եկավ [Կոստանգնուպոլիս]. Նա, անցնելով Իբերիայի վրայով, կանգ էր առել Արտանուջ ամրոցում։ Պատրիկ Աշոտը, Կիսկասի մականվանյալը, թշնամացել էր իր փեսա Կուրկենի հետ, և ահա այն ժամանակ նա վանական Ագապիոսին ասաց, թե «հանուն աստուծո և պատվական ու կենարար խաչի զորության, պաղատում եմ քեզ, գնա քաղաք և ասա կայսեր, որ նա [մարդ] ուղարկի և վերցնի իմ ամրոցը և իր իշխանությանը ենթարկի»։ Վանական Ագապիոսը, մտնելով քաղաք, կայսեր պատմեց այն, ինչ խնդրել էր պատրիկ Աշոտ Կիսկասին։ Նավատորմիղի դրունգարը, վերոհիշյալ պատրիկ Կոստանդր, որ Նիկոմեդիայում էր գտնվում (նա գնում էր, ինչպես վերևում ասվեց,Կուրկեն իբերացուն մագիստրոս օծելու), պատրիկ Սիմեոն պրոտոասեկրետի[19] միջոցով կայսեր հրամանով կազմված պիտտակիոն[20] ստացավ, թե մեր սուրբ կայսրը հրամայում է քեզ մի կողմ թողնել բոլոր գործերդ, անհապաղ գնալ պատրիկ Աշոտ Կիսկասիի մոտ և վերցնել նրա Արտանուջ ամրոցը, որովհետև [Աշոտը] հայտնեց մեր սուրբ կայսեր, որ նա հավատարիմ ու մերձավոր մարդ ուղարկի իր Արտանուջ ամրոցը վերցնելու համար։ Երբ հասնես Խաղտիք, վերցրու գործունյա իշխանավորներ, մարդկանց, ովքեր քո կարծիքով քաջ են ու հավատարիմ, և մտիր ու տեր դարձիր այդ ամրոցին։ Նավատորմիղի դրունգար պատրիկ Կոստանդր, հասնելով Խաղտիք և իր հետ վերցնելով գործունյա տուրմարխներ ու իշխանավորներ, ապա և շուրջ երեք հարյուր զինվոր, մուտք գործեց Իբերիա, բայց նրա ճամփան կտրեց երանելի Դավիթը, այժմյան կուրապաղատ Աշոտի[21] եղբայրը և հարցրեց. «Կայսրը քեզ ո՞ւր ուղարկեց, ի՞նչ գործի համար ես քեզ հետ տանում այսքան զորք»։ Նրանք երկյուղ էին զգում, որ կուրապաղատ Ադրանասեի վախճանվելու առթիվ կայսրը, հնարավոր է, կուրապաղատության պատիվը ուզում է

շնորհել Կուրկենին։ Կուրապաղատ Ադրանասեի մահից հետո նրա որդիների և նրանց հորեղբորորդու միջև ինչ-որ գժտություններ էին ծագել, և Կուրկենն իր առաջին մարդուն[22] մեծամեծ նվերներով կայսեր մոտ էր ուղարկել, խնդրելով կուրապաղատություն, կամ մագիստրոսություն։ Ահա չորս եղբայրները, այսինքն կուրապաղատ Ադրանասեի որդիները, ենթադրում էին, որ [Կոստանդր] Կուրկենին կուրապաղատ դարձնելու համար է գնում այնտեղ։ Պատրիկ Կոստանդր պատասխանեց, թե ես իմ հետ այսքան մարդ եմ տանում, որովհետև պետք է Կուրկենին մագիստրոսի պատիվը շնորհեմ, և հրաժեշտ տվեց նրան, թե գնում եմ Դավիթ մագիստրոսի մոտ։ Պատրիկ Կոստանդը ուներ նաև Դավիթին ուղղված կայսեր նամակը և նվերներ։ Պատրիկ Կոստանդը, գալով Կուրկենի երկիրը, նրան պատվեց մագիստրոսի աստիճանով, ապա մտավ պատրիկ Աշոտ Կիսկասիի Արտանուջ ամրոցը, հանձնեց կայսեր նրան ուղղված նամակը, որում Արտանուջ ամրոցի մասին ոչինչ չկար գրված. այնտեղ խոսվում էր այլ հարցերի մասին։ Պատրիկ Կոստանդր ասաց նրան, որ ճիշտ է, նամակում Արտանուջ ամրոցի մասին և ոչ մի խոսք չկա, բայց վանական Ագապիոսը, գալով կայսեր մոտ, հայտնեց այն, ինչ դու հանձնարարեցիր Արտանուջ ամրոցի կապակցությամբ։ Ահա [կայսրը] ինձ դրա համար ուղարկեց, որպեսզի ստանամ ամրոցը և այնտեղ մտցնեմ ինձ հետ բերած զորքը։ Ինչպես ասվեց, պատրիկ Աշոտ Կիսկասին թշնամացել էր իր փեսա Կուրկենի դեմ, դրա համար նախընտրեց կայսեր հանձնել իր ամրոցը։ Պատրիկ Կոստանդը իր մոտ ուներ դրոշակ, որ տվեց պատրիկ Աշոտ Կիսկասիին։ Նա վերցնելով այն, կապեց նիզակի ծայրին, տվեց պատրիկ Կոստանդին և ասաց. պարզիր պարսպի վրա, թող բոլորն իմանան, որ այս ամրոցը այսօրվանից պատկանում է կայսեր։ Պատրիկ Կոստանդը այդպես էլ արեց, դրոշակը պարզեց պարսպի վրա և սովորության համաձայն կեցցե կոչեց ի պատիվ հռոմայեցիների կայսերերի։ Բոլորին հայտնի դարձավ, որ պատրիկ Աշոտ Կիսկասին Արտանուջ ամրոցը նվիրել է կայսեր։

Իսկ Դավիթ մեծը իր երկիրը չէր զիջում կայսեր, քեպետև այն սահմանակից էր Ակամսիի տուրմայիին և Մուրգուլիին[23]։ Պատրիկ Կոստանդը երկու զեկուցագրեր ուղարկեց կայսեր, որոնցից մեկի բովանդակությունն այն էր, թե ինչպես պատվեց Կուրկենին մագիստրոսի [աստիճանով], թե ինչպես Կուրկենն ստացավ մագիստրոսություն և կեցցե ասաց կայսեր հասցեին։ Երկ-

րորդ նամակում խոսվում էր Արտանուջ ամրոցի մասին, թե ինչպես այն ստացավ Աշոտ Կիսկասիից, ցույց տալիս, որ պատրիկ Աշոտի և նրա փեսայի՝ մագիստրոս Կուրկենի միջև սուր տարաձայնություններ կան ու թշնամություն, որ կայսրը թող օգնական զորք ուղարկի որպես այդ ամրոցի կայազոր, և որ եթե գա հնարավոր է, ապա թող սխոլերի գոմեստիկոսն[24] էլ գա։

Իբերները, այն է մագիստրոս Կուրկենը և մագիստրոս Դավիթը՝ կուրապաղատ Աշոտի եղբայրը, ծանոթանալով իրավիճակին, նամակ գրեցին կայսեր, որ եթե քո թագավորությունը իրեն թույլ տա մեր երկիրը ոտք գնելու, մենք կդադարենք քո թագավորությանը ծառայելուց, կմիանանք սարակինոսներին։ Մենք հռոմայեցիներից չենք վախենում, և եթե ստիպված լինենք, ապա զորք կուղարկենք Արտանուջ ամրոցի, նրա շրջանի և նույնիսկ Ռոմանիայի դեմ։ Կայսրը և՛ վերոհիշյալ իշխանների նամակից տեղեկանալով, և՛ վերջիններիս ուղարկած մարդկանցից ականջալուր լինելով իրադրության շուրջը, երկյուղելով, որ նրանք կարող են սարակինոսների կողմն անցնել և Պարսկաստանի զորքերը հանել Ռոմանիայի դեմ, պատասխանեց և ժխտեց այն փաստը, թե ինքը երբևիցե Արտանուջ ամրոցին և նրա շրջանին տիրանալու մասին որևէ բան է գրել մանգլավիտ պրոտոսպաթար Կոստանդին, որ [Կոստանդր] իր սեփական, այսպես ասած, անմտությունից արեց այդ։ Կայսրն այդպես ասաց [իբերներին], նրանց կատարելապես հանգստացնելու համար։ Մանգլավիտ պրոտոսպաթար Կոստանդր [կայսրից] պարսավանքներով ու սպառնալիքներով լի մի նամակ ստացավ հետևյալ բովանդակությամբ. «Քեզ ո՞վ կարգադրեց այդ անել։ Շուտ դուրս եկ ամրոցից. վերցրու վախճանված կուրապաղատ Ադրանասեի որդի Աշոտին, բեր նրան այստեղ, որպեսզի նրան շնորհենք իր հոր՝ կուրապաղատության աստիճանը»։ Պատրիկ Կոստանդր, ստանալով այդ [կարգադրությունը], Աշոտ Կիսկասիին թողեց նրան պատկանող Արտանուջ ամրոցում և դուրս գալով գնաց Դավիթ մեծի մոտ, տվեց նրան հասցեագրված նամակը, վերադարձավ, մտավ Իբերիա, ուր գտավ իր դեմ միացյալ հանդես եկող մագիստրոս Կուրկենին և կուրապաղատ Աշոտի եղբայր Դավթին։ Նրանք սկսեցին պարսավել և պախարակել պատրիկ Կոստանդին, ասելով, թե դու նենգ և ստոր մարդ ես, դու մեզ չհայտնեցիր, որ նպատակ ունես վերցնելու Արտանուջ ամրոցը, որովհետև ձեռնտու է, որ այն դտնվի կայսեր ձեռքում։ Մենք այդ կապակցությամբ դիմեցինք կայսեր և

պատասխան ստացանք, թե կայսրը այդ բանին լրիվ անտեղյակ է, որ դու ինքնագլուխ ես այդ արել՝ պատրիկ Աշոտ Կիսկասիի սիրույն։ Պատրիկ Կոստանդը պետք եղածը նրանց ասելուց հետո, իր հետ վերցրեց կուրապաղատ Ադրանասեի որդի Աշոտին, բերեց քաղաք, ուր և նա կայսեր կողմից արժանացավ կուրապաղատի պատվին։

Ահա դու իմացիր[25], թե ժամանակին հռոմայեցիների և զանազան ժողովուրդների միջև ի՞նչ է տեղի ունեցել։ Ո՛վ շատ սիրելի որդյակ, միշտ հիշիր անցյալում տեղի ունեցածը, որպեսզի նմանօրինակ պարագաներում կանխագիտությամբ քեզ դյուրին լինի հնարավոր [սխալներից] խուսափել։

ԳԼՈՒԽ 50

ՊԵԼՈՊՈՆԵՍԻ ԲԱՆԱԿԱԹԵՄՈՒՄ ԱՊՐՈՂ ՍԼԱՎՈՆՆԵՐԻ, ՄԻԼԻՆԳՆԵՐԻ ԵՎ ԷՂԵՐԻՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ[1], ՆՐԱՆՑ ԿՂԶԻՑ ՎՃԱՐՎՈՂ ՀԱՐԿԵՐԻ, ՆՄԱՆԱՊԵՍ ՄԱՅԻՆԱ[2] ԱՄՐՈՑԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ՎՃԱՐԱԾ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ

Պելոպոնեսի բանակաթեմի սլավոնները Թեոֆիլոս կայսեր և նրա որդի Միքայելի [թագավորության] ժամանակ ապստամբություն բարձրացրին[3] և դարձան ինքնավար։ Նրանք սկսեցին ավարառություններ, գերեվարություններ, ասպատակություններ, հրկիզումներ և ավազակություններ գործել։ Թեոֆիլոսի որդի Միքայելի թագավորության ժամանակ Պելոպոնեսի բանակաթեմի զորավար նշանակվեց պրոտոսպաթար Թեոկտիստոսը, մականունը Վրիեննիոս[4], որը թրակացիներից, մակեդոնացիներից և մնացած արևմտյան բանակաթեմերից բաղկացած մեծ զորքով և ուժով ուղարկվեց նրանց դեմ պատերազմի, նրանց բարձրացրած ապստամբությունը ճնշելու համար։ Նա Պելոպոնեսի բանակաթեմի բոլոր սլավոններին և մնացած խռովարարներին պարտության մատնեց և ճնշեց...

Կայսր տեր Ռոմանոսի[5] թագավորության ժամանակ [Պելոպոնեսի] բանակաթեմի զորավար պրոտոսպաթար Հովհաննես Պրոտևոնը հայտնեց նույն տեր Ռոմանոսին և՛ միլինգների, և՛ էղերիտների մասին, թե նրանք ապստամբություն են բարձրաց-

քել, չեն ենթարկվում ո՛չ զորավարին, ո՛չ կայսեր հրամաններին, այլ ապրում են ինքնավար և ինքնիշխան։ Նրանք չեն ընդունում զորավարի կողմից նրանց վրա նշանակված կառավարիչին[6], չեն ուզում [զորավարի] արշավանքներին մասնակցել, ոչ էլ ուզում են որևէ այլ պետական ծառայություն կատարել։ Մինչև սրա ղեկուցագրի տեղ հասնելը, Պելոպոնեսի զորավար նշանակվեց պրոտոսպաթար Կրինիտես Արոտրասը[7]։ Երբ Պելոպոնեսի զորավար Հովհաննես Պրոտևոնի զեկուցագիրը տեղ հասավ և ընթերցվեց կայսր տեր Ռոմանոսին, խոսքը վերոհիշյալ սլավոնների ապըստամբության, կայսերական հրամաններին դժկամությամբ ենթարկվելու, ավելի ճիշտ՝ չենթարկվելու մասին էր, պրոտոսպաթար Կրինիտեսը հրաման ստացավ նրանց դեմ արշավել, որպեսզի այդ աստիճան անհնազանդ ու չենթարկվող մարդկանց, պատերազմել նրանց դեմ, պարտության մատնել և ոչնչացնել։ Նա մարտամսից սկսեց պատերազմել նրանց դեմ, կրակի տվեց ամբողջ բերքը, թալանեց բոլոր շրջանները։ Նրանք գիմադրեցին մինչև նոյեմբեր ամիսը և, երբ համոզվեցին, որ գլխովին կոտորվելու են, հպատակվելու համար կյանքի անձեռնմխելիության մասին երաշխիքներ խնդրեցին և ներողամտություն իրենց կատարածի համար։ Վերոհիշյալ պրոտոսպաթար և զորավար Կրինիտեսը նրանց վրա դրեց ավելի ծանր հարկեր, քան նախկինում վճարում էին, միլինգների վրա նախկինում վճարած վաթսուն դահեկանի վրա բարդեց չորս հարյուր քառասուն դահեկան ևս, այդպիսով նրանց ամբողջ վճարած հարկը հավասար էր հինգ հարյուր դահեկանի, իսկ էզերիտների՝ նախկինում վճարած երեք հարյուր դահեկանի վրա բարդեց ևս երեք հարյուր դահեկան և նրանց վճարած ամբողջ հարկը կազմեց վեց հարյուր դահեկան, որը նույն պրոտոսպաթար Կրինիտեսը գանձեց և աստվածապահպան գանձարանը մուծեց։

Երբ պրոտոսպաթար Կրինիտեսը տեղափոխվեց Հելլադայի [բանակաթեմը], Պելոպոնեսի զորավար նշանակվեց պրոտոսպաթար Վարդաս Պլատիպոդեսը[8]։ Պրոտոսպաթար Վարդաս Պլատիպոդեսը և նրա համախոհ պրոտոսպաթարներն ու հրամանատարները խռովություն բարձրացրին և բանակաթեմից քշեցին պրոտոսպաթար Լևոն Ագելաստոսին։ Այդ միջոցին սլավոնները[9] իսկույն հարձակում գործեցին նույն բանակաթեմի վրա, իսկ սլավները, այն է միլինգներն ու էզերիտները դիմեցին կայսր տեր Ռոմանոսին, խնդրելով և աղերսելով զիջել իրենց վրա բարդված հավելյալ հարկերը, որպեսզի իրենք վճարեն այնքան հարկ, ինչքան

Նախկինում։ Ինչպես ասվեց, սլավոններն արդեն մուտք էին գործել Պելոպոնեսի բանակաթեմ. կայսրը երկյուղելով, որ սլավները կարող են միանալ նրանց և լիակատար կործանել բանակաթեմը, խրիսովուլլ շնորհեց նրանց, որի համաձայն հարկի չափր մնում էր նախկինը, այն է՝ միլինգներինր վաթսուն դահեկան, իսկ էզերիտներինը՝ երեք հարյուր դահեկան...

...Պետք է գիտենալ, որ Կապպադովկիայի զորավարությունը նախկինում Անատոլիկոնի զորավարության[10] [մի] տուրման[11] էր։

...Պետք է գիտենալ, որ Խարսիանոնի զորավարությունը նախկինում Արմենիակների զորավարության[12] [մի] տուրման էր։

Պետք է գիտենալ, որ քրիստոսասեր տեր Լևոնի ժամանակ Բուկելլարների բանակաթեմից Կապպադովկիայի բանակաթեմի[13], [իրավասության] տակ անցան հետևյալ բանդոնները[14], այն է Բարետայի տոպոտերեսիան[15] Բալբադոնի տոպոտերեսիան[16], Ասպոնասի տոպոտերեսիան[17] և Ակարկոսի տոպոտերեսիան[18]։ Անատոլիկոն բանակաթեմից Կապպադովկիայի բանակաթեմի իրավասության տակ անցան հետևյալ բանդոնները, այն է Ծվդոկիայի տոպոտերեսիան[19], սուրբ Ագապետոսի տոպոտերեսիան[20], Աֆրազեյայի տոպոտերեսիան[21]։ Այս յոթ բանդոնները, այսինքն Բուկելլարների չորսը և Անատոլիկոնի երեքը կազմեցին մեկ տուրմա, որն այժմ կոչվում է Կոմմատա[22]։

Պետք է դիտենալ, որ քրիստոսասեր տեր Լևոնի ժամանակ Բուկելլարների բանակաթեմից Խարսիանոն բանակաթեմի իրավասության տակ անցան հետևյալ բանդոնները, այն է Միրիոկեֆալոսի տոպոտերեսիան[23], Պատվական Խաչի տոպոտերեսիան և Վերինուպոլսի տոպոտերեսիան[24], և կազմեցին այժմ Սանիանա[25] կոչված տուրման։ Արմենիակների բանակաթեմից Խարսիանոն բանակաթեմի իրավասության տակ անցան հետևյալ բանդոնները, այն է Կոմոդրոմոսի տոպոտերեսիան[26], Տավիայի տոպոտերեսիան[27], և կցվեցին Խարսիանոնի վերոհիշյալ տուրմային։ Կապպադովկիայի [բանակաթեմից] Խարսիանոն բանակաթեմին անցան հետևյալ բանդոնները, այն է Կասե[28], տուրման ամբողջությամբ և Նյուսայի տոպոտերեսիան[29] Կեսարիայի հետ։

Պետք է գիտենալ, որ Խոզանի բանակաթեմն[30] անցյալում պտնվում էր սարակինոսների տիրապետության տակ։ Նմանապես և Ասմոսատի բանակաթեմը[31], նա ևս գտնվում էր սարակինոսների տիրապետության տակ։ Ինչ վերաբերում է Խանզիտին[32] և Ռոմանոպոլսին[33], ապա նրանք Մելիտենեի մի կլեյսուր էին կազմում։

Ֆատիլանոն լեռից[34] այն կողմ գտնվող բոլոր շրջանները սարակինոսների ձեռքում էին, իսկ Տեկին[35] Մանվելին[36] էր պատկանում։ Կամախա տուրման[37] Կոլոնիայի մի ամրությունն էր, իսկ Կելցենեի տուրման[38] Խաղտինքին էր ենթարկվում։ Միջադետքը[39] դեռ այն ժամանակ բանակաթեմ չէր։ Քրիստոսասեր և երջանկահիշատակ Լևոն կայսրը այս Մանվելին պայմանով հեռացրեց Տեկիից և քաղաք բերելով պրոտոսպաթար դարձրեց։ Մանվելը չորս որդի ունի, Պանգրատուկասին, Յախնուկասին, Մուդաֆարին և Հովհաննեսին[40]։ Պանդրատուկասին կայսրը հիկանատոս[41] նշանակեց, ապա և Բուկելլարների [բանակաթեմի] զորավար, Յախնուկասին նշանակեց Նիկոպոլսի զորավար[42], իսկ Մուդաֆարին և Հովհաննեսին Տրապիզոնում կայսերական կալվածներ շնորհեց։ Նա լոլորին պատվեց աստիճաններով և բազում բարերարություններ գործեց։ Այնուհետև նա Միջագետքը դարձրեց բանակաթեմ, իսկ զորավար նշանակեց խարսիանոնցի Օրեստեսին[43]։ Ահա այդ ժամանակ էր, որ [կայսրը] Կամախի տուրման ենթարկեց Միջագետքի բանակաթեմին։ Այնուհետև նա Միջագետքի բանակաթեմին ենթարկեց նաև Կելցենեի տուրման։ Այդ բոլորը հենց վերջերս անցան Հռոմայեցիների գերիշխանության տակ, և տեր Ռոմանոսի ժամանակ Միջագետքի բանակաթեմին կցվեց նաև Ռոմանոպոլիսը և Խանզիտը։

Պետք է գիտենալ, որ քրիստոսասեր տեր Լևոնի ժամանակ Լարիսան[44] Սեբաստիայի տուրման էր, Կյումբալեոսը[45] Խարսիանոնի, իսկ Սյումպոսիոնը Լիկանդոսի կողմերը գտնվող մի ամայի տարածություն էր։ Քրիստոսասեր տեր Լևոնի թագավորության ժամանակ Եվստաթիոս Արգիրոսը[46] աքսորից ետ կանչվելով, նշանակվեց Խարսիանոնի զորավար։ Իսկ Մելիասը[47] դեռևս փախստական էր Մելիտենեում, ինչպես նաև Վասակիոսը[48] իր երկու եղբայրներ Կրիկորիկի և Պաղունի[49] հետ, նաև այն Իսմայիլ հայը[50]։ Սրանք վերոհիշյալ Արգիրոսին նամակ զրեցին, թե դուրս կգան [Մելիտենեից], եթե ստանան խրիսովուլլով[51] հաստատված երաշխավորագիր, թե Վասակիոսն ու իր եղբայրները կհաստատվեն Լարիսայում, որ Վասակիոսը կդառնա Լարիսայի կլեյսուրարխ, ինչ որ եղավ, Իսմայիլը՝ Սյումպոսիոնի կլեյսուրարխ, ինչ որ եղավ, իսկ Մելիասը՝ Եփրատիայում[52] գտնվող Տրյուպիա[53] անապատ շրջանի տուրմարխ, ինչ որ նույնպես կատարվեց։ Բայց Մելիտենեի [արաբները] հարձակվեցին և սպանեցին Իսմայիլին, որից հետո Սյումպոսիոնը մնաց անտեր։ Իսկ Վասակիոսը ամբաս-

տանվեց, թե մտադիր է դավաճանելու, դրա համար նա արւորվեց, իսկ Լարիսան նորից դարձավ Սեբաստիայի տուրման, և այդտեղի զորավար նշանակվեց Եվստաթիոսի որդի Լևոն Արդիրոսը, որ հետագայում դարձավ մագիստրոս և սխոլերի դոմեստիկոս: Մելիասը գտնվում էր Եփրատիայում: Երբ Խարսիանոնի դուքս նշանակվեց Կոստանդինը, վերոհիշյալ Մելիասը իջավ և գրավեց Լիկանդոս հին ամրոցը[54]: Նա վերակառուցեց այն, ամրացրեց և այնտեղ հաստատվեց, իսկ քրիստոսասեր Լևոն կայսեր կողմից [Լիկանդոսը] դարձավ կլեյսուր: [Մելիասը] այնուհետև Լիկանդոսից անցավ Ցամանդոսի[55] լեռը և այնտեղ կառուցեց մինչև օրս գոյություն ունեցող ամրոցը: Այն ևս կլեյսուրի հորջորջում ստացավ: [Մելիասը] գրավեց նաև Սյումպոսիոնը, որը նա դարձրեց տուրմարխություն: Քրիստոսասեր տեր Կոստանդնի և նրա մայր Զոեի[56] ժամանակ Լիկանդոսն առաջին անգամ դարձավ զորավարություն. Լիկանդոսի առաջին զորավար նշանակվեց պատրիկ Մելիասը, որն այն ժամանակ Լիկանդոսի կլեյսուրարխ էր: Մելիասը հռոմայեցիների կայսեր հանդեպ տածած հավատարմության, ապա նաև սարակինոսների դեմ կատարած բազմաթիվ քաջագործությունների համար հետագայում արժանացավ մագիստրոսի պատվին:

Պետք է գիտենալ, որ Աբարան[57] Սեբաստիայի բանակաթեմի կազմում գտնվող տուրմա էր, իսկ տեր Ռոմանոսի ժամանակ կլեյսուր դարձավ...

ԳԼՈՒԽ 51[1]

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍՏԵՂԾՎԵՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԴՐՈՄՈՆԻՈՆԸ, ԱՅԴ ԴՐՈՄՈՆԻՈՆԻ ՊՐՈՏՈԿԱՐԱՎՆԵՐԻ[2] ՄԱՍԻՆ ԵՎ ՖԻԼԱԼԱՅԻ ՊՐՈՏՈՍՊԱԹԱՐԻ[3] ՄԱՍԻՆ

...երջանկահիշատակ և ամենաիմաստուն Լևոն կայսեր օրոք Ֆիալայի պրոտոսպաթարն էր Հովհաննեսը, որի մականունն էր Թալասսոն[4]: Նրանից հետո՝ պրոտոսպաթար Պոդարոնը, իսկ նրանից էլ հետո պրոտոսպաթար Լևոն հայր[5], մանգլավիտ Արսեն պրոտոսպաթարի[6] հայրը: Սրանք, այն է պրոտոսպաթար Պոդարոնը և Լևոն հայր նավատորմիղի դրունգար[7] պատրիկ Նասարի

պրոտելատներն[8] էին, իսկ քրիստոսասեր տեր Վասիլի օրոք հրաժարվեցին նավատորմիղում ծառայելուց և դարձան կայսեր ագրարիոնի պրոտելատներ։ Երջանկահիշատակ ամենաիմաստուն Լևոն կայսեր ժամանակ, երբ նա ստեղծեց դրոմոնիոնները, այդ մարդկանց արիությունը և ծովում ունեցած փորձառությունը նկատի առնելով, նրանց դարձրեց պրոտոկարավներ։

...Այնուհետև կայսրը Պոդարոնին և Լևոն հային նշանակեց կայսերական նավատորմիղի տոպոտերետեսներ[9]...

Վերոհիշյալ Լևոն հայրը, հանգուցյալ մանգլավիտ պրոտոսպաթար Արսենի հայրը, վախճանվեց նավատորմիղի տոպոտերետեսի պաշտոնում, իսկ պրոտոսպաթար Պոդարոնը որոշ ժամանակ անց նշանակվեց Կիբիրեոտների բանակաթեմի[10] զորավար։

Պոդարոնը, նշանակվելով տոպոտերետես, Ֆիալեի պրոտոսպաթար դարձավ պրոտոսպաթար Թեոփիլակտոս Բիմբիլիդեսը, պրոտոսպաթար Հովհաննեսի, Թալաոսոն մականվանյալի եղբորորդին, և այդ պաշտոնում մնաց քրիստոսասեր տեր Կոստանդին Ծիրանածինի առաջին մենիշխանության[11] ժամանակ մի քանի տարի...

ԳԼՈՒԽ 53

ԽԵՐՍՈՆԻ ԱՄՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ[12]

Հռոմում Դիոկլետիանոսի թագավորության, իսկ Խերսոնում Թեմիստոսի որդի Թեմիստոսի պսակակրության և իշխանության ժամանակ[13], Կրիսկոնորոսի որդի բոսպորացի Սավրոմատոսը[14] հավաքելով Մեոտիս լճի[15] շրջակայքում ապրող սարմատներին, արշավեց հռոմայեցիների դեմ, գրավեց լազերի երկիրը, պարտության մատնեց բնիկներին և հասավ մինչև Ալիս գետը։ Դիոկլետիանոս կայսրը իմանալով, որ լազերի երկիրը և Պոնտոսը գրավվել են, սարմատների դեմ ղորք ուղարկեց։ Զորահրամանատարն էր տրիբուն Կոստասը։ Հասնելով Ալիս Կոստասը փորձեց թույլ չտալ սարմատներին անցնելու Ալիսը։ Բայց չկարողանալով նրանց հաղթահարել, մտածեց, որ սարմատներին միայն մեկ ճանապարհով կարելի է քշել, այն է՝ եթե Բոսպորոսի և Մեոտիս լճի մոտակայքում ապրող [խերսոնիտները] նրանց պատերազմ հայտարարեն և հարձակվեն [բոսպորացիների] ընտանիքների վրա։

Նա ենթադրում էր, որ երբ այդ մասին լսի Սավրոմատոսը, վերջ-
կտա պատերազմին և կվերադառնա...

Պետք է գիտենալ, որ Տամատարխա[16] ամրոցից դուրս կան բազմաթիվ նավթաբեր աղբյուրներ։

Պետք է գիտենալ, որ Զեխիայի[17] Պադե վայրում, որ գտնվում է Պապագիայի[18] կողմում, և որտեղ բնակվում են զեխերը, կան նավթաբեր ինը աղբյուր։ Ինը աղբյուրի նավթը մի գույնի չէ. նրանցից ոմանք կարմիր, մյուսները դեղին կամ սև նավթ են ցայտում։

Պետք է գիտենալ, որ Զեխիայի Պապագի կոչված վայրում, որի մոտ է գտնվում Սապաքսի կոչված գյուղը, որ թարգմանաբար նշանակում է փոշի, կա նավթաբեր աղբյուր։

Պետք է գիտենալ, որ նույն շրջանում Խամուխ կոչված վայրում էլ կա նավթաբեր մի աղբյուր։ Խամուխ՝ հնում այդ բնակավայրը հիմնադրողի անունն է, նրանից է այն Խամուխ կոչվել։ Այդ վայրերը գտնվում են ծովից նույն ձիով գնացողի համար մեկ օր հեռավորության վրա։

Պետք է գիտենալ, որ Դերզենե բանակաթեմում[19], Սապիկիու կոչված վայրին մոտիկ, ինչպես և Եպիսկոպիու կոչված վայրին [մոտիկ] կա նավթաբեր աղբյուր։

Պետք է գիտենալ, որ Ցիլիապերտ[20] բանակաթեմում, Սրեխիավարաքսի[21] մոտ կա նավթաբեր աղբյուր։

Պետք է գիտենալ, որ եթե երբևիցե Խերսոն ամրոցը ապըստամբվի և ցանկանա որևէ բան կատարել ընդդեմ կայսերական հրամանների, քաղաքում [Կոստանդնուպոլսում] եղած խերսոնական նավերը պետք է գրավել իրենց ապրանքներով հանդերձ։ Նավաստիներին և ուղևորներին կալանավորել և բանտ նետել, որից հետո անհրաժեշտ է երեք վասիլիկոս ուղարկել՝ մեկին Արմենիակների բանակաթեմի ծովափը, մյուսին Պաֆլագոնիայի բանակաթեմի ծովափը, իսկ երրորդին Բուկելլարների բանակաթեմի ծովափը, որպեսզի վար դնեն բոլոր խերսոնական նավերը, գրավեն նավերն ու նրանց բեռները, իսկ մարդկանց կալանավորեն և պետական բանտերը նետեն, որից հետո իրենց կատարածի մասին զեկուցեն։ Բացի այդ, այդ վասիլիկոսները պետք է արգելեն պաֆլագոնական, բուկելլարական նավերին, ինչպես և Պոնտոսին պատկանողներին հացահատիկով, գինիով և որևէ այլ պարենով կամ ապրանքով դեպի Խերսոն նավարկելը։ [Խերսոնի] զորավարը նմանապես պետք է դադարեցնի Խերսոն ամրոցին տաս լիտր

ոսկու և երկու լիտր պակտոնի վճարումը և իսկույն հեռանա Խերսոնից և գնա մի այլ ամրոց և այնտեղ հաստատվի։

Խերսոնացիք, եթե չհանապարհորգեն դեպի Ռոմանիա և չծախեն պեչենեգներից գնած մորթիներն ու մեղրամոմը, չեն կարող ապրել։

Խերսոնացիք, եթե Ամինոսից, Պաֆլագոնիայից և Բուկելլարներից, ինչպես նաև հարևան Արմենիակներից չներմուծեն անասուններ, չեն կարող ապրել։

ՎԱՍԻԼ Ի ՄԱԿԵԴՈՆԱՑԻ ԿԱՅՍԵՐ
ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

VITA BASILII

ԵՐԱՆԵԼԻ ԿԱՅՍՐ ՎԱՍԻԼԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐ ՆՐԱ ԹՈՌ՝ ԿԱՄԱՎՆ ԱՍՏՈՒԾՈ ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐԻ ԿԱՅՍՐ ԿՈՈՏԱՆԴԻՆԸ ՋԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ ՓԱՂԵՑ ՋԱՆԱՋԱՆ ՇԱՐԱԴՐԱՆՔՆԵՐԻՑ ԵՎ ՎՍՏԱՀԵՑ ԴՐՋԻՆ

1. Ես մեծ ցանկություն և մղում ունեի պատմության հավերժական և անմահ բերանի օգնությամբ ամենակարևոր դեպքերի փորձն ու իմացությունը հաղորդել, մտադիր էի ինչ էլ լինի, դրի առնել Հռոմեական կայսրության Իյուղանդիոնի ժամանակաշրջանի կայսրերի, նրանց ենթակա իշխանավորների, զորավարների և ենթաղորավարների՝ յուրաքանչյուրի կատարած ամենակարևոր դործերը։ Բայց դա գլուխ բերելու համար երկար ժամանակ, մեծ աշխատանք էր պետք, ապա և բազում գրքերի առկայություն, պետական գործերից որոշ դադար, մի բան, որից մենք զուրկ էինք։ Այդ իսկ պատճառով ես ստիպված գտա մի երկրորդ ելք, այն է՝ սկզբից մինչև վերջ շարադրել մեկ կայսեր կյանքն ու ամբողջ գործունեությունը, կայսր, որ կայսերական իշխանությունը անչափ վեհացրեց, որի անունը հոմանիշ է թագավորության[1], ով հռոմայեցիների պետության և գործերին անչափ օգտակար եղավ։ Ես մտահոգված էի, որպեսզի երկար ժամանակը ապագա սերունդների համար մոռացության չմատնի փարթամացած ծառի[2] արմատը, [աղբյուրի] ակը, որպեսզի հենց [Վասիլի] ընտանիքի անդամը[3] լինի առաքինության տիպարը մատնացույց անողը, արձանը կանգնեցնողը, Վասիլի, որից նրա սերունդները պիտի օրինակ վերցնեն։ Եթե աստված մեզ կյանք տա և մի փոքր շունչ քաշենք հիվանդություններից, եթե դրսից որևէ մեկը չխանգարի, գուցե շարադրենք մինչև մեզ հարատևած նրա տոհմի պատմությունը[4] և ամբողջացնենք այն։

2. Արդ, խնդրո առարկա անձնավորությունը՝ Վասիլ կայսրը ծագումով Մակեդոնիայից էր[5], ազգությամբ հայ[6] Արշակունի[7]։ Այն պատճառով, որ վաղեմի Արշակը[8], որն իշխեց պարթևների

վրա, հռչակվեց իր առաքինությամբ և մեծ փառքի հասավ, հետագայում և՛ պարթևների, և՛ հայերի, և՛ մարերի համար օրենք դարձավ, որ իրենց վրա ոչ մի այլ [հարստությունից] թագավոր չիշխի, այլ միայն Արշակի, միայն նրա սերնդից։ Այսպիսով, վերոհիշյալ ժողովուրդների վրա թագավորում էին այդ հարստության շառավիղները։ Հայերի արքան երբ վախճանվեց, ապստամբություն բռնկվեց և գահակալական պայքար ծավալվեց։ Արտավանն ու Կլեյենեսը[9] ոչ միայն կորցրին իրենց նախնյաց իշխանությունը, այլև կյանքից զրկվելու վտանգ կար, դրա համար նրանք փախչելով ապաստան գտան թագավորանիստ Կոստանդնուպոլիս քաղաքում։ Այն ժամանակ հռոմայեցիների իշխանությունը գտնվում էր Զենոնի աներոջ՝ Լևոն Մեծի[10] ձեռքում։ Նա ընդունեց այս մարդկանց, իրենց ազնվական ծագման արժանի ձևով պատվասիրեց և թագավորանիստ քաղաքում ապրելու տեղն ու անհրաժեշտ ապրուստը ապահովեց։ Այդ ժամանակ պարսից արքան իմանալով, որ խնդրո առարկա մարդիկ փախել են հայրենիքից և ապաստանել թագավորանիստ քաղաքը և թե կայսրերի կողմից ինչպիսի սիրալիր ընդունելության են արժանացել, նամակ գրեց նրանց և ետ կանչեց, իբրև թե որպես բարեկամի, խոստանալով վերականգնել նրանց հայրենական գահի վրա, բայց նա մտադիր էր այդ ճանապարհով իրեն ենթարկել [հայոց] ժողովրդին։ Երբ նրանք ստացան [պարսից արքայի] նամակը և մտածմունքի մեջ էին իրենց անելիքի շուրջը, նրանց սպասավորներից մեկը այդ մասին տեղեկացնում է կայսեր և նրան հանձնում նամակը։ Երբ պարզ դարձավ, որ պարսից արքայի՝ նրանց հրավիրելու նպատակը առավելապես [հայ] ժողովրդին իրեն ենթարկելն էր, քան նրանց իշխանության [վերականգնելը], և դա ոչ հրավիրվողների, ոչ էլ հռոմայեցիների պետության էր ձեռնտու, նրանք մտածում են այնպես անել, որ պարսիկների ծրագրերը ի դերև գան։ Կայսրը նրանց փախստյան առաջն առնելու նպատակով, ավելի ընդարձակ կալվածներ շնորհելու և ավելի ապահով վիճակ ստեղծելու պատրվակով, պատշաճ ձևով Մակեդոնիտյի Նիկե քաղաքը վերաբնակեցրեց կանանցով և երեխաներով (կանայք նրանց մոտ էին եկել հետագայում, թաքուն կերպով)։ Որոշ ժամանակ անց, երբ սարակինոսները աստիճանաբար հզորացան, ամերմումնին[11] վաղեմի Արշակունիների շառավիղների հանդեպ նույն քայլին դիմեց և նամակ դրելով նրանց հրավիրեց, իբրև թե իրենց նախնյաց իշխանության և գահին [տիրանալու] համար։ Հերակլ կայսրը[12]

այդ բանն իմացավ. նամակը [կայսեր] էր ընձեռվել։ Նա հասկացավ, որ [սարակինոսները] հրավիրում են նրանց ո՛չ թե ինչ որ չնորհ անելու, այլ իրենց՝ խորամանկների սեփական իշխանության ընդարձակման համար, (սարակինոսները հուսով էին, որ եթե [Արշակի] շառավիղներին իրենց ձեռքի տակ ունենան, ապա կարող են [հայ] ժողովրդին հեշտությամբ իրենց կողմը գրավել, որովհետև վերջինս սեր էր տածում դեպի հին Արշակը)։ Ահա դրա համար կայսրը առավել ապահովության պատրվակով [Արշակի շառավիղներին] իսկույն տեղափոխեց Փիլիպպե, որը նույնպես Մակեդոնիայի քաղաքներից մեկն էր։ Այնուհետև, ավելի նշանավոր քաղաքում բնակեցնելու և ավելի բարձր դիրքի արժանացնելու բարուրանքով, նրանց տեղափոխեց Ադրիանուպոլիս քաղաքը։ Վայրը [հայերին] գուր եկավ, նրանք այնտեղ զգում էին ինչպես հարազատ երկրում և սեփական ժողովրդի մեջ, կարողություն կուտակեցին, անաղարտ ու մաքուր պահելով իրենց ազնվական ծադումն ու ազգային դեմքը։

3. Տարիներ հետո, երբ թագավորում էր Կոստանդինն իր մոր Իրենի[13] հետ, այն Մայիկտեսը[14], որ նույնպես Արշակի արյունակիցն էր, ինչ որ դեսպանությամբ կամ գործով գալիս է հռչակավոր Կոստանդնուպոլիս քաղաքը։ Նա պատահմամբ հանդիպում է իր մի ցեղակցին, որ Լևոն էր կոչվում. նրա արտաքինից և հագուստից կռահեց, որ նա պատահական կամ նվաստ անձնավորություն չէ, այլ ազնվական և հայտնի մարդ։ Նա խոսակցության բռնվեց նրա հետ, մտերմացավ և բարեկամացավ, մանավանդ երբ իմացավ նրա [հայկական] ծագման մասին։ Այդ մարդու առաքինությունները գնահատելով, նախընտրեց նրա տանը բնակվել, օտարի հետ, քան թե սեփական տանը։ Ապա և խնամիացավ նրա հետ, կնության առնելով նրա դուստրերից մեկին։ Ահա այս զույգից ծնվեց հայրը այն անձնավորության, որին է նվիրված սույն պատմությունը։ Նա հասակ առավ, ստացավ սքանչելի կրթություն ու դաստիարակություն, և աչքի ընկավ իր հոյակապ կազմվածքով և ֆիզիկական արտակարգ ուժով։ Նա օժտված էր ամեն տեսակի առաքինություններով և շատերն էին ուզում նրա հետ խնամիանալ։ Ադրիանուպոլսում էր ապրում մի ազնվական համեստ կին, որն իր ամուսնու մահից հետո խոհեմությամբ էր տանում այրիությունը (համբավ էր տարածվել, որն ամենևին էլ անհիմն չէր, որ նա Մեծն Կոստանդինից էր սերում)[15]։ Իր ապրած

շրջանակում եղած կանանցից նա ամենից շատ այս կնոջը գնահատեց և ամուսնացավ նրա դստեր հետ, որն ազնիվ էր, մարմնով գեղեցիկ և ամոթխած։ Ահա սրանցից առաջացավ թագավորական այս արմատը՝ Վասիլը, որ, ինչպես ասվեց, հոր կողմից սերում էր Արշակից, իսկ մայրը ազգակցական կապ ուներ Մեծ Կոստանդինի հետ[16]. և՛ հոր, և՛ մոր կողմից նա ստացավ Ալեքսանդրի վեհությունը։ Ահա այսպիսի ծնողներից էր սերում Վասիլը[17]. հենց սկզբից էլ նա ուներ իր ապագա փառքի մասին վկայող բազում ապացույցներ. գլխի շուրջը՝ առաջին մազերի բուսնելու ժամանակ՝ կարմիր գիծ էր երևում, իսկ խանձարուրի վրա՝ ծիրանու գույն։

4. Մինչև այդ ժամանակ Արշակի շառավիղների սերունդը ինքն իր մեջ էր պարփակված, ինչպես առանձին տոհմ, թեև բնակվելով Ադրիանուպոլսում, հաճախ էր խնամիանում տեղացիների հետ։ Երբ բուլղարների իշխան Կրումը[18] դրժելով հռոմայեցիների հետ կնքած հաշտությունը, պաշարեց Ադրիանուպոլիսը և երկար ժամանակ մնալով այնտեղ, վերջը ստիպեց պարենի պակասությունից տանջվող [բնակիչներին] որոշ պայմաններով տալ քաղաքը, նա բոլոր բնակիչներին, այդ քաղաքի եպիսկոպոս Մանվելի հետ Բուլղարիա տեղափոխեց[19]։ Բուլղարաց երկիրը բոնագաղթեցվեցին նաև Վասիլի ծնողները, դեռ խանձարուրում գտնվող իրենց երեխայի հետ։ Այդ հրաշալի եպիսկոպոսը և նրա հետ եղած ժողովուրդը այնտեղ անարատ պահեցին իրենց քրիստոնեական հավատքը և բուլղարներից շատերին Քրիստոսի ճշմարիտ հավատքի կողմը ձգեցին (բուլղարների ժողովուրդը դեռ բարեպաշտություն չէր ընդունել)[20]. նրանք ամենուրեք սերմանեցին քրիստոնեական վարդապետության սերմերը՝ սկյութներին[21] կռապաշտության մոլորությունից հեռացնելով և բերելով դեպի լույսն աստվածաճանաչության։ Դա շատ զայրացրեց Կրումի հաջորդ Մուտրագոնին[22], որ չկարողանալով համոզել սրբազնագույն եպիսկոպոս Մանվելին և շատ այլ մարդկանց, ովքեր աչքի էին ընկել այդ գործում, հրաժարվել Քրիստոսից, անողոքաբար տանջեց և մարտիրոսական մահվան ենթարկեց։ Վասիլի բազմաթիվ ազգականներ արժանացան մարտիրոսի փառքին, այնպես որ [Վասիլը] անմասն չէ նաև նման փառքից։ Բայց աստված այցելեց իր ժողովրդին և հոգաց նրանց [հայրենիք] վերադարձի մասին. (բուլղարների իշխանը ի վիճակի չլինելով երկար ժամանակ դիմագրել

հռոմեական ուժերին, նորից ենթարկվելու նշաններ էր ցույց տալիս)։ Երբ իշխանը իր մոտ հավաքեց հայթենիք վերադարձող քրիստոնյա ժողովրդին, տեսավ մանուկ Վասիլին՝ գեղադեմ և շնորհալի, ժպտադեմ ու թովռան, իր մոտ կանչեց և մի շատ մեծ խնձոր տվեց։ Մանուկը առանց որևէ շար մտադրության, անվախ հենվեց իշխանի ծնկներին և իր բնական անմիջականությամբ ընդգծեց իր ազնվական ծագումը, այն աստիճան, որ իշխանը զարմացավ, իսկ նրա թիկնապահները ծածուկ կատաղեցին։

5. Կարճ ասած, աստուծո գթությամբ հայթենիք վերադարձան գերի քշված քրիստոնյա ամբողջ ժողովուրդը, այդ թվում նաև Վասիլի ծնողները, իրենց ամենաթանկագին որդու հետ միասին։ [Վասիլի] հետ, դեռ մանկության օրերին մի հրաշալի բան կատարվեց, որը կանխագուշակությունն էր ապագա հաջողությունների։ Ես կարծում եմ, որ սխալ կլինի լռությամբ անցնել դրա կողքով։ Ամառ ժամանակ նրա ծնողները գնացել էին իրենց սեփական դաշտը և ղեկավարում էին հնձվորների աշխատանքը, դրդում նրանց ավելի լավ աշխատել։ Օրը կես եղավ, արևն իր կեսօրվա ճառագայթներով արդեն շատ էր այրում և նրանք հասկերից ինչ որ վրան հյուսեցին և այնտեղ պառկեցրին երեխային քնելու, որպեսզի կիզիչ արևի ջերմությունն անվնաս անցկացնի։ Երբ նրանք հնձվորներով էին զբաղված. մի աքծիվ վայր խուժեց, նստեց վրանի վրա և բացելով իր թևերը. երեխային ստվեր արեց։ Այդ բանը տեսնողները աղաղակ բարձրացրին, վախեցան, որ արծիվը կարող է երեխային կործանել։ Հոգատար և մանկասեր մայրը աճապարեց դեպի որդին։ Նա տեսավ, որ աքծիվը իր թևերով ստվեր է անում որդուն, տեսավ, որ նա ամենևին էլ չվախեցավ իրենից, այլ ընդհակառակը՝ կարծես ուրախությամբ էր իրեն նայում, բայց այդ պահին ուրիշ բան անել չկարողացավ, և արծվի վրա քար շպրտեց։ Արծիվը թռավ և հեռացավ։ Բայց երբ մայրը վերադարձավ իր ամուսնու և աշխատողների մոտ, արծիվն առաջվա պես եկավ և մանկան վրա ստվեր արեց. տեսնողները նորից աղաղակ բարձրացրին, մայրը վազեց որդու մոտ, քար շպրտեց, արծիվը հեռացավ, իսկ մայրը նորից վերադարձավ աշխատողների մոտ։ Նախախնամությունը, ցանկանալով ցույց տալ, որ դա պատահական դեպք չէ, այլ կատարվում էր աստվածային կանխագիտությամբ, նույն բանը երրորդ անգամ կրկնվեց, այն է՝ արծիվը [ճախրեց] մանկան վրա, տեսնողներն աղաղակեցին, մայրը շտա-

պեց դեպի արծիվը, իսկ արծիվը հազիվ պոկվեց ու հեռացավ։ Դա այդպես է. աստված կատարվելիք մեծ իրադարձությունների մասին միշտ դեռ շատ առաջ նշաններ և ապացույցներ է տալիս։ Նման դեպքը հետագայում ևս հաճախ էր պատահում նրան, և քնած ժամանակ արծիվը բազմիցս իրեն ստվեր էր անում[23]։ Բայց մայրն այն ժամանակ դեպքին՝ ոչ մի նշանակություն չէր տալիս։ Նախքան բացահայտվեին [Վասիլի] առաքինությունները, այդ նշանների վրա, ինչքան էլ դրանք կարևոր լինեին, ուշադրություն չէին դարձնում և բացատրություն չէին փնտրում, ոչ ոքի մտքովն անգամ չէր անցնում, որ երբևիցե կարող է համեստ ու հասարակ այդ տանր նման [բախտ] մուտք գործել։ Այն պատճառով, որ այս հարցի շուրջ երկարաբանելը կարող է [Վասիլին] գովաբանելու ինչ որ ձև համարվի, որ նրա մասին լավ բան ասելու նյութ չունենալն է մեզ ստիպում ծանրաբեռնել շարադրանքը, ահա նման կարծիք չստեղծվելու համար մի կողմ ենք թողնում այսպիսի պատմությունները, ինչպես և այն ամենը, ինչ վերաբերում է նրա մանկության տարիներին։ Այժմ փութանք անցնել առաջ, հրաժարվելով անվերջ գովասանքներից, որոնք համարում ենք ոչ գովելի բան։

6. Մանկան դաստիարակության գործը իր վրա էր վերցրել հայրը, նա էր որդու աննկիքի և ասելիքի խորհրդատուն, նա էր նրա ուսուցիչն ու դաստիարակը՝ բոլոր կարևոր ու գովելի արարքների։ [Վասիլը] կենտավրոս Քիրոնի կարիքը չզգաց, ինչպես Աքիլլեսը, ոչ էլ օրենսդիրներ Լիկուրգոսի ու Սոլոնի, նա արտաքին կամ օտար [գիտությունների] ուսման կարիքն էլ չզգաց. նա միայն հոր մոտ ստացավ բարձր դաստիարակությունը, սովորեց լինել ակնածող ու բարեպաշտ՝ դեպի աստվածայինը, ամոթխած ու հնազանդ՝ ծնողների հանդեպ, գիջող դեպի տարեցները, բարեմիտ ու անկեղծ՝ դեպի տարեկիցներն ու ազգականները, ենթարկվող՝ իշխանավորներին և ողորմած՝ չքավորների հանդեպ։ Նա ամեն ինչում փայլեց իր առաքինություններով, դեռ պատանի հասակում աչքի ընկավ իր խոհեմությամբ ու արիությամբ. նա սիրում էր և անչափ գնահատում չափավորությունը, ամենևին չէր արհամարհում հասարակ մարդկանց։ Ահա այդ էր պատճառը, որ նա բոլորի սիրելին էր և ցանկալին։

7. Երբ նա մանկությունից անցնում է պատանեկության հասակին և ձեռնաձուխ լինում տղամարդուն վայել գործերի, վախ-

ճանվում է նրա հայրը և գնում հանդերձյալ աշխարհը։ Տունը լցվեց սուդ ու ողբով, այրիացավ [Վասիլի] մայրը, որբացավ այդ ամենահզորը։ Մնունդ առան վիշտն ու թախիծը, դրա վրա գումարվեցին նաև ապրուստ հայթայթելու, տան, մոր և եղբայրների հոգսերը։ Նա չնչին էր համարում երկրագործության տված օդուտը, այդ աշխատանքն իսկ անվայել, ուստի որոշեց գնալ Թագավորանիստ քաղաքը, ցուցաբերել իր անձնական առաքինությունները և այդ ճանապարհով ձեռք բերել և՛ իր, և՛ իր ընտանիքի կարիքները հոգալու միջոցներ, ավելի օգտակար և պիտանի լինել նրանց։ Նա գիտեր, որ մարդկանց լավագույն ընդունակությունները ծաղկում են հենց մեծ քաղաքներում, մանավանդ մայրաքաղաքներում, որ մյուսներից մի քիչ ավելի աչքի ընկնող մարդր ավելի փայլուն բախտի է արժանանում։ Նա գիտեր, որ մարդկանց առաքինությունները նվազ հայտնի, երկրորդական քաղաքներում բթանում են ու խամրում, ինչպես գյուղերում, որ եթե այդ առաքինությունները հանդես բերելու ասպարեզ չլինի, ոչ էլ գնահատող մարդիկ, ապա դրանք խունանում են և թառամում։ Այդ պատճառով նա ձեռնտու և օգտակար համարեց գնալ Թագավորանիստ քաղաքը։ Բայց նրան ետ էր քաշում և ձեռքն ու ոտքր կապում դեպի մայրր տածած սերը, նրա բեռը թեթևացնելու ցանկությունը, նամանավանդ որ մայրր հանգիստ ծերություն էր ուզում և պահանջում, որ որդին իր մոտ մնա և ցուցաբերի պետք եղած օժանդակություննն ու հոգատարությունր։

8. Բայց քանի որ պիտի աստուծո կամքր կատարվեր, այն, որ [Վասիլը] աստիճանաբար բարձրանալով հասներ այն տեղրորն իր համար էր կանխորոշված, երազներն ի վերջո համոզում են մորր լինել զիջող՝ տեղի տալ նրա քաղաք գնալու բուռն ցանկության առաջ։ Դեռ ավելին, հենց ինքր՝ մայրր սկսեց խթանել և դրդել որդուն գնալ Թագավորանիստ քաղաքր՝ ցույց տալու իր հոգու վեհությունր, իր արտակարգ քաջությունր։ Մայրր երազում տեսել էր, որ իրենից ինչ որ հսկա մի ծառ է բուսել (այնպես, ինչպես Կյուրոսի մայրը [երազում] տեսել էր [իրենից բուսած] որթատունկը), մի ծաղկաշատ ու մրգաշատ ծառ, իր տան վրա կանգնած։ Գետնից բարձրացող նրա հսկայական բունը ոսկուց էր, ճյուղերն ու տերևները ևս ոսկե։ Նա այդ մասին պատմեց երազներ մեկնող մի մտերիմ մարդու և նրանից պատասխան ստացավ, թե դա նշանակում է, որ որդին արժանանալու է փայ-

լուն և մեծ բախտի։ Փոքր անց նա երազում տեսնում է մի ծերունու, որի բերանից հուր էր ժայթքում. նա շարունակ ասում էր նրան, թե աստված քո սիրելի որդի Վասիլին տալու է հռոմեական թագավորության գայիսոնր և դու պետք է դրդես նրան գնալ Կոստանդնուպոլիս։ Վասիլի մայրը այդ ավետիսից ուրախացած ու բերկրացած, երկրպագեց ծերունուն և հարցրեց. «Դու ո՞վ ես, տեր, որ արժանի համարեցիր ինձ երևալ և բերել նման ավետիսներ»։ Նա պատասխանեց. «Ես Եղիա Թեսբացին[24] եմ» ու անհետացավ։ Նա զարթնեց և այդ բարի երազներից, ավելի ճիշտ, աստվածային հայտնություններից թևավորված ու կյանք ստացած, հենց ինքը սկսեց դրդել որդուն գնալ թագավորանիստ քաղաքը. որպես մայր նա խորհուրդ տվեց և աղաչեց նրան, որ իր հոգում մշտապես պահի երկյուղն աստուծո, իմանա, որ նախախնամության աչքը միշտ տեսնում է նրա յուրաքանչյուր արարքն ու մտածմունքը, այդ պատճառով թող նա ոչ մի վատ բան չգործի, այլ իր անձնական առաքինությունները պետք եղած ձևով դրսևորի, ոչ մի դեպքում չնսեմացնի իր նախնիների ազնվազարմությունը։

9. Դուրս գալով Թրակիայի Մակեդոնիայից, նա գնաց դեպի քաղաքների թագուհին, նպատակ ունենալով մտերմանալ ուժեղներից և երևելիներից մեկն ու մեկի հետ, մտնել նրա մոտ ծառայության և սպասավորության[25]։ Կտրելով միջանկյալ ճանապարհը և հասնելով թագավորանիստ քաղաքի Ոսկե դռները[26], օր ցերեկով անցավ նրանցից ներս, մոտեցավ հենց [այդ դռների] մերձակայքում գտնվող սուրբ վկա Դիոմեդեսի մենաստանը և ճանապարհորդությունից հոգնատանջ, նրա գարպասի առաջ, պատերի տակ անհոգ պառկեց հանգստանալու։ Դիշերվա առաջին պահին վանահոր[27] երազում գալիս է վկա Դիոմեդեսը և հրամայում նրան դուրս գալ դեպի վանքի դարպասը, «Վասիլ» կանչել և նրան, ով պատասխանի իր կոչին, վանք հրավիրել և հյուրընկալել, տալով սնունդ, օթևան, հագուստ, ամեն մի օժանդակություն և մատուցել իր ծառայությունը, քանզի նրան աստված թագավոր է օծելու և նա է, որ պետք է վերականգնի և փառավորի այդ վանքը։ Վանահայրը այդ տեսիլքը համարեց երևակայության արգասիք, մրտքի սին ստեղծագործություն և ոչ մի նշանակություն չտվեց։ Նորից նիրհելով, երկրորդ անգամ է լսում նույն բանի մասին։ Բայց լինելով քնաթաթախ, կիսաքուն վիճակում ոչինչ չարեց։ Նա երրորդ անգամ է տեսնում վկային, որն արդեն նրան հրամայում էր

ոչ թե առաջվա պես հեզ ու հանդարտ, այլ սաստիկ սպառնալով փորձանքի ենթարկել, եթե շտապ չկատարի ասվածը։ Այս անգամ նա հազիվ-հազ սթափվեց, աչքերից քշեց մահվան հարևան քունը, գնաց դարպասի մոտ և վկայի հրամանի համաձայն «Վասիլ» կանչեց։ Նա իսկույն պատասխանեց. «Ահա ես, տեր, ի՞նչ ես հրամայում քո ծառային»։ [Վանահայրը] նրան վանք հրավիրեց. տեսնելով, որ կեղտոտ է ու փոշոտ, դեմքն արևակեզ, մարդասիրաբար անհրաժեշտ հոգատարություն և օգնություն ցուցաբերեց։ Այնուհետև խնդրելով Վասիլին ոչ ոքի չհայտնել, իր մեջ պահել գաղտնիքը, նրան հայտնեց վկայի մարգարեությունը և երաշխիք խնդրեց [Վասիլից], որ գուշակության իրականացումից հետո նա կհիշի այգ։ [Վասիլը] դա անհնարին բան համարեց ու մերժեց, ընդհակառակը, խնդրեց [վանահոր] միջնորդությունը որևէ հայտնի մարդու մոտ ծառայության ընդունվելու համար, մի բան, որ վանահայրը սիրով կատարեց։ Նա [Վասիլին] ներկայացրեց կայսր Միքայելի[28] և կեսար[29] Վարդասի[30] մի ազգականին, որին փաղաքշորեն Թեոփիլիցես[31] էին անվանում, մականունը Պեդևոմենոս։ Վերջինս այդ վանքի հանդեպ մտերմություն էր ցույց տալիս և հաճախ էր այնտեղ սիրով լինում։ Այս Թեոփիլիցեսը ուրախ մարդ էր, մեծահոգի և շատ էր ցանկանում իր ծառայության մեջ ունենալ ազնվական, գեղեցիկ, երիտասարդ, քաջությամբ և կորովի մարմնով աչքի ընկնող տղամարդկանց և նրանցով հպարտանալ ու պարծենալ։ Նա այդ տղամարդկանց իսկույն հագցնում էր մետաքսե հանդերձներ և այլ համազգեստներ։ Ահա այս մարդկանց թվին դասվեց և երիտասարդ նորակոչիկ Վասիլը։ Թեոփիլոսը, տեսնելով, որ Վասիլը ֆիզիկական ուժով և մտավոր ընդունակություններով մնացածներին շատ էր գերազանցում, նրան նշանակեց իր պրոտոստրատորը[32]։ Սերը նրա հանդեպ օրեցօր աճում էր. նա հիանում էր նրա անձնական բարեմասնություններով, նրա, ով աչքի էր ընկնում և՛ ֆիզիկական ուժով, և՛ մտավոր ընդունակություններով, իսկ բոլոր հրամանները կատարում էր արագ և անթերի։

10. [Վասիլի] մայրը անվերջ մտահոգության մեջ էր [որդու] համար, որովհետև ոչ մի լուր չէր ստանում նրա բարեհաջող տեղավորվելու մասին։ Նա հուսաբեկ էր եղել և տրտմության մեջ ընկել, երբ նորից երազում տեսնում է իր բակում նոճու նման մի ծառ՝ ոսկե տերևներով, ոսկե ճյուղերով ու բնով, որի գագաթին

նստած էր իր որդի Վասիլը։ Նա զարթնեց և հաջորդ օրը երազը պատմեց բարեպաշտ մի կնոջ, որը գիշեր-ցերեկ Աննայի[33] նման չէր հեռանում աստուծո տաճարից և ժամանակն անց էր կացնում աղոթքներով ու պահեցողությամբ։ Այդ կինը նրան ասաց ուրախ լինել որդու համար և մեկնեց երազը, թե այն հաստատ վկայում է, որ քո որդին հռոմայեցիների կայսր պիտի դառնա։ Նախապես իմացածի վրա ահա այս էլ գումարվեց և մայրն այլևս որդու համար չէր տխրում ու թախծում, այլ հուսադրված կորով ստացավ, թևավորվեց երկնային օժանդակությունից, նորից երջանիկ զգաց իրեն։

11. Այն ժամանակները Վասիլի տեր Թեոփիլոսին կայսր Միքայելը և կեսար Վարդասը ինչ-որ պետական գործով Պելոպոնես էին ուղարկել։ Թեոփիլոսին էր ուղեկցում նաև Վասիլը, որ կատարում էր իրեն հանձնարարված պարտականությունը։ Վերոհիշյալ Թեոփիլոսը հասնելով Աքայայի Պատրա քաղաքը, մտավ նախակոչ Անդրեաս [առաքյալի] տաճարը աղոթելու, իսկ Վասիլը իր ծառայության հանգամանքների բերումով չկարողացավ ուղեկցել նրան և ստիպված եղավ ավելի ուշ մենակ գնալ այդ տաճարը՝ հատուցելու դեպի առաքյալը տածած հարգանքը։ Այնտեղ սպասավորող մի վանական, որ ժամանակի մեծ մասն անց էր կացնում առաքյալի տաճարում, երբ Թեոփիլոսը ներս մտավ, ոտքի չկանգնեց, որևէ բան չմաղթեց, ոչ էլ որևէ բան ասաց նրան։ Նա ամենևին չերկյուղեց նրա հետ եղող թիկնապահներից, անգամ նրա փառահեղ արտաքինից։ Բայց հետո, երբ Վասիլը ներս մտավ, նա, ինչպես դա արվում է ինչ-որ շատ երևելի մարդկանց նկատմամբ, ոտքի կանգնեց և նրան ողջունեց սովորաբար կայսրերին ուղղվող ողջույնով։ Պատահմամբ այնտեղ գտնվող մարդիկ ականատես և ականջալուր լինելով դեպքին, այդ մասին հայտնեցին տեղի մեծահարուստ և ազնվական մի կնոջ, որն իր ամուսնու անունով կոչվում էր Դանելիս[34]։ Կինը փորձով գիտեր, որ վանականը կանխատեսելու շնորհքով է օժտված. առանց հապաղելու, նա իր մոտ հրավիրեց նրան և սկսեց պախարակել. «Ո՛վ հոգևոր հայր, գու ինձ այսքան. ժամանակ է գիտես, որ ես այս վայրում և՛ դիրքով, և՛ իշխանությամբ շատերից բարձր եմ, բայց երբ հանդիպում ես ինձ, ո՛չ ոտքի ես կանգնում, ո՛չ էլ ողջունում, նման պատիվ դու չես ցուցաբերել նաև ո՛չ իմ որդուն, ո՛չ էլ Թոռան։ Արդ, ինչո՞վ բացատրել այն, որ դու կանգնում ես և թագավորավայել պատվում հասարակ ու անհայտ մի օտարականի»։ Բարե-

պաշտ վանականը պատասխանեց և ասաց. «Իմ կարծիքով նա պատահական մեկը չէ, իմ տեսածը Քրիստոսի կողմից օծված հռոմայեցիների մեծ կայսրն է, դրա համար կանգնեցի և ողջունեցի։ Եթե մեկը արժանանում է աստուծո պատվին, ապա պարտադիր է, որ նրան պատվեն նաև մարդիկ»։ Վասիլի տերը այդ վայրերում որոշ ժամանակ մնալուց հետո, և կատարելով իրեն վստահված պետական պարտականությունները, որոշեց վերադառնալ Թագավորանիստ քաղաքը։ Վասիլը սակայն տկարության պատճառով մնաց տեղում։ Նա անհրաժեշտ հոգատարության հանդիպելով առողջացավ և պատրաստվում էր նույնպես վերադառնալ։ Բայց վերոհիշյալ կինը՝ Դանելիսը հրավիրեց նրան և արտակարգ շուքով ընդունեց։ Նա շատ խոհեմ ու հեռատես վարվեց, ինչպես այն մարդը, որ սերմ է գցում բերրի հողի մեջ, բաղմապատիկը քաղելու ակնկալությամբ։ Նա [Վասիլին] տվեց բաղում ոսկի, իր սպասավորության համար երեսուն ստրուկ, ինչպես նաև մեծ հարստություն՝ հանդերձների և այլ զանազան իրերի ձևով, նախորոք ոչ մի բան չխնդրելով նրանից, այլ սոսկ այն, որ նա իր որդի Հովհաննեսի հոգևոր եղբայրը դառնա[35]։ [Վասիլը] մի կողմից տեսնելով իր համեստ գիրքը, մյուս կողմից կնոջ փառահեղությունը, անհարմար գտավ դիմել նման քայլի և մերժեց առաջարկը։ Բայց երբ իրեն շատ խնդրեցին, տեղի տվեց։ Դրանից հետո [Դանելիսը] կարծես ավելի համարձակություն ստացած, սկսեց ասել նրան, թե աստուծո համար դու մեծ մարդ ես, նա քեզ մեծ պատվի է արժանացնելու և ես քեզնից ոչինչ չեմ խնդրում կամ պահանջում, այլ միայն այն, որ դու սիրես մեզ և մեր հանդեպ ողորմած լինես։ [Վասիլը] պատասխանեց, որ եթե դա իրականանա, թող դառնա ամբողջ գավառի տերը։ Դրանից հետո նա ճամփա ընկավ և գնաց Թագավորանիստ քաղաքը՝ իր տիրոջ մոտ։ Ջեռք բերած դրամով նա Մակեդոնիայում գնեց մեծ կալվածներ և բոլոր իր ազգականներին բարեկեցիկ դարձրեց, ինքն էլ հարուստ դարձավ՝ ինչպես առաքինություններով, այնպես էլ կալվածներով և դրամով։ Բայց և այնպես նա իր տիրոջ մոտ մնաց և ծառայում էր նրան։

12. Մի օր սխոլերի դոմեստիկոս[36] պատրիկ Անտիգոնոսը արքունի ապարանքին կից կայսերական տներում ճոխ ընդունելություն կազմակերպեց և իր հոր Վարդասին նշանակեց հեստիատոր[37] և դետիմոն[38]։ Կեսարը ճաշկերույթի գնաց, իր հետ վերցնե-

լով սենատորների մեծ մասին, իր ազգականներին և մտերիմներին։ Նրանց թվում նաև բուլղար բարեկամներին[39], որոնք սովորաբար այն ժամանակները թագավորանիստ քաղաքում էին լինում։ Ճաշկերույթին որպես կեսարի ազգական ներկա էր նաև Վասիլի տեր Թեոփիլոսը՝, ինչպես և պատրիկ Կոստանդինը[40], այժմյան գրոմոսի լոգոթետ[41], մեծ և անկաշառագույն փիլիսոփա նշանավոր պատրիկ Թովմայի հայրը։ Բուլղարներն ի բնե ինքնահավան և պարծենկոտ մարդիկ են. նրանք այն ժամանակ իրենց հետ էին բերել մի բուլղարի, որը շատ ուժեղ ըմբիշ էր և համարյա թե ոչ ոքի չէր հաջողվել նրան մարտում զգետնել։ Բուլղարները ոչ միայն հպարտանում էին նրանով, այլ չափից դուրս պարծենում։ Կերուխումը երկարեց և ուրախությունը սեղանի շուրջ ծավալվեց, երբ այդ կարճահասակ Թեոփիլոսն ասաց կեսարին, թե տեր, ես մի մարդ ունեմ, որը, եթե թույլ տաս, կըմբշամարտի այս անուն հանած բուլղարի հետ։ Հռոմայեցիների համար դա մեծ խայտառակություն է և ոչ ոք չի փակի [բուլղարների] պարծենկոտ բերանը, եթե սա առանց պարտվելու գնա Բուլղարիա։ Կեսարը թույլատրեց։ Վերոհիշյալ պատրիկ Կոստանդինը, որը նույնպես ծագումով հայ էր և այդ իսկ պատճառով Վասիլին շատ սիրելի, տեսավ, որ այն վայրը, որտեղ պետք է ըմբշամարտեն, թաց է. վախենալով, որ հանկարծ Վասիլի ոտքը կսայթաքի, կեսարից խնդրեց գետնին փայտի թեփ շաղ տան։ Այդ անելուց հետո Վասիլը կովի բռնվեց բուլղարի հետ, նրան իսկույն սեղմեց, ճզմեց և կարծես խոտի թեթև խուրձ լիներ, անհոգի մարմին, կամ էլ չոր ու թեթև բրգի գեզ, հեշտությամբ բարձրացրեց սեղանի վրա և շպրտեց։ Մարդ չկար, որ չհիանար Վասիլի վրա, չգովեր նրան։ Նույնիսկ բուլղարներն ապշեցին [Վասիլի] անչափ ճարպկության և ուժի վրա ու պապանձվեցին։ Ահա այդ օրից սկսած ամբողջ քաղաքով մեկ սկսեց տարածվել Վասիլի համբավը, նրա անունը ամենքի շրթներին էր, և բոլորը հիանում էին նրանով։

13. Միքայել կայսրը ազնվացեղ, սիրուն ու բարձրահասակ, քայց և անսանձելի, անկարգ, ըմբոստ ու անսաստ մի ձի ուներ։ Բոլորը հիանում էին նրա գեղեցկությամբ ու արագավազությամբ։ Բայց երբ նա հանկարծ կապը կտրեր կամ որևէ ձևով աղատ արձակվեր, շատ դժվար էր նրան սանձահարել և նա մեծ գլխացավանք էր պատճառում ձիապաններին։ Մի օր կայսրը այդ ձին հեծած որսի է դուրս գալիս և գուրզի հարվածով խփում մի նապաս-

տակ։ Կայսրն ուրախացած իշնում է ձիուց, որ գնա նապաստակին մորթի։ Ձին ազատություն ստանալով փախչում է։ Շատ մարդիկ են ընկնում նրա ետևից, նրանց թվում և ախոռապետները, մանգլավիտներ և նրանց սպասավորները, բայց անհնարին է լինում ձին բռնել։ Կայսրը զայրացած հրամայում է ձին բռնել և կտրել նրա ետևի ոտքերը։ Կեսար Վարդասը խնդրում է կայսեր, որպեսզի մի փոքր անկարգության համար իզուր տեղը կորստյան չմատնի հոյակապ ձիուն։ Վասիլը իր տիրոջ մոտ էր և նրան դիմելով ասաց. «Եթե ես մոտենամ կայսեր ձիուն և իմ ձիու վրայից բռնեմ կայսեր ձիու վրա, ապա կայսրը չի զայրանա իմ դեմ, չէ՞ որ ձին հարդարված է կայսերական ֆալարներով»[42]։ Այդ մասին հաղորդեցին կայսեր, իսկ վերջինս թույլատրեց և Վասիլը պատրաստակամությամբ ու վարպետորեն գործը գլուխ բերեց։ Կայսրը, տեսնելով այդ, հիացավ նրա քաջությամբ, ապա նաև նրա վարպետությամբ ու խոհեմությամբ և իսկույն Թեոփիլից ետ վերցնելով, դասեց նրան կայսերական ստրատորների[43] շարքը։ Տեսնելով, որ Վասիլը ամեն ինչում շատ է տարբերվում մյուսներից, սիրեց և կապվեց նրա հետ։ Իսկ երբ նա բազմիցս աչքի ընկավ կայսեր առաջ, վերջինս նրան բարձրացրեց պրոտոստրատորի աստիճանին։

14. Մի օր հայտարարվեց, թե որսի են գնալու Ֆիլոպատիոն[44] կոչված վայրը։ Մասնակցում էր նաև պրոտոստրատորը, որը կարգի համաձայն ձի հեծած գնում էր կայսեր առջևից, իր դոտուն կապված թագավորական գուրզը, որը սովորաբար վարդուկիոն էր կոչվում։ Որսի մասնակիցների բարձրացրած աղմուկից վախեցած, անտառից դուրս թռավ մի հսկայական գայլ. բոլորը սարսափեցին ու շփոթվեցին։ Վասիլը հարձակվեց նրա վրա, շպրտեց թագավորական վարդուկիոնը, որը դիպչելով գազանի գանգին, փշրեց այն։ Կեսարը, որը կարգի համաձայն գնում էր կայսեր ետևից, տեսնելով կատարվածը, իրեն ուղեկցող մտերիմներից և ծանոթներից ոմանց ասաց. «Ես գիտեմ, այս մարդն է, որ մեր ամբողջ տոհմը պիտի կործանի»։ Նրա կանխատեսությունը բխում էր այն բանից, որ [Վասիլի] համար ամեն ինչ բարեհաջող ու բարեպատեհ վախճան էր ունենում, մի բան, որ իր հերթին ուժեղացնում էր կայսեր համակրանքը դեպի նա։ Եվ դա դեռ բոլորը չէր. պատմում են, որ [կեսարը] այն ժամանակ ամենահմաստուն Լևոն փիլիսոփայի[45] հետ բազմիցս ունեցած խոսակցու-

թյան ընթացքում լսել էր, թե ձեր տոհմը ըստ իս կկործանվի մի պատանու ձեռքով, իսկ հետագայում, երբ Վասիլն արդեն հրապարակ դուրս եկավ, [Լևոնը] մատնացույց անելով նրան, ասաց կեսարին. «երբ ես խոսում էի ձեր տեղը գրավողի մասին, հենց սրան նկատի ունեի»։ Այդ էր պատճառը, որ կեսարը կասկածանքով էր նայում [Վասիլին] և շարունակ որոգայթներ լարում նրա դեմ, թեպետև անզոր էր կանխել աստվածային, նախօրոք որոշված կամքը։ Ճակատագիրը ոչ այնքան անսպասելի է, ինչքան անխուսափելի։ Թեև այս բոլորը շեղում է բուն նյութից, բայց և այնպես հարցի հետ առնչություն ունի։

15. Կայսրը շատ էր սիրում որսի գնալ և, մի փոքր անց, պտույտ կատարելու համար գնաց Արմամենտարիա[46] կոչված վայրը։ Տեղում սեղան տրվեց, որին մասնակցեց և կայսրը իր հարազատ մոր՝ Թեոդորայի[47], իր ազգականների և սենատորներից ամենամտերիմների հետ։ Կայսեր թույլտվությամբ հրավիրվեց նաև պրոտոստրատորը և նա ևս նստեց [սեղանի] շուրջը։ Թագուհի Թեոդորան սկսեց ավելի հաճախակի նայել ու վերից վար չափել, ավելի ուշադիր ուսումնասիրել և զննել [Վասիլին]։ Մի փոքր անց ինչ-որ նշան տեսնելով նրա վրա, ուշաթափվեց։ Ջրով ու վարդաջրով հազիվ ուշքի բերեցին նրան, որից հետո ներկաները հեռացան։ Երբ նա ուշքի եկավ և սթափվեց, իր որդին՝ կայսրը հարցրեց, ի՞նչ պատահեց, ինչո՞ւ այսպես հանկարծակի ուշաթափվեց։ [Մայրը] հազիվ սթափված ասաց. «Ո՜վ տեր և իմ որդի։ Նա, ում մասին քո հայրն[48] ասում էր, թե մեր տոհմը կործանելու է, հենց սա է, որին դու Վասիլ ես անվանում. այն նշանները, որոնց մասին ասաց քո հայրը, թե կունենա մեզ ժառանգողը, հենց այդ մարդն ունի։ Ես մի պահ պատկերացրի ամբողջ դժբախտությունը, մեր կործանումը իմ աչքի առջև եկավ, դրա համար շփոթվեցի և ուշաթափվեցի»։ Կայսրը հանգստացրեց մորը, ուշքի բերեց և մխիթարելով ասաց. «Դու սխալվում ես, մայր, այս մարդը հասարակ մեկն է, շատ միամիտ։ Նա մի բան ունի միայն, քաջություն, ինչպես հնում Սամփսոնը և ուրիշ ոչինչ, նա մեր օրերում հանդես եկած ինչ-որ Ենակ է կամ Նեբրովդ[49], դու նրանից մի՛ երկյուղիր, մի՛ ունեցիր որևէ չար կասկած»։ Ահա այն ժամանակ աստուծո կողմից պահպանվող Վասիլը այսպես խուսափեց այդ կոհակից։

16. Այդ տարիներին կայսեր պարակիմոմենոսն[50] էր ներքինի, պատրիկ Դամիանոսը, ազգությամբ սլավոն. սա տառապում էր իշխանամոլության ախտով և հաճախ մեղադրում էր կայսեր առջև ոմանց, թե նրանք ինչպես հարկն է չեն վարում պետական գործերը։ Նա հատկապես ընդգծում էր կայսեր մորեղբոր՝ կեսար Վարդասի անունը, թե նա զավթել է իշխանության մեծ մասը, թե նա հաճախ դուրս է դալիս իր իրավունքների սահմաններից։ Նա քննադատում էր կեսարի ղեկավարման ոճը, իրականությունը ծուռ հայելու մեջ ցույց տալով կայսեր։ Կեսարը իր մտերիմ ընկերներից և հարազատ խորհրդատուներից ու խորհրդականներից իմանալով այդ մասին, լարվեց Դամիանոսի դեմ։ Նա կայսեր առաջ շատ չարախոսեց նրան, իր ամբաստանությունը վարպետորեն ձևակերպեց և կարողացավ ի չիք դարձնել կայսեր դեպի Դամիանոսն ունեցած բարյացակամ վերաբերմունքը։ Նա նույնիսկ համոզեց [կայսեր] [Դամիանոսին] հեռացնել գրաված պաշտոնից։ [Դամիանոսի] պաշտոնանկ արվելուց հետո նրա պաշտոնը որոշ ժամանակ թափուր մնաց։ Նախախնամության կամքի առջև խոհեմությունն անզոր է, իսկ խորամանկությունն իր փորած վտակի մեջ է ընկնում։ Երբ կեսարը և շատ ուրիշներ կայսեր խորհուրդ էին տալիս և թաքուն ջանքեր թափում, որ այդ պաշտոնը տրվի այս կամ այն անձնավորության, կայսրը նրանց համար միանգամայն անսպասելի Վասիլին է նշանակում պարակիմոմենոս[51], պատվելով նրան պատրիկի աստիճանով և կնության տալով մարմնով ու դեմքով գեղեցիկ, համեստությամբ գրեթե բոլոր ազնվական կանանց գերազանցող մի աղջկա, այն ժամանակ ազնվությամբ ու խոհեմությամբ հռչակված Ինգերի[52] [դստեր]։ Երբ այդ կատարվեց, վերջացավ և կեսարը տեսավ, որ կայսեր համակրանքը դեպի Վասիլը օրեցօր աճում է, նախանձից վառվում էր, սարսափում ապագայից[53], նա հայհոյում էր ու կշտամբում, անվանելով անխելք ու չարամիտ նրանց, ովքեր իրեն խորհուրդ էին տվել և դրդել Դամիանոսի ոտքի տակը փորել, ասելով. «Ես պետք եղածից ավելի հավատք ընծայեցի նրանց և մի աղվես դուրս շպրտելով, նրա տեղ մի առյուծ ներս բերեցի, որը մեզ բոլորիս լափելու է ու կուլ տալու»[54]։

17. Միքայել կայսրը իր մորեղբայր կեսար Վարդասի հետ արշավանքի էր դուրս եկել դեպի Կրետե։ Կեսարը սկսել էր ավելի խիստ քաղաքականություն վարել, իրեն վերապահում էր շատ

ավելի լայն իրավունքներ և հրամաններ արձակում։ Այդ պատճառով [կեսարի] դեմ ավելի հաճախ էին բողոքներ հղվում Միքայել կայսեր, երբ նրանք հասան Կեպոյ վայրը (այն գտնվում է Թրակեսիոն բանակաթեմում, Մեանդրոս [գետի] ափին), կամ պատահմամբ, կամ էլ շտապողականության պատճառով կայսեր վրանը խփվեց տափարակ և ցածրադիր վայրում, իսկ կեսարի վրանը՝ ցից և բարձր տեղում։ Նրանք ովքեր դեռ վաղուց չէին կարողանում կեսարին հանդուրժել և ատում էին նրան, ուզեցին օգտվել առիթից և բազում մեղադրանքներ բարդեցին նրա վրա, թե նա այն աստիճան է ամբարտավանացել, որ սկսել է բացահայտորեն անարգել ինքնակալին, որ փառասիրությունը նրան հասցրել է այնտեղ, որ չբավարարվելով մինչ այդ արածով, ջանացել է, որպեսզի ինքնակալի վրանը ցածր և հասարակ երևա. իսկ սեփականը՝ ամեն տեղից նկատվող և բարձր։ Կայսրը հավատաց նրանց խոսքերին և միացավ նրա դեմ կազմակերպված դավադրության, համաձայնվեց նրան սպանելու մտքին ու վճռին։ Բայց և այնպես նա ի վիճակի չէր բացահայտ նրա դեմ որևէ բան ասելու կամ արտահայտելու, որովհետև կեսարը փաստորեն իրեն հավասար դիրք էր գրավում, իր չափ իշխանության մասնակից էր, ապա և այն պատճառով, որ բոլորը վախենում էին նրա հետևրիայից՝ թիկնապահ զորքից և կազմակերպությունից. բոլոր իշխանավորներն ու զորավարները նրա կողմնակիցներն էին, նրան էին ենթարկվում, քան կայսեր, քանզի նա ավելի հմուտ էր պետական գործերում և բոլոր հարցերին ճիշտ լուծում էր տալիս, և որ ամենակարևորն է, [կեսարի] որդին՝ անթիպատ պատրիկ Անտիգոնոսը այն ժամանակ կայսերական սխոլերի գոմեստիկոսն էր։ Հակառակ դրան, կայսրը գտավ այնպիսի մարդկանց, որոնք միացան իր ծրագրին և խոստացան իրականացնել [կեսարի] սպանությունը։ Առավոտյան, ընդունված կարգի համաձայն, կեսարը, թեև վատ նախազգացումներ ուներ, եկավ կայսեր վրանը. իրենց անելիքի շուրջը խորհրդակցելու համար։ Կայսրը, ենթադրելով, որ նրան սպանելու հարմար առիթը ներկայացել է, նշան արեց պատրիկ Սմբատին[55], որն այն ժամանակ դրոմոսի լոգոթետն էր (սա կեսարի փեսան էր, ամուսնացել էր նրա դստեր հետ և համամիտ էր [կեսարի կյանքի] դեմ ուղղված ծրագրին), որպեսզի նա գնա և ներս բերի նրանց, ովքեր պետք է [կեսարին] սպաններին։ Նա դուրս եկավ, տվեց նախապես որոշված աղդանշանը, այն է՝ դեմքը խաչակնքեց, բայց սպանությունն ի կատար

ածողները վախկոտ գտնվելով երկյուղեցին, այդ սարսափելի ու ահավոր արարքը կատարելու պահին վարանեցին և այդպիսով ժամանակ վատնվեց։ Կայսրն ընկավ անելանելի վիճակի մեջ. արքունիքի ինչ-որ սպասավորի միջոցով նա իմացավ, որ նրանք վախեցել են, վհատվել, որ որոշել են գործը հետաձգել, գործ, ուի՞այն խիզախ միտքն ու խելքը, քաջությունը կարող է իսկապես իրագործել։ [Կայսրը] իր հավատարիմ մարդկանցից մեկին ուղարկում է պարակիմոմենոս պատրիկ Վասիլի մոտ և երկյուղով հայտնում նրան, որ եթե անհապաղ չքաջալերես այս ձեռնարկության համար նախատեսված մարդկանց և չդրդես նրանց իսկույն գործի անցնել, ապա հաստատ գիտեմ, որ ես եմ սպանվելու նրա կողմից, քանզի անհնարին բան է, որ նա չիմանա իմ՝ իր դեմ ծրագրածը և վերջին հաշվով փաստորեն դուք կլինեք ինձ սպանողներն ու խողխողողները։ Վասիլը, լսելով այդ, անհանգստացավ, որ հանկարծ կայսեր դժբախտություն կպատահի. նա ավելի համարձակ դարձրեց վախկոտներին, երկչոտներին՝ քաջարի և դրդեց ի կատար ածել կայսեր ծրագիրը։ Նրանք կարծես մոլեգնած, իսկույն խուժեցին կայսեր վրան։ Կեսարին պարզ դարձավ, և դա իհարկե այդպես էր, որ իր վրա են նրանք գալիս և բնկավ կայսեր ոտքերին։ Դավադիրները նրան քաշեցին այնտեղից և կայսեր ներկայությամբ սրախողխող արեցին[56]։ Ապրիլ ամսի տասնըմեկն էր, ինդիկտիոնի տասնչորսերորդ տարին։ Կայսրն իսկույն չեղյալ է հայտարարում արշավանքը և վերադառնում թագավորանիստ քաղաքը։

18. Նախախնամությունը Վասիլին խոհեմորեն առաջ էր մղում ցանկացած ուղղությամբ։ Արշավանքից վերադառնալուց անմիջապես հետո կայսրը որդեգրում է նրան (ինքը ոչ մի երեխա չուներ) և արժանացնում մագիստրոսի ամենափառավոր աստիճանին։ Լոգոթետ Սմբատը այդ կապակցությամբ նախանձից պայթում էր. չկարողանալով տեսնել օրեցօր բարգավաճող և իր նախանձր գրգռող մարդուն՝ պատճառաբանելով, որ չի կարող այլևս թագավորանիստ քաղաքում ապրել, նա հրաժարվում է իր զբաղեցրած պաշտոնից և խնդրում Հոնիայի, այսինքն Թրակեսիոն բանակաթեմի զորավարությունը։ Կայսրը ընդառաջեց խընդիրքին և նրան նշանակեց հիշյալ բանակաթեմի զորավար։ Փոքր անց պետական գործերը սկսեցին սպառնագին ալեկոծվել, իշխանությունը ցնցվում էր, փնտրում իրեն կայունացնողին. կայսրը

ամեն ինչի ընդունակ էր, բացի պետական գործերն ինչպես հարկն է տնօրինելուց։ Անցյալում նա շատ բանի մասին գաղափար չուներ, իշխանության խնամակալ կեսարը պետք եղածն անում էր և փաստորեն նրա ձեռքում էին գտնվում պետական գործերը և երկրի կառավարման ամբողջ հոգսը։ [Այժմ] և՛ սենատորները, և՛ պետական գործիչները, գրեթե բոլորը, ովքեր պետական գործերի հետ որևէ առնչություն ունեին, ապա նաև զորքն ու ամբողջ քաղաքային բնակչությունը դժգոհություն էին արտահայտում և բողոքում կայսեր դեմ։ Կայսրն իր մտերմագույն մարդկանցից իմացավ այդ մասին և կարծես մի փոքր սթափվեց. նա համոզվեց ոչ միայն իր՝ դեպի հասարակաց գործերն ունեցած անհոգ ու անգոսնելի վերաբերմունքի, այլև իր անընդունակության և անկարողության մասին։ Նա վախեցավ, որ ամբոխը խռովություն և ապստամբություն կբարձրացնի, ուստի որոշեց իշխանության և պետական գործերի աջակից ունենալ և քանի որ մի փոքր առաջ որդեգրել էր Վասիլին, որին համարում էր ոչ միայն քաջ, այլև շատ խոհեմ մարդ և [համոզված էր], որ նա կարող է դարմանել երկրի կառավարման գործում իր ունեցած անընդունակությունը, բացի այդ, քանի որ այդ բանին էր մղում նաև աստվածային նախախնամությունը, նա հաստատում է իր որոշումը Վասիլին կայսր հայտարարելու մասին։ Այն պատճառով, որ նման մտադրության իրականացմանը համագործակցում էր աստված, սուրբ Պենտեկոստեի օրը, երբ Հոր Մխիթարիչ [հոգին] նստավ մեր Քրիստոս աստուծո աշակերտների վրա, աստվածային իմաստության անունը կրող հռչակավոր տաճարում[57] Վասիլի գլխին դրվում է թագավորական թագը՝ ձեռամբ օրվա կայսր Միքայելի, և ընտրությամբ ու որոշմամբ Քրիստոսի՝ հավիտենական թագավորի[58]։ Մայիս ամսվա քսանվեցն էր, հռոմայեցիների ինդիկտիոնի տասնըշորսերորդ տարին[59]։

19. Սմբատն իր կառավարած բանակաթեմում իմանալով այդ դեպքի մասին, չկարողացավ իրեն կրծոտող նախանձը մարդավայել ղսպել և իր նման մի ուրիշ մոլեգինի, Օպսիկիոն բանակաթեմի զորավար պատրիկ Պեգանի[60] հետ վճռում են ապստամբություն բարձրացնել և անմտորեն խռովություն կազմակերպել։ Նրանք համոզում են իրենց ենթակա զորքերին, դիմում գործի և որպեսզի ժողովրդական զանգվածներին խաբեն, ցույց տան, որ ապստամբությունն ուղղված չէ կայսեր դեմ, փառաբանում են

Միքայելին, իսկ Վասիլին նախատում և նրա հասցեին բյուր լուտանքներ թափում։ Ահա նման հիմարություններով ամբարտավանացած, ամառ ժամանակ նրանք Թագավորանիստ քաղաքում այրող բազմաթիվ դինատների[61] ագարակները կրակի են տալիս, գրավում նավահանգիստներում գտնվող բազմաթիվ նավեր, որոնք նավարկում էին դեպի Թագավորանիստ քաղաքը և հրկիզում։ Բայց երբ վրա հասավ ձմեռը, խռովարարները քիչ-քիչ և գաղտագողի փախուստի դիմեցին ու ցրվեցին։ Չարագործության պարագլուխները տեսնելով այդ բանը, փորձեցին փրկություն գտնել փախուստի դիմելով։ Սմբատն ապաստանում է Տափակ Քար[62] կոչված ամրոցը, իսկ Պեգանը ամրանում Կոտիայոնում[63]։ Բայց դա չփրկեց նրանց։ Կայսեր մարդիկ ձերբակալեցին նրանց և շղթայակապ բերեցին նրա մոտ։ [Կայսրն] այն ժամանակ գտնվում էր սուրբ Մամասի պալատներում[64]. տեսնելով նրանց, շատ պախարակեց ու պարսավեց նրանց հիմարությունն ու ըմբոստությունը, սաստիկ գանահարության ենթարկեց և դատի տվեց։ Սմբատի աչքերը կուրացրին, մեկ ձեռքը կտրեցին ու աքսորեցին. իսկ Պեգանին նույնպես աչքերը խավարեցրին, թրով կտրեցին նաև քիթր և նմանապես աքսորեցին[65]։ Ազնվազարմ կայսր Վասիլը, երբ իր ձեռքը վերցրեց մենիշխանությունը, սրանց աքսորից վերադարձրեց, պատվեց նվերներով, ինչպես նախքան ապստամբությունն բարձրացնելը, ոչ մի հիշաչարություն չցուցաբերեց նրանց հանդեպ։ Նա հաճախ մինչև անգամ նրանց հետ սեղան էր նստում և մխիթարում, բարերարություններով թեթևացնում անմտությամբ իրենց գլխին բերած փորձանքի բեռը։

Բայց այդ տեղի ունեցավ հետագայում։ Այն ժամանակ իրականացավ երեք հարյուր հիսուն տարի առաջ ամենահեռատես քահանա և վանական, ծագումով նույնպես Արշակունի Իսահակի կանխագուշակումը և մարգարեությունը։ Նա տեսիլք էր տեսել և իմացել, որ այդքան ժամանակ անց Արշակի շառավիղներից մեկը պետք է կրի Հռոմեական կայսրության գայիսոն[66]։ Այդ բանը տեղի ունեցավ իշխանավորների, ամբողջ ժողովրդի, զորքի և զորավարների, հռոմեական տիրապետության բոլոր շրջանների և քաղաքների բնակչության ցանկությամբ։ Քանզի բոլորն էին մաղթում, որ իշխանության գլուխ անցնի փոքր-ինչ բախտ ունեցող անձնավորություն, որ տեղյակ լիներ, թե ինչպես մեծահարուստ մարդիկ ճնշում են չքավորներին, անօրեն կերպով կեղեքում նրանց, գիտենար, որ նրանք քայքայման եզրին են հասել և թե

ինչպես են ցեղակիցները ստրկացվում։ Այդպիսին էր վիճակը Միքայելի թագավորության ժամանակ և դրա պատճառն այն էր, որ կայսրը առավելապես ուրիշ գործերով էր տարված և ցանկություն չուներ նման բաներով հետաքրքրվելու։

20. Արդ, քանի որ խոսքը դրան հասավ, ապա նպատակահարմար եմ գտնում մի փոքր ընդհատել Վասիլ կայսեր պատմությունը և սկզբից համառոտակի պատմել Միքայել կայսեր կենցաղավարության մասին, ցույց տալ, թե ինչպիսի հակումներ ուներ նա, ինչի վրա էր վատնում իր ամբողջ ժամանակը, եռանդն ու պետական դրամները, որպեսզի իմանալ ցանկացող ամեն մարդ համոզվի, որ Վասիլի իշխանության գլուխ գալը հիրավի աստվածուստ էր (այլ կերպ հնարավոր չէր վիճակը բարելավել), որ ինքը՝ Միքայելն էր պատճառը, որ իրեն՝ Միքայելի դեմ սուր ճոճեն, հենց ինքն էր, որ հզորացրեց իրեն սպանողների աչը և մղեց իրեն սպանելու։ Նա անչափ թերացավ իր պարտականությունների մեջ և ծայր աստիճան անօրեն ու խայտառակ կյանք սկսեց վարել. նա ծաղր ու ծանակի ենթարկեց ու անարգեց նույնիսկ սրբությունները, պետությունը, բնության օրենքները։ Նա իր շուրջ հավաքեց լպիրշ, պիղծ, չարանենգ մարդկանց մի ամբողջ ոհմակ, խայտառակեց թագավորական մեծության վեհ անունը. թշվառականն իրեն տվեց զվարճությունների, հարբեցողության, հակաբնական խառնակությունների, խայտառակ պատմություններ պատմելուն, ապա նաև տարվեց ձիավարությամբ և ձիարշավարանով և դրանից բխող մոլեգնության և խելագարության։ Նման մարդկանց վրա էր նա չարաչար ծախսում պետության դրամները։ Եվ որ ամենից սարսափելին է, նա այսպանում և ծաղրուծանակի էր ենթարկում մեր հավատքի նշանակները՝ իրեն շրջապատող ծաղրածուներին և խայտառակ մարդկանց մեր բարեպաշտ քահանաների սքեմը հագցնելով։ Նա ծաղրի, հեգնանքի և ծիծաղի արժանի համարեց դրանք։ Ես մի քանի դեպք կպատմեմ, որպեսզի այդ քչից դուք պարզ պատկերացում ունենաք։

21. Նա կառավար էր ու կառապան և կառապանի համազգեստ հագած, նստում էր ձի լծած կառքի վրա և մրցակիցների հետ մրցում վազքուղիներում, մայրաքաղաքում և պալատում, ապա նաև դրսում՝ Մամաս վկայի վանքի մոտ գտնվող արքայական կացարաններում՝ այդ բանի վրա հսկայական գումարներ

վատնելով։ Զինվորականները վերածվեցին թատերական գործիչների և հռոմեական գանձերը փոխանակ զորքերի վրա ծախսվելու, հոսում էին թատերական ներկայացումների վրա և դեպի շաղակրատների հավաքատեղիները։ Կայսերական գանձերը շռայլվում էին և առատորեն ծախսվում լպիրշ, անօրեն գինարբուքների և անառակությունների վրա և որովհետև այդ մասին բոլորը գիտեն ու տեղյակ են, դրա վրա կանգ չեմ առնում։ Ես այժմ կպատմեմ, թե ինչպես նա ծաղրուծանակի էր ենթարկում սրբությունները։ Իր րնկերներից պիղծ և լպիրշ իգացողներից մեկին պատրիարք անվանեց, իսկ նման տասնմեկ հոգու մետրոպոլիտ հորջորջեց, ինքն էլ դարձավ տասներկուերորդը։ Այդ մասին ես հիմա կասեմ։ Նա այդ անիծյալ և ամենապիղծ Գրյուլլոսին պատրիարք կոչեց, քահանայապետական ոսկեզօծ և գերափայլ հանդերձանքը հագցրրեց, և նրա ուսին գցեց եմիփորոն։ Նա, ինչպես ասվեց, ուրիշ տասնմեկ հոգու մետրոպոլիտ կարգեց և իր այդ համախոհներից մի խումբ ստեղծեց, իսկ որպես տասներկուերորդ՝ իրեն Կոլոնիայի արքեպիսկոպոս հորջորջեց։ Նա յուրաքանչյուրին տվեց մի մի կիթառ՝ քահանայական հանդերձանքի տակից կրելու համար և հրամայեց հագուստի տակից նվադել։ Այդպիսով նրանց հետ ծաղր ու պարով իբրև թե սուրբ խորհուրդներն ու պատարագն էր կատարում ու մատուցում պիղծերի մեջ ամենապիղծը և ամբարիշտների մեջ ամենաամբարիշտը։ Երբ իբրև թե խորհրդավոր աղոթքն էր ասվում, պետք էր որ կիթառները ավելի մեղմ նվագակցեին, իսկ երբ քահանայի՝ [ժողովրդին] դիմելու պահն էր գալիս և ժողովրդի՝ նրան պատասխանելու, ապա պետք էր, որ կիթառները բարձր հնչեին, որպեսզի նրանց մեղեդին բոլորը լսեին։ Ապա մանանեխ և քացախ լցնելով արծաթե և ոսկե, թանկագին քարերով և մարգարիտներով ագուցված սրբազան անոթների մեջ, անոթներ, որոնք սուրբ արարողությունների ընթացքում արդեն բազմիցս օգտագործվել էին, հաղորդություն էին տալիս իրենց նմաններին՝ ծիծաղով և անամոթ խոսքերով, զզվելի ու գարշելի շարժուձևերով[67]։

22. Մի անգամ, երբ սրբազնագույն պատրիարք Իգնատիոսը[68] համայն իր եկեղեցական դասով ու խմբով քաղաքում սովորական երգեցողությամբ ու կարգ ու կանոնով թափոր կազմած գնում էր դեպի ինչ-որ սուրբ տաճար, հանդիպում է դիմացից եկող կայսեր ամբարիշտ և պիղծ հրոսակապետ[69] Գրյուլլոսին, որը հոգևորա-

կանի զգեստ էր հագել և էշ հեծել՝ իր ամբարշտագույն մետրոպոլիտների, իր ողջ թատերախմբի, սատիրների ոհմակի ու խմբի ուղեկցությամբ, որոնք իրենց արարքները գուսանների պես երգում էին։ Երբ մոտեցան [Իգնատիոսին], վեր բարձրացրին իրենց փիլոնները, ավելի բարձր հնչեցրին կիթառները և սուրբ երգի եղանակով սկսեցին պոռնկական խոսքեր արտասանել ու երգեր երգել, Պանի ու Սատիրոսի[70] պարեր պարել ու թմբկահարել, և հոգևորականներին ու քահանայապետին, որպես իրենց հակառակորդների, ծաղրուծանակի ենթարկելով, շարունակեցին իրենց սադայելական խմբապարն ու թափորը։ Աստուծո քահանայապետը հետաքրքրվեց, թե ովքե՞ր են սրանք, ո՞ւմ դրդմամբ և ի՞նչ առիթով էին հավաքվել և իմանալով, շատ խոր հառաչեց, ողբաց նրանց պարագլխին ու գլխավոր մեղավորին, արտասվալից պատեց աստծուն, որ վերջ տա նման ամբարշտության և խայտառակության, տարտարոս ուղարկի ամբարիշտներին, որպեսզի սրբությունները չպղծվեն, խորհուրդները ծաղրուծանակի չենթարկվեն, և շարունակելով շարականը, ճանապարհ բնկավ։

23. Մի ուրիշ անդամ էլ այս անմիտ և խելակորույս կայսրը իբրև թե երանելի պատրիարք Իգնատիոսին անարգելու, ինչպես և իր մորը[71] ծանակելու մտադրությամբ, այսպիսի մի բան մտահղացավ. նա պայծառագույն խրիստոտրիկլինում[72] կայսերական գահի վրա բազմեց և իրեն շատ մոտիկ, որպես իրական սլաստրիարքի, նստեցրեց քահանայապետական հանդերձանքը հագած ամենախայտառակ Գրյուլլոսին՝ ցուցաբերելով դեպի նա աստուծո քահանայապետին վայել պատիվներ։ Ապա գլխաշորով թաքցրեց [Գրյուլլոսի] գարշելի մորուքը և ներքինի սենեկապաններից մեկի միջոցով հայտնեց իր մորը, թե սրբազնագույն պատրիարք Իգնատիոսը այստեղ է՝ իր մոտ նստած և եթե ուղում ես արժանանալ նրա աղոթքին, ե՛կ և ինձ հետ միասին ստացիր։ Բարեպաշտ և աստվածասեր կինը, որ անչափ սեր և ջերմ հավատք էր տածում դեպի սրբազնագույն Իգնատիոսը, երբ լսեց այդ մասին, շտապեց այնտեղ։ Նա ամոթխածությունից չհանդգնեց նրա դեմքին նայել անգամ. ստորության մասին անտեղյակ, նա ընկավ, ինչպես ինքն էր կարծում, այդ սուրբ քահանայապետի ոտքերը և պազատեց աղոթել իր համար։ Իսկ ամենապիղծը աթոռից մի փոքր բարձրացավ, մեջքը շուռ տվեց կնոջը և գարշելի նստատեղից էշի զռռոց հանեց, ասելով նրան. թե, տիրուհի, հանկարծ

չասես, թե քեզ սրա՛ն էլ չարժանացրինք։ Կայսրը՝ ամենախայտառակը քահ-քահ արեց, մի կուշտ ծիծաղեց։ Նրանք երկուսով շատ հոհոացին, ավելի ճիշտ, խելքերը թոցրած հիմարություններ դուրս տվեցին։ Կայսրուհին հասկացավ խաբեությունն ու նենգությունը, խոր հառաչեց եղածի համար և բազում անեծք թափելով որդու գլխին, վերջը ասաց նրան. «ահա, չար որդի, աստված վերցրեց իր ձեռքը քո վրայից և տվեց քեզ անպետք ուղեղ, որպեսզի անվայել գործեր անես»։ Այդ ասելուց հետո լաց ու կոծով, մազերը փետելով հեռացավ։ Ահա այդ ազնվական կայսեր երեխայությունները, այսպիսին էր սրբությունների և սուրբ մարդկանց հանդեպ նրա ունեցած հարգանքն ու ակնածանքը։

24. Ամեն օր ահա նման և ավելի վատ բաների վրա էր նա իր թագավորության ժամանակը վատնում։ Վասիլին ընդունելուց և նրան բարձր դիրքի արժանացնելուց հետո էլ նա շարունակում էր նույնն անել։ Վասիլն իր տեսածից ու լսածից շատ էր դժգոհում ու տխրում, ուզում էր կյանքին վերջ տալ։ Ցանկանալով ամեն մի հնարավոր օգնություն ցուցաբերած լինել, հոգ տանելով բաց չթողնել որևէ հնարավորություն, որ կարող էր օգտակար լինել վիճակն ուղղելու, նա փորձեց ուրիշների միջոցով [կայսեր] հեռու պահել նման բաներից և ճիշտ ուղու վրա բերել, իսկ այնուհետև հանդգնեց նույնիսկ անձնապես, սեփական մղումով խոհեմորեն խրատել կայսեր, որպեսզի հնարավորին չափ հեռու պահեր նրան նման ամբարիշտ արարքներից։ Նա հեզ ու խոնարհ ձևով ասաց. «Ո՛վ տեր և կայսր. ես, որ արժանացել եմ քո այսքան բարերարություններին, պարգևներին, պարտավոր եմ զգում անհրաժեշտ խորհուրդը տալ, առաջարկել լավագույնը, հիշեցնել օգտակարի և փրկարարի մասին։ Ամբողջ քաղաքն ու սենատը ատում է մեզ, իմացիր, ո՛վ տեր, ատում է» (նա իրեն էլ [ատելիների] թվին էր դասում, թեև նրա հրեշավոր արարքներից և ոչ մեկի հետ առնչություն չուներ)։ «Աստուծո քահանայապետները անիծել են մեզ, բոլորը մեզ պախարակում են ու պարսավում։ Եթե մենք մի պահ կարող ենք մարդկային [երկյուղն] արհամարհել, բայց աստուծո ցասումից չենք կարող չսարսափել ու չերկյուղել, ե՛կ չփորձենք նրա զայրույթն ու բարկությունը»։ Բայց նրա խրատը քար ցանել էր, ծովի հետ խոսել և եթովպացուն սպիտակացնելու փորձ անել[73], որովհետև ստորությունը մինչև ուղն ու ծուծն էր ներծծվել։ Նա խուլ էր ամեն մի փրկարար խոս-

քի հանդեպ, փակել էր իր ականջները, ինչպես իժը՝ երգերի հանդեպ։ Նա ոչ միայն չփոխվեց, ընդհակառակը սկսեց ատել [Վասիլին], խորշել նրանից և իր նման սրիկա ընկերների հետ նրան պրպարտում էր ու ծաղրում, հասկացնել էր տալիս, որ ինքը սառել է [Վասիլից], մի բան, որ նա սկսեց բացահայտ ցույց տալ։ Ջազրելիներն ու ամբարտավանները, իմանալով իրերի դրության մասին, լարվեցին [Վասիլի] դեմ, հորինեցին մեղադրանքներ, իրենց թշնամանքը վարպետորեն քողարկելով. նրա համեստությունը քմաբարոյություն էին անվանում, հաճույքներին մասնակից չլինելը՝ թշնամանք, իսկ իրենց հետ չմեղսագործելը արհամարհանքի հետ կապեցին։ «Նա ինչպե՞ս կարող է քեզ սիրել, ասում էին նրանք կայսեր, եթե չի ուրախանում քո ուրախությամբ, եթե չի ուզում քեզ հաճույք պատճառած լինել»։ Կայսրը տեղի տվեց նրանց խոսքերի առաջ, հավատաց նրանց ասածին և որոշեց Վասիլին սպանել. նա այդ բանն իրականացնելու հարմար առիթ էր որոնում, բայց չէր դտնում։ Կայսրն այն աստիճան մոլեգին դարձավ, որ նույնիսկ որոշեց գաղտագողի սպանել նրան, և ոճրագործ հրոսակախմբից մի քանիսին, որոնց ամեն ինչ վրստահում էր, գրգեց, որ երբ դուրս գան որսի, գազանին նիզակահարելու պատրվակի տակ [Վասիլի] վրա նետեն նիզակը և սպանեն։ Պատմում են, որ մեկը այդպես էլ արեց, նրա վրա շպրտեց նիզակը, որը սակայն վրիպեց և կողքից անցնելով խրվեց գետնի մեջ, իսկ [նիզակը նետողի] ձին հանկարծակի սանձակոտոր լինելով սլացավ ու [հեծյալին] անդունդը գլորեց, որտեղ նա մահացավ[14]։ Պատմում են, որ նա մահամերձ վիճակում, թեև ուշացած, զղջաց իր արածը և ընկերներին պատվիրեց այդ անմեղ մարդու հանդեպ այլևս չհամարձակվեն որևէ ոճիր գործել, թե չէ իրենք էլ կարժանանան իր վախճանին։ Նա կանչեց մի բարեպաշտ մարդու և իր մինչ այդ գործած այլ մեղքերի ու անօրինությունների թվում խոստովանեց նաև այս մեկը։

25. Երբ կայսրը չկարողացավ նրան սպանելու որևէ առիթ կամ պատճառ գտնել, մի ուրիշ նենգ ու անօրեն քայլի դիմեց։ Նա որոշեց կայսերակից ունենալ և այդ ոճրագործ հրոսակախմբի անդամներից մեկին՝ Վասիլիկինոսին, մի թշվառական, պիղծ, կուրտ և ցոփ մարդու, ծագումով նիկոմիդացի, հետագայում երկիցս հյուպաքոսի աստիճանին արժանացած Կոստանդին Կապնոդենեսի եղբորը, այդ պատվին արժանացրեց։ Նա այն ժամանակ

ծառայում էր կայսերական տրիերայում որպես թիավար՝ [Միքայելն], ահա, այս տխրահռչակ Վասիլիկինոսի գլխին հոյակապ ու նախանձելի թագ գրեց, հագցրեց կայսերական փառավոր ծիրանին, ամբողջությամբ ոսկեթել քղամիդը, կարմիր, թանկագին քարերով ագուցված կոշիկներն ու կայսերական մյուս նշանակները[75], և ձեռքից բռնած ներկայացրեց սենատին՝ սպասավորելով նրան, ինչպես հնում ներոնը համբավավոր էրոսին և բառացի ասաց հետևյալը.

«Տեսե՛ք բոլորդ և հիացեք, միթե արժանի չէ՞ նա կայսր լինելու։ Նախ իր արտաքինն է կոչում իշխանության, ապա և թագը կարծես գլխի հետ մի մարմին է։ [Նրա] ամեն ինչը համապատասխանում է այդ պատվին։ Ինչքա՜ն ավելի նպատակահարմար է սրան դարձնեմ կայսր, քան թե Վասիլին»[76]։

Պալատականները նման բառերի ականատես և ականջալուր լինելով շփոթվեցին, ապշեցին խելակորույս կայսեր անխելքության և հիմարության վրա։ Չափ ու սահման չունեցող հարբեցողություն, անօրեն և զազրելի կենցաղավարություն խելագար էին դարձրել նրան և շարքից հանել։

26. Նրան բնորոշ էին ոչ միայն հաճույքների սիրահար Դիոնիսոսի[77] ուրախ, անհոգ, կնատ, անչափ փափկակյաց, խելքը կորցնելու աստիճան հարբեցողությամբ տարվելու. հատկությունները, Դիոնիսոսի, որին աշխատում էր նա նմանվել։ Նա միաժամանակ ուներ նաև էրիննիաների և Տիտանների[78] արյունռուշտ հատկանիշները. շատ հաճախ զվարճալի խնջույքը ողբերգությամբ էր վերջանում։ Գինուց և ուրախությունից հարբած նա անօրինաբար գլորվում էր ամեն տեսակ ամբարշտությունների մեջ։ Երբ նա գիտակցություն կորցնելու չափ հարբած էր լինում, ցնորվում էր այն աստիճան, որ սկսում էր ոճիրներ գործել, անմեղ մարդկանց դատապարտել հրեշային պատիժների և մահվան։ Նա հրամայում էր սպասավորներին, թե սրան ու նրան ձերբակալեցեք և հանձնեցեք գահճին, մի ուրիշի՝ աչքերը հանեցեք, մի այլի՝ ձեռքերն ու ոտքերը կտրեցեք, այս մեկին գլխատեցեք, մյուսին՝ ողջակեզ արեք։ Սպասավորները, գիտենալով, որ նա ցնորված վիճակում է վճիռներ արձակում, կալանավորում էին խնդրո առարկա մարդկանց, բայց վճիռն ի կատար չէին ածում։ Բայց հաճախ պատահում էր, որ նրանք [ձերբակալվածներից] որևէ մեկի հանդեպ վատ տրամադրված լինելով, օգտվում էին կայսեր հրամա-

նից և անմեղ մարդուն պատժում։ Սպասավորներն այնուհետև գիտակցությունը կորցրած այդ ողորմելի թշվառականին պառկեցնում էին թագավորական մահճին, և նա ստրկի նման հանձնվում էր մահվան հարևանին՝ քնին[79]։ Լուսաբացին, երբ արդեն գինու գոլորշիներն ու թանձր խավարը ցրվում էին նրա ուղեղից, նա վեր էր կենում, բայց երեկոյան տեղի ունեցածի մասին ոչինչ չէր հիշում։ Նա հաճախ ուզում էր տեսնել նրանց, որոնց իր հարբած ժամանակ մահվան էր դատապարտել։ Թիկնապահներից և սպասավորներից իմանալով նրանց հանդեպ իր ընդունած վճռի մասին, նա զղջում էր և հառաչում։ Լինում էին դեպքեր, երբ իր փնտրած մարդիկ գտնվում էին, բայց պատահում էր և այնպես, երբ իր անօրինությունների համար զղջալն ավելորդ էր, քանի որ դատապարտվածներից ոմանք արդեն մահապատժի էին ենթարկված։ Երբ նորից էր երեկոն վրա հասնում, նա մինչև ուշ գիշեր սաստիկ հարբում էր և կրկնվում էր նույն պատմությունը՝ չարագործություն և զազրագործություն։ Արդ, կա՞ արդյոք մեկը, ով անգամ քարե սիրտ ունենա, անզգամ լինի, որ լսելով այս բոլորի մասին չվրդովվի, նրա մեջ չբորբոքվի անմեղ տեղը զոհվողների վրեժն առնելու զգացմունքը. ինձ թվում է, որ աշխարհի ամենահեզ մարդն անգամ, Դավիթը[80], չէր դիմանա այդ տականքի այս աստիճան սանձարձակ հարբեցողությանը։ Չի կարելի մեծահոգի լինել ապշության և անզգամության հանդեպ։

27. Երբ կուտակված գրամը նման ձևով գրեթե ամբողջությամբ սպառվեց, անհրաժեշտություն առաջացավ առավել ևս ծանրացնել հարկատուների բեռը, բռնագրավել նրանց ունեցվածքը, որպեսզի կայսրը կառավարների, պոռնիկների և անառակ մարդկանց վրա ծախսելու միջոցներ ունենա։ Իր հոր՝ Թեոփիլոսի թողած և կայսերական գանձարանում պահվող ինը հարյուր յոթանասուն կենտինար[81] հնչուն ոսկին, չհաշված արծաթը, ապա և այդ բոլորի վրա իր մոր՝ Թեոդորայի ավելացրած երեսուն [կենտինարը], որով կլորացավ հազար կենտինարի գումարը, իր միահեծան իշխանության ոչ լրիվ տասնչորս տարվա ընթացքում ծախսեց ու շռայլեց։ Նրա մահից հետո ընդամենը երեք կենտինար[82] միայն գտնվեց։ Օվ ինչպե՞ս չէր ցամաքի այն, եթե անգամ դետի պես հոսեր, երբ այդպիսս անամոթաբար և անառակորեն այն յրիվ էր տրվում։ Քիլաս կոչված կառավարի որդուն մի անգամ ընդունելով, ամբողջ մի կենտինար նվիրեց։ Պատրիկ Հեմերիո-

սին, որին տգեղության պատճառով կայսրը խոզ էր անվանում (եթե նկատի առնենք նրա խոզավայել. աղտեղի կենցաղավարությունը, իսկապես որ արժանի էր նման ածականի), այն բանի համար, որ մի անդամ իր ներկայությամբ այնպես արտասովոր հայհոյել և փողոցայինի պես շաղակրատել էր, այն բանի համար, որ նա շիկնելու հատկություն բացարձակապես կորցրած, ոչ մի անամոթության առաջ կանգ չառավ և իր գարշելի նստատեղից անչափ ուժեղ որոտ բաց թողեց, այնքան ուժեղ ու սաստիկ, որ նույնիսկ հանգցրեց վառված ջահը, ահա այգ բոլորի համար նրան հիսուն լիտր[83] պարգև շնորհեց, կարծես նա հերակլյան ինչ որ սխրանք գործած լիներ: Նրա նմաններին էլ նա այգպես չափից դուրս պարգևներ էր տալիս: Եթե այգպես վարվեր զինվորների, [երկրի] պաշտպանների, արժանի մարդկանց նկատմամբ, եթե նա այդպիսի պատրաստակամություն ցուցաբերեր իրենց լավ գործերով աչքի ընկած մարդկանց նկատմամբ, կարելի էր դա մեծահոգության, առատաձեռնության, պատվասիրության արտահայտություն համարել: Բայց երբ դրամր անմիտ կերպով ցրիվ էր տրվում ժիմոսներին, կառավարներին, պարողներին, դազրախոսներին, շողոքորթներին և ամեն տեսակ աղտեղությամբ լի մարդկանց, իսկ կարևոր գործերի վրա մեկ օբոլոս[84] անգամ չէր ծախսվում, ապա դա ապացույց է շռայլության, հիմարության և ապշության: Երբ դրամն սպառվեց, ինչպես ասվեց, ստիպված սկսեցին տաճարները և բարեգործական հաստատությունները կողոպտել, նրանց ունեցվածքր հափշտակել: Իրենց հարստությամբ աչքի ընկնող բոլոր մարդիկ սպանվում էին ու կոտորվում: Այդ էր պատճառը, որ իշխանության գլուխ կանգնած բոլոր մեծամեծները և սենատի խելամիտ գործիչները համաձայնության գալով կայսերական ննջասենյակի պահապան զինվորների օգնությամբ սուրբ վկա Մամասի պալատում սպանում են [Միքայելին], նրան, ով այն աստիճան հարբած քուն էր մտել, որ իր սպանվելն անգամ չզգաց: Այնպես, ինչպես մարդիկ խուսափելով վտանգավոր բնությամբ օժտված կարիճների և իժերի խայթոցից, սպանում են նրանց, ահա այդպես էլ նրանք շտապեցին սպանել թունալի և ոճրագործ մարդկանց, քանի վերջիններիս կողմից հարված չեն ստացել և չեն սպանվել, համոզված լինելով, որ նրանցից վտանգ է սպառնում: Ահա նման վախճան ունեցավ նա, ով և՛ անձնական կյանքում, և՛ պետական գործերում զազրելի և կործանարար կյանք էր վարում, արժանի իր կենցաղավարության[85]:

28. Գերագույն իշխանությունն իսկույն ստանում է մինչև այգ երկրորդ տեղում գտնվող Վասիլը և պատվական սենատի, ստորագրյալ տագմանների, ամբողջ բանակի և քաղաքային ամբոխի կողմից միահեծան ինքնակալ հռչակվում[86], նա, որին նրանք մինչ այդ էլ ցանկանում էին և [աստծուց] աղերսում իրենց պաղատական աղոթքներով։ Նա հենց որ ստացավ միահեծան իշխանություն, ապավինեց աստծուն, պետության սանձերն էլ նրան հանձնեց, բառացիորեն ասելով հետևյալ աղոթքը. «Քրիստո՛ս, թագավո՛ր, ստանալով թագավորություն քո կամքով, քե՛զ եմ հանձնում այն և ինձ»։ Ապա անմիջապես կանչեց ամենաերևելի սենատորներին և աստիճանավորներին, նրանց ներկայությամբ բացեց կայսերական գանձարանը, որտեղ հսկայական գումարներից ոչինչ չէր մնացել, բացի այն երեք կենտինարից, որոնց մասին մի փոքր առաջ ասացի։ Կայսրը պահանջեց ծախսերի ցուցակը, որ գտնվում էր մի ծերունի ներքինու՝ պրոտոսպաթար Վասիլի մոտ, իմացավ, թե ինչի վրա են ծախսվել [դրամները] և այդ հարցը դրեց երևելիների քննարկմանը։ Նրանք միահամուռ կերպով պահանջեցին ետ գանձել և պետական գանձարանը վերադարձնել որոշ մարդկանց ապօրինի կերպով ստացած գումարները, բայց կայսրը ծայրահեղության չդիմեց, հրամայեց, որ յուրաքանչյուրը սլետական գանձարանը վերադարձնի իր ստացած գումարի կեսը։ Այդպիսով նրանք թեև բոլորովին արժանի չէին որևէ զիջողության, ստացած պարգևներից ահագին բան այնուամենայնիվ իրենց մնաց. կայսերական գանձարանը մուտք գործեց երեք հարյուր կենտինար, որոնք կայսրը սկսեց տնօրինել և ծախսել հրատապ և անհրաժեշտ միջոցառումների վրա։

29. Այն օրվանից, երբ Վասիլը տիրացավ միահեծան իշխանության, հռոմեական պետության գործերը շրջվեցին դեպի լավը, թագավորանիստ քաղաքը հասան բազմաթիվ հաղթանակների ավետիսներ, ավետիսներ բազում ռազմագերիների փրկության մասին, և գա վկայությունն էր այդ բանի աստվածահաճո լինելու մասին։ Կայսրը թափորով գնաց աստվածային իմաստության մեծ տաճարը[87], գոհություն հայտնեց ամեն ինչի համար, իսկ վերադարձին հպատակներին առատ գրամ բաժանեց, բայց ոչ պետական գումարներից (այդպիսիք չկային), այլ իր սեփական, որ նախապես ուներ։ Նրա կինը՝ կայսրուհի Եվդոկիան, որդիներով՝ Կոստանդնի և Լևոնի հետ նույնպես իր սեփական գումարներից

բազում դրամ նվիրեց բոլոր քաղաքացիներին, թեև այն ժամանակ էլ դեռ կայսրը, ինչպես ասվեց, դրամի պակասություն էր ղգում։ Իր իշխանության օրոք աստուծո օգնությամբ նա ձեռք բերեց և այլ շատ դրամ, ի ողորմություն չքավորների և արդարության։ Իդիկոնում[88] էլ ոսկի հայտնաբերվեց, որ գոյացել էր նախկին կայսր Միքայելի՝ արվեստի լավագույն գործերը հալել տալուց, ես նկատի ունեմ ոսկե սոսին, ոսկեձույլ երկու գրիփոնները, կոփած ոսկե երկու առյուծները, ոսկեձույլ օրգանոնը, ապա և սեղանի զանազան ոսկե առարկաները, կայսերական և օգոստոսական զգեստները, մեծամեծ իշխանների հանգերձները, որոնք բոլորը ոսկե [թելերով] էին գործված։ [Միքայելը] այդ բոլորը հալել էր տվել, ինչպես ասվեց, և մտադիր էր իր զվարճությունների վրա ծախսել։ Բայց ավելի շուտ նա մեջտեղից վերացավ և ոսկին լույս աշխարհ եկավ։ Դրանից դրամ հատեցին կայսեր ամեն տեսակի ծախսերը ծածկելու համար։ Փող է պետք[89], ասում է, առանց փողի ոչ մի անհրաժեշտ բան չես կարող անել։ Այդ մասին կասեմ հետո։

30. Երբ աստվածային նախախնամությամբ Վասիլը իր ձեռքը վերցրեց իշխանության ղեկը, ինչպես պատմում են, իսկույն ջանաց ցույց տալ, թե արժանի է այդ բարձր պատվին. նա գիշերցերեկ մի բանի մասին էր մտածում, այն, որպեսզի իր բոլոր հպատակների համար որևէ բարեգործություն անի, որպեսզի պետական գործերը զգալիորեն, արմատապես բարեփոխվեն։ Ամենից առաջ նա անկաշառորեն ընտրեց և ղեկավար պաշտոնների նշանակեց իր նման լավագույն մարդկանց, որոնք, լինելով այդպիսիք, ապա և գիտենալով, որ գտնվում են կայսեր մշտական ուշադրության կենտրոնում, առաջին հերթին մտահոգվեցին ու ձգտեցին սեփական ձեռքերը մաքուր պահել[90], ամեն տեսակ չարաշահումից հեռու մնալ, ապա և բոլոր առաքինություններից ավելի արդարությունն ապահովել, ամենուրեք հավասարությունը պաշտպանել, հարուստների կողմից չքավորներին չճնշելն ապահովել, անարդարացի կերպով որևէ մեկին չվնասել, աղքատին ու չքավորին ուժեղից պաշտպանել, մի քիչ շունչ քաշել տալ նրանց, ովքեր այնքան փորձանքների էին հանդիպել, որ արդեն հոգեվարքի մեջ էին և մահվան եզրին, նոր ուժ տալ նրանց, և աշխատել, որ բոլորը ձեռք բերեն վաղեմի բարեկեցիկ կյանքը։ Նրանց հենց սկզբից ձեռնարկած դրական գործունեության (բոլոր

ընտրվածները այդպես լավն էին), կայսեր այդ հարցում ցուցաբերած ջանասիրության և աչալրջության պատճառով, ապա և այն պատճառով, որ նրանք աշխատում էին ամեն ինչում միմյանց գերազանցել, ամենուրեք իսկույն իսպառ վերացավ անարդարություններ, [տիրեց] բացարձակ արդարություն, և անցյալում Բրիարեոսի[91] ձեռքերից էլ երկար ձեռքերը, որոնք ձգվում էին ուրիշի ունեցվածքի վրա, թմրեցին ու կարծես կարճացան. աղքատների թուլացած անդամները նոր լիցք ստացան, քանզի յուրաքանչյուրը կարողացավ աներկյուղ մշակել իր հողակտորը, պտուղներ ստանալ իր ալգուց, նաև ոյակենական ձիթենուց, թզենուց առանց վախենալու, թե որևէ մեկը կարող է սեփականացնել այդ յուրաքանչյուրը հնարավորություն ստացավ իր սեփական, պապենական այդ [ծառերի] ստվերի տակ հանգստանալ: Բարեպաշտ կայսրը նման վիճակ ստեղծեց իր տիրապետության տակ ապրող հպատակ բոլոր մարդկանց համար, լինեն նրանք գյուղացի, թե քաղաքացի: Եվ եթե որևէ տեղ գտնվում էր գեռ ինչ-որ չարության ծառ, որ այնքան ամուր էր կանգնած, որ տեղական իշխանությունները ի վիճակի չէին ուղղել կամ արմատախիլ անել, կայսրն անձնապես կամ ուղղում էր այն, կամ որևէ ձևով բուժում: Գերագույն տերը, նպատակ ունենալով ամեն տեղից բնաջինջ անել անարդարությունը, օրենքներ հրապարակեց ու ամբողջ երկրով մեկ տարածեց և ժամանակի ընթացքում սովորություն դարձած կաշառակերությունն արմատախիլ արեց ու վերացրեց: Երկրից արտաքսված իրավահավասարությունը և արդարությունը վերադարձան և սկսեցին գործել կյանքում ու մարդկանց մեջ:

31. Համոզմունքներով ու սկզբունքներով բարեպաշտ և անկաշառ, ապա և փորձառու դատավորներին, որոնք ստիպված էին իրենց գոյության միջոցները հայթայթել դասեր տալով, ամենացածր աստիճանից բարձրացրեց, տվեց ամենամյա ռոճիկ, ուտեստ և նրանց հաստատեց գրեթե ամեն մի փողոցում և յուրաքանչյուր բարեպաշտ հիմնարկության մեջ: Կայսրը հոգնաջան աշխատանքով և մեծ ծախսերով մաքրեց, վերանորոգեց հռչակավոր և զարմանահրաշ Խալկե[92] կոչվող շենքը, որը երկար ժամանակի բեռից, ապա և իշխողների անտարբերության, գուցե և հրձիգության պատճառով բաղում տեղերից փուլ էր եկել և առաստաղը տուժել. այն դարձրեց քաղաքացիական դատարան, ավելի հեղինակավոր, քան եղել են Արիոպագոսն ու Հելիեյան[93]: Անարդարու-

թյան զոհերին նա արդարության պտուղները վայելել տվեց ոչ միայն ընտրյալ դատավորներին կյանքի կոչելով և պաշտոններ տալով, այլև հանապազօրյա ուտեստ մատակարարելով այն [խեղճերին], ովքեր ուժեղների բռնությունների հետևանքով ստիպված էին լինում շարունակ մայրաքաղաք գալ։ [Կայսրը] երկյուղելով, որ բողոքարկողներից ոմանք ուտեստեղենի պակասություն զգալով կթողնեն կհեռանան մայրաքաղաքից, նախքան իրենց հարցը դատարանում կլսվեր, բավարար միջոցներ առանձնացրեց կերակրելու համար նրանց այնքան ժամանակ, քանի դեռ չի կայացել դատավորի որոշումը։ Եվ դա դեռ բոլորը չէր։ Նա որոշեց մեկընդմիշտ արմատախիլ անել անարդարությունը և անձամբ ձեռնարկեց այդ գործը։ Երբ նա արշավանքներից և կամ ղանազան երկրներից ժամանող դեսպանությունների հետ զբաղվելուց ազատ ժամանակ էր գտնում, դուրս էր գալիս պալատից և գնում այսպես կոչված Գենիկոնը[94], որտեղ էին դիմում ամեն տեղից եկած մարդիկ, [բողոքելու] իրենց պաշտոնը չարաշահող և անարդարություն գործող պետական հարկահավաքների դեմ։ Այդ դատարանը նման էր հասարակաց պրիտանեյոնի[95], որտեղ էին դիմում մարդիկ իրենց անձնական գործերով։ [Կայսրն] այստեղ մեծ ջանասիրությամբ ու անչափ հոգատարությամբ քննում էր հարցերը, պաշտպանում անարդարության զոհերին, պաշտոնազրկում անարդարություն գործողներին, և դա արդարացի պատիժ էր, որպեսզի մեկ էլ չհամարձակվեն նման բաներ թույլ տալ։ Պատմում են, որ տարիներ անց [կայսրը] նման գործով գնացել էր [դատարան] ի պաշտպանություն անարդարության զոհերի. [Դատարանում] չկար և ոչ մի բողոքարկող։ Ենթադրելով, որ մարդիկ քաշվում են իր մոտ գալ, թիկնապահներին քաղաքի զանազան կողմերն ուղարկեց հարցնելու, կա՞ արդյոք որևէ բողոք ունեցող մարդ։ Նրանք վերադարձան ասելով, որ ոչ մի բողոքող չգտան։ Պատմում են, որ ազնիվ [կայսրը] արտասվեց ուրախությունից և գոհանամ ասաց աստծուն։ Տեսնելով, որ նենգ մարդկանց համար, այնուամենայնիվ, անարդարություն գործելու մի դուռ բաց է մնացել, այն, որ հարկերի գանձման ժամանակ տեղ շահելու պատրվակի տակ գործածում են հին [հարկա]ցուցակները, որտեղ ամբողջի մասերը և մասնիկները, այն է կեսը, վեցերորդ և տասներկուերորդ մասերը նշված են նիշերով, նա որոշեց անարդարության այդ դուռն էլ փակել և հրամայեց [նոր] հարկացուցակներ կազմել, որտեղ հարկի գումարը գրված լինի

պարզ, տառերով, այնքան պարզ, որ գյուղացիների համար էլ ընթեռնելի լինի, ոչ թե նիշերով, այլ լրիվ։ Այդ առթիվ նա կարգագրեց, որ [նոր հարկացուցակների] թղթի, գրության և գրիչների ծախսը իր սեփական միջոցներից տրվի՝ չքավորներին չծանրաբեռնելու համար։ Հպատակների հանդեպ նրա ունեցած անհուն հոգատարության վկայությունն այն էր, որ նա չէր ուզում, որպեսզի մեկը մյուսին ճնշի։ Ահա այսպիսին էր [Վասիլը] քաղաքական և պետական գործերում։

32. Նա չուզեց անուշադիր լինել նաև աստուծո եկեղեցիների հանդեպ (եկեղեցիներն էլ այնուամենայնիվ աշխարհիկ նավի մեջ գտնվելով, ինքնակալի տնօրինության տակ են, իսկ վերջինս շատ աստվածասեր էր ու աստվածավախ)։ Նա տեսավ, որ եկեղեցին էլ ալեկոծության ու շփոթման մեջ է, նա էլ մասնակից էր դարձել նախկին իշխողի ժամանակ տիրող ընդհանուր ապականության, նրա օրինավոր պետր վտարվել էր իր աթոռից և հոտից, նրա փոխարեն ուրիշն էր նշանակվել։ [Վասիլը] այդ հարցում էլ չզլացավ, ողջ երկրի աստուծո քահանայապետերի ընդհանուր ժողով գումարեց և հնարավորության սահմաններում դադարեցրեց ալեկոծությունը, օրինականացրեց նախորդ՝ յոթերորդ սուրբ ժողովը[96], դեռևս իրենց գոյությունը պահպանող պատկերամարտ հերետիկոսներին նզովքի ենթարկեց և կանոնական կերպով եկեղեցուն շնորհեց իսկական փեսային, որդիներին՝ հորր. [պատրիարքին]։ Նա պաշտոնանկ արեց[97] այնքան ժամանակով, քանի նորընտրին տերր չի կանչել։ Ահա այսպես նա բարեհաջող կերպով կարգավորեց եկեղեցու գործերր և իր ջանասիրությամբ ու հոգատարությամբ հնարավոր անդորրը հաստատեց այնտեղ։

33. Քաղաքացիական օրենքներն էլ նա գտավ անորոշությամբ ու խառնաշփոթությամբ լի, լավն ու վատր իրար խառնած, մի տեղ կողք-կողքի էին բերված գործող և ուժը կորցրած օրենքներր։ Ահա այստեղ էլ նա անհրաժեշտ կարգ ու կանոնը հաստատեց, չեղյալ հայտարարեց ուժր կորցրած [օրենքներր], գործող բազմաթիվ [օրենքներ] բարեփոխեց և պետք եղած օրենքր գրքում ավելի դյուրին գտնելու համար, ինչպես սինոպսիսում, առանձին գլուխների բաժանեց և վերացրեց նախկին խառնաշփոթությունը[98]։

34. Բայց լավի կողքին միշտ նախանձն է բուսնում, ինչպես որ քաղցր փայտի մեջ աճում է որդը, Երկրի բարօրությանը նախանձող չար ոգիները նենգ մարդկանց միջոցով փորձում են խանգարել լավի ընթացքը։ Նման մարդիկ՝ այն է Սմբատն ու Գեորգիոսը[99], դավադրություն են նյութում [կայսեր] կյանքի դեմ՝ ստոր և ամբարիշտ մարդկանց խմբով։ Բայց քանի որ աստված բացարձակապես չէր ուզում թույլ տալ, ոչ էլ հանդուրժում էր, որ վատությունը իր կրած պարտությունից դուրս գալու համար նույնիսկ կարճ ժամանակով փորձ անի մարտնչել և երկրից վերացնել օրինականությունն ու արդարությունը, նենգ ծրագրերը բացահայտվում են դավադիրներից մեկի միջոցով։ Նրանք դատի տրվեցին և օրենքով դատապարտվեցին պատժի առավելագույն չափին, այն է՝ լիակատար պաշտոնազրկման, ամբողջ ունեցվածքի բռնագրավման ու մահապատժի։ Բայց ազնիվ կայսեր մարդասիրությամբ ստոր դավադրության մասնակիցները դատապարտվեցին միայն կուրացման. կայսրը նրանց ունեցվածքի մի մասը միայն կբռնագրավեր, եթե համոզված լիներ, որ նման չափազանց մարդասիրական վերաբերմունքը պատճառ չի դառնա ուրիշներին էլ գնալու նրանց ճանապարհով, երբ արդեն նա ստիպված կլիներ դիմելու ավելի ծայրահեղ միջոցների։ Դրա համար վերոհիշյալ պատիժը սահմանելով նա դավադիրներին հնարավորություն տվեց զղջման գալու, իսկ մնացած ստոր մարդկանց՝ խելքի։ Անարդարորեն ուրիշի կյանքի դեմ ձեռք բարձրացնել ցանկացողների թափը կոտրելու և նրանց բոլոր հույսերը ի դերև հանելու նպատակով [Վասիլը] կայսեր աստիճանի է բարձրացնում [իր] ավագագույն որդիներին՝ Կոստանդինին և Լևոնին[100], որոնք արդեն արքային վայել կրթություն ու դաստիարակություն էին ստանում և աչքի էին ընկնում իշխելու կարողություններով։ Դրանով նա կարծես իշխանությունն ամրապնդեց բազում ու ամուր արմատներով, որոնց վրա աճեցրեց թագավորության ազնվազարմ ծառը։

35. Քանի որ շարադրանքս այս ուղղությամբ գնաց, ապա ցանկանում եմ խոսել նրա մյուս երեխաների մասին ևս, [պատմել], թե ինչպես նա յուրաքանչյուրի նկատմամբ անհրաժեշտ հոգատարություն ցուցաբերեց։ Աստված [Վասիլին] տվեց ավելի շատ և լավ երեխաներ, քան հնում ունենում էին բարեպաշտ և երանելի մարդիկ։ Փոքր անց նա կայսերական թագը կապում է

Նաև երրորդ որդու՝ Ալեքսանդրի գլխին, իսկ կրտսերագույն որդուն Նվիրում աստծուն[101], ինչպես Աբրահամը Իսահակին, [հոգևորականի] դարձնելով և ընծայարերելով աստծու եկեղեցուն։ Դուստրերին, որոնք թվով հավասար էին որդիներին, հռչակավոր վկա Եվփեմիայի սուրբ վանքին է ընծայաբերում, որպես ցանկալի նվեր և ընծա հանձնում աստծուն, ղարդարելով անմահ փեսա Քրիստոսի[102] անարատ և անբիծ կույս հարսնացուների սքեմով և հանդերձանքով։ Այս բոլորը թեպետև տեղի ունեցան հետագայում, բայց թող այստեղ ասվի դրանց մասին. ինչպես որ նրանք իրենց չորս եղբայրների հետ բնական կապ ունեն, ապա և տվյալ պատմության մեջ թող միասին հանդես գան։

36. Երբ ներքին գործերն արդեն բարեհաջող վիճակում էին, քարեպաշտ և աստվածահաճո ձևով [տնօրինված], բոլորի նկատմամբ ունեցած ջերմեռանդ հոգատարությունը նրան դրդեց գնալ արտասահմանյան արշավանքների, որպեսզի իր անձնական ջանքերով, արիությամբ ու քաջագործությամբ ընդարձակի պետության սահմանները, հեռացնի և վտարի թշնամուն։ Ահա այս հարցում էլ նա չզլացավ. նախ և առաջ նոր զորահավաք հայտարարեց, և [զինվորների] ընտրություն կատարեց, անհրաժեշտ միջոցներ առանձնացնելով հզոր բանակ կազմեց, որովհետև նախկին բանակի կազմը նվազել էր պարգևատրումների, ռոճիկի և թագավորական ուտեստի կրճատմսն պատճառով։ Այնուհեաև [այդ բանակը] նա մարզեց ռազմագիտական ձեռնարկներով[103], հոգնաջան աշխատանքով պատերազմական գործերում փորձառու դարձրեց, սովորեցրեց լինել ծայր աստիճան կարգապահ և հնազանդ։ Եվ ահա այդ զորքով նա արշավեց բարբարոսների դեմ՝ հանուն ցեղակիցների, ազգակիցների և հպատակների։ Նա գիտեր, որ առանց սովորելու մարդ չի կարող ամենաբիրտ ու կոպիտ արհեստներին անգամ տիրապետել, առանց ուսուցչի նույնիսկ կոշկակար հնարավոր չէ դառնալ, խոսք լինել իհարկե չի կարող ավելի կարևոր արհեստներին տիրապետելու մասին։ Եթե սոսկ ցանկությամբ, առանց սովորելու և մեծ փորձ ձեռք բերելու հնարավոր լիներ տիրապետել պատերազմական գիտությանն ու արվեստին, ապա պետք է ընդունել, որ անխելք էին և դատարկաբանությամբ զբաղվեցին նրանք, ովքեր մանրամասն ուսումնասիրություններ դրեցին պատերազմական արվեստի մասին. անթիվ անհամար հաղթական դափնիներ նվաճած մեծագույն կայսրերից ու զորավար-

ներից և ոչ մեկը չհամարձակվեց տդետ ու անփորձ ղորքով թշնամու վրա հարձակվել: Ջսովորողը չի կարող որևէ բան գիտենալ, ոչ էլ անվարժն ու չմարզվածը մարտի դուրս գալ: Դրա համար ահա ազնիվ [կայսրը] ղորամասերը նախապես մարզեց և համալրեց, նորակոչիկներին տեղաբաշխեց հին զորքի մեջ և անհրաժեշտ միջոցների հատկացմամբ ու նվիրատվություններով ամրապնդեց նրանց մկանները, հզորացրեց նրանց աջը, և նրանցով հարձակվեց թշնամիների վրա և բազում հաջողություններ և բյուր հաղթանակներ ձեռք բերեց: Այժմ ես այդ մասին համառոտակի կպատմեմ:

37. Ահա կարգի բերելով քաղաքի գործերը և ազատվելով այլ հոգսերից, գարնան սկզբին նա զինվեց և գլխավորեց բանակը, ցանկանալով որպես իսկական արքա հարազատ ժողովրդի համար իրեն վտանգների ենթարկել. նա կամովին իր վրա վերցրեց տառապանքների ու չարչարանքների բեռը՝ հպատակ ժողովրդի անվտանգության համար: Այն ժամանակները Տեֆրիկեի[104] առաջնորդը, որին Խրիսոքիր էին անվանում, իրեն քաջ ու խոհեմ մարդ համարելով, դաժան փորձությունների էր ենթարկում հռոմայեցիների երկիրն ու մարդկանց, ամեն օր գերեվարում բազում գյուղացիների[105] և այդ առթիվ անչափ փքվել էր ու գոռոզացել: Ահա այդ փքվածն ու ամբարտավանը չհամարձակվեց բացահայտ գիմադրել իր վրա արշավող քաջ զորքին, դիմադրել խիզախ ու խոհեմ կայսեր: Նա նահանջեց, մտադիր լինելով պաշտպանել և ամրացնել իր քաղաքր միայն: Կայսրր ոչ մի խոչընդոտի չհանդիպելով, ասպատակեց, գրավեց, ավերեց ու հրկիզեց Խրիսոքիրին ենթակա բոլոր շրջանները և գյուղաքաղաքները, ձեռք բերեց անհամար ավար ու գերիներ: Նա հարձակվեց հենց Տեֆրիկե քաղաքի վրա, փորձեց նետաձգությամբ ու ոչ երկարատև պաշարմամբ գրավել այն: Բայց ավելի երկարատև պաշարման մտքից նա հրաժարվեց, որովհետև համոզվեց, որ դժվար է [քաղաքը] գրավել, պարիսպներն ամուր էին, [պաշտպանվող] բարբարոսներն անթիվ, ապա նաև առատ պարենով ապահովված: Այդ բոլորից բացի իր մեծաքանակ զորքը կարճ ժամանակվա ընթացքում շրջանն ամբողջությամբ ամայացրել էր, և ողջ պարենր գրեթե ըսպառել: Վասիլը ավերակ դարձրեց Տեֆրիկեի շուրջ փտնվող Աբարա, Սպաթե[106] և մի քանի այլ ամրոցներ և վերցնելով իր ոչ մի կորուստ չկրած ամբողջ զորքն ու ձեռք բերած մեծաքանակ ավարն ու գերիներին, որոնց մասին խոսք եղավ վերևում, վերադարձավ[107]:

38. Իսմայելացիների[108] Տարանտա[109] կոչված մյուս քաղաքը, Տեֆրիկեի մեծ կոտորածը տեսնելով, դեսպաններ ուղարկեց [կայսեր մոտ] խաղաղություն աղերսելով և առաջարկելով դաշնակցել նրա հետ: Ամենահզոր կայսրը ինչքան որ դիմադրություն ցույց տվողների հանդեպ խիզախություն էր ցուցաբերում, այնքան էլ զիջողականություն՝ ենթարկվողներին: Նա ընդառաջեց դեսպաններին, խաղաղություն խնդրողներին խաղաղություն շնորհեց և նրանց այսուհետև թշնամիներից դաշնակից դարձրեց: Այդ բանից հետո շատերը, այդ թվում և Կուրտիկ[110] անունով մի հայ, որն այն ժամանակ տիրում էր Լոկանային[111] և շարունակ ասպատակում էր հռոմեական երկրի ծայրագույն շրջանները, դիմեց կայսեր, նրան հանձնեց իր քաղաքը, զենքերը և իր ժողովրդին, հպատակվեց ինքնակալին. նա հիացել էր քաջ, միաժամանակ բարի, հզոր, բայց նույն ժամանակ արդար կայսեր վրա:

39. Քանի դեռ թշնամիներն իրենց ուշադրությունը սևեռել էին կայսեր վրա, սպասելով տեսնել, թե ո՞ր կողմից կհարձակվի նա, որպեսզի այդ, վտանգի ենթարկված կողմը պաշտպանեն, [կայսրը] Զապետրա[112] կոչված քաղաքի դեմ ընտիր զինվորների մի խումբ է ուղարկում: Վերջիններս փութանակի անցնելով ճանապարհի նեղանցքներով, հարձակվում են քաղաքի վրա և դրոհով վերցնում այն, շատերին տեղում կոտորում, ձեռք բերում բազում գերիներ և մեծ ավար, ազատում երկար ժամանակ բանտերում արգելափակված մարդկանց: Այնուհետև նրանք հրի են մատնում Ճանապարհին ընկած շրջանները, ավերում Սամոսատը[113] և նույն թափով անցնում Եփրատ դետը. իրենց ոչ ոք չփորձեց դիմադրել, որովհետև կայսրը նրանց պաշարման մեջ էր պահում: Ձեռք բերելով բազում գերիներ, նրանք վերադարձան ինքնակալի մոտ, որ դեռ գտնվում էր Զարնուխ գետի[114] մոտ, այնտեղ, որտեղ Կերամիսիոնն[115] է գտնվում: Թվում էր, թե նա ոչ մի բանի անձնապես չէր մասնակցում, բայց ամեն ինչ կատարվում էր նրա գերիմաստուն ղեկավարությամբ:

40. Կայսրն ամբողջ զորքով դուրս է գալիս այնտեղից և շարժվում Մելիտենեի[116] վրա: Ամառ ժամանակ հասնելով Եփրատի ափը, տեսնում է, որ գետը հորդել է ու ծովացել: Նա վախկոտություն, իր զորքի համար անարժան համարեց նստել, սպասել,

որ գետը խաղաղվի և որոշեց կամրջել այն, շտապեց այդ գործը գլուխ բերելու անհրաժեշտ պատրաստություն տեսնել։ Ցանկանալով այդ դժվարին գործում ոգևորել զինվորներին, որպեսզի նրանք դյուրությամբ տանեն դժվարությունները, ապա և իրեն կոփելու համար, որպեսզի անակնկալ փորձության հանդիպելու դեպքում չշփոթվի և անփորձ չերևա, զինվորների հետ միասին եռանդով գործի լծվեց և իր ուսերի վրա դեպի կամուրջն էր կրում ամենից ծանր բեռները։ Այնտեղ կարելի էր տեսնել, թե ինչպես նույն ծանրության բեռը, որ կայսրը իր ուսերի վրա հեշտությամբ էր կրում, երեք զինվոր հազիվ կարողանում էին տանել։ Ահա այսպես անցնելով Եփրատը, իսկույն գրավեց Ռապսակիոն[117] կոչված ամրոցը։ Նա Խաղտիքի ու Կոլոնիայի [բանակաթեմերի] զորքերին հատուկ հրաման տվեց՝ ասպատակել Եփրատ և Արսինոս[118] գետերի միջև ընկած շրջանները և այդ զորքերի օգնությամբ բազում ավար ու գերիներ ձեռք բերեց, գրավեց Կուրտիկիոսի, Խախոն, Ամեր, Մուրինիքս և Աբդելա[119] ամրոցները։ Ինքն անձամբ Մելիտենեի վրա հարձակվեց, որտեղ բարբարոսների և զինվորների հսկայական բազմություն կար, որոնք բարբարոսական աղաղակներով ու գոչյուններով քաղաքի առջև նրան դիմադրություն ցույց տվեցին։ [Կայսրը] հենց այնտեղ ցուցաբերեց իր անձնական առաքինությունները. նրա հմտության ու քաջության վրա շատ հիացան ոչ միայն իր զինվորները, այլև թշնամիները. նա խոհեմորեն ու արիությամբ թշնամիների դեմ մարտի բռնվեց, ձեռնամարտում աչքի ընկավ իր քաջությամբ ու համարձակությամբ, վտանգավոր պահին հանդես բերեց պաղարյունություն ու անվեհերություն, առաջինն ինքը իր դեմ գտնվողներին փախուստի մատնեց ու գլխովին կոտորեց։ Իր զինվորները նույն ձևով յուրաքանչյուրն իր դեմ գտնվողներին կոտորելով հալածեցին մինչև քաղաքը։ Քաղաքի առջև գտնվող դաշտում փռվեցին բազում դիակներ, պարիսպների առջևից հոսող առուն կարմիր ներկվեց, շատերը գերի վերցվեցին, ուրիշները վախից անձնատուր եղան, իսկ մնացածներն էլ փակվեցին քաղաքում և ամենևին չէին մտածում դուրս գալ։ Այստեղ կայսրը մտածում էր բաբաններ, ամեն տեսակի պաշարողական մեքենաներ բերել և պաշարողական գործում քաջություն ու կորով ցուցաբերել, բայց տեսավ, որ քաղաքը ամուր պարիսպներով է շրջափակված, պարիսպների վրա պաշտպանվողների մեծ բազմություն կա և հոմոզվեց, որ դժվար է գրավել քաղաքը. բացի այդ, նա դասալիք-

ներից տեղեկացավ, որ [քաղաքը] ապահովված է նաև առատ պարենով, որ չի վախենում երկարատև պաշարումից, դրա վրա ահա նա շարժվեց այնտեղից[120] ու հարձակվեց մանիքեցիների[12] երկրի վրա: Նա կտրատեց այդ [երկրի] ծառերը, հրկիզեց տները և ամեն ինչ ավերեց. հրի մատնեց և գետնին հավասարեցրեց նրանց Արգաուբ[122] կոչված ամրոցը, ապա նաև Կուտակիոն, Ստեփանոս և Ռախատ[123] կոչվածները, որից հետո իր զինվորներին առատ պարգևներ տվեց, յուրաքանչյուր աչքի րնկածին պարգևատրեց և մեծ ավարով ու հաղթական դափնիներով թագավորանիստ քաղաքը վերադարձավ: Նա մուտք գործեց Ոսկե դարպասով[124], ինչպես հնում մեծափառ Հռոմի ինքնակալները հաղթարշավ կազմակերպելիս. րնդունելով դեմոսի[125] հաղթական կոչերն ու բարեմաղթություններր, անհապաղ, հենց ճանապարհից նա գնաց աստվածային իմաստության մեծ տաճարը[126] աղոթելու և [աստծուն] գոհություն .հայտնելու: Նա [այնտեղ] հաղթական պսակով պսակվեց ժամանակի պատրիարքի[127] կողմից, որից հետո գնաց պալատ:

41. Նորից են կլանում նրան պետական հոգսերը՝ տարբեր ժողովուրդների մոտից ժամանած դեսպանությունների րնդունման հարցերը: Մի փոքր վայելելով իր երեխաների և կնոջ մոտ լինելու հաճույքը և շրջելով քաղաքում գտնվող սուրբ տաճարներն ու աղոթելով, նա նորից է լծվում հանապազօրյա քաղաքական և դատական գործերին՝ ցուցաբերելով իր հպատակների հանդեպ ունեցած խնամքն ու անսահման հոգատարությունր: Նա առանց զլանալու ամեն օր դնում էր սուրբ և աստվածային տաճարր և աղերսում տիրոջ՝ Միքայել հրեշտակապետին և նրա մարդարեին աստուծո միջնորդներ վկայակոչելով, որ չվախճանվի քանի դեռ չի տեսել Խրիստոքիրի կործանումր և նրա պիղծ գլխին չի գալել երեք նետ: Ինչ որ կատարվեց հետագայում: Վերոհիշյալ Խրիստոքիրր հաջորդ տարին ներխուժեց հռոմայեցիների երկիրը և ըսկըսեց ասպատակել այն: Ընդունված կարգի համաձայն կայսրր նրա դեմ է ուղարկում սխոլերի դոմեստիկոսին[128]: Նա իր հետ վերցրեց հռոմեական ողջ զորքր, բայց որովհետև վախենում էր [Խրիստոքիրի] հետ բացահայտ, ճակատ առ ճակատ մարտի բռնվել, հռոմեական զորքերով առայժմ հետևում էր նրան որոշ հեռավորության վրա, մասնակի հարձակումներ գործում նրա վրա և հնարավորություն չէր տալիս [Խրիստոքիրին] աներկյուղ տարած-

վել երկրով մեկ։ Բարբարոսը մեկ գործի էր անցնում, մեկ հանգիստ մնում, բայց վերջը, քանի որ այգ բանին էր ստիպում նաև ժամանակը, որոշեց իր երկիրը վերադառնալ։ Մեծ ավարով նա իր երկիրն էր շտապում, երբ սխոլերի գոմեստիկոսը երկու զորավարների կարգադրեց, այն է Խարսիանոնի և Արմենիակների [բանակաթեմի], որ յուրաքանչյուրն իր զորամասով հետևեն և հետապնդեն Խրիսոքիրին մինչև Վաթիռիաքս[129]։ Եթե նա այնտեղից հռոմեական սահմանների վրա զորք նետի, ապա այդ մասին հայտնեն գոմեստիկոսին, իսկ եթե ուղիղ շարժվի և մուտք գործի իր որջը, թողնեն և իսկույն իր մոտ վերադառնան։ (42). Բարբարոսական զորքը երեկոյան մոտ հասավ Վաթիռիաքս և ճամբարեց լեռան ստորոտում. հռոմայեցի զորավարները դիրքեր գրավեցին այդ վայրի բարձունքներում։ Այն ժամանակ, երբ վերջիններս մտածում էին իրենց անելիքի շուրջը, երկու բանակաթեմների զինվորների, տաքսիարքոսների[130] և լոխագոսների[131] միջև վեճ է ծագում՝ առաջնության շուրջը։ Խարսիանոնցիք իրենց էին վերագրում քաջության մենաշնորհը, իսկ արմենիակները չէին ուզում նրանց զիջել ռազմական արիության առաջնությունը։ Վեճը տաքացավ, կրքերը բորբոքվեցին, երբ Արմենիակների զորաբանակի հրամանատարներն ասացին. «Ինչո՞ւ ենք իզուր տեղը խոսքերով հերոս դառնում, սնապարծորեն մենք մեզ գովում։ Մարգ գործով սլիտի ապացուցի իր քաջ լինելը։ Թշնամին մոտիկ է և նրա դեմ կռվելիս կերևան քաջերը, մարտում հանդես բերած արիությունից կարելի կլինի որոշել լավագույններին»։ Ահա զորավարներն այս խոսքերը լսելուց հետո, ապա նաև տեսնելով զորքի քաջ կռվելու պատրաստակամությունը, բացի այդ, համոզված լինելով, որ տեղանքն էլ իրենց համար նպաստավոր է (հարթավայրում ճամբարած թշնամու վրա իրենք բարձրից պիտի հարձակվեին), զորքը բաժանում են երկու մասի. որոշվեց, որ նրա ընտիր մասը՝ շուրջ վեց հարյուր հոգի, զորավարների գլխավորությամբ հարձակվի բարբարոսների զորքի վրա, իսկ հռոմեական զորքի մնացած՝ փոքր մասը բարձունքում մեծաքանակ լինելու պատրանք ստեղծի։ Հարմար ժամանակ՝ ազդանշանը տրվելուց հետո, առաջինները պիտի հարձակվեն թշնամիների վրա, իսկ մնացածները շատ բարձր աղաղակ պիտի բարձրացնեն և հնչեցնեն փողերը. փողերի ձայնին կարձագանքեն լեռները և աղմուկը շշմեցուցիչ կլինի։ Ահա այդ [վեց հարյուր հոգին] հագնում են իրենց զրահները և գիշերով գաղտագողի մոտենում թշնամու ճամբարին։ Նախքան այգաբացը,

Երբ դեռ արևը լրիվ չէր անցել երկրի ստորին կիսագունդը, մեծ աղմուկ բարձրացնելով և բոլորը միասին «խաչը հաղթեց» գոռալով, հարձակվում են թշնամու վրա։ Նրանց հետ միասին աղաղակ են բարձրացնում լեռան վրա գտնվողները և բոլոր մնացածները։ Բարբարոսներն անակնկալից շփոթվեցին, ժամանակ չունեցան մարտաշարք կազմելու, հնարավորություն չունեցան իմանալու իրենց վրա հարձակվող զորքի ճշգրիտ թիվը, ի վիճակի չեղան հանպատրաստից փրկության որևէ այլ ելք գտնելու և փախուստի դիմեցին։ Նրանց բոլորի մեջ սարսափ գցողն ու կորստյան առաջնորդողը, հիրավի, կայսեր աղոթքներն էին։ Հռոմայեցիների մի մասը հարձակման անցավ, մյուս մասը, որ մարտի չբռնվեց, այն է զորավարները, տագմաները և սխոլերի դոմեստիկոսը, կարգադրության համաձայն աղմուկ աղաղակ բարձրացրին, մի բան, որ ավելի մեծ շփոթություն ու սարսափ առաջացրեց թշնամու շարքերում. վերջինս հալածական եղավ մինչև երեսուն մղոն տարածության վրա, որն ամբողջությամբ ծածկվեց անհամար դիակներով։ (43). Պատմում են, որ պարծենկոտ ու գոռոզ Խրիսոքիրին, երբ նա իր մի քանի մերձավորների հետ փախուստի էր դիմում, սկսեց հետապնդել Պուլադ[132] ածականով մի հռոմայեցի։ Սա Տեֆրիկեում գերի էր, բայց իր սրամտությամբ ու շնորհքով դարձել էր Խրիսոքիրի մտերիմն ու մերձավորը։ Ահա բարբարոսը տեսնելով, թե ինչպիսի ոգևորությամբ ու եռանդով է հալածում իրեն [Պուլադը], շուռ եկավ ու ասաց. «Ո՛վ թշվառական Պուլադ, ես քեզ ի՞նչ վատություն եմ արել, որ այսպես մոլեգին հալածում ես ինձ, կամենալով սպանել»։ Նա կտրուկ պատասխան տվեց, թե՝ «պատրոն, համոզված եմ, որ աստված կօգնի ինձ այսօր փոխհատույց լինելու քո բարերարության համար. դրա համար եմ քեզ հալածում»։ [Խրիսոքիրը] հուսաբեկ ու սարսափահար սլանում էր առաջ, իսկ [Պուլադը] համարձակ, երիտասարդական ավյունով և կորովով հալածում էր նրան. հալածականն հանդիպում է մի խոր փոսի, որի վրայով ձին վախենում էր ցատկել և ծառս եղավ։ Երբ Խրիսոքիրը մտահոգված էր այդ [դժվարությունն հաղթահարելու] գործով, Պուլադը նիզակի հարված է հասցնում նրա կողին։ Նա ցավից գալարվելով ձիուց ցած գլորվեց։ Նրա մերձավորներից Դիակոնիցես[133] անունով մեկը, իջնելով իր ձիուց, դիմեց տապալված տիրոջ օգնության. նրա գլուխը իր ծնկներին դնելով, սկսեց ողբալ պատահարը։ Այդ միջոցին Պուլադին միացան և ուրիշները, որոնք իրենց ձիերից իջնելով, մահամերձ, դեռևս հոգեվարքի մեջ

գտնվող Խրիսոքիրի գլուխը կտրեցին, իսկ Դիակոնիցեսին մնացածների հետ գերիների թվին գասեցին։ Ահա այգ պիղծ մարգիկ անակնկալորեն պարտության մատնվեցին և քրիստոնեությունն հաղթանակեց։ Ավետիսների հետ մեկտեղ անհապաղ կայսեր է ուղարկվում Խրիսոքիրի գլուխը։ Այն ժամանակ [կայսրը] այսպես կոչված Պետրիոնում[134] էր գտնվում, որտեղ էր և իր գուստերի վանքը։ Երբ [Խրիսոքիրի] գլուխը բերեցին, կայսրը վերհիշեց իր աղոթքները, իր հոգու աչքերը հառեց [աստծուն], ով ի կատար է ածում խնդիրքը բոլոր նրանց, ովքեր արտասվալից նրան են գիմում, որից հետո հրամայեց նետ ու աղեղ տան. ձգելով լարը, նա երեք նետ գամեց նրա թշվառական գանգին և հարվածներից ոչ մեկը չվրիպեց։ Ամբարիշտի [մահը] նա արժանի քավությունը համարեց այն բյուրավոր զոհերի համար, որոնց մահվան պատճառ դարձավ նա իր իշխանության բազում տարիների ընթացքում։ Աստուծո օգնությամբ ահա այսպիսի վախճան ունեցան Խրիսոքիրը և Տեֆրիկեի ծաղկած հզորությունը, աստված, որ ընդառաջ գնաց բարեպաշտ կայսր Վասիլի բազում թախանձանքներին։

44. Ամեն տեսակի առաքինություններով օժտված, անբիծ և աստվածահաճո կյանք վարած երանելի պատրիարք Իգնատիոսը հասնելով խոր ծերության, հեռացավ այս աշխարհի կյանքից դեպի ավելի լավը, բոլորի կողմից երանի ստանալով։ Եկեղեցու [ղեկավարությունը] կայսրը խելամտորեն կրկին Փոտին[135] հանձնեց, օրինական ու կանոնական ձևով թագավորանիստ քաղաքի [պատրիարքական] թափուր աթոռին նստեցրեց, Փոտին, որը նախապես ոչ խելամտորեն հակադրվել էր իրեն։ Դրանից առաջ էլ Վասիլը սիրալիր վերաբերմունք էր ցույց տալիս նրան. այգ բանի պատճառը Փոտի շատ իմաստուն և առաքինի մարգ լինելն էր և եթե նրան [անցյալում] հեռացրել էր աթոռից, դրա պատճառը օրինականության դեմ ամենևին մեղանչած չլինելու ցանկությունն էր. հակառակ գրան [կայսրը] ամեն ինչ անում էր [Փոտին] մխիթարելու համար, իրավունք տվեց բնակվել պալատում և իր որդիների դաստիարակն ու ուսուցիչը դարձրեց։ [Կայսրը] ջանք էր թափում իր կարողությունների սահմաններում ոչ ոքի չնեղացնել, նա բոլորի հանդեպ սիրալիր էր ու բարեհամբույր, և եթե կարելի էր որևէ կերպ մարդուն մխիթարել, ապա նա չէր զլանում այդ բանում։

45. Թեպետև [Վասիլն] իր հպատակների հանդեպ հոր և խնամակալի նման հոգատար էր, այնուամենայնիվ կային և իրեն ատող, ավելի ճիշտ՝ նախանձող մարդիկ, ովքեր դավեր էին նյութում նրա կյանքի դեմ։ Կուրկուաս[136] կոչվածը .հարստությունից ու փափկակեցությունից հղփացած, ցանկացավ բռնատիրել և իր շուրջ հավաքելով համախոհ.դավադիրների մի բաղմություն, գործի անցնելու հարմար առիթ էր որոնում։ Բայց դավադիրներից մեկը կայսեր հայտնեց նախապատրաստվող մեքենայության մասին և այդ նենգ մարդիկ դատի տրվեցին։ Բայց ազնիվ կայսեր մարդասիրությունը կրկին անգամ մեղմեց օրենքների խստությունը և մեղմ դատավճիռներ կայացվեցին։ Դավադրության պարագլուխը կուրացվեց, իսկ մնացածները՝ մարմնական պատիժներ ստացան միայն, մարդասիրորեն խրատվեցին՝ մազերից ղրկվեցին[137]։ Նրանք ավելի շուտ հոր կողմից խրատվեցին[138] քան թե տիրոջ։

46. Բոլորի հանդեպ ունեցած հոգսը, ինչպես և նորանոր դափնիներ քաղելու ձգտումը, կայսեր հանգիստ չէին տալիս։ Նա ամենից առաջ [մտածեց] հռոմեական պետության համար մեծ նշանակություն ունեցող ամենաանառիկ Լուլոն[139] ամրոցի մասին, որը բացարձակապես անուշադրության էր մատնված, զրկված էր անհրաժեշտ միջոցներից, մի բան, որը պատճառ դարձավ, որ նա իր պաշտպաններով հանդերձ ընկնի հագարացիների ձեռքը։ Վերջիններս վայրի անվտանգությունն ապահովելու համար ամրացրին այն և պաշտպանում էին։ Ահա կայսրը, իր խոհեմությամբ ու հոգատարությամբ, առատ միջոցների հատկացմամբ, քաղցր խոսքով ու բռնությամբ վերցրեց այն բարբարոսների ձեռքից և վերստին հռոմեական գերիշխանության ենթարկեց։ Դրա վրա Մելուոս[140] ամրոցն էլ կամովին անցավ [կայսեր] կողմը և ինքնակալին իրեն տեր հռչակեց. իսկ մանիքեցիների Կատաբատալա[141] կոչված քաղաքը այդ նույն ժամանակները գրավեց իր զորավարների միջոցով։ Բայց նրան ուրիշների ձեռքով նվաճված դափնիները չէին ուրախացնում, ընդհակառակը՝ տխրեցնում էին, որ հաղթանակները ձեռք էին բերվում ոչ իր անձնական ջանքերով և իր սեփական անձր վտանգների ենթարկելով։ Դրա համար նա նորից հարձակվեց Ասորիքի վրա, իր հետ վերցնելով Կոստանդինին՝ անդրանիկ որդուն, որպեսզի նա որպես քաջ կորյուն, բրշնամու արյան համն առնի, լինի անվախ՝ վտանգների հանդեպ, որպեսզի հենց ինքը՝ [Վասիլը] դառնա նրա ռազմագիտության

ուսուցիչը։ Հասնելով Արգեոս [լեռան][142] մոտ գտնվող Կապադովկիայի առաջին քաղաք Կեսարիան[143], իր զորքից ընտրյալ մարգկանց ինչպես հարկն է վինելուց հետո, նրանցից մի խումբ առանձնացրեց և ուղարկեց առաջ, լրտեսելու և հետախուզելու, որից հետո ինքը՝ գլխավորելով հարվածող ուժը, ամբողջ զորքով շարժվեց՝ դիմադրություն ցուցաբերող [թշնամուն] ետ մղելու համար։ Փութանակի անցնելով անապատի միջով, գրոհով վերցրին Պսիլոկաստելլոն[144] և Պարամոկաստելլոն[145] ամրոցները, գերեցին հանդիպած թշնամուն։ Ճաղատ[146] կոչված ամրոցի բնակիչները [իրենց] վրա խուժող զորքից սարսափած, կամովին անցան կայսեր կողմը, իսկ Ամբրոնի[147] որդի Ապավդելեն՝ Անազարբայի ամիրան, որը (քանի դեռ կայսրը հեռու էր գտնվում, բարբարոսաբար հոխորտում էր) մելիտենացիների զորամասի հետ միասին որոշեց փախուստով փրկվել՝ հետքը կորցնելու ջանք թափելով։ Այս ավերիչ արշավանքի ընթացքում գրավվեցին նաև Կայսոս, այն է՝ Կատասամա[148] [ամրոցը], Ռոբամ, այն է՝ Էնդելեխոն[149] [ամրոցը], ապա նաև Անդալը[150] և այսպես կոչված Էրիմոսիկեա[151] [ամրոցները]։ Այն ժամանակ էր, որ Տայիլի որդի Սեմասը[152], որը պաշտպանում էր Տավրոսի լեռնանցքները և անակնկալ հարձակումներ գործելով ասպատակում էր հռոմեական պետության սահմանամերձ շրջանները, կայսեր կողմն անցավ։

47. Ոչ ոք թող չզարմանա, ոչ էլ մեզ մեղադրի, որ այս մեծագործությունները սեղմ ու համառոտ ենք շարադրում, կարծես թվարկելով։ Պարզապես պատմություններ տալիս ենք տեղի ունեցած դեպքերի արագությամբ, դրա համար էլ ահա այն ընդհանուր գծերով է տրված և թռուցիկ է։ Այդ դեպքերը ավելի արագ կատարվեցին, քան մենք այժմ խոսում ենք նրանց մասին։ Պատճառ նաև այն է, որ դեպքերից հետո բավական ժամանակ է անցել, և յուրաքանչյուրի մանրամասնությունները գրի առնված չլինելու պատճառով անհետացել են հիշողությունից։ Մենք չգիտենք և չենք կարող հաղորդել, թե ինչպե՞ս ճակատեցին, ինչպե՞ս հարձակվեցին կամ գրոհեցին, ճակատն ինչպե՞ս լայնացրին կամ նեղացրին, իրադրության հարմար ինչպիսի՞ ռազմավարական հնարանքների դիմեցին. մենք չենք կարող մասնակի կամ նախասրության առարկա հույսերի վրա մանրամասն կանգ առնել, մի բան, որից շարադրանքի ծավալն ընգարձակվում է, մենք չուզենք ընգգրկել, առանց ստուգելու վերցնել այն, ինչ փաստերի

վրա չէր հիմնված, թեև այդ մասին ընդհանրապես շատ է խոսվում, որպեսզի չստեղծվի այն կարծիքը, թե կայսեր վերաբերյալ ներկայացնում ենք ստահոդ [պատմություն], տեղի չունեցած դեպքերի շարադրանք, նամանավանդ, որ կենդանության ժամանակ նա չէր սիրում իրեն դովաբանող խոսքերին ականջ դնել։ Եթե մենք չենք կարող կամ չենք ուզում դրի առնել այն, ինչի մասին բոլորն են վկայում, ապա դրա պատճառը շարադրանքը կասկած հարուցող փաստերով ծանրաբեռնելուց խուսափելն է։ Բայց այդ մասին խոսքը կարճենք և վերադառնանք մեր ընդհատած պատմությանը։

48. Կայսրն այնուհետև զորքով անցավ Օնոպնիկտես և Սարոս կոչված գետերը և եկավ Կուկուսոս[153], կրակի տվեց այնտեղի մացառուտները, ծառերը կտրատելով դժվարամատչելի վայրերը մատչելի դարձրեց և պարտության մատնեց դարանակալած [թշնամիներին]։ Հասնելով Կալլիպոլիս և Պադասիա[154], շարունակեց իր ճանապարհը դժվարանցանելի վայրերով, որտեղ իջավ ձիուց, հետիոտն անցավ լեռնանցքների միջով, անձնական օրինակով բարձրացրեց իր զինվորների ոգին։ Երբ հարձակվեց Գերմանիկիայի[155] վրա, հակառակորդները գլխովին նահանջեցին և փակվեցին պարիսպների ետևը. թշնամիներից ոչ ոք չէր համարձակվում կռվի բռնվել։ Դրա վրա կայսրը քաղաքի ամբողջ շրջակայքը հրի մատնեց, պարսպից դուրս գտնվող դեղեցիկ շենքերը հիմնահատակ ավերեց, որից հետո շարժվեց դեպի Ադատա[156]։ Քաղաքի [պաշտպանները] չհամարձակվեցին բաց դաշտում պատերազմել և պարփակվելով պարիսպների մեջ, որոշեցին դիմագրել։ [Կայսրը] թալանեց ինչ որ քաղաքի պարիսպներից դուրս էր գտնվում, ապա գրոհով վերցրեց մոտակայքում գտնվող Գերոնտ[157] անունը կրող փոքր քաղաքը, իր զինվորներին թույլատրեց թալանել այն, որպեսզի ձեռք բերած ավարը նրանց համար խթան հանդիսանա դիմանալու դժվարություններին։ Այնուհետև իր զինվորներով նա հարձակվեց պարիսպների վրա և գործի դրեց պաշարողական մեքենաները. նա մեծ հույս ուներ, որ նման մեծ դորթով հնարավոր կլինի գրոհով վերցնել քաղաքը։ Բայց տեսնելով, որ պարիսպների ետևում պատսպարված [թշնամիները] իրենց գլխին եկած փորձություններից չեն վհատվում, այն հանգամանքը, որ իրենց հայրենիքը գրեթե անդունդի եզրին է հասել նրանց ամենևին չի սարսափեցնում, հարցուփորձ արեց, կարելի՞ է ար-

դյոք նրանց մի կերպ համոզել, որ տեղի տան։ Տեղացիներից մեկն ասաց նրան, թե մի բարեպաշտ մարդ կամ աստվածուստ, կամ գիտական ինչ-որ եղանակով իմացել է և [քաղաքի բնակիչներին] հայտնել, թե վերուստ կանխորոշված է, որ այս քաղաքը գրավվելու է ոչ թե քո կողմից, որ այժմ պաշարում ես այն, այլ քո ազգականներից մեկի, որի անունը Կոստանդին է. ահա դրա համար է, որ նրանք այդպես չեն վհատվում փորձություններից։ [Վասիլը] մտածացույց արեց որդուն, ասաց, որ [Կոստանդին] է նրա անունը, որ կանխագուշակումը չի իրականանա, որովհետև հենց հիմա է քաղաքը գրավվելու։ Դրա վրա բացատրողը պատասխանեց, թե խոսքը այս Կոստանդինի մասին չէ, սա այն չէ, ով կործանելու է քաղաքը, այլ շատ ժամանակ անց քո ազգականներից մի ուրիշը։ [Կայսրը] կարծես զայրացավ այս խոսքերի վրա, որոշեց գործով ցույց տալ, որ դատարկ խոսք է նրանց ասածը, ավելի եռանդով լծվեց նախապատրաստական աշխատանքներին և ավելի մեծ ջանասիրությամբ ձեռնամուխ եղավ պաշարման գործին։ Բայց տեսնելով, որ հակառակ իր գործադրած ջանքերին, գործն առաջ չի գնում, որևէ այլ հույս ներշնչող ելք էլ չէր գտնում, ապա նաև համոզվելով, որ իր բազմաքանակ զորքը ցրտաշունչ վայրերում, բաց երկնքի տակ կարող է ծանր կացութ յան մեջ ընկնել, նախընտրելի համարեց իր մարդկանց փրկությունը, քան թշնամիներին պարտության մատնելը, որոշեց նախքան ձմռան վրա հասնելը, հեռանալ այնտեղից։ Այս մասին ահա այսքան։ Բայց մենք ապշել ենք այն բանի վրա, որ այսքան ժամանակ անց ականատես եղանք կանխագուշակման իրականացմանը, թե ինչպես կենցաղով ու դավանանքով ամբարիշտ այդ բարբարոսները նախօրոք հավաստի կերպով իմացել էին ճշմարտության մասին։ [Վասիլը] չկարողացավ գրավել քաղաքը, բայց այժմ, մեր օրերում Կոստանդին Ծիրանածինը, ամենահմաստուն Լևոնի որդին և [Վասիլի] թոռը գլուխ բերեց այդ գործը։ Ադատայի բնակչության լիակատար կորստյան հասցնելու սխրագործության առթիվ շատ տեղին են Հոմերոսի խոսքերը. «Ինչքան լավ է, որ իր մահից հետո մարդ որդի է թողնում պատժելու նրանց, ովքեր համարձակվել են ձեռք բարձրացնել պապենական պետության վրա»։ Բայց վերադառնանք մեր պատմության և շարունակենք մեր խոսքը։

49. Ջորքը ձեռք բերեց հսկայական քանակությամբ գերիներ և ռազմավար, բայց կայսրը, նկատի ունենալով երկար ու դժվարին ճանապարհը, հրաման տվեց գերիներից բեռնաթափվել, սրախողխող անելով նրանց։ Ահա Հագարի հետնորդներին[158] սարսափահար անելուց հետո նա վերադարձավ։ Ենթադրելով, որ կիրճերից անցնելիս հնարավոր է [թշնամու] որևէ հարձակում (նա գտնում էր, որ վստահ է այն զորավարը, որն ասում է, թե «ես այդ չէի սպասում»), կարևոր կետերը զորամասեր ուղարկեց, որոնք գերի վերցրին նրանցից շատերին, ովքեր նպատակ ունեին ուրիշներին գերեվարել։ Այդ շրջանների կառավարիչ Աբդելոմելը, տեսնելով այդ, [կայսեր] մոտ դեսպաններ ուղարկեց հաշտություն և խաղաղություն աղերսելով, խոստանալով նրան հանձնել ամրոցներն ու շրջանները և լինել նրա երախտապարտ ծառան։ Կայսրն ընդառաջեց նրա խնդիրքին, տվեց ինչ որ հայցում էր, որից հետո նա դարձավ [կայսեր] կամավոր դաշնակիցն ընդդեմ իր, Աբդելոմելի ցեղակիցների։ Այնտեղից կայսրը անցավ Արգեոս լեռը և հասնելով Կեսարիա, ստացավ Կոլոնիայի և Լուլոնի դեմ տարած հաղթանակների ավետիսները։ Ավետիսներին հաջորդեցին Տարսոնի ամրոցներից և մանիքեական քաղաքներից ձեռք բերված [հաղթանակի] իրեղեն ապացույցները՝ հսկայական քանակությամբ ավար և ռազմագերիներ։ Այնտեղ բերվեց նաև քրդերի[159] մի մեծ ամբոխ. [կայսրը] հրամայեց [քրդերին] կոտորել. քանզի նրանք գրեթե ոչ մի բանի պիտանի չէին, բացի այդ, զորքը այնքան էր ծանրաբեռնված, որ չէր ուզում ունենալ մի ավելորդ գլխացավանք։ Վերադարձին, հասնելով Միդեոն[160], նվերներ բաշխեց իր զինվորներին, յուրաքանչյուրին իր ցուցաբերած սըխրանքի համեմատ բարձրացրեց ու պատվասիրեց և ձմեռելու նպատակով ճամփա ելավ։ Հասնելով թագավորանիստ քաղաքը, հին սովորության համաձայն պատրիարքից ստացավ հաղթական [դափնե]պսակը և ժողովրդի կողմից հաղթական կեցցեները։

50. Ժամանակի ընթացքում Տեֆրիկեն խամրեց ու ամբողջությամբ հանգեց[161], սակայն սկսեց ծաղկել ու բարգավաճել տարսոնցիների հղորությունը. հռոմեական պետության ծայրամասերը նորից սկսեցին բռնության ենթարկվել նման մարդկանց կողմից։ Այն ժամանակ ծագումով սկյութացի Անդրեասը[162], հակառակ իր փոքրաթիվ զորքին, բազում անգամ պարտության մատնեց նրանց, շատերին կոտորեց և գերեվարեց նրանցից, ովքեր անասնակեր

հայթայթելու համար դուրս էին դալիս և մեկուսանում հիմնական զորաբանակից։ Եվ այն պատճառով, որ նա ամեն օր քաջության և խոհեմության բազում օրինակներ էր ցույց տալիս, կայսրը Նրան բարձրացրեց պատրիկի աստիճանին և նշանակեց սխոլերի դոմեստիկոս։ Դրանից հետո, օժտված լինելով շատ ավելի մեծ իշխանությամբ և ուժով, նա հաճախ բացահայտ կռվի էր բռնվում մելիտենացիների և տարսոնցիների հետ և հաղթող դուրս դալիս։ Տարսոնի ամիրան մի առթիվ [Անդրեասին] նամակ դրեց, որն առլեցուն էր մեր աստուծո՝ Հիսուս Քրիստոսի և նրա ամենասուրբ մոր հասցեին ուղղված լուտանքներով ու հիմարություններով. թե «Տեսնեմ, ինչպե՞ս պիտի օգնի քեզ Մարիամի որդին և նրան բերողը, երբ ես ծանր ուժով քո վրա գամ»։ Նա, ստանալով հայհոյական նամակը, արտասվալից դրեց այն որդուն գրկած աստվածամոր պատկերի առջև և ասաց. «Տե՛ս, ով մայր Բանի և աստուծո, և դու, որ նախ քան զամենայն հավիտյանս ի հորե և ժամանակ առաջ՝ ի մորե, թե ինչպես ամբարտավանացավ և հայհոյեց քո ընտրյալ ժողովրդին այս բարբարոս և փքյալ նոր Սեննեքերիմը[163]. նեցուկ կանգնիր և պաշտպանիր քո ծառաներին, թող բոլոր ժողովուրդներն իմանան զորությունը քո թագավորության»։ Նա այդպես արտասվալից ու սրտաբեկ աղոթելով և նման բառերով դիմելով աստծուն, գլխավորեց հռոմեական զորքերը դեպի Տարսոն։ Հասնելով Պոդանգոս[164] կոչված վայրը, որտեղից հոսում է համանուն գետը, հանդիպում է իրեն դիմավորելու դուրս եկած բարբարոսական զորքին։ Ապավինած լինելով աստծուն, այս քաջարին իր ամբողջ զորքով հարձակվեց, նախապես հորդորելով այն և իր խոհեմությունն ու սխրանքն ընդգծող բազում գործեր կատարեց։ Իրեն ենթակա փոխզորավարները, տաքսիարքոսները, լոխագոսները և ամբողջ զորքը նույնպիսի քաջությամբ մարտնչեցին, բարբարոսների բազմամբոխ [զորքը] փախուստի մատնեցին ու գլխովին ջարդեցին։ Ամենից առաջ սպանվեց ամիրան, ինչպես և նրա ընտիր, թիկնապահ զինվորները։ Վտանգից խուսափել կարողացան և Տարսոնում ապաստան գտան միայն այն քչերը, որոնք գտնվում էին պատնեշի վրա, կամ էլ բավական հեռու տեղում։ [Անդրեասը] սպանված իր զինվորներին հանձնեց հողին, իսկ թշնամիների դիակները դիզելով մի տեղ, նրանցից մի մեծ բլուր կազմեց, [հաղթական] մի կոթող, և բազում ավարով ու գերիներով տուն վերադարձավ. իր խոհեմությամբ տարած հաղթանակը նա վերագրեց աստծուն։ Երկյուղելով, որ [նորանոր]

հաղթանակներ ձեռք բերելու ագահությունը, շատի ետևից ընկնելը կարող է գրգռել նախանձ Նեմեսիսին[165], և ձեռք բերվածն էլ կորստյան կմատնվի (գա շատ հաճախ է պատահում) հրաժարվեց նոր քայլ անելուց։ Կատարվածի մասին նա զեկուցեց կայսեր, բայց իր զորակիցների նախանձը հնարավորություն չտվեց նրան ստանալու իր կատարած գործի արժանի մրցանակը։ Նրանք շարունակ լուրեր էին տարածում, մեղադրում [Անդրեասին], որ նա իբր դավաճանաբար չուզենալով մարտնչել, չթողեց հռոմայեցիներին գրավել Տարսոնը և նրանք այդ ուղղությամբ կայսեր մոտ որոշակի կարծիք էին ստեղծում։ Նրանք ասում էին, թե «Աստված քաղաքն արդեն մեր ձեռքն էր մատնել, եթե նա շարունակեր հաղթարշավը (ձեռք բերած հաջողություններից զորքը թև էր առել), բայց զորավարի անհոգության պատճառով կորցրինք այն»։ Նրանք այնքան շատ էին կրկնում այդ խոսքը, որ կայսրը հավատաց նրանց (չէ՞ որ հաճույք պատճառող խոսքերը հաճախ խելոք մարդկանց էլ թյուրիմացության մեջ են գցում)։ Նա Անդրեասին պաշտոնանկ արեց՝ թշնամիների դեմ տարած հաղթանակը վախճանին չհասցնելու համար, և նրա փոխարեն տագմաների և ամբողջ զորքի գլխավոր հրամանատար նշանակեց Կեստային, որի մականունն էր Ստիպպիոտես[166]։ Սա թեթևամտորեն խոստանում էր Տարսոնը գրավել և բազում այլ սխրանքներ գործել։ (51) Վերցնելով հռոմեական բոլոր զորքերը, նա հարձակվեց Տարսոնի վրա և ապացուցեց, որ Անդրեասը ոչ թե դավաճան էր և վախկոտ, այլ ընդունակ, խելացի ու գերազանց զորավար։ Բարբարոսներին համարելով պատրաստի ավար, [Կեստան] անհրաժեշտ ոչ մի նախապատրաստություն չտեսավ, նախօրոք դիրքեր չգրավեց և ռազմագիտական ոչ մի փորձառու և խոհեմ քայլ չարած, անխոհեմ կերպով, ապա և անմիտ համարձակությամբ եկավ Տարսոնի մոտ՝ Խրիսովուլլոն կոչված վայրը։ Բարբարոսները հետախուզությամբ պարզել էին, որ նա նախազգուշական միջոցներ ձեռք չի առել, ամուր դիրքեր չի գրավել, ճամբարի առաջ ո՛չ ցանկապատ, ո՛չ էլ խրամատ է քաշել, որ նա խոհեմ զորավարների նախապատրաստական միջոցառումներից և ոչ մեկին չի դիմել, դրա համար որոշեցին խլել հաղթանակը։ Նրանք գիշերով հարձակվեցին անպատրաստ ու անհոգ [Կեստայի] վրա, և ինչպես հետո պարզվեց, գործի դրին իմաստուն ռազմավարություն՝ իրենց անելանելի և դժվարին դրության մեջ։ Նախկին պարտությունից հետո նրանց թիվը շատ էր նվազել. գտնվելով դժվարին վիճակում,

նրանք ստիպված էին դիմել խորամանկության։ Մեծ թվով ձիեր հավաքելով և նրանց պոչերին չոր մորթիներ կապելով, բազում տեղերից հռոմեական ճամբարի վրա բաց թողեցին։ Այնուհետև իրենք էլ տարբեր վայրերից թմբուկ հարելով, սրերը մերկացրած հարձակվեցին [հռոմայեցիների] ճամբարի վրա։ Հռոմայեցի զինվորների մեջ առաջացավ սարսափ ու խուճապ, ձիերն ու զինվորները խառնվեցին իրար. բարբարոսները հաղթեցին և [հռոմայեցիներին] մեծ ջարդ տվեցին. վերջիններից շատերը խառնաշփոթության մեջ իրար կոխկոտելով, ու ոտնատակ տալով անփառունակ [վախճան ունեցան][167]։ Իսմայելացիներն այսպիսով անակրնկալ և անսպասելի հաղթանակ տարան. նրանք կտրեցին հռոմեական պետության ջլերը և թմբկահարությամբ, բարբարոսական գոռ ու գոչյունով հաղթական երգեր էին երգում։ Նախանձն ահա հիմար զորավարի օգնությամբ հաղթեց հռոմայեցիներին և չարակնոտ նեմեսիսը հաջողություններ ձեռք բերած հռոմայեցիների դեմ այսպիսի հաղթական կոթող կանգնեցրեց։

Ահա այսպիսին էր իրավիճակն Արևելքում՝ Վասիլի բարեպաշտ թագավորության ժամանակ։ (52) Ես այժմ կպատմեմ, թե ինչ կատարվեց Արևմուտքում։ Միքայելի թագավորության ժամանակ ամեն ինչի շարքում, Արևմուտքի գործերն էլ էին աչքաթող արված։ Իտալիան գրեթե ամբողջությամբ, այն, որ մեր Նոր Հռոմին էր ենթակա և Սիկիլիայի մեծ մասը գրավվել էր հարևան կարթագենացիների զորքերից և բարբարոսներին հարկատու էր դարձել։ Պանոնիայում[168], Դալմատիայում, նաև նրանցից այն կողմ ապրող սկյութացիները, այն է խրվաթները, սերբերը, զախլումներն ու տերվունիոտները, կանալիտները, դիոկլետիաններն ու ռենտանները դուրս էին եկել ի սկզբանե անտի իրենց վրա տարածված հռոմեական գերիշխանությունից և դարձել էին ինքնավար ու ինքնիշխան, կառավարվում էին միայն իրենց սեփական իշխանների կողմից։ Շատերը, ցանկանալով առավել ևս տարբերվել [հռոմայեցիներից], սուրբ մկրտությունից հրաժարվեցին, որպեսզի հռոմայեցիների հետ ունեցած բարեկամության և նրանց գերիշխանության մասին վկայող ոչ մի հետք չմնա։

53. Արևմուտքում վիճակն ահա այսպիսին էր. անիշխանություն ու խառնակություն էր տիրում այնտեղ, երբ այդ բոլորի վրա բարդվեցին և Կարքեդոնի հագարացիները։ Նրանք Սոլդանոսին, Սամբասին և Կալֆուսին, որոնք իրենց ցեղակիցներից

համարվում էին ամենից աչքի ընկած չարագործները և փորձառու պատերազմողներ, իրենց պարագլուխ կարգելով, երեսունվեց ռազմանավից բաղկացած նավատորմիղով արշավեցին Դալմատիայի վրա, գրավեցին զանազան քաղաքներ, այգ թվում Բուտոման, Ռոսան և Ստորին Դեկաւորան։ Եվ, քանի որ գեպքերը ընթանում էին թշնամիների համար բարեհաջող, նրանք հարձակվեցին ամբողջ երկրի մայրաքաղաք Ռաուսիոնի[169] վրա և երկարատև պաշարման ենթարկեցին։ Նրանք հանպատրաստից չկարողացան այն գրավել, որովհետև պաշտպանները մարտնչում էին արիաբար, ինչպես ասում են, մահու և կենաց պայքար էին մղում։ Ռաուսիոնում երկարատև [պաշարման] ենթարկվածները սկսեցին տառապել և ամեն ինչի պակասն զգալ, դրա պատճառով կայսեր[170] մոտ դեսպաններ ուղարկեցին, թեև քաջատեղյակ էին, որ ինքնակալը այլ գործերով էր զբաղված։ Նրանք խնդրում էին ողորմած լինել, պաշտպան կանգնել, քանի չեն ընկել քրիստոսուրացողների ձեռքը։ Բայց դեսպանները դեռ ճանապարհին էին, չէին հասել մայրաքաղաք, երբ այդ միջոցին սպանվում է ստոր կայսրը և բացարձակ իշխանությունը ստանում է բոլորի մասին միշտ հոգացող ու արթուն Վասիլը։ Նա, ով անցյալում ևս նման դեպքերի առթիվ շատ էր դժգոհում և ցավ զգում, ուշադիր լսեց դեսպանների զեկուցումը և իր հավատակիցների գլխին եկած փորձանքները իր սեփականը համարելով, դիմեց նախապատրաստական աշխատանքի՝ օգնություն աղերսողներին օգնության հասնելու։ Նա հարյուր նավից բաղկացած նավատորմիղ պատրաստեց, անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռք առավ, ընտրեց մի շատ խոհեմ և փորձառու մարդու, պատրիկ Նիկետասին, որին մականվանում էին Օորիֆաս[171] և ծովակալ նշանակելով, թշնամիների դեմ ուղարկեց որպես շանթ ու փոթորիկ։ Քաղաքի պաշարմամբ զբաղված Աֆրիկայի սարակինոսները, դասալիքների միջոցով իմացել էին, թե ռաուսիոնցիք կայսեր մոտ դեսպանություն են ուղարկել, իրենց, սարակինոսների դեմ օգնական զորք աղերսելու։ Քաղաքի շուտափույթ գրավման մասին հույսեր չունենալով, ապա նաև երկյուղելով կայսրից ակնկալված օգնությունից, նրանք վերացնում են պաշարումը և հեռանում այդ վայրերից։ Անցնելով Իտալիայի այն [շրջանից], որ Լանգոբարդիա[172] է կոչվում, նրանք գրոհով վերցնում են Բարիս[173] ամրոցը և այնտեղ վրաններ խփելով, ամեն օր հարձակում էին գործում մերձակա շրջանների վրա, նույնիսկ խիզախում [արշավել] դեպի ավելի հեռու ընկած [շրր-

ջաններըՙ։ Այդ ճանապարհով նրանք կամաց-կամաց ամբողջությամբ նվաճեցին Լանգորարդիան, ընդհուպ մինչև անցյալում փառավոր Հռոմ քաղաքը։ Ահա այսպիսին էր վիճակը [Արևմուտքում]։

54. Վերոհիշյալ ցեղերը, այն է խրվաթները, սերբերը և մյուսները, տեսնելով հռոմեական զորքի օգնությամբ Դալմատիայում տեղի ունեցածը, ապա նաև լսելով հռոմայեցիների նոր կայսեր ներողամիտ, անչափ արդար ու առաքինի լինելու մասին, նախընտրեցին ենթարկվել կայուն իշխանության, քան թե համառել ունենալ սեփական, բայց խախուտ տերություն։ Նրանք որոշեցին վերստին անցնել նախկին տիրապետության ներքո, հռոմեական ծառայության տակ։ Այդ նպատակով ահա նրանք ևս դեսպաններ ուղարկեցին կայսեր մոտ, նրանք, ովքեր ապստամբվել էին, ապա և հավատուրաց դարձել, միանգամայն հրաժարվել սուրբ մկրտությունից, հիշեցին, թե ինչպե՞ս իրենք ի սկզբանե անտի հռոմայեցիների ծառայության մեջ էին, ինչպե՞ս իրենք ժամանակին օգտակար են եղել նրանց, և խնդրեցին, որ իրենք ևս անցնեն հռոմեական պետության մարդասիրական լծի տակ, ենթարկվեն նրա պետին։ Կայսրը հաճույքով ընդառաջեց նրանց խելացի խնդիրքին, նա նախապես ևս շատ էր մտահոգված նրանց մասին, չէ՞ որ իր պետության ոչ փոքր մասն էր անջատվել և հափշտակվել, ընդունեց նրանց ինչպես մարդասեր հայրը անխոհեմաբար հեռացած, բայց այնուհետև զղջացող և վերադարձող որդուն։ [Դեսպաններին] նա իսկույն ետ ուղարկեց՝ վասիլիկոսի և հոգևորականների հետ միասին, մտածելով նախ և առաջ կորրստից փրկել նրանց հոգիները՝ նախկին հավատքին վերադարձնելով, անգիտությամբ կամ անխոհեմությամբ գործած իրենց մեղքերին քավություն տալ։ Այս աստվածահաճո գործը գլուխ բերելուց հետո, երբ բոլորն էլ ընդունեցին սուրբ մկրտությունը և վերըստին հռոմեական հպատակներ դարձան, վերոհիշյալ շրջանների վրա ամբողջությամբ տարածվեց կայսեր իշխանությունը. ամենքը ինքնակալի մարդասեր հրամանով իրենց կառավարման համար ցեղակիցներից ղեկավարներ ստացան։ [Կայսրը] նրանց կառավարիչների պաշտոնը փողով չէր տալիս. այդ դեպքում շատ տվողն ու չափից ավելի եռանդ ցուցաբերողը պիտի դառնար հպատակ ժողովրդի կառավարիչ։ Նա խոհեմ կերպով կառավարիչ էր նշանակում հենց նրանց առաջադրածներին, այսպես ասած

նրանց ձեռնադրածներին, որպես ընտրովի իշխանների, որոնք պարտավոր էին հայրաբար վերաբերվել իրենց հանդեպ։ Այս մասին ահա այսքան։

55. [Միքայելի] ապաշնորհ և անհոգ թագավորության ժամանակ հռոմեական տիրապետության սահմաններն անցած բարբարոսները, թեև դիմադրության հանդիպեցին, այդ մասին արդեն ասվել է, բայց այնուամենայնիվ մնացին Իտալիայում և անվերջ ավարառություններ էին գործում և անողոքաբար թալանի ենթարկում այն։ Նրանք գրավեցին մինչև հարյուր հիսուն բերդ, մի մասը մատնության, մյուսը՝ պաշարելով։ Կայսրը լսելով այդ մասին, շատ էր տխրում և անվերջ մտածում մի ելք գտնել, վերջնականապես պարտության մատնելու թշնամուն, գոնե ետ մղելու նրան և հռոմեական տիրապետության սահմաններից դուրս շպրտելու։ Նա ռաուսիոնցիների և դալմատացիների ամբողջ ժողովրդին որպես օգնության արդեն ուղարկել էր զինված ուժեր, որոնց գլխավորում էր, ինչպես ասվեց, Նիկետաս Օորիֆասը, բայց վերջինս համոզվեց, որ իր այդ ուժերը ի վիճակի չեն հաղթահարելու բարբարոսների այդքան բազմությունը, նամանավանդ, որ հաճախ ստիպված էին լինում ճակատամարտ տալ միջերկրյա շրջաններում, ծովափից շատ հեռու, իսկ դա ծովային հետևակի համար վտանգավոր էր և ուժերից վեր։ [Վասիլը] նպատակահարմար չգտավ նոր ուժեր ուղարկել այստեղ, արշավանքի մեծ ծախսերի հետ կապված լինելու պատճառով, ապա և այն պատճառով, որ այդ [զորքը] այստեղի վայրերի համար էր պետք։ Նա խոհեմություն ունեցավ դեսպանություն ուղարկելու Ֆրանկիայի ռեքս Լուդովիկոսի և Հռոմի պապի[174] մոտ՝ խնդրելով օգնության հասնել տեղի զորքերին և նրանց հետ ճակատ կազմած դուրս գալ Բարիսում հաստատված հագարացիների դեմ։ Նա միաժամանակ հրաման տվեց մի փոքր առաջ հիշատակածս սլավոնական երկրներին՝ մասնակցություն ունենալ այդ գործին, Ռաուսիոնի բնակիչների և իրենց տեղական նավերի օգնությամբ անցնելով դալմատացիների ծովը։ Երբ բոլորը միացան, մի հսկայական բանակ ստեղծվեց. դրան գումարվեց և հռոմեական ծովակալը, մի շատ խոհեմ և քաջ մարդ, որով Բարիսը շուտով գրավվեց։ Բերդը, երկրամասը և գերեվարված ամբողջ ժողովուրդը նորից է անցնում հռոմեական տիրապետությանը, այնտեղ են վերադառնում շրջանի բնիկները։ Ֆրանկիայի ռեքսը Սոլդանոսին և

վերջինիս հրամանների տակ գտնվող զորքը գերի է վերցնում և տանում Կապուա[175]. վերջինս ինչպես և Բենեվենդոսը[176] գեռ իրեն էին ենթարկվում։ Արևմուտքում կայսեր ձեռնարկած առաջին արշավանքն ահա այսպիսի վախճան ունեցավ և այնտեղից ձեռք բերված ավարով ու փառքով զարդարվեց մայրաքաղաքը։

56. Որովհետև ընդունված է պատմությունը ունկնդիրներին հաճելի դարձնելու նպատակով հաճախ դիմել զեղումների՝ ճոխացնելու համար շարադրանքը, ապա պատմենք նաև, թե ինչ պատահեց Ֆրանկիայի ռեքսի և Աֆրիկայի ամիրա Սոլդանոսի, ինչպես նաև Կապուայի և Բենեվենդոսի բնակիչների հետ։ Սոլդանոսը Կապուայում Ֆրանկիայի ռեքսի ձեռքում մնաց երկու տարի, բայց այդ ընթացքում ոչ ոք երբևիցե նրա դեմքին ժպիտ չտեսավ։ Ռեքսը ոսկի խոստացավ այն մարդուն, ով կկարողանար ստիպել [Սոլդանոսին] ժպտալ։ Մեկը հայտնեց ռեքսին, թե ինքը խոժոռ Սոլդանոսին տեսել է ժպտալիս և իր ասածը վկաներով հաստատեց։ [Ռեքսը] կանչեց [Սոլդանոսին] և հետաքրքրվեց այդ փոփոխության՝ նրա ժպտադեմ դառնալու պատճառներով։ Նա պատասխանեց. «Մի սայլ տեսա, ուշադրություն դարձրեցի նրա անիվների վրա, թե ինչպես նրանց՝ վերևում գտնվող մասն իջնում է ցած, իսկ ցածինն էլ բարձրանում վեր։ Դրա մեջ ես մարդկանց անորոշ և փոփոխական ճակատագրի արտացոլումը տեսա և ժպտացի, համոզվեցի, որ փոփոխության ենթակա բաներով ենք ոգևորվում. հիշելով իմ վիճակը, ես անհնաբին չգտա այն, որ եթե բարձրից գլորվեցի ցած, ապա պետք է, որ ցածից էլ նորից վեր բարձրանամ»[177]։ Ռեքսը, լսելով այդ, համոզվեց մարդու ասածի ճշմարտացիության մեջ և այսուհետև նրա հետ ավելի մեծահոգաբար էր վերաբերվում, լինում նրա մոտ։ (57) Բայց Սոլդանոսը լինելով նենգ մարդ և պունիկյան[178] խորամանկությունների քաջ գիտակ, ուզեց մեկին մյուսի դեմ լարելով իր փրկության գործը գլուխ բերել։ Կապուա և Բենեվենդոս ամրոցների իշխանները, նրան համարելով կյանքի մեծ փորձ ունեցող, խոհեմ և իմաստուն մարդ, որը երջանկությունից դժբախտության մեջ է գլորվել, հաճախ էին լինում նրա մոտ։ [Սոլդանոսը] ձևացնում էր, որ համակրում է նրանց և ուզում է ռեքսի մի գաղտնիքը հայտնել, բայց վախենում է, որ հանկարծ կմատնեն իրեն և գլխին փորձանք կբերեն։ Երբ նրանք երդվեցին, որ այդ մասին ոչինչ չեն ասի, նա հայտնեց, որ ռեքսը որոշել է ձեզ բոլորիդ

շղթայակապ իր երկիրը՝ Ֆրանկիա տանել, որովհետև այդ եղանակով միայն կարող է հուսալի կերպով տիրել ձեր քաղաքներին։ Նրանք ամենևին էլ հավատք չընծայեցին նրա խոսքերին և ուզում էին ավելի ճշգրիտ բան իմանալ։ Այս անգամ Սոլդանոսը դիմում է ոճքսին և նույն ոգով ասում. Քե դու հուսալիորեն չես կարող տիրել այս բերդերին, քանի նրանց իշխանները այստեղ են մնում։ Եթե ուզում ես հաստատուն տիրել այս [բերդերին], սրանց փուքանակի շղթայիր և Ֆրանկիա ուղարկիր։ Ոճքսը համոզվեց նրա ասածին և հրամայեց շտապ կարգով ինչ-որ անհետաձգելի գործի համար շղթաներ կոփել։ Սոլդանոսը այդ միջոցին նորից է հանդիպում իշխաններին և ասում. «Դուք դեռ շարունակում եք չհավատալ իմ խոսքերին. հետաքրքրվեցեք և իմացեք, թե բոլոր երկաթագործները ոճքսի հրամանով ի՞նչ են պատրաստում։ Եթե տեսնեք, որ շղթաներ ու կապանքներ են կոփում, մի՛ կասկածեք ձեր փրկության համար ասված խոսքերի վրա»։ Իշխաններն այդ ընթացքում համոզվեցին, որ բարբարոսի ասածը ճիշտ է և այլևս ոչ մի բանի վրա չկասկածելով, ոճքսից պաշտպանվելու ուղիների մասին էին մտածում։ Երբ մի քիչ հետո նա որսի գնաց, ետևից փակեցին դարպասները և այլևս թույլ չտվեցին նրան ներս մտնելու։ [Ոճքսը] հանպատրաստից ոչինչ անել ի վիճակի չլինելով, իր երկիրը վերադարձավ։ (58) Եվ ահա Սոլդանոսը գալիս է իշխանների մոտ՝ հատուցում խնդրելով իր հայտնած գաղտնիքի համար, այն է՝ թույլ տրվի գնալ իր հայրենիքը։ Նրան թույլ տվեցին և նա գնաց Կարքեդոն[179], իր ձեռքը վերցրեց սեփական իշխանությունը. ապացուցելու համար, որ իսկապես ստոր է, նա արշավում է Կապուայի և Բենեվենդոսի վրա՝ իր փրկության համար փոխհատույց լինելու նրանց [իշխաններին]։ Վերջիններս օգնության խնդիրքով դիմում են ոճքսին, բայց նա հայհոյանքներով վռնդում է ասելով, որ շատ ուրախ է իրենց կորստյան առիթով։ Բերդերի իշխանները սուրհանդակ են ուղարկում կայսեր մոտ, որը. լինելով կարեկցող և մարդասեր, շտապ կարգով սուրհանդակին ետ է ուղարկում հաղորդելու, թե օգնությունն անհապաղ կհասնի։ Բայց լրաբերը, նախքան իրեն ուղարկողներին [կայսեր] պատասխանն հասցնելը, րնկնում է թշնամիների ձեռքը։ Սոլդանոսն ասում է նրան. «Եթե դու կատարես իմ ասածը, ոչ միայն կփրկվես, այլև նվերներ կստանաս»։ Երբ նա համաձայնվեց հրամանը կատարել, [Սոլդանոսն] ասաց. «Ես ուզում եմ, որ դու գնաս և բերդի [պարիսպների] առաջ կանգնելով,

ներսում գտնվողներին ասես, Թե ես իմ պարտականությունն արեցի, ինձ տրված հրամանները կատարեցի, բայց կայսրից օգնություն չկա, նա մերժեց ձեր խնդիրքը, [Սուրհանդակը] խոստացավ այդպես էլ անել, և Սոլդանոսի ծառաների ուղեկցությամբ գնաց քաղաքացիներին հայտնելու այդ մասին, երբ մոտեցավ պարսպին, խնդրեց, որ քաղաքի զինվորները գան լսելու իր ասելիքը. «Թեև մահս աչքիս առչև է, ասաց, հենց հիմա պիտի սրախողխող արվեմ, բայց չեմ կարող թաքցնել ճշմարտություն։ Միայն խնդրում եմ ձեզ և երդվեցնում, իմ փոխարեն զավակներիս և կնոջս հատուցում տվեք, քանզի ես, ով իմ տերեր, Թեև բշնամիների ձեռքում եմ, բայց կատարել եմ իմ պարտականություն, հայտնել ձեր խնդիրքը հռոմայեցիների կայսեր. այնտեղից շուտով օգնություն կգա՛ս Արդ, քաջ եղեք, մի վհատվեք, քանզի գալիս է փրկարարը, Թեև ոչ իմ»։ Սոլդանոսի ծառաները լսելով այդ, կատաղեցին, որ խաբված են և իսկույն նրան սրախողխող արեցին, կայսեր ակնկալվող օգնությունից երկյուղած, Սոլդանոսը վերացրեց պաշարումը և իր երկիրը վերադարձավ։ Այսուհետև այդ բերդերի իշխանները հավատարիմ մնացին կայսեր և բերդերը դրին նրա գերիշխանության ներքո։

59. Այն ժամանակները հագարացիների մի նավատորմիղ ևս հանդես եկավ հռոմեական պետության դեմ, բայց կայսեր անվերջ աղոթքներով ա՛ստված, խելացի կարգադրություններով և հմուտ կառավարմամբ հռոմայեցիները հաղթեցին, իսկ հագարացիները խայտառակ պարտության մատնվեցին։ Տարսոնի ամիրան, որին Էսման[180] էին կոչում, կոմբարիա կոչված երեսուն վիքխարի նավերից բաղկացած նավատորմիղ կազմելով, հարձակվել էր Էվրիպոս[181] ամրոցի վրա։ Հելլադայի զորավարը[182] (նա Օյնիատեսն էր) կայսերական հրամանի համաձայն ամրողջ Հելլադայի զենք՛ կրելու ընդունակ բնակչությանը նախապատրաստեց ամրոցը պաշտպանելու, պարիսպների վրա պատրաստեց պաշտպանական անհրաժեշտ դիրքեր։ Ամրոցի [պաշտպանները] տեսնելով, որ նավերը մոտենում են պարիսպներին, և որ բարբարոսները նետերի տարափ արձակելով փորձում են իրենց՝ ամրոցի պաշտպաններին ետ մղել ու փախուստի մատնել, լցվեցին քաջությամբ ու կորովով և արիաբար դիմադրում էին։ Նրանք քարձիգ բաբաններով ու նետաձիգ մեքենաներով, ապա և ձեռքերով քարեր էին՛շպրտում և բազմաթիվ բարբարոսներ կոտորեցին։

Բացի այդ, օգտվելով նպաստավոր քամուց, նավերից շատերը հեղուկ կրակով[183] հրո ճարակ դարձրին։ Բարբարոսը անելանելի վիճակում էր և վհատության մեջ. գիտենալով, որ փողի համար շատերն են իրենց կյանքը կամովին վտանգների ենթարկում, [ձամբարի] ցանկապատի առջև մի մեծ վահան դրեց, լցրեց այն ոսկով ու ասաց. «Սա որպես մրցանակ և պարգև, դրա վրա գումարած նաև հարյուր ընտիր կույսերի, ես տալիս եմ նրան, ով առաջինը կմտնի քաղաք և ցեղակիցների հաղթանակի պատճառ կդառնա»։ Քաղաքի պաշտպանները տեսնելով այդ, հասկացան դրա իմաստը. ոգևորող խոսքերով իրար սրտապնդելով, նրանք ազդանշանով մեկից բացեցին դարպասները և քաջաբար հարձակվեցին բարբարոսների վրա։ Մեծ կոտորած տեղի ունեցավ, ամիրան էլ ստացավ մահացու հարված և գետին տապալվեց, իսկ մնացածները դիմեցին փախուստի։ Հալածողները հետապնդեցին նրանց մինչև նավերը և ձեռքերն ընկածին կոտորում էին. բարբարոսների ջարդը կատարյալ էր։ Կենդանի մնացածները լցվեցին մի քանի նավերի մեջ ու խայտառակ կերպով իրենց երկիրը փախան։ Ահա բարբարոսական նավատորմիղը գլխովին պարտության մատնվեց և անփառունակ կերպով հեռացավ, այն էլ առանց հռոմեական ծովային ուժի միջամտության, այլ կայսեր աղոթքներով միայն ու դիմադրողների քաջության շնորհիվ։

60. Հազիվ էր Տարսոնի վրայից ամպը ցրվել, երբ Կրետեում կրկին փոթորիկ բարձրացավ։ Այդ կղզու ամիրա Սաիդ Ապոքապսը[184], իր գործակից ոմն Փոտի՝ պատերազմող և գործունյա մի մարդու հետ քսանյոթ կոմբարիայով, որոնց համապատասխան նաև բազմաթիվ փոքր ծովահենական նավերով և պենտեկոնտորներով[185], որոնց շատերը կոչում են սակտուրա և դալեա, արշավեցին հռոմեական տիրապետությունների վրա և ամբողջ էգեական ծովը ավարի առան։ Նրանք հաճախ հասնում էին նույնիսկ Հելլեսպոնտոսի Պրիկոնեսոսը[186], շատերին էին գերեվարում և կոտորում։ Կրետացիների այս նավատորմիղի վրա հարձակվեց վերոհիշյալ պատրիկ Նիկետասը, նա, ում վիճակվել էր գլխավորել հռոմեական նավատորմիղը. մեծ ծովամարտ տալով, նա հեղուկ կրակով մեկից հրդեհեց կրետական քսան նավ, իսկ նրանց մեջ եղող բարբարոսները դարձան սրի, հրո և ջրի ճարակ։ Ջրասույզ չեղած նավերը փախուստով միայն կարողացան իրենց փրկությունն ապահովել։

61. Հակառակ այն բանի, որ կրետացիք ահա նման կորուստներ կրեցին, և պարտված վերադարձան, այնուամենայնիվ հանգիստ չմնացին և ծովային գործերին նորից ձեռք մեկնեցին. վերևում հիշատակածս Փոտի ծովակալությամբ նրանք սկսեցին փորձության ենթարկել և թալանել հատկապես մայրաքաղաքից հեռու ընկած շրջանները, այն է Պելոպոնեսը և նրանից ցած գտնվող կղզիները։ Հռոմեական տրիերաններով[187] նրանց դեմ է ուղարկվում ականավոր ծովակալ Նիկետաս Օորիֆասը, որը նպաստավոր [քամու] օգնությամբ մի քանի օրում հասնում է Պելոպոնես։ Խարիսխ գցելով Կենխրեոն նավահանգիստում և իմանալով, որ բարբարոսները սկսել են թալանել Պելոպոնեսի արևմտյան շրջանները, այն է, Մեթոնեն[188], Պատրան[189] և նրանց սահմանակից Կորնթոսի շրջանները, խոհեմ և իմաստուն քայլի է դիմում. որոշում է Պելոպոնեսը չշրջանցել ծովով, չնավարկել Մալեասի [թերակղզով]՝ չկտրել հազար մղոն տարածությունը և չկորցնել թանկագին ժամանակը. հենց տեղն ու տեղը, փութանակի, ունենալով բազմաթիվ աշխատող ձեռքեր և փորձառություն, նա Կորնթոսի նեղուցի ցամաքի[190] վրայով մյուս կողմը քաշեց նավերը և անցավ գործի։ Հանկարծակի հայտնվելով, նա սարսափահար արեց և շփոթության մեջ գցեց միանգամայն անտեղյակ թշնամուն։ Նախորդ ճակատամարտից ստացած վախը դեռ չէր փարատվել, երբ այս անակնկալ հարձակումն էլ վրա հասավ և [թշնամին] հնարավորություն չունեցավ գիմադրելու ու կռվի բռնվելու փորձ անգամ անելու։ [Նիկիտասը] թշնամու նավերի մի մասը կրակի տվեց, մյուսը՝ ջրասույզ արեց, բարբարոսներից ոմանց խողխողեց, մյուս մասին ծովի հատակն ուղարկեց, նրանց հրամանատարին էլ սպանեց, իսկ մնացածներին ստիպեց ցրիվ գալ կղզուջ չորս կողմը։ Վերջիններիս նա հետագայում որսաց և զանազան պատիժների ենթարկեց, ոմանց մորթազերծ արեց, հատկապես նրանց, ովքեր ուրացել էին Քրիստոսի մկրտությունը, ասելով, որ [մկրտությունից] է զրկում նրանց, և ոչ թե նրանց պատկանող որևէ այլ բանից։ Իսկ ուրիշներին սարսափելի տանջանքների ենթարկեց՝ ծոծրակից մինչև գարշապարը փոկ քաշելով։ Ոմանց գերանի ծայրին կապելով բարձրից գցեց կուպրով լի կաթսաների մեջ, ասելով, որ արժանացնում է իրենց մկրտության, տանջալի և մթին։ Ահա այսպես խայտառակեց նրանց և իրենց կատարած չարագործություններին վայել պատիժներ տվեց. այսու-

հետև նրանք սարսափում էին հռոմեական շրջանների վրա արշավանքի դուրս գալուց։

Ահա այս կերպ ցրվեցին հարավային քամիները և հռոմեական պետության նավը անվտանգ նավարկում էր այնտեղից, (62) երբ արևմուտքում նորից սարսափելի փոթորիկ բարձրացավ։ Աֆրիկայի ամերմումնին, վաթսուն հսկայական նավեր [191] պատրաստելով, հարձակվեց հռոմեական տիրապետության վրա և թալանելով ու գերեվարելով հասավ մինչև Կեֆալոնիա և Զակինթոս կղզիները։ Կայսրը իմանալով այդ մասին անհապաղ օգնության հասավ. նա ուղարկեց ծովակալին (այն Նասա՛րն էր)՝ բազմաթիվ տրիերներից, դիերներից և այլ արագընթաց նավերից բաղկացած մեծ նավատորմիղով։ Նասարը կարճ ճանապարհով, նպաստավոր քամու օգնությամբ, շուտով հասավ Մեթոնե, բայց թշնամիների վրա անմիջապես հարձակվել չկարողացավ. պատճառը հետևյալն էր. թիավարներից շատերը, վախենալով վտանգից, փոքր խմբերով թաքուն փախուստի դիմեցին։ Նրանց դասալքությունը պատճառ դարձավ նավերի ընթացքի դանդաղեցման, որովհետև նավերը արդեն չէին կարող մեծ թափով կտրել ալիքները և հարձակվել հակառակորդների վրա։ [Նասարը] գտավ, որ այդպես զինաթափ եղած չի կարելի թշնամու դեմ դուրս գալ և սուրհանդակի միջոցով իրադրության մասին տեղյակ պահեց կայսեր։ Վերջինս, առանց հապաղելու, հատուկ մարդկանց ուղարկեց, բոլոր դասալիքներին որսաց և բանտ նետեց։ Ձեռքերը ցեղակիցների արյունով ներկելուն դեմ լինելով, բայց կամենալով մնացած թիավարների մեջ սարսափ տարածել, որպեսզի նրանց չար օրինակին չհետևեն և դասալիք կամ անփույթ չլինեն, խոհեմ որոշում է ընդունում. վիղլայի դրունգարին[192] հրաման է տալիս Պրետորիոնում[193] բանտարկված երեսուն մահապարտ ոճրագործներին[194] գիշերով դուրս հանել, դեմքերին մուր քսել, մորուքներն ու գլխի մազերը խանձել և անճանաչելի դարձնել։ Նրանց խստորեն կարգադրել, որ չհամարձակվեն ձայն, ծպտուն հանել, հրամանը չկատարողին սպառնալով մահապատժով։ Ահա սրանց, որպես դասալիք եղած թիավարների պարագլուխների, ձիարշավարանում մտրակահարել, ձեռքերը մեջքին կապած ման ածել քաղաքի հրապարակում։ Այնուհետև ոտքերը կալանդների մեջ հագցրած Պելոպոնես ուղարկել, որպեսզի իրենց արժանի պատիժը ստանան հենց այնտեղ, որտեղից փախել են[195]։ Այդ գործը դրվեց Պելոպոնեսի զորավար Հովհաննեսի վրա, որի մականունն էր Կրետացի։ Սա կայսերական

հրամանի համաձայն Մեթոնեում, ուղարկված կալանավորներին թվին համապատասխան ցցեր տնկեց, և նրանց որպես դասալիքների պարագլուխների ցցահան արեց։ Հռոմեական նավատորմիղի նավաստիները ականջալուր և ականատես լինելով կատարվածին, դատապարտեցին նրանց որպես վախկոտների և թշվառականների, իսկ իրենք էլ ձեռք բերեցին դժվարությունները հաղթահարելու կամք, դեն գցեցին թուլամորթությունն ու թափթփվածությունը և խնդրում էին ծովակալին շտապ կարգով իրենց առաջնորդել հակառակորդների դեմ։

63. [Ծովակալը] զորքի նվազած մասը համալրեց Պելոպոնեսի զինվորներով և մարդայիտներով[196] և [Պելոպոնեսի] զորավարին գործակից վերցնելով, հարձակման նախապատրաստություն տեսավ։ Սարակինոսները, որ համոզվել էին հռոմեական նավաստիների երկչոտ լինելու մեջ, իզուր տեղ ժամանակ վատնած չլինելու համար, շատ հանգիստ դուրս էին գալիս իրենց նավերից և թալանում մերձակա շրջաններն ու կղզիները, երբ հանկարծակի և աննկատելիորեն նրանց մոտեցավ հռոմեական ծովային հետևակը։ Զորավարի ազդանշանով [ծովային հետևակը] գիշերով անակնկալ հարձակում գործեց թշնամիների վրա, որոնք ոչ գիմադրելու ժամանակ գտան, ոչ էլ կովի բռնվելու, և չարաչար սրախողխող եղան. նրանց նավերը իրենց զինվորներով և ունեցվածքով հանդերձ հրո ճարակ դարձան։ Կրակից զերծ մնացած նավերը Նասարը բերեց Մեթոնե և նվիրաբերեց աստուծո եկեղեցուն. նա իր զինվորներին թույլ տվեց օգտվել ձեռք բերված ավարից և գերիներից, որից հետո փութանակի կատարվածի մասին տեղեկացրեց կայսեր, հարցրեց այսուհետև ի՞նչ անել, ո՞ւր գնալ։ Կայսրը հաջողության համար գովեց նրան և հրամայեց առաջ շարժվել։

64. Տեսնելով, որ զորքը հաջողություններից գոտեպնդվել է, [Նասարն] անցնում է Սիկիլիա և Պանորմոն և ավարառում Կարքեդոնի հագարացիներին հարկատու այնտեղի քաղաքները։ Նա գրավում է բազմաթիվ բեռնատար և այլ նավեր, որոնք բեռնված էին հսկայական քանակությամբ ձիթայուղով և արժեքավոր շատ այլ բաներով։ Պատմում են, որ այդ ձիթայուղի ձեռք բերելուց հետո նրա գինն այնքան ընկավ, որ լիտրը վաճառում էին մեկ օբոլոսով։ (65) Նույն նավատորմիղը անցնելով Իտալիայի շրջան-

ները և միանալով կայսեր պրոտովեստիարիոս[197] Պրոկոպիոսի և թրակացիների ու մակեդոնացիների այն ժամանակվա զորավար Լևոնի, որին Ապոստյուպես էին մականվանում, գլխավորած հռոմեական հետևակին և այրուձիին, հռոմեական պետության համար շատ օգտակար գործեր արեցին։ Նասարը Ստելե կոչված կղզում պարտության մատնեց կրկին անգամ Աֆրիկայից դուրս եկած [հագարացիների] նավատորմիղը, բարբարոսների ձեռքից ազատագրեց, բացառությամբ մի քանիսի, Կալաբրիայում և Լանդոբարդիայում հագարացիների ձեռքում անցած գրեթե բոլոր ամրոցները և նրանց վրա հաստատեց հռոմեական իշխանությունը։ Ծովային ուժերն այսպիսով, անմասն լինելով նենգության, նախանձին կամ մախանքին, կարողացան հսկայական ավար ձեռք բերել, հաղթական [դափնե] պսակներով վերադառնալ կայսեր մոտ և ամբողջ պետությունը լցնել բերկրանքով. նրանք բազմաթիվ առիթներ ընձեռեցին կայսեր, գոհություն ու շնորհակալություն հայտնելու աստծուն։

66. Բայց հետևակն, այնուամենայնիվ, չկարողացավ խուսափել նախանձից, թեև արի ու փառավոր գործեր կատարեց, բայց այս կովի ժամանակ առաջացած վեճի ու գժտության պատճառով կորցրեց գերագույն հրամանատարին։ Լևոնը լարվել էր Պրոկոպիոսի դեմ. երբ թշնամիների հետ մարտի բռնվեցին, թրակացիներին ու մակեդոնացիներին գլխավորող և աջ թևում մարտնչող Ապոստյուպեսը կարողացավ պարտության մատնել թշնամիներին և նրանց մեծ ջարդ տվեց։ Բայց սկլավենների և արևմտյան զորքերի հետ [ձախ] թևում ճակատած Պրոկոպիոսին հակառակորդները դժվար վիճակի մեջ գցեցին։ Զորակից [Ապոստյուպեսը] դժվարին կացության մեջ գտնվող զորքին օգնության չհասավ, որովհետև գժտված էր Պրոկոպիոսի հետ. վերջինիս գլխավորած թևն այսպիսով գլխովին փախուստի մատնվեց, [Պրոկոպիոսն] էլ փախուստի ժամանակ սրախողխող արվեց և իր ձիով հանդերձ տապալվեց գետին։ Ճակատամարտն ահա այսպիսի վախճան ունեցավ։ Լևոնը, իր գժտության պատճառով տեղի ունեցած պատահարը սրողելու համար, ցանկացավ մի հերոսություն ևս գործել։ Նա իր զորքով և Պրոկոպիոսի փախուստով փրկված զինվորներով հարձակվեց Տարանտա ամրոցի վրա, որ դեռ հագարացիների ձեռքում էր գտնվում, և գրոհով վերցրեց այն, իսկ տեղում գտնվող բոլոր զինվորներին գերեվարեց։ Նա թույլատրեց զորքին զբաղվել

Թալանով, կայսեր համար էլ բազում ավար բերեց։ Բայց կայսրը ամենևին էլ գոհ չմնաց դրանից, ոչ էլ պարգևատրեց Լևոնին որպես հերոսի։ Նա հարցուփորձ անելով իմացավ, որ [զորավարների] միջև ծագած գժտությունն էր պատճառը, որ մարտում րնկավ համազորավարը, դրա համար պաշտոնանկ անելով նրան, աքսորեց իր՝ Լևոնի դղյակը, որ գտնվում էր Կոտիայոնի մոտ։

67. Բայց դրանից հետո էլ Ապոստյուպեսի գլխին նման փորձանքներ եկան։ Պրոտոստրատոր Վայանոսը[198] և կուբիկուլարիոս[199], Խամարետոսը՝ [Ապոստյուպեսի] ամենամերձավոր մարդը, համաձայնության եկան և իրենց տիրոջ դեմ կայսեր ուղղված մի ամբաստանագիր հորինեցին, որտեղ ի միջի այլոց հայտնվում էր, որ պրոտովեստիարիոս Պրոկոպիոսի մահը ծրագրված էր իրենց տիրոջ կողմից. նրան մեղադրում էին նաև պետական դավաճանության և այլ ծանր ու լուրջ հանցանքների մեջ։ Խամարետոսը վերցրեց ամբաստանագիրը և մտնելով մայրաքաղաք հանձնեց այն կայսեր։ Բայց դա չվրիպեց Ապոստյուպեսի որդիների՝ Վարդասի[200] և Դավիթի ուշադրությունից, որոնք սրախողխող են անում և սպանում Վայանոսին. իրենց արարքի համար կայսեր [դատաստանի] երկյուղն զգալով, որոշում են իրենց հոր հետ Ասորիք փախչել։ Կայսրն իմացավ այդ մասին և առանց հապաղելու մանգլավիտ Վարցապեդոնին[201] ուղարկեց նրանց բռնելու և իր մոտ բերելու։ Նա նրանց հասավ Կապադովկիայում, որտեղից նրանք փութանակի ճամփա էին ընկել դեպի Ասորիք։ Երբ [Վարցապեդոնը] կայսերական հրամանի համաձայն փորձեց նրանց ձերբակալել, հանդիպեց համառ դիմադրության։ Այս ընդհարման ու բախման ժամանակ Ապոստյուպեսի երկու որդիները սպանվում են, իսկ ինքը [Ապոստյուպեսը] ձերբակալվում և շղթայակապ բերվում կայսեր մոտ, որն այն ժամանակ գտնվում էր Հիերիայի պալատում[202]։ Կայսեր հրամանով նա հանձնվեց մագիստրոս Մանուիլի դատաստանին։ Իր դեմ ներկայացված մեղադրանքների, այդ թվում և թշնամիների մոտ փախչելու փորձ անելու համար[203], նա զրկվեց մեկ աչքից և մեկ ձեռքից, որից հետո նա իր կյանքի օրերը սպառեց աքսորում՝ Մեսեմբրիայում[204]։ Այսպիսի վախճան ունեցավ ահա, ընդհանրապես անարդ Ապոստյուպեսը։

68. Այն միջոցին, երբ կայսրը իր զորավարներով զբաղված էր Արևմուտքով, հարավի արաբները շունչ քաշեցին և ենթադրե-

լով, որ [հռոմայեցիները] անգործության են մատնված, անհոգ ու անփույթ նստած են, լցվեցին եռանդով և որոշեցին կրկին ձեռք մեկնել ծովային գործերին. Եգիպտոսի և Ասորիքի ծովափնյա քաղաքներում նավեր շինելով վճռեցին արշավել հռոմայեցիների ենթակա ցամաքի ու ծովի վրա։ Նրանք գտան, որ նախապես անհրաժեշտ է հետախույզների միջոցով իմանալ, թե ինչ վիճակում են կայսեր գործերը. հունարեն իմացող և հույնի զգեստներ հագած մի մարդու ուղարկեցին, որ պետք է ամեն ինչ իմանար և իրենց հայտներ։ Միշտ արթուն, հասարակաց հոգսերով ապրող և ամեն ինչ կանխատեսող կայսեր ուշադրությունից չվրիպեցին Ասորիքում կառուցվող նավերը, այդ պատճառով նա իր հերթին ավելի շատ տրիերներ և դիերներ շինեց և ծովային ուժերը կենտրոնացնելով մայրաքաղաքում, սպասում էր, թե ի՞նչ ցույց կտա ապագան։ Բայց որպեսզի նավաստիները անգործ մնալով չվարակվեն անհնազանդության ախտով, հրամայեց աշխատել այն ժամանակ պալատի բակում կառուցվող մեր փրկիչ Հիսուս Քրիստոսի, հրեշտակապետների և Եղիա Թեսբացու տաճարի շինարարության վրա. [Թշնամու] նավատորմիղի Ասորիքի սահմաններից դուրս գալու դեպքում այս [նավաստիները] ևս ուղարկվելու էին նրանց ընդդիմակայելու։ Ասորիքից ժամանած լրտեսը, տեսնելով նավերի բազմաթվությունը, ուղարկվելու պատրաստ զորքը, մանրամասն հետախուզելով ու լրտեսելով, վերադարձավ և զեկուցեց իրեն ուղարկողներին։ Վերջիններս ստանալով կայսեր տեսած պատրաստությունների մասին անակնկալ լուրը, վախեցան և որոշեցին հանգիստ մնալ, դադարեցրին նավերով արշավելու նախապատրաստությունները։ Բայց և այնպես նավաստիների բազմությունը մնաց մայրաքաղաքում և զբաղված էր վերահիշյալ գործով։

69. Կարքեդոնի բարբարոսները իրենց կրած պարտություններից հետո երկյուղ զգացին, որ հռոմեական նավատորմիղը կփորձի նաև իրենց [քաղաքի] վրա հարձակվել. այդ պատճառով իրենք ևս բազմաթիվ նավեր շինեցին։ Բայց երբ գարունն անցավ և տեսան, որ կայսրը ոչ մի զորք չի ուղարկել, ենթադրեցին, որ կայսեր զորքը զբաղված է ուրիշների դեմ մղվող պատերազմներով, և հանդգնեցին Սիկիլիայի վրա արշավել։ Գալով [կղզու] մայրաքաղաքը, այն է՝ Սիրակուսա, պաշարեցին այն, և սկսեցին թալանել ու ավարի առնել նրա արվարձանները և [քաղաքի]

շրջակայքը։ Սիկիլիայի զորավարը այդ մասին հայտնեց կայսեր, և Ասորիքի դեմ ուղարկվելու պատրաստված ռազմական ուժը զորավար Ադրիանոսի գլխավորությամբ առաքվեց Սիկիլիա. այդ ժամանակ նա էր ծովային ուժերի հրամանատարը։ Նա, թագավորանիստ քաղաքից դուրս գալով, չհանդիպեց նպաստավոր, համընթաց քամու և մի կերպ հասնելով Պելոպոնես, խարիսխ գցեց Մոնեմվասիայի Հիերաքս կոչվող նավահանգստում, սպասելով հաջողակ քամու։ Եթե անհոգ մարդ չլիներ, եթե նրա երակների մեջ արյունը եռար, նա կնավարկեր նույնիսկ քամուն հակառակ, անհողմության դեպքում կթիավարեր և կփութար ծրագրի իրականացմանը։ Բայց նշված նավահանգստում նա անչափ ժամավաճառ եղավ, իսկ հագարացիներն օղակն ավելի սեղմեցին, դիմեցին ամեն մի միջոցի, աճապարեցին իրենց մտադրությունն իրականացնելու, քանի պաշարվածներին օգնության չեն հասել։ Քաղաքը գրավվեց գրոհով, պաշտպանների մեծ կոտորած տեղի ունեցավ, քաղաքի ամբողջ բնակչությունը գերեվարվեց, առկա հարստությունը թշնամիների ձեռքը ավար ընկավ, քաղաքը հիմնահատակ կործանվեց և նրա սուրբ տաճարները կրակի տրվեցին։ Հռչակավոր և գեղեցիկ քաղաքը, որ բազմիցս պարտության էր մատնել իր վրա հարձակված անհամար հունական և բարբարոսական զորքերին, ավերակների վերածվեց[205]։ (70) Դեպքի մասին Ադրիանոսը տեղեկացավ հետևյալ կերպ. Պելոպոնեսում, Մոնեմվասիայից, այսինքն այնտեղից, որտեղ խարիսխ էր գցել հռոմեական նավատորմիղը, ոչ հեռու, Հելոս անունով մի վայր կա, որն իր անունն ստացել էր նրա շուրջը գտնվող խիտ ու ստվար անտառներից։ Այնտեղ դիվային ուժ էր թաքնված, և որպեսզի նա իբրև թե անվնաս պահի արածող հոտերը, արժանացել էր տեղի հովիվների լուրջ հոգատարության։ Դևերից մի քանիսը իրար հետ ուրախ խոսակցում էին և հովիվները լսեցին նրանցից, թե երեկ Սիբակուսան գրավվեց, որ քաղաքն ամբողջությամբ հիմնահատակ կործանվեց և կրակի տրվեց։ Հովիվները իրենց լսածը պատմեցին ոմանց և լուրը բերնե բերան հասավ Ադրիանոսին։ Վերջինս իսկույն իր մոտ կանչեց հովիվներին և մանրամասն հարցուփորձ արեց. հովիվների ասածը և իր լսածը համընկան իրար։ Նա ցանկություն հայտնեց ականջալուր լինելու [դևերի խոսակցության] և հովիվների հետ գնաց նշված վայրը. [հովիվների] միջոցով հարց տվեց դևերին, թե Սիրակուսան ե՞րբ կգրավվի ու պատասխան ստացավ, թե Սիրակուսան արդեն գրավվել է։ Նա տխրեց

ու նեղ դրության մեջ ընկավ, բայց իրեն հանգստացրեց այն մրտքով, թե չպետք է չար ոգիների ասածներին հավատալ, որովհետև նրանք կանխագուշակելու կարողություն չունեն։ Նա անգիտանում էր, որ դա ոչ թե կանխագուշակություն էր, այլ կատարվածի, եղած վերջացածի բացահայտումը. [դևերն] իրենց արագաշարժությամբ ավելի շուտ են տեղ հասնում, քան այն մարդիկ, ովքեր գալիս են հաղորդելու [տեղի ունեցածը]։ Նա դեռ տարակուսանքի մեջ էր, բայց տասը օր անց, կոտորածից փրկված պելոպոնեսցի մարդայիտներից և տաքսատոսներից ոմանք պատմեցին այդ ավերածությունների մասին, որոնց ականատես էին եղել իրենք։ Ադրիանոսը նրանցից այդ լուրն ստանալով, փութանակի (գնալու ժամանակ հակառակ ուղղությամբ փչող քամին, վերադառնալու համար արդեն նպաստավոր էր) նավատորմիղով հասնում է թագավորանիստ քաղաքը և ապաստան հայցում աստուծո իմաստության անունը կրող տաճարում։ Բայց սարսափելի փորձանքը կայսեր սրտաբեկ էր արել, նրա զայրույթն ու զգացած ցավը չափ ու սահման չունեին և Ադրիանոսին պատժից չփրկեց ոչ աստուծո տաճարը, ոչ էլ նրա համար միջնորդող պատրիարքը։ Ճիշտ է, վերջինս նրան մահապատժից փրկեց, թեև դրան նա արժանի էր, բայց նրան չհաջողվեց միանգամայն զերծ պահել այն չափավոր պատժից, որն ուրիշների համար էլ կարող էր դաս լինել։ Կայսրը կարող էր իր անձնական հարցերի առթիվ բորբոքված զայրույթը չափավորել և սանձել, բայց նա միանգամայն անզիջող էր, երբ հարցը վերաբերում էր հասարակաց [շահերին]։

71. Արևմուտքում ահա նորից հզորացան թշնամիները։ Սպասվում էր, որ նրանք այս հաջողությունից թևավորված, ավելի առաջ կանցնեն և կծավալեն իրենց արշավանքները։ Դրա համար թրակացիներից, մակեդոնացիներից և ընտիր խարսիանոնցիներից ու կապադովկացիներից բաղկացած զորքով [նրանց դեմ]է ուղարկվում լանգոբարդիայի զորքերի հրամանատար կապադովկացի Ստեփանոսը, որին Մաքսենտիոս էլ էին անվանում։ Նա, հասնելով նշված վայրը, փորձեց գրավել սարակինոսների ձեռքում գտնվող Ամանտիա[206] քաղաքը. լինելով դանդաղաշարժ և անփույթ, բայց ավելի ճիշտ վախկոտ ու փափկակյաց, նա այդպիսի զորքով չկարողացավ հաջողության հասնել և այդ պատճառով պաշտոնանկ արվեց։ Նրան փոխարինում է Նիկեփորը, Փոկաս մականվանյալը[207], եռանդուն, արթուն, ֆիզիկական ուժով

ու մտավոր կարողություններով օժտված մի համեստ մարդ, որն իր հետ վերցրեց Արևելքի հրամանատարներին ենթարկվող մեծ զորք և այն Դիակոնիցեսին[208], որ ժամանակին Տեֆրիկեում խրիսոքիրին էր ծառայում՝ Մանիի[209] հավատքը ղավանող մի մեծ զորամասով։ Նիկիփորոսը գլխավորելով Ստեփանոսի զորքերը, ցուցաբերեց խոհեմություն, պատերազմական արիություն ու սրխրանքի օրինակներ։ Նա իսկույն գրավեց Ամանտիա քաղաքը, դիմադրություն ցույց տված թշնամիներին փախուստի մատնեց ու նրանց մեծ ջարդ տվեց, վերստին հռոմեական տիրապետության ենթարկեց Տրոպաս կոչված ամրոցը և սուրբ Սևերինայինը. մարտերում և կռիվներում նա հաղթեց հագարացիներին, նրանցից գրաված ավարով լիացրեց իր զորքը։ Այդպիսի գործեր նա արեց երանելի կայսր Վասիլի կենդանության օրոք. պակասը նա լրացրեց հետագայում, ամենահեզ և ամենաիմաստուն կայսր Լևոնի, [Վասիլի] որդու ժամանակ։ Թեև ժամանակագրական տեսակետից այդ մարտերը չեն հաջորդել միմյանց, ինչպես սույն պատմության մեջ է ցույց տրված[210], բայց յուրաքանչյուր դեպքի ճշգրիտ ժամանակը հայտնի չլինելու պատճառով, բոլորը մի տեղում շարադրվեց՝ իրար հետևից։

Ահա այն, ինչ ես լսեցի անմիջականորեն Վասիլ կայսեր, ինչպես և նրա զորահրամանատարների միջոցով արածի մասին՝ ցամաքում և ծովում, Արևելքում և Արևմուտքում։

72. Անհրաժեշտ է նորից կանգ առնել այն գործերի վրա, որ կայսրն իրագործեց անձնապես, պատմել, թե ինչպես նա մշտապես ապրում էր հասարակաց հոգսերով, միտքն անվերջ զբաղված էր լինում ժողովրդի ցավերով, թե ինչպես նա խոհեմ կերպով էր տնօրինում գործերը. նա ուշադիր ունկնդրում էր սպատմական զրույցներ, քաղաքական խրատներ, բարոյախոսական դասեր, [եկեղեցական] հայրերի հոգևոր հորդորները և խորհուրդները։ Բայց և զբաղվում էր գրական գործունեությամբ. նա հետազոտում էր զորավարների, ինքնակալների կյանքն ու գործունեությունը, արարքներն ու պատերազմական սխրանքները, ուշադրություն դարձնում նրանց լավագույն ու գովելի կողմերի վրա, ջանալով նմանվել նրանց։ Մանրակրկիտ քննության ենթարկելով աստվածահաճո, բարեպաշտ կյանք վարած մարդկանց կենսագրությունը, նա աշխատում էր զսպել իր հոգու բռնկումները, ցանկանալով ցույց տալ, որ ինքնակալ լինելուց բացի, նախ և առաջ հենց ինքն

է, Վասիլը, դրանից նա շատ օգուտ քաղեց։ Այդ էր պատճառը, որ նա անչափ մեծ ցանկություն ուներ ծանոթություն հաստատելու, հարաբերվելու և զրուցելու դեռևս կենդանի մնացած այն երանելի մարդկանց հետ, ովքեր այս [երկրային] կյանքում աննյութական և երկնային կենցաղ էին վարում։ Լինելով ծայր աստիճան բաբեպաշտ մարդ, նա ոչ թե նրանց էր հրավիրում, այլ անտեսելով կայսերական մեծությունը, ինքն էր նրանց մոտ գնում, արժանանում նրանց մաղթանքներին ու աղոթքներին, ավելի աստվածավախ դառնում և ընթանում աստուծո արդար ճանապարհով։ Այդ էր պատճառը, որ նրա մոտ միշտ կարելի էր տեսնել առաքինության [քառ] ավետարանը։ Մարդիկ հիանում էին նրա քաջության և ողջամտության վրա, խոհեմության և արդարամտության։ Նա մշտապես ձգտում էր դեպի ավելի լավը, և կարծես կյանքը վերադարձել էր վաղեմի կարգ ու կանոնին։ Նա անվերջ հոգ էր տանում, որ հպատակները լինեն բարեկեցիկ, որպեսզի մեկը մյուսին վնաս չհասցնի։ Ղեկավար պաշտոններին տիրացած մարդիկ ջանք էին թափում նմանվելու տիրոջ, լինելու բարեպաշտ, ունենալու ակնածանք դեպի քահանաներն ու վանականները, լինելու ողորմած՝ չքավորների հանդեպ, բոլորի հետ վարվելու արդարացի և առանց կողմնապահության։ Քանզի հենց [կայսեր] պատգամն էր և հրամանը, որ հզորը չպետք է ճնշի թույլին, իսկ ստորադրյալը պետք չէ անարգի և բանսարկի վերադրյալին, նրան, ով պետք է եղբոր նման գուրգուրա և սիրի չքավորին, որն իր հերթին պետք է աղոթի վերադրյալի համար, որպես հասարակաց հոր և փրկչի, անկեղծորեն ցանկանա, որ Տերը նրան երջանկություն պարգևի։ Իր կյանքն ահա նա այսպես էր տնօրինում։ Բայց ապավինելով աստուծո նախախնամությանը, նա շատ բան էր սովորում և երազներից։ Երբ նա հոգսերով տարված մրանում էր իր ննջասենյակը և հասարակաց ինչ-որ հարցով մտազբաղ տանջվում, հաճախ երազում տեսնում էր կատարվելիքը, հուսադրվում էր և հանգստացնում իր հոգեկան տագնապը։ Եվ զարմանալու ոչինչ չկա, որ նախախնամությունը խրախուսում է և ուղղում դեպի բարին, հայտնում ապագան նրանց, ովքեր երկրային իշխանություններ ծառայություն են համարում, մեզ՝ մահկանացուներիս սրբավայել են սպասարկում, բարի օրինակ ցույց տալիս։

73. Քանի որ խոսքն այլ ուղղությամբ ընթացավ և հնարավորություն չունեցա իր տեղում պատմել, արդ նպատակահարմար դտա ճակատամարտերի և պատերազմական դեպքերի շարադրանքն ավարտելով, կանդ առնել այդ հարցի վրա ևս։ Ես նկատի ունեմ այն, թե ինչպես կայսրը չմոռացավ փոխհատույց լինել նրանց, ովքեր իրենց աջակցությունն էին ցույց տվել, երբ դեռ նա շարքային մի անձնավորություն էր, ովքեր խնդրել էին հիշել իրենց, փայլուն դիրքի հասնելիս։ Խոսքը սուրբ Դիոմեդեսի վանքի վանահոր և պելոպոնեսցի կնոջ՝ Դանելիսի մասին է[211], որոնց [Վասիլը] փոխհատույց եղավ շատ ավելիով, քան նրանք ակնկալում էին։ Նա մեծ վկա Դիոմեդեսի [տաճարը] փառավոր կերպով պայծառացրեց՝ թանկարժեք նվիրատվություններով, բազում գրքերի, սպասքների և շքեղ հանդերձների պարգևումով, իսկ [վկայի] անուն կրող վանքը ունևոր դարձրեց՝ լայնատարած կալվածքների տված մեծ և առատ եկամուտներով. ամեն տեսակետից ապահով դարձրեց և նա ոչ մի բանի կարիքը չէր զգում այլևս։ [Վանքի] համար նա հոյակապ շենքեր կառուցեց և ամեն ինչով լիացրեց ու հարստացրեց։ (74) Հենց որ իշխանության տիրացավ, նա հրավիրեց Դանելիսի որդուն և պատվեց պրոտոսպաթարի աստիճանով, շատ սիրալիր վերաբերվեց նրան, չէ՞ որ նա իր հոգևոր եղբայրն էր։ Երբ նրա զառամյալ մայրը ցանկություն և մեծ փափագ հայտնեց տեսնել կայսեր և պատկառելի հասակում մեծ պատվի արժանանալ, (բարեպաշտ վանականը կանխագուշակել էր այդ բանը և դրա համար նա [Վասիլին] օգտակար էր եղել և սիրալիր կերպով հյուրընկալել), կայսրը թույլ տվեց և նա առոք փառոք մեծ շքախմբով ու բազմաթիվ ծառաներով մայրաքաղաք եկավ։ Քանի որ նա ի վիճակի չէր ոչ կառք նստել, ոչ ձի, ապա և լինելով շատ հարուստ սովորել էր փափկակեցության, պառկեց դեսպակի վրա և հրամայեց իր ծառաներից հարյուր ընտիր, թիկնեղ երիտասարդների, որ տասական հոգի փոխեփոխ կրեն իր [դեսպակը]։ Այդ կերպ նա կտրեց Պելոպոնեսից մինչև թագավորանիստ քաղաքն ընկած տարածությունը։ Կայսրը նրա պատվին Մագնավրայում[212] փառավոր և մեծ ընդունելություն կազմակերպեց, այն կարգով, ինչ հռոմեական կայսրերը սովորաբար ընդունում էին օտար պետության մեծ և հռչակավոր առաջնորդներին։ Նա իր հետ թանկարժեք նվերներ էր բերել, որոնց նմանը օտար թագավորներից գրեթե և ոչ մեկը մինչ այդ չէր բերել հռոմայեցիների կայսեր. հինգ հարյուր ստրուկ, այդ թվում հարյուր գեղա-

դեմ ներքինիներ։ Այդ մեծահարուստ զառամյալ կինը, րստ երեվույթին, գիտեր, որ արքունիքում ավելի շատ [ներքինի] է լինում, քան ամառ ժամանակ ոչխարների փարախում ճանճեր։ Նա նրանց նախօրոք տեղավորեց [արքունիքում] այն նպատակով, որպեսզի եթե երբևիցե պալատ գա, նրանք որպես իր նախկին ծառաները, սպասարկեն իրեն։ Կային և հարյուր կին սկիաստրիա[213], հարյուր սիդոնական[214] երփներանգ գործվածքներ, որ շատերն այժմ իրենց անգիտությամբ աղավաղելով անունը կոչում են սենդես, հարյուր լինոմալոտարիա[215] (վատ չէ նրանց ժողովրդական հորջորջումը տալ), կտավե երկու հարյուր բարակ ամալիա[216], և ուրիշները, որոնք սարդի ոստայնից էլ բարակ էին և յուրաքանչյուրը կարելի էր տեղավորել եղեգե խողովակի մեջ, սրանք էլ հարյուր հատ, ապա նաև մեծ քանակությամբ արծաթե և ոսկե զանազան սպասներ։ (75) Նա ուշադրության արժանացավ, փառավոր կերպով հյուրընկալվեց՝ իր պատկառելիության և ազնվական ծագմանը պատշաճող ձևով, արժանացավ կայսերամայր կոչվելու [պատվին], մասնակից դարձավ կայսերական բազում ընդունելությունների և պատիվների, ուրախություն և բերկրանք ըմբոշխնեց, լիացավ ստացած փոխհատուցմամբ և խոստովանեց, որ դա շատ ավելին էր, քան իր տվածը։ Այդ էր պատճառը, որ նա մեծահոգաբար իր նվերների վրա ավելացրեց Պելոպոնեսի ոչ փոքր մասը, որն իր կալվածն էր, և առատաձեռն կերպով այն նվիրեց իր որդուն, այն է՝ կայսեր։ Որոշ ժամանակ նա այդ մեծ քաղաքում մնաց՝ վայելելով ու ըմբոշխնելով, և ապա վերադարձավ իր հայրենի երկիրը. նա կարծես այդ շրջանների տիրուհին էր, և այսուհետև [տեղում] արժանացավ շատ ավելի մեծ պատիվների։ Նա վերադարձավ այն ձևով, ինչ ձևով գնաց[217]։ (76) Այդ ժամանակներում էր, որ սկսվեց կառուցվել այս հիանալի և գեղատեսիլ տաճարը, որին մենք Նոր բազիլիկ եկեղեցի[218] ենք անվանում և նվիրված է մեր փրկիչ Հիսուս Քրիստոսին, հրեշտակապետ Միքայելին և եղիա Թեսբացուն։ Այդ կինը վերցրեց [եկեղեցու] հատակի չափերը, գործել տվեց և ուղարկեց հսկայական և զարմանահրաշ գորգեր, որոնք մեզ մոտ կոչվում են ապո տես էվքես[219], որոնցով պետք էր ամբողջ հատակը ծածկվեր, հատակ, որ զանազան թանկագին քարերով էր սլատրաստված, խճանկարների ձևով իրար հարմարեցված և կողք-կողքի դրված, որոնք դրսևորում էին սիրամարգերի երփներանգությունն ու գեղեցկությունը։ Բացի այդ, նա ամեն տարի, քանի կայսրը կենդանի էր, [նվերներ] էր

ուղարկում իր ստացածից ոչ պակաս: Այդ կինը երկար ապրեց, կայսեր մահից հետո էլ: Դեռ կենդանի էր մարգարե վանականը[220], որն ասաց, թե իրեն երկու տարվա կյանք է մնացել. այդ բանի վրա նա ցանկություն հայտնեց գնալ և տեսնել նաև [կայսեր] որդուն՝ Լևոնին, որն արդեն ինքնակալական իշխանություն էր ստացել: Եվ ահա նա նույն ձևով ընտիր պատանիների կրած [դեսպակի] վրա շատ հանգիստ, առանց որևէ դժվարության, կտրեց այնքան երկար ճանապարհը, տեսավ ամենաիմաստուն և հեղ Լեվոն կայսեր, նրան էլ նվիրեց հոյակապ ընծաներ, իր կայքի ժառանգորդը նշանակեց (իր՝ Դանելիսի որդի Հովհաննեսն արդեն վախճանված էր) և խնդրեց կայսերական ներկայացուցիչ ուղարկվի՝ իր ունեցվածքն արձանագրելու և ընդունելու համար. որից հետո բռնեց վերադարձի ճանապարհը, դեպի իրեն սնուցած հայրենի հողը, խնդրելով բարի կայսեր, որ այդ հողին հանձնվի իր հողեղեն մարմինը: Տեղ հասնելով, նա փոքր անց վախճանվեց: (77) Ջառամյալ կնոջ ցանկության և կտակի կամակատար նշանակված պրոտոսպաթար Ջենոբիոսը տեղ հասնելով, Նավպակտոսի[221] բերդը, կնոջ ազգական Դանիելից իմացավ նրա մյուս աշխարհ փոխվելու մասին: Նրա թողած կտակի պատճենը ձեռքին նա մտավ [Դանելիսի] տունը, ամեն ինչ տնօրինեց համաձայն [այդ կնոջ] ցանկության և թողած կտակի: Նա գտավ հնչուն բազում ոսկի, ինչպես և այլ կարողություն՝ արծաթեղեն, ոսկեղեն, հանդերձներ, սպասներ, ստրուկներ և անասուններ. այդ բոլորը մասնավոր մի մարդու համար անչափ մեծ հարստություն էր, ավելի ճիշտ թագավորական սեփականության քիչ զիջող: Այն պատճառով, որ նրա ստրուկներն անթիվ անհամար էին, կայսերական հրամանի համաձայն նրանց մի մասը՝ երեք հազար մարմին լանգոբարդիայի բանակաթեմն ուղարկվեցին, ազատ գաղթականության: Մնացած կալվածները, դրամն ու ստրուկները բաժանվեցին համաձայն նրա կտակի. կայսեր՝ այն է նրա ժառանգին, որպես սեփական ժառանգություն հասավ ի միջի այլոց ութսուն պրոաստիոն:

Ժամանակագրական տեսակետից այդ բոլորը տեղի ունեցավ շատ ավելի առաջ, քան շարադրածս պատմական իրադարձությունները, մասամբ էլ բավական ժամանակ անց: Ճիշտ է, տվյալ պատմության համար այդ մասին գրելն այնքան էլ հրատապ չէր, բայց ի հարգանս այդ զառամյալ կնոջ, ապա և նրա հարստությունը, ազնվազարմությունն ու պատկառելիությունը ցույց տա-

լու նպատակով, շեղման կարգով թող այստեղ արձանագրված լինի։

78. Քրիստոսասեր կայսր Վասիլը պատերազմակ·ան գործողությունների ընդմիջումներում (պատերազմներ, որոնց նա ինչպես ագոնոթետ[222] անհրաժեշտ րնթացքն էր տալիս՝ իր ենթակաների միջոցով), մեծ հոգատարությամբ առատ միջոցներ էր հատկացնում ու տրամադրում վերականգնելու համար սուրբ և աստվածային բազմաթիվ տաճարներ, որոնք անցյալում երկրաշարժերի ժամանակ ճեղքեր էին ստացել, ճեղքեր, որոնք սպառնում էին կործանել նրանց, կամ էլ ամբողջությամբ փլվել էին։ Նա ոչ միայն ամրացնում էր [տաճարները], պետք եղած շինարարությամբ վերականգնում խարխլված մասերը, ոչ միայն կանխում էր փլուզումները, այլև գեղեցկություն էր հաղորդում նրանց և նախկին կատարելությունը և նորաշենի տեսք։ Խոսենք ամեն մեկի մասին առանձին։

79. Աստուծո մեծ իմաստության անունը կրող հռչակավոր և աստվածային տաճարի արևմտյան, մեծ և երկինք խոյացող խորանը մեծ ճեղք էր ստացել և երկյուղ կար, որ շուտով փուլ կգա։ [Կայսրը] փորձառու վարպետների օգնությամբ ամրացրեց այն ու նորոգեց, ապահով և հուսալի դարձրեց։ Նա այդ [խոբանի] վրա աստվածամոր կերպարը նկարեց՝ անսերմ [հղությամբ] ծնված որդուն ձեռքերին, իսկ նրանց երկու կողմում գլխավոր առաքյալներ Պետրոսին և Պողոսին։ Նա միջոցներ հատկացրեց և ջանասիրորեն վերացրեց տաճարի նաև մնացած խարխուլ մասերը։ Նա ոչ միայն վերանորոգեց խարխուլ պատերը, այլ սեփական նվիրատվություններով ավելացրեց նրա նվազած եկամուտները. սլակասում էր յուղը և վտանգ կար, որ կհանգչեն սուրբ կանթեղները, գրա առաջն առնելու համար [կայսրը] նվիրաբերեց Մանտեա կոչված հսկայական կալվածը և մեկընդմիշտ ապահովեց կանթեղների լույսը։ Այս սրբազան տաճարի սպասավորներին նա ապահովեց առատ պարենով՝ նշված կալվածքի հարուստ եկամտից, որով նա նրանց սպասավորությունը դարձրեց անպակաս և մշտական։

80. Նա հենապատերով ամրացրեց նաև Սուրբ Առաքելոց վեհաշուք և մեծ տաճարը, որ խարխլվել էր և վաղեմի շքեղությու-

նից զրկվել. ճեղքեր ստացած մասերը վերանորոգեց, ժամանակի ընթացքում ձեռք բերած կնճիռները հարթեց և նախկին շուքը տվեց ու նորակերտ գարձրեց։ Նա վերաշինեց նաև փուլ եկած, անցյալի շքեղությունից զրկված Պեգեի[223] աստվածամոր սուրբ տաճարը և նախկինից ավելի գեղեցիկ գարձրեց այն։ Նա ի հիմանց վերակառուցեց և նախկինից ավելի ամուր դարձրեց նաև աստվածածնի մի այլ տաճար, Սիգմա[224] կոչվածը, որ ամբողջությամբ ավերակ էր դարձել։ Նա ի հիմանց վերաշինեց Ավրիլիանեում[225] գտնվող Ստեփանոս նախավկայի հիմնահատակ կործանված տաճարը։ Մկրտչի, այն է [Հովհաննես] Կարապետի, Ստրովիլեայում[226] և Մակեդոնիանեում[227] գտնվող [երկու] սուրբ վկայարաններից մեկը ի հիմանց վերաշինեց, իսկ մյուսի՝ հիմնական մասը։ Բացի այդ, նա հին ավերակներից մաքրեց և նորոգեց Փիլիպպոս առաքյալի և նրանից արևմուտք գտնվող Ղուկաս ավետարանչի սրբարանները։ (81) Պատշաճ ուշադրության արժանացրեց և ամբողջովին վերանորոգեց Մոկիոս մարտիրոսի մեծ վկայարանը, որը բազմաթիվ ճեղքեր էր ստացել, նրա ավագ խորանը հիմնահատակ քանդվել էր, ավերելով և սուրբ սեղանը. նա անհրաժեշտ հոգատարություն ցուցաբերեց և կատարելապես ոտքի կանգնեցրեց այն։ Նրան կից, արևմտյան կողմում գտնվող Անդրեաս նախակոչ առաքյալի տաճարը, որը ծայրահեղ անուշադրության մատնվելով ճեղքեր էր ստացել։ Հիմքից վերականգնեց և սուրբ Ռոմանոսի սուրբ տաճարը, որը նույնպես փուլ էր եկել։ Դևտերոնում[228] գտնվող սուրբ Աննայի, և Քրիստոսի վկա Դեմետրիոսի [տաճարները] նորակերտ դարձրեց ու շքեղ։ Տեսնելով, որ Ռավդոսի աստվածամոր տաճարին կից գտնվող էմիլիանոս վկայի [տաճարը] չդիմանալով ժամանակի բեռին, ավերակ էր դարձել, նորոգեց՝ երկու կողմից հենապատերով ամրացնելով։ (82) Նազարիոս վկայի սուրբ վկայարանը, որ վաղուց կառուցված լինելով ոչ միայն փուլ էր եկել, այլ նրա հետքն անգամ չէր մնացել, վերստին կառուցեց և այն իր շքեղությամբ ու գեղեցկությամբ շատ էր գերազանցում նախկինը։ Դոմնինոսի սյունաշարեր[229] կոչված վայրում նա վերանորոգեց և վեհաշուք դարձրեց Քրիստոսի՝ մեր աստուծո սուրբ հարության տաճարը, ապա և վկա Անաստասիայի գեղեցիկ տաճարը, նրա փայտե ծածկը փոխարինեց քարե ծածկով, և հիանալի կերպով պերճազարդեց։ Տեսնելով, որ մեծ վկա Պլատոնի տաճարի ծածկը նույնպես վնասվել է, նորը կառուցեց, վկայարանն ամրացրեց անհրաժեշտ հենապատերով։ Բարե-

հաղթ վկաներ Հեսպերիոսի և Զոեի սուրբ վկայարանին, որը գրեթե հողին էր հավասարվել, նախկին տեսքը տվեց. նորոգեց և Հեպտասկալոնում[230] գտնվող Ակակիոս վկայի սուրբ տաճարը, որ համարյա թե խարխուլ էր գարձել և փլվելու վրա էր. նա ամեն տեսակի հենապատերով ապահովեց այն, նրա փլուզման առաջն առավ և ոտքի կանգնեցրեց։ Պետրիոնում գտնվող Եղիա մարգարեի տաճարը, որը կարծես հոգին ավանգելու վրա էր, նա ամրացրեց, շքեղ կառույց դարձրեց, իսկ նրա շրջակայքում գտնվող ճնշող, խղճուկ տները [քանդեց] և ազատեց [տաճարը] նրանց հարևանությունից։

83. Բայց ինչո՞ւ ենք կանգ առնում նրա գործունեության մանրունքների վրա (թեև դրանք մեծագործություններ են) և չենք խոսում նրա մեծ ու զարմանահրաշ գլուխ-գործոցի մասին, որին նա անձնապես լծվեց և իր ձեռքով կառուցեց արքունիքի բակում։ Այս մեկը միայն բավարար ապացույց է նրա առ աստված տածած ակնածանքի, նրա մտահղացումների վեհության ու զարմանալիության մասին։ Կարծես ցանկանալով փոխհատույց լինել իրենց բարեհաճության համար տեր Քրիստոսին, հրեշտակապետ Գաբրիելին և նախանձավոր Եղիա Թեսբացուն, ով իր մորը մարգարեացավ որդու թագավորական [գահին] բարձրանալու մասին, ահա նրանց անվան և հիշատակի հավերժացման, ինչպես և աստվածածնի և առաջին քահանայապետ Նիկողայոսի սուրբ և գեղեցիկ տաճարը կառուցեց[231], որի մեջ զուգորդվեցին արվեստն ու պերճանքը, ջերմ հավատքն ու մեծ ակնածանքը. ամեն տեղից գեղեցկագույն իրերը նրա շինարարության վրա օգտագործվեցին և համոզված եմ, որ այդ մասին լսելը քիչ է, սեփական աչքով պետք է տեսնել։ Մարգարիտներով, ոսկով ու արծաթով, երփներանգ մարմարիոններով, խճանկարներով, մետաքսով հարսի նման պճնված տաճարը նա ընծայաբերեց փեսա Քրիստոսին։ (84) [Տաճարի] առաստաղը, որ հինգ կիսագնդերից էր կազմված, պսպղում է ոսկուց, սրբապատկերների դեղեցկությունը կայծկլտում է աստղերի նման։ Ծածկը պղնձե է, որ ոսկու տպավորություն է թողնում։ Աջ և ձախ պատերը պերճազարդված են թանկարժեք, գույնզգույն մարմարիոնով, տաճարի ավագ խորանը՝ ոսկով, արծաթով, թանկագին քարերով ու մարգարիտներով է զարդարված ու պաճուճված։ Բեմի վանդակապատը, նրա սյունաշարը և վերևում եղածը, որ քիվի տպավորություն է

թողնում, ապա նաև ներսի նստարաններն ու նրանց առջև գտնվող աստիճանները, սուրբ սեղանները, բոլորը ոսկեջրած արծաթից են, պատվական քարերով՝ մարգարիտներով ագուցված։ Ամբողջ հատակը փառահեղ կերպով ծածկված է մետաքսյա գործվածքներով, կամ սիգոնյան գործերով։ Ամեն ինչ պերճազարդվեց ու պաճուճվեց. հատակի մարմարյա տախտակները և դրանք պարփակող խճանկար գոտիները աչքի են ընկնում իրենց երփներանգությամբ և հիանալի ներդաշնակությամբ։ Ամեն ինչ պսպղում է արտակարգ գեղեցկությամբ։ [Կայսրը տաճարին]հատկացրեց բազմաթիվ երգասացներ, մեծ եկամուտներ նշանակեց, կարգադրելով սրբարանի հոգևոր հովիվներին ծախսել արդար և առատաձեռն ձևով։ Նման գործերում հանդես բերած առատաձեռնությամբ նա գերազանցեց իր բոլոր նախորդներին։

85. Կարճ ասած, ահա ներքուստ այսպիսին է տաճարը, եթե հնարավոր է, իհարկե, մի քանի խոսքով ներկայացնել դիտողներին ապշեցնող այսպիսի գլուխ-գործոցը։ Իսկ ինչպիսի՞ն էր նա դրսից։ Արևմտյան կողմում, տաճարի արտաքին զավթում երկու ավազան կա, մեկը հարավային կողմում, մյուսը՝ հյուսիսայինը, արվեստի մեծագործություններ, նյութի վայել և ճարտարապետի շնորհք։ Հարավայինը կառուցված է եգիպտական քարից, որին մենք սովորաբար հռոմեական ենք անվանում։ Նրա շուրջը կարելի է տեսնել դրակոններ՝ քանդակագործական գերազանց աշխատանք։ Նրա մեջտեղում բարձրանում է կոնաձև, ծակոտկեն, պարուրաձև մի սյուն, որի շուրջը, կարծես պար են բռնել սպիտակ, սնամեջ փոքր սյուներ, որոնք ծածկված են պսակով։ Այդ [սյուների] վերևից հորդառատ ջուրը հոսում էր ավազանի մեջ և ողողում հատակը։ Հյուսիսայինի կողմում գտնվողը կառուցված է սագարիոս կոչված քարից, որին ոմանք օստրիտես են անվանում։ Նրա հատակի մեջտեղում նույնպես ծակոտկեն, պարուրաձև, սյուն է բարձրանում՝ սպիտակ քարից պատրաստված։ Ավազանի [սյուների] պսակի շուրջը վարպետը պղնձե աքաղաղներ, նոխազներ և խոյեր սարքեց, որոնց բերանից, ինչ-որ խողովակի միջով ջուրը հոսում է ավազանի մեջ։ Այնտեղ կարելի է տեսնել նաև գավաթներ, որոնց հատակից այն ժամանակ գինի էր բխում ի հագեցումն անցորդաց։ (86) Սրբարանի հյուսիսային դռնից դուրս սկիզբ է առնում երկար, գլանաձև մի սյունաշար, որի առաստաղը զարդարված է մարտիրոսների սխրանքներն ու մաքառումը ներկայացնող պատ-

կերներով, մի բան, որ աչքդ է շոյում, հոգիդ աստվածասեր դարձնում. մարտիրոսների սխրանքները դրդում են քեզ օրինակ վերցնել նրանցից, նույնիսկ գերազանցել նրանց: Հարավային, ծովահայաց դռներից դուրս գալով, եթե թեքվես դեպի արևելք, կհանդիպես հյուսիսայինի երկարությամբ և լայնությամբ մի այլ սյունաշարի, որը նույնպես ձգվում է մինչև թագավորական բակը. այնտեղ սովորաբար կայսրերը և երևելի մարդկանց որդիները ձիերի վրա նստած գնդակ էին խաղում[232]: Ելանելի կայսրն անցյալում այդ բակում գտնվող տները գնեց, հիմնահատակ քանդեց, տարածությունը մաքրեց և բակի ծովահայաց կողմում գեղեցիկ տներ կառուցեց, որոնք հատկացրեց վերոհիշյալ տաճարին, որպես գանձարան և շտեմարան: Բակում գտնվող տները (բակ, որն անցյալում կայսրերն օգտագործում էին մարմնամարզական նպատակներով) աստուծո տաճարի կառուցման աշխատանքներին խանգարում էին, այդ էր պատճառը, որ ստիպված գնվեցին և քանդվեցին: Երկու սյունաշարերի միջև՝ տաճարի արևելյան կողմում գտնվող տարածության վրա, նույնպես Նոր Եդեմից արևելք, [կայսրը] պարտեզ տնկեց, բազմատեսակ բույսերով լի և հորդառատ ջրով ապահովված: Մենք նրա դիրքի պատճառով սովորաբար Միջնապարտեզ ենք անվանում այն:

Բայց այդ մասին ասվածը բավական է, թե չէ մեզ անձնակության մեջ կմեղադրեն: (87) Անցնենք ջանասեր, գեղեցիկի սիրահար ինքնակալի մնացած գործերին: Նա կայսրերից ո՞ր մեկին չգերազանցեց իր մեծածախս ու շքեղ շինարարությամբ, նոր ձևերի օգտագործմամբ, ամեն մի՛ զարմանահրաշ գործում հանդես բերած տաղանդով: [Նա գերազանցեց նրանց] ոչ միայն աչք շոյող, գեղեցիկ, մեծածախս, տաճարների շինարարությամբ, այլև թագավորական հոյակապ կացարանների, որտեղ իրար էին զուգորդված թանկագինը գեղեցիկի հետ, գեղեցիկի հետ՝ անչափ օգտակարն ու հրաշագեղը: Այն պատճառով, որ ոչ բոլորին է վիճակված ականատես լինելու նման գեղեցկության, իսկ այդ մասին միայն ականատեսը կարող է լիակատար պատկերացում ունենալ, ստիպված եմ գրավոր ներկայացնել, որպեսզի ըստ արժանվույն հիանան նրանց արարչի վրա և որպեսզի արքունի դանձապետները այդ մասին որոշակի գաղափար ունենան: Պալատի հենց արևելյան կողմում կառուցված է Եղիա Թեսբացու տաճարը, որը ոչ միայն ներքուստ է շքեղ ու գեղեցիկ, այլև դրսից: Առաստաղը առատ ոսկուց պսպղում էր, այն ամբողջությամբ ծածկված էր

խճանկարներով. ժամանակի ընթացքում հորդառատ անձրևներից, ձյունից ու բուքից այդ հրաշագեղությունն զգալի չափով տուժել է: Այս տաճարին կից նա կառուցեց բազմաչարչար և ամենահամբերող վկա Կղեմեսին նվիրված աղոթարանը, որտեղ ամփոփեց նրա գանգր և այլ բաղում մարտիրոսների սուրբ մասունքները, որոնցից ինքը [կայսրը] և նրանից հետո եկողները ստանում են հոգու և մարմնի կորով: Նրանց կից է գտնվում նրա կառուցած՝ մեր փրկչին և աստծուն նվիրված աղոթատունը, որի շքեղությանն ու հիասքանչությանը ականատես չեղողները չեն հավատա, որ այնքան շատ արծաթ, ոսկի, թանկագին քարեր ու բաղում մարգարիտներ են նրա հարդարման վրա ծախսվել: Բովանդակ հատակը դրվագավորված սլինդ արծաթից է պատրաստված՝ էնկավսիսով[233]. այստեղ աչքի է զարնում ոսկերիչների վարպետությունը: Աջ և ձախ պատերի վրա նույնպես առատորեն է օգտագործված արծաթը՝ ոսկով ու զանազան թանկագին քարերով և պսպղուն մարգարիտներով պաճուճված: Այս սրբազան տան ավագ խորանը բաժանող վանդակապատը, աստվա՜ծ իմ[234], ինչքա՜ն հարստություն էր[235] իր մեջ պարունակում. սյուներն ու նրանց խարիսխները ամբողջությամբ արծաթից են, իսկ նրանց վրայից ձգվող արխիտրավը՝ ամբողջությամբ մաքուր ոսկուց, հնդկական ողջ հարստությամբ ողողված: Այստեղ, բազմաթիվ տեղերում տիրոջ աստված-մարդու կերպարն է դրոշմված խիմևսիսի եղանակով[236]: Ես անկարող եմ պատմելու, թե ավագ խորանում ինչ գեղեցկություն, սուրբ [սպասեղեն], գանձ է պարփակված. եթե նա ադիտոն է, ապա և խոսքի համար էլ աբատոն է[237]: Շարունակելն իմաստ չունի, նախընտրելի է լռել: Ահա սրանք են պալատի այսպես ասած արևելյան գեղեցկությունները, որոնց ծնունդ տվողը երանելի կայսր Վասիլի ջերմ հավատքն էր [առ աստված]:

88. [Շինարարություն] կատարվեց այլ վայրերում ևս. այդ շարքին կառուցվեց սուրբ քարոզիչ Պողոսի սրբազան աղոթարանը, որի արարիչը նույն մարդն է, նրա առատաձեռնությունը: Սրա հատակի վրա ևս արծաթ է օգտագործված. արծաթով են պարփակված հատակի մարմարյա շրջանակները: Իր ճոխությամբ և շքեղությամբ նա ամենևին չի զիջում մյուս [կառույցներին]: Ապա և գլխավոր առաքյալ Պետրոսին նվիրված սուրբ տաճարը, որ նա կառուցեց Մարկիանոսի սյունաշարի ծայրում՝ կարծես ծայրագույն աշտարակ լիներ նա. նրան միացվեց և հրեշտակա-

պետի աղոթարանը։ Հենց նրա վերևում է գտնվում աստվածամոր տաճարը. նա ինչպիսի՞ գեղեցկություն ու արտակարգ շքեղություն տվեց նրան և կգտնվի՞ արդյոք մեկը, որ դիտելով [տաճարը], չշոյվի նրա աչքը, բերկրանքով ու բավականությամբ չլցվի նրա հոգին։

89. Վասիլ կայսեր հենց արքունիքում կառուցած [շենքերը], որոնք պալատների պալատներ էին[238], անզուգական գործեր, ավելի հմուտ պատմողի, ավելի կատարյալ գրողի կարոտ են զգում։ Այս նորաշեն շենքը, որ Կենուրգիոն է կոչվում և ի հիմանց նա կառուցեց, ո՞ր մի դիտողին չի ապշեցնի։ Այն իրենց վրա են կրում շարքի կանգնած տասնվեց սյուն, որոնցից ութը թեսալական քարից են պատրաստված՝ կանաչ գույնի, վեցը օնիքս կոչված քարից, որոնց քանդակագործը զարդարեց գեղեցիկ բազմաթիվ քանդակներով՝ որթատունկ, զանազան կենդանիների կերպարներ։ Մնացած երկու սյուները, թեև նրանք էլ օնիքսից էին պատրաստված, բայց քանդակագործները նրանց այլ ձև տվեցին, առուակոսներով վերացրին մակերեսի հարթությունը. վարպետը ցանկացավ զանազանություն մտցնել, բազմազանության մեջ տեսնելով բարեձևն ու գեղեցիկը։ Շենքն ամբողջությամբ սյուների վերևից սկսած մինչև առաստաղը և արևելյան կիսագունդը զարդարվեց գեղեցիկ խճանկարներով. ամենից առաջ պատկերված էր մեծագործության արարիչը, մարտակից զորավարների շրջապատում, որոնք որպես նվերներ բերում են նրան իր գրաված քաղաքների [նկարները]։ Դրանից վերև, առաստաղի վրա, պատկերված են կայսեր հերակլյան սխրանքները, հպատակների համար կատարած հոգնաջան աշխատանքը, պատերազմի դաշտում ցուցաբերած քաջագործությունները և աստուծո պարգևած հաղթանակները. ներքևում, կարծես, աստղերից պայծառացած երկնքի տակ գտնվում է նույն ինքնակալի կողմից վարպետորեն կառուցված գեղեցիկ ու ճոխ, բազմաձևությամբ աչքի ընկնող ննջասենյակը, որն իր հիասքանչությամբ գրեթե անմրցելի է։ Հատակի հենց մեջտեղում փայլուն խճաքարերով վարպետորեն պատկերված է մարական թռչուն սիրամարգը, որն առնված է կարիական լավ հղկված քարից պատրաստված շրջանակի մեջ, որտեղից նույն քարից պատրաստված ճառագայթներ ճաճանչում են դեպի մի այլ, ավելի մեծ շրջանակ։ Այս [շրջանակից] դուրս գտնվող [հատակի] քառակուսի տարածությունը ծածկված է թեսալական քարով, որ կանաչ գույն ունի,

ստեղծելով առվակի կամ գետի տպավորություն։ [Հատակի] չորս անկյուններում գույնզգույն և նուրբ խճաքարերից չորս արծիվ է պատկերված, որոնք այնքան բնական են, որ կարծես կենդանի են և ճախրելու պատրաստ։ Յուրաքանչյուր պատր ծածկված է ապակե բազմերանգ տախտակներով՝ ստեղծելով ծաղիկների տպավորություն։ Սրանց վերևում գտնվում է ոսկով պաճուճված ծաղկազարդ [գոտի], որը պատերի վրա բաժանող գիծ է քաշում։ Սրան հաջորդում է մի այլ շքեղություն՝ ոսկե խճաքարերով պատրաստված մի պատկեր, գահի վրա բազմած մեծագործության արարիչ ինքնակալը և նրա կին Եվդոկիան՝ թագավորական հանդերձներ հագած և թագերը կապած։ Նրանց զավակները, կարծես պսպղուն աստղեր, պատկերված են դահլիճի շուրջը, նույնպես թագավորական հանդերձներ հագած և թագերով զարդարված։ Որդիները պատկերված են աստուծո պատվիրանները բովանդակող գրքերը ձեռքին, պատվիրաններ, որոնց հիման վրա էին դաստիարակվել. դուստրերը պատկերված են նույնպես աստվածային օրենքները բովանդակող ինչ-որ գրքեր բռնած։ Վարպետն հավանաբար ուզում էր ցույց տալ, որ ոչ միայն որդիները, այլև դուստրերը իրազեկ են սուրբ գրոց, որ անմասն չեն աստվածային իմաստության. թեպետև նրանց հայրը, կյանքի դժվարին պայմանների բերումով, չկարողացավ ժամանակին պետք եղած կրթությունն ստանալ, բայց և այնպես նա իր երեխաներին մասնակից դարձրեց իմաստության։ Նա այդ բանն ուզեց ընդգծել ոչ միայն պատմության բերանով, այլև դիտողներին ցույց տալ նկարված, ոչ միայն պատմական երկերում շարադրված։ Այս շքեղությունը պատկերված է չորս պատերի վրա՝ մինչև առաստաղը։ Այս ննջասենյակի առաստաղը թաղակապ չէ, այլ հարթ՝ պատերի վրա նստած. նա պըսպղուն է, ամբողջությամբ ոսկով պաճուճված։ Մեջտեղում կանաչ ապակուց պատրաստված հաղթական խաչն է պատկերված, որի շուրջը կարելի է տեսնել երկնքի աստղերի պես պսպղացող երանելի կայսեր, [իր] բոլոր երեխաներին և կողակցին՝ ձեռքերը դեպի աստված և կենարար խաչի նշանը մեկնած, առանց խոսքի ասելով, թե այս հաղթական նշանով է, որ մեր թագավորության օրերում կատարվեց և իրականացավ ամեն մի բարի և աստվածահաճո գործ։ Այնտեղ գրված կա նաև աստուծուն ուղղված գոհանամ՝ ծնողների կողմից զավակների համար ասված, ինչպես և զավակների կողմից՝ ծնողների համար։ Ծնողների կողմից ասվածը բառացի հետևյալն է. «Գոհանամք զքեզ, աստված, անսահ-

ման բարի, Թագավոր Թագավորաց, որ արժանացրիր մեզ ունենալ քո հրաշալիքների վեհությանը շնորհապարտ զավակներ։ Պահպանիր դու նրանց, կամքով քո. թող նրանցից ոչ ոք չշեղվի պատվիրաններից քո, որպեսզի այդ բանում էլ շնորհակալ լինենք բարությանը քո»։ Իսկ զավակների [գոհանամը] հետևյալն է. «Գոհանամք զքեզ, Բանն աստուծո, որ գավթական չքավորությունից բարձրացրիր մեր հորը, և օծեցիր նրան օծմամբ քո սուրբ հոգու։ Պահպանիր նրան ձեռամբ քո և մորը մեր, արժանացնելով նրանց և մեզ քո թագավորությանը երկնային»։ Ահա այսքան ննջասենյակի արվեստի հիանալու արժանի գործերի մասին։

90. Նույն ձեռքի և մտքի գործ է և Մարկիանոսի սյունաշարերում գտնվող վիթխարի տրիկլինը, որ կոչվում է նաև Պենտակուվուկլոն և աչքի է ընկնում իր արտակարգ գեղեցկությամբ ու շքեղությամբ։ Նրա մոտ է գտնվում և վերևում հիշատակված օդագնաց Պողոսի շքեղ աղոթարանը, որին միանում է ամենաիմաստուն Լևոնի կառուցած Վարվառա վկայի [աղոթարանը]։ Ապա նաև թագավորական մյուս կացարանները, որոնք գտնվում են խրիսոտրիկլինից արևելք, մի փոքր բարձրադիր տեղում, Նոր եկեղեցուց արևմուտք, և բարձր խոյանալու պատճառով Արծիվ անունն ստացան։ Այս բոլորը, ապա և այստեղ գտնվող աստվածածնի գեղեցիկ, անչափ գողտրիկ աղոթարանը նույն կայսեր գործերն են։ Շինարարության վրա առատորեն օգտագործված թանկարժեք նյութերը, ապա և նոր ձևերն՝ ու վեհությունը ընդգծում են այդ այրի մեծահոգությունն ու դեպի գեղեցիկն ունեցած նրա սերը։ Կայսրը խորեգոսն[239] ու արարիչն էր նաև սրանցից արևմուտք գտնվող բրգաձև բնակարանների, ինչպես և աստուծո և Բանի մոր մի այլ աղոթարանի, որոնք իրենց անսովոր և նորաձև կառուցվածքով շատ են գերազանցում այլ [շինությունները]։ Նրանցից ցած, Մոնոթիրոն կոչված մուտքի մոտ գտնվող Հովհան Աստվածաբանի շատ գողտրիկ աղոթարանը, ինչպես և այնտեղ սկիզբ առնող բարձր, արևոտ, մարմարյա հատակով սյունաշարը, որ ձգվում է մինչև Փարոսը[240], նույն կայսրը կառուցեց, ինչպես և նրա արևելյան կողմում գտնվող ամրակուռ շենքերը, որոնցից մեկը գանձատունն է, իսկ մյուսը՝ վեստիարիոնի[241] դեր է խաղում։ Նրանք իրենց մեջ շատ հաջող կերպով զուգակցում են գեղեցիկն ապահովի հետ։ Հիասքանչ, լայնատարած ու հոյակապ պալատական բաղանիքի շնորհալի կառուցողն էլ նա էր, բաղանիքի, որ

միաժամանակ և՛ գեղեցիկ գործ էր, և՛ ծառայում էր հաճույքի, մարմնական ապաքինման ու հանգստի։ Այն գտնվում է Ֆիալե կոչվածից վերև, իսկ վերջինս իր անունը պարտական է նախկինում այստեղ կանգնած վենետների «կողմի»[242] քարե Ֆիալեին։ Մյուս «կողմի» Ֆիալեն, ես նկատի ունեմ պրասինոսների, գտնվում էր արքունիքի գավթի արևելյան մասում, որը սուրբ տաճարի կառուցման կապակցությամբ քանդվեց, որով վերջ տրվեց և այս վայրում տեղի ունեցող «կողմերի» գործունեության, ինչպես և այստեղ տեղի ունեցող միջոցառումներին։

91. Այս բոլորից բացի, նույն ազնիվ կայսեր գործն են և Մանգանա[243] կոչվող թագավորական շենքը, Նոր կոչվող շենքը, որոնք նա կառուցեց հետևյալ նպատակով. նա չէր ուզում իր սեփական կարիքների համար, կամ ամեն տարի իր կազմակերպած ընդունելությունների վրա ծախսել պետական գումարները, որոնք գոյանում էին հպատակներից հավաքվող հարկերից. նա [չէր ուզում] հրավիրյալներին սեղան տալ ի հաշիվ ուրիշների թափած քրտինքի, դրա համար մտածեց այդ շենքերը [կառուցել], որոնց հատկացրեց երկրագործությունից ստացվող զգալի եկամուտներ, և այսպիսով, թագավորական խրախճանքը և՛ իր ժամանակ, և՛ իրենից հետո ամիշտ պետք էր կայանար առատ և արդար միջոցների հաշվին։ Նույն կայսրը Պեգե[244] կոչվող վայրում գտնվող կայսերական պանդոկները և կացարանները ձևափոխելու նպատակով ի հիմանց կառուցեց. նրանց կից նա կառուցեց և գեղեցիկ տաճարներ, այդ թվում և սուրբ մարգարե Եղիայի սրբազան տաճարը, նրա հաջորդ և աշակերտ Եղիշեի, մեր առաջին բարեպաշտ կայսր Կոստանդին Մեծի, քառասուներկու նոր վկաների, ապա նաև երկու այլ աղոթատներ, կառուցված հանուն և ի փառս աստվածամոր։ Հիերիայի պալատում նա կառուցեց նույն Եղիա մարգարեի սուրբ աղոթարանը, որը գեղեցկությամբ և շքեղությամբ ոչնչով չի զիջում մյուսներից և ոչ մեկին։

92. Կայսերական կացարաններից բացի նման ձևափոխություններ և վերափոխություններ կատարվեցին մի հսկայական ջրամբարի վրա, որն անցյալում կառուցել էր քաղաքի հիմնադիր [Կոստանդին] կայսրը, իսկ Հերակլ կայսրը այն հողով էր լցրել ու ցամաքացրել. նրա տեղում տնկվել էին ծառեր ու թփեր։ Խնդրո առարկա [ջրամբարը] նման էր կայսերական պալատների ներ-

սում գտնվող ջրամբարին, Մագնավրայի առջևում եղողին, ինչպես և նրան, որ Հուստինիանոսի արիկլինի և էկթեսիսի միջև էր։ Սրանք էլ [ժամանակին] լի էին ջրով, այնտեղ կայսրերի հաճույքի համար ձկներ էին բազմացվում, ինչպես և ձկնորսությամբ զբաղվելու, բայց [Հերակլ] կայսրը հող լցրեց նրանց մեջ և պարտեզներ տնկեց։ Պատճառը Ստեփանոս մաթեմատիկոսն էր, որը կայսեր ծննդյան առթիվ գուշակել էր, թե ջուրն է լինելու նրա մահվան պատճառը[245]։ Նույն այդ պատճառով պարտեզի վերածվեց և Հիերիայի ջրավազանը[246]։ Երանելի կայսր Վասիլը տեսնելով, որ տվյալ վայրն ունի պարտեզներ տնկելու բավարար հողատարածություններ, բայց զգում է խմելու ջրի պակաս, բազում աշխատող ձեռքերի օգնությամբ նախկին [ջրավազանի] մեջ լցված հողը դատարկեց, հող, որի վրա բույսեր էին աճում, և նախկին տեսքը տվեց, պարտեզի տեղ խոշոր և մշտական ջրամբար ստեղծեց։

Պալատի շրջանում երանելի և բարեպաշտ կայսեր ջանասիրաբեն կատարածի մասին ահա այսքան։ (93) Վերջացնելով պալատին նվիրված շարադրանքը, անցնենք թագավորանիստ քաղաքում և նրա շրջակայքում ինքնակալի ձեռնարկած սրբարանների կառուցման և վերակառուցման հարցին։ Նա, տեսնելով, որ կյանքի հոգսերից տառապող քաղաքային բիրտ ու կոպիտ ամբոխը իր ժամանակը Ֆորոս[247] կոչված հրապարակում է անցկացնում, իսկ մոտակայքում իր հոգու ցավերն ապաքինող աղոթարան չկա, այդ հրապարակում ահա կառուցում է աստվածածնի սուրբ և հոյակապ տաճարը, որը մի կողմից պետք է անձրևոտ եղանակների կամ սառնամանիքների ժամանակ ամբոխի համար ապաստարանի դեր խաղար, իսկ մյուս կողմից՝ հոգու փրկության հաճելի նեցուկ և ապավեն։ [Կայսրը] տեսնելով, որ Խալկոպրատիայում[248] գտնվող փառավորյալ աստվածածնի մյուս սուրբ տաճարը՝ սրբազնագույն և սուրբ գերեզմանի [տաճարը] շատ է համեստ ու անպաճույճ, երկու կողմից լուսավոր խորաններ կառուցեց, գմբեթը բարձրացրեց, տաճարը լուսավորվեց ճաճանչափայլ լույսով։ Հենց նա էր, որ մտածեց Ցիրոս[249] կոչված տեղում գտնվող հրեշտակապետի սուրբ տաճարի մասին, մարդասիրաբար հոգաց և օժանդակեց նրա շուրջն ապրող չքավորներին։ Նա տաճարին փայլ տվեց, այժմյան ճոխությունը, նրա եկամուտներն ավելացրեց, սպասարկող անձնակազմը կարիքից ազատեց, բացի այդ նա առատ ողորմություն տվեց չքավորներին։ Պուլքերիանեում[250] գտնվող սուրբ

վկա Լավրենտիոսի փուլ եկած հսկայական տաճարը վերականգնեց, շատ շքեղ տեսք տալով նրան։ Քաղաքի շրջակայքում նա շուրջ հարյուր եկեղեցի կառուցեց, ապա և աղքատանոցներ, հյուրանոցներ, հիվանդանոցներ, ծերանոցներ և վանքեր, իսկ ավերվածներից շատերը վերանորոգեց։

94. Նա աստվածասիրաբար ու ջերմեռանդությամբ նման մեծագործություններ էր կատարում ոչ միայն քաղաքում։ Նույն հոգատարությունը նա ցուցաբերում էր և քաղաքից դուրս։ Նա վերականգնեց, հենապատերով ամրացրեց և պայծառացրեց նաև Հեբդոմոնում[251] գտնվող ավետարանիչ առաքյալ Հովհան Աստվածաբանի տաճարը, որ չդիմանալով երկար ժամանակի բեռին, տուժել էր. ապա և նրա մոտիկ գտնվող Կարապետի տաճարը, որ բաղում տարիներ առաջ փուլ էր եկել և տաճարի տեղում ավերակներ էին միայն մնացել. նա մաքրեց ավերակների աղբն ու հողը և հոգատարությամբ շատ կարճ ժամանակամիջոցում հոյակավոր և մեծ տաճարներին չզիջող [եկեղեցի] կառուցեց։ Հռեգիոնում[252] գտնվող գլխավոր առաքյալի տաճարը մտնել հնարավոր չէր, որովհետև փլվելու վախ կար։ [Կայսրը] քանդեց այն և ի հիմանց նորը կառուցեց՝ իր հավերժ և անջնջելի հիշատակի համար։ Նա վերականգնեց և նախկինից էլ ավելի ճոխ դարձրեց Կալլինիկոս վկայի փլված, գետնին հավասարված տաճարը, որ Բաթիրսոս գետի[253] վրա գցված Հուստինիանոսի կամուրջների մոտ էր գտնվում։ Ստենոն[254] կոչված տեղում (ես նկատի ունեմ Եվքսինյան պարանոցը) նա աստվածահաճությամբ ու աստվածասիրաբար սուրբ Փոկասի սրբազնագույն տաճարը կառուցեց, բարեպաշտ վանականների մի եղբայրություն հաստատեց այնտեղ, աստվածագումար մենաստան և հոգիների բուժարան դարձրեց, իսկ շրջանն էլ շինություններով և ագարակներով զարդարեց։ Այս բոլորից բացի, նա Սոսթենիոսում[255] վերստին կառուցեց նաև հրեշտակապետ Միքայելի սուրբ տաճարը[256], որ ժամանակի բեռին չդիմանալով խարխլվել էր, բազմաթիվ ճեղքեր ստացել, արդեն փլվելու վրա էր և շատ անպաճույճ տեսք էր ընդունել։ [Կայսրը] վերականգնեց այն, տվեց նախկին կատարելությունը և ամեն տեսակի շքեղություն։ Այսպես հոգատար էր երանելի կայսր Վասիլը սուրբ տաճարների վերականգնման հարցերում, և հենց այստեղ է, որ ամենից առաջ երևան է գալիս մարդու՝ դեպի աստված տածած սերը։

95. Գիտենալով, որ աստծուն ամենից շատ հաճույք է պատճառում հոգիների փրկությունը, որ անարգից պատվականը հանողը Քրիստոսի բերան է համարվում[257], այդ առաքելական գործում էլ նա չզլացավ և չանգոսնեց։ Նա ամենից առաջ համոզեց քրիստոնեությունն ընդունել հրեաների անհավատ և քարսիրտ ժողովրդին[258]։ Նա հրամայեց, որ իրենց դավանանքի հավատամքով ներկայանան բանավեճի, և կամ ցույց տան իրենց [դավանանքի] ճշմարիտ լինելու մասին զորեղ և անհակաճառելի փաստերը, կամ համաձայնվեն, որ օրենքի և մարգարեների գլուխը Քրիստոսն է, ընդունեն, որ օրենքը նման է ստվերի, որ արեգական լույսի փայլատակման հետ ցրվում է, ընդունել տիրոջ վարդապետությունը և մկրտվել։ Նա խոստացավ [քրիստոնեությունն] ընդունողներին պաշտոններ շնորհել, վճարած հարկերի բեռից և իրավազուրկ վիճակից ազատել ու լիիրավ դարձնել. այդ ճանապարհով նա շատերին փրկեց իրենց անզգամությունից և ձգեց դեպի դավանանքը Քրիստոսի, թեպետև նրանցից շատերը, կայսեր վախճանվելուց հետո շների նման դեպի իրենց փսխածը վերադարձան[259]։ Բայց եթե նրանք, ավելի ճիշտ նրանցից ոմանք, հնդիկների նման չփոխվեցին[260], այնուամենայնիվ աստվածասեր կայսրը իր գործի վարձն աստծուց լրիվ պետք է ստանար, հենց իր ջերմեռանդության համար։

96. Նա զբաղվեց նաև բուլղարաց ցեղի հարցով։ Այս ժողովուրդը, որ մինչ այդ կարծես բարեպաշտություն էր ընդունել՝ քրիստոնյա դարձել[261], այնուամենայնիվ ճշմարիտ հավատքի մեջ դեռ չէր ամրացել, անկայուն վիճակում էր, դյուրությամբ երերում էր ու տատանվում, ինչպես տերևները քամուց։ Բայց կայսեր անդուլ հորդորներով, [նրանց մեծամեծներին] փառահեղ հյուրընկալություն ցուցաբերելով, ապա նաև պատվասիրությամբ ու առատաձեռն նվիրատվությամբ, համոզեց նրանց արքեպիսկոպոս[262] ընդունել և երկրում եպիսկոպոսությունների խիտ ցանց հաստատել, որոնց, ապա նաև լեռներից ու քարայրներից կանչված և կայսեր կողմից այնտեղ ուղարկված բարեպաշտ վանականների օգնությամբ, այդ ժողովուրդը հրաժարվեց իր պապենական սովորություններից և ամբողջությամբ ընկավ Քրիստոսի ուռկանը[253]։

97. Ոսկու, արծաթի, մետաքսյա հանդերձների առատ բաշխմամբ նա իրեն ձգեց, մերձեցրեց նաև ռուսների ամենաանհաղթա-

հարելի և ամենաանաստված ժողովրդին, նրա հետ հաշտության պայմանագիր կնքեց, համոզեց փրկչական մկրտությունն ընդունել, ապա և պատրիարք Իգնատիոսի կողմից ձեռնադրված արքեպիսկոպոս[264]: Երբ վերջինս ժամանեց վերոհիշյալ ժողովրդի երկիրը, սիրով ընդունվեց: Այդ ցեղի իշխանը հպատակների ժողով հրավիրեց, որը գլխավորեց ինքը, և ծերերը, որոնք բոլորից ավելի նախապաշարված էին դարավոր սովորություններով, քննության առան իրենց և քրիստոնյաների դավանանքի հարցը: Նրանք ներս հրավիրեցին իրենց մոտ ժամանած քահանայապետին. [իշխանը] հարցափորձ արեց նրան, թե ի՞նչ է նա քարոզելու իրենց և վարդապետելու: Նա ներկայացրեց սուրբ ավետարանի սրբազան մատյանը, պատմեց մեր Փրկչի և աստուծո մի քանի հրաշքների մասին, ինչպես և հին կտակարանում տրված աստուծո հրաշագործությունների պատմությունը: Ռոսները կտրականապես ասացին. «Եթե մենք ականատես չլինենք որևէ նման բանի, ամենից առաջ այն բանի, ինչ դու պատմեցիր հնոց նետված երեք մանուկների մասին[265], ամենևին չենք հավատա քեզ, ոչ էլ կշարունակենք լսել քո ասածները»: Նա, վստահ լինելով նրա խոսքի ճշմարտությանը, թե «զոր ինչ խնդրիցէք յանուն իմ՝ արարից զայն» և «որ հաւատայն յիս, զգործս զոր ես գործեմ, և նա գործեսցէ, և մեծամեծս եւս քան զնոյնս գործեսցէ»[266], ապա և պնդելով, որ իր արածը հանուն ցուցադրության չէ, այլ հոգիների փրկության, ասաց. «Թեև չի կարելի փորձել տեր աստծուն[267], բայց եթե հոգով կամենում եք դալ առ աստված, պահանջեցեք ինչ որ ուզում եք, և աստված անպայման կկատարի այդ՝ ձեր հավատքի համար, թող թե մենք հասարակ մահկանացուներ ենք և աննշան»: Նրանք պահանջեցին քրիստոնյաների հավատո մատյանը, այն է՝ աստվածային սուրբ ավետարանը գցվի իրենց վառած կրակի մեջ. եթե մնա անվնաս և անկեզ, կընդունեն նրա քարոզած աստծուն: Այդ ասվելուց հետո քահանան մեկնեց ձեռքերը, աչքերը հառեց առ աստված և ասաց. «Մեկ անգամ ևս փառավորիր քո սուրբ անունը, Հիսուս Քրիստոս, տեր աստված, հաչս համայն այս ժողովրդի» և սուրբ ավետարանի մատյանը գցվեց վառվող խարույկի մեջ: Անցան բազում ժամեր, խարույկը հանգցրին ու սուրբ մատյանը գտան անվնաս ու անեղծ, կրակից նա ոչ մի վնաս չէր կրել, չէր ենթարկվել որևէ փոփոխության: Մատյանի փականի վրա եղած ծոպերն անգամ որևէ վնաս կամ փոփոխություն չէին կրել: Բար-

բարոսները, տեսնելով այդ սարսափելի հրաշքը, ապշեցին և ա-ռանց վարանման սկսեցին մկրտություն ստանալ։

98. Երբ խելամիտ Վասիլ կայսեր թագավորության ժամանակ նման գործեր էին կատարվում, ամեն ինչ բարեհաջող վախճան էր ունենում, ըստ [կայսեր] ցանկության, երբ կյանքն օրեցօր բարեկեցիկ էր դառնում և քաղաքում ու պալատում ուրախություն էր, երբ գրեթե բոլոր կղզիներում և մայր ցամաքներում խաղաղություն էր տիրում, հանկարծակի արքունիքի վրա խուժեց դժբախտությունների փոթորիկ, ամպրոպ ու մրրիկ։ Պալատում տարածվեց լաց ու կոծ և իլիական վիշտ, կատարվեց կսկծալի ողբերգություն։ Կայսեր ամենասիրելի, անդրանիկ որդին՝ Կոստանդինը իր ծաղիկ, մատաղ հասակում, երբ եռանդագին սկսել էր մրցել հոր հետ սխրագործությունների մեջ, ծանր հիվանդացավ և մի քանի օր տառապեց ջերմությամբ։ Սաստիկ բարձր ջերմությունը շատ արագ վատնեց նրա կենսական հյութերը և նա հոգին ավանդեց[268], հորը գցելով մեծ սգո մեջ։ Կոփված տղամարդը, սակայն, անասելի դժբախտությունների ժամանակ պարտավոր էր իրեն զսպել. լինելով մահկանացու, [Վասիլը] գիտեր, որ որդին էլ էր մահկանացու։ Դժբախտության վրա չափից շատ ողբալը նա համարեց ցածր, տղամարդուն անվայել և թողնելով կանանց, շուտով ուշքի եկավ ու քաջանուն Հոբի շնորհակալական խոսքերն ասաց. «Տէր ետ և Տէր առ. որպէս Տեառն հաճոյ թուեցաւ՝ նոյնպէս և եղև. եղիցի անուն Տեառն օրհնեալ»։ Զարմանալու ի՞նչ կա, ասաց նա, եթե տվողն ետ առավ. այդպես էր նա որոշել երբ տվեց։ Նա ավելի մտահոգված էր [վախճանվածի] մոր և եղբայրներին մխիթարելով։ Ապա նորից լծվեց իր հանապազօրյա գործին՝ որբերին պաշտպան կանգնելուն, այրիներին՝ օգնություն տալուն, զինվորներին ու չքավորներին՝ նպաստ, նեցուկ կանգնելուն անիրավվածների. նա սիրալիր կերպով ու բարյացակամությամբ լսում էր տիրոջից վախեցողներին։ Նրա համար ուղեցույց էր օգտակարն ու փրկարարը, այն ինչ արժանանում է երկնային թագավորության։

99. Իշխանավորներն ու կառավարիչները հաճախ սովորություն ունեն իրենց հավատարմությունն ընդգծելու մտադրությամբ ավելացնել հարկերը, ձեռք առնել միջոցներ, որոնք կարող են նպաստել [պետության] եկամուտների ավելացմանը։ Նրանք ենթադրում են, որ այդ ճանապարհով կարող են ամրապնդել իրենց

դիրքը։ Մի անգամ գենիկոնի [լոգոթետի][269] պաշտոնն ունեցողը նույն այդ նկատառումներով ազնիվ կայսեր խորհուրդ տվեց հռոմեական տիրապետության բոլոր բանակաթեմերը ուղարկել այսպես կոչված էպոպտներին ու էքսիսոտներին[270], որպեսզի, ինչպես ասաց, այն ագարակներն ու գյուղերը, որոնք ժամանակի ընթացքում այլ և այլ պատճառներով անտերունչ էին դարձել, տան ուրիշներին և այդպիսով կայսերական գանձարանին մեծ եկամուտ բերեն։ Կայսրը ձևացրեց, որ համամիտ է նրա խորհրդին և նրան հրամայեց այդ գործը հաջողությամբ իրագործող մարդկանց ընտրել և իրեն ներկայացնել։ Պետական գանձապահն իր կարծիքով լավագույններին ընտրեց. ընտրյալների ցուցակը ներկայացնելով [կայսեր], նա կշտամբանքի արժանի համարվեց և խիստ պարսավանքի ենթարկվեց, որ այդ գործի համար նման մարդկանց է առաջադրել։ [Գանձապահն] ասաց, որ պաշտոնյաների մեջ դրանցից լավը չկա. կայսրը պատասխանեց, թե՝ «Ես դեմ եմ այս նախաձեռնության. եթե հնարավոր լիներ այդ գործն ինքս անձամբ կկատարեի, բայց որովհետև գտնում եմ, որ դա անվայել է և անիրագործելի, ստիպված իմ հույսերը պետության երկու մագիստրոսների[271] վրա եմ դնում, այդ պարտականության կատարումը վստահում եմ նրանց, որովհետև նրանք և՛ պատկառելի տարիք ունեն և՛ մեծ փորձ, իրենց վստահված պետական պարտականությունները երկար տարիների պաշտոնավարության ընթացքում կատարել են անթերի, ուղղամիտ և առաքինի կերպով։ Արդ, ասաց, դու ինքդ գնա և հայտնիր նրանց այս գործի օգտակարության մասին, հաղորդիր և իմ կարծիքն այդ առթիվ։ Եթե նրանք համաձայն լինեն ընթացք տալու դրան, ես կողջունեմ այդ միտքը և կստորագրեմ դրա տակ»։ Բայց երբ այդ մասին լսեցին երկու [մագիստրոսները], ապշեցին, և պատճառ բռնելով իրենց ծերությունը, հասարակաց հոգսերով սաստիկ ծանրաբեռնվածությունը, խնդրեցին ազատել իրենց նման ծառայության բեռից։ Ուղարկվողը ձեռնունայն վերադարձավ կայսեր մոտ և զեկուցեց մագիստրոսների վճռի մասին։ Կայսրը, լսելով այդ, ասաց. «Իմ գնալը համարվում է անվայել, պայծառափայլ մագիստրոսները չեն ուզում իրենց վրա վերցնել այս գործը, իսկ ես էլ չունեմ նախաձեռնությունն իրականացնող ուրիշ վստահելի մարդ, դրա համար ահա որոշել եմ քննության ներկայացված հարցին ընթացք չտալ։ Ավելի լավ է, ասաց նա, որ վատ մարդկանցից ոմանք ապօրինաբար ինձնից օգուտ քաղեն, քան թէ որևէ մեկը վնաս

կրի և փորձանքի հանդիպի»։ Իր ամբողջ ինքնակալության ժամանակ, ահա, հռոմեական տիրապետության տակ գտնվող բոլոր բանակաթեմների ժողովուրդը, չքավորներին կից գտնվող գյուղերն ու ագարակները, ի վայելումն նրանց, չտեսան ոչ էպոպտես և ոչ էլ էքսիստ. մնացին ազատ և նրանց մասին նախատեսված օրենքը չեղյալ հայտարարվեց։ Ահա այսպիսին էր բարի կայսրը բոլոր հպատակների, հատկապես գյուղական բնակչության նկատմամբ ցուցաբերելով հայրական հոգատարություն և խնամք։


100. Բայց նախանձը արքունիքում մի նոր ալեկոծություն և փոթորիկ բարձրացրեց, շփոթություն և իրարանցում առաջացնելով հենց իրեն՝ բնության դեմ։ Կայսեր շատ սիրելի որդի Կոստանդնի մահից դեռ քիչ ժամանակ էր անցել, նրա համար մխիթարություն և հույս էր դարձել երկրորդ որդին՝ Լևոնը։ Բայց դևերի նախանձ ցեղը չհանդուրժեց կայսերական իշխանություններ ժառանգողի անվրդով, խաղաղ, բարեպաշտ և հեղ բնավորությունը, հպատակ ժողովրդի վերաբերյալ նրա թագավորության ժամանակ ակնկալվող բարեկեցությունն ու բարգավաճումը։ Ահա դրա համար այդ [ցեղը] դուրս է գալիս նրա դեմ մարտի՝ հետևյալ ձևով. երանելի Վասիլը ուներ Սանդավարինոս[272] անունով մի շատ սիրելի և վստահելի վանական և քահանա համարվող բարեկամ և հմուտ օգնական։ Հակառակ որ կայսրը սիրում էր նրան, բայց մարդկանց մոտ նա բարի համբավ ու վարկ չուներ։ Այդ էր պատճառը, որ Լևոնը հաճախ էր ծաղրում նրան, անվանելով շառլատան ու խաբեբա, կայսրին ճիշտ ճամփից խոտորող։ Դա այդ խարդախի և նենգի ականջը հասավ։ Ջևացնելով, որ նա բարի Լևոնի ընկերն է ու բարեկամը, ասաց նրան, թե «դու արդեն պատանի ես, հորդ սիրելին, ապա ինչո՞ւ դաղտնի չես կրում թուր կամ դաշույն։ Երբ հորդ հետ ձի հեծած դուրս ես դալիս ագարակները, դու պետք է օգնես նրան, երբ նրա վրա հարձակվի որևէ գազան, եթե նրա դեմ որևէ դավադրություն նյութվի, դու չպետք է անզեն լինես, այլ պետք է մի բան ունենաս, որով կարողանաս մարտնչել հորդ ոսոխների դեմ»։ Լևոնը նենգությունից անտեղյակ, չհասկացավ այդ մարդու խորամանկությունը (ով ընդունակ չէ չարագործության, նա դժվար է կռահում նենգությունը), նա ընդունեց խորհուրդը և համաձայնվեց կոշիկի մեջ դաշույն պահել։ Երբ նենգամիտը տեսավ, որ իր խորհուրդը ի կատար է ածված, տեղեկացնում է կայսեր, թե «որդիդ մտադիր է քեզ սպանել, եթե

չես հավատում, ապա երբ մայրաքաղաքից դուրս գաս որսի կամ որևէ այլ նպատակով, հրամայիր նրա ոտքից հանել սանդալները, և եթե դաշույն գտնվի այնտեղ, իմացիր, որ քո սպանության համար է այն նախապատրաստված»։ Հայտարարվեց կայսեր [որսի] դուրս գալու մասին և նրա հետ մեկնեցին բոլոր նրանք, ովքեր ընդունված կարգի համաձայն մասնակից են դառնում։ Հասնելով մի վայր, կայսրը ձևացնում է, թե դաշույնի կարիք է զգում և փութանակի փնտրում այն։ Որդին ներկայացավ և հոր կասկածներին անտեղյակ, առանց որևէ հետին մտքի հանեց և հորը տվեց իր կրած դաշույնը։ Հենց որ դա կատարվեց, նրա դեմ հարուցված մեղադրանքն իսկույն ճշմարիտ համարվեց, իսկ [Լևոնի] չքմեղանքը՝ սին ու կեղծ։ Նրանք իսկույն վերադարձան արքունիք. կայսրը որդու վրա զայրացած զրկեց նրան կարմիր կոշիկներից[273] և Մարգարիտես[274] կոչված կայսերական տներից մեկում արգելափակեց։ Ոսոխ և վրիժառու [Սանդավարինոսը] դրդում էր կայսեր [Լևոնի] աչքերի լույսը խավարեցնել[275], մի բան, որ արքունի քահանայապետը և սենատը թույլ չտվեցին անել, բայց այնուամենայնիվ [Վասիլը] նրան բանտից չազատեց։ Երկար ժամանակ անցավ. հայրական զգացմունքները չէին խոսում նրա մեջ, ընդհակառակը, չար ոգիները քարացնում էին դրանք։ Սենատի մեծամեծները բազմիցս ցանկացան միջնորդել հոր առջև՝ որդու օգտին, բայց ամեն անգամ ինչ-որ բան խանգարում էր։ Նրանք իրենց որոշածն իրականացնելու պատեհ առիթ համարեցին հետևյալը. (101) պալատում, կախված վանդակի մեջ կար ուրիշի ասածը կրկնող, շատախոս մի թռչուն, որին թութակ են անվանում։ Ոմանք սովորեցրել էին նրան, գուցե և այլ ճանապարհով նա էր սովորել, և հաճախ կրկնում էր. «Վայ, վայ քեզ, տեր Լևոն»։ Մի օր կայսեր մոտ ճաշկերույթ էր և նրա հետ սեղան էին նստել սենատի առաջին մարդիկ։ Երբ թռչունը բազմիցս կրկնեց վերոհիշյալ խոսքը, սեղանակիցները տխրեցին, խղճահարվեցին և դադարեցրին կերուխումը։ Կայսրը դիմելով նրանց հարցրեց, ինչո՞ւ են վերջ տվել խնջույքին։ Նրանք արտասվալից աչքերով պատասխանեցին. «Ինչպե՞ս շարունակենք, երբ այս անբան [թռչունը] պախարակում է մեզ՝ բանական և տիրասեր համարվողներիս, երբ նա իր տիրոջն է կոչում, իսկ մենք խնջույքներով տարված մոռացել ենք անմեղ տիրոջ։ Եթե նա իսկապես մեղավոր է՝ հոր վրա է բարձրացրել իր աջը, մենք մեր ձեռքով կսպանենք նրան և կհագենանք նրա արյամբ։ Բայց եթե նա անմեղ է, իր դեմ ներ-

կայացված մեղադրանքներն անհիմն, ապա մինչև ե՞րբ բանսարկու լեզուն պիտի նրա դեմ հաղթող լինի»։ Այս խոսքերից կայսրը մեղմացավ, հրամայեց նստել և մտածել հարցի շուրջը։ Շատ չանցած նրա մեջ խոսեց հայրական զգացմունքը։ Նա որդուն հանեց բանտից և իր մոտ հրավիրեց, նրա սգավորի հանդերձները փոխեց, կարգադրեց կտրել արգելափակման ընթացքում 'աճած մազերը և թագավորական նախկին շուքին ու պատվին արժանացրեց։

102. Շատ չանցած կայսրը հիվանդանում է մահացու ախտով, որն հետևեց թանչին. վերջինս իր հերթին առաջացել էր որսի ժամանակ, երբ նա [ձիուց] ցած էր գլորվել։ Ահա այս հիվանդությունը կամաց-կամաց սկսեց նրան հալումաշ անել։ Նա վախճանվեց[276] նախօրոք պետության գործերը գերազանց կարգավորելով, նշանակելով իր հաջորդին, բոլոր հարցերը խոհեմաբար տնօրինելով։ Բարձր ջերմությունն ամբողջությամբ վատնել էր ու քամել նրա կենսական հյութը։ Նա իր նախորդի՝ Միքայելի հետ թագավորեց մեկ տարի, տասնինն տարի միահեծան, քաղաքական հարցերում իրեն դրսևորեց գերազանց, ցուցաբերեց ռազմագիտական խոր գիտելիքներ, պետության սահմաններն ընդարձակեց, հպատակների հանդեպ գործադրվող անիրավությունն ու բռնությունը վերացրեց։ Եվ միանգամայն պատշաճում են նրան օրինակելի թագավորի մասին Հոմերոսի խոսքերը. «և թագավոր բարի, և հզոր ու քաջ պատերազմող»[277]։ Բացարձակ իշխանությունն ստանում է նա, ով և՛ բնության օրենքով, և՛ իր առաքինություններով կոչված է հայրենական ժառանգության [տիրանալու], կենդանի որդիներից ավագագույնը, ամենաբարի և ամենաիմաստուն Լևոնը, որին ցանկանում էր հպատակ ժողովուրդը և աղոթում դրա համար։

Մենք մեր ուժերի ներածի չափով շարադրեցինք երանելի կայսր Վասիլի բարեպաշտ թագավորության պատմությունը, այն, ինչ դեռ ժամանակը մոռացության չէր տվել, ապա և նրա իշխանությունն ստանալու նախորդող ժամանակաշրջանի, նրա ողջ կյանքի ճշմարտացի պատմությունը։




ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻ
ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

DE CERIMONIIS AULAE BYZANTINAE

LIBER I



ԳԼՈՒԽ 24[1]

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՆՇԵԼ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ը՝ ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՂԻ ՕՐԸ

...Արարողապետը ընդունված հերթականությամբ, ըստ բարձերի՝[2] մագիստրոսներին, պատրիկներին և մնացած սենատորներին նախապատրաստում է դրսում։ Երբ ամեն ինչ տեղին է լինում, այդ մասին հայտնվում է կասր[երին]. նրանք հագնում են իրենց քղամիդները, կապում թագերը և բարձրանում ու բաղմում են իրենց գահերին։

Բ. Պրեպոզիտոսի[3] ազդանշանով մուտք է գործում կուբուկլիոնը[4], իսկ կուբուկլիոնի մտնելուց և աջ ու ձախ կողմերում տելը գրավելուց հետո, ընդունելությունների ընդունված կարգի համաձայն պրեպոզիտոսի ազդանշանով ոսկե գավազան կրող օստիարիոսը[5] դուրս է գալիս և ներս հրավիրում առաջին բարձր՝ մագիստրոսներին, [ապա] երկրորդ բարձր՝ պատրիկներին, [և վերջապես] երրորդ բարձր՝ սենատորներին, մի խոսքով բոլոր այն բարձերը, որոնք կարգի և սովորության համաձայն մասնակցում են ընդունելություններին։ Երբ բոլորը կանգնում են [իրենց տեղերում], պրեպոզիտոսը ազդանշան է տալիս ոսկե գավազանը կրող օստիարիոսին, որը ներս է հրավիրում առաջին բարձր՝ մագիստրոսին՝ Տարոնի իշխանին[6]։ Նա ներս է մտնում կայսերական կատեպանի[7] և դրոմոսի լոգոթետի ուղեկցությամբ, երկրպագում տերերին, որից հետո նրան տեղ են տալիս կայսերական գահից ոչ հեռու։ Լոգոթետը նրան սովորական հարցերը տալու ընթացքում, դրոմոսի սրոտոնոտարը[8] ներս է բերում նրա նվերները. այդ արարողության ավարտից հետո, մագիստրոսը նորից է երկրպագում և դուրս գալիս։ Վերստին պրեպոզիտոսի ազդանշանով ոսկե գավազանը կրող օստիարիոսը դուրս է գալիս և ներս հրավիրում երկրորդ բարձր՝ բարեկամ բուլղարներին[9], ովքեր հատուկ գալիս են քրիստոսասեր տերերի հետ միասին տոնակատարության մասնակից դառնալու։ Նրանք ևս ամեն ինչ կատարում են վերոհիշյալ կարգի համաձայն և դուրս գալիս։ Նորից պրեպո-

ղիտոսի ազդանշանով ոսկե գավազանը կրող մյուս օստիարիոսը դուրս է գալիս և հրավիրում երրորդ բարձը՝ մագիստրոսի՝ Տարոնի իշխանի առաջին մարդկանց[10]*. նրանք ևս ամեն ինչ անում են վերոհիշյալ կարգով և դուրս գալիս։ Այդ բոլորի ավարտից հետո պրեպոզիտոսն ասում է. «Ձեր հրամանքը»։ Ամենքն արտասանում են «Շատ և երջանիկ տարիներ» մաղթանքը և դուրս գալիս՝ մագիստրոսները, պատրիկները, սենատորներն ու բոլոր մյուսները, որից հետո պրեպոզիտոսը կրկնում է. «Ձեր հրամանքը»։ Այս անգամ նույն ձևով մաղթանքն է արտասանում կուբուկլիոնը և նա ևս դուրս է գալիս։ Տերերն իսկույն իջնում են գահերից։ Նրանց թագերն ու քղամիդները հանում են, հագցնում ոսկեթել հանդերձները, որից հետո նրանք մտնում են իրենց աստվածապահպան պալատը։ Մագիստրոս Տարոնացին*[11] *և բարեկամ բուլղարները գնում են իրենց օթևանները։ Այդ օրը նրանք կայսրերի հետ չեն ճաշում։*

ԳԼՈՒԽ 89

ԹԵ Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ, ԵՐԲ ԳԱԼԻՍ Է ՊԱՐՍԻՑ ՄԵԾ ԴԵՍՊԱՆԸ[12]

Երբ հայտնվում է, որ մեծ դեսպան է գալիս, մագիստրոսը սահմանագլուխ է ուղարկում մի իշխանավորի, որը պետք է ունենա իլլյուստրիոսի[13]*, սիլենտիարիոսի*[14] *կամ տրիբունոսի*[15] *աստիճան, և կամ էլ ուրիշ մի աստիճանավորի՝ մագիստրիանոսի*[13]*, մի խոսքով ում որ նա հարմար է գտնում եկող անձնավորության դիմավորելու և ուղեկցելու համար։ Ուղարկվող անձնավորությունը մուտք է գործում Նիսիբիս*[17] *[քաղաքը], ողջունում է [դեսպանին] և եթե իր հետ ունի կայսեր նամակ, հանձնում այն, (եթե ոչ, հանձնում է մագիստրոսի ողջույնի նամակը)։ Բայց եթե իրերի բերմամբ մագիստրոսն էլ չունի գրած որևէ նամակ, ապա ողջունում են նրան բերանացի, թե բարով և ուրախությամբ ժամանեցիք, ու նրա հետ միասին ճանապարհ է ընկնում։ Դեսպանին իր շքախմբով սահմանի վրա են դիմավորում և ընդունում Դարայի*[18] *իշխանավորները՝ իրենց զինվորներով։ Եթե անհրաժեշտ է սահմանի վրա որևէ խնդրի շուրջ խոսել, խոսվում է, ընդ որում Նիսիբիսի զորահրամանատարը պարսից [զինվորների] բազմությամբ ուղեկցում է դեսպանին [միայն] մինչև սահմանը։ Բոլոր*

դեպքերում մի բան ասվում է։ Նա [պարսից զինվորների] բազմությամբ գալիս է [մինչև սահմանը], հռոմայեցիները դիմավորում են նրան և նրա ուղեկիցներին, ընդ որում մնացած պարսիկները պետք է մնան պարսից հողի վրա. միայն [դեսպանն է] իր ուղեկիցներով մուտք գործում Դարա և [արժանանում] հյուրամեծարության։ Դարայի իշխանավորները պետք է շատ զգոն և ուշադիր լինեն, որպեսզի դեսպանության պատրվակի տակ դեսպանի հետ պարսից բազմություն մուտք չգործի[19], հետևեն նրան ամեն տեղ, որպեսզի նա չարանենգորեն չտիրանա քաղաքին։ Իշխանավորները պետք է մեծ ուշադրություն դարձնեն այս բանի վրա, գաղտնի հետևեն նրան և պահպանեն այս կարգը։ Դուքսական պաշտոնյաները ընդունված կարգի համաձայն դեսպանին տալիս են՝ մինչև այստեղ [Կոստանդնուպոլիս] գալու հարյուր երեք օրվա ճանապարհածախսը. ի սկզբանե անտի այդպես էր սահմանված, որ այդքան է տևում դեսպանի ուղևորությունը, այդքան էլ վերադարձը։ Եթե նրա ուղևորությունը ձգձգվի, կայսեր թույլտվությամբ ավելացնում են նրա [ճանապարհածախսը]։ [Դեսպանին] հասանելիքի մասին կարելի է իմանալ «Բարբարոսաց դիվանից»[20]։ Պրետորյան էպարքոս[21] Կոստանդինի ժամանակ կայացված համաձայնությամբ [դեսպանին] հատկացվում է սուրհանդակ հինգ ձի և երեսուն ջորի։ Բայց եթե կայսրը ցանկանում է [չեշտել] նրա հանդեպ ունեցած իր հարգանքը, կարգադրում է շատ ավելին տալ. իսկ եթե ուզում է նաև պատված լինել նրան, ապա պետք է պատվարժան մի անձնավորություն ուղարկել Գալատիա և Կապադովկիա, որպեսզի ընդունի նրան ու հոգա նրա սննդի մասին, նմանապես մարդ ուղարկի Նիկիա, նրա սննդի և հանգստի մասին հոգալու համար։ Երբ [դեսպանը] մոտենա Անտիոքին, ապա մագիստրոսը պետք է մագիստրիանոս ուղարկի՝ դեսպանին ընդունելու և ողջունելու համար, հարցնելու թե ինչպես անցավ ուղևորությունը։ Կայսեր կամքով այդ կատարվում է մեկ կամ երկու անգամ։ [Կայսրը] նաև նամակ է հղում նրան և ողջունում, հարցնում, թե ինչպես անցավ ուղևորությունը։ Հելենոպոլսում դեսպանի համար անհրաժեշտ է պատրաստի ունենալ ջորիներ և դրոմոններ, որպեսզի ըստ [դեսպանի] ցանկության Նիկոմեդիա գնա ցամաքով, կամ էլ դրոմոններով անցնի դիմացի ափը։ Բոլոր դեպքերում պետք է պատրաստի ունենալ ձիեր և ջորիներ, ընդունել նրան և տանել մինչև Քաղկեդոն։ Քաղկեդոնում մագիստրոսը պատրաստում է [դեսպանի] և նրան ուղեկցող

մարդկանց համար իջևաններ, ուղարկում է բարբարոսաց օպտիոնին[22] և հանձնում օրվա կամ մի քանի օրվա ծախսը, ինչքան որ նա մնալու է Քաղկեդոնում։ Նա նրան նվերներ էլ է առաքում։ Մագիստրոսը պետք է նրա մոտ անհապաղ մարդ ուղարկի ողջունելու և հարցնելու, թե ինչպե՞ս ճանապարհորդեց, որևէ բանի ցանկություն ունի՞ արդյոք, մի խոսքով հնարավորության սահմաններում հոգա նրա մասին։ Անհրաժեշտ է, որ քաղաքում նախօրոք պատրաստվի նրա հանգրվանը՝ դեսպանի աստիճանին և նրան ուղեկցող մարդկանց քանակին համապատասխան, տրամադրվեն մահճակալներ, անկողիններ, փռեր, կրակարաններ, սեղաններ, աշխատողներ, որոնք պետք է ջուր կրեն և մյուս սև աշխատանքը կատարեն։ Անկողինները մագիստրոսի կարգադրության համաձայն տրամադրում է պրիվատների կոմեսը[23], այն է կայսեր սակելլարիոսը[24] (այդ պարտականությունն այժմ նրա վրա է դրված), իսկ մահճակալները, ամանեղենը, սեղանները, փռերը և կաթսաները տրամադրում է քաղաքի էպարքոսը[25], նույնպես մագիստրոսի գրավոր կարգադրությամբ։ Կրակարանները հատկացնում են ֆաբրիկիաները[26] [պրեֆեկտները]։ Էպարքոսը տալիս է նաև գործավորներ գինետներից։ [Դեսպանի] օթևանի բաղնիքը, կամ կից բաղնիքը պետք է պատրաստ լինի, որպեսզի երբ որ նա, կամ նրա մարդիկ ցանկանան՝ լողանան, և այդ բաղնիքից կարող են օգտվել միմիայն նրանք։ Երբ [դեսպանի] նավը խարիսխ գցի, մագիստրոսը պետք է ուղարկի կայսերական ձիեր (այդ տրամադրում է կայսեր սպաթարը)։ Ահա դրոմոնում դիմավորում են [դեսպանին] և ուղեկցում մինչև նրան [հատկացված] օթևանը։ Մագիստրոսն անհապաղ մարդ է ուղարկում և ողջունում նրան, կրկին անգամ հարցնում, թե ինչպես ճանապարհորդեց։ Օպտիոնի միջոցով [մագիստրոսն] ուղարկում է նրան իր ցանկացած նվերները։ Որպես կանոն դեսպանն էլ է մարդ ուղարկում և փոխադարձաբար ողջունում մագիստրոսին։ Մագիստրոսը պետք է դեսպանի ներկայացուցչին սիրալիր ընդունի, տա իր ստացած ողջույնին վայել պատասխան։ Մագիստրոսը իր ստորադրյալի միջոցով ասում է նրան. «Հանգստացի՛ր, և երբ հարմար դատես, ես կընդունեմ քեզ»։ [Դեսպանը] հաջորդ, կամ երկրորդ օրը հայտնում, ապա գալիս է և ողջունում մագիստրոսին, տեսակցում նրա հետ։ Մագիստրոսն ամենից առաջ հարցնում է նրա արքայի որպիսության մասին, ապա արքայի երեխաների, իշխանավորների, [դեսպանի] և նրա ընտանիքի որպիսու-

թյան մասին, թե ինչպե՞ս ճանապարհորդեց, ուղևորության ընթացքում որևէ բանի կարիք ունեցա՞վ, որևէ բանում թերացե՞լ են արդյոք, և ասում նրան. «մեր բարեպաշտ կայսրը հրամայեց մեզ ամեն ինչ անել քո սպասարկության համար, և եթե որևէ բանում թերացել ենք, ապա դա մե՛ր մեղքն է և խնդրում ենք ձեզ չնեղանալ, ոչ էլ լռության մատնել այդ, այլ ասե՛ք, որպեսզի ուղղենք [մեր թերացումը]»։ Մագիստրոսին են երկրպագում նաև [դեսպանի] բոլոր ուղեկիցները։ Երբ կայսրը որոշի ընդունել [դեսպանին], մագիստրոսը մարդ է ուղարկում վերջինիս մոտ և հայտնում նրան, թե «կայսրը հրամայեց քեզ ներկայանալ»։ Կայսրը պետք է [դեսպանի] Քաղկեդոն ժամանելու և այստեղ [Կոստանդնուպոլիս] հասնելու առթիվ դեկուրիոն[27] ուղարկի և ողջունի նրան, հարցնի արքայի որպիսության մասին, և թե ինչպես ինքը տեղ հասավ։ Երբ [կայսրը] ընդունելու է [դեսպանին], մագիստրոսը երեկոյան սուբադիուվաս[28] է ուղարկում և հայտնում նրան, թե «կայսրը հրամայում է քեզ ներկայանալ, ներկայացի՛ր»։ Կայսրը նույնպես դեկուրիոն է ուղարկում, ողջունում [դեսպանին] և հայտնում նրան, թե «վաղը ընդունում ենք քեզ, ներկայացի՛ր»։ Նախորդող երեկոյան դեսպանին հայտնվում է հանդիպման մասին։ Անհրաժեշտ է, որ ադմիսսիոնալիոսը[29] գա և հարցնի մագիստրոսին լաբարեսիոսների[30] մասին. նա կարգադրություն է անում, որպեսզի [լաբարեսիոսները] ևս դիմավորելու դուրս գան։ Նրանցից յուրաքանչյուրը կանգնում է իր հատուկ տեղում, զինված։ Բոլոր իշխանավորները հագած են լինում ամբողջությամբ մետաքսից գործված հանդերձներ. դեսպանը մուտք է գործում Հռեգիա[31] [դարպասից]։ Մագիստրոսն ընդունում է նրան իր դիվանատանը և հարցնում, ունի՞ արդյոք արքայից նվերներ։ [Մագիստրոսը] պարտավոր է տեսնել բոլոր [նվերները] նախքան նրանց ներս բերվելը, իմանա նրանց բովանդակությունը։ Այնուհետև մագիստրոսը գնում է կայսեր մոտ և զեկուցում նվերների մասին, հայտնում, թե ինչ է բերվել։ Դեսպանը սպասում է մագիստրոսի դիվանատանը։ Այն բանից հետո, երբ կայսրն ընդունում է իշխանավորներին և նրանք մուտք են գործում կոնսիստորիոն[32], ադմիսսիոնալիոսը, բարբարոսաց խարտուլարը[33] և թարգմանները պետք է դեսպանին հրավիրեն անտիկոնսիստորիոն[34], որտեղ և նա սպասում է։ Խարտուլարներն ու թարգմանները ադմիսսիոնալիոսներին տալիս են մագիստրոսի ուղերձը. մնացածը կատարվում է այնպես, ինչպես սիլենցիումի[35] ժամանակ։ Մա-

գիստրոսը պետք է պատրաստի վիճակում ունենա զինյալ կանդիդատներ[36] և նրանց ուղեկցող բարեձև մանուկներ[37]։ Կայսրը պատրիկի ուղեկցությամբ դուրս է գալիս ննջասենյակից և բազմում մեծ կոնսիստորիոնում։ Այնտեղ են մուտք գործում նաև իշխանավորները, սովորության համաձայն Թխագույն քղամիդներ հագած։ Այդ միջոցին ադմիսսիոնալիոսը ներս է հրավիրում դեսպանին և կանգնեցնում ամառային մեծ կոնսիստորիոնի վարագույրի դիմացի պատին։ Կոնսիստորիոնի երեք դռներն էլ բացվում են այն ժամանակ միայն, երբ [դեսպանի] բերած նվերների մեջ կան նաև նժույգներ։ Բոլոր դեպքերում ամբողջությամբ մետաքսից գործված երեք վարագույրները պետք է կախված լինեն։ Այն բանից հետո, երբ բոլոր իշխանավորներն էլ գրավում են իրենց տեղերը, մագիստրոսը դիմում է (ինչպես խորհրդակցության ժամանակ) հետևյալ կերպ. «Ներս է հրավիրվում պարսից արքա Խոսրովի դեսպան Իեզդեկոսը և նրա ուղեկիցները»։ Ապա դեկուրիոնը ներս է բերում զինյալ [կանդիդատներին]։ Բարբարոսաց [խարտուլարները], ինչպես ասվեց, [մագիստրոսի] այս հրավերը փոխանցում են ադմիսսիոնալիոսներին. ադմիսսիոնալիոսները երկու գրություն են կազմում, մեկը մեծ տառերով, որը տալիս են սիլենտիարիոսին, նա էլ՝ օստիարիոսին։ [Գրությունը] նախապես կայսեր է ընթերցում խարտուլարը՝ ննջասենյակում, մյուս պիտտակիոնն էլ տալիս են մագիստրոսին՝ ի հիշեցումն։ Տերտիոկերիոսը[38] վերցնում է ուղերձի պատճենը, կանգնում մագիստրոսի ետևը և հուշում նրան։ Մագիստրոսի հրավերից հետո փոքր կոնսիստորիոն է մտնում դեկուրիոնը, վերցնում զինյալ կանդիդատներին, դուրս հանում նրանց և կանգնեցնում իշխանավորների առջև, նրանց աջ և ձախ կողմում՝ հյուպատոսականներից հետո, այնուհետև դուրս է գալիս. եթե տեսնի, որ դեսպանը պատրաստ է, դեկուրիոնը կոչում է «Լեվա»[39]։ Բարձրացվում է վարագույրը, դեսպանը դրսում, այնտեղ, որտեղ կարմիր մարմարիոնն է, երկրպագում է, ապա կանգնում։ Անցնելով դռնից ներս, նորից է երկրպագում և կանգնում։ Հասնելով կոնսիստորիոնի կենտրոնը նա նորից է երկրպագում, ապա գալիս ու համբուրում [կայսեր] ոտքերը, կանգնում մեջտեղում, տալիս [արքայի] նամակը և հաղորդում իր արքայի ողջույնը։ Կայսրը պետք է հարցնի. «Աստուծո կամքով, ինչպե՞ս է մեր եղբոր որպիսությունը։ Ուրախ ենք նրա առողջ լինելու առթիվ», և ինչ որ այդ ընթացքում ցանկանում, ասում է դեսպանին։ Դրանից հետո

դեսպանը պատասխանում է, թե «քո եղբայրը քեզ նվերներ է ուղարկել, խնդրում եմ ընդունել դրանք»։ Կայսրը թույլ է տալիս [ընդունել]։ Դեսպանն իր մարդկանց հետ դուրս է գալիս, վերցնում նվերները և ներս գալիս. ինքը բերում է պատմուճան, զարդ կամ որևէ այլ թանկարժեք բան, եթե այդպիսին կա, իսկ մյուսները մի ինչ-որ իր։ [Դեսպանի մարդիկ] պետք է նախօրոք թարգմանների օգնությամբ պատրաստ լինեն անտիկոնսիստորիոնում և բոլորը [նվերները] բռնած ներս մտնեն։ Նրանք բոլորը կանգնում են գահի դիմացի պատի տակ, վարագույրից դուրս, և երբ բարձրացվում է վարագույրը, երկրպագում են, անցնելով դռնից ներս, նորից են երկրպագում և այդ բանն անում են երեք անգամ։ Դրանից հետո սիլենտիարիոսները ընդունում են բովանդակ նվերները։ Նրանց պարտականությունն է մագիստրոսի գիտությամբ [նվերները] տանել վեստոսակրա[40] և հանձնել։ Կատարվում է [նվերների] գնահատումը. վեստոսակրանոսները[41] պետք է նվերների արժեքն իսկույն հայտնեն մագիստրոսին, որպեսզի նա իմանա ինչ է բերվել և փոխադարձ նվիրատրության ժամանակ հիշեցնի կայսեր, թե ինչ է անհրաժեշտ ուղարկել իր դեսպանների միջոցով։ Երբ նվերները ներս են բերվում, կայսրն ասում է դեսպանին. «Մի քանի օր հանգստացիր, և եթե որևէ խնդրի շուրջ ասելու բան ունենանք, կասենք և բարով ետ կուղարկենք քեզ դեպի մեր եղբայրը»։ Դեսպանը շնորհակալություն է հայտնում, երկրպագում, նորից երկրպագում նույն տեղերում և դուրս գալիս։ Հենց որ քաշվում է վարագույրը, դեկուրիոնը կանգնում է, մագիստրոսը դիմում է, ասելով. «Ստրանֆեր»[42]. դեկուրիոնը վերցնում է զինյալ կանդիդատներին և դուրս հանում փոքր կոնսիստորիոնը։ Ահա այն ժամանակ կայսրը իջնում է. մնացած ամեն ինչը կատարվում է ընդունված կարգի համաձայն։ Դեսպանը պետք է սպասի ներքևում, մագիստրոսի դիվանատանը, իսկ մագիստրոսն իջնում է ցած, հրաժեշտ տալիս նրան ու ճամփու դնում։

ԳԼՈՒԽ 90

ԹԵ ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Է ՎԱՐՎԵԼ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ ՀԱՋՈՐԴ ՕՐԵՐԻՆ

Կայսրը ստանալով [արքայի] նամակը, մագիստրոսին կարգադրում է հայտնել դեսպանին, որ նա հաջորդ օրը գա պալատ։

[Կայսրը] եթե ցանկանա, ինքն է սիլենտարիոսի միջոցով հայանում ու հրավիրում [դեսպանին]։ Գումարվում է սիլենտիոն. լաբարեսիոսները կանգնում են, և երբ [դեսպանը] ժամանի, մագիստրոսն ընդունում է նրան իր դիվանատանը։ [Դեսպանն] սպասում է այնտեղ, իսկ [մագիստրոսը]. բարձրանում կայսեր մոտ և հայտնում այդ մասին։ [Կայսրը] ընդունում է [դեսպանին] կա՛մ [Ավգուստեոնի][43] սյունաշարքում, կա՛մ էլ հենց Ավգուստեոնում։ Եթե դեսպանը բերել է անձնական նվերներ, մի օր առաջ մագիստրոսի միջոցով խնդրում է [կայսեր] ընդունել դրանք, և եթե կայսրը թույլ տվեց, ապա [դեսպանը] ցույց է տալիս դրանք մագիստրոսին, վերջինիս դիվանատանը և նա տեղյակ է լինում նրանց բովանդակության մասին։ Մագիստրոսը նախօրոք բարձրանում է կայսեր մոտ և զեկուցում նվերների բովանդակության մասին։ Երբ [կայսրը] կամենա ընդունել դեսպանին, նա ներկայանում է նրան և խնդրում կայսեր ընդունել իր նվերները։ Կայսեր թույլտվությամբ դեսպանի մարդիկ նվերներով ներս են գալիս այն կարգով, ինչ ընդունված է արքայի նվերների ընդունման կապակցությամբ, որից հետո տեղի է ունենում հանդիպումը։ Կայսրը պետք է ստեպ ստեպ և սիրալիր կերպով նորից հարցնի պարսից արքայի մասին, նրա որպիսության մասին. եթե խաղաղ իրադրություն է, ապա խաղաղության շուրջ էլ մի քանի խոսք է ասվում, որից հետո կայսրը թույլ է տալիս [դեսպանին] հեռանալ։ [Դեսպանը] սպասում է մագիստրոսին դրսում։ Մագիստրոսը ևս դուրս է գալիս, հրաժեշտ տալիս նրան վերևում և ճամփում նրան։ Հաջորդ օրերին [կայսրը] հրավիրում է [դեսպանին] և բանակցում։ Եթե նա նպատակահարմար է գտնում, ապա թույլ է տալիս, որ մագիստրոսը և կամ ուրիշ իշխանավորներ դրսում բանակցեն դեսպանի հետ։ Եթե երկու պետությունների միջև գոյություն ունի բացառիկ բարեկամություն, կայսրը պետք է հաճախակի մարդ ուղարկի [դեսպանի] տեսության, իմանալու համար, թե ինչպես անցկացրեց օրը, նրա մոտ ուղարկի [դեսմոսների] կողմերի[44] [ներկայացուցիչներին], նվերներ ուղարկի մեր կամ էլ նրա կարևոր տոների առթիվ և ամեն կերպ նրան պատվասիրի։

ԳԼՈՒԽ 96

ԱՐԵՎԵԼԻՑ ՍԽՈԼԵՐԻ ՆԱԽԿԻՆ ԴՈՄԵՍՏԻԿՈՍ, ՔՐԻՍՏՈՍԱՍԵՐ ԵՎ ԱՄԵՆԱՔԱՋ ՆԻԿԵՓՈՐԻ ԿԱՅՍՐ ՀՌՉԱԿՎԵԼԸ[45]

6471 թվականի, վեցերորդ ինդիկտիոնի մարտ ամսի տասնըհինգին, մեծ պասեքին վախճանվեց հռոմայեցիների մեծ և ծիրանածին Կոստանդին Մակեդոնացի[46] կայսեր որդին, Ռոմանոս կրտսեր կայսրը[47], թագավորությունը թողնելով իր դեռահաս որդիներ Վասիլին ու Կոստանդինին և իր կնոջ՝ ավգուստա[48] Թեոփանոյին՝ թագավորելու հռոմեական պետության վրա։ Պետական գործերի կառավարումը թողեց պարակիմոմենոս Հովսեփին։ Վերոհիշյալ անձնավորությունների իշխանությունը տևեց վեցերորդ ինդիկտիոնի մարտ ամսի տասնհինգից մինչև նույն ինդիկտիոնի օգոստոսի տասնհինգը։ Նույն ինդիկտիոնի հուլիս ամսի երկուսին արևելյան շրջաններում իր զորաբանակների կողմից կայսր հռչակվեց մեր բարեպաշտ և քրիստոսասեր կայսր Նիկեփորը։ Բոլոր զորավարներն ու տագմաները[49], հավաքվելով այժմյան Կապադովկիա նահանգի Կեսարիա [քաղաքի] դաշտում, նրան՝ մագիստրոսին և սխոլերի գոմեստիկոսին կայսր հռչակեցին։ Նա դեմ էր այդ բանին, ընդհակառակը, նա շտապում էր մասնակցել իսմայելացիների դեմ մղվող պատերազմին, և զինվորներին էլ դեպի նույն գործն էր դրդում, բայց նրանք ավելի ջանասեր դուրս եկան և բռնի, [Նիկեփորի] կամքին հակառակ, նրան վրանից հանեցին և կայսր հռչակեցին։ Բայց նա իր գլխին թագ չդրեց, կայսերական հանդերձներ էլ չհագավ, այլ միայն կոշիկները փոխեց և ռուսիա, այն է կարմիր գույնի [կոշիկներ] հագավ։ Երբ այդ բանի լուրը հասավ քաղաք, պարակիմոմենոս Հովսեփը ապշեց, և նախանձախնդրությամբ ուզեց ընդդիմակայել կայսեր, որի համար նախապատրաստություն տեսավ։ Նիկեփոր կայսրը [Հովսեփին] մի սիրալիր նամակ գրեց և առաքեց, խոստանալով ապահովել, նույնիսկ բարձրացնել նրա բարձն ու պատիվը։ Նիկեփորը նույն բանը խոստացավ և սենատին։ [Հովսեփը] հակառակ որ բազմիցս հավաստիացում ստացավ, այնուամենայնիվ չհրաժարվեց իր մտադրությունից և իրեն համակիր մի քանի սենատորներով նախանձախնդիր եղավ Օգոստոսի դեմ դուրս գալ։ Նա ամրացրեց քաղաքը, վերանորոգեց դարպասները և սկսեց քաղաքացիների հանդեպ դաժանություններ գործել։ Նա նզովքի ենթար-

կեց կայսեր, բայց դա բավական չհամարելով, որոշեց գաղտնի, (այսինքն Թաքուն) կուրացնել Նիկեփոր կայսեր հարազատներին, այն է հոր և եղբոր. վերջիններս սակայն իմանալով այդ մասին, փախուստի դիմեցին, հայրը՝ մագիստրոս Վարդասը[50] [ապաստանեց] մեծ եկեղեցում, իսկ կայսեր եղբայր մագիստրոս Լևոնը՝ բանակում. զորքն արդեն Խրիսուպոլիս[51] էր հասել։ Ամբոխը աստվածային մղմամբ հոսեց դեպի եկեղեցի, մագիստրոսին հակառակորդների ոտնձգություններից պաշտպանելու համար։ Ե՛վ պատրիկ Մարիանոս Ապամբասը[52], և՛ Նիկոլաս Թոռնիկը[53], և նախկին զորավար Պասքալիոսը բազմիցս փորձեցին նրան բռնի դուրս բերել եկեղեցուց. բայց ժողովուրդը քաշքշելով և հայհոյելով նրանց խայտառակ կերպով դուրս շպրտեց։ Օգոստոս ամսի իննի առավոտյան, սուրբ հարության ավետարանի ընթերցման պահին, եկեղեցի մտավ պարակիմոմենոս Հովսեփը, բարձրացավ պատրիարքարան և կարճ խոսակցություն ունեցավ պատրիարքի[54] ու կղերի հետ. իջնելով ցած, սկսեց սաստիկ սպառնալ ամբոխին, թե նրան սովամահ կանի. ձի հեծնելով նա անցավ Միլիոնի[55] միջով և հրաման տվեց հացագործներին հաց չթխել, ոչ էլ վաճառել։ Այնուհետև նա բարձրացավ պալատ, իր հետ վերցրեց Ռոմանոս կայսեր երեխաներին և վերևի փողոցներով իջավ եկեղեցի՝ ճաշի ժամանակ, երբ եկեղեցում ժողովուրդ չկար։ Նա կանչեց մագիստրոսին, եկեղեցուց դուրս հանեց նրան և տուն ուղարկեց։ Երբ երեկոյան ժողովուրդը եկավ եկեղեցի և մագիստրոսին չգտավ, շփոթվեց, ավելի ճիշտ՝ մոլեգնեց և անպարկեշտ արտահայտություններով դիմեց պատրիարքին և կղերին, թե իրե՛նք հանձնեցին [մագիստրոսին], և սկսեցին կղերականներին քարկոծել։ Պատրիարքը խնդրեց, որ մագիստրոսը գա եկեղեցի և խաղաղեցնի ժողովրդին։ [Մագիստրոսը] այդ մասին հայտնեց պարակիմոմենոսին, բայց վերջինս թույլ չտվեց նրան [գնալ]։ Երբ ժողովուրդն իմացավ այդ, ինչպես ասացինք աստվածային մղմամբ, մի մասը շարժվեց դեպի մագիստրոսի տունը, նրան փորձանքից զերծ պահելու համար, իսկ մյուս ավելի ստվար մասը մնաց եկեղեցում, որի բոլոր փայտյա առարկաները զենք դարձնելով դուրս եկավ այնտեղից և հարձակվեց հակառակորդների վրա, որոնք զինված մակեդոնացիներ էին և հագարացի ռազմագերիներ, ինչպես և հիշածս մարդիկ՝ Մարիանոսն ու մնացածները, որոնց փախուստի մատնեցին։ Հաղթանակ տանելով, նրանք բազմաթիվ հասարակ մարդկանց և զինվորների կոտորե-

ցին, կայսեր հակառակորդների տները գետնին հավասարեցրին
և նրանց ամբողջ ունեցվածքը հափշտակեցին։ Այնուհետև բացե-
ցին դարպասները, միացան զորքին և կայսեր հայտնեցին՝ ա-
ռանց հապաղելու գալ քաղաք։ Նույն գիշերը, օգոստոս ամսի տա-
սին, պարակիմոմենոս Հովսեփը ժողովրդից սարսափած, որն իր
տունն էր գալիս իրեն [բռնելու], փորձեց խուսափել վտանգից՝
փախուստի դիմելով և եկեղեցում ապաստանելով։ Ժողովուրդը
նրա ամբողջ ունեցվածքը թալանեց, տունը գետնին հավասարեց-
րեց, ապա ձերբակալեց բազում այլ, անմեղսակից սենատորնե-
րի, որոնց ունեցվածքը նույնպես թալանեց, տներն էլ քանդեց։
Մոլեգնած ժողովրդի այսպիսի գործունեությունը տևեց երեք օր։
Նիկեփոր կայսեր հորը՝ մագիստրոսին իշխանավորներից ամենա-
երևելիները պալատ բերեցին և այնտեղ պահեցին մինչև կայսեր
գալը։ Այդ իրադարձությունների երկրորդ օրը մագիստրոս Լևոնը
զորքով մտավ քաղաք։ Օգոստոս ամսի տասնհինգին կայսրը պա-
րակիմոմենոս Վասիլին և պրեպոզիտոս Հովհաննեսին հայտնեց,
որ իր նշած իշխանավորների հետ գնան Հիերիա պալատը իրեն
դիմավորելու։ Նրանք այդպես էլ արեցին։ Հաջորդ օրը, նույն
օգոստոս ամսի տասնվեցին, վեցերորդ ինդիկտիոնում, կիրակի
առավոտյան, մտնելով կայսերական դրոմոնիոնը, նա խարիսխ
գցեց Ոսկե Դռան[56] առջև, որտեղ նրան դիմավորեց ամբողջ քա-
ղաքը, մեծ ու փոքր, ջահերով և խնկարկությամբ։ [Նիկեփորն]
իջավ դրոմոնից, ձի հեծավ, անցավ արտաքին նախապարիսպը,
ապա շուռ եկավ դեպի սալահատակված [ճանապարհը] և մտավ
Աբրամիտների վանքը, որը կոչվում է Աստվածածնի անձեռագործ
[պատկերի] վանք։ Ժամը երեքին նա հագավ կատորե սկարա-
մանգիոնը[57] և ձի հեծած եկավ մեծ Ոսկե Դուռը. այդ դռան մեջ
կանգնեց, իսկ ներսում գտնվող դեմոսի երկու կողմերը փառա-
բանեցին նրան այսպես. «Բարով եկար, Նիկեփոր, կայսր հռո-
մայեցվոց, բարով եկար Նիկեփոր, մեծագույն արքա հռոմայեցվոց,
բարով եկար Նիկեփոր, թշնամու բանակներին հաղթող, բարով
եկար Նիկեփոր, հակառակորդների քաղաքները գրավող, բարով
եկար քաջահաղթ, միշտ սեբաստոս[58]։ Բարով եկար դու, ով հպա-
տակեցրիր հեթանոսներին։ Դու էիր, որ հաղթեցիր և ընկճեցիր
իսմայելացիներին, դու ես հռոմայեցվոց գայիսոնն հզորացնողը։
Քեզ երկար [կյանք], բարգավաճի՛ր և տիրի՛ր։ Ողորմեց աստված
իր ժողովրդին, քեզ հռչակելով հռոմայեցվոց ինքնակալ կայսր.
ո՜վ Նիկեփոր։ Ուրախ լեր, ո՜վ հռոմայեցվոց քաղաք, ընդունի՛ր

աստվածապսակյալ Նիկեփորին, քանզի եկավ նա, համայն աշխարհի ջահն իսկական»: Դրանից հետո [Նիկեփորը] ձի հեծած մտավ դռնից ներս, անցավ Մեսե[59] պողոտայով մինչև Ֆորոսը, որտեղ, իջնելով ձիուց, մտավ Ֆորոսի ամենասուրբ աստվածածնի եկեղեցին[60]: Ջահեր վերցնելով, երկրպագեց, ապա հագավ դիբետեսիոն, կամպագիա և ևամպոտուբա[61]: Ֆորոսից նա ոտրով, թափորի ուղեկցությամբ և պատվական խաչով գնաց սուրբ Սոփիա և կանգ առնելով հորոլոգիոնի[62] առջև, արժանացավ երկու կողմերի[63] հետևյալ ողջույնին. «Պետության շահերը Նիկեփորին եւ պահպանում, Նիկեփորին են կոչում օրենքները: Նիկեփորին է կոչում արքունիքը, այդպիսիք են մաղթանքները արքունիքի, ցանկություններ ղորքի, մաղթանքները սենատի, այդ է մաղթում ժողովուրդը: Աշխարհը Նիկեփորին է սպասում, զորքը Նիկեփորին է ուզում, հասարակաց բարեկեցությունը Նիկեփորին է ուղում, հասարակաց բարիքը Նիկեփորի թագավորությունն է: Լսի՛ր, ո՛վ աստված, քեղ ենք խնդրում, լսի՛ր աստված, [երկար] կյանք տուր Նիկեփորին: Նիկեփոր Օգոստոս, դու բարեպաշտ, դու սեբաստոս, աստված քեղ [կյանք] շնորհեց, թող աստված էլ քեզ պահի: Քրիստոսով դու միշտ կհաղթես: Թող երկար տարիներ թագավորի Նիկեփորը: Աստված թող պահպանի քրիստոնեական թագավորությունը»: Դրանից հետո [կայսրը] Գեղեցիկ դռնով[64] մտավ սարկավագանոցը, փոխեց ցիցակիոնը[65], մտավ գավիթը և կայսերական մեծ դռներից ներս, պրեպոզիտոսից վերցրեց ջահեր և երկրպագեց, ապա հանեց [թագը], պատրիարքի հետ անցավ տաճարի մեջտեղով, խորանի աջ կողմից, սոլեայի[66] միջով նկավ դեպի սուրբ դռնակները, որտեղ պրեպոզիտոսից նորից ստացավ ջահեր, երկրպագեց, ապա պատրիարքի հետ շրջվեց և բեմի առաջով բարձրացավ խորան: Պատրիարքը քղամիդն օրհնեց, տվեց այն [կայսեր] սենեկապաններին, որոնք հագցրին կայսեր: Նմանապես....[67]:

ՀԱՎԵԼՎԱԾ I ԳՐՔԻ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ[68] ՀԻՇԱՏԱԿՈՒՄԸ

Զինվորական կայանները հետևյալներն են. առաջին զինվորական կայանը գտնվում է Մալագինայում[69], երկրորդը՝ Դորի-

լեոնում[70], երրորդը՝ Կարորկիոնում[71], չորրորդը՝ Կոլոնիայում, հինգերորդը՝ Կեսարիայում, վեցերորդը՝ Արմենիակների [բանակաթեմի] Դազիմոն[72] [վայրում]։ Սխոլերի դոմեստիկոսը և Օպսիկիոն [բանակաթեմի] զորավարը պարտավոր են կայսեր դիմավորել Մալագինայում, իսկ Թրակեսիոն[73] [բանակաթեմի] զորավարը՝ Դորիլեոնում։ Անատոլիկոն [բանակաթեմի] զորավարը և Սելևկիայի [բանակաթեմի] զորավարը պարտավոր են կայսեր դիմավորել Կաբորկիոնում։ Եթե [կայսեր] ընթացուղին դեպի Տարսոն է, ապա մնացած բանակաթեմերի [զորքերը] պետք է հավաքվեն Կաբորկիոնում, իսկ եթե դեպի Արևելք, ապա Կապադովկիա, Խարսիանոն և Բուկելլարների [բանակաթեմերի] զորավարները պարտավոր են [կայսեր] դիմավորել Կոլոնիայում, Արմենիակների, Պափլագոնիայի և Սեբաստիայի [բանակաթեմերի] զորավարները]՝ Կեսարիայում[74], իսկ եթե Տեֆրիկե[75], ապա Արմենիակների բանակաթեմի զորքերը պարտավոր են հավաքվել Վաթրիոաքսում[76]։

Ի ՔՐԻՍՏՈՍ՝ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐ, ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐԻ ԿԱՅՍՐ ԿՈՍՏԱՆԴՆԻ՝ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԵՎ ԱՄԵՆԱԻՄԱՍՏՈՒՆ ԼԵՎՈՆ ԿԱՅՍԵՐ ՈՐԴՈՒ, ԱՐԻԱԳՈՒՅՆ ԵՎ ԱՄԵՆԱՔԱՋ ՎԱՍԻԼ ԿԱՅՍԵՐ ԹՈՌԱՆ [ՇԱՐԱԴՐԱՆՔՆ] ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ, ԵՐԲ ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐԻ ՄԵԾ ԵՎ ՎԵՀ ԿԱՅՍՐԸ ՈՐՈՇԵԼ Է ԱՐՇԱՎԱՆՔԻ ԴՈՒՐՍ ԳԱԼ

...Ի՞նչն է ավելի կարևոր, քան պատերազմում համարձակ լինելը, մեր նախնիների վաղեմի կարդապահությունը պահպանելը, կարգապահություն, որ նախկինում հանդես էին բերում պատերազմների դուրս եկող կայսեր զորքերը։ Թեև այդ բանի հուշակը դեռ հնում էր տարածված, և դրա համբավն այսօր շատերի շրթներին է, բայց և այնպես այդ մասին գրավոր ոչինչ չունենք և գտնում ենք, որ դա ճիշտ չէ, ոչ էլ լավ։ Ո՞վ աստվածապսակյալ Ռոմանոս[77], քեզ համար օգտակար կլինի, ի շարս այլոց, այդ հարցերի մասին էլ գրավոր շարադրանք ունենալ, քանզի դա ավելի ցցուն է դարձնում հռոմեական [կարգերի] վեհությունը։ Այդ առթիվ մենք շատ պրպտումներ կատարեցինք, բայց պալատում ոչ մի գրավոր բան չգտանք։ Վերջերս հազիվ հաջողվեց այդ հարցի շուրջը մի գրվածք գտնել Սիգրիանե կոչված

վանքում, վանք, որտեղ Կատակիլաս մականվանյալ Լևոն մագիստրոսը[78] վանականի սքեմն էր հագել։ Այս նյութի շուրջ հիշյալ մագիստրոսը քրիստոսասեր և իմաստուն Լևոն կայսեր, այն է՝ մեր Հոր և քո պապի հրամանով մի գործ շարադրեց։ Թեև [Լևոն] մագիստրոսը բարեպաշտ մարդ էր և գիտելիքների սիրահար, ինչպես վկայում է նրա կենցաղավարությունը, բայց լինելով հունական դաստիարակությունից զուրկ, նրա շարադրանքում օտարոտի ոճերը, լեզվական սխալները և շարահյուսական անճշտությունները վխտում էին։ Ինչպես ասացինք, այն պատճառով, որ նա հունական կրթություն չէր ստացել, նրա շարադրանքը սխալաշատ էր և խոցելի։ Բայց բոլոր դեպքերում նա գովելի, ճշգրտապատում գործ էր կատարել, քանզի նա բարեպաշտ և առաքինի մարդ էր։ Ահա մենք գտանք այդ, ոճի տեսակետից թույլ [շարադրանքը], որտեղ հարցերը քննության էին ենթարկված շատ մակերեսայնորեն, [շարադրանք], որ ծավալով կազմում էր մեր՝ ավելի ճշգրիտ և հանգամանորեն վերաշարադրվածի մեկ երրորդ մասից էլ պակաս, և քեզ համար [նոր գործ] աշխատասիրեցինք, որպեսզի նշված հարցի շուրջն էլ գաղափար ունենաս։ Կայսերական արշավանքների մասին այս [վաղեմի] կարգն ու կանոնը պահպանվեց և գործադրվեց մինչև քրիստոսասեր տեր Միքայելի[79] և նրա երջանկագույն մորեղբոր կեսար Վարդասի ժամանակ։ Այդ ավանդությունը մինչև նրանց օրերն էր հարատևել ավելի վաղ ժամանակների կայսրերից, այն է՝ Թեոփիլոսից, [նրա] հայր Միքայելից, [հիշածս] Միքայելի՝ քրիստոսասեր տիրոջ պապից։ Վերջիններս այս ավանդությունը ժառանգել էին իրենցից առաջ [թագավորած] կայսրերից։ Ես ավելի հին [կայսրեր] ասելով նկատի ունեմ Իսավրացիներին[80], ովքեր լուրջ սխալներ թույլ տվեցին ուղղափառ հավատքի հարցում։ Ես ավելի հին [կայսրեր]ասելով նկատի չունեմ մեծ և երանելի սուրբ Կոստանդինին, ո՛չ նրա որդի Կոստանդին, ո՛չ ամենաամբարիշտ Զուլիանոսին, ո՛չ էլ մեծ Թեոդոսին[81] և նրա հաջորդներին։ Այս կարգը վերստին սկսեց կիրառվել և խստորեն պահպանվել քաջանուն և ամենաբարեպաշտ կայսր Վասիլի, [իմ] պապի ժամանակ, և այդ կարգի մասին մենք կփորձենք գրավոր շարադրանք ներկայացնել։ Մեծ և վեհ ինքնակալը, երբ վճռում էր արշավանքի դուրս գալ, զենք ու զորք հանել, թշնամիների դեմ, նա անհապաղ հրաման էր տալիս խալկե դարպասի դրսից զրահ կախել, թուր և վահան։ Դրանից բոլորն իմանում էին կայսերական զորքը նախա-

պատրաստելու [անհրաժեշտության] մասին, որից հետո յուրաքանչյուրն սկսում էր կարգի բերել իր զենքերը և զինվորին վերաբերող ամեն ինչ։ Այնուհետև [կայսրը] հրամայում էր ագելեի լոգոթետին[82] արդարացիորեն, աստվածավախությամբ, բարեպաշտորեն և ճշգրտությամբ հաշվառում կատարել և սահմանել Ասիայի ու Փռյուգիայի մետատոնների[83] հանձնելիք [անասունների] քանակը՝ յուրաքանչյուր մետատոնի -կարողության և հնարավորության համապատասխան, որպեսզի նախօրոք բոլորին պարզ լինի, թե յուրաքանչյուրն որոշակիորեն քանի՞ [անասուն] պարտավոր է հանձնել։ Ասիան և Փռյուգիան՝ երկու հարյուր ջորի, կամ յուրաքանչյուր ջորու դիմաց տասնհինգ դահեկան, և երկու հարյուր ձի, կամ յուրաքանչյուրի փոխարեն տասներկու դահեկան, որոնց ընդհանուր գումարը կազմում է 5424 դահեկան, այսինքն 76 լիտր ոսկի։

...Արշավանքների ժամանակ [բանակաթեմերի] զորավարները միանվագ կայսեր են տալիս ջորիներ հետևյալ քանակությամբ. Անատոլիկոնի [զորավարը] 3 ջորի, Արմենիակների՝ 3 ջորի, Թրակեսիոնի՝ 3 ջորի, Օպսիկիոնի՝ 3 ջորի, Բուկելլարների՝ 3 ջորի, իսկ Արևելքի և Արևմուտքի մնացած [բանակաթեմերի] զորավարները երկուական ջորի։ Սելևկիայի [զորավարը] մեկ ջորի...

ԳԻՇԵՐԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

...Երբ կայսրը տագմաների և բանակաթեմերի զորքերի զորահավաք կատարելու հրաման է տալիս, նրանք պետք է կենտրոնանան Արմենիակների բանակաթեմի Դազիմոն [վայրում], կամ Խարսիանոն բանակաթեմի Կեսարիա [քաղաքում] և կամ էլ մի այլ՝ արշավանքի համար նախատեսված վայրին մոտ գտնվող բանակաթեմում...

...Այսպես է կատարվում հռոմեական մեծ բանակաթեմերի կապակցությամբ։ Ինչ վերաբերում է Արմենիական բանակաթեմերին[84], ապա կայսեր կամքով զորավարներին և կլեյսուրարխներին տալիս են մեկական կարված հիմատիոն, դիբլատիոն[85], արծիվ[86] կամ էլ վասիլիկիոն[87]. Նրանց մեծ տուրմարխներին տալիս են հասարակ հիմատիոններ, իսկ մերարխոսին և մնացածներին՝ մեկական հասարակ դեկալիոն[88] հիմատիոն, որ կարելի է գնել Ֆորոսում[89]...

...Անհրաժեշտ է, որ դու տեղյակ լինես, իմանաս նաև, թե

ինչ է նախորդում [կայսեր] արշավանքի դուրս գալուն, թե ինչպես կայսրն անցյալում հաջորդաբար վառվող ջահերի և ղամբարների օգնությամբ իսկույն, մի ժամում ստանում էր թշնամիների հարձակման լուրը։ Այդ մասին քեզ ստորև ավելի պարզ կասվի։ Հնում, երբ սարակինոսները Տարսոնից դուրս գալով հարձակվում էին հռոմայեցիների երկրի վրա, բաց տեղում գտնվող Լուլոն ամրոցում ջահ էին վառում. նրա ազդանշանն ընդունում էին և հաջորդաբար ջահ էին վառում Արգեոս կոչված լեռան վրա։ Նույն կարգով այնտեղից ստացված ազդանշանով [ջահ] էին վառում Սամոս լեռան վրա, ապա փոխանցում էին Իգիլոս ամրոցին, որ նույնպես վառում էր. այնտեղից ազդանշանն ընդունում էր Օլիմպոս[90] լեռը, որի գագաթին [ջահ] էին վառում, ապա ընդունում էր Կյուրիզոս լեռը և նրա վրա էլ էին վառում։ Այսպես հաջորդաբար ազդանշանն ընդունում էր Պյուլեի վերև գտնվող Մուկիլոս լեռը, ապա սուրբ Ավքսենտիոսի լեռը, որ «Ակոպոս» է կոչվում։ Դրանից հետո ազդանշանն ընդունում էր Փարոսի[91] պալատի հելիակոնը և նա էլ էր [ջահ] վառում։ Այնտեղ մշտապես հերթապահում էին դիետարիոսները[92], որպեսզի իրենց ուշադրությունից չվրիպի [ազդանշանը]. նրանք ուշադիր նայում էին սուրբ Ավքսենտիոսի լեռը...


Ջահեր վառելու հիշածս սովորությունը հարատևեց մինչև Թեոփիլոսի որդի Միքայել կայսեր ժամանակ...

...Հնամենի կարգի համաձայն բանակաթեմերի զինվորները ռոճիկ էին ստանում չորս տարին մեկ անգամ։ Առաջին տարին Անատոլիկոն, Արմենիակների և Թրակեսիոն բանակաթեմերը, երկրորդ տարին Օպսիկիոնը, Բուկելլարների, և Կապադովկիան, երրորդ տարին Խարսիանոն, Կոլոնիայի և Պափլագոնիայի բանակաթեմերը, և վերջապես [քառամյակի] վերջին տարին՝ Թրակիայի, Մակեդոնիայի և Խաղտիքի...

ՏԵՖՐԻԿԵԻ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԿԻԱՅԻ[93] ԱՐՇԱՎԱՆՔԻՑ ՔՐԻՍՏՈՍԱՍԵՐ ԿԱՅՍՐ ՎԱՍԻԼԻ[94] ՀԱՂԹԱԿԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ

Կայսրը Տեֆրիկեի և Գերմանիկայի պատերազմից հաղթանակով վերադարձավ, գնաց Հեբդոմոնի Հիերիա [պալատը], որտեղ ամբողջ քաղաքի բնակչությունը դիմավորեց նրան ծաղկեպսակներով և վարդապսակներով...

...Քաղաքի կարգ ու կանոնին հետևում էր էպարքոսը, նա էր և այն զարդարելու գործը կազմակերպողը: Իսկ շքերթի, սենատորների կայսեր դիմավորելու արարողության կարգը, [դեմոսի] կողմերի հաղթական կոչերը, վերջինիս երթերի կարգը, ընդունելությունների վայրը որոշել էր պրեպոզիտոսը, որին օժանդակում էին արարողապետը, սիլենտիարիոսները և ամբողջ կուբուկլիոնը[95]: Քանզի [քաղաքում] մագիստրոսի և էպարքոսի հետ մնացել էր կայսեր ներկայացուցիչ և նրա իշխանության տեղապահ սպատրիկ, պրեպոզիտոս և սակելլարիոս Վաանեսը[96]. կայսերական հնամենի սովորության համաձայն, երբ կայսրը արշավանքի էր դուրս գալիս, իր իշխանության տեղապահ էր թողնում պրեպոզիտոսին, իսկ պետական և հասարակական գործերի կառավարումը՝ մագիստրոսին և էպարքոսին...




ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

DE CERIMONIIS AULAE BYZANTINAE

LIBER II



ԳԼՈՒԽ 42

ԿԱՅՍՐԵՐԻ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՑ ՏԱՃԱՐՈՒՄ ԴՏՆՎՈՂ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍՈՒՐԲ ԵՎ ՄԵԾ ԿՈՍՏԱՆԴԻՆ [ԿԱՅՍԵՐ] ՀԵՐՈՈՆՈՒՄ[1]

...Մի այլ շիրիմ Թեոտալական՝ կանաչ մարմարից, որտեղ թաղված է Միքայել կայսրը, Թեոփիլոսի որդին։ Միքայելի այս շիրիմը Հուստինիանոս մեծ կայսեր [դամբարանն է]։ Միքայելը նախապես թաղված էր Ավգուստա [Թեոդորայի] վանքում, սուրբ առաքյալ Թովմայի տաճարում, վերջինիս մասունքների տակ, այն [շիրիմում], որի մեջ հայտնաբերվել էին և առաքյալների հանդերձները։ Տեր Լևոն կայսրը Միքայելի աճյունը տեղափոխեց և ամփոփեց ահա այստեղ[2]։ Մի այլ շիրիմ, Թեոտալական՝ կանաչ [մարմարից], որտեղ թաղված են Վասիլը՝ Եվդոկիայի և իր որդի Ալեքսանդրի հետ[3]։ Մի այլ շիրիմ՝ սադարինոս[4], այն է՝ պնևմոնուսիոս[5] [մարմարից], որտեղ թաղված են երանելի Լևոն [կայսրը], իրենից հետո վախճանված որդու՝ Կոստանդին Միրանածինի հետ[6]։ Մի այլ՝ սպիտակ [մարմարից] շիրիմ, վասիլիկիոն[7] կոչվածը, որտեղ թաղված է Վասիլի[8] որդի Կոստանդինը։ Մի այլ Թեոտալական՝ կանաչ [մարմարից] շիրիմում թաղված է երանելի Լևոնի[9] առաջին կին Թեոփանոն, իր դուստր Եվդոկիայի հետ։ Մի այլ՝ բյուքանական[10] [մարմարից] շիրիմում թաղված է նույն Լևոնի երկրորդ կինը՝ Զոեն[11]։ Մի այլ, Թեոտալական՝ կանաչ [մարմարից] շիրիմում թաղված է նույն տեր Լևոնի երրորդ կինը՝ Եվդոկիան, որ կոչվում էր նաև Վայինի։ Պրիկոնեսյան մարմարից մի այլ շիրիմում թաղված են երանելի Լևոնի և Զոեի դուստրեր Աննան ու Եվդոկիան։ Մի այլ փոքրիկ շիրիմ, սադարինոս, այն է պնևմոնուսիոս մարմարից պատրաստված, որտեղ թաղված է Կոստանդին Միրանածինի եղբայր Վասիլը և նրա պապ Վասիլի որդի Վարդասը[12]...

ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍ ՄԵԾԻ ՀԵՐՈՈՆՈՒՄ

...Թեսսալական՝ կանաչ մարմարից մի այլ շիրիմում թաղված է Իսավրացու[13] որդի Կոստանդինը[14], որ ստացավ Կավալլինոս մականունը։ Բայց նրա թշվառական աճյունը Միքայելն ու Թեոդորան այնտեղից հանեցին և կրակի տվեցին... Մի այլ՝ թեսսալական կանաչ [մարմարից] շիրիմում... թաղված է Միքայել Թլվատը[15]... Կանաչ գույնի մարմարից մի այլ շիրիմում թաղված է Թեոփիլոս կայսրը։ Կանաչ մարմարից մի այլ փոքրիկ շիրիմում թաղված է Թեոփիլոսի որդի Կոստանդինը։ Սագարինոս մարմարից մի այլ փոքրիկ շիրիմում թաղված է Թեոփիլոսի դուստր Մարիան։

ՆՈՒՅՆ ՏԱՃԱՐԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍՏՈԱՅՈՒՄ[16]

...Գաստրիա կոչված վանքում[17], այդ նույն եկեղեցու արևելյան կողմի աջ մասում, այնտեղ գտնվող ստատարեայում[18] թաղված են Թեոփիլոսի կին երանելի Թեոդորան[19] և նրա երեք դուստրերը՝ Թեկլան, Անաստասիան և Պուլքերիան. իսկ նույն եկեղեցու ձախ մասում, այդ ստատարեայի դիմաց կա մարմարե մի շիրիմ, որտեղ թաղված է երանելի կայսրուհի Թեոդորայի եղբայր, սխոլերի դոմեստիկոս դարձած Պետրոնասը[20]։ Իսկ նույն եկեղեցու գավթում, արևելյան կողմի ձախ մասում կա պրիկոննեսյան[21], այն է պիկրիմեոս[22] մարմարից պատրաստված մի փոքրիկ շիրիմ, որտեղ թաղված է Թեոկտիստեն, երանելի կայսրուհի Թեոդորայի մայրը։ Պետք է գիտենալ, որ նրա մոտիկ գտնվում է սագարինոս, այն է պննմոնուսիոս մարմարից պատրաստված մի փոքրիկ շիրիմ, որտեղ թաղված է Իրենեն, կեսար Վարդասի դուստրը։ Պետք է գիտենալ, որ նրանց մոտ է գտնվում շատ փոքրիկ, մի թզաչափ շիրիմ, որտեղ թաղված է կեսար Վարդասի ծնողը[23]։ Պետք է գիտենալ, որ սուրբ Եվփեմիայի՝ Գեղեցիկ կոչված վանքում, նույն եկեղեցու արևելյան կողմի ձախ մասում գտնվող ստատարեայում թաղված է Պանկալոն, քրիստոսասեր տեր Վասիլի մայրը[24]։ Նույն եկեղեցու արևելյան կողմի աջ մասում, այդ ստատարեայի դիմաց, գտնվում է մի այլ ստատարեա, թեսսալական կանաչ մարմարից պատրաստված, որտեղ թաղված է սխոլերի դոմեստիկոս Մարիանոսը և նրա եղբայր Սմբատը, երկուսն էլ

քրիստոսասեր տեր Վասիլի եղբայրները։ Պետք է գիտենալ, որ Կարապետի նույն այս եկեղեցու աջ կողմի աղոթարանում, այդ նույն աղոթարանի արևելյան կողմի ձախ մասում գտնվում է մի քանդակազարդ շիրիմ, որտեղ թաղված է Անաստասիան, քրիստոսասեր տեր Վասիլի դուստրը։ Նույն աղոթարանի արևելյան կողմի աջ մասում, շիրիմի դիմաց գտնվում է քանդակազարդ մի փոքրիկ շիրիմ, որտեղ թաղված են Աննան և Հելենեն, քրիստոսասեր տեր Վասիլի դուստրերը, և Զոեն, Վասիլի թոռ՝ աստվածապսակյալ և ծիրանածին երանելի կայսր Կոստանդնի մայրը[25]։ *Պետք է գիտենալ, որ Պրոմուտուի*[26] *[Միքայել] հրեշտակապետի վանքում՝ նույն եկեղեցու աջ կողմում, այնտեղ գտնվող ստատուրեայում թաղված է Մարիան, տեր Վասիլի դուստրը։*

ԳԼՈՒԽ 44

ՔՐԻՍՏՈՍԱՍԵՐ ՏԵՐ ԼԵՎՈՆԻ[27] ԺԱՄԱՆԱԿ ՆԱՎԱՏՈՐՄԻՂԻ ԼՈԳՈԹԵՏ ՊԱՏՐԻԿ ՀԵՄԵՐԻՈՍԻ[28] ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՍՏՎԱԾԱԿՈՐԾԱՆ ԿՐԵՏԵԻ ԴԵՄ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՋՈՐՔԵՐԻ ՁԻՆՎԱԾՈՒԹՅԱՆ, ԱՐՇԱՎԱՆՔԻ, ՌՈՃԿԱՁԱՓԻ ԵՎ [ՁՈՐՔԻ] ՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

ԾՈՎԱՅԻՆ ԱՐՇԱՎԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐ ՀԵԾԵԼԱԿԻՑ

Թրակացի և մակեդոնացի սխոլարիոսներ[29] *1037 [հոգի]։ Թրակեսիոն բանակաթեմից՝ 1000 հոգի, Սեբաստիա բանակաթեմից 1000 հայ, Պլատանիոնից*[30] *500 հայ, Պրինեից*[31] *500 [հոգի]։ Ընդհանուր գումարը 6037 հեծյալ*[32]...

ՀԵԾԵԼԱԿԻ ՌՈՃԻԿԻ ՄԱՍԻՆ

Հազար երեսուն յոթ Թրակացի և մակեդոնացի սխոլարիոսների ռոճիկն է մեկ կենտինար[33]*, երեսուն մեկ լիտր, քսանչորս դահեկան։ Թրակեսիոն բանակաթեմի 3000 զինվորներից յուրաքանչյուրին որպես ռոճիկ հասնում է երկու դահեկան, [այսինքն]*

մեկ կենտինար, 80 լիտր և քսանչորս դահեկան[34]։ Սեբաստիա բանակաթեմի 1000 զինվորներին որպես ռոճիկ հասնում է մեկ կենտինար, տասներեք լիտր, քսանչորս դահեկան[35]։ Պլատանիտ հայերի 500 հոգուն որպես ռոճիկ հասնում է վեցական դահեկան, այն է՝ մեկ կենտինար, 31 լիտր, 38 դահեկան։ Պրինեի 400 զինվորներից[36] յուրաքանչյուրի ռոճիկն է հինգ դահեկան. [ընդհանուր դումարը] մեկ կենտինար, 27 լիտր և 56 դահեկան[37]...

ՊՐՈԽՐԵՈՆԻ [ԿԱՆԽԱՎՃԱՐԻ] ՄԱՍԻՆ

Երեք բանակաթեմերի՝ Կիբիրեոտների, Սամոսի և էգեական ծովի[38] նավատորմիղի երեք հազար զինվորներից յուրաքանչյուրին հասնում է երկու դահեկան, ընդհանուր գումարը՝ 83 լիտր և քսանչորս դահեկան։ Արևմուտքի մարդայիտների[39] երեք տուրմարխներից յուրաքանչյուրին հասնում է 36 դահեկան, 32 դրունգարներից յուրաքանչյուրին՝ 12 դահեկան, 32 կոմեսներին՝ 6-ական դահեկան, և 5000 շարքայիններին՝ 4-ական դահեկան։ Ընդհանուր գումարը կազմում է 2 կենտինար, 99 լիտր և 56 դահեկան։ Սեբաստիայի հայկական զորքերի 5 տուրմարխներից յուրաքանչյուրին հասնում է 12 դահեկան, 10 դրունգարներին՝ 6-ական դահեկան, 8 կոմեսներին՝ 5-ական դահեկան, ինն հարյուր վաթսուն հինգ զինվորներին 4-ական դահեկան։ Ընդհանուր գումարը կազմում է 55 լիտր և 7 դահեկան։ Պրինեի 500 հայ զինվորներից յուրաքանչյուրին հասնում է 2 դահեկան, ընդհանուր գումարը 13 լիտր և 64 դահեկան։ Այսպիսով, պրոխրեոնի ամբողջական գումարը կազմում է 4 կենտինար, 52 լիտր և 60 դահեկան։ Պետք է գիտենալ, որ Կիբիրեոտների [բանակաթեմի] զորավարը, ինչպես և Ատտալիայի մարդայիտների կատեպանը կարգադրություն ստացան, որ զորավարը տուրմարխների ուսիաներից[40] պատրաստի երկու խելանդիոն[41], իսկ մարդայիտների կատեպանը՝ գալեաներ[42], որոնք մարտ ամսին պետք է ուղարկվեն Ասորիք, իմանալու համար այն ամենի մասին, ինչ կատարվում է այնտեղ, կամ նախատեսվում է անել և ստույգ իմաց տան և զեկուցեն։ Պետք է գիտենալ, որ Կիպրոսի կառավարիչ պրոտոսպաթար Լևոնը՝ Սմբատիկի [որդին], պետք է հմուտ հետախույզներ ուղարկի Տարսոնի ծոցը, Ատտալիա[43], նաև Տրիպոլիս[44] և

Լավոդիկիա, որպեսզի ամեն տեղից սարակինոսների նախապատրաստությունների մասին տեղեկություններ քաղեն...

...Պետք է գիտենալ, որ Պանգրատի որդի պրոտոսպաթար Թեոդորոսը կարգադրություն ստացավ գնալ Անատոլիկոն [բանակաթեմը] և զինվորագրել պլատանիատներին և նրանցից, ապա նաև այդ բանակաթեմի այլ [մարդկանցից], կազմել 400 հոգուց բաղկացած ընտիր աղեղնավորների մի [զորամաս], ինչպես և հեծյալներ, եթե նրանց իշխանավորների կամ սխոլարիոսների մեջ կան այդ բանում հմուտ մարդիկ։ Եթե սխոլարիոսները իրենց ոռճիկը լրիվ ստանան, ապա հեծելազորին հատուկ սպառազինության մասին թող հոգան իրենք իրենց [միջոցներից], բայց եթե նրանց ոռճիկը պակաս լինի, ապա թող ձի ստանան մետատոնից և կամ էլ կառավարիչների համաձայնությամբ՝ Անատոլիկոն բանակաթեմից։

...Պետք է գիտենալ, որ Կիբիրեոտների [բանակաթեմի] զորավարը, և Ատտալիայի մարդայիտների կատեպանը, և Սմբատիկի [որդի] Լևոնը կարգադրություն ստացան զգոն լինել, ուշադիր հետևել և թույլ չտալ, որպեսզի որևէ անծանոթ մարգ գնա Ասորիք և Ասորիք տանի Ռոմանիային վերաբերող տեղեկություններ։

ՏԵՐ ՌՈՄԱՆՈՍ[45] ԿԱՅՍԵՐ ԺԱՄԱՆԱԿ՝ 8-ՐԴ ԻՆԴԻԿՏԻՈՆՈՒՄ ԼԱՆԳՈԲԱՐԴԻԱ ԱՐՇԱՎՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պրոտոսպաթար Եպիփանի գլխավորությամբ 8-րդ ինդիկտիոնում ճամփա ելան կայսերական 11 խելանդիոն։ Նրանից առաջ 7-րդ ինդիկտիոնում պատրիկ Կոզմայի գլխավորությամբ ճամփա ելան 11 խելանդիոն։ Ռուսների 7 կարավիա[46] 415 հոգով։ Հեծելազորից Թրակեսիոն և Մակեդոնիտ բանակաթեմից՝ 202 սպա, 98 սխոլարիոս և 608 նոր սխոլարիոս։ Օտարազգի խրամատավորներ՝ մեծ հետերիայից[47] 31 հոգի, միջին հետերիայից 46 հոգի, ֆարգանացիներ[48] 45 հոգի, խազարներ 47 հոգի, կայսերական [գվարդիայից] 71 հոգի, մայրաքաղաքի Արիթմոսից[49] 35 հոգի, նոր ռազմագերիներից 79, մուսուլցի[50] 11 հոգի, պանորմիտներ 18 հոգի, թուրքեր[51] 84 հոգի, և հայ կամավորներ մանգանարիոսների[52] հետ միասին 36 հոգի։ Ընդամենը 1453 հոգի։

ԹԵ Ի՞ՆՉ ՈՒՂԱՐԿՎԵՑ ՏԵՐ ՌՈՄԱՆՈՍԻ ԺԱՄԱՆԱԿ ԻՏԱԼԻԱՅԻ ՌԵՔՍԻՆ[53], ՈՐՊԵՍԶԻ ՆԱ [ՊԱՏԵՐԱԶՄԻ] ԴՈՒՐՍ ԳԱ ԱՊՍՏԱՄԲ ԻՇԽԱՆՆԵՐ ԼԱՆԴՈՒԼՖՈՍԻ, ՆՐԱ ԵՂԲԱՅՐ ԱՏԵՆՈՒԼՖՈՍԻ[54], ԳՈԵՄԱՐԻ, ՆՐԱ ԵՂԲԱՅՐ ԳՈԵՖԵՐԻ[55] ԵՎ ԼԱՆԳՈԲԱՐԴԻԱՅԻ ԲԱՆԱԿԱԹԵՄԻ ԱՊՍՏԱՄԲ ԼԱՆԳՈԲԱՐԴՆԵՐԻ ԴԵՄ ԵՎ ԱՄՐՈՑՆԵՐԸ ԼԱՆԳՈԲԱՐԴԻԱՅԻ ԶՈՐԱՎԱՐԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

...Պետք է գիտենալ, որ Կրետեի արշավանքին[56] մասնակցած բանակաթեմային նավատորմիղի [մարտիկներն] ստացան հետևյալ ռոճիկները. տուրմարխները 30-ական [դահեկան], կորտեի կոմեսները՝[57] 20-ական, բանակաթեմերի խարտուլարները՝[58] 20-ական, բանակաթեմերի դոմեստիկոսները՝[59] 20-ական, դրունգարները՝ 20-ական, կոմեսները՝ 6-ական, շարքայինները՝ 3-ական, գալեռների նավաստիները՝ 4-ական, գալեաների ժողովուրդը, այսինքն մարդայիտները՝ 3-ական։ Պետք է գիտենալ, որ Խարպեզիկի[60] բանակաթեմի [մարտիկները] ստացան հետևյալ ռոճիկները. մեծ տուրմարխները, մերիարխը, կորտեի կոմեսը և բանակաթեմի դոմեստիկոսը 5-ական [դահեկան], փոքր տուրմարխները՝ 4-ական դահեկան, դրունգարները՝ 3-ական, շարքայինները՝ 2-ական։ Պետք է գիտենալ, որ Օպսիկիոն [բանակաթեմում] հաստատված սկլավենները, ստացան հետևյալ ռոճիկները. նրանց երեք պարագլուխները 5-ական [դահեկան], իսկ մնացածները՝ 3-ական դահեկան։ Թրակեսիոն բանակաթեմից Կրետե գնաց [բանակաթեմի] զորավարը, Թեոդոսիակոնի[61] տուրմարխը, վիկտորների[62] տուրմարխները, ծովափի տուրմարխները, մերիարխը, բանակաթեմի խարտուլարը, կորտեի կոմեսը, բանակաթեմի դոմեստիկոսը, 64 դրունգարոկոմեսներ։ Այդ դրունգարոկոմեսներից ոմանք ունեին երկուական զինվոր, մյուսները՝ երեքական, և այսպիսով, ընդհանուր թիվը 150 հոգի էր։ Զորավարին ուղեկցում էին պրոտոմանդատորը[63], պրոտոկանգելարիոսը[64], պրոտովանդոֆորոսը[65], 6 պրոտոդոմեստիկոս[66], 6 պրոտոկենտարխոս[67], 100 հետևակ պրոելևսիմեոս[68], նաև բանակաթեմի ափը պահպանող հայերից։ Ինչպես զեկուցեց զորավարը, նա Կրետեի ափ դուրս գալու համար ուներ շուրջ 600 զինված հոգի, բայց փոխադրանավերի սակավաթվության պատճառով [բոլորը] հնարավորություն չունեցան ափ դուրս գալ, այլ միայն 50 հոգի...

ԳԼՈՒԽ 45

ԾԻՐԱՆԱԾԻՆ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՎ ՌՈՄԱՆՈՍ՝ Ի ՔՐԻՍՏՈՍ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԿԱՅՍՐԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ՝ 7-ՐԴ ԻՆԴԻԿՏԻՈՆՈՒՄ ԿՐԵՏԵԻ ԴԵՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՐՇԱՎԱՆՔԻ[69], ՆԱՎԱՏՈՐՄԻՂԻ ԵՎ ՀԵԾԵԼԱԶՈՐԻ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

[Արշավանքին ի միջի այլոց մասնակցեցին]

...Ռուսներ՝ 584 հոգի, նրանց սպասարկող՝ 45 հոգի, ընդամենը 629 ռուս. տուլմացիներ[70] 368 հոգի, ռազմագերիներ՝ 700 հոգի...

ՀԵԾԵԼԱԶՈՐԻՑ [ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ]

Թրակիա բանակաթեմից տոպոտերետեսը[71], չորս տագմաների հրամանատարները և զինվորներ, 139 հոգի, չորս տագմաների սխոլարիոսներ և զինվորներ, 354 հոգի։ Չորս տագմաների հրամանատարների և սխոլարիոսների ընդհանուր թիվն է 493 հոգի։ Մակեդոնիայի բանակաթեմից տոպոտերետեսը և չորս տագմաների հրամանատարները, 83 հոգի, չորս տագմաների սխոլարիոսներ, 293 հոգի։ Չորս տագմաների հրամանատարների և սխոլարիոսների ընդհանուր թիվն է 869 հոգի։ Պերատիկա տագմաներից[72] էքսկուբիտորը[73] իր տոպոտերետեսով, և իր ամբողջ տագմայով՝ հրամանատարներով և սխոլարիոսներով. ընդամենը 700 հոգի։ Հիկանատոսն[74] իր տոպոտերետեսով և իր ամբողջ տագմայով՝ հրամանատարներով և սխոլարիոսներով՝ ընդամենը 456 հոգի։ Հայերից, ովքեր վերջերս սկսեցին ռոճիկ ստանալ Արևելքի տագմաներից, 1000 հոգի։ Օպսիկիոն բանակաթեմում հաստատված սկլավեններից 220 հոգի։ Թրակեսիոն [բանակաթեմի] զորավարը իր երեք տուրմարխներով և բանակաթեմի մյուս իշխանավորներով, բոլոր առաջնորդներով և բոլոր զինվորներով, ովքեր գտնըվում էին դրունգարների և կոմեսների ծառայության մեջ՝ 150 հոգի։ Պահանջվեց 800 զինվոր ևս և տրվեց 4-ական դահեկան կանխավճար, այն է 41 լիտր [ոսկի] և 32 դահեկան։ Այդ [դումարից] ռոճիկ տրվեց Խարպեղիկի բանակաթեմի զորքին՝ 24

լիտր և 56 դահեկան։ Հրամանատարներից կարելի է ավելի մանրամասն իմանալ Կրետե կղզին ափ դուրս եկած Թրակեսիոն բանակաթեմի զորքի [քանակի] մասին։ Նույն Թրակեսիոն բանակաթեմի, Թրակեսիոնի ծովափը պահպանող հայերից 600 հոգի։ Բայց փոխադրանավերի սակավաթվության պատճառով կարողացան ափ դուրս գալ ընդամենը 50 զինվոր։ Խարպեզիկի [բանակաթեմի] զորավարը իր ամբողջ զորքով, այն է՝ մեծ տուրմարխներով, կորտեի կոմեսով, բանակաթեմի դոմեստիկոսով՝ 25 հոգի, փոքր տուրմարխները 47 հոգի, դրունգարները 205 հոգի, և շարքայինները՝ 428 հոգի։ Ընդամենը 705 հոգի։

ՎԵՐԵՎՈՒՄ ՀԻՇՎԱԾ ԲՈԼՈՐ ՆԱՎԱՍՏԻՆԵՐԻ, ՀԵՏԵՎԱԿԱԶՈՐԻ ԵՎ ՀԵԾՅԱԼՆԵՐԻ ՌՈՃԻԿԻ ՄԱՍԻՆ

...Արևմտյան բանակաթեմների 3000 մարդայիտ զինվորների կանխավճար չորսական դահեկան, որը կազմում է 166 լիտր [ոսկի] և 48 դահեկան։ Այդ [գումարից] պատրիկ Միքայել Ուրանոսի կողմից պատրիկ Կրինիտեսին[73] տրվեց 36 լիտր... Խարպեզիկի բանակաթեմի 22 մեծ տուրմարխները, բանակաթեմի մերիարխը, կորտեի կոմեսը և բանակաթեմի դոմեստիկոսը՝ 5-ական [դահեկան], 47 փոքր տուրմարխները՝ 4-ական [դահեկան], 205 դրունգարները՝ 3-ական [դահեկան], 428 շարքայինները՝ 2-ական [դահեկան]։ Նրանց ոռճկի ընդհանուր գումարն է 24 լիտր և 56 դահեկան...

ԳԼՈՒԽ 48

ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻՆ ՈՒՂԱՐԿՎՈՂ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՎԵՐՆԱԳՐԵՐԸ

Հռոմի պապին [ուղարկվում է] մեկ սոլիդանոց խրիսովուլլով նամակ, [որ վերնագրվում է]. «Հանուն Հոր և որդվո և հոգվույն սրբո՝ մեկ և միակ Ճշմարիտ աստուծո, հավատացյալ ի նույն աստված, հռոմայեցիների այսինչ և այսինչ կայսրերը Հռոմի սրբազնագույն պապին՝ մեր հոգևոր Հորը»։ Նույն վերնագրով նաև Ալեքսանդրիայի պատրիարքին, բացառյալ «Հորը» բառը. նմանապես Անտիոքի պատրիարքին և Երուսաղեմի պատրիարքին,

բացառյալ «հոգևոր հորը» բառերը։ Կնիքները լինում են ոսկե, երեք սոլիդանոց։

Խալիֆային, այն է Ամերմումնիին ուղարկվում է չորս սոլիդանոց խրիսովուլլով [նամակ], [հետևյալ վերնագրով]. «Հռոմայեցիների այսինչ և այսինչ հավատացյալ օգոստոս կայսրերը ամենամեծափառ, ամենտազնիվ և ամենաերևելի այսինչ խալիֆային[76], հագարացիների առաջնորդին[77]։ Հավատացյալ ի Քրիստոս աստված այսինչ և այսինչ օգոստոս ինքնակալները, հռոմայեցիների մեծ կայսրերը ամենամեծափառ, ամենաազնիվ և ամենաերևելի այսինչ խալիֆային, հագարացիների առաջնորդին»։

Մեծ Հայքի[78] իշխանաց իշխանին[79] [ուղարկվում է] երեք սոլիդանոց խրիսովուլլով [նամակ]. «Կոստանդին և Ռոմանոս հավատացյալ ի Քրիստոս աստված ինքնակալ օգոստոսներ, հռոմայեցիների մեծ կայսրեր, ամենաերևելի այսինչ իշխանին, Մեծ Հայքի առաջնորդին և մեր հոգևոր որդուն»։ Ասպուրականի, այն է Վասպարականի[80] իշխանին, որ այժմ իշխանաց իշխանի պատիվն է ստացել[81], երեք սոլիդանոց խրիսովուլլով [նամակ]. «Կոստանդին և Ռոմանոս հավատացյալ ի Քրիստոս աստված ինքնակալ օգոստոսներ, հռոմայեցիների կայսրեր, ամենաերևելի այսինչ իշխանաց իշխանին»։ Կոգովիտի իշխանին[82], Հայաստան։ Տարոնի իշխանին[83], Հայաստան։ Մոկքի իշխանին[84], Հայաստան։ Ավզանի[85] իշխանին, Հայաստան։ Սյունիքի[86] իշխանին, Հայաստան։ Վայոց Ձորի[87] իշխանին, Հայաստան։ Խաչենի իշխանին[88], Հայաստան։ Սևորդյաց, այսինքն Սև Որդիներ կոչվող երեք իշխաններին[89]։ Վերոհիշյալ բոլորին ուղարկվող նամակները վերնագրվում են այսպես. «Քրիստոսասեր տերերի հրամանքը այսինչ իշխանին, այսինչ տեղ»։

Իբերիայի կուրապաղատին երկու սոլիդանոց խրիսովուլլով [նամակ]. «Քրիստոսասեր տերերի հրամանքը՝ ամենափառավորյալ այսինչ կուրապաղատին»։ Կուրապաղատին են ենթարկվում չորս այլ իշխանություններ, որոնց դիմում են հետևյալ կերպ. Վերիասախի իշխանին[90], Իբերիա։ Կարնատայսի իշխանին[91], Իբերիա։ Կուելի իշխանին[92], Իբերիա։ Ացարայի[93] իշխանին, Իբերիա։ «Քրիստոսասեր տերերի հրամանքը այսինչին»։

Ալանիայի էքսուսիոկրատորին[94] [ուղարկվում է] երկու սոլիդանոց խրիսովուլլով նամակ. «Հանուն Հոր և որդվո և հոգվույն սրբո՝ մեկ և միակ ճշմարիտ մեր աստուծո. Կոստանդին և Ռո-

մանոս հավատացյալ ի նույն աստված հռոմայեցիների կայսրերը Ալանիայի այսինչ էքսուսիոկրատորին, մեր հոգևոր որդուն»։

Արազգիայի էքսուսիաստեսին[95] [ուղարկվում է] երկու սոլիդանոց խրիսովուլլով [նամակ]. «Քրիստոսասեր տերերի հրամանքը Աբազգիայի երևելի այսինչ էքսուսիաստեսին»։

Ալբանիայի իշխանին[96]։ Կրեվատադեսների իշխանին[97] Կրեվատաս կոչվածին։ Կեդոնիայի[98] իշխանին։ Ցանարիայի իշխաններին[99]։ Սարվանի իշխանին[100], որոնք գտնվում են Ալանիայի և Ցանարիայի միջև։ Իշխաններին Ազիայի[101], որի մեջ են գտնվում Կասպից դռները։ Խրյուսայի իշխանին[102]։ Վրեղանի իշխանին[103]։ Մոկանի իշխանին[104] (Մոկանից է սկսվում Մեոտիս լիճը)։ Բոլոր վերոհիշյալներին ուղղված նամակը վերնագրվում է այսպես. «Քրիստոսասեր տերերի հրամանքը այսինչ իշխանին, այսինչ երկիր»։

Հայոց կաթողիկոսին, Իբերիայի կաթողիկոսին, Ալբանիայի կաթողիկոսին։ Երեք կաթողիկոսին էլ ուղղված նամակների վերնագիրն է. «Քրիստոսասեր տերերի հրամանքը այսինչ երկրի, ամենաբարեպաշտ այսինչ առաջնորդին»։

Հռոմի պապին երկու սոլիդանոց[105] խրիսովուլլով նամակ։ [Վերնագիրն է]. «Հանուն հոր և որդվո և հոգվույն սրբո՝ մեր մեկ և միակ ճշմարիտ աստուծո։ Կոստանդին և Ռոմանոս հավատացյալ ի նույն աստված հռոմայեցիների կայսրերը Հռոմի սրբազնագույն այսինչ պապին, մեր հոգևոր հոր»։

Ռեքսին Սաքսոնիայի։ Ռեքսին Բավարիայի (սա Նեմիցներ կոչվածների երկիրն է)։ Գալլիայի ռեքսին։ Գերմանիայի ռեքսին։ Բոլոր վերոհիշյալներին ուղղված նամակը վերնագրված է այսպես. «Հանուն հոր և որդվո և հոգվույն սրբո, մեր մեկ և միակ ճշմարիտ աստուծո։ Կոստանդին և Ռոմանոս հավատացյալ ի նույն աստված հռոմայեցիների կայսրերը, սիրելի և հոգևոր այսինչ եղբոր, երևելի ռեքսին»։

Հռոմի պրինցեպսին երկու սոլիդանոց խրիսովուլլով [նամակ]. «Կոստանդին և Ռոմանոս և այլն և այլն, Հռոմի ամենափառավորյալ այսինչ պրինցեպսին»։

Աֆրիկայի ամիրային. «Կոստանդին և Ռոմանոս հավատացյալ ի Քրիստոս աստված օգոստոս ինքնակալներ, հռոմայեցիների մեծ կայսրեր, մուսուլմանների ամենափառավորյալ այսինչ էքսուսիաստեսին»։ [Վերոհիշյալին] երկու սոլիդանոց խրիսովուլլ։

Եգիպտոսի ամիրային չորս սոլիդանոց խրիսովուլլով [նամակ]. *Կոստանդին Շիրանածին և Ռոմանոս կայսրերի օրոք* [սրան] *ուղարկված նամակի խրիսովուլլը կշռում էր 18 հեքսագիոն*[106]*։ «Կոստանդին և Ռոմանոս ի Քրիստոս բարեպաշտ ինքնակալներ, մեծ, վեհ օգոստոսներ, հռոմայեցիների կայսրեր, մեր սիրելի բարեկամ, Եգիպտոսի ամենաազնիվ ամիրային»։*

Սարդինիայի իշխանին երկու սոլիդանոց խրիսովուլլով [նամակ]. *«Քրիստոսասեր տերերի հրամանքը Սարդինիայի իշխանին»։ Վենետիկի դուքսին։ Կապուայի պրինցեպսին։ Նեապոլսի դուքսին։ Ամալֆեի իշխանին։ Գայետեի իշխանին։ Բուլղարիայի՝ կամավն աստուծո իշխանին. «Հանուն հոր և որդվո և հոգվույն սրբո՝ մեր մեկ և միակ ճշմարիտ աստուծո, Կոստանդին և Ռոմանոս հավատացյալ ի նույն աստված հռոմայեցիների կայսրերը, մեր ցանկալի և հոգևոր որդի, կամավն աստուծո բուլղարների ամենաքրիստոնյա ժողովրդի իշխանին»։ Վերջերս գրվում է այսպես. «Կոստանդին և Ռոմանոս հռոմայեցիների ի Քրիստոս աստված բարեպաշտ ինքնակալ կայսրեր, մեր ցանկալի որդուն, տեր այսինչին, Բուլղարիայի թագավորին»։*

Խազարիայի խաքանին երեք սոլիդանոց խրիսովուլլով [նամակ]. *«Հանուն հոր և որդվո և հոգվույն սրբո՝ մեր մեկ և միակ ճշմարիտ աստուծո։ Կոստանդին և Ռոմանոս հավատացյալ ի նույն աստված հռոմայեցիների կայսրեր, Խազարիայի ամենաազնիվ և ամենասիրելի այսինչ խաքանին»։*

Ռուսիայի իշխանին երկու սոլիդանոց խրիսովուլլով [նամակ]. *«Կոստանդնի և Ռոմանոսի, հռոմայեցիների քրիստոսասեր կայսրերի նամակը Ռուսիայի իշխանին»։*

Թուրքերի[107] *իշխաններին երկու սոլիդանոց խրիսովուլլով* [նամակ]. *«Կոստանդնի և Ռոմանոսի, հռոմայեցիների քրիստոսասեր կայսրերի նամակը Թուրքերի իշխաններին»։*

Պեչենեգների իշխաններին երկու սոլիդանոց խրիսովուլլով [նամակ]. *«Կոստանդնի և Ռոմանոսի, հռոմայեցիների քրիստոսասեր կայսրերի նամակը պեչենեգների իշխաններին»։*

Խորվաթիայի իշխանին, սերբերի իշխանին, Զախլումոնի իշխանին, Կանալի իշխանին, Տրաբունոնի իշխանին, Դիոկլիայի իշխանին, Մորավիայի իշխանին [ուղարկվող նամակների] *վերնագիրն է. «Քրիստոսասեր տերերի հրամանքը այսինչ* [երկրի]*, այսինչ իշխանին»։ Խրիսովուլլը երկու սոլիդանոց։*

Ֆրանկիայի ռեքսին [մեկ սոլիդանոց] խրիսովուլլով [նամակ]. «Հանուն հոր և որդվո և հոգվույն սրբո, մեր մեկ և միակ ճշմարիտ աստուծո, Կոստանդին և Ռոմանոս հավատացյալ ի նույն աստված, վեհ օգոստոս ինքնակալներ, հռոմայեցիների մեծ կայսրեր, մեր սիրելի, ցանկալի և հոգևոր եղբոր, Ֆրանկիայի. ամենաազնիվ, երևելի այսինչ ռեքսին»։

Հնդկաստանի վեհապետին. «Կոստանդին և Ռոմանոս, հավատացյալ ի Քրիստոս աստված, հռոմայեցիների ինքնակալ մեծ կայսրեր, Հնդկաստանի այսինչ վեհապետին, մեր սիրելի բարեկամին»։

Երջանիկ Արաբիայի տիրակալին. [մեկ սոլիդանոց] խրիսովուլլով [նամակ]. «Կոստանդին և Ռոմանոս, հավատացյալ ի Քրիստոս աստված, հռոմայեցիների ինքնակալ մեծ կայսրեր, Արաբիայի այսինչ տիրակալին»։

ԳԼՈՒԽ 50

ԶՈՐԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԼԵՅՈՒՐԱՐԽՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՌՈՃԿԱՅՈՒԹՅԱԿԸ, ԹԵ ՔՐԻՍՏՈՍԱՍԵՐ ՏԵՐ ԼԵՎՈՆԻ ԺԱՄԱՆԱԿ[108] ՆՐԱՆՑ ԻՆՉՔԱՆ ՌՈՃԻԿ ԷԻՆ ՍՏԱՆՈՒՄ

Անատոլիկոն [բանակաթեմի] զորավարը 40 լիտր, Արմենիակների զորավարը 40 լիտր, Թրակեսիոնի զորավարը 40 լիտր, Օպսիկիոնի զորավարը 30 լիտր, Բուկելլարների զորավարը 30 լիտր, Կապադովկիայի զորավարը 20 լիտր, Խարսիանոնի զորավարը 20 լիտր, Պաֆլագոնիայի զորավարը 20 լիտր, Թրակիայի զորավարը 20 լիտր, Մակեդոնիայի զորավարը 30 լիտր, Խազտիքի զորավարը 10 լիտր, որովհետև նա կումերկիոնից[109] ստանում է 10 լիտր ևս, Կոլոնիայի զորավարը 20 լիտր, Միջադետքի զորավարը 0 լիտր, որովհետև նրա ձեռքում է գտնվում ամբողջ կումերկիոնը։ Սեբաստիայի զորավարը 5 լիտր, որովհետև նա այն ժամանակ կլեյսուրարխ էր, Լիկանդոսի զորավարը 5 լիտր, որովհետև նա այն ժամանակ կլեյսուրարխ էր։ Սելևկիայի զորավարը 5 լիտր, որովհետև նա այն ժամանակ կլեյսուրարխ էր։ Լեոնտոկոմիսի զորավարը 5 լիտր, որովհետև նա այն ժամանակ կլեյսուրարխ էր, Կիբիրեոտների զորավարը 10 լիտր, Սամոսի զորավարը

10 լիտր, Էգեական ծովի զորավարը 10 լիտր։ Արևմուտքի զորավարները ռոճիկ չէին ստանում, որովհետև նրանք իրենց բանակաթեմերից ստանում էին տարեկան հասույթ[110]*։ Նրանք են Պելոպոնեսի զորավարը, Նիկոպոլսի զորավարը*[111]*, Հելլադայի զորավարը, Սիկիլիայի զորավարը, Լանգոբարդիայի զորավարը, Ստրիմոնի զորավարը, Կեֆալոնիայի զորավարը, Թեսաղոնիկեի զորավարը, Դյուրախիոնի զորավարը*[112]*, Դալմատիայի զորավարը, Խերսոնի զորավարը։*

ԳԼՈՒԽ 52

ՃՇԳՐՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՊԱՀՊԱՆՎԵԼԻՔ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆԻ, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐԻ ԳԱՀՆ ՈՒ ՊԱՏԻՎԸ, ԿԱԶՄՎԱԾ ՀԻՆ ԿԼԵՏՈՐՈԼՈԳԻՈՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊՐՈՏՈՍՊԱԹԱՐ ԵՎ ԱՏՐԻԿԼԻՆ ՓԻԼՈԹԵՈՍԻ ԿՈՂՄԻՑ՝ ՄԵՐ ՔՐԻՍՏՈՍԱՍԵՐ ԵՎ ԱՄԵՆԱԻՄԱՍՏՈՒՆ ԼԵՎՈՆ ԿԱՅՍԵՐ ԺԱՄԱՆԱԿ, ԱՇԽԱՐՀԻ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ 6408 ԹՎԱԿԱՆԻՆ, 3-ՐԴ ԻՆԴԻԿՏԻՈՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՆ[113]

Կայսերական հրամանագրով պաշտոնյաներին շնորհվող պատվաստիճանները, որոնց [կրողները] կոչված են կառավարելու ստորադրյալներին, նույնպես 60-ն են, որոնք, ինչպես ասվեց, կայսերական հրամանագրով շնորհվելով, հեշտությամբ կարող են նորից ետ վերցվել և մի անձնավորությունից փոխանցվել մի ուրիշի։

Առաջին և ամենաբարձրը վասիլեոպատորի[114] *աստիճանն է, որ հիմնվեց մեր քրիստոսասեր կայսր Լևոնի կողմից։ Բ. Ռեկտորի*[115] *աստիճանը։ Գ. Սինկելլոսի*[116]*։ Դ. Անատոլիկոն [բանակաթեմի] զորավարի աստիճանը։ Ե. Սխոլերի դոմեստիկոսինը։ Զ. Արմենիակների [բանակաթեմի] զորավարի։ Է. Թրակեսիոնի զորավարի։ Ը. Օպսիկիոնի կոմեսի։ Թ. Բուկելլարների զորավարի։ Ժ. Կապադովկիայի զորավարի։ ԺԱ. Խարսիանոնի զորավարի։ ԺԲ. Կոլոնիայի զորավարի։ ԺԳ. Պաֆլագոնիայի զորավարի։ ԺԴ. Թրակիայի զորավարի։ ԺԵ. Մակեդոնիայի զորավարի։ ԺԶ. Խաղտիքի զորավարի... [ընդամենը 60 աստիճան]։*

Այս բոլոր [աստիճանները] ստորաբաժանվում են յոթ կարգի, այն է՝ զորավարների, դոմեստիկոսների, դատավորների, սեկրետիկոսների, դեմոկրատների, ստրատարխների, և հատուկ աստիճանների[117]*: Զորավարների դասին են պատկանում 26-ը, այն է Անատոլիկոնի զորավարը, Արմենիակների զորավարը, Թրակեսիոնի զորավարը, Օպսիկիոնի կոմեսը, Բուկելլարների զորավարը, Կապադովկիայի զորավարը, Խարսիանոնի զորավարը, Կոլոնիայի զորավարը, Պաֆլագոնիայի զորավարը, Թրակիայի զորավարը, Մակեդոնիայի զորավարը, Խաղտիքի զորավարը: Սրանք Արևելքի բանակաթեմերի զորավարություններն են, իսկ Արևմուտքինն են հետևյալները...*

ՍՐԱՆՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՆ ԵՆԹԱԿԱ ԵՆ ԵՎ ՍՏՈՐԱԴՐՅԱԼ ՀԱՆՎԱՆԵ ՀԵՏԵՎՅԱԼՆԵՐԸ

Յուրաքանչյուր վերոհիշյալ աստիճանին, վերջինիս հանդես գալուն և կարգին համապատասխան ենթարկվում են տարբեր աստիճաններ, որոնք կոչվում են օֆֆիկիա և երեք կարգի են. տագմատիկոս, բանակաթեմային և սենատորական: Անատոլիկոն բանակաթեմի զորավարին ենթակա են 11 աստիճան, այն է տուրմարխներ, մերիարխներ, կորտեի կոմեսը, բանակաթեմի խարտուլարը, բանակաթեմի դոմեստիկոսը, բանդոնների դրունգարը, նմանապես կոմեսներ, սպաթարների հարյուրապետը, հետերիայի կոմեսը, պրոտոկանգելլարիոսը, պրոտոմանդատորը: Սխոլերի դոմեստիկոսին ենթարկվում են 10 աստիճան. առաջինը տոպոտերետեսն է, ապա սխոլերի երկու կոմեսները, խարտուլարը, դոմեստիկոսներ, պրոեքսիմոսը, պրոտիկտորներ, եվտիխոֆորներ, սկեպտրոֆորներ, սպաներ, մանդատորներ: Իսկ Արմենիակների [բանակաթեմի] զորավարին ենթարկվում են ըստ աստիճանի այնքան, ինչքան Անատոլիկոն [բանակաթեմի] զորավարին և այդպես մնացած զորավարություններին, բացառյալ նավատորմիղալինները...

ՀԱՏՎԱԾ Բ

...Պետք է գիտենալ, որ միայն այս վեց աստիճանները՝ (Կոստանդնուպոլսի պատրիարքը, կեսարը, նոբելեսսիմոսը, կուրապաղատը, վասիլեոպատորը և զոստե պատրիկիան) իրավունք ունեն

առաջին հերթին մասնակից լինելու կայսրերի ամենահանդիսավոր սեղանին։ Մնացած բոլորը պատկանում են երկրորդ կարգին, այն է [առաջին] մագիստրոսը, [երկրորդ] մագիստրոսը։ Եթե սրանցից մեկը օֆֆիկիոնում լինելու պատվին է արժանացել, նախապատվություն է ստանում, եթե նույնիսկ վերջերս է առաջ քաշվել։ Այնուհետև ռեկտորը, Հռոմի սինկելլոսը, Կոստանդնուպոլսի սինկելլոսը։ Եթե Արևելքի պատրիարքների սինկելլոսներ լինեն, նրանք իրենց պատրիարքությունների աթոռների համաձայն նախապատվություն են ստանում, որոնցից հետո գալիս է բուլղարների արքեպիսկոպոսը, ներքինի պատրիկները։ Վերջիններից նա, ով օֆֆիկիոնում է գտնվում, մյուսի հանդեպ նախապատվություն ունի։ [Ապա] Անատոլիկոն [բանակաթեմի] զորավար անթիպատ պատրիկը, սխոլերի դոմեստիկոս անթիպատ պատրիկը, Արմենիակների [բանակաթեմի] զորավար անթիպատ պատրիկը... [Թվարկվում են հաջորդականությամբ Թրակեսիոնի, Օպսիկիոնի, Բուկելլարների, Կապադովկիայի, Խարսիանոնի, Կոլոնիայի, Պաֆլագոնիայի, Թրակիայի, Մակեդոնիայի, Խայտիքի և այլ զորավարներ և բարձրաստիճան պաշտոնյաներ, Արմենիակների զորավարից հետո հաշված 51 աստիճան]։

ԳԼՈՒԽ 54

ԿԻՊՐՈՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՊԻՓԱՆԻ [ՇԱՐԱԴՐԱՆՔԸ] ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԻ ԵՎ ՄԵՏՐՈՊՈԼԻՏՆԵՐԻ ԱԹՈՌՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Հռոմի պատրիարքը։ Կոստանդնուպոլսի պատրիարքը։ Ալեքսանդրիայի պատրիարքը։ Անտիոքի պատրիարքը։ Երուսաղեմի պատրիարքը։

Մետրոպոլիտների դասակարգումը

Ա. Կապադովկիայի թեմ, Կեսարիայի [մետրոպոլիտ]։
Բ. Ասիայի թեմ, Եփեսոսի [մետրոպոլիտ]։
Գ. Եվրոպայի թեմ, Թրակիայի Հերակլիայի [մետրոպոլիտ]։

Դ. Գալատիայի թեմ, Անկյուրայի [մետրոպոլիտ]։
Ե. Հելլեսպոնտոսի թեմ, Կյուզիկոսի [մետրոպոլիտ]։
Զ. Լիդիայի թեմ, Սարդիսի [մետրոպոլիտ]։
Է. Բյութանիայի թեմ, Նիկոմիդիայի [մետրոպոլիտ]։
Ը. Նույն թեմում Նիկիայի [մետրոպոլիտ]։
Թ. Նույն թեմում, Քաղկեդոնի [մետրոպոլիտ]։
Ժ. Պամփիլիայի թեմ, Սիդեի [մետրոպոլիտ]։
ԺԱ. Երկրորդ Հայք թեմ, Սեբաստիայի [մետրոպոլիտ]։
ԺԲ. Հելենոպոնտոսի թեմ, Ամասիայի [մետրոպոլիտ]։
ԺԳ. Առաջին Հայքի թեմ, Մելիտենեի [մետրոպոլիտ]։
ԺԴ. Երկրորդ Կապադովկիայի թեմ, Տյուանայի [մետրոպոլիտ]։
ԺԵ. Պաֆլագոնիայի թեմ, Գանգրայի [մետրոպոլիտ]։
ԺԶ. Հոնորիասի թեմ, Կլավդիուպոլսի [մետրոպոլիտ]։
ԺԷ. Պոնտոսի թեմ, Նեոկեսարիայի [մետրոպոլիտ]։
ԺԸ. Երկրորդ Գալատիայի թեմ, Պիսինունտի [մետրոպոլիտ]։
ԺԹ. Լիկիայի թեմ, Մյուրոնի [մետրոպոլիտ]։
Ի. Կարիայի թեմ, Տավրուպոլսի [մետրոպոլիտ]։
ԻԱ. Փռյուգիայի թեմ, Լավոդիկիայի [մետրոպոլիտ]։
ԻԲ. Սալուտարյան Փռյուգիայի թեմ, Սյունադոնի [մետրոպոլիտ]։
ԻԳ. Լիկաոնիայի թեմ, Իկոնիոնի [մետրոպոլիտ]։
ԻԴ. Պիսիդիայի թեմ, Անտիոքի [մետրոպոլիտ]։
ԻԵ. Պամփիլիայի թեմ, Պերգեի [մետրոպոլիտ]։
ԻԶ. Երկրորդ Կապադովկիայի թեմ, Մոկեսոսի [մետրոպոլիտ]։
ԻԷ. Լազիկայի թեմ, Ֆասիսի [մետրոպոլիտ]։
ԻԸ. Թրակիայի թեմ, Ֆիլիպուպոլսի [մետրոպոլիտ]։
ԻԹ. Հռոդոպեի թեմ, Տրայանուպոլսի [մետրոպոլիտ]։
Լ. Կիկլադյան կղզիների թեմ, Հռոդոսի [մետրոպոլիտ]։
ԼԱ. Հեմեմոնտոսի թեմ, Հադրիանուպոլսի [մետրոպոլիտ]։
ԼԲ. Նույն թեմում Մարկիանուպոլսի [մետրոպոլիտ]։
ԼԳ. Կապատյան Փռյուգիայի թեմ, Հիերապոլսի [մետրոպոլիտ]։


Ինճինագլուխ[118] արեւելիսկոպոսների մասին

...ԼԳ. Երկրորդ Հայքի թեմ, Հերակլիուպոլսի [արքեպիսկոպոս]։
ԼԴ. Արազդիայի թեմ, Սերաստուպոլսի [արքեպիսկոպոս]։

Ենթակայության մեջ գտնվող եպիսկոպոսների մասին

Կիկիսոսի Կապադովկիայի թեմ, մայրաքաղաքը Կեսարիա, Ենթակայության մեջ ունի հինգ եպիսկոպոսանիստ քաղաք, այն է Թագավորական Ջերմուկներ[113], Նյուսա, Հայաստանի Թեոդոսուպոլիս, Կամուլիանոն և Կիկիսոս...


...Կապադովկիայի թեմ, մայրաքաղաքը Մոկեսոս, ենթակայության մեջ ունի չորս եպիսկոպոսանիստ քաղաք, այն է Նաղիանզոս, Կոլոնիա, Պարնասսոս, Դոարոն։ Լազիկայի թեմ, մայրաքաղաքը Ֆասիս։ Իր ենթակայության մեջ ունի հետևյալ չորս քաղաքները, այն է եպիսկոպոսությունները. Հոոդոպոլսի, Սաեսիրոնոնի, Պետրայի և Ջեգանեոնի...



ԲԱՆԱԿԱԹԵՄԵՐԻ ՄԱՍԻՆ

DE THEMATIBUS

11—648



ԼԵՎՈՆԻ ՈՐԴԻ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿԱՅՍԵՐ [ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ] ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐԻ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԱԹԵՄԵՐԻ[1] ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉԻ՞ ՀԵՏ ԵՆ ԿԱՊՎԱԾ ԵՎ Ի՞ՆՉ ԵՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՆՐԱՆՑ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՑ ՄԻ ՄԱՍԸ ԴԵՌ ՀՆԻՑ Է ԳԱԼԻՍ, ԻՍԿ ՄՅՈՒՍԸ ՆՈՐԱՍՏԵՂԾ Է

Իմ կարծիքով շատերը սխալվում են **բանակաթեմ** *անվան առաջացման հարցում։ Այն հին չէ. պատմություն գրող հեղինակներից ոչ ոք չի հիշատակում բառը այն իմաստով, ինչ մենք տալիս ենք նրան այսօր։ Հեռու անցյալում կային զորամասեր և լեգեոններ, ցրոնք կրում էին այն նահանգի անունը, որի ներկայացուցիչներից էին կազմված։ Օրինակ, մեկը կոչվում էր Քառասուն մարտիրոսաց լեգեոն (կոչվում էր Շանթահարող), մի ուրիշը՝ Մարմարիաների, մեկ այլը՝ Պիսիդական, վերջապես՝ Թետտալական և այլն։ Նրանք գտնվում էին դուքսի[2] և հեգեմոնի[3] հրամանատարության ներքո, բայց հաճախ և պրեպոզիտոսի։ Բայց դա ե՞րբ էր. այն ժամանակ, երբ զորքի հետ միասին արշավանքի էին դուրս գալիս և կայսրերը, ովքեր հակառակորդների վրա էին տարածում ստրկության լուծը. քիչ էր մնացել, որ նրանք տիրեին անկարգ ու թշնամաբար տրամադրված ամբողջ աշխարհին, ինչպես օրինակ Հուլիոս Կեսարը, կամ հռչակավոր Օգոստոսը, ինչպես անուն հանած Տրայանոսը, Կոստանդին Մեծը և Թեոդոսը և նրանցից հետո քրիստոնեության և աստվածապաշտության հարողները։ Այն ժամանակ, երբ կայսրն էր զորքը գրլխավորում, զորավարը հրամայելու իրավունք չուներ։ [Զորքերը] ենթարկվում էին հեգեմոններին ու տաքսիարքոսներին[4], բայց պատերազմական բոլոր հարցերը կախված էին կայսեր կամքից. ամբողջ զորքի հայացքը ուղղված էր միայն ու միայն դեպի կայսրը։ Բայց երբ կայսրերը սկսեցին այլևս անձամբ չմասնակցել արշավանքներին, ահա այն ժամանակ է, որ նրանք բանտկաթեմեր կազմակերպեցին և զորավարներ նշանակեցին։ Այս կարգը հռոմեական պետության մեջ պահպանվում է մինչև օրս։ Բայց*

այն պատճառով, որ Հերակլ Լիբեացու[5] իշխանության ժամանակվանից սկսած հռոմեական պետության հողերը և՛ արևելքում, և՛ արևմուտքում կրճատվեցին, որոշ շրջաններ անջատվեցին, նրանից հետո իշխած կայսրերը, իրենց պետությունը կառավարելու անկարող. այն, ինչպես և հատկապես ռազմական ուժերը առանձին փոքր մասերի բաժանեցին, որոնց հունարեն անուններ տվեցին, քանի որ մոռացել էին իրենց պապենական լատիներեն լեզուն. [անցյալում] հազարապետներին լոնգինո» էին անվանում՝ հարյուրապետներին՝ կենտուրիոն, իսկ այժմյան զորավարներին՝ կոմես: Հենց «բանակաթեմ» անունը հունարեն է և ոչ լատիներեն, այն ծագում է «թեսիս» բառից[6]:

Նախ և առաջ մենք կանգ կառնենք Անատոլիկոն կոչված բանակաթեմի վրա: Այստեղ խոսվելու է Արևելքի, այն է՝ Փոքր Ասիայի բանակաթեմերի մասին:

ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱԿԱԹԵՄ, ՈՐ ԿՈՉՎՈՒՄ Է ԱՆԱՏՈԼԻԿՈՆ[7]

Բանակաթեմը կոչվում է Անատոլիկոն ոչ այն պատճառով, որ ծայրագույն արևելքում, արևի ծագած տեղում է գտնվում, այլ որովհետև տարածվում է Բյուզանդիոնում և Եվրոպայում բնակվողներիս արևելյան կողմում: Ասորվոց Միջագետքում բնակվողների համար, ապա և Մեծ Ասիայում՝ հնդիկների, եթովպացիների և եգիպտացիների համար, դա Միջին Արևմուտք է և Փոքր Ասիա: Բայց խոսքը չերկարելու և ոմանց մոտ այն տպավորությունը չստեղծելու համար, թե բանակաթեմերի անվան շուրջը շաղակրատությամբ ենք զբաղված, կարճ ասենք, թե ինչն է ճշմարտությունը:

Անատոլիկոն կոչվող բանակաթեմը բաղկացած է հինգ նահանգից[8]: [Բանակաթեմն] սկիզբ է առնում Միրոս[9] կոչված գյուղաքաղաքում և մինչև Իկոնիոնն [ընկած շրջանը] կոչվում է Փռյուգիա Սալուտարիա: Իսավրիային սահմանակից՝ Տավրոս նայող շրջանը կոչվում է Լիկաոնիա: Դեպի ծով և հարավ ընկած շրջանը, Պսիխրու կոչված լեռները[10] մինչև Ատտալիա կոչվում է Պամփիլիա: Վերին, դեպի միջերկրյայք ընկած շրջանը կոչվում է Պիսիդիա, իսկ Ակրոինոսից մինչև Ամորիոնը՝ կոչվում է Կապատյան Փռյուգիա: Դեպի ծով տարածվող և Կարիային սահմանակից [շրջանը] կոչվում է Լիկիա: Այն բոլոր շրջանները, որոնք գտնը-

վում են միջերկրյայքում, Տավրոսին մոտիկ և տարածվում են մինչև Կապադովկիայի սահմանները, կոչվում են Անատոլիկա, որովհետև Անատոլիկոն բանակաթեմի բաղկացուցիչ մասն են կազմում։ Անատոլիկոն բանակաթեմը այստեղ է վերջանում։ Այն սկիզբ է առնում Միրոսում, այնտեղ, որտեղ վերջանում է Օպսիկիոն[11] [բանակաթեմը], և երկարությամբ ձգվում է մինչև Իսավրիայի սահմանները։ Ինչ վերաբերում է լայնքին, ապա ձախ կողմից նա սահմանակից է Բուկելլարների[12] [բանակաթեմի] որոշ շրջանների հետ, ինչպես և Կապադովկիայի սկզբի, իսկ աջ կողմից՝ Իսավրիայի և Կիբիրեոտների[13] [բանակաթեմի] սկզբի։

Ահա այս է Անատոլիկոն բանակաթեմը։ Սկզբում սակայն այդպես չէր. [ռազմական շրջանի] զորաբանակը բաժանված էր մասերի՝ հազար, հինգ հարյուր, [հարյուր, հիսուն] գինվոր ունեցող դնդերի, [վաշտերի, դասակների]։ Ամբողջ զորաբանակը ենթարկվում էր անթիպատոսին, ինչպես հնում. մինչև Հուստինիանոսի ժամանակները. որպես զորահրամանատար[14] ուղարկվում էր մի մագիստրոս։ Այդ մասին է վկայում ոմն Պուպլիոս անթիպատոսի Ջմյուռնիայում գտնվող դամբարանի տապանաքարը, ուր գրված է. «Անթիպատոս Պուպլիոս՝ Հոնիայի, Փռյուգիայի, էոլիսի, Մեոնիայի, Լիդիայի, Հելլեսպոնտոսի, Միսիայի, Բյութանիայի, Տարսիայի, Գալատիայի, Մարիանդյունացիների, Պոնտոսի, Պաֆլագոնիայի, Փոքր և Մեծ Կապադովկիայի, Իսավրիայի և Լիկաոնիայի, մինչև Տավրոս և Փոքր Հայքի սահմաններն [ընկած շրջանների] արխոնտ»[15]։ Ահա մեկ անթիպատոսի իշխանության [սահմանները]։ Անցյալում հանդես եկավ մի ուրիշ ստրատելատ, աստիճանով պատրիկ, անունը Իորդանես։ Կայսերական վեստիարիոնում գտնվող նրա ցայտաքանդակ արձաթյա սկուտեղները ունեն հետևյալ մակագրությունը. «Արևելից և Փոքր Ասիայի մյուս աղդությունների ստրատելատ Իորդանի»։ Սա նույն այն արևելքի միահեծան կառավարիչն էր և հռչակվել էր ու ծաղկել Արկադիոս կայսեր ժամանակ։ Ինչպես վերևում ասացինք, այժմ Անատոլիկոն կոչվող բանակաթեմում բնակվում են հինգ ազգություններ, այն է՝ փռյուգիացիներ, լիկաոնացիներ, իսավրացիներ, պամփիլացիներ և պիսիգացիներ։ Նրանք, նախքան հռոմեական լծի և գերիշխանության տակ ընկնելը, աղատ էին և յուրաքանչյուրն ուներ առաջնորդ։ Երբ նրանք ընկան հռոմեական լծի տակ և [հռոմեական] կայսրությունն [աստիճանաբար] հզորացավ, բոլորը հպատակվեցին, միաձուլվեցին մեկ իշխանության ներքո։ Նրանք ստո-

րաբաժանվեցին առանձին [նահանգների]՝ բանակաթեմերի միայն այն ժամանակ, երբ հռոմայեցիների պետությունը սկսեց աստիճանաբար խեղանդամվել, անդամահատվել անաստված հագարացիների կողմից ու փոքրանալ։ Բայց մինչև Հուստինիանոս կայսեր և Մավրիկիոսի թագավորության ժամանակ բոլորը մեկ իշխանության ներքո էին։ Դրա ապացույցը հենց Բելիսարիոսն է, որ ամբողջ Արևելքի միահեծան ղորավարն էր[16]։ Երբ հագարացիներն սկսեցին հռոմայեցիների երկրի վրա արշավանքներ ձեռնարկել և ավերել նրանց գյուղերն ու քաղաքները, օրվա կայսրերը ստիպված այդ մեկ իշխանությունը բաժանեցին փոքր մասերի, որից մեկն ահա հանձնեցին ինչ-որ զորավարի և կոչեցին Անատոլիկոն, որովհետև ինչպես վերևում ասացինք, այն գտնվում է մեր՝ Բյուզանդիոնում բնակվողներիս համար դեպի արևելք։ Հնում յուրաքանչյուր ազգություն իր առաջնորդն ուներ և կառավարվում էր տեղական սովորույթի համաձայն։ Ոմանց մոտ ժողովրդավարություն էր, ուրիշների մոտ՝ բռնատիրություն։ Երբ անցան հռոմեական գերիշխանության ներքո, նրանք կազմեցին առանձին պրովինցիաներ, հեգեմոնություններ, դքսություններ, այսպես կոչված կոնսուլություններ, որովհետև կոնսուլներն էին կառավարում։ Նրանց [ղեկավարներից] ոմանք պրինցեպսներ էին, որի մասին փաստ կա սրբոց վկայաբանություններում. կային և սկրինիարիոսներ[17]։ Երկու տեսակի հյուպարքոսներ կային, պրետորյան և քաղաքի[18]։ Պրետորյան [հյուպարքոսները] ծառայում էին արշավանքի դուրս եկած կայսրերին. նրանց պարտականությունն էր զորքին պարեն մատակարարելը, կայսերական զորակայանները կարգի բերելը, ճանապարհները հարթելը։ Այսպես էր հռոմայեցիների ժամանակ. բայց երբ [այս շրջանները] գտնվում էին պարսիկների, այնուհետև մակեդոնացիների ձեռքում, ամբողջ Ասիան բաժանված էր սատրապությունների. գոյություն ուներ Լիդիայի սատրապ, Փռյուգիայի, Հոնիայի, Պամֆիլիայի, Կարիայի, Պաֆլագոնիայի, Բյութանիայի [սատրապ], մի խոսքով ամբողջ Փոքր Ասիան մասերի էր բաժանված՝ ըստ պարսիկների, ապա մակեդոնացիների ցանկության, ընդ որում քաղաքական իշխանությունը և ռազմական իշխանությունը գտնվում էին տարբեր մարդկանց ձեռքում։ Այդ մասին ահա այսքան։

Այստեղ մենք ավարտում ենք Անատոլիկոն բանակաթեմի մասին խոսքը։ Տուրմարխ կոչվածները առաջադրվեցին ի ծառայություն զորավարների։ Տուրմարխի աստիճանն ունեցողին են-

թարկվում են հինգ հարյուր աղեղնավոր, երեք հարյուր վահանակիր և հարյուր նիզակակիր։ Այդպես է գրված Հովհաննես Ֆիլադելֆացու՝ Լիդոս մականվանյալի գրքում[19]։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱՆԱԿԱԹԵՄ, ՈՐ ԿՈՉՎՈՒՄ Է ԱՐՄԵՆԻԱԿՆԵՐԻ

Արմենիակների կոչված բանակաթեմի հատուկ անունը չէ դա, այդ հորջորջումն էլ հին չէ։ Նա իր անունը պարտական է սահմանակից և տեղում ապրող հայերին։ Ես ենթադրում եմ, որ այդ անունն ստացավ անցյալում, Հերակլ կայսեր ժամանակ[20]։ Աշխարհագիր Ստրարոնը, օրինակ, չի հիշատակում այդ անունը, թեև ծագումով կապադովկացի էր, Ամասիա քաղաքից։ Այդ չի հիշատակում նաև համայն աշխարհի ասպարիսաչափերը գրի առնող Մենիպպոսը[21], ոչ Սկյուլաքս Կարյուանդենացին[22], ոչ Պավսանիաս Դամասկացին[23] , ոչ էլ պատմություն շարահարող որևէ մեկը։ Ըստ երևույթին այս անվանումը ավելի նոր է, որովհետև այն չեն հիշատակում ո՛չ Պրոկոպիոսը[24], ո՛չ Ագաթիասը[25], ո՛չ Մենանդրոսը[26], ո՛չ Իլլյուստրիոս Հեսիքիոսը[27], որոնք Հուստինիանոս կայսեր շրջանում ժամանակագրություններ կազմեցին։ Հները Կապադովկիան երեք մասի էին բաժանում. Կատաոնիայի, որն սկիզբ էր առնում Մելիտենեում, Տավրիկե կոչվածի, որն իր անունը պարտական է Տավրոսին և Միջերկրյայի, որտեղ Կապադովկիայի մայրաքաղաք Կեսարիան է գտնվում։ Հները Կապադովկիային երկու անուն են տալիս՝ Մեծ [Կապադովկիա] և Փոքր Կապադովկիա. Մեծը սկիզբ էր առնում Կեսարիայում և Տավրոսում ու տարածվում մինչև Պոնտական ծովը։ Արևմուտքից նրան սահման էր Ալիս գետը, իսկ արևելքից՝ Մելիտենեն։ Սա Մեծ Կապադովկիան էր։ Ասածիս վկան է Հռոմեական պատմության հեղինակ Պոլիբիոսը[28], որ Կապադովկիան տեղադրում է Տավրոսի, Լիկաոնիայի և Պոնտական ծովի միջև։ Նեոկեսարիան, Կոլոնիան, Մելիտենեն ամբողջությամբ Կապադովկիա է կոչվում և այդ անվանումը պարսկական է։ Արտաքսերքես արքայի, չգիտեմ, գուցե մի ուրիշի, որսին մասնակցում էր և մի պարսիկ, երբ հանկարծ մի առյուծ հանդիպեց և հարձակվեց արքայի ձիու վրա։ Պատահաբար այնտեղ գտնվող պարսիկը քաշեց դաշույնը, սպանեց առյուծին և փրկեց արքային, որ քիչ էր մնացել զոհ դառնար։ Ահա այս պարսիկը բարձրացավ մի շատ բարձր լեռան վրա, աչքով անցկացրեց ամբողջ շրջանը, արևելքից արևմուտք և հյուսի-

սից հարավ, ինչքան որ կարող էր մարդու հայացքն ընդգրկել և արքայից ստացավ այն որպես պարգև։ Այդ մասին պատմում է Պոլիբիոսը։ Կոլոնիայի շրջանում բնակվում են հայերը, միջերկրր-յայքում, որտեղ գտնվում են Ամասիան և Դագիմոն[29] կոչվածը [բնակվում են] լևկոսիրոս կոչվածները։ Բայց Հերոդոտոսը [Ստրաբոնը Հ. Բ.][30] լևկոսիրոս է անվանում բոլոր կապադովկացիներին, ընդհուպ մինչև Պոնտական ծովը բնակվողներին, ի տարբերություն այն ասորիների, ովքեր բնակվում են Տավրոսից այն կողմ և Կիլիկիայում, որոնց մելանոսիրոսներ են անվանում։ Փոքր Կապադովկիան, որն այժմ առանձին բանակաթեմ է և սահմանակից լինելով Լիկաոնիային, հասնում է մինչև Կեսարիա, ընդարձակվում է մինչև Բուկելլարների [բանակաթեմի] սկիզբը, իսկ արևելյան մասում վերջանում Հոռդենդոսում, Լուլոս կոչված բերդի և նույն այն Պոդենդոսի շրջանում[31]։ Նրանից այն կողմ Կիլիկիայի շրջաններն են՝ սկսած Տավրոսից, Մոպսուեստիայից և Ադանայից։ Այս էլ ահա Փոքր Կապադովկիան է, որը վերջերս բանակաթեմի անուն ստացավ։ Կապադովկիան անցյալում Հուստինիանոսի կամ մի այլ կայսեր կողմից երեք մասի բաժանվեց. միջերկրյա շրջանը[31ա] ոմն Խարսիոս իշխանի անունից, որն աչքի էր ընկել պարսիկների դեմ մղվող պատերազմում, Խարսիանոն կոչվեց[32] և մինչև օրս բանակաթեմ է և զորավարություն։ Ստորին՝ ծովահայաց շրջանը հայերին մերձակից լինելու պատճառով կոչվեց Արմենիակների, իսկ վերին շրջանը՝ լիկաոնացիներին ու Տավրոսին սահմանակից եղողը կոչվեց Փոքր Կապադովկիա, որն այժմ, ինչպես ասացինք, բանակաթեմի անուն ստացավ[33]։ Այն մինչև Օգոստոս կայսեր ժամանակ, ուներ թագավոր, իսկ նախքան հռոմեական կայսրության ընդարձակումը գտնվում էր պարսից տիրապետության ներքո։ Եղել է ժամանակ, երբ նա անկախ էր, Արիարաթն[34] էր թագավորում այնտեղ, որի անունից Արիարաթիա էր կոչվում այժմ աղավաղված ձևով Կարատեա անունը կրող աղաբեր լիճը[35]։ Արիարաթից հետո այնտեղ թագավորեց Հրեաստանի թագավոր Հերոդեսի խնամի Արքելայոսը, որից հետո հռոմայեցիները թագավորությունը վերացրին և այն վերածեցին պրովինցիայի, որը կառավարում և հարկադրում էր անթիպատոսը։ Առաջին [Կապադովկիա] պրովինցիայում կա չորս նշանավոր քաղաք. Կեսարիա մայրաքաղաքը, որն իր անունը պարտական է Մեծ Հուլիոս Կեսարին։ Նախապես կոչվում էր Մաղակա[36] կապադովկացիների նախահայր Մոսոխի անունից։ Երկրորդ քաղաքն է Նյու-

սան, երրորդը Թերման, չորրորդը Հռեդեպոդանդոսը: Երկրորդ Կապադովկիան, որ գտնվում էր հեգեմոնի իշխանության ներքո, ունի ութ քաղաք. Տյուանա, Ֆավստինուպոլիս, Կյուբիստրա, Նազիանզոս, [Սա]սիմա, Պարնասոս, Հռեգեդորա, Մոկիսոս և Կորոն կոչված ամրոցը: Երրորդ Կապադովկիան, որ այժմ կոչվում է Արմենիակների, ունի յոթ քաղաք. Ամասիա, Իբորա, Զալիխոս, Անդրապա, Ամինսոս, Նեոկեսարիա, Սինոպե:

Կապադովկացիները բոլորի մոտ վատ անուն են հանած, որպես չարաբարո[37], այն աստիճանի, որ նրանց մասին նույնիսկ այսպիսի մի առած է հորինվել. «Ամենավատը երեք կապպան է. Կապադովկիա, Կրետե և Կիլիկիա»: Իսկ էպիգրամներում ասված է. «Կապադովկացիները միշտ էլ ստոր են, բայց պաշտոնի տիրանալուց հետո ավելի ստոր են դառնում, [սեփական] շահի համա՛ր ամենաստորը: Բայց երբ երկիցս և երիցս բարձր դիրք ձեռք գցեն, ահա այն ժամանակ է, որ դառնում են ամենաստորների ամենաստորը»[38]:

Մի այլ առած ասում է. «Մի անգամ իժը խայթեց կապադովկացուն, բայց ճաշակելով նրա թունավոր արյունը, ինքն էլ մեռավ»:

Բայց հակառակ [Կապադովկիայի] նման վատ համբավին, այնտեղ ծնվեցին, ավելի ճիշտ ծագեցին կարծես լուսաշատ աստղեր, իրենց իմաստությամբ հռչակավոր մարդիկ, քրիստոնեական հավատքի ջերմեռանդ [քարոզիչներ], Նեոկեսարիայի եպիսկոպոս Գրիգոր Սքանչելագործը, Ամասիայի [եպիսկոպոս] Ֆեդիմոսը, Լիկինիոսի ժամանակ քրիստոնեական հավատքի համար մարտիրոսացած երանելի Բասիլևսը, Կոմանայի արքեպիսկոպոս Բասիլիսկոսը, որը նույնպես մարտիրոսական վախճան ունեցավ և որի [նշխարները] ամփոփվեցին Հովհան Ոսկեբերանի նշխարների հետ, Կեսարիայի եպիսկոպոս Բարսեղ Մեծը, Նազիանզոս [քաղաքի] եպիսկոպոսությունը ժառանգած Գրիգոր Աստվածաբանը, որի [նշխարներն] այժմ այս [Կոստանդնուպոլիս] քաղաքի պատրիարքների [աճյունների] հետ բարեպաշտ և քրիստոսասեր Կոստանդին կայսրն[39] ամփոփեց Առաքելոց տաճարում: Ապա նաև Բարսեղ Մեծի եղբայրներ Պետրոսը, Գրիգորն ու Նավկրատիոսը, և Գրիգոր Աստվածաբանի եղբայր Կեսարիոսը:

Ահա համառոտ գծերով Կապադովկիայի մասին:

ՈՒԹԵՐՈՐԴ ԲԱՆԱԿԱԹԵՄ, ՈՐ ԿՈՉՎՈՒՄ Է ԽԱՂՏԻՔ[40]

Խաղտիք անունը կրող բանակաթեմը և [նրա] Տրապիզոն կոչվող մայրաքաղաքը հույների գաղութներ են, ինչպես այդ մասին վկայում է Քսենոփոնն իր «Նահանջ բյուրոց» աշխատության մեջ[41]։ Վերին և միջերկրյա շրջանները Փոքր Հայքի սկզբնավորությունն են և դա հաստատվում է հենց [իրենց] անուններով. Կելցենե, Սիսպիրիտես[42], Գոյղանոն։ Նրանց մասին վկայում է նաև սուրբ գիրքը. Թագավորությանց չորրորդ գրքում [ասված է, թե] ասորեստանցիները, գերեվարելով սամարացիներին, բերեցին և բնակեցրին Գոյղանոն գետի ափին[43]։ Իսկ Խաղտիք հորջորջումը առաջացել է պարսից տոհմանունից և նրանց սկզբնական հայրենիք Քաղդիայից, որի անունից էլ նրանք քաղդեացիներ կոչվեցին[44].

ԻՆՆԵՐՈՐԴ ԲԱՆԱԿԱԹԵՄ ՄԻՋԱԳԵՏՔ[45]

Միջագետք բանակաթեմը շատ հին չէ, ոչ էլ շատ հայտնի կամ հռչակավոր մի [նահանգ] է. նախապես անվանում չունեցող ինչ-որ կլեյսուր էր[46]։ Իմ երանելի և սուրբ հոր Լևոնի ժամանակ Պանգրատուկաս Հայր, նրա եղբայրներ Փուքրիկասն ու Տավտուկասը[47] անցան [կայսեր կողմը] և այդ վայրի բերդերը նրան հանձնեցին, որով շրջանն ընդարձակվեց և զորավարության անուն ստացավ։

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԲԱՆԱԿԱԹԵՄ ԿՈՂՈՆԻԱ[48]

Կողոնիան ղարիթափ [վայրում գտնվող] շատ ամուր բերդ է։ Այդ քաղաքի անունից էլ ահա շրջանն ստացավ իր հորջորջումը. հույները բարձրադիր և վեր խոյացող վայրերին կոլոնոս էին կոչում[49]։ Սա Փոքր Հայքի հողերն է և ծայր առնելով Գրիգոր Սքանչելագործի հայրենիք Նեոկեսարիայում և այսպես կոչված Ճաղատ լեռան[50] մոտ, այն ընդարձակվում է դեպի Արաբրակենացիների[51] քաղաքը՝ հռչակավոր վկա Եվստրատիոսի հայրենիքը[52], և հասնում մինչև Նիկոպոլիս և Տեֆրիկե կոչվածը[53], որը գտնվում էր մանիքեցիների[54] վատահամբավ առաջնորդ Խրիսոքիրի[55] և նրանից առաջ վելի ամբարիշտ Կարբեասի[56] իշխանության ներքո, մանիքեցիներ ի, որոնց քրիստոսասեր տեր Վասիլը՝ իմ պապը և մեր կայսերից բարեբախտն ու ամենաբարեպաշտը գլխովին ոչնչացրեց և

դժոխքի տարտարոսներն ուղարկեց։ Ահա այսքանը Կոլոնիայի մասին։ Ինչպես նախապես ասացինք, բանակաթեմը ծագում է Առաջին Հայք նահանգից։

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ԲԱՆԱԿԱԹԵՄ ՍԵԲԱՍՏԻԱ[57]

Սեբաստիայի բանակաթեմը ծագել է Երկրորդ Հայքից, իսկ քաղաքն էլ կոչվել է Հուլիոս Կեսար Սեբաստոսի անունից[58], որ առաջինը Կեսարի իշխանությունը հզորացրեց և բազմիշխանությունը մենիշխանության վերածեց։ Բայց նա Կեսար կոչվեց ոչ թե այդ աստիճանի [անունից], այլ իր մոր արգանդի հատման պատճառով, որովհետև երբ նրա մայրը վախճանվեց, մանուկն [արգանդում] դես ու դեն էր ընկնում, աքացի տալիս, և արգանդն հատելուց հետո նա աշխարհ եկավ՝ կորյունի պես մռնչալով։ Հռոմայեցիները հատմանը ցեսե են ասում, դրանից էլ ահա նա ցեսար կոչվեց, հատման պատճառով, ինչպես ասացինք։ Այսքանը Սեբաստիայի մասին։ Կեսարիա կոչվող բոլոր քաղաքները իրենց անունը պարտական են այս շատ սիրելի Կեսարին։


ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱՆԱԿԱԹԵՄ ԼԻԿԱՆԴՈՍ[59]

Լիկանդոսը քիչ առաջ, հենց վերջերս բանակաթեմի վերածվեց և քաղաք դարձավ, իմ երանելի և սուրբ հոր ժամանակ։ Անցյալում նա ամայի և անմարդաբնակ մի վայր էր, ինչպես և Ցամանդոս[60] կոչվածը և հայոց մերձակա շրջանները։ Այդ շրջաններն անուն չունեին, ոչ էլ այդ անունով զորք կար։ Երբ այն մեծ և հսկա հայը, Լեկաստրիա Անդուրինեի փեսան, այն երկայնաբազուկն ու կոփվածը, որին հայերեն Ազոտ[61] էին անվանում, չգիտեմ որպես փախստական, թե բարեկամ եկավ իմ երանելի և սուրբ հոր մոտ, որպես սպասավոր ուներ հենց վերջերս, մի փոքր առաջ վախճանված հռչակավոր Մելիասին[62], ով նրա հետ մասնակցեց բուլղարական շատ անհաջող պատերազմին[63]։ Ամենաանաստված բուլղարի՝ Սիմեոնի դեմ մղված հիշածս պատերազմում Հայն սպանվեց (նա էքսկուբիտոսներ կոչված կայսերական տագմայի հրամանատարն էր), անհայտ կորավ և իմ երանելի հոր պրոտովեստիարիոս Թեոդոսը[64]։ Ահա վերոհիշյալ Մելիասը այս պատերազմում մի կերպ կենդանի մնալով գնաց հայոց երկիրը. լինելով տաղանդավոր մարդ և ավազակային գործերին հմուտ, հայերից

բաղկացած ինչ-որ խումբ կազմեց և ինչպես որ կարողացավ ամրացրեց այդ [Լիկանդոս] քաղաքի միջնաբերդը։ Կամաց-կամաց նա ամբողջ քաղաքին հարություն տվեց։ Ժամանակի ընթացքում անշափ բարեբեր, ձիեր և ամեն տեսակի անասուններ բուծելու շատ հարմար այս ողջ շրջանը լցվեց հայերով և այդ նույն խոհեմ Մելիասի ջանքերով բանակաթեմի վերածվեց և բարձրացավ նշանավոր զորավարության աստիճանին։ [Լիկանդոս] քաղաքի անունը հին է և վերաբերում է հայկական ցեղին ու լեզվին։ [Լիկանդոսի] մասին կա մի գեղեցիկ սլատմվածք, մի շատ լավ առակ. քաղաքի պարսպապատի վրա գտնվում է հետևյալ արձանագրությունը. «Ի՞նչ Կոստանդնուպոլիս, ի՞նչ Լիկանդոս, ի՞նչ Թովմա մեծատուն, ի՞նչ կայսր»։ Այս արձանագրության աշխարհ գալու պատճառը հետևյալն է։ Մեծ և հռչակավոր կայսր Հուստինիանոսը[65], երբ Հռոմեական կայսրության գայիսոնը գտնվում էր նրա հորեղբոր՝ Հուստինոսի[66] ձեռքում, ահա այն ժամանակ [Հուստինիանոսը], լինելով կեսար, հռոմեական զորաբանակների գլխավոր հրամանատարն էր։ Անցնելով Փոքր Հայքի շրջաններից, նա կանգ առավ Լիկանդոսում։ Ահա այդ քաղաքի մեծատուն Թովմանն[67] այնքան հարուստ էր անասուններով, սուրբ գրքի երանելի Հոբի նման, որ Հուստինիանոսին, ընդունված կարգի համաձայն, նվեր արեց, բայց հրաշալի և արժանահիշատակ՝ տարբեր գույնի տաս հազար ոչխար. հազար սև, հազար սպիտակ դեղմով, հազար մոխրագույն, նույն քանակությամբ բծավոր, հազար շեկ, նույնքան թուխ, նույն թվով խարտյաշ, նույն քանակությամբ մուգ դույնի, հազար գլուխ կարմիր դեղմով, հազար ոսկեգույն՝ ինչպես պինոսի բրդով, հույների հռչակավոր ոսկեգեղմի պես։ Մի խոսքով տարբեր գույնի և երանգի տաս հազար ոչխար։ Կեսարը ապշեց և ընգունելով Թովմայի նվերը, կատակով հրամայեց գրել քաղաքի դարպասի վրա հիշածս արձանագրությունը։ Այս քաղաքը իմ երանելի հոր ժամանակ վերոհիշյալ Մելիասի շնորհիվ, բայց ավելի ճիշտ իմ երանելի հոր, որ պետական գործերը վարում էր խոհեմությամբ և գնահատում մարդու առաքինությունները, բանակաթեմի անուն ստացավ։ Ահա այսքանը Լիկանգոսի և նրան սահմանակից Յամանդոսի մասին։


ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱՆԱԿԱԹԵՄ, ՈՐ ԿՈՉՎՈՒՄ Է ԿԻՊՐՈՍԻ ՆԱՀԱՆԳ

...[Կիպրոսի] վրա նախկինում թագավորում էին բազում և տարբեր թագավորներ. այդ թագավորությանը վերջ տվեցին Մակեդոնացիները, այն է Պտղոմյանները... Երբ [կղզուն] տիրացան հռոմայեցիները, [Կիպրոսը] վերածվեց նահանգի և, ինչպես վերևում ասվեց, բաժանվեց տասնհինգ քաղաքների։ Ժամանակի ընթացքում, երբ անհոգության պատճառով հռոմեական հզորությունը նվազեց, [կղզուն] տիրացան սարակինոսները՝ Հերակլ կայսեր ժամանակ։ Այնտեղ ոտք դնող առաջին [սարակինոսը] և կղզուն տիրացողը Աբուբախարոսն էր[68], որի դստեր գերեզմանը մինչև օրս էլ այնտեղ կարելի է տեսնել։ Երանելի, հուշակավոր և երջանկահիշատակ Վասիլ կայսրը բանակաթեմի վերածեց այն, տեղում որպես զորավար հաստատելով ազգությամբ հայ, անուն հանած Ալեքսիոսին[69], որը և [կղզու] վրա տիրեց յոթ տարի։ Սակայն [Կիպրոսը] նորից սարակինոսների ձեռքն անցավ և նրանք այն հարկադրում են, ինչպես անցյալում։



ԿՈՍՏԱՆԴԻՆ ԾԻՐԱՆԱԾԻՆԻ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՁԵՌԱԳՈՐԾ ՊԱՏԿԵՐԻ ՄԱՍԻՆ

NARRATIO DE IMAGINE EDESSENA



ԿՈՍՏԱՆԴԻՆ ԾԻՐԱՆԱՑԻՆԻ՝ ՇՆՈՐՀԻՎՆ ԹԱԴԱՎՈՐ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐԻ ԿԱՅՍԵՐ ՏԱՐԲԵՐ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԾԱՂԿԱՔԱՂՎԱԾ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ՝ ՄԵՐ ԱՍՏՎԱԾ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԱՐԴԱՐԻՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԱՆՁԵՌԱԴՐՈՒԹ ՊԱՏԿԵՐԻ ՄԱՍԻՆ։ ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵԴԵՍԻԱՅԻՑ ԱՅՆ ՓՈԽԱԴՐՎԵՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ՝ ԱՅՈ ԱՄԵՆԱԵՐՋԱՆԻԿ ԵՎ ՓԱՂԱՔՆԵՐԻ ԹԱԴՈՒՀԻՆ[1]

Ա. Ոչ միայն Նա, Հոր պես հավիտենական Աստված-Բանն է անհասանելի։ Նրա բազում, ավելի ճիշտ՝ բոլոր գործերն էլ ծածկրված են անհասանելիության նույն խավարով։ Արարիչն ամենայնի ոչ միայն իր արարչագործություններին, այլև նախախնամությամբ մեր [մարդկային] ցեղի ընդունման առթիվ մեզ հետ խոսելու ընթացքում էլ ներգործում էր իր աստվածության առաջին և միակ զորությամբ։ Իրեն լավ ճանաչող մարդը, իր գիտելիքների չափն ու սահմանն իմացող մարդը, չպետք է չափից դուրս մեծամտանա, չպետք է տգիտորեն դատարկաբանությամբ զբաղվի՝ վիճի, ասելով, թե ամեն ինչ գիտի, իր չիմացածի վրա չպնդի։ Խոսքը վերաբերում է նաև [Քրիստոսի] աստվածային պատկերին, որն Արարչի գերբնական ցանկությամբ առանց նկարվելու դրոշմվեց կերպասի վրա և դեռ այն ժամանակ ուղարկվեց ի ապաքինումն Աբգարի, իսկ այժմ էլ Աստուծո նախախնամությամբ փոխադրվեց քաղաքների այս թագուհին՝ ի փրկություն և ի պահպանություն նրա, որպեսզի ոչ մի լավ բանից զուրկ չմնա, քաղաք, որ կոչված է տիրել բոլորի վրա։ Ես կարծում եմ, որ բարեպաշտ և արդար ունկնդիրը և հանդիսատեսը պետք է իմանա, ճիշտ գաղափար ունենա [այդ պատկերի] պատմության ու նախապատմության մասին, իմանա թե ինչպես խոնավությամբ [միայն] առանց ներկերի և նկարչության արվեստի կտավե կտորի վրա կենդանագրվեց դիմապատկերը, թե ինչպես դյուրամաշ նյութը ժամանակի ընթացքում չքայքայվեց։ Բացարձակապես ոչինչ չի իմանա, անըմբռնելիության վիհը կգլորվի, մեծ վտանգի կենթարկվի, անչափ վնաս կկրի նա, ով, անտես առնելով Աստու-

ծո իմաստության անհասանելիությունը, կչանա բնական մեկնաբանություն տալ երևույթներին, ով կփորձի գիտական բացատրություն տալ նրանց։ Արդ, այստեղ հավաքված ուղղափառներ և ջերմ հավատքի տեր մարդիկ, եկե՛ք լսե՛ք, և կպատմեմ ես ձեզ այն, ինչ մանրակրկիտ կերպով և անհրաժեշտ ջանասիրությամբ գրի առա, ես հոգնաջանությամբ ճշմարտությունը պրպտեցի՝ պատմիչների գործերում և այնտեղից[2] մեզ մոտ ժամանողների (պատմածներում) կարողացա ճշգրտել նրանց հիշողությունները։

Բ. Երբ մեր Տեր Աստված և Փրկիչ Հիսուս Քրիստոսը մեր՝ մարդկության փրկության համար առ մեզ եկավ, երկրում, ինչպես մարգարեն է ասում, անսահման խաղաղություն էր տիրում, բազմիշխանությունը վերացել էր և ամբողջ տիեզերքը կարծես մեկ գոտիի մեջ էր առնված, նա մեկ կառավարչի իշխանության տակ էր գտնվում։ Այդ իսկ պատճառով բոլորը հանգիստ փոխադարձ կապեր էին հաստատում միմյանց հետ։ Մարդիկ բնակվում էին ոչ թե բաժան-բաժան արված աշխարհում, այլ [միասնական] մի երկրում, որը մեկ Տիրոջ կալվածը լինելով, մեկ Արարչի ստեղծածը, ենթարկվեցին [աստուծո] առաջին ծառային[3] և միմյանց միջև խաղաղություն հաստատեցին։ Ահա Եդեսիայի այդ ժամանակվա տոպարքես[4] Աբգարը Եգիպտոսի կառավարչի ծանոթն էր և բարեկամը. երկուսի ծառաներն էլ փոխադարձաբար լինում էին միմյանց մոտ։ Երբ մեր Տերն ու Աստվածը, կատարելով Հոր կամքը սկսեց մարդկանց մեջ փրկության վարդապետությունը [քարոզել], գերբնական և զարմանալի հրաշագործությամբ մարդկանց հավատքի կոչել, Աբգարի ծառաներից մեկը, անունը Անանիա, Պաղեստինի միջով Եգիպտոս գնալիս, հեռվից ականատես եղավ Քրիստոսին, ով իր վարդապետությամբ մարդկանց հեռացնում էր մոլորությունից և զարմանալի հրաշքներ գործում։ Հասնելով Եգիպտոս և կատարելով իր պարտականությունները, նա վերադարձավ իր տիրոջ [Աբգարի] մոտ, որը երկար ժամանակ հոդատապով էր տառապում, մաշվում սև բորոտությամբ։ Նա տառապում էր կրկնակի հիվանդությամբ, ավելի ճիշտ՝ բազմակի. նրան տանջում էին հոդատապը և բորոտության ցավերը։ Այդ բոլորի վրա բարդվել էր և իր այլանդակված [դեմքի] կապակցությամբ զգացած ամոթը, որի պատճառով նա գրեթե չէր երևում մարդկանց։ Նա չէր էլ կարողանում երկար ժամանակ անկողնում պառկած մնալ, և ամոթից թաքնվում էր իրեն տեսության եկող բա-

րեկամներից։ Ահա այդ պատճառով նրա [սպասավորը] իր վերադարձի ճանապարհին ուզեց ավելի ճշգրիտ իմանալ [Քրիստոսի գործած հրաշքների] մասին, որպեսզի հնարավորություն ունենա ավելի հանգամանորեն տեղեկացնել իր տիրոջ, հուսալով, որ մի գուցե նա էլ [Քրիստոսի] օգնությամբ բուժման արժանանա։ Նա Տիրոջ գտավ նորից հրաշքներ գործելիս. նա մեռյալներին հարություն էր տալիս, կույրերին աչքի լույս պարգևում, կազերին բուժում և ամեն տեսակի ցավերով տառապող մարդկանց ապաքինում։

Գ. Ականատես լինելով Տիրոջ բացահայտ [հրաշագործությանը] և համոզվելով դրա ճշմարտացիությանը, նա Աբգարի մոտ վերադառնալով, նրան մանրամասն պատմեց իր տեսածի և լսածի մասին։ Որպես իր պարտականությունները ավելիով կատարած և որպես իրեն, Աբգարին, բարի լուր հաղորդած, նա արժանացավ անհրաժեշտ գովասանքի և համարվեց ամենանվիրված մարդկանցից մեկը։ Եվ քանի որ տառապող մարդը միշտ էլ ձեռք է կարկառում բարի լուրին, [բարի] լուրն ու հույսը սիրտ է տալիս նրան, [Աբգարը] համոզում է [իր սպասավորին] անհապաղ գտնել հիշածը [Քրիստոսին]։ Աբգարը հիվանդություններ բուժել կարողացող Տիրոջ բոլորիս հայտնի նամակը գրեց, որն ուներ հետևյալ բովանդակությունը.

Դ. «Աբգար[5], իշխան աշխարհի, առ Յիսուս Փրկիչ և բարերար, որ երևեցար յԵրուսաղէմացւոց աշխարհիդ, ողջոյն։ Լուեալ է իմ վասն քո և վասն բժշկութեանդ, որ լինի ի ձեռս քո առանց դեղոց և արմատոց. զի որպէս ասի՝ տաս դու կուրաց տեսանել և կաղաց գնալ, և զբորոտս սրբես և զայրս պիղծս հանես, և որ միանգամ չարչարեալ են յերկար հիւանդութեամբք՝ բժշկես. դու և զմեռեալս յարուցանես։ Եւ իբրև լուայ վասն քո զայս ամենայն՝ եդի ի մտի իմում մի յերկուց աստի. կա՛մ թէ դու Աստուած իցես, իջեալ յերկնից, և գործես զայգ. կամ թէ որդի իցես դու Աստուծոյ, և գայդ առնես։ Արդ վասն այնորիկ գրեցի ես առ քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս և եկեսցես առ իս և բժշկեսցես զհիւանդութիւնս զոր ունիմ ես։ Նա և լուայ, զի Հրեայք տրտնջեն զքէն և կամին չարչարել զքեզ. բայց քաղաք մի փոքրիկ և գեղեցիկ է իմ, և բաւական է մեզ երկոցունցս[6]» խաղաղությամբ բնակվելու այնտեղ։

Ե. Աբգարը Հիսուսին առաքեց այդ նամակը Անանիայի միջոցով, քանի որ Անանիան արդեն ցույց էր տվել տիրոջ հանդեպ տածած նվիրվածությունը, ծանոթ էր Ճանապարհին, ապա և հմուտ նկարչության արվեստին, միաժամանակ պատվիրելով, որ եթե այդ նամակով իրեն չհաջողվի Քրիստոսին համոզել իր՝ Աբգարի մոտ գալ, ապա թող նրա ճշգրիտ դիմանկարը կատարի և իրեն բերի, որպեսզի ոչ միայն ունկամբ, այլև ակամբ ծանոթանա, կարծես նրա ստվերին, այդ սքանչելագործի հետ։ Առաքված մարդը, հասնելով Հուդայի երկիրը, Տիրոջ հանդիպեց բացօթյա տեղում՝ հավաքված ժողովուրդին վարդապետելիս, և զարմանալի հրաշքներ գործելիս։ Ամենատարբեր նպատակների համար կուտակված բազմության պատճառով Անանիան չկարողացավ Հիսուսին մոտենալ. նա գնաց և Տիրոջից մի փոքր հեռավորության վրա գտնվող ոչ բարձր մի քարի վրա նստեց։ Այսպիսով ավելի բարձրադիր տեղում գտնվող Անանիային բազմության կողմից ծածկված Փրկիչը տեսանելի էր. իսկույն աչքերը [Քրիստոսին] ուղղած, ձեռքն էլ թղթին, նա սկսեց նկարել նրան։

Զ. Հիսուսը սուրբ Հոգու ներշնչմամբ իմացավ այդ մասին և կանչելով Թովմային[7], ասաց. «Գնա՛ այդ վայրը և քարի վրա նստած ու ինձ նկարող մարդուն՝ իր երկրից բերած նամակի հետ միասին իմ մոտ բեր, որպեսզի նա այդպիսով կատարի իրեն ուղարկողի հրամանը»։ Թովման գնաց և [Քրիստոսի] ասածից՝ թե նա նկարելիս կլինի, ճանաչեց Անանիային և հրավիրեց Հիսուսի մոտ։ Քրիստոսը դեռ նրանից նամակը չառած ասաց իր Անանիայի, գալստյան պատճառի, ինչպես և նամակի բովանդակության մասին։ Ապա վերցրեց նամակը, ընթերցեց այն և բառացի հետևյալ պատասխան նամակը շարադրեց։

Է. «Երանի քեզ, Աբգար, որ առանց ինձ տեսնելու հավատացիր ինձ։ Քանզի գրված է իմ մասին, թե[8] «Զի որք տեսանեն զիս՝ ոչ հաւատասցեն յիս, և որք ոչն տեսանեն՝ նոքա հաւատասցեն և կեցցեն։ Իսկ վասն այնր զի գրեցեր դու առ իս, գալ ինձ առ քեզ՝ արժան է ինձ կատարել աստ զամենայն ինչ վասն որոյ առաքեցայ ես։ Եւ իբրև կատարեցից զայս՝ ապա համբարձայց առ այն[9] որ առաքեացն զիս. և յորժամ համբարձայց՝ առաքեցից ղմի յաշակերտացն աստի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ[10], և շնորհե քեզ կյանք հավիտենական և խաղաղություն, հզորացնի քո քաղաքր, որպեսզի և ոչ մի թշնամի չկարողանա պարտության մատնել այն»։

Ը. Քրիստոսը այդ նամակը տվեց Անանիային, բայց ուզեց կատարել նրա տիրոջ մյուս հանձնարարությունը ևս, այն, որի համար ջանք էր թափում Անանիան. խոսքը իր, Քրիստոսի, պատկերը բերելու մասին է: Փրկիչն ահա լվաց դեմքը, ապա դեմքի խոնավությունը չորացրեց իրեն տրված վարշամակով, որի վրա գերբնականորեն, աստվածային նախախնամությամբ արտատրպվեց իր դիմապատկերը: Վարշամակը նա տվեց Անանիային, հրամայեց այն տալ Աբգարին, որպեսզի վերջինիս ցանկությունը կատարվի, և նրա ցավերն ամոքվեն: Այդ բոլորն առած, Անանիան բռնեց վերադարձի ճանապարհը. նա հասավ Հիերապոլիս, որ սարակինոսների լեզվով Մեմբիջ[11] է կոչվում, իսկ ասորերեն՝ Մաբուք: Կանգ առնելով այդ փոքր քաղաքից դուրս, նա այնտեղ գտնվող նոր պատրաստված աղյուսների կարկառի մեջ թաքցրեց այդ սուրբ շորի կտորը: Կես գիշերին այդ տեղը համակվեց մեծ կրակով, այնքան մեծ, որ քաղաքի ներսում գտնվողներին թվաց, թե [քաղաքի] ողջ շրջակայքը կրակի ճարակ է դառնում: Իրենց կյանքը վտանգված համարելով, նրանք [քաղաքից] դուրս եկան և սկսեցին հետաքրքրվել թվացող հրդեհով: Տեղում Անանիային գտան, և նրան հրձիգ համարելով, սկսեցին քննել, ո՞վ է նա, ո՞ւր է դնում, և ո՞րտեղից:

Թ. Տարօրինակ հարցից զարմացած, Անանիան պարզեց իր ծագումը, որտեղից գալը, ասաց, թե ինչ է իր հետ բերում, ասաց, որ աղյուսների կարկառի մեջ է զետեղել իր հետ բերածը, այնտեղ, որտեղ թվում է, թե բոց է դուրս գալիս: Ասվածը ստուգելու համար նրանք փնտրտուքներ կատարեցին տեղում, և ոչ միայն Անանիայի՝ այնտեղ զետեղածը գտան, այլև մերձակա աղյուսներից մեկի վրա տեսան աստվածային անձեռագործ պատկերի մի այլ արտատպությունը, որը, գերբնական, մարդու մտքին անհասանելի եղանակով կտորից անցել էր աղյուսին: Ականատես լինելով դրան, նրանք ապշեցին ոչ միայն [պատկերի] պատճառով, այլև այն պատճառով, որ ոչ մի տեղում կրակ չգտան. հենց պատկերից բխող լույսն էր, որ բոցի տպավորություն էր թողնում: Աստվածային պատկերն իր մեջ ընկալած աղյուսը որպես սուրբ, որպես թանկագին գանձ նրանք վար դրեցին, իրենց տեսածից համոզվելով, որ աստվածային ներգործության հետ գործ ունեն: Ինչ վերաբերում է նախատիպին և վերջինիս սպասավորին, ապա նրանք վախեցան տիրանալ դրանց և Աբգարին ուղարկեցին: Ահա

այդ փոքր քաղաքի բնակիչները [մինչև օրս] պահում և պատվում են պատկերը կրող այդ աղյուսը, անգիր պատկերից անգիր եղանակով առաջացածը, անձեռագործ պատկերից անձեռագործ եղանակով արտանկարվածը։ Իսկ Անանիան մնացած ճանապարհը կտրելով, հասավ ու տիրոջը պատմեց տեղի ունեցածի մասին և նրան հանձնեց իր բերած փրկչական իրերը։

Ժ. Ահա մեր Փրկչի անձեռագործ պատկերի մասին լայն տարածում գտած պատմությունը։ Բայց այդ մասին մի այլ պատմություն էլ կա, որը [նույնպես] ճշմարիտ լինելու հիմքերն ունի, ունենալով վստահելի ապացույցներ։ Ես այդ էլ կպատմեմ, որպեսզի չկարծեն, որ դրան անտեղյակ մենք ավելի հավատ ենք ընծայում առաջինին։ Բոլոր դեպքերում ոչ մի տարօրինակ բան չկա, որ այսքան երկար ժամանակի ընթացքում պատմությունը հաճախ այլափոխված ձևով է հանդես գալիս, թեև բոլորի մեջ նրա ատաղձը միասնական է, այն, որ Տիրոջ դեմքից է, որ գերբնականորեն կտորի վրա արտատպվեց պատկերը։ Բայց մանրամասների մեջ, այն է ժամանակի հարցում, տարակարծությիւններ կան։ Հակառակ այդ բոլորին իրողությունը չի փոխվում եթե ընդունենք, որ դեպքը այս կամ այն չափով շուտ կամ ուշ է տեղի ունեցել։ Մյուս տարբերակն ահա հետևյալն է։

ԺԱ. Պատմում են, որ երբ Քրիստոսը կամովին չարչարանքներն ընդունեց, նա հանդես բերեց մարդկային թուլություն. նրան տեսնում էին տագնապի մեջ, աղոթելիս։ Արդ, ավետարանի համաձայն «հոսէին ի նմանէ քրտունք իբրև զկայլակս արեան»[12]։ Դրա վրա, պատմում են, որ [Քրիստոսի] աշակերտներից մեկը վերցրեց այժմ մեր տեսած շորի կտորը և սրբեց նրա քրտինքները. սրբիչի վրա իսկույն աստվածային դեմքի արտատպությունն երևաց։ [Քրիստոսը] սրբիչը թողեց Թովմային և հրամայեց, որ իր երկինք համբառնալուց հետո Թադևոսի[13] միջոցով Աբգարին ուղարկել այն, կատարելու համար իր նամակում տված խոստումը։ Մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի երկինք համբառնալուց հետո Թովման Տիրոջ անձեռագործ պատկերը Թադևոսի միջոցով ուղարկեց Աբգարին։

ԺԲ. Թադևոսը, հասնելով Եդեսիա, նախապես օթևանեց այնտեղի հրեաներից մեկի տանը։ Նրա անունը Տոբիաս էր։ Քրիստո-

սի աշակերտը ուզեց, որ Աբգարը իրեն նախ և առաջ գործով ճանաչի, քան թե խոսքով. նա քաղաքի հիվանդներին լոկ հանուն Քրիստոսի բուժեց։ Քրիստոսի համբավը տարածվեց (նման դեպքերում այդպես է լինում, քանզի անհավատալի լուրը բաղում տարածողներ է գտնում)։ Քրիստոսի առաքյալի գալստյան մասին լուրը Աբգարին հասցրեց վերջինիս մեծամեծներից Ամդու անունով մեկը։ Աբգարն իսկույն կանխազգաց, որ նա Քրիստոսի նամակում հիշված և իրեն ավետված մարդն է։ [Ամդուից] նա հանգամանորեն տեղեկացավ Թադեոսի մասին, կարգադրեց նրան իր մոտ հրավիրել։ Տոբիասը[14] եկավ և առաքյալին պատմեց այդ մասին, վերջինս էլ պատասխանելով, որ ինքը լիազորված է [Աբգարի] մոտ գալու, ներկայացավ Աբգարին։ Երբ [Թադեոսը] պետք է անձամբ հանդիպեր Աբգարին, պատկերը իր ճակատին՝ նա մտավ վերջինիս մոտ։ Աբգարը հեռվից ավելի շուտ նրա դեմքից պսպղացող լույս տեսավ, որ պատկերն էր ցոլացնում, քան թե [առաքյալի] դեմքը։ Ուժեղ լույսից զարմացած, նա մոռացավ իր ցավերը, մարմնի երկարամյա թուլությունը. նա իսկույն ելավ մահճակալից և սկսեց վազել։ Մարմնի թուլությամբ տառապողն ահա այս կերպ [բուժվեց], Թաբոր լեռան վրա փայլատակած դեմքին ականատես եղողներից տարբեր[15]։

ԺԴ. Առաքյալից վերցնելով խնդրո առարկա պատկերը և ակնածությամբ հպելով իր գլխին ու շրթներին, դեռ ավելին, իր մարմնի մյուս մասերին այն դեռ չհպած, նա իսկույն զգաց, որ իր մարմնի բոլոր մասերը ապաքինվում են, լավանում, բորոտությունը մաքրվում է և անհետանում. այդ հիվանդության ինչ-որ հետք միայն մնաց ճակատին։ Առաքյալից ավելի հանգամանորեն սովորելով ճշմարտության խոսքը, հասու լինելով Քրիստոսի զարմանալի հրաշագործություններին, նրա աստվածային չարչարանքներին, թաղման, ի մեռելոց հարություն առնելու և հերկինս համբառնալու, նա Քրիստոսին ճշմարիտ աստված խոստովանեց։ Նա հետաքրքրվեց դիմապատկերը կրող վարշամակով, որովհետև մանրամասն հարցուփորձ անելով իմացել էր, թե առանց նյութեղեն ներկերի է այն պատրաստված։ Նա ապշել էր նրա ունեցած զորության վրա, որի շնորհիվ ինքն անակնկալ կերպով մահճակալից վեր էր կացել և առողջացել։ Թադեոսը դրա վրա պատմեց նաև [Քրիստոսի] ապրած տագնապի և [նրա] քրտինքից, առանց ներկերի առաջացած պատկերի մասին։ Նա հայտնեց նաև Տիրո-

կարգադրությունը՝ նրա [Աբգարի] մոտ գալու, և բոլոր այն մասին, ինչ ասվեց վերևում։

ԺԴ. Երբ Աբգարն զգաց, որ Թադևոսի՝ իր՝ Աբգարի վրա հանուն Հիսուս Քրիստոսի ձեռքերը դնելով ցավերը չքվում են, թուլացած անդամները կարծես ամրանում, այլանդակությունը վերանում և ամեն ինչ ապաքինվում, ապշած խոստովանեց. «Ճշմարիտ, դու աշակերտն ես աստուծո՝ Հիսուս Քրիստոսի, ով բուժում է առանց դեղերի և դեղաբույսերի։ Ես այնքան եմ նրան կապվել սիրով և հավատով, որ եթե չվախենայի հռոմայեցիների պետության մեծ հզորությունից, հռոմայեցիների, ովքեր չեն հանդուրժում, որ իրենց հպատակները միմյանց դեմ զենք ճոճեն, իսկույն զենքով կհարձակվեի Տիրոջը խաչող հրեաների վրա և կնվաճեի նրանց։ Այժմ, իմանալով [Քրիստոսի] կամովին չարչարվելու մասին, համոզվեցի, որ եթե նա չուզեր, ապա ապերախտ [հրեաները] չէին հաղթահարի նրան, այդ բանի վրա ես ամենևին չեմ կասկածում։ Արդ, ես ուզում եմ արժանանալ սուրբ մկրտության, ամբողջ ընտանիքով ընտանեանալ և նվիրվել Տիրոջ Քրիստոսին»։ Տիրոջ աշակերտն արդեն բազում հրաշքներ էր գործել, բոլորին բուժել իրենց ցավերից, այդ թվում և ամենից առաջ իր համբավը Աբգարին բերողին. նրան նա փրկել էր հոդատապից։ Արդ, նա Աբգարին մոտեցրեց սուրբ ավազանին, և նրա վրա պետք եղածը կատարելով, նրան, կնոջ ու երեխաներին, ապա և նրա տան բոլոր անդամներին մկրտեց։ Աբգարն այդ սրբազան ու մաքրող ջրից դուրս եկավ կատարյալ մաքուր և առողջ. նրա ճակատից իսկույն անհայտացել էր նաև բորոտության մնացած հետքը։

ԺԵ. Դրանից հետո ահա տոպարքեսը պատվեց ու պաշտեց Տիրոջ դիմապատկերը և այլ [սրբությունների] շարքին այն դասեց։ Անցյալում Եդեսիայի երևելի քաղաքացիները քաղաքի հասարակական դռան առջև հունական մի աստվածության արձանն էին կանգնեցրել. ով որ ցանկանար քաղաք մտնել, նա պարտավոր էր երկրպագել [արձանը] և սահմանված բարեմաղթությունները հղել, որից հետո միայն ընթանալ քաղաքի փողոցներով ու ճանապարհներով։ Արդարը գետին տապալեց այդ [արձանը] և նույն տեղում մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի անձեռագործ պատկերը կանգնեցրեց՝ տախտակի վրա կպցնելով այն և պաճուճելով մինչև օրս երևացող ոսկե զարդերով, որի վրա նա ոսկե տառե-

քով գրեց հետևյալը. «Քրիստոս Աստված, քեզ հավատացողը երբեք չի սխալվի»։ Նա օրենք սահմանեց, որ այդ դռնով ներս մտնողը հին, անպետք և անօգուտ արձանի փոխարեն, անհրաժեշտ ակնածանքը, երկրպագությունն ու պատիվը Քրիստոսի բազմահրաշ սքանչելագործ պատկերին հղի և դրանից հետո մուտք գործի Եդեսիա քաղաքը։ Բարեպաշտ Աբգարի այդ օրենքը պահպանվեց նրա ամբողջ կենդանության ընթացքում, ապա նաև վերջինիս որդու, որ ժառանգեց հոր իշխանությունն ու բարեպաշտությունը։ Բայց վերջինիս որդին և [Աբգարի] թոռը թեև ժառանգեց հոր և պապի իշխանությունը, այդուհանդերձ չժառանգեց [նրանց] բարեպաշտությունը։ Նա, այսպես ասած, աքացեց բարեպաշտությունը և հանձնվեց դևերին ու կուռքերին։ Ուզենալով փոխհատույց լինել դևերին, նա վճիռ արձակեց ոչնչացնել Տիրոջ պատկերը, քանի որ իր պապը ոչնչացրել էր այդ կուռքը։ Բայց նենգը իր նպատակին չհասավ, քանզի տեղի եպիսկոպոսը իմացավ այդ մասին, և անհրաժեշտ քայլերին դիմեց։ Պատկերի գտնված տեղը կիսաշրջան գլանի ձև ուներ. [եպիսկոպոսը] պատկերի առջև ապակի դրեց, նրա առջևն էլ՝ կղմինդր, ապա ամբողջ մակերեսը կրով ու թրծած աղյուսով հյուսեց ու հարթացրեց։ Ամբարիշտի աչքին այլևս չէր երևում իրեն ատելի պատկերը. դրա համար էլ նա հրաժարվեց իր ծրագրից։ Իմ կարծիքով եպիսկոպոսը պատկերի առջև կղմինդր դրեց, որպեսզի շինարարության բորբոսը և կրի խոնավությունը պատկերի մեջ չներծծվի և ժամանակի ընթացքում չվնասի այն։

ԺԶ. Անցավ բազում ժամանակ, մարդիկ մոռացել էին սուրբ պատկերի և՛ կանգնեցման, և՛ թաքցնելու մասին։ Պարսից արքա Խոսրովը[16] գրավելով Ասիայի քաղաքները հասավ Եդեսիա. պաշարեց այն, գործի դրեց քաղաքավեր ամեն տեսակի մեքենաներ և ամեն ջանք թափեց քաղաքի վրա նետերի տարափ թափելու, պարիսպները խախտելու և դարպասները խորտակելու համար։ Այդպիսի վտանգի ենթարկված եդեսացիք, ճիշտ է, հնարավոր բոլոր միջոցներով պաշտպանվում էին, բայց նպատակահարմար գտան օգնության դիմել հռոմայեցի զորավարին։ Այն ժամանակ հռոմեական զորքերի հրամանատարը Հելիոնն էր, որը սակայն թշնամիների կողմից դժվարին դրության մեջ ընկած, հնարավորություն չուներ Եդեսիային օգնություն ուղարկել։ Նա հուսադրեց նրանց՝ հիշելով Տիրոջ նամակը, նրա մեջ արձանագրված հշմա-

րիտ վճիռը՝ քաղաքի անառիկ լինելու մասին։ Պարսիկները ոչ միայն բացահայտ կերպով գրոհի էին անցել, այլև թաքուն միջոցառումների էլ էին դիմում։ Նրանք սկսեցին հեռվից գետնափոր անել, որոշելով նրա միջով մուտք գործել քաղաք։ [Պարսիկները] ստորջրյա լողորդների նման հասան պարիսպների հիմքերին, բայց նրանց գոյության մասին պաշարյալներն իմացան հետևյալ կերպ. երբ պարսիկները փորում էին գետինը և հողը դուրս հանում, [քաղաքացիների] բնակարանների [պատից] կախված պղինձները իրար էին գալիս և հնչում։ Անել վիճակի մատնված և կատարյալ հուսալքության հասած քաղաքացիները, սրտաճմլիկ ու արտասվալից դիմում են աստծուն։ [Քաղաքի] եպիսկոպոսին (նա Եվլալիոսն էր) գիշերով տեսիլք երևաց՝ փառավոր և արգալից, գերմարդկային մի կին, որը հուշեց իրեն վերցնել Քրիստոսի անձեռակերտ պատկերը և նրանով թափոր կազմած դուրս գալ։ Տերը իր հրաշքը ցույց կտա։ Եպիսկոպոսը պատասխանեց, թե ամենևին անտեղյակ է այդ մասին, ո՞ւմ մոտ է գտնվում այն։ Դրա վրա կնոջ կերպարանքով հանդես եկողն ասաց, թե քաղաքի դռան վրա ահա այս կերպ է թաքնված պատկերը։

ԺԷ. Եպիսկոպոսը, իր տեսիլքի ճշմարտությանը համոզված, առավոտյան թափորով եկավ նշված վայրը, փնտրեց և գտավ ոչ մի փոփոխություն չկրած պատկերը. այդքան երկար տարիների ընթացքում պատրույգն անգամ չէր հանգել[17]։ Բացի այդ, ճրագի առջև դրված կղմինդրի վրա պատկերից արտատպվել էր մի ուրիշ պատկեր, որը մինչև օրս էլ պահվում է Եդեսիայում։ Եպիսկոպոսն իր ձեռքն առնելով աստվածամարդ Քրիստոսի պատկերը, սիրտ առած եկավ այն տեղը, որտեղ [գետնափոր] անող պարսիկների [հարվածներից] հնչող պղինձներից՝ նրանց գոյությունը հայտնի էր դարձել։ Քաղաքացիներն սկսեցին ներսից փորել և երբ մոտեցան իրենց թշնամիներին, նրանց դեմ պատրաստված կրակի մեջ ճրագից ձեթ կաթեցրին, ապա կրակը գցելով գետնափորում գտնվող պարսիկների վրա, բոլորին ոչնչացրեցին։ Այդ վտանգից փրկված, նրանք նույն կերպ վարվեցին պարիսպներից դուրս գտնվող մեքենաների հետ և նույն ձևով մոխիր դարձրին. Նրանց մեջ գտնվող բաղում թշնամիների ոչնչացրին։ Սիրտ առած, նրանք սկսեցին պարիսպների վրայից քարերի տարափ թափել, որոնց հարվածներից ընկավ և պիղծ զորքի հրամանատարը, նրա հետ նաև շատ ուրիշներ։ Բացի այդ, [քաղաքացիների համար] ապա-

վեն դարձած աստվածային պատկերը թշնամիների վրա շուռ տվեց դրսում՝ [քաղաքացիների] գլխին թափելու համար [հակառակորդի կողմից] պատրաստված կրակը, որը գնալով թեժանում էր ձիթենիների և այլ ծառերի անսահման քանակության փայտով։ Դա կատարվեց հետևյալ կերպ. Եվլալիոսը [պատկերը] իր ձեռքերի մեջ առած քաղաքի սլարիսպների վրայով էր տանում։ Երբ հասավ նշված վայրը, հանկարծակի սաստիկ քամի բարձրացավ և ասածս խարույկի բոցը շուռ տվեց այն բորբոքողների վրա. Նա փախուստի մատնեց նրանց և հրո ճարակ դարձրեց, ինչպես անցյալում քաղդեացիներին։

ԺԸ. Մեր պատմածն անհիմն չէ, մեր հորինածն էլ չէ՝ ինչ-որ խաբեության կամ էլ ունկնդիրներին դուր գալու համար. երեք պատրիարքներ՝ այն է Ալեքսանդրիայի Հոբը, Անտիոքի Քրիստափորը և Երուսաղեմի Բարսեղն[18] են գրել այդ մասին, հաստատել դրա ճշմարտացիությունը և իրենց շարադրանքը սուրբ պատկերներն անարգող Թեոփիլոս[19] կայսեր ներկայացրել։ Նրանք պատկերների սրբությունն ու ակնածության արժանի լինելն ապացուցող բազում փաստերի թվին ավելացրին և [վարշամակի] մասին պատմությունը։ Ցանկացողը թող կարդա [նրանց] այդ մանրամասն նամակը և իմանա այդ մասին։ Եթե ոք ուշադիր ծանոթանա նաև Եվագրիոսի եկեղեցական պատմությանը, այնտեղից էլ կիմանա դրա վերաբերյալ, քանի որ խնդրո առարկա սուրբ պատկերի մասին նա խոսում է չորրորդ գրքում։

ԺԹ. Նա պատմում է, որ Խոսրովը, ցանկանալով միանգամայն ապացուցել այդ քաղաքի անառիկության մասին քրիստոնյաների շրջանում տարածված համբավի կեղծ լինելը, ի միջի այլոց կատարեց և հետևյալը. Նրա հրամանով՝ առկա զինվորների մեծաթվության պատճառով կարճ ժամանակամիջոցում հսկայական քանակությամբ փայտ կուտակվեց. դրանցով նա երկու շարք պատ կազմեց և քաղաքը շրջապատեց։ Այնուհետև այդ փայտերի երկու շարքերի արանքում հող լցրեց և Եդեսիայի պարսպի դեմ մի այլ պարիսպ կանգնեցրեց՝ քաղաքի պարսպից ավելի բարձր։ Այդպիսով նա շատ ավելի նպաստավոր դիրքից նետեր պիտի արձակեր քաղաքի պաշտպանների վրա։ Եդեսացիք տեսնելով պարսպի դիմաց բարձրացվող լեռը, համոզված էին, որ թշնամիները քաղաքի վրա կհարձակվեն կարծես ուղիղ գետնի վրայով։

Թեև նրանք անել վիճակում էին, բայց և այնպես հնարավորին չափ հակամիջոցների դիմեցին. նրանք նոր կանգնեցված պարսպի առաջից գետնափոր արեցին, նպատակ ունենալով հողի առջևում գտնվող փայտամածը կրակի տալ, ապա նրա [միջև եղած] հողը գետնափորի միջով դուրս հանել, համոզված լինելով, որ այդ ճանապարհով ցնորական պարիսպն իսկույն կավերվի, փուլ կգա։ Գետնափորի աշխատանքն հաջողությամբ առաջ էր գնում, բայց նրանց չէր հաջողվում փայտերը կրակի տալ. նրանց արանքում թափված հողը, ապա և նրանց խոնավությունը հնարավորություն չէր տալիս կրակին առանց որևէ նոր միջոցի բռնկվելու։ Ահա դրա վրա նրանք սուրբ պատկերը նորակերտ գետնափորը մտցրին. նրանով ջուր օրհնեցին, որը ցանելով փայտերի վրա կրակը բռնկեցրին։ Ջուրը, այդ բանը գործողների հավատքից աստվածային զորություն ձեռք բերելով, կրակի մեջ կարծես յուղի վերածվեց, բոցը թեժացրեց և հանդիպածը ոչնչացրեց։ Պարսից արքան, քաղաքին տիրանալու հույսը կտրած, ապա և իմանալով, թե ով է հասել [քաղաքացիների] օգնության, դիմեց բանակցությունների և հաշտություն կնքելով, վերադարձավ իր երկիրը։

Ի. Բայց [պարսից արքան] շատ չանցած ինքն էլ արժանացավ իր թշնամիների համար բարեգործ, իսկ իր համար ավերիչ դարձած այդ սրբազան պատկերի բարերարությանը։ Իր դուստրը դիվահար և խելակորույս, դևից դրդված անվերջ աղաղակում էր, թե «Մինչև Եդեսիայից չբերվի անձեռագործ պատկերը իմ մեջ բնակություն հաստատած [դևը] դուրս չի գա»։ Արքան, լսելով դա, հիշեց պաշարման ժամանակ տեղի ունեցած դեպքերը, (նրանից չէր վրիպել եդեսացիների տարօրինակ, անակնկալ կերպով ձեռք բերած հզորությունն ու քաջությունը)։ Նա իսկույն նամակ գրեց քաղաքի մեծին, մետրոպոլիտ Եվլալիոսին և քաղաքի համայնքին, խնդրելով շտապ իրեն ուղարկել աստվածային ամենազոր պատկերը, ավելացնելով և այն [խնդրելու] պատճառը, այն է, դստեր դժբախտությունը։ Նա ամեն կերպ խնդրում էր այն, աղերսում չմերժել իր խնդիրքը։ [Եդեսիայի քաղաքացիները] գիտեին, որ չի կարելի պարսիկներին հավատ ընծայել, նրանք կասկածում էին, որ պարսիկն ուղում է չարանենգորեն խլել իրենց հզորությունը։ Մտահոգված լինելով չզրկվել իրենց պաշտպանից ու բարերարից, բայց և չուզենալով դրա պատճառով վերացնել խաղաղությունը, օգտաբեր և խոհեմ մի միտք հղացան։ Նրանք

հար և նման մի պատկեր արտանկարեցին՝ անձեռագիր նկարից ձեռագիր, հնարավորին չափ [նախատիպարին] նմանեցրին, և այն խնդրողին ուղարկեցին։ Պատկերը տանողները հենց որ մուտք գործեցին պարսից սահմանները, դևը աստուծո դրդմամբ արքայի դստեր բերանով գոչեց, թե եկող ուժի պատճառով շուտով դուրս կգա և կփոխի իր բնակության վայրը, եթե խնդրված պատկերը ետ վերադարձվի և այն մուտք չգործի ո՛չ արքունիք, ո՛չ էլ պարսից քաղաքը։ Այդ առթիվ նա շատ էր խնդրում և աղաչում արքային։ Արքան խոստացավ. դրա վրա դևը դուրս եկավ իր դստրից. արքայի աղջիկն առողջացավ։ Խոսրովը, կամ ընդառաջ գնալով իրեն խնդրող դևի աղերսանքին, գուցե և իր խոսքի տերը կանգնելով, և կամ էլ իր վատ ու պիղծ արարքների համար եկող ուժի հաշվեհարդարից երկյուղած, հրամայեց վերադարձնել պատկերը այն քաղաքը, որտեղից որ ուղարկվել էր։ Նա իր կողմից նվերներ էլ պարգևեց [պատկերն] իրեն ուղարկողներին։

ԻԱ. Ահա այսպես եդեսացիների մոտ էր գտնվում այդ թանկագին գանձը, անհատնում հարստությունը, այդ նախատիպ և անգիր պատկերը, որ պաշտվում էր նրանց կողմից և պահպանում իրենց։ Բայց որովհետև քաղաքների այս թագուհու[20] մեջ ամեն տեղից հավաքվեցին ամենալավ ու գեղեցիկ [իրերը], ապա աստվածային կամքն էր, որ այդ սրբազան պատկերը այլոց հետ միասին այստեղ պահվի։ Հռոմայեցիների պետության տեր Ումանոսը[21] ջանք էր թափում, որ ինքն արժանանա դրան և հարբուստացնի մայրաքաղաքը։ Այդ նպատակով նա ստեպ-ստեպ դիմում էր Եդեսիա և խնդրում այն, ինչպես և Տիրոջ ինքնագիր նամակը, խոստանալով դրանց փոխարեն տալ մինչև երկու հարյուր [ոսկեդրի] սարակինոս և տասներկու հազար մաքուր արծաթ։ Բայց եդեսացիք պատասխանեցին, թե իրենց համար ձեռնտու չէ սեփական քաղաքի պահակն ու պահապանը փոխանակել արծաթով և մահկանացու մարդկանցով։

ԻԲ. Նա նորից խնդրեց նրանց, բայց բազմիցս անգամ մերժում ստացավ։ Վերջապես աշխարհի արարչագործության վեց հազար չորս հարյուր հիսուն երկրորդ տարին[22] Եդեսիայի ամիրան դիմեց կայսեր, պահանջելով ոսկե կնիքով հաստատված վավերագիր այն մասին, որ հռոմայեցիների զորքերը թշնամական նպատակներով չեն դիմի հետևյալ չորս քաղաքների վրա, այն է

Ռոխայի[23] *(բարբարոս լեզվով այդպես է կոչվում Եդեսիան), Խաբանի, Սարատի և Սամոսատի, ավարի չեն տա այդ [քաղաքների] արտերը, չեն դերեվարի նրան բնակիչներին։ [Պահանջեց] նաև ազատ արձակել և իրեն ուղարկել իր ցեղակից երկու հարյուր սարակինոսներին՝ առաջարկված արծաթով հանդերձ, որոնց դիմաց ինքը խոստանում է տալ խնդրված պատկերը և Քրիստոսի նամակը։*

ԻԳ. Կայսրը նման բարիքին արժանանալու համար համաձայնվեց բոլոր պահանջներին և Սամոսատի աստվածասեր եպիսկոպոս Աբրամիոսին, որն այն ժամանակ այստեղ[24] *էր գտնվում, ուղարկեց ստանալու սուրբ պատկերը և մեր աստված Քրիստոսի նամակը։ Ե՛վ ուղարկողին, և՛ պարտականությունը կատարողին մտահոգում էր մի բան, որ հանկարծ իրենց կխաբեն և անձեռագործ ու իսկական պատկերի փոխարեն կտան այն, որ սլարսկական դեպքերի առթիվ արտանկարվեց։ [Պատգամավորը] ստուգելու համար պահանջեց, որ իրեն բերեն երկուսն էլ, ապա և նեստորականների եկեղեցում պաշտվողը, որը, ինչպես հայանի է, անցյալում նույնպես նախատիպարից էր արտատպվել։ Իսկականն ու իրականը վար դնելով, նա մյուսներն իսկույն ետ վերադարձրեց։*

ԻԴ. Բայց դա տեղի ունեցավ հետագայում։ Այն ժամանակ Եդեսիայի հավատացյալները խռովություն բարձրացրին, քաղաքում մեծ տակնուվրայություններ եղան. ՝[քաղաքացիները] չէին ուզում զրկվել իրենց ամենահարգի [իրերից], իրենց պաշտպաններից, մինչև որ սարակինոսների գլխավորը ոմանց համոզելով, ոմանց վրա ճնշում գործադրելով, ոմանց էլ մահապատժի սպառնալիքի տակ ստիպեց տալ այն։ Երբ պատկերը և Քրիստոսի նամակը պետք էր քաղաքից դուրս բերվեին, հանկարծակի ինչ-ինչ պատճառով կամ նախախնամությամբ որոտ ու փայլակներ, տեղատարափ անձրև թափվեցին։ Ովքեր որ չէին ուզում այդ [սրբությունները] տալ, նորից ոտքի ելան. նրանք պնդում էին, որ [բնության այդ երևույթները] վկայությունն են այն բանի, որ սրբությունների տեղափոխությունը տեղի է ունենում աստուծո կամքին հակառակ։ Բայց սարակինոսների զորավարը, որի ձեռքում էր գտնվում բովանդակ իշխանությունը, որոշեց չդրժել համաձայնությունը, կատարել խոստումը. նա քաղաքից դուրս հանեց ամենա-

հարդի պատկերը ու Քրիստոսի ձեռքով դրված նամակը և այստեղ էր բերում։

ԻԸ. Այդ սրբությունները բերողները ճամփա կտրելով, հասան Եփրատ, երբ եգեսացիք նորից, նախկինից ոչ պակաս աղմուկ բարձրացրին. նրանք ասում էին, որ մինչև աստվածուստ որևէ հրաշք չկատարվի, իրենց պաշտպաններին չեն տա։ Դրա վրա ահա այդ անհավատներին և փորձողներին հրաշք է ցույց տրվում։ Աստվածային պատկերը և նամակը տանող եպիսկոպոսները, երբ խռովարարները դեռ հուզման մեջ էին, մտան Ասորիքի ափին կանգնած նավը, որի վրա պետք է կտրեին անցնեին Եփրատ գետը։ Հանկարծակի, առանց թիավարների, առանց նավավարի միջամտության, լոկ աստուծո կամքով, նավը լողաց անցավ դիմացի ափը։ Դա բոլոր ներկաներին և ականատեսներին ապշեցրեց և զարմացրեց, համոզեց կամովին թույլ տան գնալու։

ԻԶ. [Սրբությունները] տանող սպասավորները, այն է Սամոսատի և Եգեսիայի եպիսկոպոսը, նրա ավագ երեցը, նաև ամենաբարեպաշտ քրիստոնյաներ և ամիրայի սպասավորը, որին մականվանում էին Հռոմից[25], հասնում են Սամոսատ։ Մի քանի օր մնալով այնտեղ, որոնց ընթացքում բազում հրաշքներ կատարվեցին, նրանք ճամփա ընկան։ Ճանապարհին սրբազան պատկերը և Քրիստոսի նամակը անթիվ հրաշքներ էին գործում. կույրերը անակնկալ կերպով տեսնում էին, կազերն առողջանում, երկար ժամանակ անկողնին գամված մարդիկ ապաքինվում, չորացած ձեռքեր ունեցողները բուժվում։ Մի խոսքով ամեն մի հիվանդություն և ցավ փախուստի էին դիմում. ապաքինվողները փառավորում էին աստծուն և փառաբանում նրա հրաշքները։

ԻԷ. Երկար ճանապարհ կտրելով, նրանք հասնում են Օպտիմատոն[26] բանակաթեմում գտնվող սուրբ Աստվածածնի վանքը, որը Եվսեբիոսի է կոչվում։ Ահա այս վանքի տաճարում ակնածությամբ ամփոփվում է հրաշագործ պատկերի տուփը։ Մաքուր սրտով այստեղ դիմած բազում մարդիկ իրենց ցավերից ապաքինվեցին։ Այստեղ եկավ և մի դիվահար, որին չար ոգին օգտագործում էր որպես գործիք և այդ դիվահարի բերանով գովաբանում պատկերն ու նամակը և Տիրոջ դիմելով ասում. «Գիտենք ով ես դու, սուրբն Իսրայելի»։ Ի վերջո նա կարծես մարգարեանալով,

ասաց. «Ըմբոշխնի՛ր, ո՜վ Կոստանդնուպոլիս, փառք ու բերկրություն, և դո՛ւ Կոստանդին Ծիրանածին թագավորությունը քո»։ Այդ խոսքերն ասվելուց հետո մարդը բուժվեց և ազատվեց դևի ազդեցությունից։ Այս խոսքերի բազում վկաներ կան։ Այդ բանին ականջալուր եղան և դրա վկաները այդ ցանկալի [սրբությունները] դիմավորելու եկած՝ կայսեր ուղարկած ավագ ծերակուտականները, նրանց միացած բազմաթիվ նիզակակիրներ, ապա մագիստրոսներ և պատրիկներ, ավելի ցածր աստիճանավորներ։ Երբ [դևի] կանխագուշակությունները շուտով իրականություն դարձան, բոլորն ապշած մնացին, թե ո՞րտեղից դևը կանխավ գիտեր այդ մասին։ Մարդիկ հավատացած են, որ դևերն ի բնե [կանխագիտության] շնորհքով չեն օժտված, քանի որ նրանք աստվածային փառքից դուրս են սայթաքած և լույսի փոխարեն խավար դարձած։ Հայտնի է, որ աստվածային զորությունը հնում կանխագուշակելու գործում օգտագործում էր Բաղաամի ծառայությունները ապա բազմիցս և այլևայլ, այդ բանի համար անարժան մարդկանց, բայց բոլոր դեպքերում իմաստուն և խոհեմ նախախնամությամբ։ Ահա տվյալ դեպքում ևս սուրբ պատկերի մեջ եղած զորությունը դևին օգտագործեց և փոքր անց տեղի ունենալիքը կանխագուշակեց[27]։ Ավելորդ չէ հիշել այդ, ի միջի այլոց տեղի ունեցածի մասին։ Անցնենք պատմության շարունակությանը։

ԻԸ. Երբ օգոստոս ամսի տասնհինգին Վլախերնայի[28] Աստվածածնի ամենասուրբ տաճարում կայսրերը սովորության համաձայն նշում էին միշտ կույս Աստվածամոր Ննջման տոնը, այդ սրբությունների սպասավորները տեղ հասան. նշված սուրբ տաճարի վերնատան աղոթարանում ամփոփվեցին պատկերն ու նամակը բովանդակող տուփը։ Կայսրերը, ժամանելով ակնածությամբ երկրպագեցին և համբուրեցին այն դրսից։ Այնուհետև փառք ու պատվով, բազում ջահեր վառած տուփը տարան կայսերական տրիերան[29], որով գնացին պալատ. տուփը նրանք ամփոփեցին այնտեղի՝ Փարոս կոչված տաճարում (այդպես է կոչվում հավանաբար այն պատճառով, որ ինչպես պայծառ զգեստ շատ է պաճուճված)։ Հաջորդ օրը, այն է ամսի տասնվեցին, հարդանքով ու ակնածությամբ նորից երկրպագեցին այն. այնուհետև հոգևորականները և երիտասարդ կայսրերը[30] (ծերունի տանտերը[31] հիվանդության պատճառով [տանը] մնաց), սաղմոսերգությամբ

ու տաղերգությամբ, առատ լուսավորությամբ, գնացին քարափ, նորից մտան կայսերական տրիերան, գրեթե ամբողջ քաղաքի ափով թիավարեցին, որպեսզի [սրբությունները] այգ կերպ փըրկեն քաղաքը՝ իրենց՝ ծովով ընթանալիս, և խարիսխ գցեցին քաղաքի արևմտյան պարսպի գրսի կողմում։ Այնտեղ նրանք նավից իջան և ոտքով՝ և՛ կայսրերը, և՛ բոլոր ծերակուտականները, ապա պատրիարքը եկեղեցու համայն կազմով, անհրաժեշտ փառք ու պատվով առաջ էին տանում սրբությունները բովանդակող սպասքը որպես ինչ-որ նոր տապանակ, ավելի ճիշտ՝ նրանից էլ ավելի [արժեքավոր]։ Պարսպի դրսից նրանք հասան Ոսկե դուռը[32], այնտեղից մտան քաղաք։ Բարձրաբարբառ սաղմոսերգությամբ, տաղերգությամբ ու շարականներով, անթիվ ջահերի լույսի տակ, համաժողովրդական թափորով ընթացքը շարունակեցին քաղաքի միջով, համոզված լինելով, որ այդպիսով քաղաքն արժանանում է օրհնության, անչափ հզորանում է այն, որ դարեր շարունակ նա անվնաս ու անառիկ կպահպանվի։ Անգործ ամբոխը փութաց ականատես լինելու. ժողովուրդը կոհակների նման ամեն կողմից շարժվում էր և հոսում. անդամալույծ մի մարդ, որ երկար ժամանակ հիվանդությամբ էր տառապում, իր ծառաներին հենված վեր ելավ տեսնելու համար անցնող աստվածային պատկերը։ Տեսնելու հետ մեկտեղ նա զարմանալի կերպով առողջացավ, իր ոտքերը կայունացած զգաց. նա վազեց, կաթոգին համբուրեց սուրբ պատկերի տուփը, փառավորեց Աստծուն՝ իր անձի հետ կատարված հրաշքը պատմելով։ Բոլոր ներկաները այդ բանին ականատես եղած և նրա խոսքերին ականջալուր, փառավորեցին բոլորի Աստծուն, միշտ հրաշքներ ու սքանչելիքներ գործողին։


ԻԲ. Անհնարին է նկարագրել, թե աստվածային պատկերի և հարգո նամակի քաղաքի միջով տարվելու ժամանակ ինչքա՜ն ուրախության արցունք թափվեց, ինչպես մարդիկ աղաչեցին Տիրոջ իրենց միջնորդը լինել, ինչքա՜ն գոհանամ ասացին. անսովոր երևույթներին լավ է ականատես լինել, քան թե ականջալուր, քանզի նրանց համբավը սովորաբար ավելի ուշ է տեղ հասնում։ Թափորի կազմակերպիչները հասան Ավգուստեոնի[33] առջև գտնվող հրապարակը և պողոտայից մի փոքր ձախ թեքվելով, հասան Աստվածային իմաստության[34] անվանը նվիրված տաճարը և աղոթարանի ադիտոնում[35] ամփոփեցին պատվական պատկերն ու նամակը։

Լ. Այդտեղ եկեղեցու ողջ կազմը երկրպագեց, պետք եղած պատիվը ցուցաբերեց, որից հետո Թափորի կազմակերպիչները սուրբ բեռան հետ միասին նորից դուրս եկան և ուղղվեցին դեպի կայսերական պալատը. նրանք Խրիսոտրիկլինի[36], որտեղ սովորաբար տեղի են ունենում ամենակարևոր ընդունելությունները, կայսերական գահի վրա ամփոփեցին աստվածային պատկերը։ Այդպիսով արքայական գահը սրբագործվեց, այդ [գահի] վրա բազմող ճշմարիտ հավատացյալներին առատորեն փոխանցվեց արդարություն ու բարություն։ Ընդունված կարգի համաձայն [Աստծուն] երկար պաղատելուց հետո, այնտեղից նորից վերցվեց աստվածային պատկերը և ամփոփվեց վերոհիշյալ Փարոսի տաճարում՝ նրա արևելյան կողմի աջ մասում՝ ի փառս հավատացյալների, ի պահպանումն կայսերաց, ի անվտանգություն ամենայն քաղաքի և քրիստոնյաների պետության։

ԼԱ. Ո՜վ աստվածային նմանություն՝ Հոր հար և նման նմանության։ Ո՜վ կերպար՝ Հայրական ինքնության կերպարի։ Ո՜վ դու Քրիստոսի սրբազան և անգին դրոշմ, մեր աստուծո նախատիպ գեղեցկություն (ես, հավատացյալս, դիմում եմ քեզ որպես կենդանի էակի), դու միշտ փրկիր և պահպանիր մեր բարեպաշտ և բարի կայսեր, քո վերադարձը փառավոր կերպով նշողին, որին ներկայությամբ քո բարձրացրիր հայրական և պապենական գահին։ Պահպանի՛ր նրա գավակին[37]՝ ի հարատևումն տոհմի և ի հաստատություն գայիսոնի։ Պետությանը խաղաղություն պարգևիր, քաղաքների այս Թագուհուն անառիկ պահիր։ Թո՛ւյլ տուր մեզ, քո նախատիպին՝ մեր աստված Քրիստոսին հաճոյացողներիս ընդունվել նրա երկնային Թագավորությանը, մեզ, ովքեր փառավորում ենք և գովերգում նրան, քանզի նրա՛ն է վայել փառքը և երկրպագությունը՝ հավիտյանս հավիտենից։ Ամեն։

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

APPENDIX



ՀԱՎԵԼՎԱԾ Ա

«ՎԱՍԻԼԻԿԱՆԵՐԻ» 56–ՐԴ ԳՐՔԻ, 8–ՐԴ ՏԻՏՂՈՍԻ § 11–Ը «ՀԱՅԿԱԿԱՆ» ՀԱՐԿԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ[1]

«Անաստասիոս կայսրը պրետորյան էպարխոս Անթեմիոսին

...Պետական բոլոր հարկերը պետք է գանձվեն երեք նվագով, այդ թվում և հայկական կոչվածները, այն է հունվարին, մայիսին և տարեվերջին[2], ընդ որում հարկերի նվագների չափերը բաժանվում են երեք հավասար մասերի. հարկատուների նկատմամբ իրավունք չկա որևէ նորամուծություն կատարելու։ Բայց քանի որ մինչև օրս հայկական հարկերը[3] երկու նվագով էին գանձվում, ապա հարկատուները իրենց հայեցողությամբ եթե նախընտրում են հին կարգը պահպանել, թող կես առ կես երկու նվագով վճարեն, ընդ որում երկրորդ նվագը պետք է վճարեն հաջորդ տարվա սեպտեմբեր ամսին։ Իսկ եթե կամենում են հայկական հարկերը երեք նվագով վճարել, [երրորդ նվագը] թող հաջորդ տարվա սեպտեմբեր ամսին տան՝ հետաձգման կարգով»։

ՀԱՎԵԼՎԱԾ Բ

«ՎԱՍԻԼԻԿԱՆԵՐԻ ՄԵԾ ՍԻՆՈՊՍԻՍԸ»[4] ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԳԱՆՁՎԵԼԻՔ ՀԱՐԿԵՐԻ ՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍԿԻԶԲԸ Ω

Ա

Հորիարեների մասին, որ հյուպոդեկտեներ էլ են կոչվում[5], ինչպես և հացի շտեմարանների և այնտեղ ամբարված մթերքների մասին

1. (Ընթերցի՛ր «Վասիլիկաների» 56-րդ գրքի, 9-րդ տիտղոսի, առաջին, երկրորդ և երրորդ գլուխները. ինչպես և 11-րդ տիտ-

ղոսի յոթերորդ գլուխը[6]): Օրենքը կարգադրում է, որ կշռաքարերը լինեն պղնձե կամ քարե, որպեսզի յուրաքանչյուր հարկատու վճարի ճշգրիտ չափով։ Հյուպոդեկտները թող վերցնեն ցորենի հիսուներորդ մասը, գարու՝ քառասուներորդ մասը, գինու և ճարպի՝ քսաներորդ մասը։ Իսկ Հայաստանի հյուպոդեկտները թող վերցնեն գարու և ցորենի քառասուներորդ մասը, իսկ գինու և ճարպի՝ տասնհինգերորդ մասը։

ՀԱՎԵԼՎԱԾ Գ

«ՎԱՍԻԼԻԿԱՆԵՐԻ» ՓՈՔՐ ՍԻՆՈՊՍԻՍԸ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՊՐՈՂ ՀԱՅԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ[7]

«Հայերը պարտավոր են ամեն ինչում հետևել հռոմայեցիների օրենքներին[8]։ Դրա տակ ենթադրվում է, որ նրանք հետևում են [բացի աշխարհիկ օրենքներից], նաև դավանաբանական [սահմանումներին]։ Եթե չեն ուզում, ապա եկեղեցական հարցերում թող գործեն իրենց ազգային կարգի համաձայն, իսկ այս օրենքը թող տարածվի նրանց քաղաքացիական դրության վրա միայն»։

ՀԱՎԵԼՎԱԾ Դ

«ՏԵՐ ՆԻԿԵՓՈՐ ԿԱՅՍԵՐ [ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ] ՄԱՍՆԱԿԻ ՊԱՏԵՐԱԶՄ՝ [ՄՂԵԼՈՒ] ՄԱՍԻՆ[10]»

Ներածություն

Մենք ցանկանում ենք հաղորդել մասնակի պատերազմ մղելու եղանակը. թեև ներկայումս դրա, այդ եղանակի, անհրաժեշտությունը արևելյան շրջանների համար չի զգացվում (Քրիստոսը, մեր ճշմարիտ աստվածը, Իսմայելի որդիների[11] մեր դեմ ուղղած ուժն ու կարողությունը շատ է թուլացրել և նրանց արշավանքները սանձել)։ Մենք ցանկացանք այն գրավոր ներկայացնել, որպեսզի ժամանակը մոռացության չտա այն, որպեսզի [ապագա սերունդները] տեղյակ լինեն նրա օգտակարության մասին և երբ

ապագայում քրիստոնյաներին այն պետք գա, և՛ նրան դիմողները, և՛ ողջ ժողովուրդը պատրաստի լավ օգնական ունենան։ Մենք այդ [եղանակի] մասին գիտենք ոչ միայն լսածից։ Մենք փորձով էլ ենք դրան ճանաչել, նախ աշակերտելով նրանց, ովքեր, այսպես ասած, հորինեցին այդ եղանակը, ապա նաև անձամբ օգտագործելով այն՝ մեր ուժերի ներածի չափով փորձառություն ձեռք բերելով։ Այդ եղանակի օգտակարությունն այն է, որ դրան դիմողներր փոքրաթիվ մարտիկներով հսկայական և արժանահիշատակ մեծագործություններ կատարեցին։ Այն, ինչ ի վիճակի չեղավ գլուխ բերել հռոմայեցիների ողջ բանակը, (խոսքը կիլիկեցիների և Խամբդայի[12] հզորության գագաթնակետի ժամանակի մասին է), հաճախ ամենահմուտ զորավարներից մեկը, թշնամիների դեմ խոհեմություն և փորձառություն հանդես բերելով, խելացիորեն տնօրինելով գործերը և դիմելով ռազմավարական արվեստի օգնության, լոկ իր բանակաթեմի զորքով գլուխ բերեց։ Այդ բանն ընդգծելով մենք չենք ուզում ասել, որ փոքրաքանակ [զորքը] ավելի մարտունակ է, քան մեծաքանակը, ոչ էլ այն, թե մենք ռազմավարական արվեստի մյուս բոլոր եղանակներից այս մեկն ենք ամենից բարձր դասում, այլ [սոսկ այն], որ այդ եղանակը ամենահմուտ զորավարների ձեռքում լավագույն օգնականը դարձավ։ [Ուզում ենք ասել], որ այն դեպքում, երբ հնարավորություն չկա թշնամիներին ընդդիմակայել ճակատ առ ճակատ, այդ եղանակին դիմելով կարելի է իրենց էլ, իրենց ենթակա շրջաններն էլ անվնաս պահել։ Ինչքան գիտեմ, այդ [եղանակը], որ միանգամայն մոռացության էր տրվել, կատարելապես կյանքի կոչեց և բարեփոխեց երանելի կեսար Վարդասը[13]։ (Ես չեմ ուզում այստեղ մեկ առ մեկ թվել հին զորավարներին, այլ կանգ եմ առնում միայն բոլորին հայտնի, կամ մեր ժամանակներում ապրածների վրա)։ Նա Տարսոնին[14] հարևան բանակաթեմերի զորավար լինելով, ինչպես նաև Կապադովկիայի և Անատոլիկոնի, բազում վերքեր հասցրեց տարսոնցիների և կիլիկեցիների զորքերին և նրանց դեմ մեծամեծ հաղթանակներ տարավ։ Ահա նրանից սովորելով այդ եղանակը, որոշ փորձ էլ մե՛նք ձեռք բերեցինք։ Պատրիկ Կոստանդինը ևս, մականունը Մելեհինոս[15], որ երկար տարիներ Կապադովկիայի զորավար էր, [այդ եղանակի] օգնությամբ բազում սխրագործություններ կատարեց։ Նրանց թվում և Նիկեփորը[16], երանելի կայսրը, որ հմտորեն օգտվեց այդ [եղանակից]։ Ո՛ր [բանակաթեմի] զորավար էլ նա չնշանակվեց, դիմելով այդ

[եղանակին] գովելի բազում մեծագործություններ կատարեց, այսպես ասած բյուրավոր անգամ թշնամիներին փախուստի մատնեց, ջարդեց նրանց մեծամեծ զորաբանակները։ Նրա սխրագործությունները, որ շատ շատ էին և հանրահայտ, երբ նա դեռ զորավար էր, գրի չառնվեցին մեկ առ մեկ, այդ բանը մարդկանց համար տաղտկալի համարվելու պատճառով, բայց նա սովորած այդ դյուրին եղանակը գրավոր ներկայացրեց՝ հասարակաց օգտի համար, [նշելով], թե ինչպե՞ս պետք է օգտվել նրանից։ Նա ինձ հանձնարարեց[17], ինչքան հնարավոր է ճշգրիտ կերպով այդ մասին գրել և հաղորդել սերունդներին, ոչ միայն այն, ինչ վերաբերում է Արևելքին, այլ և Արևմուտքի համար օգտաբեր դարձածը, որովհետև այնտեղ մենք բազում ռազմավարական հաջողություններ ենք ձեռք բերել, և մեր կարողության չափ՝ փորձառություն։ [Արևմուտքի] մասին ավելի հանգամանորեն մի այլ տեղում կասվի։ Մեր նպատակը այստեղ մյուսի՝ [Արևելքի] վրա կանգ առնելն է։ Ահա նրա պատգամը պահպանելով, աջակցությամբ աստուծո շնորհքի, որ ամեն մի բարի գործին նեցուկ է կանգնում, այսպես եմ սկսում շարադրանքը։

Գլուխ Ա. Վիգլաների[18] մասին, և այն մասին, թե նրանք իրարից ինչքան հեռավորության վրա պետք է գտնվեն

Նրանք, ովքեր ստանձնում են մեծ և սահմանամերձ բանակաթեմերի հոգացողությունը, ովքեր իրենց իրավասության տակ ունեն կլեյսուրներ, պետք է ամեն միջոցով և պատրաստակամությամբ, աչալրջորեն հոգ ու ջանք թափեն, աշխատեն, որպեսզի հռոմեական շրջանները թշնամիների հարձակումներից անվնաս և անվտանգ պահեն՝ ճանապարհներին ամենայն ուշադրությամբ հսկող հաղթանդամ և հմուտ վիգլատորներ[19] նշանակելով։ Եթե կան թշնամիների երկիրը սահմանազատող բարձրաբերձ և դժվարանցանելի լեռներ, ապա պետք է վիգլաները նրանց վրա տեղադրել։ Վիգլատորների կայանները պետք է գտնվեն իրարից երեք կամ չորս մղոն հեռավորության վրա։ Երբ նրանք նկատեն թշնամիների ներխուժում, պետք է փութանակի դիմեն մյուս կայանը և իրենց տեսածը հայտնեն, նրանք էլ իրենց հերթին պետք է շատ շտապ կարգով դիմեն մյուս կայանը։ Ահա այսպես հաջորդականությամբ պետք է իմաց տալ հարթավայրում գտնվող հեծելազորային կայաններին, որոնք տեղեկացնում են զորավարին այլաղ-

գիների հարձակման մասին։ [Վիգլատորները] ճանապարհների վրա են հսկում տասնհինգ օր, իրենց հետ բերելով այդքան օրվա անհրաժեշտ պարեն։ Ապա գալիս են նրանք, ովքեր պետք է առաջիններին փոխարինեն, որոնց արխոնտները պետք է հմտությամբ հավաքագրեն և նախապատրաստեն, ուղարկեն խստորեն սահմանված քանակի համաձայն և ոչ պակաս, չպետք է թույլ տալ, որ նրանք տանը մնան՝ չարաշահության նպատակով։ Վիգլատորների պարտականությունն է իմանալ, թե թշնամիների դեմ որտե՞ղ է հարմար ամրություններ կառուցել, որտե՞ղ կա մշտական ջուր կամ հարթ տեղանք։ Ուրիշները պետք է իմանան, թե որտե՞ղ է ճանապարհը նեղանում, ուրիշները, թե որտե՞ղ կա դժվարանցանելի գետ։ Եթե այդ բոլորի վրա նրանք լավ հսկեն, ապա թշնամիները չեն կարողանա թաքուն կերպով ներխուժել։ Ապա պետք է [վիգլատորներին] վերահսկող վստահելի և փորձառու մարդկանց ուղարկել [ստուգելու], արդյո՞ք լավ և աչալրջությամբ պահպանում են իրենց կայանները, թե ո՛չ։ [Փոխարինվելու] դեպքում վիգլատորները պետք է բոլորը հեռանան, ինչքան որ հաստատվել էին, և ոչ պակաս։ Նրանք պետք չէ լքեն իրենց կայանները, որտեղ որ հաստատվել են ճանապարհներին հսկելու և պահպանելու համար։ Նրանք իրենց կայաններում պետք չէ [որոշված] ժամանակից ավելի մնան, այլ պետք է որ [անընդհատ] փոխեն իրենց տեղերը, ուրիշ տեղ գնան, որովհետև եթե երկար ժամանակ նույն վայրում մնան, կնկատվեն թշնամիների կողմից և հեշտությամբ նրանց ձեռքը կընկնեն։

Գլուխ Բ. Կամինովիգլիաների[20] և հետախույզների մասին

Կամինովիգլատորները անհրաժեշտ են և օգտամատույց։ Զորավարը պետք է շատ մեծ ուշադրություն բևեռի նրանց վրա ։ կամինովիգլիաները հաստատի կարևոր տեղերում, որպեսզի երբ թշնամիների տեղաշարժում լինի, վիգլատորները կամինովիգլիաների միջոցով այդ մասին իմանան, որով և ինքը՝ զորավարը նախօրոք տեղյակ կլինի թշնամիների հարձակման մասին, ապա և այն, թե նրանք ո՞ր ճանապարհով են որոշել շարժվելու։ [Կամինովիգլատորները] և էքսպիլատորները[21] գյուղերի [բնակչությանը] այդ մասին տեղյակ պահելով, վերջինիս հնարավորություն են տալիս իր անասուններով հանդերձ ապաստանելու ամրություններում։ Արմենիական բանակաթեմերի սահմանամերձ

վայրերում, Հ ա յ ե ր ի վիգլաներում, պետք է պահպանել դեռ հնուց հաստատված կարգը, քանի որ Հ ա յ ե ր ը վիգլատորների պարտականությունները վատ են կատարում և անհուսալի։ Այն է, պետք է ընտրել և հավաքագրել բանիմաց մարդկանց, նրանց տալ ամսական ռոճիկ՝ զինվորներին հասանելիքից, որի դիմաց վերջիններս պարտավոր էին վիգլաներում ծառայել։ Նրանց պետք է ամեն ամիս տալ նաև սահմանված ուտեստը։ [Կամինովիգլատորներին] անհրաժեշտ է ամիսը մեկ փոխել և նրանց միջոցով ապահովաբար հսկել թշնամիների ներխուժման ճանապարհները։ Բայց քանի որ նրանք ռոճիկ և ուտեստ ստանալով հանդերձ, լինելով Հ ա յ ե ր, վատ են կատարում վիգլատորների պարտականությունները, պետք է [թշնամու] զորքերի տեղաշարժումների մասին իմանալ այնտեղ ուղարկվող հետախույզներից։ Պետք է քաջարի տրապեզիտներ[22] ընտրել, որոնց Հ ա յ ե ր ը տասինարիոս[23] են անվանում, և ցուցակագրել, նրանց վրա ղեկավար նշանակել այնպիսի մարդկանց, ովքեր աչքի են ընկնում իրենց արիությամբ, ճանապարհների և Ասորիքի շրջանների քաջատեղյակությամբ։ Նրանց պետք է անընդհատ թշնամու երկիրը ուղարկել, որպեսզի քայքայիչ և վնասարարական գործունեություն ծավալեն, եթե այդ բանն իրենց հաջողվի, ապա պետք է նաև թշնամիներից ոմանց բռնեն և զորավարի մոտ բերեն, որպեսզի վերջինս նրանց միջոցով իմանա թշնամիների տեղաշարժումների և ծրագրերի մասին։

Գ լ ո ւ խ է. [Թշնամու] զորքի համակենտրոնացման և տեղաշարժման մասին. առևտրականների մուտքը թույլատրելու և հետախուզելու մասին

[Թշնամու] մեծ զորքերի համակենտրոնացումը սովորաբար տեղի է ունենում օգոստոս ամսին, այն ժամանակ, երբ Եգիպտոսից, Պաղեստինից, Փյունիկեից և Կյուլե Ասորիքից բազմությունները բարձրանում են Կիլիկիա, Անտիոքի շրջանները, Հալեպ և իրենց հետ վերցնելով արաբներին, սեպտեմբեր ամսին ներխուժում են հռոմայեցիների երկիրը։ [Զորավարը], լսելով թշնամիների մեծ զորքի նախապատրաստությունների, տեղաշարժման և համակենտրոնացման մասին, պետք է տրապեզիտներին, այն է, տասինակիաները ավելի հաճախակի ուղարկի, ինչպես նաև հմուտ և վստահելի բաղում հետախույզների։ Պետք է նաև առևտրականների մուտքը թույլատրել, մեր սահմաններին մոտ գտնվող բեր-

դերի ամիրաներին բարեկամություն ձևացնել, նրանց նամակ գրել և նրանց մոտ նվերներով մարդկանց ուղարկել։ Այսպիսի բազմատեսակ աղբյուրներից հնարավոր կլինի ճշգրիտ իմանալ թշնամիների նպատակների և ծրագրերի մասին, իմանալ համակենտրոնացվող զորքերի (ձիավոր թե հետևակ) քանակի մասին, նրանց հրամանատարների մասին, և թե ո՞ր շրջաններն են որոշել ներխուժել։ [Զորավարը] տեղեկանալով [թշնամու] բանակի ճամփա ընկնելու մասին, նրա Ռոմանիա[24] ներխուժելու ճանապարհի մասին, հավաքում է բոլոր զորքերը և ուղարկում սահմանները։ Նա շատ փորձառու մի սուրմարխի, կամ էլ բարձրաստիճան և հեղինակավոր հրամանատարներից որևէ մեկին ընտիր հեծյալներով ուղարկում է ընդդիմակայելու թշնամիներին, նախքան վերջիններս ներխուժեն մեր շրջանները։ Նրանք պետք է հետապնդեն, հետևեն թշնամիներին և նրանց շարժումների մասին զորավարին տեղյակ պահեն։

ՀԱՎԵԼՎԱԾ Ե

ՆԻԿԵՓՈՐ ԿԱՅՍԵՐ ՆՈՎԵԼԼԱՆ ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԱՍՊԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ[25]

(Հրապարակված 963—969 թթ. միջև)


«[Նիկեփորի] նովելլան հայերի և այլոց. ինչպես և մարդասպանության զանցանք թույլ տվողների վերաբերյալ»

Ա. Եթե հայ զինվորներից [ստրատիոտներից] ոմանք, ովքեր հեռացել են [իրենց հողերից] և երեք տարի անցկացրել այլ տեղում, և վերադառնալով, իրենց հողերը գտել են ի պահ տրված ուրիշի, որպես պարգև տրված այլ՝ աչքի ընկած զինվորների [ստրատիոտների], բանակաթեմային և տագմատային արխոնտների, սխրանքներ կատարած զորավարների, կամ էլ [վերջապես] ուրիշ ոմանց՝ հանրօգուտ օգտագործման նպատակներով, հրամայում ենք. երեք տարին լրանալուց հետո վերադարձող հայ զինվորներն իրավունք չունեն պահանջելու և ստանալու այդպիսի հողերը։ Որովհետև եթե հայոց անկայուն (ἄστατον) և անվերջ թափառել սիրող (πολυπλανές) բնավորությունը այսպիսի օրենսդրու-


թյամբ չսանձվի, և նրանք իրավունք ունենան այլ տեղ գնալ ու բնակվել, ապա նորից վերադառնալով, հեշտությամբ տիրել [իրենց] հողերին, ապա ողջ հայությունը կչքանա։ Դրա համար պետք է, ինչպես ասվեց, եթե եռամյա ժամկետը լրացել է և հեռացած հայերը չեն վերադարձել, ապա ինչպես ասվեց, նրանց [հողերը] թող ի պահ տրվեն ուրիշներին, որպես մրցանակ՝ սխրանքներ գործած զինվորներին։ [Բայց] եթե այդպիսի հայկական հողերից, ինչպես գրեցիր, տրվել են Լակապեի[26] կայսերական վանքին, կամ բաժին են հանվել որևէ կուրատորայի[27], կամ էլ տրվել են որևէ մեկին՝ ոչ [նրա] կատարած ինչ-որ հանրօգուտ ծառայության համար, այլ պարզապես ծանոթության կարգով, ապա այդ [հողերի] ժառանգորդները ոչ թե եռամյա, այլ և երեսնամյա ժամկետը լրանալուց առաջ էլ եթե վերադառնան, իրավունք ունեն վերստանալու իրենց սեփականությունը։ Այդ [հողերը], ինչպես ասվեց, ծանոթությամբ ստացողները, եթե նույնիսկ էպոպտների լիբելլներ[28] կամ խրիսովուլլներ ներկայացնեն, հրամայում ենք այդ բոլորը նկատի չառնել։ Մենք կամենում ենք, որ զինվորների ժառանգորդները վերստանան իրենց հողերը։ Եթե ոմանք [այդ հողերի] դիմաց փոխհատուցում են տվել, ապա զինվորները թող ստանան իրենց պատկանողը, իսկ տվողներն էլ թող դատարանով պահանջեն իրենց տվածը։ Եթե [վերջիններս] այդ [հողերի] վրա բարեփոխություններ են կատարել, և նրանց արածը ճոխության ու շքեղության համար չէ, այլ պիտանի է, օրինակի համար այգիների տնկում, աղացների, հարդանոցների, տների և այլնի կառուցում՝ կատարված զինվորներին վաչել պարզությամբ, իրենց հողերը վերստացողները պետք է այդպիսիների համապատասխան արժեքը վճարեն։ Եթե այդ [կառույցները] գեղազարդային և ոչ կիրառական նշանակություն ունեն, ապա կառուցողները նրանց նյութական մասն ստանալով պետք է հեռանան։ Այն հայերը, ովքեր Ասորիք[29] են փախստական եղել, ոչ թե երեք տարին չլրացած, այլ նույնիսկ մեկ տարին լրանալուց առաջ էլ եթե վերադառնան, չեն կարող վերստանալ իրենց հողերը, նրանք պետք է զրկվեն իրենց տիրույթից և դա թող իրենց պատիժը լինի։ Բոլոր դեպքերում այդ վերադարձողների մասին պետք է հոգալ՝ ա՛յլ հողեր տրամադրելով։

Բ. Մարդասպանության զանցանք թույլ տվողներին պարտավոր ես. ոճրագործություն կատարողին օրենքով սահմանված պատիժը տալ, բայց նրա զինվորական հողը չպետք է տաս սպան-

վողի երեխաներին կամ ազգականներին՝ ի փոխհատուցումն։ Վերջիններս պետք է որպես փոխհատուցում ստանան շարժական գույք։ Անշարժ ունեցվածքը պետք է պահպանել զորքն համալրելու համար։ Եթե շարժական գույք չկա, ապա սպանողի ժառանգները պետք է անհրաժեշտ փոխհատուցումը տան սպանվողի ժառանգներին. չպետք է թույլ տալ, որ [սպանողի] զինվորական հողերը օտարացվեն։ Եթե սպանողի ընտանիքի բոլոր անգամներն են մեղսակից ոճրին, նրանցից յուրաքանչյուրը թող կրի օրենքի սահմանած պատիժը, իսկ զինվորական հողերը, ինչպես բազմիցս ասվեց, չպետք է օտարացվեն։ Եթե և ոչ մի ժառանգ չի մնացել, որ կցանկանար զինվորական ծառայության մեջ մըտնել, մի ուրիշը ստանալով այգ հողերը, թող ծառայի [բանակում]»։



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 27

1 Միրանածինի՝ լանգոբարդիային նվիրված այս գլուխը սխալաշատ է ի թերի։ Սխալը նախ և առաջ այն է, որ Միրանածինը լանգոբարդների մուտքը Իտալիա դնում է VIII դարում, Իրենե կայսրուհու ժամանակ (780—802), երբ իրականում նրանք մուտք գործեցին 566 թ.։ Միրանածինը սխալ է նաև լանգոբարդիայի բանակաթեմի կազմավորման տարեթվի հարցում։ Նա ցույց է տալիս, որ լանգոբարդներն իրենց արշավանքի ժամանակ գրավեցին լանգոբարդիայի և Կալաբրիայի բանակաթեմը, երբ իրականում լանգոբարդիան առանձին բանակաթեմ կազմեց Լևոն VI-ի թագավորության ժամանակ։ Այդ բանակաթեմի կազմի մեջ էր մտնում ամբողջ հարավային Իտալիան, բացառությամբ Կալաբրիայի։ Լանգոբարդիայի բանակաթեմի կազմավորումը կապված էր բյուգանդական զորքերի կողմից Բենեվենտոսի գրավման հետ (891)։

2 Բնագրում πριγκιπάτων, որի տակ ենթադրվում են Լանգոբարդիայի Բենեվենտոսի (774 թ. սկսյալ, ապա միացյալ՝ Կապուա-Բենեվենտոսի՝ 899 թ. սկսյալ) և Սալերնոյի (839 թ. սկսյալ) պրինկիպատները։

3 Բնագրում ἀρχοντιῶν, որի տակ ենթադրվում են իրավական տեսակետից Բյուզանդիային ենթակա, բայց իրականում անկախ Ամալֆեի և Գաետայի պետությունները։

4 Նարսեսն այստեղ ցույց է տրված Իրենե կայսրուհու (780—802) և պապ Զաքարիայի (741—752) ժամանակակիցը. մի բան, որ միանգամայն սխալ է։ Նարսեսն, անկասկած, Հուստինիանոս I կայսեր (527—565) հայազգի նշանավոր զորավարն է, Ներքինի գանձապահը։ Նա իսկապես որ հրավիրել էր լանգոբարդներին մուտք գործել Իտալիա։ Միրանածինը սխալմամբ դեպքերը երկու դար առաջ է բերում։ Իրենե կայսրուհու և պապ Զաքարիայի աթոռակալության թվականների հակասությունը ուսումնասիրողները լուծում են հետևյալ կերպ. ենթադրում են, որ խոսքը ոչ թե Լևոն IV-ի (775—780) կին Իրենեի մասին է, այլ Կոստանդին V-ի (741—775)։ Ինչ վերաբերում է պապական պետությանը, ապա այն փաստորեն ստեղծվեց 767 թ.։ Վերոհիշյալի և առասպելի հորինման շրջանակների մասին մանրամասն տես DAI, II, p. 88—89։

5 Այսինքն հունգարացիները։

6 Լանգոբարդները տիրացան Բենեվենտոսին 571 թ., քաղաքի պարիսպները ավերել էր Տոտիլան և դրանք չէին վերակառուցվել։

ԳԼՈՒԽ 43

1 Հունարեն վերնագիրն է. Περὶ τῆς χώρας τοῦ Ταρών։ Տարոնը նախապես պատկանելիս է եղել Մամիկոնյաններին, բայց 8-րդ գարի ընթացքում այն աստիճանաբար անցնում է Բագրատունիների ձեռքը։ Աշոտ Մսակերի մահից հետո (826), արաբներն ստիպվեցին նրա որդիներին բաժանել նրա տիրույթները։ 830 թ. Տարոնի իշխան է դառնում Բագարատը, իսկ նրա եղբայր Սմբատը տիրանում է Արաքսի շուրջ ընկած Բագրատունիների վաղեմի տիրույթներին։ Այս Բագարատը դառնում է Տարոնի Բագրատունյաց իշխանության հիմնադիրը։ 851 թ. Բագարատը գերի է ընկնում արաբների ձեռքը և վախճանվում Բաղդադում։ Բագարատն ունենում է երկու որդի՝ Աշոտին և Դավթին։ Վերջինս հիշվում է նաև «Արքայիկ» ածականով։ Այս Դավիթ-Արքայիկը Միրանածինի հիշած Ἀρκαικαζ-ն է (նրա մասին տե՛ս ստորև, ծանոթ. 8)։ Երկուսն էլ ընկնում են արաբական խալիֆաթի զորավարներից մեկի՝ ազգությամբ թուրք Բուղայի ձեռքը, տարվում Բաղդադ և միայն 858 թ. աղատվում և վերադառնում հայրենիք։ Աշոտը աստիճանաբար հզորանում է, ստանում կուրապաղատի տիտղոս և իշխում Տարոնում մինչև 878 թ.։ Աշոտին հաջորդում է եղբայրը՝ Դավիթ-Արքայիկը, որ յոթ տարի է իշխում (ըստ Ադոնցի՝ տասնյոթ տարի) և վախճանվելով (895) թողնում է մի որդի, որ կոչվում էր Աշոտ։ Դավթի մահից հետո կարճ ժամանակով Տարոնում իշխում է կուրապաղատ Աշոտի որդի Գուրգենը, որից հետո օրինական տերը, Դավթի որդի Աշոտը, որին հաջորդում է Կոստանդին Միրանածինի հիշած Գրիգորիկը՝ Կրիկորիկը։ Մանրամասն տես N. Adontz, Les Taronites, p. 198, 220։ Միրանածինի «Կայսրության կառավարման մասին» աշխատության վերոհիշյալ գլուխը հայերեն է թարգմանել Կ. Տեր-Սահակյանը։ Տե՛ս նրա «Հայերը բյուզանդական մատենագրության մեջ», Բազմավեպ, 1911, էջ 19—23։

2 Միրանածինը նախորդ գլխում խոսել էր Դանուբ գետից հյուսիս ապրող ժողովուրդների մասին, այդ թվում պեչենեգների, խազարների և թուրքական այլ ժողովուրդների, ինչպես նաև Սև ծովի հյուսիսային ափերին բնակվող սլավոնական ժողովուրդների մասին։

3 Բնագրում Κριτορίκιος (նաև Κριτορίκης և Γρηγόριος)։ Գրիգոր անունն է հայկական փաղաքշական -իկ վերջածանցով։ Այս Գրիգորը որդին էր Տարոնի իշխան Աշոտի՝ Բագարատի որդու, Բագրատունիների նախարարական ընտանիքից։ Նա հայոց թագավոր Սմբատ 1-ի քրոջ որդին էր։ Իշխանության գլուխ անցավ 896 թ.։ Այս Գրիգորը հիշատակվում է նաև հայկական աղբյուրներում, Հովհաննես Դրասխանակերտցին 910 թ. տակ հիշատակում է նրան որպես «մեծ, խոհեմ և հանճարեղ իշխանն Հայոց Գրիգոր», որ գնացել էր դեսպանությամբ Ավշինի մոտ բանակցություններ վարելու (Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 233)։ Տե՛ս M. Canard, Histoire, p. 466—67; DAI, II, p. 160։ Ս. Ռենսիմենը ենթադրում է, որ անվան վերջին -իկ փաղաքշական վերջածանցը վկայում է այն մասին, որ հայերը նրան Գրիգորիկ են անվանել նրփոքելու համար մի այլ Գրիգորի հետ, որի մասին մենք տվյալներ չունենք (DAI, II, p. 160)։ Ենթադրությունը քիչ է հա-

վանուսկան, որովհետև Կրիկորիկը Միրանածինի մոտ հիշատակվում է նաև Γρηγόριος Գրիգոր ձևով, բացի այդ, բյուգանդական աղբյուրներում հայկական -իկ վերջածանցով անունների կարելի է շատ հաճախ հանդիպել, օրինակ Սիմբատիկ, Ասոտիկ, Պանգրատուկաս (Բագարատիկ), Կուրտիկ և այլն։ Նախարար Գրիգոր Մամիկոնյանը արաբների դեմ բարձրացված 748 թ. ապստամբության հերոսներից, բյուգանդական աղբյուրներում կոչված է Կրիկորակես (Կրիկորիկ—Գրիգորիկ)։ Տվյալ ժամանակաշրջանում բյուգանդական աղբյուրներում հանդիպող հայկական -իկ վերջածանցով անունների թիվը կարելի է բազմապատկել. Կակիկ, Թոռնիկ, Արքայիկ, Բարուցիկ, Մուսուլակ (Մուշեղիկ)։ Կարելի է հիշատակել և հայերի, որոնց անվան վերջում կցված է հունարեն փաղաքշական վերջածանցը՝ Նիկոլիցես, Թեոփիլիցես, Վոյիդիցես (Եզնիկ) և այլն։ Այս բոլոր դեպքերում իհարկե հազիվ թե ճիշտ կլիներ պնդել, որ վերոհիշյալ անձնավորություններին ինչ-որ նույնանուն այլ անձնավորությունների հետ չշփոթելու համար այդպես կոչած լինեին։ Հարցը փակված պիտի համարել, հիշելով հայոց թագավոր Հովհաննես-Սմբատին։ Սկիլիցեսի մոտ նա կոչվում է Ἰωβανεσίκης (Հովհաննեսիկ)։ Արդ, մենք չենք ունեցել այլ թագավոր Հովհաննես անունով, որի հետ չշփոթելու համար սրա անվանը կցած լինեին -իկ վերջածանցը։ Դա ըստ երևույթին հայկական մի սովորություն է, որ հարատևել է մինչև օրս, երբ 80 տարեկան ծերունին կարող է կոչվել Բենիկ, Ներսիկ, Հովիկ և այլն։ Ինչպես երևում է հայկական անունների հունարեն տառադարձությունից, ժամանակակից արևմտահայերեն արտասանությունը շատ հին պատմություն ունի։ Տվյալ դեպքում Կրիկորիկ Գրիգորի փոխարեն, (ապա և Պանգրատիոս Բագարատի փոխարեն, Կակիկ՝ Գագիկի, Պազուն՝ Բազունի, ինչպես նաև տեղանունների (Παιπερτ-Բայբերդի փոխարեն) վկայում են, որ X դարում, և անկասկած դրանից շատ առաջ (օրինակ Պետրոս Սիկիլիացին IX դարում հիշում է Կրիկորակես) արևմտահայերը ձայնեղ բաղաձայնները արտասանել են խուլ։ Թեև չպետք է ժխտել այն հանգամանքը, որ բյուգանդական հեղինակները ստիպված էին Գագիկը գրել Կակիկ, Բաբերդը Պայպերտ և այլն, այն պարզ պատճառով, որ հունարեն Β արդեն արտասանվում էր Վ, Γ-ն՝ Ղ (կամ Յ), իսկ Δ-ն՝ th (անգլերեն this բառի մեջ)։

4 Բնագրում Ἀμερμουμνῆ. որ արաբերեն Ամիրա ալ-Մումինին-ի հունարեն տառադարձությունն է։ Նշանակում է «հավատացյալների իշխան», որի տակ ենթադրվում է արաբ խալիֆան։ Սամվել Անեցին հիշատակում է այս տիտղոսը «Ամերալմումնի» ձևով։

5 Խոսքը վերն VI Իմաստասերի մասին է (886—912)։

6 Նվերների ուղարկումն ուներ հատուկ նշանակություն։ Տե՛ս DAI, II, p. 160։

7 «Բարբարոս» բառը հնում չուներ այն նշանակությունը, ինչ տալիս ենք դրան այսօր։ «Բարբարոսի» տակ բյուգանդական հեղինակները նկատի ունեն ոչ հույն (կամ հռոմայեցի) ազգաբնակչությանը։ «Բարբարոս» բառը առաջացել է օտարների՝ հույների համար անհասկանալի, կոպիտ թվացող լեզվից։ Այդ մասին շատ հստակ բացատրություն է տալիս Ստրաբոնը (14, 2, 28). „οἶμαι δὲ τὸ βαρβαρον κατ᾽ἀρχὰς ἐκπεφωνῆσθαι οὕτως κατ᾽ὀνοματοποιίαν ἐπὶ τῶν δυσεκφορως καὶ σκληρως καὶ τραχέως λαλούντων".

Ծանոթագրություններ

3 Արքայիկը հատուկ անուն չէ, այլ տիտղոս. Բագարատի որդի Աշոտը և նրա եղբայր Դավիթը իրենց անվանում են Արքաներ։ Տվյալ դեպքում Արքայիկի տակ ըստ J. Markwart. Südarmenien..., S. 324; N. Adontz, Les Taronites, p. 204; Ս. Ռենսիմենը իր հերթին, հենվելով Թովմա Արծրունու մի տվյալի վրա (Գ., 20), որտեղ ասված է, թե Դավիթը ուներ մեկ որդի՝ Աշոտին (որը Հովհաննես Դրասխանակերտցու ասելով (96) իր հոր մահից հետո ամուսնացավ Սմբատ թագավորի եղբայր Շապուհի դստեր հետ), իսկ Միրանածինի տվյալներով Արքայիկն ուներ երկու որդի, գալիս է այն եզրակացության, թե Միրանածինի Արքայիկը դա Աշոտն է, Դավիթ «Արքայիկի» որդին, և այս երկու որդիներն են, որ մանուկ հասակում գերվեցին, երբ իրենց հայրը պայքարում էր իր ժառանգության համար Գրիգորի դեմ։

9 Պատրիկը (հունարենում πατρίκιος) բյուզանդական բարձրագույն աստիճաններից մեկն էր։ 900 թվականին կազմված Ֆիլոթեոսի «Կլետորոլոգիոն»-ում (ոթն, ի միջի այլոց, ամբողջությամբ մտել է Միրանածինի «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին» աշխատության մեջ) պատրիկները գտնվում էին 12-րդ շարքում (նա ընդամենը նշում է 18 աստիճան)։ Պատրիկների աստիճանը հաստատվել է Կոստանդին I կայսեր կողմից և հարատևել է մինչև Բյուզանդական կայսրության վերջը։ IV և V դարերում նա շատ բարձր աստիճան էր՝ հազվադեպ պարգևվող։ Հուստինիանոս I-ը պատրիկի աստիճան շնորհեց բոլոր իլլյուստրիոսներին և նրա ժամանակ պատրիկների թիվը զգալիորեն աճեց։ Նույն կայսրը կարգադրեց, որ հյուպատոս (կոնսուլ) կարող են լինել այն անձնավորությունները, որոնք արդեն պատրիկներ են աստիճանով։ Հուստինիանոս II կայսեր ժամանակ 711 թ. հանդես է գալիս մի հայազգի Վարազբակուր, Օպսիկիոն բանակաթեմի զորավար, որին Թեոփանեսը անվանում է պրոտոպատրիկիոս (πρωτοπατρίκιος) տե՛ս Theoph. Chron. p. 380), որը ցույց է տալիս, որ նա գլխավորում էր այլ պատրիկների։ (Տե՛ս Bury, IAS, p. 27—28)։ Պրոտոպատրիկ աստիճանը հանդիպում է Գրիգոր Մագիստրոսի ՀԸ թղթի վերնագրում («պռաւտևս։պատրիկն» ձևով)։ Տես Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 225։

Ըստ արաբ հեղինակ Իբն Խորդադբեհի «Հռոմայեցւոց (Ալ-Ռում) պատրկաց թիվը միշտ տասներկու է, որոնց վեցը Կոստանդնուպոլիս (ալ-Կոնսթանթինիա), իսկ մնացածները գավառները կենտին։ Այս պատրիկներն են՝ պատրիկ Ամուրիայի, պատրիկ Անկիրիայի, պատրիկ Արմինիակի, պատրիկ Տարակիայի (իմա՛ Թրակիայի), որ Կոստանդնուպոլսո եւևը՝ Բորջանի (իմա Բուլղարիա) քով երկիր մըն է, պատրիկ Սիկիլիո, որ Ափրիկեի դիմաց մեծատարած կղզի ու ընդարձակ թագավորություն մըն է, պատրիկ Սարտանիայի, որ Ծովուն բոլոր կղզյացը վրա կտիրե» (տե՛ս Գնլցեր, Սկզբնավորություն, էջ 39)։ Պատրիկների մասին մանրամասն տես R. Guilland, Les patrices byzantins sous le règne de Constantin VII Porphyrogénète, Studi bizantini e neoellenici, IX, 1957:

10 Հայկական աղբյուրներում հիշատակվում է «պռոտոսպաթար» ձևով (Սմբատ սպարապետի Պատմություն, Մոսկվա, 1856, էջ 36), «պռոտոսպաթար»

(Մատթեոս Ուռհայեցի, էջ 27, 28), նաև «պռոտասպաթար» (Գրիգոր Մագիստրոս, էջ 104)։ Սկզբնական շրջանում պրոտոսպաթար տիտղոսը տրվում էր կայսեր թիկնապահին, հետագայում դարձավ սովորական տիտղոս։ Հիշատակվում է գլխավորապես Մակեդոնական հարստության ժամանակաշրջանում։ Ֆիլոթեոսի ցուցակում պրոտոսպաթարները գտնվում էին 11-րդ շարքում։ Ինչպես վկայում է տիտղոսի առաջին պրոտո- (πρωτο-) նախածանցը, պրոտոսպաթարները կայսերական սպաթարների հրամանատարներն էին։ Հուստինիանոս I կայսեր հայազգի նշանավոր գանձապահ և զորավար Ներսիսի նարսեսը, Թեոփանեսի տվյալների համաձայն (էջ 243) պրոտոսպաթար էր։ Մեզ են հասել VIII—IX-րդ դարերի բազմաթիվ պրոտոսպաթարների կնիքներ։ Տե՛ս Bury, IAS, p. 27։ Պրոտոսպաթարների մասին ավելի մանրամասն տես **R. Guilland,** Etudes sur l'histoire administrative de l'Empire Byzantine, Les titres aulliques des eunuques, Le protospathaire, Byzantion, t. 25—26—27 (1955—1956—1957) fasc. 2, p. 649—695։

11 Բնագրում Ἀσώτιος։ Հայկական Աշոտ անունն է։

12 Իշխանաց իշխան Սմբատը հայոց թագավոր Սմբատ I-ն է։ Բյուզանդական հեղինակները բադրատունյաց, ինչպես նաև Արծրունի թագավորներին անվանում են «իշխանաց իշխան»-ներ։

Բյուզանդական աղբյուրների ἄρχων τῶν ἀρχόντων-ը հայերը թարգմանում էին «շահնշահ»։ Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 19։

13 Բնագրում τῷ Ταρωνίτῃ։ Միրանածինը հաճախ իշխան Գրիգորին անվանում է պարզապես Տարոնացի, առանց անունը տալու։ Տե՛ս նաև նրա «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին» աշխատությունը (սույն գրքի 124-րդ էջում)։

14 Բնագրում Σινοῦτης։ Ն. Ադոնցը ենթադրում է, որ Սինուտեսը անուն չէ, այլ ածական, որ վկայում է տվյալ անձնավորության որտեղից լինելու հանգամանքը։ Նա կարծում է, որ տվյալ անձնավորությունը սյունեցի է (—σύτης կամ — ιτης վերջածանցը հունարենում համապատասխանում է հայկական -եցի-ին)։ Պրոկոպիոս Կեսարացին (Պարսկական պատերազմի մասին, գիրք առաջին, գլուխ 15) հիշատակում է Սունիտներ —Σουνῖται անունով մի ժողովուրդ, որին Ն. Ադոնցը նույնացնում է սյունեցիների հետ և հիշատակում այս Սինուտեսի կապակցությամբ (տե՛ս Adontz, Les Taronites, p. 221, նաև DAI, II p. 162)։ Պրոկոպիոս Կեսարացու սունիտներին նույնացնել սյունեցիների հետ հազիվ թե ճիշտ է։ (Պրոկոպիոս Կեսարացին նրանց համարում է ալաններին հարևան), ավելի շուտ նրանց կարելի է նույնացնել սվանների հետ։ Այդ մասին տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Բյուզանդական աղբյուրներ, Գիրք առաջին, Պրոկոպիոս Կեսարացի, էջ 324։

15 Բնագրում Χαρτουλάριος τοῦ ὄξεως ὀρμου։ Ֆիլոթեոսի ցուցակում վարչական պաշտոնեությունը բաժանված է յոթ դասի. 1. զորավարներ, 2. դոմեստիկոսներ, 3. դատավորներ, 4. սեկրետիկոսներ, 5. դեմոկրատներ, 6. ստրատարխներ և 7. հատուկ աստիճաններ։ Այդ մասին տե՛ս սույն աշխատության 156-րդ էջում։ Սեկրետական դասը առնչություն ուներ

պետական ֆինանսների հետ։ Սեկրետական դասում կային բազմաթիվ պաշտոնյաներ, այդ թվում և վերոհիշյալ օքսեոս դրոմոսի խարտուլարը, որը ենթարկվում էր դրոմոսի լոգոթետին, որը ժամանակակից տերմինով ասած հաղորդակցությունների մինիստրն էր։ Նրան էին ենթարկվում մի չարք պաշտոնյաներ. այն է դրոմոսի պրոտոնոտարները, դրոմոսի խարտուլարները և վերոհիշյալ օքսեոս դրոմոսի խարտուլարը, օքսեոս դրոմոսի լոգոթետը և օքսեոս դրոմոսի կուրատորը։ Վերջիններիս տրամադրության տակ էին գտնվում վերեդոս կոչված արագավազ ձիեր։ Մանրամասն տես Κ. Ἀμάντου, Ταχυδρομικὸν σημείωμα, Ἑλληνικά, ἔτος Η΄. τεῦχος 2, Ἀθῆναι. 1935, σελ. 268—270։

Բյուրին խնդրո առարկա խարտուլարներին նույնացնում է V դարի նշանավոր հուշարձան՝ Notitia dignitatum-ում հիշատակված curiosi per omnes provincias, ինչպես և պատրիկ Պետրոսի հիշատակած χαρτουλάριοι τῶν βαρβάρων-ի հետ, որոնք մասնակցում էին պարսից դեսպանի ընդունելության արարողությանը։ Bury, IAS, p. 92 (Պատրիկ Պետրուի աշխատությունը օգտագործվել է Կոստանդին Միրանածինի կողմից իր «Արարողությունների մասին» աշխատության մեջ, որի թարգմանությունը տե՛ս այս հատորում, էջ 124 և հտ.)։ Կային նաև բանակաթեմների խարտուլարներ. տես սույն աշխատության 148, 156-րդ էջերում)։ Խարտուլար բառը նույնությամբ գործել է գործել հայոց լեզվի մեջ, դառնալով քարտուղար։

16 V դարի սկզբում կուրապաղատների պարտականությունն էր հոգալ կայսերական պալատի նյութական վիճակը։ Հետագայում, մինչև X դարը, կուրապաղատը ոարձավ խոշոր դեմք, և, ինչպես պատրիարք Նիկեփորն է գրում, կուրապաղատը կայսրից հետո երկրորդ մարդն էր, հասկանալի է, եթե գոյություն չոներ Ἀξιωμα-ը (սրա մասին տես ստորև, էջ 256)։ Լևոն VI-ը վրաց թագավոր Ատրներսեհին շնորհեց կուրապաղատի պատիվը։ Ադրանասերի տակ ենթադրվում է վրաց թագավոր Ատրներսեհը, որ աղբյուրներում կոչվում է նաև «մեծ կուրապաղատն վրաց՝ Ատրներսեհ» (Դրասխանակերտցի, էջ 184), կամ «թագաւորն վրաց Ատրներսեհ» (անդ, էջ 197)։

17 Հայ թարգման Թեոդորոսին նույնացնում են 911 թ. Կրետեի դեմ տեղի ունեցած արշավանքի ժամանակ հայկական զորաբանակներ գլխավորած «Բագարատի որդի պրոտոսպաթար Թեոդորոսի» հետ (տե՛ս «Արարողությունների մասին» աշխատության մեջ, սույն հատորի 147-րդ էջում)։ Հովհաննես Դրասխանակերտցին 913—914 թթ. ընթացքում, երբ փախրստական ապաստանել էր Տարոնում, նամակով. դիմել էր բյուգանդական կայսեր՝ օգնություն հայցելով։ Կայսրը բանակցություններ վարելու համար Տարոն է ուղարկում «զոմն Թէոդորոս վասլիկոս» (Դրասխանակերտցի, էջ 284—285), որ հավանաբար նույն այս Թեոդորոսն է։ Տես Adontz, Les Taronites. p. 221—222, DAI, II, p. 162։

18 «Կայսեր պատգամավոր» է թարգմանված բնագրի «վասիլիկոս» (հունարենում βασιλικός։ Տերմինը հանդիպում է նաև հայկական աղբյուրներում, տես նախորդ ծանոթագրությունը) բառը։ Հանդիպում է նաև βασιλικὸς ἀνθρωπος (թագավորական մարդիկ) ձևը։ Սրանք զբաղված էին գլխավորապես երկու հարցով. դիվանագիտությամբ և ներքին անվտանգության

հարցերով և համապատասխանում են նախկին «մագիստրիանոսներին», որոնք ենթարկվում էին Magister officiorum-ին և կոչվում agentes in rebus։ Վերջիններս հարատևել էին մինչև VIII գարը, երբ նրանց անունը այլևս չի հանդիպում աղբյուրներում, իսկ նրանց պարտականությունները կատարում են վերոհիշյալ «վասիլիկոսները»։ Տե՛ս DAI, II, p. 79։ Յահյա Անտիոքացու տվյալներով «վասիլիկոս»-ը հարկային պաշտոնյա է։ Տե՛ս Adontz, Les Taronites, p. 222։

19 Բնագրում Κωνσταντῖνος ὁ τοῦ Λιβός։ ենթադրում են, որ Λιβός-ը Λιψ (հարավային քամի) բառից է և դա այդ Կոստանդնի ածականն է։ Նա այդպես է կոչվել իբր թե այն պատճառով, որ 908 թ. հունիսին, երբ ընդունում էր Լևոն VI կայսեր իր կողմից կառուցված մի տաճարում, փոթորիկ բարձրացավ։ Կոստանդին Լիպսը 913 թ. մասնակցել է Կոստանդին Դուկասի խռովությանը՝ ընդդեմ Նիկոդայոս Միստիկոս պատրիարք-խնամակալի, ներում ստացել Զոե խնամակալ-կայսրուհու կողմից, և ի վերջո սպանվել 917 թ. Աքելոոսի ճակատամարտում։ Կոստանդին Միրանածինը մի տող հետո գրում է, թե այս Կոստանդինը այժմ էլ (այսինքն 952 թ.) «անթիպատ պատրիկ և մեծ հետերիարխ է», որ սխալ է համարվում։ Ռենսիմենը ենթադրում է, որ խոսքը Վարդաս Լիպսի մասին է, Կոստանդին Լիպսի որդու, որ Կեդրենոսի տվյալներով մասնակցել է 961 թ. կազմակերպված մի դավադրության (տե՛ս DAI, II, p. 162—163)։ Ն. Ադոնցը այլ եզրակացության է հանգել։ Նա գտնում է, որ եղել են երկու Կոստանդին Լիպս, որ պատվիրակությամբ Հայաստան եկողը հայրն է՝ 917 թ. սպանված՝ Միրանածինի ժամանակ ապրող Կոստանդին Լիպսի (տե՛ս Adontz, Les Taronites, p. 224)։ Ն. Ադոնցը, ելնելով Վարդաս Լիպսի անունից, գալիս է այն եզրակացության, որ Լիպս ընտանիքը ծագումով հայկական է եղել (տե՛ս նույն տեղում)։

20 Բնագրում δομέστικος τῆς ὑπουργίας։ Նա հավանաբար գտնվում էր ὁ ἐπὶ τῆς τραπέζης-ի (սեղանապետի) իրավասության ներքո և պատասխանատու էր կայսերական սեղանի համար։

21 «Անթիպատ պատրիկ»։ Առաջին անգամ «անթիպատ պատրիկ» տիտղոսը մենք հանդիպում ենք IX դարում, երբ կայսր Թեոփիլոսը անթիպատ պատրիկ է նշանակում հայազգի Ալեքսիոս Մուսելեին (տե՛ս Theoph. Cont. p. 108)։ Ինչպես Բյուրին է կարծում, սա ցույց է տալիս, որ այս ժամանակ այլևս անթիպատոսների աստիճան չկար։ Հայկական աղբյուրներից Ստեփանոս Տարոնացին ցույց է տալիս, որ անթիպատ պատրիկի աստիճան ուներ Շապուհ Բագրատունի պատմիչի հայրը («որպէս ուսուցանէ քեզ պատմութիւնն Շապհոյ Բագրատունւոյ, որդւոյ Աշոտայ անթիպատրիկի» Ասողիկ, էջ 138)։ Հ. Աճառյանը (Արմատական բառարան, հատ. Ա, էջ 328) սխալմամբ հայկական աղբյուրներում հանդիպող «անթիպատրիկ»-ը որ անթիպատ պատրիկի բառերի միացումից է առաջացել կրկնվող մեկ «պատ»-ի կրճատմամբ (միակցված հանդիպում է և հունարենում ἀνθυποπατρικιους, de Cer., p. 485), բացատրում է «փոխ-պատրիկ», ըստ երևույթին «անտիպատրիկ կարդալով (հունարենում ἀντι նշանակում է փոխարեն, ի տեղի), մի տիտղոս, որ գոյություն չի ունեցել։ Անթիպատ պատրիկ տիտղոսը հանդիպում է հայերեն վիմական արձանագրություններում։ Անթիպատ պատրիկ էր Վահրամ Պահլավունին Մարմաշենի կա-

ուցողը (XI դար) և Վեստ Սարգիս Սյունեցին (Վիմական տարեգիր, էջ 16, 17)։ Անթիպատոսը համապատասխանում է հռոմեական շրջանի proconsul-ին։ Ավելի մանրամասն տես Guilland, Proconsul, p. 5—41։

22 Մեծ հետերիարխ էր կոչվում մեծ հետերիայի, օտարերկրացիներից բաղկացած կայսերական թիկնապահ զորքի հրամանատարը։

23 Արաբական տիրապետության ազդեցությամբ հայերի մոտ արաբական անունները բավականին լայն տարածում էին գտել։ Բայց արաբական անուն կրող անձնավորությունները միաժամանակ ունենում էին երկրորդ քրիստոնեական անուններ։ Ապոգանեմը (հունարենում Ἀπογανεμ. արտասանվում էր Ապողանեմ) դա արաբական Աբու Ղանիմն է, որի քրիստոնեական անունը սակայն հայտնի չէ։ Ըստ Ն. Ակինյանի, դա հայկական աղբյուրներում հանդիպող Ապուղամր անունն է։ Տես Ակինյան, Մատ. հետ. հատոր Դ, էջ 77 և հտ.), որը քիչ է հավանական,

24 Խոսքը Խալդիա (Χαλδια) Խաղտիքի բանակաթեմի մասին է։ Բանակաթեմի մասին մանրամասն տե՛ս Միրանածինի «Բանակաթեմերի մասին» աշխատության ութերորդ բաժինը (սույն աշխատության 170-րդ էջում։ Խաղտիքի բանակաթեմը ստեղծվել է VIII դարի երկրորդ կեսին, Արմենիակների բանակաթեմի վերակառուցման կապակցությամբ։ Տարածվում էր Սև Ծովի հարավ-արևելյան ափերին, նախկին Պոդեմոնյան Պոնտոսի շրջաններում։

25 Կրիկորիկի Կոստանդնուպոլիս ժամանելու մասին Միրանածինր, առանց նրա անունը տալու, հիշատակում է նաև իր «Արարողությունների մասին» աշխատության մեջ (տե՛ս սույն աշխատության 123-րդ էջում, որտեղ մանրամասն նկարագրվում է կայսերական ընդունելությունը սուրբ Բարսեղի (հունվարի 1) տոնի օրը, որին մասնակցում էր նաև մագիստրոսը, Տարոնի իշխանը իր շքախմբով)։ Ուսումնասիրողների մի մասը գտնում է, որ խոսքը այս Կրիկորիկի մասին է։ Ընդունելության տարեթվի շուրջը բյուզանդագետների մոտ բավականին սուր վեճեր են գնացել։ Ուսումնասիրողները գտնում են, որ եթե այդ ընդունելությունը տեղի է ունեցել Լևոն VI-ի թագավորության ժամանակ, ապա դա եղած պիտի լինի 900 թվականի հունվարի 1-ին (Միրանածինր նշում է թվական՝ 3-րդ ինդիկտիոն, որ կարող է համապատասխանել 899/900, 914/915, 929/930 թվականներին), իսկ տվյալ 43-րդ գլխում պատմված դեպքերր կարող են տեղի ունեցած լինել 896—899 թթ. ընթացքում։ Ն. Ադոնցը իր մի հոդվածի առաջին մասում ընդունում է, որ տվյալ անձնավորությունը Կրիկորիկն է (տե՛ս Adontz, Les Taronites, p. 138)։ «Արարողությունների մասին» աշխատության մեջ ցույց է տրվում, որ Տարոնի իշխանին ընդունեցին «կայսրերը», հետևաբար հիմքեր չկան «Կայսրության կառավարման մասին» աշխատության տվյալ գլխում հիշատակվող կայսեր տակ անպայման տեսնել Լևոն VI-ին։ Ռենսիմանր գտնում է, որ այդ կայսրերի տակ կարելի է ենթադրել Լևոնին և Ալեքսանդրին, որոնք միասին են թագավորել, ապա նաև Ռոմանոս I-ին, նրա որդիներին և փեսային։ «Արարողությունների մասին» աշխատության մեջ ցույց է տրված, որ Տարոնի իշխանի ընդունելությանր մասնակցել են նաև «բուլղար բարեկամներր», որոնց ավելի հարմար է տեսնել 927 թվականից հետո ընկած տարիներին։ Այդպիսով, Տարոնի իշխանի Կոստանդնուպոլիս ժամանելը ընկնում է 929/930 թթ. և հասկանալի է, չի կարող խոսք լինել Գրիգորի մասին։ Ավելի շուտ դա

վերաբերում է Գրիգորի որդուն՝ Բագարատին (տե՛ս DAI, II, p. 163)։ Ռենսիմենի ենթադրությունը վիճելի է, քանի որ Բագարատին Միրանածինը պատրիկ է անվանում և ոչ մագիստրոս։ A. Vogt-ը ևս գտնում է, որ այդ դեպքը տեղի է ունեցել 929/930 թթ., բայց զտնում է, որ խնդրո առարկա անձնավորությունը Գրիգորն է և որ վերջինս մեռել է 930 թ. հետո, ելնելով այն բանից, որ բոլոր տարոնացիների թվում միայն Գրիգորն է «մագիստրոս» անվանվում։ Տե՛ս Vogt. Commentaire, I, p. 153—154։

26 Մագիստրոսը բյուզանդական բարձրագույն տիտղոսներից մեկն էր։ Դրանից բարձր տիտղոսները շնորհվում էին միայն կայսեր ազգականներին։ VIII դարում և IX գարի առաջին կիսում միաժամանակ մագիստրոս կարող էին լինել երկու հոգուց ոչ ավելի։ Նրանցից մեկը Սենատի նախագահն էր և կոչվում էր պրոտոմագիստրոս (πρωτομάγιστρος). ինչպես և κεφαλὴ τοῦ σεκρέτου։ Կայսեր բացակայության դեպքում այս պրոտոմագիստրոսը պրեպոզիտոսի և պրեֆեկտի հետ կառավարում էին երկիրը։ Միքայել III-րդի ժամանակ է, որ մագիստրոսների թիվն ավելացավ։ Կոստանդին Միրանածինի թագավորության վերջին շրջանում մենք հանդիպում ենք չորս մագիստրոսների, որոնք են՝ Հովհաննես Կուրկուասը, Կումասը, Ռոմանոս Սարոնիտեսը և Ռոմանոս Մուսելեն։ Տե՛ս Bury, IAS, p. 31—32։ «Մագիստրոսը» ամենաբարձր տիտղոսն էր, որ կարող էր շնորհվել օտարերկրացուն։ Բյուզանդական արքունիքն ընդհանրապես խուսափում էր ավելի բարձր տիտղոսներ տալ օտարներին։ Այդ հանդամանքը շատ հետաքրքրքիր ձևով մեկնաբանված է Կեկավմենոսի «Խորհուրդներ կայսեր» աշխատության մեջ (XI դարի երկրորդ կես) և որպես օրինակ է բերված Վասպուրականի Սենեքերիմ թագավորի դեպքը։ «Ես քեզ մի բան էլ եմ ասելու, տեր սուրբ,—գրված է այնտեղ,—Սենեքերիմը, դու գիտես, որ հին թագավորներից էր սերում։ Նա ցանկացավ իր երկիրը տալ ծիրանածին տեր Վասիլ կայսեր, և դառնալ նրա ծառան։ [Վասիլն] ընդունեց պարգևը և նրան մագիստրոսի աստիճանով պատվեց, բայց ոչ ավել, քանի որ [Սենեքերիմը] թագավոր էր՝ հին թագավորներից սերող» (տե՛ս Cecaumeni Strategicon et incerti scriptoris De officiis regiis libellus, ediderunt B. Wassiliewsky—V. Jernstedt, Petropoli, 1896, p. 96)։ Շատ հետաքրքիր կերպով է մեկնաբանում դա նույն հեղինակը և ավելորդ չէ նրա խոսքերը այստեղ մեջբերել։ «Օտարերկրացիներին,—գրում է նա,—եթե նրանք նույնիսկ իրենց երկրի թագավորական զարմից սերեն, բարձր աստիճաններ մի՛ շնորհիր, ոչ էլ վստահիր նրանց բարձր պաշտոններ։ Հակառակ դեպքում դու և՛ քեզ կխայտառակես այդպես անելով և՛ քո հռոմայեցի իշխանավորներին։ Եթե դու, օրինակի համար [կայսրությունը] եկած օտարերկրացուն շնորհես պրիմիկերիոսի կամ զորավարի աստիճան, ապա հռոմայեցի զորավարին ի՞նչ [ավելի] աստիճան կարող ես շնորհել։ Բոլոր դեպքերում նրան թշնամացնելու ես։ Իսկ [օտարերկրացու] երկրում էլ, երբ լսեն, որ իրենց [հայրենակցին] նման աստիճան ու պաշտոն են տվել, բոլորը ծիծաղելու են և ասելու, թե մեզ մոտ նա ոչինչ էր, գնաց Ռոմանիա և արժանացավ նման աստիճանի, պարզ է, որ Ռոմանիայում հարմար մարդ չկար, դրա համար է, որ մեր [հայրենակիցը] այդպես բարձրացավ» (նույն տեղում, էջ 95)։

27 IX—X դարերում զորավարը (ստրատեգոս) բանակաթեմի բացարձակ կառավարիչը չէր, ինչպես VIII դարի սկզբում։ Ստրատեգոսը գլխավորում էր բանակաթեմի զորքերը և իր զինվորների դատավորն էր, բայց քաղաքացիական վարչությունը գտնվում էր իրենից անկախ գտնվող պրետորի կամ բանակաթեմային դատավորի (κριτής) ձեռքում, որին հիշում է և Արիստակես Լաստիվերցին։ Վասիլ Բ-ը Հայաստանում «տիրէ բազում գաւառաց և բերդից և քաղաքաց։ Եւ կացուցանէ ի վերայ նոցա գործակալս և դատաւորս և վերակացուս» (էջ 24)։ Հմմտ. «դատաւորն որ ունէր զհոգս արևելից» (նույն տեղում, էջ 106)։ Երբ Թոնդրակեցիները ջարդեցին Բազմաղբյուրի խաչը և դրությունը Մանանաղիում բարդացավ, «առաքի և թագաւորէն դատաւոր իրաւանց աշխարհին» (նույն տեղում, էջ 130)։ Այդ «դատավորը» պարտավոր էր բանակաթեմում տիրող դրության մասին ուղղակի կայսեր զեկուցել։ Տե՛ս История Византии, том II, стр. 169։ Նա պրովինցիաներում կայսեր ներկայացուցիչն էր, որ նշանակվում էր կայսեր կողմից։ Նա որպես կանոն ունենում էր պատրիկի կամ անթիպատ պատրիկի բարձր աստիճանը։ Ավելի հազվադեպ են դեպքերը, երբ զորավարի պաշտոնը տրվում էր պրոտոսպաթարին։ Զորավարի պարտականությունն էր պաշտպանել նահանգի սահմանները թշնամիների հարձակումներից, ինչպես և ճնշել ներքին խռովություններն ու ապստամբությունները։ Զորավարին էին ենթարկվում մի շարք ավելի ցածր աստիճանավորներ, ինչպես տուրմարխները, դրունգարները, կոմեսները և այլն՝ ռազմական գործերում, և դատավորներ, բանակաթեմի խարտուլարներ, պրոտոմանդատորներ՝ քաղաքական գործերում։ Աղբյուրներում զորավար է անվանվում (գերագույն զորավար) բյուզանդական կայսրը, իսկ բանակաթեմերի մնացած զորավարները այդ դեպքում հանդես են գալիս որպես ենթազորավարներ՝ ὑποστράτηγοι։ Լևոն Զ-ի ռազմագիտական երկում (Տակտիկա) զորավարի (ստրատեգոսի) մասին ասված է. «Ստրատեգոս է կոչվում համայն բանակի գլխավորը և առաջնորդը։ Իսկ հյուպոստրատեգոս (փոխզորավար) է կոչվում նրան անմիջապես ստորադասը։ Հին ժամանակներում ստրատեգոսներին հյուպոստրատեգոս էին կոչում այն պատճառով, որ գլխավոր ստրատեգոս և տեր էր համարվում կայսրը և յուրաքանչյուր բանակաթեմի զորավարը նրա ներկայացուցիչն էր։ Ահա այդ պատճառով ստրատեգոսը հյուպոստրատեգոս էր կոչվում, իսկ ստրատեգոս էր կոչվում գլխավորապես ամենքին գլխավորելու ուղարկվող կայսեր ներկայացուցիչը, որի համար բանակաթեմերի ստրատեգոսները հյուպոստրատեգոսներ էին։ Այժմ հյուպոստրատեգոսներ չկան, այլ այդպես են կոչվում միայն մերարխները»։ Տե՛ս Leonis imperatoris Tactica, col. 701։ Նահանգների զորավարներին նշանակում էր կայսրը երեք կամ չորս տարի ժամկետով, որի ընթացքում նրանք առանց կայսեր կարգադրության իրավունք չունեին հեռանալ նահանգի սահմաններից, բացի, հասկանալի է, պատերազմական դրության պայմաններում՝ արշավանքի ժամանակ։ Նահանգներից բացի, զորավարներ են հիշատակվում առանձին ամրոցներում և քաղաքներում (Մանրամասն տե՛ս Ahrweiler, Recherches, p. 38 sqq.)։ Զորավար աստիճանի հիշատակությունը։ Տարոնի իշխանի կապակցությամբ վկայությունն է այն մասին, որ Ծիրանածինի երկի գրության ժամանակ Տարոնը Բյուզանդիան համարում էր իր անբաժանելի մասը, թեև

այն ձևականորեն գրավվեց բյուզանդացիների կողմից միայն 966/967 թթ. (տե՛ս DAI, II, p. 164)։

28 Բնագրում „οἶκος τοῦ Βαρβάρου", ենթադրում են, որ բարբարոսը՝ Վասիլ պարակիմոմենոսի ածականն էր։ Այս տունը պատկանելիս է եղել Ասպարին, կայսրը տվել է Վասիլ Մակեդոնացուն, ապա Ապոգանեմին և վերջապես Կրիկորիկին։ Տան տեղադրությունը հայտնի չէ։ Տե՛ս Janin, Const. byz. p. 298։ Վասիլ պարակիմոմենոսը Ռոմանոս I կայսեր ապօրինի որդին էր։ Նա ծառայել է հինգ կայսրերի և պարակիմոմենոս էր 945-ից մինչև 959 թ.։ Պաշտոնանկ արվեց 985 թ. Վասիլ II կայսեր կողմից։ Սրրոց վարքում ցույց է տրված, որ գոյություն ուներ նաև Կոստանդին բարբարոսի տուն, որ գտնվում էր Արկադիոսի հրապարակի մոտ (տե՛ս DAI, II, p. 164)։

29 Պարակիմոմենոսի պաշտոնի մասին մանրամասն տես «Վասիլ I կայսեր կենսագրության» 50-րդ ծանոթագրությունը։

30 Տաս լիտր ոսկին հավասար է 720 ոսկեդրամի՝ դահեկանի։ Տաս լիտր միլիարիսիա՝ տաս լիտր արծաթ դրամ։ Մեկ միլիարիսիոնը հավասար էր ոսկեդրամի 1/12 մասին։ Այդքան էր մագիստրոսի ռոճիկը։

Կայսրության՝ օտարերկրացիներին հռոգ (ռոճիկ) տալու սովորությունը գալիս է ավելի վաղ ժամանակներից։ Այդ մասին մի կարևոր վկայություն է պահպանել Սեբեոսը։ Նա ցույց է տալիս, որ բյուզանդական կայսր Կոստանդ II-ը (641—668) իր թագավորության 12-րդ տարին դիմեց հայոց իշխան Թեոդորոս Ռշտունուն, առաջարկելով հրաժարվել արաբների հետ կնքած դաշինքից։ Այդ բանի դիմաց կայսրը հայոց իշխանին խոստանում էր հռոգ (ռոճիկ). «Ես գամ առ ձեզ,—գրում էր կայսրը,—և տամ ձեղ աւգնութիւն հռոճի» (տե՛ս Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն. Երեվան, 1939, էջ 141)։ Միրանածինը հռոգը համարում է պարգև, ընծա (ὄφρον)։ Դ. Արդարյանը Սեբեոսի բնագրին առաջարկում է մի ուղղում. «աւգնութիւն ՀՒ ոգի», որ իբր Կոստանդ կայսրը Թեոդորոս Ռշտունուն խոստանում է 70.000-անոց զորք (տես նրա «Սեբեոսի պատմություն» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965, էջ 149—198)։ VII դար կեսերից սկսած մինչև IX դարի երկրորդ կեսը Բյուզանդական կայսրությունը հայ իշխանների հետ անմիջական շփման մեջ չէր կարող մտնել այն պարզ պատճառով, որ Հայաստանը գտնվում էր արաբական տիրապետության ներքո։ IX դարի վերջերից, երբ այդ հնարավորությունը տրվեց, Կայսրությունը վերահաստատեց հայ իշխաններին հռոգ (ռոճիկ) տալու վաղեմի սովորությունը և հնարավոր է, որ կայսերական ռոճիկ առաջինն ստացավ Տարոնի իշխան Գրիգորը։ Այդ ռոճիկը այնքան մեծ նշանակություն ուներ, որ դրան արժանանալու էին ձգտում ոչ միայն Շիրակի հայ բագրատունիները, այլև վրաց կուրապաղատն ու Վասպուրականի Արծրունիները։

31 Հայերի, ինչպես նաև վրացիների իշխանավորների ձգտումը խնամիական կապեր հաստատելու բյուզանդական արքունիքին մոտիկ կանգնած ընտանիքների հետ բավական տարածված երևույթ էր։ Այդ սովորությունը գալիս է ավելի վաղ ժամանակներից։ Պրոկոպիոս Կեսարացին լազերի թագավոր Գուրազեսի կապակցությամբ գրում է. «Դեռ վաղուց լազերի թագավորները Բյուզանդիոն մարդ էին ուղարկում և կայսեր համաձայնությամբ խնամիանում սենատորների հետ ու իրենց համար կին բերում։

Դուբազեան, անկասկած, հռոմայեցի կնոջ որդի էր» (տե՛ս Պրոկոպիոս Կեսարացի, Գոթական պատերազմի մասին, Գիրք Դ, գլուխ 9)։

32 Խրիսովուլլը (χρυσόβουλλον, χρυσῆ βούλλα), նշանակում է ոսկե կնիք, դրոշմ, որ կախված էր լինում պաշտոնական գրության ծայրից։ Հաստեատիրոջ գրված դիրքի, աստիճանի համաձայն, այն լինում էր մեկից մինչև չորս սոլիդ կշիռ ունեցող (այդ մասին տե՛ս «Բյուգանդական արքունիքի արարողությունների մասին» բաժնում, էջ 150)։ Խրիսովուլլ միաժամանակ նշանակում էր կայսեր հրովարտակը, կարգադրությունը, իր կողմից ստորագրված և կնքված։ Խրիսովուլլը հայկական աղբյուրներում կոչվում է «ոսկե մատանի» (որտեղ մատանին «կնիք» նշանակություն ունի) և նրա հիշատակությանն ենք հանդիպում վիմական արձանագրություններում։ Այսպես, Անիի կառավարիչ Ահարոն Բուլղարը 1056 թ. Անի է բերում կայսրուհու մի հրամանը. որոշ հարկերի վերացման մասին, որը հաստատված էր «ոսկե մատանեաւ» (տե՛ս Դիվան հայ վիմագրության, հատ. Ա, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ 38)։

Խրիսովուլլը «ոսկե մատանի» է կոչված նաև Գրիգոր Մագիստրոսի Կեչառիսի տաճարի պատի վրա թողած արձանագրության մեջ։ Տե՛ս Կ. Կոստանյանց. Վիմական տարեգիր, էջ 23։ Գրիգոր Մագիստրոսի թղթերում (էջ 104) խրիսովուլլը կոչված է «կնիք ոսկեղէն» ինչպես և «ոսկե մատանի» (նույն տեղում)։ Խրիսովուլլ բառը Չմշկիկի՝ հայոց Աշոտ Գ թագավորին ուղղած նամակում չի թարգմանված. «բայց խոսովօլօնն, զոր յուղարկեցաք. տուր տանել առ զօրավարն մեր»։ (Բնագրում գրիչների կողմից թույլ է տրված աղավաղում և «խոսովօլօնն» բառի առաջին երկու տառերը՝ խո ընդունվելով որպես թվական՝ քառասուն հազար, ենթադրվել էր, որ խոսքը քառասուն հազար օվոլոսների մասին է։ Սխալը շատ սրամտորեն ուղղեց Ն. Ադոնցը։ Տե՛ս նրա Notes armeno-byzantines, *II*, La lettre de Tzimisces au roi Ashot (Ašot), Etudes arméno-byzantines Lisbonne, 1965, p. 145։ Ինչպես հայտնի է, Չմշկիկի թուղթը պահպանվել է Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» մեջ։ Տե՛ս էջ 27։

Կնիքները լինում էին նաև արճիճից և կոչվում մոլիվդովուլներ (μολυβδόβουλλον)։ Երբ Միրանածինը ընդգծում է, որ «Բարբարոսի տուներ» տրվեց Ապոդանեմին «առանց խրիսովուլլի» նշանակում է, որ կայսրը իրավունք ուներ ցանկացած ժամանակ այն ետ վերցնել, մի բան, որ նա չէր կարող անել, եթե տունը տրված լիներ խրիսովուլլով (տե՛ս նաև Adontz, Notes *I*, p. 147)։

33 Ռոմանոս I Լեկապենոս (919—944), Կոստանդին Միրանածինի աները։

34 Բնագրում Κελτζηνῆ, խոսքը Եկեղյաց գավառի մասին է, որ հունական աղբյուրներում հանդես է գալիս նաև Ἀκιλισηνή ձևով։ Կելցենեն միջագետք բանակաթեմի մի տուրման էր, որի կենտրոնն էր ժամանակակից Երզնկան։

35 Պրոաստիոն (հունարենում προάστειον, հանդիպում է նաև հայկական սկզբնաղբյուրներում պռաստ, պռաստին և պռաստնոց ձևով) հին հունարենում նշանակել է քաղաքի արվարձան։ Միջնադարում դա կալված էր, որտեղ որպես կանոն բնակվում էին ոչ թե վերջինիս տերերը, այլ նրանց ենթակա մարդիկ՝ ստրուկներ, վարձակալողներ, և ուրիշներ։ Պրոաստիոնն հաճախ ունենում էր հսկայական չափեր։ Ավելի մանրամասն տե՛ս Г. А. Острогорский, Византийский податной устав, Сборник статей,

посвященных памяти Н. П. Кондакова, Прага, 1926, стр. 121: *Համմտ. նաև Հ. Բարթիկյան, Եվստաթիոս Բոյիլասի կտակը (1059), որպես Հայաստանի և Վրաստանի պատմության կարևոր սկզբնաղբյուր, Բանբեր Մատենադարանի, հտ. 5, 1960, էջ 421, ծանոթ. 19։* Նաև **А. П.** Каджан, Формирование феодального поместья в Византии X в., Византийский Временник, т. XI, 1956, стр. 100—101:

36 *Տաճատին հիշատակում է Թեոփանեսի Շարունակողը, ցույց տալով, որ նա մի մեծահարուստ հայ էր (*Ταζάτης *(տպված է* Ταζάκης*)* Ἀρμενιστὶ πλούσιος πάνυ*), որ միացավ իր ազգակից Վարդաս Բոյիլասին, խաղտիք բանակաթեմի զորավարին 923 թ. բարձրացրած ապստամբությանը ընդդեմ Ռոմանոս I կայսեր։ Ապստամբները գրավում են Բաբերդը։ Ապստամբությունը ճնշում է մի այլ հայ՝ սխոլերի գոմեստիկոս Հովհաննես Կուրկուասը, որը կուրացնում է ապստամբության պարագլուխներին և բռնագրավում նրանց ունեցվածքը։ Տաճատը ամրացած էր մի շատ անառիկ բերդում, բայց անձեռնմխելիության մասին երաշխիքներ ստանալով, հանձնվում է, գնում Կոստանդնուպոլիս և Թեոփանեսի Շարունակողի ասելով մանգլավիտ դառնում Մանգանայում։ Բայց երբ փորձում է փախուստի դիմել, ձերբակալվում է և կուրացվում (տե՛ս* Theoph. Cont., p. *404)։ Ն. Ադոնցը ապստամբությունը թվագրում է 921 թ., Կուրկուասի դեպի Դվին կատարած արշավանքի թվականով։ Ռենսիմենը հակադրվում է Ադոնցին, գրելով, որ Կուրկուասը 922 թ. առաջ հավանաբար գոմեստիկոս չէր։ Ենթադրվում է, որ խոսքը վերոհիշյալ Տաճատի բռնագրավված կալվածների մասին է (տե՛ս* DAI, *II*, p. *164*; **Adontz**, Les Taronites, p. *217)։*

37 *Տե՛ս 13 ծանոթագրություն։*

38 *Թեոփանեսի Շարունակողը (էջ 372, 384) հիշատակում է ոմն Գրիգորաս Իբերիցեսի, Կոնստանդին Դուկասի աներոջ, որ 913 թ. ապստամբություն բարձրացրեց։ Ն. Ադոնցը այս Գրիգորաս Իբերիցեսին նույնացնում է Միրանածինի հիշատակած Գրիգորասի հետ (տես* Adontz, Les Taronites, p. *219)։ Ռենսիմենը առաջ քաշելով այն փաստը, որ Իբերիցեսը այնուհետև վանական է դառնում, և որ փաստ չունենք, որ նա Կելցենեում կալվածներ է ունեցել, այդ երկու անձնավորությունների նույնացումը համարում է կասկածելի (տե՛ս* DAI, *II*, p. *164), մի բան, որ իհարկե ընդունել չի կարելի։ Իբերիցեսը կարող էր որպես պատիժ, բռնի վանական դարձվել։ Ինչ վերաբերում է նրա ազգությանը, ապա, ըստ Ն. Ադոնցի, նա վրացադավան հայ էր և «Իբերիցես» (միջնադարում արտասանվում էր Իվիրիցես) հայերեն «իբերացի-վրացի» բառի հունարեն գրությունն է (տե՛ս* Adontz, Les Taronites, p. *219)։*

39 *Բնագրում* Βασπαρακᾶ*։ Խոսքը Վասպուրականի մասին է և Վասպուրականի Գագիկ Արծրունի թագավորի (908—943)։ Բյուզանդական աղբյուրներում Վասպուրականի գրության ձևերը տարբեր են։* Βασπρακανια. Βασπρακᾶ, Ἀσπρακανία*։ Գագիկին Միրանածինն այստեղ անվանում է ἄρχων-իշխանու Իր «Արարողությունների մասին» աշխատության մեջ նրան անվանելով ἄρχων ավելացնում է, որ նա այժմ, այսինքն վերոհիշյալ գրքի գրության ժամանակ, «իշխանաց իշխան» էր, այն է թագավոր (տե՛ս սույն աշխատության 151 էջում)։*

40 Իբերիայի կուրապաղատի և ընդհանրապես վրացիների մասին Միրանածինը խոսում է «Կայսրության կառավարման մասին» աշխատության 45 և 46 գլուխներում։

41 Խոսքը հայոց թագավոր Աշոտ Երկաթի մասին է (913—929)։ Միրանածինը նրան Ասոտիկ է անվանում։ Աշոտ Երկաթի մասին հատուկ ուսումնասիրություն է գրել Ն. Ադոնցը։ Ašot Erkat ou de Fer, roi d' Arménie de 913 à 929, EAB, p. 265—283։

42 Բնագրում παχτων։ Նշանակում է նաև հարկ։ Հայկական սկզբնաղբյուրներում այդ բառը հանդիպում է ընդամենը մեկ անգամ՝ Ահարոն Մագիստրոսի 1056/1057 թ. թողած արձանագրության մեջ, որ փորագրվել է Անիի մայր տաճարի պատին։ Ավելի մանրամասն այդ մասին տե՛ս Հ. Բարթիկյան. Ահարոն Մագիստրոսի արձանագրության մեջ հիշատակվող հարկերի մասին, Պատմա-բանասիրական հանդես, 1959, № 4։

43 Բնագրում προϊκα։ Նշանակում է նաև նվեր, ընծա։

44 Կրինիտեսների՝ ծագումով հայ ընտանիքը կարևոր դեր է խաղացել Բյուգանդական կայսրության մեջ։ Ն. Ադոնցի ենթադրությամբ նրանց անունը կապված է Դեգիկում (Չորրորդ Հայք) գտնվող Կոնի վայրի անվան հետ։ Տե՛ս Adontz, Les Taronites, p. 229։

«Կրինիտես» մականվան վերաբերյալ կարելի է առաջ քաշել գուցե ավելի հավանական մի ենթադրություն։ Կրինիտեսն արդյոք հունարեն թարգմանությունը չէ՞ «Ակնցի»-ի. չէ՞ որ հունարեն κρήνη (կրենե, արտասանվում է կրինի) նշանակում է աղբյուր, ակն, իսկ կրինիտես՝ ակնցի։ Եթե ընդունենք Ակնի կառուցման մասին պատմագրության մեջ տիրապետող դարձած թվագրումը՝ Վասպուրականի թագավոր Սենեքերիմի գադթը (1021), պարզ է, որ մեր ենթադրությունը անհիմն կլիներ, քանի որ Կրինիտեսները հիշվում են դրանից շատ առաջ։ Բայց սենկասկած Ակնի կառուցման մասին այդ թվագրումը ճիշտ չէ, Ակնը 1021 թ. գաղթից առաջ էլ գոյություն է ունեցել և այդ բանը հաստատում է բյուզանդական «Դիգենիս Ակրիտաս» էպոսը։ Այդ էպոսի տվյալների համաձայն էպիկական Կարոեսը (այն է պատմական Կարբեասը, պավլիկյան առաջնորդը, որ մեռել է 863 թ.) ի թիվս այլ քաղաքների, ավերել է նաև Ἀκινᾶ-ն, որ ոչ այլ ինչ է, քան Ակնը, ժամանակակից էգինը։ Տե՛ս H. Grégoire, Ὁ Διγενὴς Ἀκρίτας, Ἡ βυζαντινὴ ἐποποιία στὴν ἱστορία καὶ στὴ ποίηση New York, 1942, σελ. 54։

Կրինիտես ազգանունը կրող անձնավորությունը առաջին անգամ հանդիպում է IX դարում։ Դա նշանավոր Ալեքսիոս-Մուսելեն է (Մուշեղ), Թեոփիլոս կայսեր փեսան և կայսրության կեսարը։ Թեոփանեսի Շարունակողը պարզ վկայում է, որ նա հայ էր. ὁ δ'ἀνὴρ τῆς τῶν Κρηνιτῶν κατήγετο γενεᾶς, χώρας τῆς τῶν Ἀρμενίων, Ἀλέξιος τοὔνομα, Μουσελὲ τὴν ἐπωνυμίαν. Theoph. Cont. p. 107։ Այդ նույն անունով (Ալեքսիոս Մուսելես) VIII—X դարերում հիշատակվում են չորս հոգի, իսկ Կրինիտես մականունով հիշվում են հինգ հոգի ևս՝ Պրոկոպիոս, Գևորգ, Արոտրաս, Արևսալոմ և Պասխալիոս Կրինիտներ։ 1065 թ. հիշատակվում է մի վերջին Կրինիտես՝ Մելիտենեի կատեպանը (մանրամասն տե՛ս Adontz. Les Taronites, p. 225—229)։ Հետաքրքրական է նշել, որ Կոստանդնու-

պոլսի պատրիարք Նսայասի (1323—1334) երկու նամակներում ուղղված Կիլիկիայի հայոց թագավորին և կաթողիկոսին (Լևոն V և Կոստանդին IV Համբրոնացի) նշված է, որ վերջիններիս հետ բանակցություններ վարելու համար Բյուզանդական կառավարությունն ուղարկել է Միքայել Կալլիկրինիտեսին, որը, հնարավոր է, պատկանում էր Կրինիտեսների ընտանիքին (տե՛ս Հ. Բարթիկյան, Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, Բանբեր Մատենադարանի, հատ. 4, 1958, էջ 293)։

45 Բնագրում Παχράτιος։ Բագարատ անվան բյուզանդական արտահայտությունը։

46 Այս Թեոփիլակտոսի մասին տե՛ս N. Adontz, Les Taronites, p. 229—230։

47 Բնագրում κομμερκιάριος, այսինքն կոմմերկիոնի (κομμέρκιον կամ κομμερκίον. լատ. commercium) պաշտոնյան։ Կոմմերկիոն էր կոչվում մաքսատունը, ինչպես նաև մաքսը։ Բյուզանդացիների մոտ կային չորս կարգի «կոմմերկիոն». «կայսերական», այսինքն պետական, «բանակաթեմային», այսինքն բանակաթեմերին պատկանող, նահանգային և քաղաքային։ Աղբյուրներում հիշատակվում են «ընդհանուր», «կայսերական», «մեծ» կոմմերկիարիոսներ, որոնք Հուստինիանոս կայսեր ժամանակ ունենում էին ապոհյուպատոսի կամ ապոէպարքոսի տիտղոսներ։ Նրանք որպես կանոն հաստատվում էին նավահանգիստներում և գլխավոր առևտրական ճանապարհների վրա, ապա և պետական պահեստներում, որտեղ վաճառելու կամ արտահանելու նպատակով բերվում էին գլխավորապես գյուղատնտեսական մթերքներ՝ նահանգներից կամ բանակաթեմերից։ «Կոմմերկիոն» բառը մինչև օրս էլ պահպանվել է նույնիսկ թուրքերենում՝ գոմրյուկ ձևով։ Բյուզանդական մաքսերի և մաքսատների մասին մանրամասն տե՛ս վերջին մասնագիտական ուսումնասիրությունը. H. Antoniadis—Bibicou, Recherches sur les douanes à Byzance, L' "octava", le „kommerkion" et les commerciaires, Paris, 1963։

48 Պսամաթիան կամ Պսամաթիան Կոստանդնուպոլսի մի թաղամասն էր։ Գտնվում էր քաղաքի արևմտյան մասում, Մարմարայի ափին, Ոսկե դռների մոտ։ Այժմ կոչվում է Սամաթիա (տե՛ս Janin. Const. byz. p. 384)։

49 Բնագրում Οὐλνούτιν։ Համապատասխանում է հայկական Ողնուտին կամ Ողնուտին, Տարոնի հյուսիս-արևմուտքում։

ԳԼՈՒԽ 44

1 Միրանածինի «Կայսրության կառավարման մասին» աշխատության 44-րդ գլուխը մասնավոր քննության է ենթարկված հետևյալ ուսումնասիրություններում. Markwart, Südarmenien..., S. 299—306, 505—508, Canard, Les Hamdanides, p. 80 sqq.

2 Բնագրում՝ Περὶ τῆς χώρας τῆς Ἀπαχουνῆς։ Միրանածինը այստեղ կանգ է առնում Ապահունիքում հաստատված և այնտեղ տիրող կայսիկ ամիրաների պատմության վրա։ Կայսիկները որպես Ապահունիքի տեր են հիշ-

վում IX դարի 60-ական թվականներից, թեև այնտեղ էին գաղթել VIII դարի վերջին՝ Հարուն ալ-Ռաշիդի խալիֆայության օրոք։ Տե՛ս Տեր-Ղևոնդյան, Ամիրայությունները, էջ 96 և հտ.։

3 Բնագրում՝ Մանձկերտ։ Խոսքը Մանազկերտի մասին է։ Ավելի հին շրջանում կոչվում էր Մանավաղակերտ, այժմ Մելազգերդ։ Մանազկերտում էր հաստատված Սուլայմ ցեղին պատկանող ամիրայական տունը, որ հայկական աղբյուրներում կոչվում է Կայսիկներ։ Մանազկերտը Ապահունիքի կենտրոնն էր։ Տե՛ս նախորդ ծանոթագրությունը։

4 Բնագրում՝ Պերքրի։ Հայոց Բերկրին է, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում գտնվում էր արաբական Ուքմանիկ ամիրաների տիրապետության ներքո։ Արաբական տարրն այստեղ բավական ուժեղ էր նույնիսկ IX դարի 30-ական թվականներին, երբ նրանք կատաղի դիմադրություն ցուցաբերեցին Բյուզանդիայի դեմ մղվող պայքարում։ Տե՛ս Տեր-Ղևոնդյան, Ամիրայությունները, էջ 201—202։

5 Բնագրում τοῦ Χλιάτ καὶ τοῦ Χαλιάτ (պիտի լինի τοῦ Χλιάτ τοῦ καὶ Χαλιάτ) Միրանածինը տալիս է Խլաթի հայկական (Խլաթ) և արաբական՝ (Ախլաթ) անվանումները։ Խլաթը ևս պատկանում էր կայսիկներին։ Տե՛ս Տեր-Ղևոնդյան, Ամիրայությունները, էջ 104։

6 Բնագրում՝ ''Արζες։ Հայոց Արճեշն է, Տուրուբերանի Ազիովիտ գավառում։ Արճեշի անունով Վանա լիճը երբեմն կոչվել է Արճեշի ծով (տե՛ս Երեմյան, Հայաստանը, էջ 39)։ Արճեշը խնդրո առարկա ժամանակաշրջանում գտնվում էր կայսիկների ձեռքում (տե՛ս Տեր-Ղևոնդյան, Ամիրայությունները, էջ 144)։

7 Բնագրում Τιβι հաջորդ 45-րդ գլխում Τιβιον։ Դվին քաղաքն է։ Պրոկոպիոս Կեսարացու մոտ այն անվանված է Դուվիոս (Δουβιος)։ Տե՛ս «Պարսկական պատերազմի մասին», Գիրք Բ, գլ. 30։

8 Բնագրում Χέρτ։ Պարսկահայք նահանգի IX գավառ՝ Հերը, կենտրոնը՝ Հերը, այժմ Խոյ։

9 Բնագրում Σαλαμας (Սալմաստ)։ Պարսկահայքի VIII գավառ Ջարեհավանը։ Տե՛ս Երեմյան, Հայաստանը, էջ 52։

10 Բնագրում Τζερματζου։ Նույնանում է Վանա լճի հարավում գտնվող Ջերմաձորի հետ՝ Մոկքում (Honigmann, Die Ostgrenze, S. 147, 197)։ Մարկվարտը (Südarmenien, S. 305), Կանարը (Les Hamdanides, p. 81, նույնի Histoire, p. 475, n. 230), և Ռենսիմենը (DAI, II, p. 168), ենթադրում են, որ խոսքը Սերմանցի մասին է՝ Հարքի հյուսիս-արևմուտքում։ Համմտ. Տեր-Ղևոնդյան, Ամիրայությունները, էջ 144։

11 Հայոց թագավոր Աշոտ I Բագրատունին (886—890)։

12 Բնագրում 'Αποσατα։ Ոստիկան Յուսուֆ արու Կասիմ իրն արու Սաջը (901—919)։

13 «Իշխանաց իշխան» Սմբատը հայոց Սմբատ I թագավորն է, որ Յուսուֆի հրամանով «յետ... անհնարին և դառն կտտանացն և խոշտանգանաց և քրտնահար աշխատութեանց՝ հատանէին սրով զգլուխ նորա» (Դրասխանակերտցի, էջ 240)։

14 Բնագրում 'Ασωτιος։ Աշոտ II Երկաթ թագավոր Հայոց (913—929)։ Նախորդ գլխում Միրանածինը նրան անվանում է Աշոտիկ ('Ασωτικιος)։

15 *Բնագրում* Ἀπασάκιος, *ինչպես ցույց է տալիս Բանդուրիոսը Միրանածինի սույն աշխատության ձեռագրություններում (տե՛ս Միրանածինի երկերի Բոննյան հրատարակությունը, էջ 372) ձեռագրերում հանդիպում է* Ἀπασίκιος — *Արասիկ գրության ձևը, որն ավելի ճիշտ է։ Խոսքը Հայոց թագավոր Արասի մասին է, Սմբատ II-ի որդու և Աշոտ II Երկաթի եղբոր։ Հայոց թագավոր դարձավ Աշոտ II-ի մահից հետո (929—953)։ Նա Բագրատունիների մայրաքաղաքը Երազգավորսից տեղափոխեց Կարս։ Միրանածինը նրան մագիստրոս է անվանում և երբեք նրան «իշխանաց իշխան» (այսինքն թագավոր) չի ճանաչել։ Տվյալ ժամանակամիջոցում «իշխանաց իշխան» էր ճանաչում Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունուն։ Արասի քաղաքականությունը ավելի արաբասիրական էր (Համմտ.* DAI, *II*, p. *168*)։

16 Εἰς τὴν μεγάλην Ἀρμενίαν, εἰς τὸ κάστρον τὸ Καρς։ *Միրանածինի սույն գլխի գրության ժամանակ ճիշտ է, որ Բագրատունիների մայրաքաղաքը Կարսն էր։ Բայց Կարսը, ինչպես ասացինք, մայրաքաղաք դարձավ Աբասի ժամանակ, որին սակայն բյուզանդացիները «իշխանաց իշխան» տիտղոսը չտվեցին, իսկ տվյալ դեպքում Միրանածինը «իշխանաց իշխան»-ի նստավայրը համարում է Կարսը և նկատի ունի Արասից առաջ թագավորածներին։ Միրանածինի մոտ պարզապես անախրոնիզմ է։*

17 *Բնագրում* Ἀπελζάρτ, *Ապահունիքի արաբ ամիրա Աբուլ Վարդ I-ը, որ երկրին տիրեց 860-ական թվականներին։ Հայտնի է նաև հայկական աղբյուրներից։ Թովմա Արծրունին նրան հիշատակում է Ապլբառ ձևով, Գրիգոր Նարեկացին իր թղթում՝ Ապլվարդ ձևով։ Վերջինիս տվյալների համաձայն, Ապլվարդը հալածել է Բոնդրակեցի աղանդավորներին, որոնք հենց Ապահունյաց գավառի Բոնդրակ գյուղում էին առաջացել և սպանել նրանց առաջին աղանդապետ Սմբատ Զարեհավանցուն (տե՛ս Գիրք թղթոց, էջ 498, 500)։ Աբուլ Վարդի և Բոնդրակեցիների փոխհարաբերությունների մասին մանրամասն տե՛ս Հովհաննիսյան, Դրվագներ Գիրք Ա, էջ 341 և հտ.։ Աշ. Հովհաննիսյանը Աբուլ Վարդի հանդես գալու ժամանակը շուրջ 30 տարով առաջ է բերում։ Տե՛ս* Տեր-Ղևոնդյան, *Ամիրայություններր, էջ 98։ Աբուլ Վարդը իր արտացոլումն է գտել բյուզանդական Դիգենիս Ակրիտաս էպոսում* Ἀλοραβίτης *ձևով։ Տե՛ս* Բարթիկյան, *Բյուզանդական վիպերգությունը։*

18 *Ա. Տեր-Ղևոնդյանը գտնում է, որ Հայոց թագավոր Աշոտ I-ի Աբուլ Վարդ I-ին Խլաթը, Արճեշը և Բերկրին շնորհելու մասին ասվածը փաստերի գիտակցական խեղաթյուրում է Միրանածինի կողմից, հետագայում կատարված իրողությունը ավելի վաղ շրջանին վերագրելու ձգտում, որովհետև X դարում կայսրիկները բյուզանդիային որոշ չափով ենթակա էին դարձել, և Միրանածինը իր այդ խորամանկությամբ ուզում է ցույց տալ, որ նշված քաղաքներն էլ դեռևս Աբուլ Վարդ I-ի ժամանակ գտնվում էին բյուզանդիայից վասսալական կախման մեջ։ Միրանածինը այդ մասին պարզ ասում է մի քիչ հետո. «Քանի որ,—գրում է նա,—իշխանաց իշխանը (հայոց թագավորը Հ. Բ.) հռոմայեցիների կայսեր ծառան է [վասալը] համարվում, որովհետև [կայսրն] է նշանակում նրան և ընձեռում այդ պաշտոնը, ապա պարզ է, որ նրա տիրապետության տակ գտնվող ամրոցները, քաղաքներն ու գյուղերը հանդիսանում են հռոմայեցիների կայսեր*

[սեփականությունը]», Կայսիկների Հայոց արքայից վասսալական կախման մեջ լինելու հանգամանքը կանարը կասկածելի է համարում (Canard, Histoire p. 476), Հայոց թագավորն էլ անվանապես էր Բյուզանդիայի վասսալը (DAI, II, p. 170), Փաստ է, որ, օրինակի համար, Բերկրին Աշոտ I-ի օրոք, նույնիսկ նրա որդի Սմբատ I-ի օրոք գտնվում էր Ութմանիկների ձեռքում, այնինչ Ծիրանածինը այն ևս սխալմամբ դնում է Աբուլ Վարդի իշխանության ներքո, Տե՛ս Տեր-Վահդյան, Ամիրայությունները, էջ 97։

19 Բնագրում Ἀπελχαμίτ — Abd al-Hamid։

20 Բնագրում Ἀποσεβατᾶ — Abu Sawada։

21 Բնագրում Ἀπολεσφούετ — Abu-l-Aswad։

22 Բնագրում Ἀποσέλμης — Abu Salim։

23 Խոսքը Հովհաննես Կուրկուասի մասին է (տե՛ս 45-րդ գլխի 19-րդ ծանոթագրությունը)։ Բյուզանդական բանակը կազմված էր հետևյալ զորամասերից. 1. Նահանգական զորքերից, որոնք ընդհանուր անվամբ կոչվում էին «Թեմատա» (θέματα). այսինքն բանակաթեմային, որոնց գլխավորում էին յուրաքանչյուր բանակաթեմի զորավարները։ Ամենագլխավոր բանակաթեմը «Անատոլիկոնն» էր։ 2. Կայսերական զորքերից, որոնք կոչվում էին «տագմատա» (ταγματα). որոնք չորսն էին. սխոլաներ, էքսկուբիտոսներ, վիգլաներ և հիկանատոսներ, որոնց գլխավորում էին համապատասխանաբար սխոլերի դոմեստիկոսը, էքսկուբիտոսների դոմեստիկոսը, վիգլայի դրունգարը և հիկանատոսների դոմեստիկոսը։ (Մատթեոս Ուռհայեցու «ժամանակագրության» մեջ պահպանվել է Հովհաննես Ջմշկիկ կայսեր մի ընդարձակ թուղթը հասցեագրված հայոց Աշոտ Գ Ողորմած թագավորին, որտեղ կայսրը ամենայն մանրամասնությամբ խոսում է իր քաջագործությունների մասին Ասորիքում, Պաղեստինում և Փյունիկեում։ Խոսելով Տրիպոլիս քաղաքի գրավման մասին, նա ի միջի այլոց ասում է. «Եւ յառաջ քան զհասանիլն մեր ի Տրապօլիս հեծելազօրս առաքիցաք զթիմացիսն և զՏաշխամատացիսն ի կապանն որ կոչի՝ Քարերես» Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1896, էջ 25։ Ընդգծված բառերը ոչ այլ ինչ են, քան խնդրո առարկա «թեմատիկոս» և «տագմատիկոս» զորամասերը։ Այդ մասին մանրամասն տե՛ս Հ. Բարթիկյան. Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության մեջ հանդիպող մի քանի բյուզանդական տերմինների մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3, 1969)։

Սխոլարիոսները գիշեր-ցերեկ ծառայում էին կայսեր Մեծ պալատում. լինելով զինվորներ, նրանք ապրում էին սովորական քաղաքացիների պես։ Նրանց զորաբանակը կայսերական զորքի ամենակարևոր մասն էր կազմում, և համալրվում էր օտարերկրացիներից։ Պրոկոպիոս Կեսարացին ցույց է տալիս, որ Ջենոն կայսեր ժամանակ սխոլարիոսները միմիայն հայերից էին բազկացած (տե՛ս Գաղտնի պատմություն», գլուխ 24, 16)։ Սխոլաները 7 մասից էին բաղկացած, որի յուրաքանչյուրը բաղկացած էր շուրջ 500 մարդուց, այնպես որ սխոլանների զինվորների ընդհանուր թիվը 3500 մարդ էր։ «Սխոլերի դոմեստիկոսը» առաջին անգամ հիշատակվում է Թեոփանեսի ժամանակագրության մեջ 767 թ. դեպքերի կապակցությամբ։ Ավելի վաղ շրջանում սխոլերի դոմեստիկոսի անվան փո-

խարեն հանդիպում է magister officiorum տերմինը։ Պատերազմի ժամանակ, սակայն, սխոլերի դոմեստիկոսը դառնում էր զորքերի գլխավոր հրամանատարը։ Նա գլխավորում էր մեծ արշավանքները, այն ժամանակ, երբ կայսրը անձնապես չէր մասնակցում դրանց։ X դարում սխոլերի դոմեստիկոսի իրավունքները ընդարձակվում են։ Նա լինելով հանդերձ սխոլերի զորահրամանատարը, միաժամանակ Փոքր Ասիայի բոլոր զորքերի զորահրամանատարն էր, և նա արդեն սկսում է կոչվել ὁ δομέστικος τῶν σχολῶν τῆς Ἀνατολῆς (τῆς ἑῴας. τῶν ἑῴων ταγμάτων)։ Նիկեփոր Փոկասը նախքան կայսր դառնալը Արևելքի զորավար էր և սխոլերի դոմեստիկոս (τῶν τῆς Ἀνατολῆς στρατευμάτων κατάρχοντα (Δομέστικον τῶν σχολῶν Ῥωμαῖοι ἀρχὴν τὴν τοιαύτην ἐπιφημίζουσιν). Leonis Diaconi Historiae, Bonnae, 1828, p. 7)։ Ավելի մանրամասն տես Ռ. Դիյանի արժեքավոր հոդվածը. Etudes sur l'histoire administrative de Byzance. Le domestique des scholes, Revue des Études Byzantines, t. VIII, 1950, p. 5—63։ Համմ. նաև Հ. Հյուբշման, Հայկականք, «Բազմավեպ» 1902, էջ 213։

24 Բնագրում Κορή. VII դարի «Աշխարհացոյց»-ում Կորի։ Համապատասխանում է Կորոյ Ջորին, Տուրուբերան նահանգի 15-րդ գավառը։ Ընդգրկում էր Կորոյ Ջոր գետի (այժմ Քյոռ-սու գերեսի) հովիտը՝ Խաչու լճի շրջանը ներառյալ (տե՛ս Երեմյան, Հայաստանը, էջ 61, 108)։ Ըստ Մ. Կանարի, Կորին արաբական աղբյուրներում անվանվում է al-warak (տե՛ս Les Hamdanides, p. 80)։

25 Բնագրում Χαρκά։ Հարք գավառն է, արաբ. al-Hark։ Տուրուբերան նահանգի 9-րդ գավառը։ Համապատասխանում է այժմյան Բուլանխ շրջանին։ Երեմյան, Հայաստանը, էջ 62։

26 Բնագրում ἀνεψιός. որ նշանակում է և եղբորորդի, և քրոջորդի։ Կարող է նշանակել նաև հորեղբորորդի։ Նրա հոր անունը տալիս է Իբն ալ-Ազրակը, անվանելով նրան որգի Արդ առ-Ռահմանի, որը հասկանալի է, դառնում է Արդ ալ-Համիդի՝ երեք եղբայրներ՝ Աբու Սևադայի, Աբուլ Ասվադի և Աբու Սալիմի հորեղբայրը։

27 Բնագրում Ἀχμέτ։ Իբն Ադրակի տվյալներով Համդանյան ամիրայական տան նշանավոր ներկայացուցիչ Սայֆ ալ-Դաուլան 939 թ. աշնանը արշավանքի դուրս եկավ դեպի Հայաստան և Մանազկերտի վրայով հասավ Կարին։ Նա գրում է. «Ասվում է, որ երեք հարյուր քսանութ թվականին (հոկտեմբեր 939—սեպտեմբեր 940) Սայֆ ալ-Դաուլան Մայյաֆարիկինից (Նփրկերտ) ուղղվեց Հայաստան և իջավ Թայթուանայում (Դատվան), որը լճի վրա է։ Նվ կանչեց իբն Ջաջիկ իբն ալ-Դայրանիին (Գագիկ որդի Դերենիկի), Անմատ իբն Աբդ ալ-Ռահման Աբու-լ-Մուիզզին՝ Խիլաթի, Դատ ալ-Ջաուզի (Առծկե), Արջիշի (Առճեշ) և Բարբարիի (Բերկրի) տիրոջը, Արդ ալ-Համիդին՝ Մանազջերդի (Մանազկերտ) և Դաշտ ալ-Ուարքի ու ալ-Հարքի տիրոջը...» և այլն։ (Թարգմանությունը Տեր-Ղևոնդյանի, տե՛ս Ամիրայություններր, էջ 152)։ Այս տեղեկության հիման վրա Մարքվարտը գտնում է, որ Ահմադ իբն Արդ ալ-Ռահման Աբու-լ Մուիզզը մի մարդ է և նույնանում է Միրանածինի Ախամետի հետ։ Դա հաստատվում է այն փաստով, որ այն վայրերը, որոնք Իբն Ազրակի մոտ վերագրվում են Աբու-լ-Մուիզզին ճշտությամբ նույնանում են Միրանածինի մոտ Ախա-

մետին վերադրված վայրերին և որ նույն բնագրում այլևս չի հիշատակվում Ահմադը, այլ միայն Աբու-լ Մուիզզը, ով, ի դեպ ասած, չի նույնանում Միրանածինի հիշատակած Ապելմուզև-ի հետ, որի մասին կայսրը հիշատակում է մի քիչ հետո (տե՛ս DAI, II, p. 169)։

28 Բնագրում Ἀλ-ζιχέ։ Հայոց Արծկեն, արաբների Դատ ալ Ջաուզ (որտեղից ժամանակակից Ալջավազ կամ Աղիլջեվագ անունը), Խլաթի և Արճեշի միջև, Բզնունիք գավառում (տե՛ս Երեմյան, Հայաստանը, էջ 39)։

29 «Իսկ սրա մահից հետո էլ Մանցիկիերտին և վերոհիշյալ բոլոր շրջաններին տիրացավ Ապոսևատայի և Ապոսելֆուետի երրորդ եղբայր Ապոսելմին։ Բայց ինչպես տեսանք վերևում մեջ բերված ծանոթագրության մեջ (№ 27) Իրն ալ.Ագրակր 940 թ. Մանագկերտի տեր է համարում Արդ ալ-Համիդին, որն, ինչպես գիտենք Միրանածինից, Աբու Սալիմի հայրն էր։ Ուսումնասիրողները առաջարկում են Արդ ալ Համիդի անվան առաջ ավելացնել «իբն» բառը, որ նշանակում է «որդի» և գրել Աբու Սալիմ իբն Արդ ալ Համիդ—(Աբու Սալիմ որդի Արդ ալ Համիդի), որով հաստատվում է Միրանածինի ծննդաբանական ծառը (տե՛ս DAI, II, p. 169, նաև Տեր-Ղևոնդյան, Ամիրայություններր, էջ 154)։

30 Բնագրում Ἀβδεραχείμ Abd ar-Rahim։

31 Բնագրում Ἀπελμουζε Abu al-Muizz։

32 Արուլ Վարդ II-ը։ Նա իշխանության գլուխ անցավ 940 թ. հետո։ Միրանածինի սույն երկի գրության ժամանակ (952) Արուլ Վարդ II-ը դեռ իշխանության գլուխ էր։

33 «Հորեղբայր Ապոլեսֆուետ»։ Բնագրում θεῖος, որ հորեղբայր է նշանակում բայց իրականում խոսքը հորեղբորորդու մասին է։

Գ Լ Ո Ւ Խ 45

1 «Քարթլիս ցխովրեբայիս» համաձայն Բագրատունիների անմիջական նախահայրը Սողոմոն անունով մի հրեայի որդին էր, որ ազգակցական կապ ուներ սուրբ Հովսեփի եղբայր Կլեոպասի հետ։ Կլեոպասից 27 սերունդ հետո, VI դարի կեսերին, Սողոմոնի յոթ որդիները դալիս են եկեղյաց գավառը Ռաքել թագուհու մոտ և մկրտվում։ Սրանցից երեքը խնամիական կապեր են հաստատում հայ թագավորական տների հետ, իսկ մնացած չորսը, որոնց մեջ էր և Գուրամը կամ Գուարամը, անցնում են Վրաստան՝ հակուր III-ի (557—570) ժամանակ։ Այս Գուարամը դարձավ վրաց թագավոր և կուրապաղատ 575—600 թթ.։ Նրան հաջորդած որդին՝ Ստեփանոսը, որ թագավորեց 600—619 թթ. Հերակլիոս կայսեր դաշնակիցն էր (տե՛ս Ն. Ադոնց, Բագրատունյաց փառքր, էջ 103—107, նաև Մարկվարտ, Վրական Բագրատունյաց ծագումը, էջ 93—95, DAI, II, p. 171—172)։

Բագրատունիների հրեական ծագման վարկածը հայ հեղինակներից պահպանել է Մովսես Խորենացին (Ա., 22, 23), հենվելով Մար-Աբասի վրա. «Ահա սովաւ (Հրաչեայի—Հ. Բ.) գրում է նա,—ասեն կեցեալ զնաբուդոդոնոսոր արքայ Բաբելացւոց, որ գերեաց զՀրեայս եւ սորա ասեն

զմի ի գլխաւորաց ծբրայեցւոցն գերելոց խնդրեալ ի Նաբուգոդոնոսորայ՝ Շաբաթ անուն, ածեալ բնակեցոյց յերկիրս մերում մեծաւ պատուով. և ի սմանէ ասէ պատմագիրն լինել ազգն Բագրատունեաց, և հաւաստի էր։

Պատմաբանների մոտ Բագրատունիների ծագման հարցը վիճելի է մնացել։ Ն. Ադոնցը միանգամայն մերժում է նրանց հրեական ծագումը, ցույց տալով, որ Սողոմոնի մասին գրույցը հորինվել է XI դարում (նույն տեղում, էջ 109)։ Ռենսիմենը (DAI, II, p. 172) գտնում է, որ Բագրատունիների հրեական ծագումը հնարավոր է, որ պատճառ չկա կասկածելու դրա վրա, որ բազում հրեաներ էին հաստատվել Հայաստանում, որոնք ունեին ժառանգական ղեկավարներ, որոնք իրենց ծագումը բերում էին Դավթից, որ Բագրատունիները, նաև Ամատունիները, կարող են պատկանել այդ հրեա գաղթականներին։ Կ. Թումանովը Բագրատունիներին վերագրում է ուրարտական կամ խուրիտո-սուբարյան ծագում։

Վրաց Բագրատունիները ծագում են հայոց պատրիկ Աշոտ Բագրատունուց (որ 748 թվականին կուրացվեց Մամիկոնյանների կողմից)։ Այդ մասին ամենաարժանահավատ աղբյուրն է Վարդան պատմիչը։ Նա գրում է. «Յայնմ ժամանակի աղմկեալ Իսմայելի ընդ միմեանս, հանգչէր երկիրս Հայոց, և սկսան զօրանալ իշխանքն մեր յիւրաքանչիւր իւր տեղիս։ Եւ տայր իշխանն Իսմայէլի Աշոտի որդւոյ Ատրներսեհի որդւոյ Վասակայ, որդւոյ Աշոտոյ Հայոց իշխանի՝ զերկիրն Վրաց. որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան. և կայսր առաքէ նմա պատիւ կիւրապաղատութեան» (Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1868, էջ 77)։ Սա կատարվել է IX դարի 10-ական թվականներին (տե՛ս Մարկվարտ, Վրական Բագրատունյաց ծագումը, էջ 105—106)։ Մի այլ տեղում Վարդանը դրում է. «սմա [այսինքն Աշոտ Բագրատունուն, որ կուրացվեց 748 թ.] լինին երկու որդիք, Սմբատ՝ նախնի թագաւորացն Հայոց, և Վասակ սկիզբն թագաւորացն Վրաց. որոյ որդին Ատրներսեհ, սորա Աշոտ, սորա Բագարատ, որոյ եղբայրն Գորգամ, ետ սմա՝ Դաւիթ որդի Բագարատայ՝ որ սպանաւ ի Գորգամայ հօրեղբօրէ իւրմէ որոյ որդին Ատրներսեհ, սորա որդի Դաւիթ. սմա եղբօրորդի Գուրգէն, որոյ որդին Բագարատ, որ ա՛ռ իւր կին դուստր Սենեքերիմայ թագաւորին Վասպուրականի» (նույն տեղում, էջ 81—82)։

Վրաց Բագրատունիների մասին ընդհանրապես և Միրանածինի նրանց վերաբերող տվյալների մասին մասնավորապես տես նաև M. Brosset, Additions et Eclaircissements a l'Histoire de la Georgie, depuis l'antiquite jusqu'en 1469, St.-Petersbourg, 1851, Addition IX, p. 138 sqq.

2 Միրանածինը ցույց տալով, որ վրացիների մոտ արենակցական կապ ունեցող մարդկանց միջև ամուսնությունն արգելված չէր, չի մեղանչում իրականության դեմ։ Դա իսկապես որ այդպես էր և այդ ժամանակվանից կան բաղմաթիվ փաստեր։ Տե՛ս Tonmanoff,, The Bagratids, p. 25։

3 Բնագրում Σαναδατης։ Ռենսիմենը սխալմամբ ենթադրում է, որ Սպանդիատ անունը Սմբատ կամ Շամբաթ (հայկական առասպելի համաձայն՝ Բագրատունյաց նախահայրը այսպես էր կոչվում) անունից է ծագում, կամ էլ կապ ունի հայկական «սպանդ» (որտեղից ըստ նրան՝ Սպանդունիք)

բառի հետ (DAI. II, p. 171)։ Իրականում գա Սպանդարատ անունն է, որ պահլավերենում դարձել է Spandyāt, ինչպես Միրանաժինի մոտ և նշանակում է «սրբատուր»։ Սպանդիատ անունը հանդիպում է և հայերի մոտ դեռևս IV դարից (տե՛ս Աճառյան. Անձնանունների բառարան հատոր Դ, Երևան, 1948, էջ 597—598։ Համմտ. նաև F. Justi, Iranisches Namenbuch, Marburg. 1895, S. 308)։

4 Հերակլիոս կայսեր (610—641) պարսկական արշավանքների մասին տե՛ս Հ. Մանանդյան. Հերակլ կայսեր պարսկական արշավանքների ընթացուղիները (մարշրուտները), Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության հատոր Բ, Բ մասի նյութեր, Երևան, 1960, էջ 141—172։

5 Վրացիների կապերը Երուսաղեմի հետ շատ ավելի վաղ են, քան Բագրատունյաց հարստության հաստատումը Վրաստանում։ Ուշ շրջանի ավանդության համաձայն, վրաց առաջին քրիստոնյա թագավոր Միրիամը ուխտի է գնացել Երուսաղեմ։ Շուրջ 470 թ. Երուսաղեմ այցելեցին Վախթանգ թագավորը իր մոր և քրոջ հետ։ Պրոկոպիոս Կեսարացու տվյալներով, Հուստինիանոս կայսրը սամարացիների ապստամբության ճնշումից հետո վերակառուցեց երկու վանք, որոնք հավանաբար կառուցված էին Վախթանգ թագավորի կողմից (Կառուցումների մասին, Ե., 9)։ Վրացիները հետագայում ևս սերտ կապերի մեջ էին Երուսաղեմի հետ։

6 Ինչպես Մարկվարտն է ցույց տվել, Միրանաժինի մոտ Դավթի սերնդի շարքը սխալ է։ Հիմնվելով վրաց պատմության և Վարդան պատմիչի տվյալների վրա, նա ապացուցել է, որ պիտի լինի ոչ թե Դավիթ, Բագարատ, Աշոտ, Ատրներսեհ, այլ Աշոտ, Բագարատ, Դավիթ, Ատրներսեհ։ Տե՛ս Ադոնց. Բագրատունյաց փառքը, էջ 96—97։ Ընդ որում Դավիթը (Աշոտը) ոչ 452 և ոչ էլ 552 թվականի անձնավորություն է, այլ VIII դարի վերջի և IX դարի սկզբի։

7 Խոսքը, իհարկե, Միրանաժինի հոր, Լևոն VI իմաստասեր կայսեր մասին է (886—912 թթ.)։ Ատրներսեհ կուրապաղատը որդին էր Դավթի (և ոչ Աշոտի, ինչպես գրում է Միրանաժինը) և թագավորել է 881—923 թթ.։ Նրա մասին առատ նյութ կա Հովհաննես Դրասխանակերտցու Պատմության մեջ։ Հայոց կաթողիկոսը Յուսուֆի ապստամբությունների ժամանակ հենց այս Ատրներսեհի մոտ էր ապաստան գտել։

8 Միրանաժինի մոտ պահպանված վրաց Բագրատունիների մասին առասպելի կեղծիքը երևում է տվյալ փաստի մեջ։ Դուրս է գալիս, որ 400—500 տարվա ընթացքում գոյություն է ունեցել առասպելական Դավթի ընդամենը երեք սերունդ. Բագարատ, Աշոտ, Ատրներսեհ։ Միրանաժինը թեև հաշվել է իր օրից (աշխարհի արարչագործության 6460 թ. համապատասխանում է մ. թ. 925 թ.), այնուամենայնիվ, վրաց Բագրատունիների տոհմածառը հասցնում է մինչև իր հոր օրերը՝ Լևոն VI ժամանակները, երբ Ատրներսեհը նրա կողմից արժանացավ կուրապաղատի պատվին (տե՛ս նաև Ադոնց. Բագրատունյաց փառքը, էջ 95—96)։

9 Ինդիկտիոնը (լատ. indictio) տասնհինգ տարվա շրջան է։ Ե՞րբ է սկիզբ առել ինդիկտիոններով հաշվելը, հայտնի չէ։ Նրա օգտագործումը վերականգնեց Կոստանդին I կայսրը, ինդիկտիոնի առաջին տարին հաշվելով 312 թ.։

10 Կոստանդին Միրանածին (913—959) և նրա որդի Ռոմանոս 11-ր, որը հոր մահից հետո թագավորեց մինչև 963 թ.։

11 Բնադրում Փասիանի։ Հունական և բյուգանդական աղբյուրներում այդպես է հիշատակվում Այրարատի 1-ին գավառ Բասենը (Բասեան)։ Մենանդրոսի մոտ հանդիպում է և Βασσιανή գրության ձևը։

12 Բյուգանդական աղբյուրներում այս բանակաթեմի գրության երկու ձև է հանդիպում, τὸ Ἀρμενιακόν (այսինքն θέμα—բանակաթեմ) և τὸ Ἀρμενιακῶν կամ τῶν Ἀρμενιακῶν (ենթադրվում է τὸ θέμα τῶν Ἀρμενιακῶν). որ իմաստային տեսակետից տարբեր են։ Τὸ Ἀρμενιακόν նշանակում է Արմենիակոն (հայկական) բանակաթեմ, իսկ τὸ Ἀρμενιακῶν կամ τῶν Ἀρμενιακῶν—Արմենիակների (այսինքն հայերի) բանակաթեմ։ Համմտ. Հովհաննես Դրասխանակերտցի (էջ 17—18). «որ շուրջ զմեօքն են ազգք՝—... Արմանեակս զմեզ անուանեն»։

Արմենիակների բանակաթեմի մասին տե՛ս Միրանածինի «Բանակաթեմերի մասին» աշխատության մեջ, ինչպես և ծանոթագրությունը նրա վերաբերյալ (սույն աշխատության 167-րդ էջում)։

13 Զորավար պատրիկ Լալակոնը այլ աղբյուրներից հայտնի չէ։ Մեզ է հասել ոմն Լևոն Լալակոնի կնիքը, որը հիշվում է որպես կուրապաղատ և դուքս Արմենիակների բանակաթեմի։ Նույն մարդը մի այլ աղբյուրում (859 թ. հունվարին տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ) հիշվում է որպես «նումերոնի դոմեստիկոս», որը հասկանալի է, չի կարող նույնանալ Միրանածինի Լալակոնի հետ, բայց կարող է սրա ազգականը լինել։ Միրանածինը մնացած զորավարների անունները չի տալիս, բայց այդ ժամանակ Միջագետքի զորավարը հավանաբար Օրեստեսն էր, որին Միրանածինը հիշատակում է այս աշխատության մի այլ տեղում։ Լալակոնի գրչախավորությամբ եղած արշավանքը թվագրվում է 901 թ.։ Լալակոն անունը հունական չէ։

14 Կոլոնիայի բանակաթեմի մասին մանրամասն տե՛ս Միրանածինի «Բանակաթեմերի մասին» աշխատության մեջ, ինչպես և նրան վերաբերող ծանոթագրությունը (սույն աշխատության 170-րդ էջում)։

15 Միջագետքի բանակաթեմի մասին տե՛ս «Բանակաթեմերի մասին» աշխատության մեջ (սույն աշխատության 170-րդ էջում)։

16 Խաղտիք բանակաթեմի մասին տե՛ս «Բանակաթեմերի մասին» աշխատության մեջ (սույն աշխատության 170-րդ էջում)։

17 Մագիստրոս Կատակալոնի տակ ենթադրվում է Լևոն Կատակալոնը, որը 896 թ. Բուլգարոֆիգոնի ճակատամարտում պարտություն կրեց բուլղարների կողմից։ Այդ մասին հիշատակում է Թեոփանեսի Շարունակողը, ցույց տալով, որ Լևոն VI կայսրը Կատակալոնին նշանակելով զորքերի ընդհանուր հրամանատար, ուղարկում էր ցար Սիմեոնի դեմ։ (Theoph. Cont., p. 359—360)։ Կատակալոնի արշավանքը դեպի Թեոդոսուպոլիս տեղի ունեցավ 902 թ.։ XI դարում իր գործունեությամբ փայլած Կատակալոն Կեկավմենոսը ազգակցական կապ ուներ այս Կատակալոնի հետ։ [Լևոն] Կատակալոնը Թեոփանեսի Շարունակողի մոտ հիշատակվում է որպես δομέστικος τῶν σχολῶν ὁ μαγίστρος։ Նույն ձևով նա հիշատակվում է նաև Միրանածինի մոտ։

18 Թեոդոսուպոլիսն այն ժամանակ գտնվում էր արաբների ձեռքում (տե՛ս Տեր-Ղևոնդյան, *Ամիրայություններ*, էջ 160 և հտ.)։

19 Հայազգի զորավար Հովհաննես Կուրկուասի Դվինի [Տիվի] արշավանքը, ըստ Ասողիկի տվյալների, թվագրվում է 922 թ.։ Ստեփանոս Տարոնացին գրում է, որ Ռոմանոս Լեկապենոս կայսրր. իր թագավորության երկրորդ տարին «գումարեաց զօր բազում և դեմեսլիկոս (իմա՛ δομέστικος) առաքեաց ի Դուին քաղաք յորում էր Սպքի ամիրայ որ ղԱշոտն Շահնշահ օգնական իւր արկ ի քաղաքն։ Եւ եկեալ զօրն Յունաց՝ պաշարեցին զԴուին և ոչ կարացեալ ստանալ դարձան անդրէն» (Ասողիկ, էջ 170)։ Ռենսիմենր և ուրիշներ, ենթադրելով, որ Կուրկուասր 922 թ. չէր կարող դոմեստիկոս եղած լինել, դվինյան արշավանքր Թեոփանեսի Շարունակողի տվյալների հիման վրա թվագրում են 927 թ. (DAI. II, p. 164, 174)։ Բյուգանդական աղբյուրներր մեծ գովեստով են խոսում Կուրկուասի մասին, ընդգծելով նրա հայկական ծագումը (ἐκ γένους τῶν Ἀρμενιακῶν ἦν)։ Նրա ծննդավայր է հիշվում ἀπο Δοκιαν χωριου Δαρϐιδοῦν. հայրր եղել է շատ հարուստ պալատական։ Կուրկուասր սուրբ գիրքը սովորել է իր ազգական՝ Գանգրայի մետրոպոլիտ Խրիստոֆորոսից։ Թեոփանեսի Շարունակողի ասելով, Հովհաննես Կուրկուասր կրկնապատկեց Բյուղանդիայի տերիտորիան սահմաններն հասցնելով մինչև Եփրատ և Տիգրիս։ Նա քսաներկու տարի անընդմեջ սխոլերի դոմեստիկոս էր, և այդ ընթացքում, ըստ նույն աղբյուրի, գրավեց հազար քաղաք և հիշվում է որպես երկրորդ Տրայանոս և Բելիսարիոս։ Նրա քաջագործությունները ութ գրքով գրել է Մանվել պրոտոսպաթարը։ Այդ աշխատությունր մեզ չի հասել։ Կուրկուասր վախճանվել է 946 թվականից փոքր անց։

Հովհաննես Կուրկուասր թողել է մի որդի՝ պատրիկ Ռոմանոս Կուրկուասին, որր տարբեր բանակաթեմների զորավար էր նշանակվել և շարունակել իր տոհմի փայլուն ավանդությունները. Նա ստացավ նույնիսկ մագիստրոսի աստիճան։ Հովհաննես Կուրկուասի եղբայր Թեոփիլոս Կուրկուասր պատրիկ էր և Խաղտիքի ու Միջագետքի բանակաթեմների զորավար։ Սրան համեմատում են Հուստինիանոս Մեծի նշանավոր զորավար Սոլոմոնի հետ (տե՛ս հաջորդ ծանոթագրությունր)։

Հովհաննես Կուրկուասի մասին տե՛ս Theoph. Cont. p. 426—428. Նաև Guilland, Le domestique, p. 29—31։

20 Հովհաննես Կուրկուասի եղբայր Թեոփիլոսը Խաղտիքի զորավար դարձավ 923 կամ 924 թվականին, Վարդաս Բոյիլասի ապստամբության ճնշումից հետո։ Նրա մասին պակաս գովեստով չի խոսում Թեոփանեսի Շարունակողը, ցույց տալով, որ նա բազում արշավանքներ է կատարել արաբների դեմ, հաճախ գերեվարել, նաև հարկադրել Թեոդոսուպոլսի և նրա շրջակայքի արաբներին։ Նա փայլուն գործունեություն է ծավալել նաև Միջագետքում։ Նիկեփոր Փոկասի թագավորության ժամանակ հանդես եկած սխոլերի դոմեստիկոս Հովհաննես Ջմշկիկը (ապա կայսրր) այս պատրիկ Թեոփիլոսի թոռն էր։ Տե՛ս Theoph. Cont., p. 428։ Թեոփիլոսր իշխանության գլուխ մնաց մինչև 940 թ.։

21 Ընադրում Ἀβνίκου։ Հայոց Աւնիկր, տաճիկ Ջիվան-կալե։ Այժմ Ավնիկ գյուղ։ Գտնվում էր Բասենի հարավում, Թեոդոսուպոլսից 40 մղոն արևելք (տե՛ս Երեմյան, Հայաստանր, էջ 42, նաև DAI, 11, p. 174։ Մանրա-

մասն տե՛ս նաև Պ. Տեր-Պողոսյան, Տեղագրական հետազոտություններ Հայաստանի մեկ քանի քաղաքներու և բերդերու մասին, Վիեննա, 1951, էջ 106։

22 Բնագրում Κετζέον։ Հայտնի չէ, թե ո՞ր տեղին է համապատասխանում։ Հոնիգմանը հնարավոր է գտնում նույնացնել Հինգախ գյուղի հետ, Թեոդոսուպոլսից Տայք տանող ճանապարհի վրա, կամ էլ այդ ճանապարհի լեռնանցքի վրա գտնվող մի ամրոցի, որ վրացիները կոչում են Քարթլիս Քելի, իսկ թուրքերը՝ Գյուրջի բողազ (տե՛ս DAI, II, p. 175)։

23 Բնագրում ταξάτοι, ավելի ճիշտ ձևը՝ ταξεῶται։ Զորավարի հրամանատարության ներքո գտնվող ոստիկանական պարտականություններ վարող մի մարմին էր։ Տաքսեոտները դասվում էին հասարակ զինվորներից բարձր։ Նրանց մասին տե՛ս Zepos, Jus graecoromanum, V, p. 521։ Համմտ. Ahrweiler, Recherches, p. 42, 71։

24 «Կուրապաղատի և նրա եղբայրների» տակ ենթադրվում են Ատրներսեհ II-ի որդի Աշոտ և նրա եղբայրներ Դավիթը, Բագարատն ու Սմբատը։ Աշոտը կուրապաղատ դարձավ իր հոր մահից հետո (923)։

25 Բնագրում ἐξουσιαστής։ Արազգիայի մագիստրոսի և էքսուսիաստեսի տակ ենթադրվում է թագավոր Գիորգին, որին Միրանածինը հանվանե հիշատակում է մի փոքր հետո։ Բյուզանդական աղբյուրներում էքսուսիաստես է կոչվում նաև բուլղարների Սիմեոն ցարը, (ἐξουσιαστὴς τῶν Βουλγάρων տե՛ս Κ. Ι. Ἀμάντου, Ἱστορία τοῦ Βυζαντινοῦ κράτους. τόμος Β΄, Ἀθῆναι. 1960, σελ. 66). Նույնիսկ Շիրակի հայ Բագրատունի թագավորը—ἐξουσιάρχης (Cedr. II, p. 498)։

26 Բնագրում Βασπαρακανίτης (վասպուրականցի)։ Նկատի ունի Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունուն (908—943)։

27 Բանակաթեմը (զորաբանակի իմաստով) ստորաբաժանվում էր բանդոնների (βάνδον—դրոշ. հայերենում նույնպես գրոշ բառն ունի «գունդ», «վաշտ» նշանակություններ. համմտ. «Բայց ուր լինէր հանդէս, ի նշանաւոր տեղիս գնդի գնդի, դրօշու դրօշու, վաշտուց վաշտուց...» Փավստոս, Գ., 7), որոնք իրենց հերթին կազմում էին μοῖρα-ներ և ὀρουγγον-ներ, որոնց գլխավորում էին մերարխները կամ դրունգարները։ Երեք μοῖρα-ն կազմում էր մեկ տուրմա (τοῦρμα) կամ մերոս (μέρος). որը գլխավորում էր տուրմարխը և մերարխը (μέρος γαρ ἐστιν ἡ τοῦρμα. τὸ ἐκ τριῶν μοιρῶν ἦγουν συγκειμενον ἀθροισμα. Leon VI, Tactica, Migne, P. G. t. 107, col. 708). մերոսը դա տուրման է, որը երեք մասից, այսինքն դրունգոններից է բաղկացած։ Մի այլ տեղում կարդում ենք, որ տուրմարխը նա է, ով իր հրամանի տակ ունի երեք դրունգոն (τουρμάρχης ὁ τρεῖς ὀρουγγους ὑφ'ἑαυτον ἐχων)։ Միրանածինը վկայում է, որ տուրմարխը իր հրամանի տակ ունի 500 նետաձիգ, 300 վահանակիր, և 100 նիզակակիր, հետևարար մի բանակաթեմի զորքը բաղկացած էր շուրջ 2500—3000 մարդուց։

Տուրմարխը բանակաթեմի զորավարից հետո ամենաարձր անձնավորությունն էր նահանգում։ Նա ուներ պրոտոսպաթարի աստիճան (տե՛ս Brehier, Les Institutions p. 361—362; Ahrweiler, Recherches..., p. 3)։

28 Բնագրում βασιλικος, բառացի նշանակում է թագավորական։ Այդպես էին կոչվում կայսեր մերձավոր մարդիկ, պալատականները։ Տերմինը հանդի-

պում է նաև հայկական սկզբնաղբյուրներում «վասլիկոս» ձևով։ Ավելի մանրամասն տե՛ս վերր, գլ. 43, ծանոթ. 17, 18։

29 Հետաքրքիր է, որ Միրանածինի մոտ էլ օգտագործված է «կարավան» բառը (καρβάνια). որը փոխառություն է պարսկերենից։

30 Պրոտոսպաթար Ջուրվանելիի (Ζουρβανέλη) տակ ենթադրվում է Դերջանցի Ջորտվանելը. Աբոնի վրաց վանքի կառուցող սինկելլոս Հովհաննես Թոռնիկի հայրը։ 977 թ. գրված վրացերեն մի ձեռագրի հիշատակարանում դրված է հետևյալը. «Ես Յովհաննէս, որ առաջ Թոռնիկն կոչէի, և եղբայր իմ Յովհաննէս Վարազվաչէ, որիթ օրհնելոյն Ջորտվանելի, ստացաք և գրեցաք դմատեանս այս...» (տե՛ս Ակինյան, Մատ. հետ., Դ, էջ 55։ Համմտ. նաև էջ 57)։ Ն. Ակինյանը ենթադրում է, որ այս Ջորտվանելի հայրը պետք է լինի 945 թ. աքսորված Նիկոլաոս Թոռնիկը կամ Լևոն Թոռնիկը, որոնց մասին հիշատակություն կա Միրանածինի (de Cer. I, 96, p. 435), Կեդրինոսի (II, p. 324) և Լևոն Գրամատիկոսի մոտ (էջ 329)։ Տե՛ս Ակինյան, նույն տեղում, էջ 59—60։

Մամիկոնյաններր, հալածվելով արաբների կողմից, ապաստանում են Տայքում, որտեղ նրանք ունեին կալվածներ։ Հենց Տայքում է, որ X դարում հանդես է գալիս Թոռնիկյան մի նոր ճյուղ, որի առաջին ներկայացուցիչը վերոհիշյալ Ջորտվանելն է։ Ակինյան, Նույն տեղում, էջ 52։

Ն. Ադոնցր (Les Taronites, p 234) ցույց է տալիս, որ Ջորտվանելը վրացադավան հայ էր։ Նույն միտքն է առաջ քաշում նաև Ն. Ակինյանը (Նույն տեղում, էջ 53)։ Ռենսիմենը նրան վրացի է համարում (DAI. II, p. 175)։

Միրանածինը նշում է, որ Ջուրվանելին «ազատ» էր (τὸν ἀζάτον αὐτοῦ). այսինքն ազնվական։

31 «Աներոջ» տակ, հասկանալի է, ենթադրվում է Ռոմանոս I Լեկապենոսը։ Կոստանդին Միրանածինր ամուսնացել էր Ռոմանոսի դուստր Ելենայի հետ։ Ռոմանոսը դարձավ «վասիլեոպատոր»—կայսերահայր, մի տիտղոս, որ առաջին անգամ ստեղծվեց Լևոն VI կողմից և տրվեց իր աներոջ, հայազգի Ստիլիանոս Զաուցային։

32 Խոսքը Աշոտ կուրապաղատի եղբայր Բագարատի որդու մագիստրոս Ատրներսեհի մասին է։ Մահացել է 961 թ.։

33 Բնագրում Ματζατζιν։ Տեղր հայտնի չէ։ Հոնիգմանր տեղադրում է Ավնիկի մոտ։

34 Միրանածինր Արաքս և Ֆասիս գետերը նույնացնում է։ Իրականում Ֆասիսը համապատասխանում է Րիոնի գետին։ Բյուզանդացիները Բասեան գավառի անունից րխեցնելով Ֆասիսը, սխալմամբ նույնացնում են Արաքս գետի հետ։

35 Սպաթարները (σπαθάριοι —սուսերակիրներ) կազմում էին կայսեր թիկնապահ զորքր։ Բառր հանդիպում է և հայկական աղբյուրներում. «Հրամայեաց սպաթարին բաղում հարուածովք պահել ի բանտին». «Հիւանդացաւ սպաթարն»։ Տե՛ս Նոր Բառգիրք Հայկազյան լեզվի, հատ. Բ, էջ 734։

36 Բյուզանդացիները IX դարի վերջին և X դարի առաջին կեսին բազում անգամ արաբների ձեռքից փորձեցին խլել Թեոդոսուպոլիսը։ Քաղաքը հաճախ էր ձեռքից ձեռք անցնում։ Թովմա Արծրունին ցույց է տա-

լիս, որ 895 թ. «պաշարեն զԿարնային քաղաքն զօրքն Յունաց. և դարձեալ անդրէն ի կամս իւրևանց թողեալ գնացին» (Թովմա Արծրունի, էջ 231)։ Հաջորդ անգամ Թեոդոսուպոլսի վրա հարձակվեց, ինչպես Շիրանածինն է ցույց տալիս, զորավար Կատակալոնը 902 թ.։ Հայտնի չէ գրավեց նա այն, թե ոչ։ Երբ շուրջ քսան տարի անց Հովհաննես Կուրկուասը սկսեց իր արևելյան արշավանքը, Թեոդոսուպոլիսը գտնվում էր արաբների ձեռքում։ Միքայել Ասորու տվյալներով շուրջ 934—935 թթ. Կարինը բյուզանդացիների ձեռքում էր, բայց 939 թ. հավանաբար նորից էր անցել արաբների ձեռքը, երբ Սայֆ-ադ Դաուլան քշեց բյուզանդացիներին Հավճիջից։ Կարինը բյուզանդացիների ձեռքում չէր և 945 թ.։ Այն վերջնականապես գրավվեց 949 թ.։ Ինչպես Շիրանածինն է ցույց տալիս, 952 թ. Կարինի կառավարիչն էր պատրիկ Թեոփիլոսը։ Կարինի այս վերջին գրավման մասին հիշատակություն ունի Ասողիկը. «յՅՂԸ թուականին առաքէր կայսրն Կոստանդին զդեմեսլիկոսն (Նոմէստուոս) զՋմշկիկ զօրու ծանու ի կողմանս Կարնոյ։ Որ եկեալ պաշարեաց զԹեոդուպոլիս և պատերազմեցաւ, պարտեալ զզօրն Իսմայիլի՝ պատառեաց զխանդակ քաղաքին և փլոյց զբարձրաբերձ աշտարակս նորա և էառ զքաղաքն։ Ուր բազում գործ արութեան ցուցեալ Կիւռ-Յան Թոռն Ջմշկայ, ի մանկութեան տիս գոլով յայնժամ»։ (Ասողիկ, էջ 179)։ Մեր բոլոր ձեռագրերում Հովհաննես Ջմշկիկը կոչվում է Կյուր ժան, որը սխալ է, պիտի լինի Կյուր Յան։ Յան-ը դա Հովհաննեսի— Ἰωάννης հունարեն արտասանությունն է (Յանիս)։

37 Պրոտոսպաթար Պետրոնաս Բոյիլասը պատկանում է Բոյիլասների ընտանիքին, որի բազմաթիվ ներկայացուցիչներն են բյուզանդական աղբյուրներում հիշատակվում։ Բոյիլաս դա բուլղարերեն բառ է և նշանակում է «բոյարին»։ Այդ ընտանիքից հայտնի են Կոստանդին Բոյիլասը 798 թ., Վարդաս Բոյիլասը 923 թ., ինչպես նաև Կոստանդին Բոյիլասը։ XI դարի կեսերին հիշատակվում է Ռոմանոս Բոյիլասը, իսկ 1059 թ. Եվստաթիոս Բոյիլասը, որը բազմաթիվ կալվածքներ ուներ Տայքում։ Վարդաս անվան առկայությունը այս ընտանիքի անդամների մեջ գուցե վկայությունն է այն բանի, որ այն խնամիական հարաբերությունների մեջ էր հայերի հետ։ Բոյիլասների ընտանիքը կալվածներ ուներ նաև Խաղտիք բանակաթեմում։ Բոյիլասների մասին տե՛ս Հ. Բարթիկյան. Եվստաթիոս Բոյիլասի կտակը (1059 թ.) որպես Հայաստանի և Վրաստանի պատմության կարևոր սկզբնաղբյուր, Բանբեր Մատենադարանի, № 5, էջ 397։

38 Նիկոպոլսի տակ ենթադրվում է Կոլոնիայի բանակաթեմի Նիկոպոլիսը, որն այժմ կոչվում է Բուրգ (Պյուրկ)։ Տե՛ս Երեմյան. Հայաստանը, էջ 72։

39 Κατεπανω։ Շիրանածինն այս նույն աշխատության 27-րդ գլխում գրում է. „μαστρομήλης ερμηνεύεται τῇ Ρωμαίων διαλέκτῳ κατεπανω τοῦ στρατοῦ", այսինքն «մաստրոմիլիս հունարեն թարգմանվում է զորքի կատեպան»։ «Մաստրոմիլիս» դա հռոմեական շրջանի magister militum-ի աղավաղված ձևն է, որ նշանակում է զորավար։ Հետևաբար կատեպան նույնանում է ավելի վաղ շրջանի magister militum-ի հետ։ Հինում էին կատեպաններ, որոնք ամբողջ երկրներ էին կառավարում։ XI դարի կեսերին օրինակ, ամբողջ Հայաստանն ու Վրաստանը գտնվում էին բյուզանդական մեկ կատեպանի իրավասության ներքո։ Բայց կային և ավելի փոքր գո-

վառների, գավառակների կատեպաններ, նույնիսկ առանձին քաղաքների, ինչպիսին էր Պետրոնաս Բույլասր Միրանածինի ժամանակ։ «Կատապան» բառը հանդիպում է և հայկական աղբյուրներում։ Մատթեոս Ուռհայեցու մոտ (Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 99, 111, 122), որն այդ բառը թարգմանում է «ղօրագլուխ, գօրապետ, ղօրավար, Սմբվել Անեցու (Վաղարշապատ, 1893, էջ 108), Վարդանի (Վենետիկ, 1862, էջ 99) և ուրիշների։ 1060 թ. Անիի կառավարիչ նշանակված Բագարատ Վխկացին իրեն անվանում է «Արևելից կատապան» (տե՛ս Դիվան հայ վիմագրության, հատ Ա, Երևան, 1966, էջ 37)։ Ավելի ուշ շրջանում «կատապան» բառը ստացել է այգեպան, այգու պահապան իմաստը։ Ավելի մանրամասն տե՛ս Hübschmann, Armenische Grammatik, Bd. 1, 2, S. 355։ Հ. Աճառյան. Արմատական բառարան, հատ. Գ, Երևան, 1933, էջ 1028—1031։ E. Schutz, Ungarisch Katapan, armenisch Katapan Հանդես Ամսօրյա, 1961, սյունակ. 515—520։ T. Wasilewski, Les titres de duc, de catépan et de pronoètes dans l'Empire Byzantin du IXe jusqu'au XIIe siecle, Actes du XIIe Congrès International des Etudes Byzantines, t. II, Beograd, 1964, p. 233—239:

40 Պանգրատի տակ ենթադրվում է Աշոտ կուրապաղատի եղբայրը, Բագարատը, Ատրներսեհ մագիստրոսի հայրը։ Հայտնի է Բադարատի մահվան թվականը՝ 945 թ.։

41 Ֆասխի, տվյալ դեպքում Արաքսի ձախ կողմ ասելով Միրանածինը ենթադրում է գետի հյուսիսային ափը, իսկ աջ կողմի տակ ենթադրվում է հարավային ափը, ավելի ճիշտ հարավ-արևմտյանը, դեպի Կարին ձգվող Իլլիրիայի տակ ենթադրվում է Արիստակես Լաստիվերտցու հիշատակած «Աղօրի աշխարհ»-ը կամ «գաւառը» Հավճիքի մոտ՝ Թեոդոսուպոլսից հարավ։ Տե՛ս Հյուրմյան. Տեղվո անունները, էջ 245։ Համմտ. DAI, II, p. 177։

ԳԼՈՒԽ 46

1 Նախորդ գլխում Միրանածինը կանգ առավ Աշոտ կուրապաղատի Քարթլիի ճյուղի վրա։ 46-րդ գլխում նա կանգ է առնում Աշոտ կուրապաղատի շառավիղների Արտանուջի (Տայքի և Կղարջքի) ճյուղի վրա։ 830 թ. վախճանված Աշոտ կուրապաղատի որդի Ատրներսեհն (11-րդ) ունեցավ երեք որդի՝ Աշոտ Կեկելան, որ մահացավ 867 թ., Տայքի Գուրգենը, որ վախճանվեց 891 թ. և Արտանուջի Սմբատը՝ վախճանված 889 թ.։ Այս վերջին Սմբատի որդիներն էին Բագարատը (Պանգրատիոս) Արտանուջ—Կղարջքի դուքսը (վախճանված 900 թ.), Դավիթ Մամպալին՝ վախճանված 943 թ.։ Միրանածինը վրացերեն «Մամպալիս» բառը սխալ է թարգմանում՝ «ամենասուրբ»։ Այդ բառը նշանակում է «կառավարիչ» և խնդրո առարկա տիտղոսը կրում էր ոչ միայն Դավիթը, այլ բոլոր հիշյալները։ Տե՛ս DAI, II, p. 177։

2 Տե՛ս նախորդ ծանոթագրությունը։

3 Բագարատի որդի Ատրներսեհը դարձավ վանական և վախճանվեց 945 թ., Գուրգենը՝ 923 թ., իսկ Աշոտ «Կիսկասին» 939 թ.։ Վրաց ժամանակագիր

Դավթի որդի Սմբատը ցույց է տալիս, որ Բագարատն ունեցել է մի որդի ևս՝ Դավթին, որ մահացել է իր եղբայրներից առաջ՝ 922 թ.։ Դրա համար Միրանածինը, որ գրում էր 948—952 թթ. ընթացքում, նրան դաշ-ց է առել։ Տե՛ս Toumanoff, The Bagratids, p. 22։

Արտանուջը ավանդության համաձայն կառուցել է Վախթանգ Գորգասալը։ Աշոտ կուրապաղատն այն վերաշինեց։ Տե՛ս Մարկվարտ, Բագրատունյաց ծագումը, էջ 109։ Այս վերաշինման մասին հիշում է և Գևորգ Մնրչուլը Գրիգոր Խանձթացու վարքում։ Տե՛ս Георгий Мерчул, Житие св. Григория Хандзтийского, введение, издание, перевод Н. Марра. С. Петербург, 1911 (перевод, стр. 128):

4 Գուրգենն անղավակ չմահացավ։ Նա ունեցավ մի որդի, որը սակայն ծնվեց իր մահվանից հետո։ Բայց իր մահվան ժամանակ ոչ ոք չկար, որ իրեն ժառանգեր, բացի իր եղբայր Աշոտից։ Տե՛ս Toumanoff, The Bagratids, p. 22։

5 Բնագրում Κισχάσῃ, որ ըստ ուսումնասիրողների վրացերեն բառ է, և նշանակում է «ճարպիկ»։ Բայց հետադոտությունը ցույց տվեց, որ տվյալ բառը վրացերեն չէ, այլ հունարեն ձեռագրերում «Վիխկացիս» մականվան աղավաղումը։ Վխկացիները, որոնք հայկական ընտանիք էին և միաժամանակ կրում էին Կեկավմենոս ազգանունը, մեծ ծառայություն են մատուցել Բյուզանդական կայսրության։ Նրանցից նշանավոր էին Սմբատ Վխկացին Թորթումում XI դարի սկզբներում և Բագարատ Վխկացին նույն դարի կեսերին։ Այդ մասին մանրամասն տե՛ս H. Bartikian. Le généalogie du Magistros Bagarat, REA, t. II, 1965։

Աշոտի «Կիսկասիս» (Վխկացի) մականունը հայտնի է միմիայն Միրանածինից։

6 Այս մագիստրոս Կուրկենի տակ ենթադրվում է Տայքի Գուրգենը, որ վախճանվեց 941 թ.։ Նա Տայքի Ատրներսեհ III կրտսեր .որդին էր։ Հովհաննես Դրասխանակերտցին հիշում է երկու Գուրգեններ, որոնց հետ Հայաստանը դաշնակցային հարաբերություններ մեջ էր։ Տայքի Գուրգեն I-ին, որ մահացել է 891 թ., իսկ երբ խոսում է Աշոտ II երկաթի հետ վրաց իշխան Գուրգենի մասին, ապա այդ դեպքում նա նկատի ունի Գուրգեն առաջինի թոռան՝ Գուրգեն II-րդին։ Այս Գուրգենի և նրա աներոջ՝ Աշոտ Կիսկասիի ընդհարումը տեղի է ունեցել 930—935 թթ. ընթացքում։ Տե՛ս Toumanoff, The Bagratids, p. 26 sq.։

7 Բնագրում Τυροκαστρον, որ թարգմանաբար նշանակում է «Պանրի բերդ»։ Հունարենը թարգմանությունն է վրացերեն «Քվելիս ցիխե»-ի։ Միրանածինը իր «Արարողություններ մասին» աշխատության մեջ տալիս է այս բերդի իսկական, վրացական անունը, τοῦ Κούελ։ Բերդը Ջավախքի կենտրոնն էր, որն ուներ իր իշխանը։ Այդ շրջանը բերդի անունից կոչվում էր Κουελ։ Համմտ. «Արարողությունների մասին» աշխատության II գրքի 92-րդ ծանոթագրությունը։

8 Բնագրում τὴν ποταμίαν τοῦ Ἀτζαρᾶ (հունարենում τζ համապատասխանում է ոչ միայն ց-ին, այլև ծ-ին և ձ-ին։ Քանի որ հունարենում չկան «ջ» և «ճ» հնչյունները, դրանք արտահայտվում են τζ-ով)։ Աջարա գետը թափվում է Ճորոխի մեջ նրա գետաբերանից մի քանի մղոն հեռավորության վրա։

9 Բնագրում Κώλωρις։ Մինչև օրս չի պարզված, թե ինչին է համապատասխանում։ Տե՛ս Toumanoff. Studies, p. 495, n. 264։
Գուցե խոսքը Տայքի առաջին գավառ Կող-ի մասին է, վրաց. Կոլա, այժմ Գյոլե, կամ էլ Տայքի 6-րդ գավառ Ոքաղե-ի (ուրարտական արձանագրություններում՝ Kali), Քորթում գետի վերին և միջին հոսանքում։ Տե՛ս Նիկլաև, Հայաստանը, էջ 59, 76։

10 Մագիստրոս Գեորգիսը իշխել է Ափխազիայում 915/916-ից մինչև 959/960թթ.. Գեորգիոսը (II-րդ) Կոստանդին III-րդի որդին էր։ Միրանածինը նրան անվանում է ἐξουσιαστής։ Համմտ. 45-րդ գլխի 25-րդ ծանոթագրություն, «Արարողությունների մասին» աշխատության մեջ պահպանված պաշտոնական գրություններում ևս Ափխազիայի թագավորները կոչվում են ἐξουσιαστὴς Ἀβασγίας (Գիրք Բ, գլ. 48)։

11 Միրանածինը բացատրում է, թե ինչպիսի ազգակցական կապեր ունեին Արտանուջ-Կղարջքի Բագրատունիները Բաղրատունիների իբերական (քարթլյական) ճյուղի հետ։ Այս՝ 46-րդ գլխում նույնանուն Ատրներսեհների անվան հունարեն գրության ձևերը իրարից տարբերվում են։ Ատրներսեհ IV-րդ (II-րդ) թագավոր-կուրապաղատը հիշատակվում է Ἀδρανασε ձևով, կուրապաղատ Ատրներսեհը, քանի նա դեռ մագիստրոս էր՝ Ատրներսեհ III-րդ գրվում է Ἀδρανασῆ, իսկ Արտանուջ-Կղարջքի Ատրներսեհը Ἀδρανασῆρ ձևով։ Այս սիստեմը նախորդ գլխում (45-րդ) չի պահպանված։ Այնտեղ Ատրներսեհ IV-րդ (II-րդ) և Ատրներսեհ III-րդը հիշվում են նույն ձևով Ἀδρανασῆ, իսկ 43-րդ գլխում Ատրներսեհ IV-րդը Ἀδρανασῆρ է։ Տե՛ս Toumanoff. The Bagratids, p. 22—23։

12 Արվարձան ենք թարգմանում բնաղրի ραπάτιν-ը, որ արաբերեն բառ է (ռաբատ)։ Այդ մասին տե՛ս Հոնիգմաննի հոդվածը Byzantion հանդեսում, հատ. 10, 1935, էջ 148—149։ Այդ բառի մասին տե՛ս նաև П. Л. Гусев, Откуда произошло название Ропата? Сборник Новгородского Общества Любителей Древности, вып. 2, Новгород, 1909, стр. 12—14.
Հետաքրքրական է նշել, որ Ակնի գյուղերից մեկը կոչվում էր Ռապատ։ Տե՛ս Նիկիկյան. Բնաշխարհիկ բառարան, հատ. Ա, էջ 80։ Քարթլիս Ցխովրեբայում կա մի հետաքրքրական պատմություն Արտանուջ ամրոցի վերակառուցման մասին, որ վերագրվում է Աշոտ կուրապաղատին. «...բնակչության (Շավշեթի և Կղարջքի) այս տկար բեկորներն ուրախությամբ և սիրով հյուրընկալեցին Աշոտ կյուրապաղատը, որ հոն հաստատվեցավ։ Աստված դինքը հաղթող ըրավ և Շավշեթի ու Կղարջքի վրա իր իշխանությունը ամրացուց։ Իր ղրամովը քանի մը գյուղեր գնեց, ուրիշներու ավերակները կանգնեց և իր երկիրներուն մեջ շատ մը նոր գյուղեր շինեց։ Աստուծո շնորհքովը հույն կայսրներն անոր իշխանությունը ճանչրցան։ Անտառներուն մեջ գտավ այն քարաժայռը, որուն վրա Վախտանգ Գուրգասալը՝ Արտանուջ ամրոցը հիմնած էր, բայց Քրուի արշավանքին զոհ գացած ըլլալով, վերստին շինցուց ղայն, ամրոց կանգնեց և անոր պարիսպներուն առջևն և անոնց կից քաղաքի մը հիմը դրավ»։ Նույն աղբյուրի համաձայն Աշոտի երեք որդիներն էլ Ատրներսեհ, Բագրատ և Գուրամ իրենց կրթությունը ստացան Արտանուջ բերդի մեջ։ Մարկվարտ, Վրական Բագրատունյաց ծագումը, էջ 108—110։

13 Բնագրում Ἀρζῶν։ Տեղանուն չէ, այլ արաբերեն «Արդուն» բառը, որ նշա-

Նակում է երկիր, հողատարածություն և համանիշ է հունարեն χώρα-ի, Տե՛ս Brosset, Additions, p. 149, n. 6.

14 Բնագրում τῶν Μεσχιῶν, Վրաց Մեսխեթին, այսինքն Սամցխե գավառ, այժմյան Ախալցիխեի շրջան։ Սամցխե, Թաւր և Աճարա գավառները միասին կազմում էին Ստրարոնի Μεσχική երկրի իրերական (վրացական) մասը, որը Ճաները կոչում էին Մոցխիւ իսկ եգերացիք (մենգրելները) Օձրխե։ Նա կոչվում էր նաև «Վերին աշխարհ Վրաց» Տաշիս-Կարիից մինչև Ճորոխի գետաբերանը ձգվող երկրամասը։ Տե՛ս Ներմյան, Հայաստանը էջ 79, 83։

15 Նավատորմիղի դրունգարի տակ ենթադրվում է ծովակալը։ Այս պատրիկ Կոստանդինը Ռենսիմենի կարծիքով նույնանում է Կոստանդին Գոնգիլիոսի կամ Գոնգիլեսի հետ, որին Թեոփանեսի Շարունակողը 949 թ. տակ և այլ ելեինակներ հիշատակում են որպես ծովակալ Κωνσταντῖνον τὸν Γογγύλιον ναυαρχίας τάγματος. (Theoph. Cont., p. 436):

16 Բնագրում μαγγλαβίτης։ Մանգլավիտները մի տեսակ ոստիկաններ էին։ Նրանք ուղեկցում էին կայսեր և՛ ցամաքով, և՛ ծովով Ճանապարհորդելիս։ Զինված էին գուրզերով։ Մանգլավիտների պետը պրոտոսպաթարի աստիճան էր ունենում։

Մանգլավիտ բառի արմատը (մանկլաւ) հանդիպում է և հայկական աղբյուրներում. «որ զկարգաւ իւրով յաւուր մարտին զանց առնէ, մանկլաւով ծեծեն» (Աճառյան, Արմատական բառարան, հտ. Դ., էջ 820)։ Բառը ծագում է լատիներեն manualis clava (ձեռքի գավազան, կամ մահակ)։ Տե՛ս Աճառյան, Արմատական բառարան, հատ. Դ, էջ 820։

17 Միրանածինը իր «Արարողությունների մասին» աշխատության մեջ տալիս է մագիստրոսական հիմատիոնի նկարագրությունը։ Այն կոչվում էր στιχάριον καὶ βαλτίωτον. (De Cer., p. 144)։

18 Կյումենա լեռան վանքերը հաճախ են հիշատակվում, բայց նրանց տեղադրությունը վիճելի է։ Ի. Սոկոլովի կարծիքով գտնվում էին Բյութանիայում։ Տե՛ս И. Соколов, Состояние монашества в византийской церкви с половины IX до начала XIII века, Казань, 1894.

19 Սիմեոն պրոտոասեկրետի տակ ենթադրվում է հայտնի ժամանակագիր Սիմեոն Լոգոթետոսը։

20 Πιττάκιον (լատ. pittacium), գրություն, երկտող։ Այս բառից է ծագում հայերեն «պիտակ»-ը, որ նշանակում է «թուղթ գրեալ, կամ գրելի ի պետս ինչ թղթիկ, նամակ»։ Տե՛ս Ն. Բ. Հ. լ., հատ. Բ, էջ 649։ Համմտ. նաև Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հատ. Ե, էջ 1064—1066։

21 Կուրապաղատ Աշոտը մահացավ 954 թ., նրա եղբայր Դավիթը՝ 937 թ.։ Նրանք ունեին երկու եղբայր ևս, Բագարատ մագիստրոս և Սմբատ կուրապաղատ։ Նրանց հայրն էր Ատրներսեհ II կուրապաղատը։

22 Ժամանակակից տերմինով՝ պրեմիեր մինիստրը։

23 Ակամսին Ճորոխ գետն է, իսկ Մուրգուլին (հունարենում կարելի է կարդալ նաև Մուրդուլի) այսօր էլ կոչվում է Մուրգուլ սու։

24 Այսինքն Հովհաննես Կուրկուասը։

25 Միրանածինը դիմում է իր որդուն՝ Ռոմանոսին (Ռոմանոս II 959—963 թթ.)։ Ծնվել է 938 թ.։

Ծանոթագրություններ

ԳԼՈՒԽ 50

1 *Հուստինիանոս Մեծի մահից հետո նրա ստեղծած լայնատարած կայսրությունը սկսեց փուլ գալ։ Կայսրության թշնամիները ամեն կողմից արշավանքներ էին կազմակերպում և տիրանում Բյուզանդիայի նորանոր շրջաններին։ Բալկաններում սլավոններն ու ավարները իրենց արշավանքների ժամանակ հասնում էին մինչև Կոստանդնուպոլսի դարպասները։ Բյուզանդիան արդեն ստիպված էր ինքը սլավոններին բնակեցնել կայսրության տերիտորիաներում, հատկապես Դանուբ գետից հարավ ընկած շրջաններում և Պելոպոնեսում։ Այդ երևույթը ավելի լայն չափեր ստացավ Հերակլիոս կայսեր թագավորության վերջում։ Բյուզանդական պատմիչները մեզ հասցրել են սլավոնական այդ համայնքների անունները. Թեսաղոնիկեի արևմուտքում ապրում էին սագուդատները, ռենխինները, դրուգուվիտները, արևելքում ստրիմոնները, վայունիտները։ Կենտրոնական Մակեդոնիայում ապրում էին վերզիտները։ Պելոպոնեսում՝ Տայիգետոս լեռան ստորոտում. պատմական Սպարտայի շրջակայքում ապրում էին միլինգները ու էզերիտները։ VII դարում սլավոնական համայնքներ կային նաև Փոքր Ասիայում՝ Բյութանիայում։*

Սլավոնական համայնքների մասին Բյուզանդիայում տե՛ս Е. Э. Липшиц, Византийское крестьянство и славянская колонизация, Византийский сборник, М.—Л., 1945, стр. 96—143; Ее же, Очерки, стр. 18—49; Сборник документов по социально-экономической истории Византии, М., 1951, стр. 65—66, 73—102.

2 *Մայինա ամրոցը գտնվում էր Լակոնիայի նույնանուն լեռնային շրջանում։*

3 *Նախորդ գլխում (49-րդ) Միրանածինը խոսում է Պելոպոնեսի բանակաթեմի սլավոնների առաջին ապստամբության մասին՝ ընդդեմ Բյուզանդական կայսրության։ Այն տեղի ունեցավ Նիկեփոր I կայսեր ժամանակ (802—811) և թվագրվում է 807 թ.։ Այս առաջին ապստամբության մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում այսպես կոչված «Մոնեմվասիայի ժամանակագրությունը», որի համաձայն ապստամբության ճնշողների թվում էր «ծագումով Փոքր Հայքից Սկլերոսների ընտանիքին պատկանող մի ղոթավար»։ Նիկեփոր կայսրը ապստամբության ճնշումից հետո կատարեց մասսայական բնակեցում։ Լակեդեմոն քաղաքում բնակեցվեցին նաև հայեր։ Տե՛ս* N. A. Bees, Τὸ „Περὶ κτίσεως τῆς Μονεμβασίας" χρονικὸν καὶ ἡ ἱστορικὴ σημαντικότης αὐτοῦ, „Βυζαντίς„ 1909, No 1, σελ. 68.

Միրանածինը 50-րդ գլխում խոսում է Պելոպոնեսի սլավոնների երկրորդ ապստամբության մասին, որ տեղի ունեցավ Թեոփիլոս կայսեր (829—842) և նրա որդի Միքայել III կայսեր ժամանակ (842—867) 841—842 թթ. (Թեոփիլոսն ու Միքայելը 840—842 թթ. թագավորել են միասին)։

4 *Թեոկտիստոս Վրիեննիոսի արշավանքը Պելոպոնես տեղի ունեցավ Թեոփիլոսի մահվանից անմիջապես հետո՝ 842 թ., հետևաբար ապստամբությունը ծագեց նախորդ տարին՝ 841 թ. Թեոկտիստոս Վրիեննիոսին չշփոթել նրա նշանավոր ժամանակակից լոգոթետ Թեոկտիստոսի հետ։*

5 *Խոսքը Ռոմանոս I Լեկապենոսի մասին է։ Պելոպոնեսի սլավոնների այս երկրորդ ապստամբությունը թվագրվում է 921 թ.։*

5 Բնագրում ἄρχων։ Բյուգանդական «էպանագոգե» դատաստանագրքի համաձայն «արխոնտը գավառում կայսրից հետո բարձրագույն իշխանություն ունի» (ὁ ἄρχων ἐν τῇ ἐπαρχίᾳ μείζω ἁπάντων ἐξουσίαν ἔχει μετὰ τὸν βασιλέα. Epanag., tit. VI, cap. 3)։

7 Բնագրում Κρινίτζη τον Ἀροτρᾶν։ Կրինիտեսների հայկական ընտանիքի մասին տե՛ս վերը, գլուխ 43, ծանոթ. 44։

8 Ինչպես վկայում է անունը, Վարդաս, Կրինիտեսին փոխարինողն էլ ծագումով հայ էր։ Պլատիպոդես նշանակում է «լայնատոտ»։ Նա, ավելի ճիշտ նրա որդի Փոտինոսը, հիշատակվում է Թեոփանեսի Շարունակողի կողմից (Theoph. Cont., p. 401)։

9 Սլավոնների հարձակումը, որ թվագրվում է 922 թ. նույնանում է բուլղարների դեմ Պելոպոնես կատարած արշավանքի հետ։ Միրանածինը իրարից սահմանազատում է սլավներին (Σκλάβοι) սլավոններից (Σκλαβησιάνοι)։ Նրանց մասին ավելի մանրամասն տե՛ս Κ. Ἄμαντος. Σκλάβοι, Σκλαβησιάνοι καὶ βάρβαροι, Πρακτικὰ Ἀκαδημίας Ἀθηνῶν. τόμ. 7 (1932):

10 Կապադովկիայի զորավարության և Անատոլիկոնի զորավարության մասին տե՛ս «Բանակաթեմների մասին» աշխատության մեջ (տե՛ս սույն աշխատության 164—169-րդ էջում)։ Զորավարություն (στρατηγίς) տերմինը հոմանիշ է «բանակաթեմ» (θέμα) տերմինին։ Բանակաթեմի ղեկավարը զորավարն էր, հետևաբար բանակաթեմը հաճախ կոչվում է նաև զորավարություն։

11 Տուրմայի մասին տե՛ս 45-րդ գլխի 27-րդ ծանոթագրությունը։

12 Խարսիանոնի և Արմենիակների զորավարության մասին տե՛ս «Բանակաթեմների մասին» աշխատության մեջ (սույն աշխատության 168-րդ էջում)։

13 Բուկելլարների և Կապադովկիայի բանակաթեմների մասին տե՛ս «Բանակաթեմների մասին» աշխատության մեջ (սույն աշխատության 165-րդ էջում)։

14 Բանդոն (հունարեն βάνδον) բառացի նշանակում է դրոշ։ Բանակում բանդոնի տակ ենթադրվում էր զորամաս (այլ խոսքով տագմա կամ ալլագիոն), բաղկացած 200—400 հետևակայիններից կամ 50—400 ձիավորներից։ Այն գլխավորում էր կոմեսը։ Բանդոնը տուրմայի ստորաբաժանումն էր։ Բանդոնը կոչվում էր նաև տոպոտերեսիա (τοποτηρησία), որ բացի զորամասի հասկացողությունից, ուներ նաև տերիտորիալ նշանակություն, այսինքն այն շրջանը, որտեղ գտնվում էր տվյալ տոպոտերեսիան (պահակատեղին)։

15 Բնագրում Βαρέτας։

16 Բնագրում τοποτηρησία Βαλβαδῶνος։

17 Բնագրում τοποτηρησία Ἄσπονας։

18 Բնագրում τοποτηρησία Ἀκαρκοῦς։

19 Բնագրում τοποτηρησία Εὐδοκιάδος։

20 Բնագրում τοποτηρησία τοῦ ἁγίου Ἀγαπητοῦ։

21 Բնագրում τοποτηρησία Ἀφραζίας։

22 Բնագրում Κόμματα։

23 Բնագրում τοποτηρησία Μυριοκεφάλου։

24 Բնագրում τοποτηρησία Βερινουπόλεως։

25 Բնագրում Σανίανα։

26 Բնագրում Κομεδρόμου τοποτηρησία։

Ծանոթագրություններ

27 Բնագրում τοποτηρησία Ἀβίας։ Տալիան գտնվում էր Անկյուրայի շրջանում։

28 Բնագրում -σύρια Κασῆς։

29 Բնագրում τοποτηρησία Νύσσης։ Խոսքը Կապադովկիայի հին քաղաք Նյուսայի մասին է, Անկյուրալից Կեսարիա տանող ճանապարհի վրա, Ալիս գետի մոտ։

30 Բնագրում τὸ τοῦ Χοζάνου θέμα։ Խոսքը Չորրորդ Հայքի Խողանի մասին է, որ գտնվում էր Պաղնատուն գավառում։ Գևորգ Կիպրացին հիշատակում է այն πολίχνη Χοζάνου ձևով։ Կա ենթադրություն, որ այն կազմում է այժմյան Դևրսիմի սանջակի կենտրոնը։ Խոզանում էր գտնվում Չմշկածագը։ Սիրանածինը այն անվանում է «բանակաթեմ»։ Համմտ. Հյուբշման, Տեղվո անունները, էջ 157—158։

31 Բնագրում τὸ τοῦ Ἀρμοσάτου θέμα։ Խոսքը Արշամաշատ գավառի մասին է։ Կենտրոնն էր նույնանուն Արշամաշատ քաղաքը։ Գավառը այդպես էր կոչվում 387 թ. առաջ։ 387 թ. հետո գավառը անցավ բյուզանդացիների ձեռքը և Բալու կենտրոնից սկսեց կոչվել Բալահովիտ։ Միքայել Ատալիատեսը գավառը կոչում է Ἀνδίας։ Տե՛ս Ջրեմյան, Հայաստանը, էջ 43։

32 Բնագրում Χανζίτ։ Խոսքը Անձիտի մասին է, Չորրորդ Հայքի 6-րդ գավառի։ Գրավում էր Խարբերդի դաշտի հիմնական մասը։ Այս գավառում էին գտնվում Անձիտ, Հոռերերդ (Խարբերդ), Ճովք և այլ ամրություններ։ Գավառը հիշատակվում է Հուստինիանոս I կայսեր հրովարտակներում Ἀνζιτηνή և Anzetena ձևով։ Տե՛ս Ջրեմյան, Հայաստանը, էջ 36, ավելի մանրամասն տե՛ս Honigmann. Une «Scala» géographique p. 92—93։

33 Ռոմանոպոլիսը կառուցվել է Ռոմանոս I կայսեր կողմից։ Հիշատակվում է նաև հայկական աղբյուրներում։ Մատթեոս Ուռհայեցին 1031 թ. դեպքերի կապակցությամբ գրում է, որ Ռոմանոս կայսրը «շինեաց յիւր անուն բերդ և անուանեաց զնա Ռոմանապօլիս» (Ուռհայեցի, էջ 63)։ Նույն դարի երկրորդ կեսի սկզբներին Վասիլ Ապուքապը «շինեաց... զպարիսպն բերդաքաղաքին՝ որ կոչի Ռնապօլիս, զոր շինեաց Ռամանոս թագաւորն Հոռոմոց» (անդ, էջ 216)։ Մինչև վերջերս Ռոմանոպոլսի տեղադրության հարցում աշխարհագրագետների միջև բազմաթիվ վեճեր են եղել։ Վեճի վերացման պատճառ դարձավ մի ղպտի-արաբ աշխարհագրական տեղանունների ցուցակ։ Ղպտիերենի «Ռոմանոպոլսի» դիմաց արաբերենում գրված է՝ «Ջանջուր», որ Հոնիգմանը ուղղում է «Ճապաղջուր»։ Այս և մնացած փաստերի համադրությունից ելնելով, նա հնարավոր է գտնում Ռոմանոպոլիսը տեղադրել հայկական Ճապաղջուրի տեղում։ Տե՛ս Honigmann. Une «Scala» géographique, p. 87—123. Ս. Ջրեմյանը ենթադրում է, որ Ճապաղջուրը ավելի վաղ շրջանում կոչվել է Կիթառիճ (Պրոկոպիոս Կեսարացու Կիթարիզոնը)։

34 Բնագրում ὄρους τοῦ Φατιλάνου։ Տեղազրություն հայտնի չէ։ Հոնիգմանը ենթադրում է, որ խոսքը Ճապաղջրի լեռան մասին է. տե՛ս Honigmann. Une «Scala» géographique, p. 97։

35 Բնագրում Τεκῆς։ Հնում կոչվում էր Διγισηνή։ Հայոց Դեգիքը, Չորրորդ Հայքի 8-րդ գավառը, Եփրատ գետի և Չմշկածագի միջև։ «Աշխարհացոյցը» այս գավառում հիշատակում է երեք բերդ՝ Կոնի, Քրվիկ և Սոկ։ Տե՛ս Հյուբշման, Տեղվո անունները, էջ 154—155։ Ջրեմյան, Հայաստանը, էջ 49։

36 Մանվելը հայազգի էր, Այլ աղբյուրներում նա չի հիշատակվում, այլ միայն նրա որդիները։ Տե՛ս ստորև։

37 Բնագրում Κασπία τοῦρμα, խոսքը Անի-Կամախի մասին է, Բարձր Հայքում, որ Կոլոնիայի բանակաթեմի ծայրագույն գավառն էր հարավ-արևելքում։

38 Բնագրում Κελτζηνῆς τοῦρμα, խոսքը Եկեղյաց գավառի մասին է։ Միրանածինը այն հիշատակում է նաև «Բանակաթեմերի մասին» աշխատության մեջ «Խաղտիքի բանակաթեմի» կապակցությամբ։ Տե՛ս սույն աշխատության 170-րդ էջում։

39 Միջագետքի բանակաթեմի մասին մանրամասն տե՛ս Միրանածինի մոտ «Բանակաթեմերի մասին» աշխատությունը (9-րդ բանակաթեմ)։ ԵՒս կայսեր տակ ենթադրվում է Լևոն VI-րդը։

40 Մանվելի որդիների՝ Պանգրատուկասի, Յախնուկասի, Մուդաֆարի և Հովհաննեսի մասին տե՛ս Միրանածինի «Բանակաթեմերի մասին» աշխատության Միջագետքի բանակաթեմին նվիրված բաժնում։ Այնտեղ Մանվելը չի հիշատակվում, այլ միայն նրա որդիները, այն էլ որպես Պանգրատուկաս, Փուքրիկաս և Տավթուկաս անունների տակ։

41 Հիկանտոս (ἱκανατος) էր կոչվում բյուզանդական կայսերական թիկնապահ մի զորամասը, ամբողջությամբ բաղկացած ընտիր մարտիկներից։

42 Նիկոպոլսի զորավարի տակ ենթադրվում է Նիկոպոլսի կատեպանը, ինչպես որ Միրանածինն անվանում է նույն քաղաքի կառավարիչին այս նույն աշխատության 43-րդ գլխում՝ Պետրոնաս Բոյիլասի կապակցությամբ։

43 Խարսիանոնցի Օրեստեսի մասին տես Ա. Գրեգուարի Διγενῆς Ἀκρίτας աշխատությունը, էջ 13։ Ջենկինզը ենթադրում է, որ Օրեստեսը նույնանում է այն δομέστικος τῶν σχολῶν-ի հետ, որի եղբորորդուն Արեթաս Կեսարացին երկու նամակ է ուղարկել։ Տե՛ս **М. А. Шангин**, Византийские политические деятели первой половины X в., Византийский сборник, стр. 229.

44 Լարիսան Հոնիգմանը տեղադրում է Մանգուլիկում։ Լարիսան Լիկանդոս բանակաթեմի կենտրոնն էր։ Տե՛ս **Honigmann**, Die Ostgrenze, S. 50։ Լարիսան շատ հաճախ հիշվում է և հայկական սկզբնաղբյուրներում։ Գրիգոր Երեցը, հիշելով Սեբաստիայի ամիրա Աղուպ Ասլանի նվաճումների մասին, գրում է, որ ամիրան «եկն յերկիրն Լիկանդոսին և տարեալ զքրիստոնեայսն սիրով յերկիր իւր. և զամուրն Լառիս՝ և զայն ևս էառ»։ (Մատթ. Ուռհայեցի, էջ 408)։

45 Գրեգուարը Կյումբալեոսը նույնացնում է Կամուլիանայի հետ՝ Ալիս գետից հարավ, Կեսարիայից մի քանի մղոն հյուսիս-արևմուտք։ Իսկ Սյումպոսիոնը՝ Սոբեսոն-Սյուվեշի հետ, Կեսարիայից հարավ-արևմուտք։ Տե՛ս **H. Grégoire**, Byzantion, t. 8, (1933), p. 85—87։

46 Այս Եվստաթիոս Արգիրոսին մանրամասն հիշատակում է Թեոփանեսի Շարունակողը։ Նա ցույց է տալիս, որ Եվստաթիոսը ծագում էր Արգիրոսների նշանավոր ընտանիքից, որ նա պատրիկ էր և Անատոլիկոն բանակաթեմի ենթազորավար (ὑποστράτηγος) և բազմիցս պարտության է մատնել արաբներին։ Վերջիններս նույնիսկ նրա անունից էին սարսափում (Theoph Cont., p. 368—369)։ Այս Եվստաթիոս Արգիրոսը որդին էր Լևոն Արգիրոսի, որն աչքի ընկավ Միքայել կայսեր ժամանակ պավլիկյանների դեմ մղված պայքարում (Theoph. Cont., p. 165, 374)։ Բայց Լևոն VI

կայսրը, կասկածելով Եվստաթիոս Արգիրոսի հավատարմության վրա (կասկածում էին, որ նա մասնակցություն է ունեցել Անդրոնիկոս Դուկասի ապստամբությանը (906)), նրան պաշտոնանկ է անում, երբ նա վիգլայի դրունգարիոս էր և ուղարկում «իր տունը՝ Խարսիանոն»։ Բայց ճանապարհին թունավորում են նրան։ Նրա որդիների անուններն էին Պոթոս և Լևոն, աստիճանով մանգլավիտներ (Theoph Cont., p. 374)։ Լևոնն հետագայում դարձավ Սեբաստիայի զորավար, մագիստրոս և սխոլերի դոմեստիկոս։

47 Մելիասը հայկական Մլեհ անվան հունարեն արտասանությունն է։ Նա Լիկանդոս բանակաթեմի առաջին զորավարն էր և այդ պաշտոնում մնաց մինչև իր մահը՝ 934 թ. Ա. Գրեգուարը բյուզանդական Դիգենիս Ակրիտաս էպոսի գլխավոր հերոս Դիգենիսին նույնացնում էր այս Մելիասի հետ (տե՛ս նրա հոդվածը Revue des Etudes grecques, (t. XLVII, 1933, p. 63 sqq.) հանդեսում), բայց հետագայում հրաժարվեց այդ մտքից (տե՛ս նրա Διγενής Ἀκρίτας աշխատությունը, էջ 36—37)։ Մելիասի մասին Ծիրանածինը ավելի մանրամասն խոսում է «Բանակաթեմների մասին» աշխատության մեջ (տե՛ս սույն աշխատության 171-րդ էջում)։ Հայտնի է մի Մելիաս ևս, սխոլերի դոմեստիկոս, որ Հովհաննես Ցմշկիկ կայսեր օրոք գլխավորում էր բյուգանդական զորքերը արաբների դեմ։ Նա վերջիններիս ձեռքը գերի ընկավ և սպանվեց 973 թ.։ Այս Մելիասի մասին հիշատակություն ունի Մատթեոս Ուռհայեցին ՆԻԱ թվականի տակ. «...զօրապետն Հոռոմոց Դեմեսլիկոսն, որում անուն Մլեհ ասէին, ելեալ բազում զօրօք գայր ի վերայ Տաճկաց...» (Ուռհայեցի, էջ 14—16)։ Ն. Ադոնցը ենթադրում է, որ այս Մելիասը պատկանում էր վերոհիշյալ առաջին Մելիասի ընտանիքին և «անկասկած» նա Լիկանդոս բանակաթեմի կազմակերպողի որդին էր։ Տե՛ս Adontz, Notes I, p. 139։ Ավելի շուտ նրա թոռը կարող էր լինել և ոչ որդին։ Հայոց մոտ այնքան էլ ընդունված չէ հոր անունը տալ որդուն, այլ պապի, բացի այդ ժամանակագրական տվյալներն էլ մեր միտքն են հաստատում, եթե, իհարկե, Մելիասը անուն չէ, այլ վերածվել էր ազգանվան, որովհետև հայտնի է մի ոմն պրոտոսպաթար Գևորգ Մելիաս, որի կնիքը հասել է մեզ և Ադոնցի ենթադրությամբ նա երկրորդ Մելիասի որդին կարող է լինել (տե՛ս Ն. Ադոնց, նույն տեղում)։ Մելիաս [երկրորդից] հետո Լիկանդոսի բանակաթեմն անցնում է նույնպես հայկական մի ընտանիքի ձեռքը, Մխիթարի, որի որդին Վասիլը, հավանաբար, 973 թ. հետո դարձավ Լիկանդոսի կառավարիչը։ Լիկանդոս բանակաթեմի մի մասը Վասիլ II կայսրը տվեց Սենեքերիմ Արծրունուն, երբ վերջինս իր տիրույթները զիջեց կայսրության (Տե՛ս Ն. Ադոնց, նույն տեղում, էջ 140)։ Մելիասների մասին տե՛ս նաև սույն աշխատության 330-րդ էջում։

48 Բնագրում Βασάκιος (Վասակ)։ Ադոնցը գտնում է, որ Վասակավանը (Անձիտում) հիշեցնում է այս Վասակի անունը, և որ Մատթեոս Ուռհայեցու հիշատակած Մխիթար մեծը (Ուռհայեցի, էջ 7), որի մոտ՝ Վասակավան փախան Ռոմանոս կայսեր որդիները Ցմշկիկի ձեռքից, այս Վասակի հետնորդն էր (տե՛ս N. Adontz, Notes I, p. 138)։

49 Բնագրում Παζούνης։ Հայոց Բազունի անունն է։ Բացի այս Παζούνη -ից հիշված են Բազունի՝ իշխան Կիլիկիայի (XI-րդ դար) և մի այլ Բազունի՝ որդի պարոն Լևոնի Բաղունեաց (Կիլիկիա, XI—XII-րդ դար)։ (Տե՛ս Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, հատ. Ա, 1942, էջ 361)։

50 Հայոց մեջ առկա արաբական անունների մասին տես վերը, գլուխ 43-ի 23-րդ ծանոթագրություն։ Իմ կարծիքով բոլոր այս վերոհիշյալ անձնավորությունները, այն է Մելիասը, Վասակը, Կրիկորիկը, Պազունը, Իսմայիլը, ինչպես և Մանվելը և նրա որդիները պավլիկյան աղանդավորներ էին, ովքեր IX դարի 70-ական թվականներին Վասիլ Ա-ի սրանց հասցրած ջարդից հետո ապաստան էին գտել արաբների մոտ Մելիտենեում և Ջորրորդ Հայքում։ Վասիլի մահից հետո, երբ Լևոն Զ կայսրը պավլիկյանների նկատմամբ նոր քաղաքականության սկիզբ դրեց, նրանք վերադարձան Բյուզանդիա։ Մանրամասն տե՛ս Հ. Թաբթիկյան, Բյուզանդական էպոսը և Արաբական Հայաստանի նվաճումը Լևոն Զ-ի ժամանակ, Բանբեր Երևանի Համալսարանի, 1969, № 2։ Արտահայտվել է այն կարծիքը, որ Մելիասը մասնակցել է Անդրոնիկոս Դուկասի ապստամբության (906) ընդդեմ Լևոն Զ-ի և դրա անհաջող ելքից հետո փախել Մելիտենե, բայց Մելիասը հիմնադրեց բյուզանդական կլեյսուր Լիկանդոսը 907 թ. ոչ ուշ. հագիվ թե 906 թ. ապստամբության մասնակցողը և փախչողը հենց հաջորդ տարին վերադառնա Բյուզանդիա։ Միրանածինի ասածն էլ, թե Մելիասը «դեռևս Մելիտենեում փախստական էր», ցույց է տալիս, որ նա վաղուց էր փախել այնտեղ։

51 Մելիասի իրիսովուլլը իր արձագանքն է գտել բյուզանդական Դիգենիս Ակրիտաս էպոսում (Տրապիզոնի տարբերակ, տող 1540 և հտ. տե՛ս Adontz. Notes I, p. 146)։

52 Բնագրում Εὐφράτεια։ Հոնիգմանը Եփրատիան տեղադրում է Եփրատից արևմուտք, Տիվրիկի (Հյուսիսում) և Արաբայի (Հարավում) միջև։

53 Τρύπια-ի մասին տես Հոնիգման Die Ostgrenze, էջ 65, նաև Ա. Գրեգուար, Διγενὴς Ἀκρίτας. σ. 118։ Համմ. Adontz, Notes I, p. 192։ Տրյուպիա հունարեն նշանակում է «Ծակեր», որը, հասկանալի է, համահնչոն օտար բառի հիման վրա է ձևված։ Ենթադրում ենք, որ արաբերեն ալ-Դուրուբ բառն է, որ նշանակում է կիրճ, կապան, Տե՛ս H. Grégoire—N. Adontz Aux confins militaires de l' Orient byzantin, Hussards, trabans, tasnaks. Byzantion t. XIII (1938), fasc. 1, p. 281; Համմ. Byzantion, t. X (1935), p. 255։

54 Լիկանդոսի մասին մանրամասն տե՛ս «Բանակաթեմերի մասին» աշխատության մեջ (սույն աշխատության 171-րդ էջում)։

55 Բնագրում ὄρος τῆς Τζαμανδοῦ։ Հայկական աղբյուրներում Ծամանդավ, Կեսարիայից արևելք։ Կար նույնանուն ամրոց, որն այժմ կոչվում է Ջամանտի կալեսի և Ծամանգաւ գետ (այժմ Ջամանտի սու). Տե՛ս Երեմյան, Հայաստանը, էջ 56։ Ուռհայեցու տվյալներով, երբ Սենեքերիմ Արծրունու որդի Դավիթը սպանեց կայսեր դեմ ապստամբության բարձրացրած Նիկեփոր Ծուլիգին, 1022 թ., Վասիլ II-ը նրան որպես փոխհատուցում տվեց «զԿեսարիա և զԾամնդաւ և Խաւատանէքն հանդերձ սահմանօքն»։ Նույն Ուռհայեցու տվյալներով հետագայում Կարսի թագավոր Գագիկը, երբ թողեց իր երկիրը և գնաց Բյուզանդիա, «թագաւորն Տուկիծ տայր նմա զԾամնդաւ» (Ուռհայեցի, էջ 51, 151, 216)։

Կեդրինոսը հիշում է Ծամնդավ քաղաք (πόλις), որ կառուցված է բարձր ժայռի վրա, բազմամբոխ և անչափ հարուստ. πολυάνθρωπος καὶ πλούτῳ περιβριθής։ Cedr., II, p. 423։

Ծանոթագրություններ

56 Խոսքը Կոստանգին Միրանածինի (913—959) և նրա մոր Զոեի մասին է։

57 Արարան Միրանածինը հիշատակում է նաև Վասիլ I-ի կենսագրության մեջ (տե՛ս սույն աշխատության 67-րդ էջում), ցույց տալով, որ այն Տիվրիկի մոտակայքում գտնվող բերգ էր և պատկանում էր պավլիկյան աղանդավորներին։ Գրավվեց և կործանվեց Վասիլ I-ի կողմից 871 թ.։ Կեղրինոսի տվյալներով Վասպուրականի թագավոր Սենեքերիմ Արծրունին Վասիլ II-ից ստացավ բացի Սեբաստիայից և Լարիսայից, նաև Աբարան։ (Տե՛ս Cedr. II, p. 464)։

ԳԼՈՒԽ 51, 53

1 «Կայսրության կառավարման մասին» աշխատության 51-րդ գլուխը նվիրված է կայսեր անձնական նավատորմիղին։ Բյուրին որպես կովան ունենալով այն փաստը, որ Ֆիլոթեոսի Կլետորոլոգիոնում, որ կազմված է 900 թ., կայսերական դրոմոնիոնների և աղրարիոնների գլխավորող ֆիալայի պրոտոսպաթարի մասին խոսք չկա, ենթադրում է, որ Լևոն VI-րդի կայսերական անձնական նավատորմիղ ստեղծելու այս որոշումը իրականացել է 900 թ. հետո, (Bury, IAS, p. 110)։ Կայսերական նավատորմիղը բաղկացած էր ագրարիա կոչված դրոսանավերից, ռազմանավերից և խելանդիոններից։ Մովայիններ բաժանված էին առանձին խմբերի, որոնց միավորը՝ ուսիան (οὐσία) բաղկացած էր 108 հոգուց։ Ավելի մեծ չափի խելանդիոնները կոչվում էին դրոմոն կամ դրոմոնիոն, որոնց յուրաքանչյուրի վրա ծառայում էին երկու ուսիա։ Օտարազգի նավաստինները ծառայում էին մի երկրորդ տեսակի խելանդիոնի վրա, որը կոչվում էր «պանֆիլոն խելանդիոն» կամ «պամֆիլոս դրոմոն»։ Յուրաքանչյուրի վրա լինում էր 150 նավաստի և փաստորեն հետերիաների ծովային ուժերն էին ներկայացնում։ Կայսերական նավատորմիղը բաղկացած էր 100 սովորական խելանդիոնից, որոնց յուրաքանչյուրի նավաստինների թիվը 103 էր, հետևաբար 10.800 հոգի, ութ պամֆիլոն նավերից, յուրաքանչյուրը 150 նավաստիներով, 1.200 հոգի։ Ընդամենը 12.000 հոգի։ Հարյուր ուսիաները ստորաբաժանվում էին չորս բանակաթեմի (θεμα) և համապատասխանում են կայսերական թիկնապահ դորքի չորս տագմաներին։

2 Պրոտոկարավոս (πρωτοκάραβος) էին կոչվում կայսերական անձնական նավերի նավապետները։ Նրանք ընտրվում էին կայսերական նավատորմիղի լավագույն նավապետների միջից, նրանցից ոմանք իրենց պաշտոնավարության վերջում ստանում էին ֆիալայի պրոտոսպաթարի բարձր աստիճանը (տե՛ս Brehier. Les Institutions, p. 411)։ Որոշ ուսումնասիրողներ դեմ են այս բացատրությանն։ Նրանք ցույց են տալիս, որ պրոտոկարավոսը նավապետ չէ, որ նավապետը կոչվում էր կենտարխոս, իսկ պրոտոկարավոսները համապատասխանում են ժամանակակից միջմաններին (տե՛ս DAI, II, p. 200)։ Տե՛ս և հաջորդ ծանոթագրությունը։ Լևոն Զ-ի ասելով, պրոտոկարավոս էին կոչվում դրոմոնի ցրուկի երկու նավավարները։ Տե՛ս Leonis imperatoris Tactica, col. 993։

3 Բնագրում πρωτοσπαθάριος τῆς φιάλας, ծովային դատարանի նախագահը, որի իրավասության տակ էին դրված կայսերական անձնական նավատոր-

միդի նավաստինները (տե՛ս Brehier, Les Institutions, p. 411)։ Կա նրան նվիրված մասնավոր ուսումնասիրություն։ Տե՛ս A. Vogt, Le protospathaire de la phiale et la marine byzantine, Echos d'Orient, t. 39 (1941/1942), p. 328—332։

4 Այս Հովհաննես Թալասսոնը ամենայն հավանականությամբ հայ էր և պատկանում էր Դալասսեննների նշանավոր ընտանիքին։ Դալասսենների տոհմի մասին մանրամասն տե՛ս Adontz, Notes I, p. 163—177։ (Ունի հայերեն թարգմանություն, իրականացված Ինգիլիգյանի կողմից։ Տե՛ս Հանդէս Ամսօրեայ, 1936, սյունակ. 269—276)։

5 Պոդարոնը փոխարինեց Հովհաննես Թալասսոնին 902 թ.։ Պոգարոնը և նրա հաջորդ Լևոն հայր այդ պաշտոնը վարեցին ոչ ավելի քան տաս տարի, քանի որ Լևոն հայի հաջորդը՝ Բիմբիլիզնսը այդ պաշտոնն ստացավ 913 թ. առաջ։ Բիմբիլիզնսը այդ պաշտոնը վարեց 916 թ. ոչ հետո, որի հաջորդ Թեոդորոսը նշանակվեց սենեկապետ Կոստանդինի կողմից, որի պաշտոնավարությունն ավարտվեց 919 թ. ամռանը (տե՛ս DAI, II, p. 199)։

6 Արսեն պրոտոսպաթարի և մանգլավիտի մասին մանրամասնություններ է հաղորդում Թեոփանեսի Շարունակողը, նա ցույց է տալիս, որ 921 թ. Արսենը և Պավլոս անունով մի այլ մանգլավիտ դավադրություն են կազմակերպել Ռոմանոս I Լեկապենոս կայսեր դեմ։ Դավադրությունը մատնությամբ հայտնի է դառնում, և Արսենին ու Պավլոսին գանահարելուց և նրանց ունեցվածքը բռնագրավելուց հետո աքսորում են (տե՛ս Theoph. Cont., p. 398—399)։

7 Բնագրում ὀρουγγάριος τοῦ πλωΐμου։ Նախքան Լևոն III կայսրը Բյուզանդական կայսրության ռազմածովային ուժերը գտնվում էին բարձրաստիճան մի ծովակալի ձեռքում, որը կոչվում էր στρατηγὸς τῶν Καραβισιανῶν։ Նրան էր ենթարկվում ὀρουγγάριος τῶν Κιβυραιωτῶν-ը։ Լևոն III-րդը վերացրեց ծովային ուժերի գերագույն հրամանատարությունը և ստորաբաժանեց այն։ Նա Կիբիրեոտների դրունգարին բարձրացրեց ստրատեգոսի (զորավարի) աստիճանին։ Մյուս ծովային կարևոր բանակաթեմն էր Դոդեկանեզը, որը կոչվում էր նաև էգեական ծովի բանակաթեմ և VIII դարի ընթացքում, մինչև Միքայել III կայսեր թագավորությունը, գտնվում էր դրունգարի հրամանների ներքո։ Միքայել III-րդի և Վասիլ I-ինի ժամանակ ստեղծվեց երրորդ ծովային բանակաթեմը՝ Սամոսը։ Այս նավատորմիղը հայտնի էր որպես բանակաթեմի նավատորմիղ (θεματικὸς στόλος)։ Ահա այս նավատորմիղից միանգամայն անկախ էր Կոստանդնուպոլսի նավատորմիղը։ Կոստանդնուպոլսի և նրա շրջանների մշտական պաշտպանության համար առանձնացված նավատորմիղը կոչվում էր βασιλικὸν πλωΐμον (կայսերական նավատորմիղ), ի տարբերություն բանակաթեմերին պատկանող նավատորմիղից։ Այս կայսերական նավատորմիղի զորամասերը կատարում էին ծովային ոստիկանության դեր և բռնած էին կարևոր ստրատեգիական դիրքեր՝ Դարդանելի և Բոսֆորի մուտքի մոտ, Դիրախիոնում, Դալմատիայում և Սիկիլիայում։ Այս նավատորմիղի նավապետն ահա կոչվում էր «նավատորմիղի դրունգար» (ὀρουγγάριος τοῦ πλωΐμου)։ (տե՛ս Bury, IAS, p. 108—109; Brehier, Les Institutions, p. 410—411)։ Նավատորմիղի դրունգար նասարը քաջա-

ծանոթ է բյուզանդական աղբյուրներում, նրա մասին Միրանածինը հիշատակում է նաև Վասիլ կայսեր կենսագրության մեջ (տե՛ս § 62—63)։

8 Բնագրում πρωτελάται։ Յուրաքանչյուր նավի վրա լինում էր մեկ պրոտելատ և մեկ դևտերոելատ։

9 Բնագրում τοποτηρητὰς τοῦ βασιλικοῦ πλωΐμου։ Նրանց մասին Միրանածինը հիշատակում է և «Արարողությունների մասին» աշխատության մեջ (տե՛ս սույն աշխատության 149-րդ էջում), որտեղ ցույց է տրված, որ այդ տոպոտերետեսները չորսն էին։ Ենթադրվում է, որ 900—910 թվականների ընթացքում կայսերական անձնական նավատորմիղում տեղի է ունեցել ռեֆորմ և այն բաժանվել է չորս մասի։ Ինչպես այդ չորս տագմատաներն ունեին իրենց տոպոտերետեսներին, ապա և կայսերական նավատորմիղը ուներ իր չորս տոպոտերետեսներին։

10 Կիբիրեոտների ծովային բանակաթեմի կազմի մեջ էին մտնում Հոնիայի և Կարիայի մեծ մասը, ամբողջ Լիկիան, Պամֆիլիան, Պիսիդիան և Կիլիկիայի մի մասը։ Նրա կազմում էին Միլետոս, Միլասա, Հալիկառնասոս, Մյուրա, Նյուսա, Պերգե, Սիդե և այլ քաղաքներ։ Մայրաքաղաքն էր Փոքր Կիբիրա քաղաքը։

11 Կոստանդին Միրանածինի առաջին մենիշխանությունը՝ 913 թվականի հունիսի 7-ից մինչև 920 թվականի դեկտեմբերի 17-ը։

12 Քաղաք Ղրիմում։ Այժմ էլ կոչվում է Խերսոն։ Միրանածինի աշխատության 53-րդ գլուխը ինչպես դժվար չէ համոզվել, անմշակ նյութ է, որ պատահաբար է կցվել «Կայսրության կառավարման մասին» աշխատությանը։

13 Այս դեպքերը տեղի են ունեցել հավանաբար 284—293 թվականների միջև, երբ Դիոկլետիանոսը կայսր էր, իսկ Կոստասը (խոսքը Կոստանդին I կայսեր հոր մասին է) տրիբուն և դեռ չէր ուղարկվել Գալլիա։ Սարմատների այս արշավանքի մասին Միրանածինը եզակի աղբյուր է (տե՛ս DAI, II, p. 206)։

14 Դիոկլետիանոսի ժամանակ Բոսպորոսի թագավորն էր Թոթորսեսը։ Բոսպորոսում թագավորել են բազմաթիվ անձինք՝ Սավրոմատես անունով։ Դիոկլետիանոսի ժամանակ թագավորում էր Սավրոմատես IV (275—276 թթ.), Ռեսկուպորիսի որդին, որի անունը Միրանածինի մոտ աղավաղվել է և դարձել Կրիսկորոնոս (տե՛ս DAI, II, p. 206)։

15 Մեոտիս լիճ էր կոչվում Ազովի ծովը։

16 Տամատարխայի տակ ենթադրվում է ռուսական աղբյուրների Տմուտարականը՝ Ղրիմում։ Նրա մասին տե՛ս Е. Ч. Скржинская, Греческая надпись из Тмутаракани, Виз. Вр., т. XVIII, 1961, стр. 79; G. G. Litavrin, A propos de Tmutorokan, Byzantion, t. XXXV (1966), p. 221—234։

17 Զեխիայի տակ ենթադրվում է ադիղեյհների երկիրը (տե՛ս Анчабадзе. Из истории, стр. 110)։ Միրանածինը իր այս աշխատության 42-րդ գլխի վերջում համառոտ խոսում է Զեխիայի մասին, ցույց տալով, որ «Տամատարխայից (Տմուտորականից) հոսում է մի գետ՝ 18 կամ 20 մղոն երկարությամբ, որը կոչվում է Ուկրուկ (հավանաբար Կուրանը). սա բաժանում է Զեխիան Տամատարխայից։ Ուկրուկից մինչև Նիկոպսիս գետը, որտեղ և գտնվում է համանուն ամրոցը, Զեխիա երկիրն է։ Տարածությունը 300 մղոն է։ Նիկոպսիսը համապատասխանում է ժամանակակից

Նիչեպտուխո գետին, շուրջ 20 կմ ուղիղ գծով Տուապսե քաղաքից հյուսիս։ Նիկոպսիս ամրոցի ավերակները մինչև օրս էլ երևում են այս գետի ծովը թափվելու վայրում (տե՛ս Ачнабадзе, Из истории, стр. 110)։ Միրանածինը ցույց է տալիս նաև, որ Նիկոպսիս գետից այս կողմ գտնվում է Արագգիան (Ափխազիան)։ Տե՛ս DAI, II, p. 156։

18 Պապագե վայրը այլ աղբյուրներից հայտնի չէ։ Տեղադրությունը անհայտ է։

19 Խոսքը Դևրջանի մասին է։

20 Բնագրում Τζιλιαπερτ։ Պարզ չէ, թե ինչի մասին է խոսքը։ Ենթադրում են, որ կարող է Բաբերդը լինել (DAI. II, p. 209)։ VII-րդ դարի հայկական «Աշխարհացոյց»-ի տվյալներով պատմական Հայաստանի հետևյալ շրջաններում կար նավթ (սպիտակ և սև). Տուրուբերան նահանգում՝ Մեղեդուղի և Այծպտունք լեռներում, ինչպես և Աղձնիքում։ Տե՛ս Ոսկյան, Հայաստանը, էջ 107, 108։

21 Բնագրում Σρεχιαβαράζ։ Պարզ չէ ի՛նչը նկատի ունի։

ՎԱՍԻԼ I ՄԱԿԵԴՈՆԱՑԻ ԿԱՅՍԵՐ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1 Բառախաղ Վասիլ անվան (Βασίλειος) և βασιλεία բառի, որ նշանակում է թագավորություն։

2 Փարթամացած ծառի տակ ենթադրվում է Մակեդոնական հարստությունը, իսկ նրա արմատի տակ՝ Վասիլ I կայսրը, հարստության հիմնադիրը։

3 «Վասիլի ընտանիքի անդամը» Կոստանդին Միրանածինն է, Վասիլ I-ի թոռը և Լևոն VI Իմաստասեր կայսեր որդին։

4 Վասիլի տոհմի պատմությունը մինչև Միրանածինի որդի Ռոմանոս II-ը շարադրել են անանուն հեղինակներ, որոնց գործը գիտությանը հայտնի է Թեոփանեսի Շարունակող կամ Շարունակված Թեոփանես անվան տակ (հունարեն բնագրում՝ μετὰ Θεοφάνην)։ Խնդրո առարկա ժամանակագրությունն սկսվում է այն տեղից, որտեղ Թեոփանեսը վերջացրել է իր պատմական երկը, այն է Լևոն V Հայկազնից։ Ինչպես այդ մասին ասվել է սույն հատորի Առաջաբանում, Թեոփանեսի Շարունակողի ժամանակագրությունը բաղկացած է վեց գրքից, որի հինգերորդը՝ Վասիլ I-ի կենսագրությունը շարադրել է ինքը՝ Կոստանդին Միրանածինը։

5 Միրանածինը Վասիլի ծննդավայրն է համարում Մակեդոնիան։ Մի փոքր հետո (§ 4) կոնկրետացնում է, ցույց տալով Ադրիանուպոլիս քաղաքը, որը սակայն Թրակիայում է գտնվում։ Մի այլ տեղում (§ 9) Միրանածինը գրում է «Թրակիայի Մակեդոնիա» ἐκ Μακεδονίας τῆς Θράκης։ 1011 թվակիր հայերեն մի ավետարանի հիշատակարանում ցույց է տրված, որ Ադրիանուպոլիսը Մակեդոնիայում է գտնվում. «ի գաւառին Մակեդոնիոյ ի քաղաքն որ կոչի Անդոնապաւլիս» (տե՛ս Ադոնց, Վասիլ Հայազն, էջ 458։ Հայերեն հիշատակարանի «Անդոնապոլիս» ձևը աղավաղում չէ։ Այդպես էր նա կոչվում տվյալ ժամանակաշրջանում։ Խան Կրումին վերագրվող մի հունարեն արձանագրության մեջ քաղաքի անունը բերված է Ἀνδριανούπολις ձևով։ Տե՛ս I. Venedikov, La population byzantine en Bulgarie au debut du IX–e siecle, Byzantino-Bulgarica, t I, Sofia, 1962, p. 264)։ Հայկական ավանդությունը Վասիլի ծննդավայրը համարում է Հայաստանը։ Այսպես՝ Կիրակոս Գանձակեցին գրում է. «և յետ նորա (Միքայելի Հ. Բ.) Վասիլն, գսա ասեն ի Տարօնոյ, ի գեղչէ Թլայ» (տե՛ս Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 80)։

6 Սկզբնաղբյուրների տվյալների համաձայն Վասիլի հայկական ծագումն անվիճելի է։ Շատ հետաքրքիր է այդ տեսակետից X դարի առաջին կիսում գրված «Եվթիմիոսի վարքը» (կոչվում է նաև «Պսամաթիական ժամանակագրություն»), որն հիմնականում ընդգրկում է Լևոն VI-ի (886—912) պատմությունը։ Այնտեղ գրված է հետևյալը. «[Վասիլը] խնամակալ է թողնում Ստիլիանոսին, որին հայերեն Ջաուցա էին անվանում, որովհետև նա էլ էր մակեդոնացի և ծագումով հայ, ինչպես և ինքը»։

տե՛ս Vita Euthymii, ed. de Boor, p. 6)։ Տվյալ տեղի ռուսերեն թարգմանությունը, որ իրականացրել է Ա. Պ. Կաժդանը («Царь оставил опекуном Стилиана, армянское имя которого было Зауца (он был армянином, родившимся в Македонии, подобно самому императору») ճիշտ չէ այն պատճառով, որ փոխում է բնագրում եղած «մակեդոնացի» և «հայ» բառերի հերթականությունը, որով շեշտը դրվում է Վասիլի և Զաուցայի մակեդոնացի լինելու հանգամանքի վրա, այնինչ բնագրում շեշտը դրված է այդ երկուսի «հայ» լինելու հանգամանքի վրա։ Բնագրում այսպես է. „Στυλιανῷ δὲ τῷ καὶ Ζαούτζῃ κατὰ τῆς τῶν Ἀρμενίων διαλεκτον προσαγορευομένῳ, ὡς ἄτε Μακεδόνι ὄντι καὶ τὸ γένος Ἀρμένιον, καθὼς καὶ αὐτος„։ (Գրիգոր Բակուրյանի՝ Ֆիլիպուպոլսի Բաշկովո վանքի համար 1083 թ. գրած «Կանոնադրության» մեջ հիշվում են վանքին պատկանող մի շարք գյուղեր, այդ թվում և Բակուրյանի կողմից նրան նվիրաբերված մի պրոաստիոն, որ կոչվում է «Զաուցայի» (προάστειον τὸ ονομαζόμενον τοῦ Ζαούτζῃ). Այն գտնվում էր Վոլերոյի թեմում։ Տե՛ս Сведения византийских писателей о Грузии, том V, греческие тексты с грузинским переводом издал и примечаниями снабдил С. Г. Каухчишвили, Тбилиси, 1963, стр. 122)։ Առաջին անգամ Reiske-ն էր, որ Միրանածինի մասին գրած ծանոթագրություններում առաջ քաշեց Վասիլի սլավոնական ծագման մասին տեսությունը։ Նա հենվում էր Համզա Իսպահանցու տվյալների վրա, որի համաձայն Վասիլը սլավոն էր, հակառակ այն բանի, որ Herbelot-ն վաղուց էր ցույց տվել, որ արաբ հեղինակները «սլավոնի» տակ նկատի ունեն մակեդոնացուն (համմտ. Ադոնց, Վասիլ Հայաղն, էջ 495։ Նույնի L' âge p. 104)։ Ռուս բյուզանդագետ Վասիլևը առաջ քաշեց Վասիլի արմենո-սլավ ծագման մասին տեսությունը (տե՛ս B. B., XII, 1906, p. 148—165։ Նույնի Histoire..., t. I, p. 398)։ Ն. Ադոնցը կանգ է առնում նաև Վասիլի արտաքինի նկարագրության վրա, որ տալիս է Սիմեոն Մագիստրոսը (ըստ նրան, Վասիլն ուներ իրար միացած հոնքեր, սև աչքեր, թուխ դեմք) և մի անգամ ևս ապացուցում, որ մենք ամենևին էլ գործ չունենք սլավոնական տիպարի հետ։ Բյուզանդական պատմիչ Իոելը Վասիլին անվանում է κεφαλᾶς «մեծ գլուխ» (տե՛ս Ioellis Chronographia compendiaria, Bonnae, 1836, p. 55)։

7 Վասիլն, իհարկե, ծագումով Արշակունի չէր։ Արշակունիների տոհմը վաղուց էր սպառվել (Adontz, L' âge, p. 105)։ Աղբյուրները որպես կանոն ընգգծում են Վասիլի համեստ ծագումը։ Ն. Ադոնցը հակառակ դրան, ուզում է Վասիլին տալ Բագրատունի կամ Մամիկոնյան ծագում (տե՛ս L' âge, p. 106)։

8 Նկատի ունի Պարթևների Արշակ I արքային, որ 249/248 թ. մ.թ.ա. հիմնադրեց Պարթևական հարստությունը Պարսկաստանում։

9 Ն. Ադոնցը ենթադրում է, որ այս Արտավանի տակ նկատի է առնված Հուստինիանոսի ժամանակ Պարսկահայաստանից Կոստանդնուպոլիս փախած և ապաստանած, ապա նշանավոր գորավար դարձած Արտավան Արշակունին, որի մասին մանրամասն խոսում է Պրոկոպիոս Կեսարացին։ Միրանածինը ցույց է տալիս, որ Արտավանն ապրում էր Լևոն I կայսեր

թագավորության ժամանակ, իսկ Պրոկոպիոսի մոտ պատմական, իրական Արտավանը գործել է Հուստինիանոս I-ի ժամանակ։ Ադոնցը ժամանակագրական այս տարբերությունը չնչին է համարում (տե՛ս L' âge. p. 89)։ Ինչ վերաբերում է Կլեյենեսին, ապա այդ անունը ևս հունական չէ։ Ամմիանոս Մարկելլինոսը IV-րդ դարում հիշատակում է երկու հայ մեծամեծների, ովքեր կոչվել են Արտավան և Cylaces (Amm. 29, 12, 30, 1. վերջինիս անունը Ն. Ադոնցը ուղղում է Gylaces)։ Նրանք ըստ Ադոնցի համապատասխանում են Փավստոսի Մուշեղ Մամիկոնյանին և Գլակ Մարդպետին։ VI-րդ դարում վերոհիշյալ Արտավանի ժամանակ գործում էր մի Գլակ զորավար ևս։ Ըստ Ադոնցի այս երկու զույգերը՝ Արտավան և Գլակ, համապատասխանում են Միրանածինի Արտավանին և Կլեյենեսին և նրանց նախատիպարներն են (տե՛ս L' âge, p. 90։ Նույնի, Վասիլ Հայազն, էջ 487)։ Պետք է ընդունել, որ Ն. Ադոնցի այս նույնացումները բավականին համարձակ են։

10 Խոսքը Լևոն I կայսեր մասին է (457—474)։

11 Արաբ խալիֆան։

12 Հերակլ կայսրը (610—641)։

13 Կոստանդին VI կայսրը (776—797) և նրա մայրը Իրենեն (780—797)։ Իրենեն միահեծան թագավորեց 797—802 թթ.։

14 Մայիկտես կամ Մայկես-Մայակես, ըստ Ն. Ադոնցի հայկական Համայակ անունն է։ Ղևոնդ պատմիչը վկայում է, որ 771 թվականի ապստամբության հերոս Արտավազդը, որ ստիպված անցավ բյուզանդացիների կողմը և դարձավ Անատոլիկոն բանակաթեմի զորավարը, Համայակի որդին էր (Ղևոնդ, էջ 19, հմմտ. Կաղանկատվացի, Բ, 46)։ Ն. Ադոնցը կարծում է, որ Վասիլի ծննդաբանության մեջ հենց այս Համայակի արձագանքներին ենք հանդիպում։ Եվ քանի որ Մայիկտես-Համայակը գնաց Կոստանդնուպոլիս Կոստանդին և Իրենեի ժամանակ (780—781), ապա, ըստ Ադոնցի, Արտավազդը ըստ երևույթին ունեցել է որդի, որ կոչվել է պապի անվամբ Համայակ (տե՛ս L' âge, p. 92. Նույնի, Վասիլ Հայազն, էջ 488—489)։ Համայակ անունը ինչպես ցույց է տալիս Ադոնցը, Մամիկոնյան ընտանիքին է յուրահատուկ, բայց Վասիլի եղբոր անունը Սմբատ էր, մի անուն, որ տարածված էր Բագրատունիների մոտ։ Ադոնցը այդ հակասության համար էլ ելք է գտնում, ենթադրելով, որ Վասիլի (Մամիկոնյան) ընտանիքը խնամիական կապեր էր հաստատել Բագրատունիների հետ։ Ինչ վերաբերում է Լևոնին, Մայիկտեսի աներոջ, ապա, ըստ Ն. Ադոնցի, նրան կարելի է նույնացնել այն Լևոնի հետ, որ հետագայում դարձավ կայսր՝ Լևոն V Հայազն անվամբ (813—820) (տե՛ս Ադոնց, Վասիլ Հայազն, էջ 489։ Նույնի L' âge, p. 94). Այս բոլորը հասկանալի է, պարզ ենթադրություններ են, որոնց հավաստիությունը և ոչ մի աղբյուրով հնարավոր չէ հաստատել։ Այն հանգամանքը, որ Լևոն V-ի մի որդին կոչվում էր Սմբատ, իսկ մյուսը Վասիլ, իսկ Սմբատն էլ թագաժառանգ նշանակվեց Կոստանդին անվամբ, անուններ, որոնք տարածված էին Վասիլ 1-ի ընտանիքում, դեռևս ապացույց չի կարող հանդիսանալ Լևոնի և Վասիլի ենթադրյալ ազգակցության։

15 Վասիլի ծագման մասին առասպելը հորինողները աշխատել են ցույց տալ,

որ Վասիլը սերում է Արևմուտքի առաջին քրիստոնյա կայսր Կոստանդինից և Արևելքի առաջին քրիստոնյա թագավոր Տրդատից։ Ծագումը Կոստանդին Մեծից բերելը նրևի շատ մոգայական էր։ Հայազգի մի այլ ընտանիք ևս նշանավոր Փոկասները նույնպես իրենց Կոստանդին Մեծի ազգականներ էին համարում։ (Տե՛ս Michaelis Attaliotae Historia, Bonnae, 185, p. 217)։ Վասիլի ծնողների անունները Միրանածինն այստեղ չի հիշատակում, բայց «Արարողությունների մասին» աշխատության մեջ նա ցույց է տալիս, որ Վասիլի մոր անունը Պանկալո էր (տե՛ս սույն աշխատության 144-րդ էջում)։ Ըստ Ադոնցի Պանկալոն հայ էր (Վասիլ Հայազն, էջ 490։ Նույնի L'âge, p. 93) և որպես հիմք է ընդունում այդ կնոջ որդիների անունները. Սմբատ, ապա Մարիանոս (Մանվելի եղբայրը՝ կեսար Վարդաի, զորավար Պետրոնասի և կայսրուհի Թեոդորայի հայրը կոչվում էր Մարիանոս)։ Տե՛ս հաջորդ ծանոթագրությունը։

16 Հայ հեղինակներից Վարդան Արևելցին վկայում է, որ Վասիլի մայրը հայ էր. «քանզի Վահան ոմն եպիսկոպոս Տարօնոյ ասէր նմա (Վասիլ կայսեր Հ. Բ.), թէ Արշակունի իցէ. ղի մայրն հայ էր. և կատարիլ թուէր Տնլեանն Սահակայ սրբոյ՝ նստիլ թագաւոր Արշակունի. և կամէր պսակիլ ի Բագրատունւոյն։ Զոր կատարէ Աշոտ...» (Վարդան, էջ 85)։

17 Վասիլ Ա-ի կեղծ տոհմածառի հեղինակը պատրիարք Փոտն է, որը ևս, ինչպես հայտնի է, հայկական ծագում ուներ (Փոտի մայրը պատրիկ և մագիստրոս Արշավիրի, հավանաբար Կամսարական, Թեոդորա կայսրուհու փեսայի քրոջ՝ Իրենեի որդին էր)։ Փոտի խարդախության մասին արժեքավոր տեղեկություններ է տալիս Իգնատիոս պատրիարքի կենսագրության հեղինակ Նիկետա Պափլագոնացին։ Նա ցույց է տալիս, որ Փոտը իր տասնամյա արտաքսության ժամանակ ցանկանում էր սիրաշահել Վասիլ I-ին և իր նպատակին հասնելու համար դիմում է հետևյալ խորամանկության։ Նա վերցնում է Վասիլի ընտանիքի անդամների անունների սկզբնատառերը՝ Վ(ասիլ), Ե(վդոկիա), Կ(ոստանդին), Լ(ևոն), Ա(լեքսանդր), և Ս(տեփանոս) և սարքում Վեկլաս անունը։ Այնուհետև մի կեղծ ծննդաբանություն հորինում, սկսելով հայոց Տրդատ թագավորից։ Պատմությունը հասցնում է մինչև Վասիլի հորը և գրում, որ նա մի որդի է ունենալու (նկարագրում է այդ որդու արտաքին գծերը, որոնք ըստ էության նման են Վասիլի արտաքին գծերին), որի անունը իբր թե Վեկլաս է լինելու, և որ նա դառնալու է ամենաերջանիկ թագավորը։ Իր հորինվածքը այնուհետև Փոտը ալեքսանդրյան (այսինքն երկաթագիր) տառերով գրում է մի հին, մագաղաթյա մատյանում, աշխատելով գրքին տալ հնադարյան արտաքին։ Փոտի խաբեության մասնակից է դառնում պալատական մի քահանա Թեոփանես Սֆինոդեմոն անունով, որն իմաստուն մարդու համբավ ուներ, և հետագայում դարձավ Կեսարիայի եպիսկոպոս։ Նա վերցրեց Փոտի հեղինակությունը, դրեց գրադարան և մի պատեհ առիթով հանեց ու ցույց տվեց կայսեր։ Ոչ ոք չի կարողանում լուծել գրքի բովանդակության առեղծվածը։ Թեոփանեսն ասում է, թե մի մարդ միայն կարող է մեկնել այն, Փոտը։ Վերջինիս մոտ մարդ են ուղարկում։ Փոտը ձևացնում է, թե չի կարող գաղտնիքը բացահայտել ուրիշին, այլ միայն [Վասիլ] կայսեր, որովհետև խոսքը հենց Նրա մասին է (տե՛ս Ignatii

archiepiscopi Constantinopolitani Vita sive certamen, Auctore Niceta servo Christi cognomento Davide Paphlagonae, Migne, Patrologia graeca, t. 105, col. 487—574)։ *Փոտը գալիս է կայսեր մոտ, հայտնում «գաղտնիքը», որ իբր հրեշտակի միջոցով է իմացել։ Դրանից հետո, Սիմեոն Մագիստրոսի ասելով, Փոտի և կայսեր փոխհարաբերությունները բարելավվում են (տե՛ս* Sym. Mag., p. *689—690)։*

18 *Բուլղարների խան Կրումը, որն Ադրիանուպոլիսը գրավեց 813 թ. հունիսի 22-ին (այս մասին տե՛ս* Scriptoris incerti De Leone Bardae Armenii filio, ed. Bonn., p. *342—344)։ Բյուզանդացիների և բուլղարների միջև ճակատամարտը տեղի ունեցավ Ադրիանուպոլսի մոտ գտնվող Վերսինիկիա կոչված վայրում։ Մանրամասն տե՛ս* Българското военно изкуство през феодализма, София, 1958, стр. 172—177։ *Միրանածինը ցույց է տալիս, որ գերիների թվում էին գտնվում Վասիլի ծնողները և «դեռ խանձարուրում գտնվող» Վասիլը։ Եթե այս տվյալին հավատանք, պետք է եզրակացնենք, որ Վասիլը պետք է ծնված լինի 813 թ. սկզբներին, կամ առնվազն 812 թ. վերջերին, մի բան, որ չի համապատասխանում իրականությանը։ Ն. Ադոնցը ենթադրում է, որ Վասիլը ծնվել է ոչ թե Կրումից գերվելու տարին, այլ գերությունից ազատվելու՝ 836 թ. (Տե՛ս Վասիլ Հայազն, էջ 458։ Նույնի,* L' age, p. *67)։*

19 *Կրումի ձեռքն ընկան բյուզանդական անվանի մարդիկ, զորավարներ, այդ թվում Կորդիլեսը և նրա որդին Վարդասը։ Ադոնցը գտնում է, որ Կորդիլես, դա հայկական Գարջույլ կամ Գարջուլ անունն է (տե՛ս* L'age, p. *54)։ Շատ հետաքրքրական է նշել, որ Համբարլիի վիմագիր արձանագրության մեջ, որ փորագրել է տվել Կրումը 813 թվականի վերջում կամ 814-ի սկզբում, ցույց է տրված, որ բուլղարական պետության աջ մասի կառավարիչն է բոյիլա (բոյար) Տուկը, որին են ենթակա զորավարներ Վարդանն ու Յանիսը (Βαρδάνης καὶ ὁ Ἰανής). իսկ պետության ձախ մասի կառավարիչն է բոյիլա-կավխան Իրիտայսը, որին են ենթակա Կորդիլեսն ու Գրիգորաս զորավարները (Κορδύλης καὶ ὁ Γρίγορας). Տե՛ս* I. Venedikov, La population byzantine en Bulgarie au debut du IXe siecle, Byzantino-Bulgarica, t. I, Sofia, 1962, p. 265, 273 sqq.

Ստացվում է, որ խնդրո առարկա Կորդիլեսը (Գարջույլը) ոչ թե գերի է տարվել, այլ կամավոր կերպով անցել է բուլղարների տրամադրության տակ։ Ապա և հայազգի Վարդանի ծառայելը բուլղարներին վկայում է, որ Իրակիայի հայերը դեռ շատ վաղուց սերտ հարաբերությունների մեջ էին բուլղարների հետ։ Հետաքրքրական է նաև նշել, որ Կրումի արշավանքի առթիվ նահատակված մարտիրոսների մեջ հիշվում են հայկական անուններ կրող երկու անձնավորություններ՝ Արտավազդ և Վարդան, որոնց ուսումնասիրողները չեն կասկածում նրանց հայկական պատկանելիության հարցում։ Տե՛ս E. Follieri—I. Dujčev, Un' acolutia inedita per i martiri di Bulgaria dell'anno *813*, Byzantion, t. *XXXIII (1963)*, p. *104*։ *Կրումի ձեռքը գերի ընկնողների թվում հիշվում է և զորավար Յանցեսը (Τζανιτζης)։ Այս անունը Ն. Ադոնցը նույնացնում է Լևոն Ջ կայսեր ժամանակ հանդես եկած հայազգի նշանավոր գործիչ Ատիլիանոս Ջաուցայի անվան հետ, և գտնում, որ վերջինս խնդրո առարկա Յանցեսի*

որդին էր (տե՛ս L'âge, p. 55)։ Ն. Ադոնցը ենթադրում է, որ Յանցես անունը առնչություն ունի «ճանճ» բառին (այդ մասին տե՛ս ստորև, ծանոթ. 25), թեև մի ուրիշ տեղ առաջ է քաշում այն միտքը, որ Յանցեսը հայկական Տաճատ (Ταζάτης) անունն է (տե՛ս նրա Les Taronites, p. 217, n. 1)։

20 Բուլղարները քրիստոնեություն ընդունեցին ցար Բորիսի ժամանակ, 864 թ.։

21 «Սկյութներին» տակ ենթադրվում են սլավոնները։

22 Բնադրում Μουτράγων կամ ὁ Μουτράγων. որ Ὀμουρτάγων-ի աղավաղված ձևն է։ Խոսքը բուլղարաց խան Օմուրտագի մասին է։ Նա որդին էր Կրումի, որի մահից հետո (814 թ. ապրիլի 14) ժառանգեց նրա իշխանությունը։ Սա Լևոն V Հայկազնի հետ կնքեց երեսունամյա խաղաղություն։ Հաշտությանը նախորդել էր Լևոն V-ի հաղթական արշավանքը բուլղարների դեմ։ Հաշտության պայմանագիրը փորագրվել էր մարմարյա մի սյան վրա, որի բեկորները հայտնաբերվել են (տե՛ս Brehier, Vie et mort, p. 103)։

23 Փիլիպպիկոս Վարդանը (711—713) ևս նախքան կայսր դառնալը իբրև թե երազ էր տեսել, որ մի արծիվ իր թևերը փռել էր նրա գլխին։ Նման մի պատմություն է պատմում և Մովսես Խորենացին՝ Արծրունիների անվան ստուգաբանության կապակցությամբ (տե՛ս Ադոնց, Վասիլ Հայազն, էջ 459)։

24 Խոսքը Եղիա մարգարեի մասին է։

25 Ինչպես ցույց է տալիս Սիմեոն Մագիստրոսը, Վասիլը նախքան Կոստանդնուպոլիս գնալը ծառայում էր Մակեդոնիայի բանակաթեմի զորավար Յանցեսի մոտ։ Սիմեոնի տվյալներով այն ժամանակ Վասիլը 25 տարեկան էր։ «Ոչ մի օգուտ չքաղելով նրանից, ասում է պատմիչը, եկավ քաղաք [Կոստանդնուպոլիս]» (տե՛ս Sym. Mag., p. 655։ Հմմտ. Georg. Monach. Cont. p. 819)։ Ն. Ադոնցը կարծում է, որ Յանցեսը կարող է հայկական «Ճանճ» բառից առաջացած լինել (տե՛ս Ադոնց, Վասիլ Հայազն, էջ 456), որ քիչ հավանական է։ Հայերի մոտ ճիշտ է ավելի ուշ, XVIII դարում հիշատակվում է Ճաճնայ անունը (տե՛ս Աճառյան, Անձնանունների բառարան, հատ. Գ, Երևան, 1946, էջ 157։ Տե՛ս նաև Ս. Բարխուդարյան, Հայ կնոջ իրավական վիճակը միջին դարերում, Պատմա-բանասիրական Հանդես, № 2, 1966, էջ 33), որ գուցե առնչություն ունի բյուզանդական ազբյուրների Յանցեսի հետ։ Կեդրինոսի մոտ խնդրո առարկա անունը հանդես է գալիս որպես ազգանուն։ Պատմիչը ցույց է տալիս, որ Լևոն VI-ի դեմ դավադրություն կազմակերպողների մեջ էին հայազգի Ջաուցայի որդի Լևոնը և Քրիստափոր Յանցեսը (տե՛ս Cedr., II, 257)։ Ն. Ադոնցը (տե՛ս վերը, ծանոթ. 19) կարծում է, որ Յանցես և Ջաուցա նույն անուններն են, որ քիչ է հավանական, եթե նկատի ունենանք Կեդրինոսի վերոհիշյալ փաստը, երբ Ջաուցա և Յանցես անունները կողք կողքի են բերված։

26 Կոստանդնուպոլիսը ուներ մի քանի դարպասներ։ Ոսկե դարպասները (կամ Դռները) կայսրերի մուտք գործելու պաշտոնական դռներն էին, երբ վերադառնում էին պատերազմական արշավանքներից։ Ենթադրվում է, որ կառուցվել են 386 և 391 թվականների միջոցին Թեոդոս Մեծի հաղ-

թանակի առթիվ ընդդեմ Մաքսիմոսի (մանրամասն տե՛ս Janin, Const. byz., p. 252—256)։

27 Սիմեոն Մագիստրոսը և Գևորգ Վանականի Շարունակողը (Sym. Mag., p. 656, 691; Georg. Mon. Cont. p. 819, 842) հիշում են վանահոր անունը. προσμονάριος Νικόλαος Ἀνδρουσαλίτης, նա հետագայում Վասիլի կողմից նշանակվեց սբ. Սոֆիայի տաճարի սինկելլոս և էկոնոմ։

28 Միքայել III (842—867)։ Պատմության հայտնի է «Հարբեցող» մականունով։ Նա Թեոփիլոս կայսեր որդին էր և Միքայել II-ի թոռը։ Երեք տարեկան էր, երբ վախճանվեց հայրը և թագավորեց իր մոր Թեոդորայի և մորեղբոր Վարդասի խնամակալությամբ։ 859 թ. Վարդասի հետ արշավեց արաբների և պավլիկյանների դեմ, բայց բոլոր ճակատամարտերում պարտություն կրեց։

29 Կեսարը (լատ. caesar) որպես կանոն ընտրվում էր կայսեր կողմից։ Նա կայսրության երկրորդ մարդն էր և եթե կայսրը վախճանվեր առանց արու զավակի, թագավորություն ժառանգում էր կեսարը։ Կեսարը հաճախ հիշվում է և հայկական աղբյուրներում։ Լաստիվերտցին ասում է, որ Մ[ի]քայել կայսրը «զքեռորդին իւր կեսար անուանէ. և կեցեալ ի թագաւորութեանն ամս եօթն և ամիսս ութ, հիւանդացեալ զքուն մահու ջերանի։ Իսկ թագուհւոյն զկեսարն յորդեգիրս իւր արարեալ, Բուգաւորեցուցանէ ի տեղի առն իւրոյ» (էջ 50)։ Նրան հիշում է և Մատթեոս Ուռհայեցին (էջ 189)։ Կեսարի մասին մանրամասն տե՛ս R. Guilland, Recherches sur les Institutions byzantines, t. II, Berlin, 1967, p 25—43։

30 Հայազգի կեսար Վարդասը Բյուգանդական կայսրության նշանավոր դեմքերից մեկն էր։ Նա հարազատ եղբայրն էր բյուզանդական կայսրուհի Թեոդորայի՝ Թեոփիլոս կայսեր կնոջ և Միքայել III կայսեր մոր։ Վարդասի հայրը կոչվում էր Մարինոս, մայրը՝ Թեոկտիստե (վերանվանյալ Փլորինա)։ Մեզ հայտնի է նաև Վարդասի եղբոր անունը և մանրամասն գործունեությունը։ Նա կոչվում էր Պետրոնաս։ Վարդասի հայկական ծագումն ընդգծում է ոչ միայն նրա անունը (Վարդ), այլև նրա հորեղբոր մասին աղբյուրներում եղած տեղեկությունները։ Հորեղբայրը կոչվում էր Մանվել, և նա նշանավոր զորահրամանատար էր։ Թեոփանեսի Շարունակողն ու Գեննեսիոսը ցույց են տալիս, որ նա հայ էր (Theoph. Cont., p. 110) և նրա որպես քաջ մարդու համբավը տարածվել էր ամբողջ կայսրության ապա և արաբական տիրապետության մեջ (ἐ Ἀρμενίων γὰρ τὴν γένεσιν ἦν; Μανουὴλ τὸν γεννάδα τῶν Ἀρμενίων; ἐ Genesii Regum, p. 52)։ (Այս Մանվելի մասին հիշատակություն ունի նաև հայ պատմիչ Վարդանը. «Ելանէր, գրում է նա, ի խնդիր մեծ զօրավարին Մանուէլի Մամիկոնենոյ. և նորա աճապարեալ հարիւր և յիսուն արամբք անկանի ի Կամախ և անտի առ Մամուն իշխանն Իսմայէլիւ» (Վարդան, էջ 77)։ Այս փաստի հիման վրա Ն. Ադոնցը եկել է այն եզրակացության, որ կեսար Վարդասը, ինչպես և նրա քույր Թեոդորան ծագումով Մամիկոնյաններ են։

Միքայել III կայսրը չունեցավ որդի, դրա համար իր մորեղբայրը, կեսար Վարդասը իրերի բնական բերումով պետք է Միքայել III-ի մահից հետո կայսր դառնար։ Միքայելի թագավորության շրջանում Վար-

դասը ամբողջ տաս տարի գլխավոր դեմքն էր կայսրության մեջ։ Նույնիսկ թշնամաբար տրամադրված բյուգանդական հեղինակները չեն ուրանում Վարդասի արտակարգ ընդունակությունները, նրա բարձր զարգացումը։ Գեննեսիոսը ընդգծում է, որ Վարդասը իմաստուն մարդ էր (περὶ πολλοῦ δὲ τῷ καίσαρι Βάρδα ἡ σοφία πεφιλοτίμητο, p. 98)։ Վարդասն էր, որ 863 թ. Կոստանդնուպոլսում հիմնադրեց առաջին բարձրագույն դպրոցը, նրան հատկացնելով Մագնավրա կոչված պալատը։ Այդ բարձրագույն ուսումնարանի տնօրեն նա նշանակեց հայազգի նշանավոր գիտնական Լևոն փիլիսոփային (սրա մասին տե՛ս ստորև, ծանոթ. 45)։ Վարդասին սակայն չհաջողվեց նստել բյուղանդական գահին, նրան խանգարեց մի ուրիշ հայ, Վասիլը, որին հաջողվեց 866 թ. ապրիլի 21-ին սպանելով Վարդասին, իրեն ճանապարհ հարթել դեպի կայսրերի գահը (տե՛ս նաև ծանոթ. 56)։

31 Իսկական անունն էր Թեոփիլոս, -իցես վերջածանցը փաղաքշական է և կապված է նրա փոքրահասակ լինելու հետ։ Նա ծագումով հայ էր, որովհետև ինքը Միրանածինն է ցույց տալիս մի քիչ հետո, որ նա կեսար Վարդասի ազգականն էր։

32 Բնագրում πρωτοστράτωρ։ Դա ստրատորների զորամասի պարագլուխն էր, որոնց սկզբնական պարտականությունն էր օգնել կայսեր ձի նստելու։ VI դարում հիշվում է ստրատորների հատուկ զորամաս։ Հուստինիանոս II-ի ժամանակ հանդիպում է ստրատորների գոմեստիկոս Օսլսիկիոնի պրոտոստրատորի հետ միասին։ 765 թ. հանդիպում է մի «սպաթար և կայսերական պրոտոստրատոր»։ Վասիլն իր գործունեությունն սկսեց որպես ստրատոր, ապա դարձավ պրոտոստրատոր։ Նախապես նա Թեոփիլիցեսի պրոտոստրատորն էր, ախոռապետը։ Պրոտոստրատորը ձի հեծած ուղեկցում էր կայսեր։ IX գարի վերջում և X դարի սկզբում պրոտոստրատորը այնքան էլ բարձր աստիճան չէր, բայց հետագայում նրա նշանակությունն ու կշիռը շատ է բարձրանում, իսկ Պալեոլոգների ժամանակ դառնում ամենաբարձր աստիճաններից մեկը։ Նա հավասարազոր էր արևմտյան մարշալներին (տե՛ս Bury, IAS, p. 117—118)։

33 Նոր կտակարանի Աննան, Փանվելի դուստրը, որ հանապազ հաճախում էր տաճար։ Ութսունչորս տարեկան հասակում տեսավ Քրիստոսին Ղուկաս, Բ. 36—38։

34 Դանելիսի մասին կա առանձին ուսումնասիրություն։ Տե՛ս S. Runciman The widow Danielis, Etudes dediées à la mémoire d'A. M. Andréades, Athenes, 1940.

35 «Եղբայրացման» մասին տե՛ս Μ. Ράλλης, Περὶ τῆς ἀδελφοποιίας. Ἐπετηρὶς τοῦ Πανεπιστημίου Ἀθηνῶν, 1908, σελ. 293—306։

36 Սխոլերի գոմեստիկոս պատրիկ Անտիգոնոսը ծագումով հայ էր։ Նա կեսար Վարդասի որդին էր։

37 Հեստիատոր (բնագրում ἑστιάτωρ)։ Օգտագործելով միջնադարյան տերմինը, կարելի է թարգմանել տաճարապետ կամ հացերեց (համմտ. Վ. Հացունի, Ճաշեր և խնճոյք հին Հայաստանի մեջ, Վենետիկ, 1912, էջ 186)։

38 Դետիմոն (բնագրում δαιτυμών։ Հանդիպում է նաև διαιτάριος, լատ. atrensis)։ Կայսերական պալատի մատակարար։

39 «Բուլղար բարեկամները» որպես կանոն մասնակցում էին կայսերական պաշտոնական ընդունելություններին, գտնվելով երկրորդ կարգում, «վելոն»-ում, և ընդունելությունների ժամանակ մուտք էին գործում կայսեր մոտ առաջին «վելոն»-ից՝ մագիստրոսներից հետու Այդ մասին Միրանածինը խոսում է և իր «Արարողությունների մասին» աշխատության մեջ (տե՛ս սույն գրքի 123-րդ էջում)։

40 Թովմայի հայր պատրիկ Կոստանդինը, ինչպես Միրանածինն է ցույց տալիս մի փոքր հետո, հայ էր։ Այդ մասին վկայում է նաև Աիմհոն Մագիստրոսը։ Նա գրում է, որ Միքայել կայսեր կազմակերպած ձիարշավի խաղերին մասնակցել է և «Կոստանդին հայը, պատրիկ Թովմայի և վիգլայի դրունգար Գեննեսիոսի հայրը» (Κωνσταντῖνος ὁὲ ὁ ἐξ Ἀρμενίων ὁ πατὴρ Θωμᾶ πατρικίου καὶ Γενεσίου δρουγγαρίου τῆς Βιγλας)։ Այդ հաստատում է և Գեննեսիոսը. «նա Կոստանդին հայն էր...» (Κωνσταντῖνος ἦν ὁ Ἀρμένιος. Genesii Regum, p. 101)։ Ըստ երևույթին, նա շատ կարևոր մի անձնավորություն էր, որովհետև ձիարշավի այդ խաղերին մասնակցում էին ընդամենը չորս հոգի, այդ թվում և կայսրը։

41 Դրոմոսի լոգոթետը (λογοθέτης τοῦ ὁρόμου) զբաղված էր դիվանագիտական սուրհանդակների, օտար պետությունների դեսպանների ընդունման գործով, ինչպես և տնօրինում էր փոստը։ Նա ամեն առավոտ ներկայանում էր կայսեր խրիսոտրիկլինոն պալատում զեկուցելու։ (Տե՛ս Bury, IAS, p. 91—92)։ Լոգոթետների մասին ընդհանրապես տես նաև A. Semenov, Über Unsprung und Bedeutung des Amtes der Logotheten in Byzanz, Byzantinische Zeitschrift, Bd. XIX, (1910), S. 440—449։

42 «ὐια βασιλικοῖς φαλάροις»։ Ձիու ճակատին և սանձերի վրա եղած դարդերը։

43 Ախոռապան։ Ստրատորներին հիշատակում է և Մխիթար Գոշը. «Վեցերորդ դաս պաղատին Ստրատորքն, որք զձի թամբեն և հեծուցանեն զարքայն. և զգեստ է նոցա ուռևուռ կապայ (ըստ երևույթին աղճատված է բնագիրը—Հ. Ա.) և ի ձեռս իւրեանց թուր միասարիք և ասպար փոքր» (Դատաստանագիրք, էջ 265)։ Համմտ. նաև վերը, ծանոթ. 32։

44 Բնագրում Φιλοπάτιον։ Այդ անունով Կոստանդնուպոլսում երկու պալատ կար, մեկը՝ ներքին քաղաքում, մյուսը՝ արտաքին։ Առաջինը նույնացվում է Մանգանայի պալատի հետ։ Այստեղ խոսքը արտաքին Ֆիլոպատիոնի մասին է, որտեղ կային և որսավայրեր։ Արտաքին Ֆիլոպատիոնի պալատի ավերակները ուսումնասիրողները տեղադրում են ժամանակակից Թոփչըլար գյուղում, կամ Ադրիանուպոլսի դարպասի և Ոսկեդղրի միջև, և կամ էլ Վլախերնայի դիմաց (տե՛ս Janin, Const. byz., p. 142—143)։

45 Հայազգի Լևոն փիլիսոփան իր ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկն էր։ Նա առաջին տնօրենն էր կեսար Վարդասի հիմնադրած Մագնավրայի համալսարանի։ Ծնվել է շուրջ 800 թ. Թեսալիայում, սովորել քերականություն և պոեզիա Կոստանդնուպոլսում։ Անդրոս կղզում մի գիտնականի մոտ սովորեց փիլիսոփայություն, հռետորություն և թվաբանություն։ Թեոփանեսի Շարունակողը նրա մասին ասում է, որ Մագնավրայի համալսարանում փիլիսոփայության դասավանդումը գլխավորում էր «այն Լևոն

Մեծը և փիլիսոփան, որ պատրիարք Իաննեսի (այն է՝ Հովհաննեսի) եղբորորդին էր և Թևսաղոնիկեի մետրոպոլիտը։ Մետրոպոլիտությունից հեռացվելուց հետո նա նշանակվեց այս դպրոցում տգիտություն արտաքսելու համար» (Theoph. Cont., p. 185)։ Լևոն փիլիսոփայի համբավը հասավ նույնիսկ արաբ խալիֆ Մամունի արքունիքը։ Խալիֆը նամակ դրեց կայսեր, որ նա իր մոտ ուղարկի նշանավոր փիլիսոփային և մաթեմատիկոսին (Theoph. Cont. p. 186—190; Sym. Mag., p. 640· Georg. Mon. Cont. p. 860), բայց կայսրը չուզեց նրան ուղարկել, որովհետև նա հռոմայեցիների պարծանքն էր (Theoph. Cont. p. 190)։

Հայազգի Լևոնի անվան հետ է կապված երկու գյուտ. լուսային նշանատվության սիստեմը, որի օգնությամբ բյուզանդական արքունիքում շատ կարճ ժամանակամիջոցում իմանում էին խալիֆայության մեջ տեղի ունեցող դեպքերի մասին, և ջրի օգնությամբ շարժման մեջ դրվող արձանների (մռնչացող առյուծների, երգող թռչունների), որոնք զարդարում էին Մեծ պալատի ընդունարանը։ Հսկայական նշանակություն ունեցավ Լևոնի գյուտը՝ այբուբենի տառերը որպես թվաբանական սիմվոլներ օգտագործելը, որով նա փաստորեն ալգեբրայի հիմքը դրեց։ Տե՛ս История Византии, том II, стр. 86։

Լևոն փիլիսոփան շատ սերտ հարաբերությունների մեջ էր կեսար Վարդասի հետ և շարունակ հուշում էր նրան օգուշանալ Վասիլից (Sym. Mag., p. 676; Georg. Mon. Cont. p. 829)։ Լևոն փիլիսոփայի մասին տե՛ս Brehier, La civilisation, p. 465—466; Աղոնց, Գիտական դեմքեր, էջ 506 և հետ.։ Е. Э. Липшиц, Византийский ученый Лев Математик, Виз. Временник, том II, 1949, стр. 106—149; նույնի, Очерки, стр. 338—366։

46 Արմամենտարիա անունը ծագում է լատիներեն armamentum բառից, որ նշանակում է զինանոց։ Արմամենտարիա թաղամասը գտնվում էր Ոսկեղջյուրում։ Նույնացվում է ժամանակակից Խասքյոյի հետ (տե՛ս Janin, Const. byz., p. 416)։

47 Թեոդորա կայսրուհին, հայազգի Վարդասի քույրը, Թեոփիլոս կայսեր կինը և Միքայել III կայսեր մայրը։ Դեռ իր պատկերամարտ ամուսնու կենդանության օրոք ինքնուրույն քաղաքականություն էր վարում, ի պաշտպանություն պատկերապաշտների։ Թեոփիլոսը նրան նշանակեց իր մանկահասակ որդու խնամակալներից մեկը (մյուսներն էին Վարգասը, ապա Մանվելը և Թեոկտիստոսը)։ Թեոդորայի օրոք է, որ պատկերապաշտությունը վերջնականապես հաղթանակ տարավ (843) Բյուգանդական կայսրության մեջ։ Նա հեռացրեց պատկերամարտ պատրիարք հայազգի Հովհաննես Քերականին և պատրիարք նշանակեց պատկերապաշտների պարագլուխ Մեթոդիոսին։ Թեոդորան էր, որ սաստկացրեց կայսրության սահմաններում բնակվող պավլիկյանների հալածանքները, որոնց ժամանակ, համաձայն աղբյուրների տված տեղեկությունների, կոտորվեց շուրջ հարյուր հազար մարդ։ Ի վերջո սակայն Վարգասը հեռացրեց Թեոդորային իշխանությունից և նրան գստրերի հետ բռնի վանք ուղարկեց, որտեղ և նա վախճանվեց 867 թ.։ Բյուգանդական եկեղեցին սրբացրել է Թեոդորային և նրա հիշատակը նշում է փետրվարի 11-ին։ Մեզ է հասել Թեոդորայի վարքագրու-

թյունը, որ հրատարակել է վ. Ռեգելը. **W. Regel**, Analecta Byzantino-Russica, SPb. *1891։ Թեոդորայի մասին մանրամասն տե՛ս Ն. Ադոնցի ուսումնասիրությունը. Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա. Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948։*

45 *Թեոփիլոս կայսրը (829—842), Միքայել Բլվատի որդին։ Դժվարին պատերազմ մղեց արաբ խալիֆա Մոտասսեմի դեմ։ 837 թ. գրավեց Սամոսատը, ավերեց Սոզոպետրան (Զապետրան), Մոտասսեմի ծննդավայրը։ Դրա վրա Մոտասսեմը հսկայական բանակով հարձակվեց Թեոփիլոսի հայրենիք Ամորիոն քաղաքի վրա և 838 թ. սեպտեմբերի 23-ին գրավեց այն, որտեղ սարսափելի կոտորած կազմակերպեց։ 840 թ. Թեոփիլոսը ստիպվեց հաշտություն կնքել արաբների հետ։ Թեոփիլոսը վերջին պատկերամարտ կայսրն էր, բայց նրա գործը իր մահից հետո տապալվեց։ Նա արվեստի և գիտության մեծ սիրահար էր։ Նրա օրոք է, որ մեծ հռչակ են ձեռք բերում Լևոն փիլիսոփան և Հովհաննես Քերականը։*

49 *Սամփսոնը, Ենակը և Ներրովգը հին կտակարանի անձնավորություններ են, որոնք աչքի էին ընկնում իրենց սմեհի ուժով։ Տե՛ս Դատ. ԺԹ—ԺԶ, Թիւք, ԺԹ, 34, Յես. ԺԱ, 22, Ժե, 14, Դատ. Ա, 20, Մննդ. Ժ, 8—10, Ա. Մնաց. Ա, 10։*

50 *Պարակիմոմենոսը (թարգմանաբար նշանակում է «կից քնող») կայսեր սենեկապետն էր։ Թեոփանեսը ցույց է տալիս, որ պարակիմոմենոսները երեք հոգի էին լինում և կոչվում էին նաև կուբիկուլարիոս (լատ. cubiculum բառից, որ նշանակում է ննջասենյակ)։ Պարակիմոմենոս բառը առաջին անգամ հիշվում է Մավրիկիոս կայսեր ժամանակաշրջանում, 602 թ. (տե՛ս* **Theophanes**. p. *285)։ Մավրիկիոսի ժամանակ պարակիմոմենոսը ենթարկվում էր պրեպոզիտոսին։ Որպես կանոն պարակիմոմենոսը ներքինապետ էր լինում և կոչվում էր պրոտենուխոս (πρωτεσπαθάριος, ներքինապետ)։ Կոստանդին Միրանածինը իր «Կայսրության կառավարման մասին» աշխատության 50-րդ գլխում նրանց մասին գրում է հետևյալը. «Թեոփիլոս կայսեր ժամանակ պարակիմոմենոս դարձավ օստիարիոս Սքոլաստիկոսը, իսկ Թեոփիլոսի որդի Միքայելի ժամանակ պարակիմոմենոս էր պատրիկ Դամիանոսը, իսկ նրանից հետո՝ նույն կայսեր ժամանակ պարակիմոմենոս դարձավ [ապագա] քրիստոսասեր կայսր Վասիլը։ Քրիստոսասեր Վասիլ կայսեր ամբողջ թագավորության ընթացքում պարակիմոմենոս չեղավ և ոչ ոք»։*

Պարակիմոմենոսը հանդիպում է և հայկական աղբյուրներում (պառակամանոս, պառեկամանոս և այլն ձևերով), որտեղ շատ հաճախ ընդունվում է որպես հատուկ անուն։ Տե՛ս Արիստակես Լաստիվերտցի, *Պատմություն, էջ 42,* Մատթեոս Ուռհայեցի. *Ժամանակագրություն, էջ 2, 96, 233 և այլուր։*

51 *Երբ Վասիլը նշանակվեց պարակիմոմենոս, Վարդասը արդեն կեսար էր, իսկ Նա կեսար դարձավ 862 թ. ապրիլի 26-ին, հետևաբար Վասիլն այդ պաշտոնն ստացավ նշված թվականից հետո։*

52 *Սիմեոն Մագիստրոսը և Գևորգ Վանականի Շարունակողը ցույց են տալիս, որ Վասիլը մինչ այդ ամուսնացած էր ոմն Մարիայի հետ։ Միքայելը բաժանեց Վասիլին նրանից և ամուսնացրեց Ինգերի դստեր, իր սիրուհի*

Եվդոկիայի հետ. Միքայելը Մարիային դրամ տալով «իր տունը» ուղարկեց, Մակեդոնիա (Sym. Mag., p. 675; Georg. Mon. Cont., p. 828)։ Նույն աղբյուրների տվյալների համաձայն Վասիլի ամուսնությունից հետո Վարդասի և Վասիլի միջև առաջացավ անվստահություն և յուրաքանչյուրը մտածում էր ինչպես ոչնչացնել հակառակորդին։

53 Բյուզանդական այլ աղբյուրներ ցույց են տալիս, որ կեսար Վարդասի սպանության նախօրյակին նրան էր դիմել Հովհաննես Նեստոկոմիտոսը, որ ոմն Պրոկոպիոսի միջոցով հայտնել էր, թե «Վասիլը քո դեմ դավադրություն է նյութում, որի վրա Վարդասը պատասխանել է. «դեռ երիտասարդ ես, հիմարություններ ես դուրս տալիս և որոմ սերմանում»։ Բայց հակառակ դրան, նա իր մերձավորների հետ խորհրդակցել է իր անելիքի մասին (տե՛ս Sym. Mag., p. 678—679)։

54 Այս կապակցությամբ շատ հետաքրքրական են հույն նշանավոր պատմաբան Կ. Պապարիդոպուլոսի խոսքերը, որ նոր պարակիմոմենոսը ոչ միայն առյուծ էր, այլև աղվես, որովհետև աչքի էր ընկնում ոչ միայն իր ֆիզիկական ուժով, այլև զարմանալի խորամանկությամբ։ Տե՛ս Κ. Παπαρρηγοπούλου. Ἱστορία τοῦ Ἑλληνικοῦ Ἔθνους. Ἔκδοσις ἕκτη, Ἀθῆναι, 1932, τομος Γ΄. μέρος Β΄. σελ. 306։

55 Գևորդ Վանականի Շարունակողը վկայում է, թե Վասիլը նախապես սարսափելի երդումներով վստահեցրել է Սմբատին, որ կայսր Միքայելը իրը շատ է սիրում նրան, Սմբատին, և իր՝ Վասիլի միջնորդությամբ ուզում է նրան կեսար հռչակել, բայց դրան խանգարում է Սմբատի աները, կեսար Վարդասը։ Պատմիչը ցույց է տալիս, որ Սմբատը հավատաց Վասիլի խոսքերին և բշնամացավ իր աներոջ, դնաց կայսեր մոտ և ասաց, թե կեսարը ուզում է նրան սպանել։ Կայսրը հավատ է ընծայում Սմբատի խոսքերին, նամանավանդ, որ այդ բանը հաստատում էր և Վասիլը և որոշում է Վարդասին սպանել (տե՛ս Georg. Mon. Cont, p. 828—829։ Համմ. Sym. Mag., p. 676)։

56 Վարդասի այս արշավանքը կազմակերպել էր Վասիլը։ Պատճառն այն էր, որ Վասիլը չէր համարձակվում Վարդասի սպանության գործը իրականացնել Կոստանդնուպոլսում։ Վարդասը սիրված անձնավորություն էր։ Նրա սպանությունից հետո, երբ կայսրը վերադարձավ Կոստանդնուպոլիս, մի վանական բարձրանալով մի քարի վրա աղաղակեց. «լավ արշավանքի գնացիր, ո՛վ կայսր, սպանելով քո հարազատին և ազգականին։ Վա՛յ քեզ, որ նման քայլի դիմեցիր (տե՛ս Sym. Mag., p. 679; Georg. Mon. Cont. p. 831)։ Վարդասի բարեկամներից Լևոն փիլիսոփան խորհուրդ չէր տալիս Վարդասին արշավանքի գնալու, և զգուշացնում էր Վասիլից։ Վարդասի մյուս մերձակիցը, Փոտ պատրիարքը ևս համոզված էր, որ ծրագրված արշավանքը մի ծուղակ է Վարդասի համար (տե՛ս Sym. Mag p. 676—677)։ Նույն բանն ասում է և Գենեսիոսը։ Նա ցույց է տալիս, որ Վարդասը շատ էր սիրված ժողովրդի կողմից, և նրա սպանության առթիվ քաղաքացիական պատերազմ կսկսվեր, եթե զինվորականությունը դրունգար Կոստանդին Հայի գլխավորությամբ անհրաժեշտ միջոցները ձեռք չառներ (տե՛ս Genesii Regum, p. 107)։ Թեոփանեսի Շարունակողը ցույց է տալիս, որ այնուամենայնիվ երկրում հուզումներ առաջացան, և

որ քիչ էր մնացել, որ Միքայելը ղոհ գնար, բայց վիդլայի դրունգար Կոստանդինը կանխեց այդ (տե՛ս Theoph. Cont., p. 206)։

Կեսար Վարդասը սպանվեց 866 թ. ապրիլի 21-ին։ Վասիլին սպանության գործում աջակցում էին կեսարի եղբայր Մարիանոսը (կամ Մավրիանոսը), Վարդասի փեսա Սմբատը (Միրանածինը միայն սրա անունն է տալիս), Սմբատի եղբայր Վարդասը, Պետրոս Բուլղարը, Լևոն Ասորին՝ Պետրոսի հորեղբորորդին, Հովհաննես Խալդը և Կոստանդին Տոքսարասը (տե՛ս Sym. Mag.. p. 678; Georg. Mon. Cont. p. 830)։ Ն. Ադոնցը գտնում է, որ բոլորն էլ հայեր են եղել, որ Բուլղար, Ասորի, Խալդ հորինումները որոշիչ չեն ազգության, այլ միայն անուններ են, այլապես, գրում է նա, Բուլղարի (Պետրոս) հորեղբորորդին (Ադոնցը գրում է եղբորորդին) չէր կարող ասորի լինել (Լևոնը—Հ. Բ.)։ Տե՛ս Ադոնց, Վարդ Մամիկոնյան, էջ 351, նույնի Վասիլ Հայազն, էջ 477։ Ն. Ադոնցը անկասկած իրավացի է, որովհետև Թեոփանեսի ժամանակագրության մեջ հիշատակվում է մի Վարգան, Անատոլիկոն բանակաթեմի զորավարը, որը մականվանվում է «թուրք»—Βαρδανης ὁ πατρικιος και στρατηγος τῶν ανατολικῶν ο επικλην Τουρκος (p. 479)։ Ն. Ադոնցը Հովհաննես Խալդին նույնացնում է Գեննեսիոսի մոտ հիշատակված Վարդասին սպանողներից մեկի՝ ոմն Խալդի հետ, որի մականունն էր Յիֆինարիտես (-իտես վերջածանցը համապատասխանում է հայերենի -ացի-ին. Յիֆինարիտես նշանակում է Յիֆինարցի), տե՛ս Genesii Regum, p. 106)։ Ն. Ադոնցը գտնում է, որ Յիփի (հայերեն Յփնի) <Յիվենի), վրացերեն ցիփելի, ձիփելի նշանակում է ծառի մի տեսակ։ Գրիգոր Դարանաղցին հիշում է մի գյուղ Սև Ծովի և Ճորոխի միջև, Համշենի մոտ, որ կոչվում է Յբնի (դրա բնակիչը կոչվում է Յբնցի) (տե՛ս Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, Երուսաղէմ, 1915, էջ 405)։ Նշված շրջանը աշխարհագրական տեսակետից մտնում էր Խաղտիք բանակաթեմի մեջ, հետևաբար Հովհաննես Խալդը կարող էր այդ Յբնիից լինել (տե՛ս L' age, p. 79։ Համմ.. Վարդ Մամիկոնյան, էջ 351, Վասիլ Հայազն, էջ 477)։ Ինչ վերաբերում է Կոստանդին Տոքսարասին (Τοξαρᾶς) ընդունելի չէ Ն. Ադոնցի բացատրությունը, որ իբր դա ծաղրական մականուն է «անտարակույս իրանական բառ, գուցե և ծանոթ խալդական ծովափում» (էջ 477)։ Տոքսարաս հունարեն բառ է (ծագում է τοξον—աղեղ բառից) և նշանակում է աղեղնագործ (եթե, իհարկե τοξαρης բառից չէ, որ նշանակում է աղեղնավորների դորահրամանատար)։ Վարդասի սպանության մասին վկայում է նաև Նիկետա Պափլագոնացին, Իգնատիոս պատրիարքի վարքագիրը (տե՛ս Vita Ignatii, M. P. G., t. 105, col. 536)։

Կոստանդին Միրսնածինը խուսափում է իր պապին՝ Վասիլին ներկայացնել որպես Վարդասի անմիջական սպանող և ուղում է ցույց տալ, որ նա ոճրի սոսկ կազմակերպողներից մեկն էր։ Բայց ուրիշ ագբյուրներ վկայում են, որ Վասիլի ձեռքը բառացիորեն ներկվել էր Վարդասի արյամբ։ Ահա թե ինչ է գրում Սիմեոն Մագիստրոսը. Երբ կեսարին հայտնեցին, որ դավադրություն է նյութված իր կյանքի դեմ, «Վարդասը այդ գիշեր մնաց անքուն և իր մերձավորներին մոտը հրավիրելով, խորհրդակցեց անելիքի շուրջը։ Վարդասի մերձավորներից պրոտոսպաթար

Ֆիլոթեոսը ասաց. վաղը, տե՛ր, հագիր քո ոսկեզօծ խիտոնը և ներկայացիր քո թշնամիներին, նրանք քո ներկայությունից կվախենան»։ Արևածագին Վարգասը շքեղ հանդերձներ հագած նստավ իր ձին և բազմաթիվ մարդկանց ուղեկցությամբ գնաց կայսեր վրանը։ Վասիլը եկավ, բռնեց նրա ձեռքից և ներս հրավիրեց կայսեր մոտ։ Վարդասը, հանդիպելով կայսր Միքայելին ասաց. «Ամբողջ զորքը գումարված է, տեր. հրամայիր շարժվել դեպի Կրետե»։ Իսկ Վասիլը, որ նրա ետևում էր կանգնած, իսկույն սրով հարվածեց նրան։ Դավադիրները հարձակվում են Վարդասի վրա և նրան կտոր-կտոր անում։ Կայսրը լուռ ու մունջ դիտողի դերում էր։ Առավոտվա երրորդ ժամն էր» (տե՛ս Sym. Mag., p. 678—679; Georg. Mon. Cont., p. 831)։

57 Այսինքն սուրբ Սոփիայի տաճարում։ Σοφια հունարեն նշանակում է իմաստություն։

58 Գեննեսիոսի տվյալների համաձայն Միքայել III-ը որդեգրեց Վասիլին (υἱὸν τε θετον ἐπὶ πᾶσι βασιλεως ονομασθηναι) և ապա նշանակեց մագիստրոս և պարակիմոմենոս (տե՛ս Genesii Regum, p. 111)։ Նույն բանն է ասում և Թեոփանեսի Շարունակողը (տե՛ս Theoph. Cont., p. 207)։ Սիմեոն Մագիստրոսը և Գևորգ Վանականի Շարունակողը Վասիլի՝ Միքայել III-ի կայսերակիցը հռչակվելու կապակցությամբ հետաքրքրական մանրամասնություններ են տալիս։ 866 թ. Պենտեկոստեի նախօրյակին, շաբաթ օրը Միքայել կայսրը իր պրոտովեստիարիոս Ռենտակիոսի միջոցով հաղորդում է պատրիարք Փոտին, որ նա կազմակերպի Վասիլի կայսերացումը։ Հաջորդ օրը [տաճարում] դրվեց երկու գահ։ Մայրաքաղաքի բնակիչները զարմացան, թե ինչու համար մեկ կայսեր առկայության դեպքում դրվել են երկու գահ։ Կայսրից հետո գնում էր Վասիլը՝ սկարամանգիոն հագած, սուրը կապած, ինչպես սովորություն էր պարակիմոմենոսների համար։ Մինչև տաճարի կայսերական դարպասը, Միքայելը թագը չհանեց, ինչպես պարտավոր էր անել։ Նա թագը հագած գնաց մինչև սուրբ դուռը և թագը գլխին բարձրացավ աստիճաններից։ Կայսրից ցած կանգնած էր պարակիմոմենոս Վասիլը, Վասիլից ցած՝ ասեկրետ Լևոն Կաստորը՝ հրովարտակը ձեռքին, ապա պրեպոզիտոս Միքայել Անգուրիսը և դեմարքոսները դեմոսների [ներկայացուցիչների] հետ։ Լևոն ասեկրետիսը սկսեց ընթերցել կայսերական հրովարտակը, որտեղ գրված էր. Կեսար Վարդասը որոշել էր ինձ [այսինքն Միքայելին—Հ. Բ.] սպանել, դրա համար ինձ քաղաքից հեռու տեղ տարավ։ Եթե այդ մասին տեղյակ չպահեին Սմբատն ու Վասիլը, ես այժմ կենդանի չէի լինի։ Նա իր մեղքով վախճանվեց։ Ես ուզում եմ, որ պարակիմոմենոս Վասիլը, որպես հավատարիմ մարդ և թագավորությանս պահապան, թշնամուց ինձ փրկող և ինձ շատ սիրող, դառնա իմ թագավորությանս պահապանը և նրա մասին հոգացողը։ Թող բոլորի կողմից նա կայսր հռչակվի։ Վասիլի աչքերը լցվեցին արտասուքով։ Կայսրը թագը հանելով իր գլխից տվեց Փոտ պատրիարքին։ Փոտը [թագը] դրեց սուրբ սեղանին և օրհնեց այն։ Պրեպոզիտոսները Վասիլին ղիբետեսիոն և ցանգիա հագցրին. հագնելով քղամիդը, նա երկրպագեց կայսեր։ Պատրիարքը կայսեր գլխից վերցրեց թագը և դրեց Վասիլի գլխին։ Գայիսոնները սովորության համաձայն խոնարհվեցին. Միքայելը

Վասիլին թագադրեց և բոլորը գոչեցին. «Շատ տարիներ Միքայելին և Վասիլին» (Georg. Mon. Cont., p. 831—833; Sym. Mag., p. 679—680)։ Վերոբերյալից կարելի է հանգել այն եզրակացության, որ Վասիլն ու Սմբատը վաղուց էին նախապատրաստում Վարդասի սպանությունը և իրենց ծրագրի իրականացման համար Միքայելի առջև զրպարտում Վարդասին, որ իբրև թե նա որոշել է ոչնչացնել կայսեր։

59 Նույն 866 թ.։ Խոսքը Վասիլի՝ Միքայել III-ի կայսերակից դառնալու մասին է։

60 Պեգանը՝ ազգանուն է։ Նրա անունն էր Գևորգ (տե՛ս Sym. Mag., p. 680; Georg. Mon. Cont., p. 833)։ Ն. Ադոնցը ենթադրում է, որ ծագումով նա հայ էր։ Նրա ազգանունը կապում է պարսկերեն paigan բառի հետ, որ նշանակում է հետևակ (տե՛ս N. Adontz, L' age, p. 78)։

61 Հունարենում δυνατος (ուժեղ, հզոր)։ Այդպես էր կոչվում պետական ավագանին և հոգևորականության վերնախավը, այդ թվում մագիստրոսները, պատրիկները, մետրոպոլիտները, եպիսկոպոսները, վանահայրերը և այլն (տե՛ս Ռոմանոս I կայսեր 934 թ. նովելլան. Сборник документов по социально-экономической истории Византии, Москва, 1951, стр. 157—158)։

62 Բնագրում Πλατεια πετρα, որ նշանակում է «Տափակ քար»։ Այս ամրոցը, որ գտնվում էր Թրակեսիոն բանակաթեմում, կարևոր դեր խաղաց նաև Կոստանդին Դուկասի, ինչպես և Վարդաս Սկլերոսի ապստամբությունների ժամանակ (տե՛ս Theoph. Cont., p. 421; Cedr. II, p. 434)։ Գևորգ Վանականի Շարունակողի տվյալներով Սմբատը ձերբակալվեց Կելցեններում (Եկեղյաց գավառում), Գևորգ Պեգանի ձերբակալությունից 30 օր անց (տե՛ս Georg. Mon. Cont., p. 834)։

63 Բնագրում Κοτύαιον. ժամանակակից Քյոթահիան։

64 Սբ. Մամասի վանքն ու նրան կից պալատը գտնվում էին Սիգմա կոչված թաղամասում, Քսերոլոֆոսից արևմուտք, Բոսֆորի եվրոպական ափին, ժամանակակից Բեշիկթաշի տեղում։ Պալատը կառուցվել էր Լևոն I-ի կողմից։ 813 թ. բուլղարների խան Կրումը կրակի տվեց այն, բայց հետագայում վերականգնվեց։ Հենց այս պալատում էր, որ 867 թ. սեպտեմբերի 24-ին սպանվեց Միքայել III կայսրը (տե՛ս Janin, Const. byz., p. 140, 431—432; Idem, La topographie, p. 207—208)։

65 Սմբատի և Գևորգ Պեգանի ճակատագրական վախճանի մասին հետաքրքրական մանրամասնություններ են տալիս Սիմեոն Մագիստրոսը և Գևորգ Վանականի Շարունակողը։ Կեսարի փեսա Սմբատը (թեև անունն է հստակ վկայում սրա հայ լինելու մասին, բայց կա և ուղղակի փաստ այդ մասին։ Գևորգ Վանականի Շարունակողը գրում է Συμβατιος ὁ Αρμενιος։ Georg. Mon. Cont., p. 834), ինքն էր ուզում կեսար դառնալ (Վարդասի փոխարեն), և հավանաբար Վասիլը այդ հանգամանքը խայծ դարձրեց Սմբատին Վարդասի կյանքի դեմ նյութված դավադրության մասնակից դարձնելու համար։ Բայց երբ իրերի բերումով կայսերակից դարձավ Վասիլը, Սմբատը իրեն խարված համարելով, դաշնակցեց ստրատելատ Գևորգ Պեգանի հետ և ապստամբություն բարձրացրեց՝ առերես Վասիլի դեմ և իբրև թե ի պաշտպանություն Միքայելի։ Նախ ձերբակալվեց Պեգանը, որին կայսեր հրամանով մայրաքաղաքի էպարքոս

Կոստանդին Միարեսը կուրացրեց և նստեցրեց քաղաքի հրապարակներից մեկում՝ անցորդներից ողորմություն խնդրելու։ Երեսուն օր հետո ձերբակալվեց Սմբատը Կելցենեի (Եկեղիքի) մի պանդոկում։ Կայսեր հրամանով Սմբատին տանում են Պեգանի մոտ. վերջինիս ձեռքն են տալիս մի խնկաման, որի մեջ խունկի փոխարեն ծծումբ էր դրված և ստիպում նրան խնկարկել Սմբատին։ Այդ արարողությունից հետո կուրացնում են Սմբատի մեկ աչքը, կտրում նրա աջ ձեռքը և նրան ևս նստեցնում քաղաքի հրապարակներից մեկում մուրալու։ Երեք օր հետո երկուսին էլ իրենց տներն են ուղարկում և պահում տնային կալանքի տակ (տե՛ս Sym. Mag., p. 680—681; Georg. Mon. Cont., p. 833—834)։

66 Խոսքը սբ. Սահակի տեսիլքի մասին է, որ հանդիպում է Ղազար Փարպեցու Հայոց պատմության Առաջին Դրվագի վերջում (էջ 29—38)։ Դեռևս XII դարում Ներսես Լամբրոնացին կասկածել էր այդ տեսիլքի իսկության վրա։ Նա գրում է հետևյալը. «Տեսիլն այն ոչ հաւաստի առ մեզ գոլ սրբոյն Սահակայ» (տե՛ս Թուղթ Ներսեսի արքեպիսկոպոսի Կիլիկեցւոց Տարսոնի պատասխանի Յուսկանն արգելական ճգնաւորի ի մեծն Անտիոք, հրտ. Մ. Մսերյանց, Ճռաքաղ, 1859, էջ 5—6)։ Հայ պատմագրությունը խնդրո առարկա տեսիլքի հարցով զբաղվել է դեռևս Մ. Չամչյանից սկսած (մանրամասն գրականությունը տե՛ս Ն. Ակինեան. Քննություն տեսլեանն Ս. Սահակ, Հանդես Ամսօրյա, 1936, թիվ 10—12, սյունակ 470)։ Բոլոր ուսումնասիրողները միաբերան ընդունում են, որ տեսիլքը հետագա շրջանի կեղծիք է, և Սահակի հետ ոչ մի առնչություն չունի։ Ուսումնասիրողները միայն վիճում են այդ տեսիլքի հորինման ժամանակի և պայմանների հարցի շուրջը։ Գ. Խալաթյանը գտնում է, որ այն հորինվել է X գարում։ Մ. Գարագաշյանը՝ 452—482 թթ. միջև, Հ. Գաթրճյանը՝ V դարի վերջում։ Կ. Տեր-Սահակյանը գտնում է, որ տեսիլքի հորինողը Փոտ պատրիարքն է և որ տեսիլքի մեջ ակնարկված Արշակունի թագավորը Վասիլ I կայսրն է։ Գ. Սահակյանը տեսիլքի մեջ երեք շերտ է տեսնում. առաջինը տեսիլքի կմաղքն է, որ VII դարում արդեն կար։ Երկրորդ շերտը VIII դարից է գալիս, իսկ IX դարում ստացել է իր վերջնական կերպարանքը։ Առաջին խմբագիրը Գրիգոր Սարկավագապետն է (654—660) երկրորդը՝ մի կրոնավոր (742), երրորդը՝ Փոտ պատրիարքը։ Ն. Ադոնցը գտնում է, որ տեսիլքը հորինվել է Մոնոզոնի կողմից, որ հայտնի է որպես Հայաստանը արաբական լծից ազատագրելու քարոզիչ (772)։ Ն. Ադոնցն այնուհետև ենթադրում է, որ Վասիլ կայսեր շրջապատում, գլխավորապես Փոտի ջանքերով փորձել են տեսիլքը հարմարեցնել Վասիլի կենսագրության, հիմնավորել նոր կայսեր Արշակունի ծագումը։ Փոտը այս կեղծիքը պիտի կատարած լիներ 867—875 թթ. միջև ընկած ժամանակամիջոցում։ Ըստ Ն. Ակինյանի, Փոտը ոչ մի առնչություն չունի տեսիլքի հետ, որ այն VIII դարի առաջին կեսին հրապարակ եկած մի կեղծիք է, որ մինչև վերջնական ձևն ստանալը ունեցել է բազում խմբագրություններ։ Սահակ Պարթևի տեսիլքի մասին տե՛ս նաև Հովհաննիսյան, Դրվագներ, Ա, էջ 36—37։

Բոլոր դեպքերում փաստը մնում է փաստ, որ Վասիլի ժամանակ այդ տեսիլքը օգտագործվել է Վասիլի վարկը բարձրացնելու համար։ Եվ եթե

նկատի ունենանք Փոտ պատրիարքի առաջին կեղծիքը (տե՛ս ծանոթագրություն 17), ապա անհավանական չէ, որ խնդրո առարկա կեղծիքն էլ Փոտի հեղինակությունը լինի։ Միրանածինը ցույց է տալիս, որ Սահակի տեսիլքը 350 տարվա հնություն ունի, մի բան, որ չի համընկնում Սահակի ապրած ժամանակաշրջանի հետ։ Ն. Ադոնցը այդ հակասությունը լուծում է հետևյալ կերպ. Միրանածինը, ինչպես տեսանք, Վասիլի ծննդաբանության մեջ Արշակունյաց անկումը և Արտավանի ու Կլեյենեսի փախուստը կատարված է համարում Լևոն I կայսեր (457—474) օրով։ Վարդանանց պատերազմի կալանավորների դարձը տեղի ունեցավ Պերոզի 5-րդ տարին՝ 462 թ.։ Հավանական է, որ նոր խլրտումների հետևանքով հիշյալ Արշակունի իշխանների փախուստը վերաբերում է 462 թ.։ Արդ, այս թվից հաշվելով 350 տարի, ստացվում է ճիշտ 812 թ., այսինքն Վասիլի ծննդյան ավանդական տարին։

67 Միքայել կայսեր՝ սրբությունները ծաղրուծանակի ենթարկելու փաստը արձանագրված է նաև Իգնատիոս պատրիարքի վարքում։ Այնտեղ գրված է, որ Միքայելը «ոմն ծաղրածուի և միմոսի, որ Թեոփիլոս էր կոչվում (խոսքը Գրյուլլոսի մասին է։ Գրյուլլոս նրա ածականն էր, Միքայելը նրան Հիմերիոս էր անվանում (տե՛ս Վասիլի կենսագրության 27-րդ պարբերությունում—Հ. Բ.) և պրոտոսպաթարի աստիճան ուներ, ամբարիշտների մեջ ամենաամբարիշտին պատրիարք նշանակեց...· Կայսրն ասում էր. Իմ պատրիարքը Թեոփիլոսն է, Կեսարի (Վարդասի—Հ. Բ.) պատրիարքը՝ Փոտը, իսկ քրիստոնյաներինը՝ Իգնատիոսը»։ Իգնատիոսի վարքագիրը հիշելով այս Թեոփիլոսի ու շարք սրբապղծությունները, մեղավոր է համարում Փոտին, որ նա ոչ մի ծպտուն չհանեց նրա դեմ (տե՛ս Vita Ignatii, col. 528)։

68 Կոստանդնուպոլսի պատրիարք Իգնատիոսը (846—857 և 867—878), Միքայել Բանգաբե կայսեր որդին էր։ Մինչև հոգևորական դառնալը կոչվում էր Նիկետաս։ Չէր փայլում իր ընդունակություններով և վանականության ձեռքին դարձավ գործիք։ Վարդասն էր, որ նրան աթոռից գրկեց և վանք աքսորեց, նրա փոխարեն պատրիարք նշանակելով Փոտին։ Երբ 867 թ. Փոտն էլ աքսորվեց, Իգնատիոսը նորից ստացավ պատրիարքությունը։ Նա եկեղեցական ժողով դումարեց, որը նզովեց Փոտին։ Հունական եկեղեցին սրբացրել է Իգնատիոսին և հիշատակը նշում է հոկտեմբերի 23-ին։

69 Միրանածինի մոտ բառախաղ է։ Իգնատիոսին նա անվանում է πατριάρχης (պատրիարք, հայրապետ), իսկ Գրյուլլոսին՝ φρατριάρχης (հրոսակապետ)։

70 Պանն (Πάν) ու Սատիրոսը (Σάτυρος) հին հունական առասպելաբանության կերպարներ են։ Պանն անտառների և լեռների աստվածն էր, գինու աստված Դիոնիսոսի ուղեկից։ Սատիրոսները երկրորդական աստվածություններ էին, որոնք աչքի էին րնկնում իրենց հաճույքասեր, գինեսեր գծերով, և նույնպես Դիոնիսոսի ուղեկիցների թվում էին։ Արվեստի մեջ Պանը, ինչպես և սատիրոսները պատկերված են այծի ոտքերով։

71 Խոսքր Թեողորա կայսրուհու մասին է, Վարդասի քրոջ։

72 Խրիստոտրիկլինոսը (Χριστοτρίκλινος. թարգմանաբար նշանակում է ոսկե սեղան) բյուզանդական կայսրերի կենտրոնական պալատն էր, կառուցված Հուստինոս II կայսեր կողմից (565—578)։ Դա գահի մի մեծ դահլիճ էր,

ութանկյուն, թաղակապ, տասնվեց լուսամուտներով։ Իր ձևերով նման էր Ռավեննայի սուրբ Վիտալ, ինչպես և Կոստանդնուպոլսի սուրբ Սերգիոս և Բաքոսի տաճարներին։ Կայսեր գահը գտնվում էր արսիդում, որի կամարը ծածկված էր խճանկարներով և պատկերում էր գահի վրա բազմած Քրիստոսին (տե՛ս Janin, Const. byz., p. 115—117)։

73 «Քար ցանել, ծովի հետ խոսել, եթովպացուն սպիտակեցնելու փորձ անել» դարձվածքները առածներ են, որոնց միտքը այլ խոսքով «ձայն բարբառոյ յանապատի» է։ (Համմտ. աստվածաշնչային մի առած. «Եթէ փոխիցէ Հնդիկ (հունարեն բնագրում՝ Եթովպացի) զմորթ իւր և ինձ զխայտուցս իւր, և դուք կարօղ լինիցիք գործել ղբարիս՝ ուսեալք զչարիս». Երեմիա, ԺԳ, 23։

74 Միքայել III-ի Վասիլին սպանելու ծրագրի մասին վկայում է և Սիմեոն Մագիստրոսը։ Երբ նրանք գնացել էին որսի, մի վանական մոտենում է Վասիլին և մի թուղթ տալիս, որտեղ գրված էր, թե կայսրը ուզում է Վասիլին սպանել, որ կայսրը հրամայել է մեկին իր նիզակը նետել Վասիլի վրա (տե՛ս Sym. Mag., p. 683)։ Գևորգ Վանականի Շարունակողը գրում է հակառակը, որ վանականը թուղթը տվել է կայսեր, որտեղ դրված էր, թե Վասիլը ուզում է նրան սպանել (տե՛ս Georg. Mon. Cont., p. 836)։ Թյուրիմացությունը բացատրվում է հունարեն βασιλεύς (թագավոր, կայսր) և Βασίλειος (Վասիլ) բառի և անվան նման հնչելուց, և որտեղ որ կարող էր կայսր գրված լինել, շփոթվեր Վասիլ անվան հետ և ընդհակառակը։

75 Միքայել III-ր Վասիլիկինոսին էլ հռչակելով կայսերակից՝ նպատակ ուներ ամրապնդել իր դիրքը այն իմաստով, որ դավադիրները իրենց նպատակին չէին կարող հասնել միայն Միքայելին մեջտեղից հանելով։ Բայց Վասիլիկինոսը այնքան խղճուկ մի անձնավորություն էր, որ նրա գոյությունը ոչ մի փոփոխություն չէր կարող մտցնել իրադրության մեջ։ Հետագայում Վասիլը ևս, երբ իր դեմ դավադրություն կազմակերպվեց, դիմեց նույն քայլին և իր որդիներին կայսերակից հայտարարեց (տե՛ս Վասիլի կենսագրության 34-րդ գլուխը)։

76 Ջակերտների մեջ առնված խոսքերը բնագրում չափածո են։

77 Հունական դիցաբանության գինու աստված Դիոնիսոսի մասին է խոսքը։

78 Էրիննիաները և տիտանները հունական դիցաբանության կերպարներ են։ Էրիննիաները (Ἐρινύς կամ Ἐριννύς) Հադեսի (անդրշիրիմյան աշխարհի) աստվածություններ էին, Գեայի և Սկոտոսի (խավարի) դուստրերը, որոնց պարտականությունն էր ոճիրների համար վրիժառու լինել, բնության օրենքների պաշտպան կանգնել, և աշխարհի ներդաշնակության մասին հոգալ։ Նրանք խստորեն պատժում էին ամեն մի օրինազանցություն և տեսանելի էին միայն զանցագործին։ Տիտանները (Τιτᾶνες) համարվում էին Ուրանոսի և Գեայի որդիները։ Տիտաններից Կրոնոսը գահընկեց արեց Ուրանոսին։ Հետագայում Կրոնոսի որդի Զևսը հոր և մյուս տիտանների դեմ պատերազմ սկսեց և հաղթող դուրս եկավ։ Արվեստի մեջ տիտանները պատկերված են մինչև մեջքը մարդկային կերպարանքով, իսկ մեջքից ցած՝ վիշապի։

79 Հոմերոսի մոտ Մահն (Θάνατος) ու Քունը (Ὕπνος) երկվորյակ աստվածու-

թյուններ են։ Սոփոկլեսը Մահին անվանում է Αἰώνιος Ἅιδης— Հավերժական Քուն և համարում Գեայի և Տարտարոսի որդին։ Արիստոֆանից սկսած Մահը բնորոշվում է որպես միակ աստվածությունը, որ չի ընդունում նվերներ, զոհաբերություններ և այլն։

30 Խոսքը Իսրայելի թագավոր Դավթի մասին է, Հեսսեի որդու։ Սրան է վերագրվում սաղմոսների հեղինակությունը։ Նրա մասին տես Ա. Թագավորության ԺԶ, Գ. Թագավորության Բ.։

31 Մեկ կենտինարը հավասար էր 100 լիտր ոսկու, մեկ լիտր ոսկին՝ 72 ոսկեդրամի՝ դահեկանի։ 970 կենտինար ոսկին հավասար էր 6.984.000 ոսկեդրամի։ Սիմեոն Մագիստրոսի տվյալների համաձայն Թեոփիլոսը թողել էր 1090 կենտինար միայն ոսկի, իսկ արծաթի հաշիվը չկար (տե՛ս Sym. Mag., p. 659)։ Կենտինարը հիշում է և Անանիա Շիրակացին. «Կենդինարն 100 լիտր է. և անուանեցաւ ըստ հռովմայեցւոց լեզուին. զի կենդու 100 լսի. և է կենդինարն 7200 դահեկան»։ Տե՛ս Հ. Մանանդյան, Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում, Երևան, 1930, էջ 34։

32 Սիմեոն Մագիստրոսի տվյալներով Վասիլը գտավ ոչ թե երեք, այլ տասներեք կենտինար ոսկի (տե՛ս Sym. Mag., p. 659—660)։

33 Հիսուն լիտր ոսկին հավասար էր կես կենտինարի, 3600 դահեկանի։

34 Օբոլոսը պղնձե դրամ էր, դրամական ամենափոքր միավորը։

35 Միրանածինը, ինչպես և Վարդասի դեպքում, աշխատում է վստահեցնել, որ Միքայել III-ի սպանության մեջ իր պապը, Վասիլը, մասնակցություն չունի, որ այդ իրագործեցին «իշխանության գլուխ կանգնած բոլոր մեծամեծները և սենատի խելամիտ գործիչները»։ Բայց իրականությունն այլ է։ Այստեղ նպատակահարմար ենք գտնում թարգմանաբար մեջ բերել Միքայել III-ի սպանության մասին Սիմեոն Մագիստրոսի և Գևորգ Վանականի Շարունակողի հաղորդած անչափ հետաքրքրական տվյալները։ Վասիլիկինոսի կայսերակից դառնալուց հետո Վասիլը որոշեց Միքայելին սպանել։ «Կայսրը ընթրիքի էր նստել և հրավիրել էր դրան մասնակից դառնալու նաև Եվդոկիային և Վասիլին։ Կայսրը շատ խմեց. Վասիլը ինչ-որ պետքի համար դուրս եկավ։ Նա գնաց կայսեր ննջասենյակը, ջարդեց դռան փականքը (ինքը շատ ուժեղ մարդ էր), որպեսզի այլևս հնարավոր չլինի դուռը կողպել, որից հետո վերադարձավ և շարունակեց կայսեր հետ ընթրել։ Կայսրը նորից խմեց, իր հետ նաև Ինգերի դուստրը [Եվդոկիան], ապա վեր կացավ և Վասիլի օգնությամբ գնաց իր ննջասենյակը։ Վասիլը համբուրեց կայսեր ձեռքը ու դուրս եկավ։ Ննջասենյակում որպես կայսեր պահապան էր մնացել Վասիլիկինոսը, որը պառկել էր Ռենտակիոսի [Միքայելի պրոտովեստիարիոսի—Հ. Բ.] մահճակալի վրա։ Իգնատիոս կիտոնիտեսը երբ գնաց ննջասենյակի դուռը կողպելու, տեսավ, որ [փականքը] ջարդված է, և դրա վրա նստեց իր մահճակալին և սկսեց մազերը փետել։ Հարբած կայսրը մեռածի պես քուն էր մտել, երբ Վասիլը հանկարծակի իր հետևորդների հետ ներս մտավ։ Իգնատիոսը սարսափած փորձեց Վասիլի ճամփան փակել։ Պետրոս Բուլղարը Վասիլի թևի տակից անցավ և մոտեցավ կայսեր մահճակալին, բայց Իգնատիոսը բռնեց նրան։ Կայսրը զարթնեց։ Հովհաննես Խալդը առանց հապաղելու սրով հարվածեց և կտրեց կայսեր ձեռքերը, իսկ ապելատ Հակոբիցես

Վասիլ I կայսեր կենսագրությունը

Պարսիկը Վասիլիկինոսին սրահար արեց և դեսին տապալեց։ Մարիանոսը, ռեկտոր Վասիլի հայր Վարդասը, Վասիլի եղբայր Սմբատը, Վասիլի եղբորորդի Ասիլեոնը (անունը տարածված է հայոց մեջ Ասիլ ձևով։ Հ. Աճառյանը ցույց է տալիս, որ հանդիպում է XIV դարից սկսած (տե՛ս Անձնանունների բառարան, հատ. Ա, էջ 223)։ Բայց ինչպես տեսնում ենք դեռ IX դարում կար), Կոստանդին Տոքսարասը կանգնել էին դրսում պահակության։ Միքայելի մարդկանցից և ոչ ոք չիմացավ տեղի ունեցածի մասին։ Վասիլի մարդիկ հավաքվեցին և սկսեցին խորհրդակցել։ Ասիլեոնը Վասիլին ասաց. թեև Միքայելի ձեռքերը կտրեցինք, բայց նրան կենդանի ենք թողել։ Եթե նա ողջ մնա, մենք ի՞նչ հաշիվ պիտի տանք։ Եվ ընդառաջելով Վասիլին, նորից ետ դնաց, գտավ մահճակալին փռված ձեռնատ Միքայելին։ Նա Վասիլին էր հայհոյում։ Ասիլեոնը պատյանից քաշեց սուրը և այն մխրճեց կայսեր սիրտը, ապա թափեց նրա փորոտիքը։ Դիմելով Վասիլին նա սկսեց իրեն գովել, որպես թե ինչ-որ մեծ սխրանք էր կատարել։ Նովն ալեկոծվում էր։ Դավադիրները բոլորը միասին իջան պերամա, այնտեղից դիմեցին Եվլոգիոս պարսկի (ամենայն հավանականությամբ՝ պարսկահայի—Հ. Բ.) տունը և նրան ևս իրենց հետ վերցնելով, եկան Մարինայի պալատը, որի ցանկապատը (τεῖχος) մուտքը մի քարե սալով (πλάξ) էր փակված։ Վասիլը հենվելով իր մարդկանցից երկուսի վրա, մի աքացի տվեց ու ջարդեց քարը և բոլորը միասին դիմեցին դեպի պալատի դուռը։ Եվլոգիոս պարսիկը իր լեզվով ասաց հետերիարխ Արտավազդին, որ Միքայելը սրախողխող է արված, բայց դուռը [նոր] կայսեր առաջ։ Արտավազդը վազեց պապիասի մոտ, նրա ձեռքից բռնի առավ բանալիները և կայսեր առաջ բացեց դուռը։ Վասիլը մտավ ներս և վերցրեց պալատի բանալիները...։ Նա իսկույն մարդ ուղարկեց սուրբ Մամասի պալատը և մեծ շուքով [Մարինայի] պալատն ընդունեց Ինգերի դուստր Եվդոկիային։ ...Այնուհետև նա Պավլոս կիտոնիտեսին ուղարկեց հողին հանձնելու Միքայելի դին։ Նա Միքայելի դիակը գտավ իր ձիու թամբաշորի մեջ փաթաթված, փորոտիքը թափած։ Նրա մոտ էին Միքայելի մայրն ու քույրերը, որոնք ողբում էին նրան և անիծում [Վասիլին]։ Պավլոսը Միքայելի դին մի նավակի մեջ դնելով, տարավ Խրիսուպոլսի վանքը, որտեղ նրան հողին հանձնեցին» (տե՛ս Georg. Mon. Cont., p. 836—838; Sym. Mag. p. 684—686)։ Հետաքրքրական է և Կոստանդին Մանասսիի հաղորդած փաստը, որի համաձայն Միքայելին սպանողը անձնապես Վասիլն էր (տե՛ս Constantini Manassis Breviarium historiae metricum, Bonnae, 1837, p. 244, տող 5251)։ Ինչպես տեսնում ենք, Միքայելին սպանողները նույն մարդիկ են, ինչ Վարդասին ոչնչացնողները, բոլորն էլ հայ, որոնց, սակայն, տարբեր աուիթներով ու պատճառներով Վասիլը հետագայում մեկ-մեկ մաքրագործեց։ Հակորիցեսը որսի ժամանակ «պատահմամբ» է սպանվում, Հովհաննես Խալդը, որ ստացավ Խաղտիքի բանակաթեմի զորավարությունը, մեղադրվեց ապստամբություն բարձրացնելու նախապատրաստության մեջ, որի համար մահապատժի ենթարկվեց, Ասիլեոնին իր ճորտերն սպանեցին, Կոստանդին Տոքսարասը սպանվում է Կիրիրեոտների բանակաթեմում, կայսեր եղբայր Մարինոսը ոտքն է ջարդում և վերքը որդնոտում է, որից

և նա մահանում է և այլն (տե՛ս Sym. Mag., p. *687—688*; Georg. Mon. Cont., p. *839—40*)։ *Վասիլի մահից հետո նրա որդի Լևոն VI-ր կարգադրեց, որ Միքայելի աճյունը Խրիստոպոլսից բերեն քաղաք և թաղեն Սուրբ Առաքելոց եկեղեցում (տե՛ս* Theoph. Cont., p. *353*)։

Միրանածինն անկասկած հասկանալի պատճառներով Միքայել III-ի կերպարը բավական աղավաղել է։ Բյուզանդագիտության մեջ էլ մինչև վերջերս Միքայելը հայտնի էր «Հարբեցող» (Μεθυσος) մականունով։ Այս դարի 30-ական թվականներից սկսած փորձեր են արդարացնելու նրան։ Տե՛ս H. Gregoire, Etudes sur le neuvieme siecle, Byzantion, t. VIII, 1933, p. 515, 534; A. Vasiliev, The emperor Michael III in apocryphal literature, Byzantina-Metabyzantina, I, 1, 1946.

86 *Հայ պատմիչները վկայում են, որ Վասիլը դառնալով բյուգանդական կայսր, դիմում է հայոց իշխանաց իշխան Աշոտին թագ խնդրելով։ Իբեն Արշակունի համարելով, Վասիլն ուզում էր թաղն ստանալ թագադրից, որպիսին, հայոց դարավոր ավանդության համաձայն, կարող էր միայն Բագրատունի լինել։ Այդ մասին Վարդան պատմիչը գրում է. «ՙհարձեալ ի նոյն կայսերէ Վասլէ եկն ներքինի մի Նիկիտ կոչեցեալ յերեքհարիւր քսան և հինդ թուին, խնդրել ի յԱշոտոյ թագ, բերեալ շատ պարգևս. քանդի Վահան ոմն եպիսկոպոս Տարօնոյ ասէր նմա թէ Արշակունի իցէ. ղի մայրն հայ էր, և կատարիլ թուէր տեսլեանն Սահակայ սրբոյ՝ նստիլ թագաւոր Արշակունի. և կամէր պսակիլ ի Բագրատունւոյն։ Զոր կատարէ Աշոտ, րնդ նմին առաքէ և տասն հազար արծաթ րնծայ նորաշէն եկեղեցւոյն» (տե՛ս* Վարդան, *էջ 85։ Համմտ. Ղ. Ալիշան, Հայապատում, Բ., էջ 263 և հտ.)։ Վասիլ I-ի հայերի հետ հաստատած սերտ հարաբերությունների մասին վկայում է և Հովհաննես Ծրասխանակերտցին (տե՛ս Պատմություն հայոց, էջ 140)։*

87 *Երբ Վասիլը կայսր դառնալուց հետո առաջին անգամ գնաց սուրբ Սոփիայի տաճարը, Փոտ պատրիարքը նրան անարժան համարեց սուրբ հաղորդության, ապա ավազակ և մարդասպան անվանեց։ Վասիլը դայրացած Փոտին հեռացրեց պատրիարքությունից, աթոռը տալով Իգնատիոսին (տե՛ս* Sym. Mag. p. *688—689*; Georg. Mon. Cont., p. *841*)։ *Այս դեպքի մասին Միրանածինը ոչինչ չի գրում։ Նա նշում է միայն, որ Փոտը «հակադրվել էր կայսեր»։ Փոտի հեռացումը շատ ավելի լուրջ պատճառներ ուներ, քան արձանագրում են վերոհիշյալ աղբյուրները։ Փոտը սլավականության թշնամին էր, իսկ Վասիլը աշխատում էր հարթել Կոստանդնուպոլսի և Հռոմի սրված փոխհարաբերությունները, որին խանգարում էր Փոտը (տե՛ս* Ադոնց, *Վասիլ Հայադն, էջ 479—480։* Vasiliev, Histoire, t. I, p. *437—438*)։ *Հակառակ այդ բոլորին, Վասիլը խոր հարգանք էր տածում դեպի Փոտը, և երբ 879 թվականին Իգնատիոս պատրիարքը վախճանվեց, Վասիլը աթոռը նորից Փոտին տվեց։ Բացի այդ, Վասիլը իր որդիների դաստիարակության գործը Փոտին էր վստահել։*

88 *Ինագրում* Εἰσιτκόν։ *Կայսեր անձնական գանձարանը, որը կոչվում էր նաև* βασιλικὸν ταμεῖον։

89 *«Փող է պետք...» դարձվածքը վերցված է Դեմոսթենեսի «Առաջին օլինթիական» ճառից։ Դարձվածքը հանդիպում է նաև Կեդրինոսի մոտ.* Cedr., II, p. *419*։

90 «Ձեռքերի մաքրության», այսինքն կաշառք չվերցնելու մասին կոչը շարունակ հանդիպում է բյուզանդական կայսրերի հրապարակած օրենքներում և հրովարտակներում։ Այն շատ էր օգտագործում Հուստինիանոս I-ն իր նովելլաներում։

91 Բրիարեոսը (Βριάρεως) հունական դիցաբանության կերպար է, Պոսիդոնի (կամ Ուրանոսի, կամ էլ Պոնտոսի) և Գեայի որդին, ծովի ալեկոծության մարմնավորումը։

92 Խոսքը խալկե կոչված պալատի մասին է, բյուզանդական Մեծ պալատի շենքերից մեկի, որն այդպես է կոչվել, որովհետև ծածկը պղնձե թերթևրից էր։ Կառուցվել էր Կոստանդին I-ի կողմից։ Շենքը տուժեց 532 թ. «Նիկա»-ի ապստամբության ժամանակ, բայց Հուստինիանոսը վերականգնեց այն։ Վասիլ I-ի ժամանակ շենքը, ըստ երևույթին, վերանորոգման կարիք է ոսնեցել։ Ուղղանկյուն հատակագիծ ուներ, շենքի չորս մուտքերը իրենց վրա էին կրում ութ կամար։ Շենքի պատերին կային բազմաթիվ խճանկարներ, որտեղ պատկերված էին Հուստինիանոս կայսեր հաղթական արշավանքները (տե՛ս Janin, Const. byz., p. *110—112*)։

93 Արիսպագոսն (Ἄρειος Πάγος) և Հելիեյան (Ἡλιαία) հին Աթենքում գործող դատարաններն էին։

94 Գենիկոնը (Γενικόν) պետական գանձատունն էր, որտեղ կենտրոնացված էին հարկերից կուտակված եկամուտները։ XII դարի վերջում Իսահակ Անգելոս կայսրը քանդեց այդ հոյակապ շենքը, նրա տեղում սեփական շինարարություն կատարելու համար (տե՛ս Nicetae Choniatae Historia, Bonnae, *1835*, p. *581*; *Համմտ.* Janin. Const. byz., p. *170—171*)։

95 Պրիտանեյոնը (Πρυτανεῖον) հին Հունաստանի քաղաքներում պետական մի շենք էր, ժամանակակից տերմինով ասած քաղաքապետարանի կամ դիվանատան, որտեղ էին հավաքվում պրիտանները (բուլեի նախագահները) և միասին ճաշում։

96 Խոսքը 869 թ. եկեղեցական ժողովի մասին է, որը նզովեց Փոտին։

97 Տե՛ս ծանոթ. 87։

98 Վասիլ I-ի թագավորության, ինչպես և Մակեդոնական հարստության գոյության ամբողջ ընթացքում, բյուզանդական օրենսդրությունը կարգավորելու ուղղությամբ հսկայական աշխատանք տարվեց։ Վասիլ I-ը նպատակ դրեց ստեղծել հունա-հռոմեական կամ բյուզանդական իրավունքի մի ընդհանուր կոդեքս, որտեղ ժամանակագրական կարգով շարադրված լինեն կայսրերի հրապարակած բոլոր օրենսդրական նշանակություն ունեցող կարգադրությունները, այլ կերպ ասած, վերանայել Հուստինիանոս I կայսեր օրենսդրական գործը, լրացնել այն և հարմարեցնել ժամանակի ոգուն, օգտագործելով հետագա շրջանում հրապարակված օրենքները։ Հուստինիանոսի օրենսդրությունը (բացի նովելլաներից) շարադրված էր լատիներեն և կայսրության բնակչության համար անմատչելի էր, դրա համար Վասիլ I-ը որոշեց նորը կազմել հունարեն։ Վասիլ I-ը իր նպատակը շատ պարզ կերպով շարադրել է Պրոխիրոս Նոմոս-ի (Πρόχειρος νόμος) առաջարանում, որտեղ ասվում է, որ նպատակ ունի հին օրինաց մաքրումը (ἀνακάθαρσις τῶν παλαιῶν νόμων)։ Վասիլը և նրան հաջորդող կայսրերը հրապարակում են օրենսդրական առանձին ժողովածուներ, ինչպես վերե-

վում հիշատակված Պրոխիրոս Նոմոսը (հրապարակվեց 867—879 թթ. միջև), որը բովանդակում էր քաղաքացիական և քրեական օրենսդրությունը և հանդիսանում էր այդ «մաքրման» ենթարկված օրենսդրության նեթաժությունը։ Պրոխիրոս Նոմոսի հեղինակ է համարվում օրենսդետ Սիմբատիոսը (Սմբատը), որի անունը պարզ վկայում է նրա հայկական ծադման մասին։ Պրոխիրոս Նոմոսը գործեց մինչև Բյուգանդական կայսրության անկումը։

879—886 թթ. միջև Վասիլը հրապարակեց էպանագոգե (Ἐπαναγωγή) կոչված օրենսդրական ժողովածուն, որը պետք է լրացներ, ավելի հստակ դարձներ Պրոխիրոս Նոմոսը։ Ուսումնասիրողների մի մասը ընդունում է Յախարիե ֆոն Լինգենթալի կարծիքն այն մասին, որ էպանագոգեն կիրառություն չունեցավ և մնաց որպես օրենսդրական նախագծում։ Հակառակ դրան, մի շարք ուսումնասիրողներ դեմ են այդ մտքին և գտնում են, որ այն, այնուամենայնիվ, գործածություն ունեցավ։ Էպանագոգեի հեղինակ է համարվում պատրիարք Փոտը (տե՛ս J. Scharf, Photios und die Epanagoge, Byzantinische Zeitschrift, Bd. 49 (1956), S. 385—400)։ Էպանագոգեն մեծ տարածում ունեցավ սլավոնական երկրներում. հին ռուսական Кормчая книга-ն (X դար) կրել է էպանագոգեի դպալի աղդեցությունը։

Պատրիարք Փոտն սկսեց, իսկ վերոհիշյալ Սմբատն իր ավարտման հասցրեց Մակեդոնական հարստության օրենսդրական գլուխ-գործոցը՝ վաթսուն գրքից բաղկացած (ἑξηκοντάβιβλος) դասաստանագիրքը, որը հայտնի է Βασιλικά անունով։

Վասիլ I-ի որդի Լևոն VI-ին է վերագրվում այսպես կոչված «Էպարքոսի գիրքը» (Ἐπαρχικὸν βιβλίον), որը տարբեր ժամանակներում Կոստանդնուպոլսի քաղաքապետերի կողմից հրապարակված օրենսդրական ակտերի մի ժողովածու է, մեծարժեք մի գործ, որ բյուզանդական պետության և արհեստագործական միությունների փոխհարաբերությունները լուսաբանող ամենակարևոր աղբյուրն է (ավելի մանրամասն տե՛ս Zachariae von Lingenthal, Geschichte; Vogt, Basile I, p. 87 sqq. 375 sqq; P. Colinet, Byzantine Legislation, p. 708 sqq; Vasiliev, Histoire, t. I, p. 448—460)։

Պրոխիրոս Նոմոսի նորագույն հրատարակությունն է. Prochiron Basilii, Constantini et Leonis, Jus graecoromanum, cura J. Zepi et P. Zepi, vol. II, Scientia Aalen, 1962, p. 107—228։ Էպանագոգեի նորագույն հրատարակությունն է. Epanagoge legis Basilii et Leonis et Alexandri, նույն տեղում, p. 229—369։

«Էպարքոսի գրքի». Leonis Sapienti Liber Praefecti, նույն տեղում, էջ 369—392, նաև Византийская книга эпарха, вступительная статья, перевод, комментарий М. Я. Сюзюмова, Москва, 1962։

«Բասիլիկա»-ների նորագույն հրատարակությունն է. Basilicorum libri LX, ediderunt H. J. Scheltema et N. Van Der Wal, Groningen-Gravenhage, 1955 (հրատարակությունը դեռ չի ավարտվել։ Մինչև 1964 թ. լույս է տեսել 60 գրքից 32-ը և 42 գրքի մեկնությունները)։

99 Միրանածինի մոտ շփոթություն կա, նա մեկ ցույց է տալիս, որ Գևորգ Պե-

Գանի և Սմրատի ապստամբությունը տեղի է ունեցել Միքայել կայսեր օրոք (§ 19), մեկ էլ Վասիլի թագավորության սկզբում, այն տպավորությունն ստեղծելով, որ իբր տեղի է ունեցել երկու ապստամբություն։ Սիմեոն Մագիստրոսը ցույց է տալիս, որ տեղի է ունեցել մեկ ապստամբություն, Միքայելի և Վասիլի միացյալ թագավորության ժամանակ։ Տե՛ս А. П. Каждан, Из истории византийской хронографии X века, Виз. Временник, т. XIX, 1961, стр. 88.

100 Տե՛ս վերը, ծանոթ. 75։

101 Խոսքը Ստեփանոս պատրիարքի մասին է (886 թ. դեկտեմբերի 18—893 թ. մայիսի 18)։

102 Քրիստոսը Նոր կտակարանում կոչված է փեսա. «Ես Յիսուս առաքեցի զհրեշտակ իմ վկայել զայս ձեզ եկեղեցեացդ. ես արմատ և սեռ ի Դաւթայ, աստղ պայծառ առաւօտին։ Եւ Հոգի, և Փեսայն՝ որ գալոցն եմ»։ Յայտնութիւն Յովհաննու, ԻԲ, 16—17։

103 Բյուզանդական բազմաժանր գրականության մեջ իրենց արժանի տեղն ունեն ռազմական արվեստին նվիրված երկերը։ Առավել կամ պակաս կարևորություն են ներկայացնում Հուստինիանոսի ժամանակաշրջանին վերաբերող «Բյուզանդական Անանուն» անվան տակ հայտնի մի գործ, ինչպես և նույն գրչին վերագրվող «Նետաձգության մասին» աշխատությունը։ Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Կեղծ Մավրիկիոսի «Ստրատեգիկոնը», որ ստեղծվել է VI—VII դդ. և շատ լայն տարածում ունեցել Բյուզանդիայում։ Այս գործից հետո մինչև IX դարն ընկած ժամանակաշրջանից ռազմագիտական երկեր մեզ չեն հասել։ IX դարի վերջում հրապարակ եկավ «Լևոնի տակտիկան» (Tactica Leonis) նշանավոր գործը, որ հստակ կերպով արտացոլում է բյուգանդական պետության բանակաթեմային կառուցվածքը։ Լևոն VI-ին է պատկանում և մի այլ արժեքավոր ռազմագիտական աշխատություն (Προβλήματα), որտեղ մանրամասն բացատրվում են մարտի նախապատրաստության, հետախուզության և կռիվ մղելու եղանակները։ Դրանից հետո ևս ստեղծվել են ռազմագիտական բազմաթիվ գործեր, որոնց վրա այստեղ կանգ չենք առնում։ Վերոհիշյալ աղբյուրներր և նրանց մասին ուսումնասիրություններ տե՛ս հետևյալ հրատարակությունների մեջ. H. Köchly und W. Rüstow, Die Byzantiner Anonymus Kriegswissenschaft, Griechische Kriegsschriftsteller, 2. Theil, Die Taktiker, Zweite Abteilung, Leipzig, 1855; Ф. И. Успенский, Военное устройство Византийской империи, ИРАИК. VI,1,1900; Ю. Кулаковский, Византийский лагерь конца X века, Виз. Временник, т. X, 1903; А. П. Каждан, Византийская армия в IX-X веках, Ученые записки Великолукского гос. пед. института, 1954, стр. 18—31: В. В. Кучма, Византийские военные трактаты VI—X вв. как источники по истории военного искусства Византийской империи. Ученые записки Уральского гос. университета, № 53, Серия ист., вып. 4, Свердловск, 1966, стр. 31—56.

104 Տեֆրիկե (Տիվրիկ) քաղաքր պավլիկյանների կենտրոնն էր, որտեղ նրանք հավաքվել էին բյուգանդական կայսրերի հալածանքներից։ Այդ հալածանքները, որոնք սկսվել էին դեռևս IX դարի 10-ական թվականներից

Հևոն V և ապա Միքայել I կայսեր ժամանակ, ավելի լայն ծավալ ստացան Թեոփիլոսի և հատկապես նրա կին Թեոդորայի ժամանակ։ Թեոդորայի ստեղծած պատժիչ խմբերը աղբյուրների տվյալների համաձայն կոտորեցին մինչև հարյուր հազար աղանդավորներ։ Սկզբնական շրջանում պայքարը Բյուզանդիայի դեմ գլխավորեց Կարբեասը, որի մահից հետո (863) նույն հաջողությամբ այն շարունակեց Կարբեասի փեսան՝ Խրիսոքիրը։ Սկզբում պավլիկյանների հետ միասին հանդես էին գալիս արաբները, բայց հետագայում լքեցին նրանց և աղանդավորները ստիպված պայքարը շարունակեցին միայնակ։ Վասիլի այս արշավանքի (871) և պավլիկյանների հաջողությունների մասին մանրամասնություններ է տալիս Գենեսիոսը, որն այնքան էլ կողմնապահ չէ, ինչպես Միրանածինը, որը փաստորեն լռության է մատնում իր պապի անհաջողությունները պավլիկյանների դեմ մղած պայքարում։ Գենեսիոսը, ընդհակառակը ցույց է տալիս, որ Վասիլի այս արշավանքը վերջացավ անհաջող, որ կայսրը հազիվ փրկվեց գերի ընկնելուց և, դառնացած, մտավ Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցին Կոստանդնուպոլսում և պաղատագին խնդրեց աստծուն, որ չմահանա, քանի չի տեսել Տեֆրիկեի կործանումը։ Գենեսիոսը պատմում է նաև, որ Տեֆրիկեի բնակչության մի մասը այս պատերազմի ժամանակ սարսափահար թողնում, փախչում է քաղաքից, դիմելով Վասիլին։ Քաղաքի բնակչության մի ուրիշ մասն էլ փախչում է Ասորիք (տե ս Genesii Regum, p. 121)։ Խրիսոքիրը 872 թ. իր զորքով հասնում է մինչև Նիկոմիդիա և Նիկիա, մինչև Թրակեսիոն բանակաթեմ, որտեղ Հովհան Աստվածաբանի եկեղեցին ախոռի է վերածված։ Վասիլը ծանր դրության մեջ էր և ստիպված դիմում է Խրիսոքիրին խաղաղություն կնքելու, խոստանալով բազում ոսկի, արծաթ և հանդերձներ, բայց Խրիսոքիրը նրան պատասխանում է. «Թեև ուզում ես, կայսր, մեզ հետ խաղաղություն կրնքել, հրաժարվիր արևելքի վրա ունեցած քո իշխանությունից, և քեղ պահիր արևմուտքը, թե չէ կաշխատենք քեղ ընդհանրապես գահընկեց անել» (տե՛ս Genesii Regum, p. 120—122)։

Պավլիկյանների շրջանում Կարբեասի և Խրիսոքիրի քաջագործությունները երգվել են, և այդ երգերի հիման վրա ստեղծվեց բյուզանդական նշանավոր «Դիգենիս Ակրիտաս» էպոսը, որի գլխավոր հերոսի ծննդաբանության մեջ և՛ Կարբեասը, և՛ Խրիսոքիրը, և՛ Մելիտինեի ամիրա Օմար իբն Արդալլահ ալ-Ակտան կարևոր տեղ են գրավում (տե՛ս Adontz, Les fonds; Grégoire, Διγενὴς Ἀκρίτας; Բարթիկյան, Բյուզանդական էպոսը։ Նույնի, Заметки)։

105 Միրանածինը ցանկանալով արատավորել Խրիսոքիրին դրում է, որ նա գերեվարում էր բոլոր գյուղացիներին, մի բան, որ իրականության չի համապատասխանում։ Հենց աշխատավոր գյուղացիությունն էր, որ ցանկանալով ազատվել բյուզանդական ավատատերերի կեղեքումից, հոծ զանգվածներով միանում էր պավլիկյաններին։ Պետրոս Սիկիլիացին իր ճառերից մեկում նշում է, որ հենց գյուղացիները առավել շահախնդրությամբ պաշտպանում էին պավլիկյանների դադափարները։

106 Բնագրում Ἀβαρα և Σπάθη։ Արարայի մասին տե՛ս «Կայսրության կառավարման մասին» աշխատության 50-րդ գլխի 57-րդ ծանոթագրությունը։

Սպաթե թարգմանաբար նշանակում է «թուր»։ Հետաքրքրական է նշել, որ Դիգենիս Ակրիտաս էպոսում Դիգենիսի տատը հոր կողմից (այսինքն Խրիսոքիրի կինը) կոչվում էր Սպաթիա (Σπαθία)։

107 Այլ աղբյուրների վկայությամբ այս արշավանքի (871 թ.) ժամանակ Վասիլը ւյարտություն է կրել պավլիկյաններից և բազմաթիվ գինվորներ կորցրել։ Քիչ էր մնացել, որ կայսրը զերի ընկներ աղանդավորների ձեռքը։ Նրան փրկողը ապագա կայսր Ռոմանոս I Լեկապենոսի հայրն էր՝ Թեոփիլակտոս Ավաստակտոսը (տե՛ս Sym. Mag., p. 690; Georg. Mon. Cont., p. 841)։

108 Իսմայելացիների տակ հնթադրվում են արաբները։

109 Բնագրում Ταραντα. Երկրորդ Հայքում։ Այժմ կոչվում է Դերենդե։ Կեդրինոսի մոտ այդ քաղաքն անվանված է Ταύρας, որտեղ ցույց է տրված, որ այն դաշնակցել էր Տեֆրիկեի հետ (տե՛ս Cedr. II, p. 207)։

110 Կուրտիկ (Քուրդ անվան փաղաքշականը)։ Կեդրինոսի մոտ անունը աղավաղված ձևով է հանդես գալիս—Κουρτέριος (տե՛ս Cedr. II, p. 207)։ Այս անունը հիշատակվում է նաև Բագարատ Վիկացու 1060 թ. արձանագրության մեջ («Մխիթար իպատոսն Կուրին որդին»։ Տե՛ս Դիվան հայ վիմագրության, հատ. Ա, Երևան, 1966, էջ 37)։ Հ. Աճառյանը խնդրո առարկա անունը կապում է հայերեն կուրտ (ներքինի) բառի հետ և ենթադրում, որ Կուրտը փոստ անուն է և ոչ անձնանուն (տե՛ս Անձնանունների բառարան, հատ. Բ, էջ 681)։ Բայց այդ Կուրտը որդի ուներ, հետևաբար չէր կարող ներքինի լինել։ Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ տվյալ անունը մի անգամ չէ որ հանդիպում է, ապա չենք կարող այն փոստ անուն համարել։ Նույն Միրանածինը ցույց է տալիս, որ այս արշավանքների ժամանակ Վասիլի ձեռքն անցան քրդեր, որոնց նա անվանում է Κοῦρτοι։ Շատ հավանական է ուրեմն, որ Κουρτίκιος անունը կապվում է հայերի մեջ լայն տարածում գտած Քուրդ անվան հետ, որ մի տասնյակից ավել անգամ հիշատակվում է աղբյուրներում։ Քուրդ անունը հայոց մեջ նույնիսկ իշխաններն էին կրում և հիշվում է սկսած VIII դարից (տե՛ս Աճառյան, Անձնանունների բառարան, հատ. Ե, էջ 223—225)։ Մխիթար Այրիվանեցին տալիս է հենց Քուրդիկ ձեր («Յայնմ ժամանակի վախճան հասանէր երջանիկ եպսպոպետին Սիւնեաց տն. Յոհաննայ. և եկեալ առ կթղկսն. իշխանքն Սիւնեաց Բաթգեն և Քուրդիկ, խնդրեցին աթոռակալ իւրց»։ Գ. Յովսեփեանց, Մխիթար Այրիվանեցի։ Նորագյուտ արձանագրություն և երկեր, Երուսաղեմ, 1931, էջ 20), որ միանգամայն համապատասխանում է Միրանածինի նշած Κουρτίκιος ձևին։ Մի ոմն Κουρτίκιος 912 թ. մասնակցեց մանկահասակ Կոստանդին Միրանածինի դեմ կազմակերպված ապստամբության, որի ժամանակ սպանվեց (տե՛ս Sym. Mag., p. 720; Georg. Mon. Cont., p. 876)։ Թեոփանեսի Շարունակողը ցույց է տալիս, որ մի այլ Կուրտիկիոս սպանվեց Մակեդոնիայում, բուլղարների Սիմեոն ցարի դեմ մղված պատերազմում (տե՛ս Theoph. Cont., p. 358)։

111 Բնագրում Λοκανα։ Գտնվում էր Տիվրիկին մոտիկ։ Տե՛ս Ramsey, HGAM, p. 342։

112 Կոչվում էր նաև Սոզոպետրա։ Քաղաք Մելիտենեից հարավ-արևմուտք։

113 Նշանավոր քաղաք Կոմմագենեում։ Կոչվում էր նաև Շամուշատ, այժմ Սումեյսատ։ Միրանածինը Սամոսատի և Մելիտենեի դեմ կատարված արշավանքները թվագրում է 868 թ.։ Սակայն արաբ հեղինակները այդ մասին ոչինչ չեն հաղորդում։ Նրանք ցույց են տալիս, որ բյուգանդացիները Սամոսատը գրավեցին 873 թ.։ Նույն այդ թվականին նրանք պաշարեցին և Մելիտենեն (տե՛ս **Васильев**, Византия и арабы, II, стр. 38 и сл., 42 и сл.; Համմտ. **А. П. Каждан**, Из истории византийской хронографии X века, Виз. Вр., т. XIX, 1961, стр. 89).

114 Բնագրում Ζαρνούχ, արաբ. Az-Zarnuk, Եփրատ գետը թափվող Թոքմասու-ի վտակն է։ **Васильев**, Византия и арабы, II, стр. 38—39։

115 Բնագրում Κεχαμισιον։ Նույնացվում է ժամանակակից Ջիրմիկլըի հետ, Մալաթիային մոտիկ։ Տե՛ս **Васильев**, Византия и арабы, II, стр. 38, прим. 3։

116 Այժմ Մալաթիա։

117 Բնագրում Ῥαψακιον։

118 Արածանի գետը։

119 Կուրտիկիոս, Խախոն, Ամեր, Մուրինիքս և Աբդելա ամրոցները տեղադրվում են հետևյալ կերպ։ Կուրտիկիոս ամրոցը, ինչպես անունն է վկայում, պատկանում էր հայազգի ոմն Կուրտիկի։ Այդ վայրի անունն անցել է Մուշից հարավ գտնվող Կուրտիկ-դաղին։ Խախոնը համապատասխանում է ժամանակակից Խոխին (Ուշաղը Խող) խարբերդից հարավ։ Ամեր անունը վկայում է, որ ինչ-որ ամիրայի պատկանող վայր է։ Եփրատի վրա, Մուրադ-սուի գետաբերանից հարավ գտնվում է Օրտ էմիրլեր վայրը, որ հնարավոր է նույնացնել Ամեր վայրի հետ։ Ինչ վերաբերում է Մուրինիքսին (Μουρινιξ). ապա նա ժամանակակից Մուրինիկն է կամ Մորենիկր, խարբերդին մոտիկ։ Աբդելան ժամանակակից Աբդուլին կամ Աբդալլին է, Փերի-սու գետի գետաբերանում (տե՛ս Honigmann, Die Ostgrenze, S. 59—60)։ Հնդրո առարկա ամրոցներր Կեդրինոսի մոտ հանդես են գալիս հետևյալ կերպ. Կարկինիոն, Գլասխոն, Աման, Մուրիքս և Աբդիլա (տե՛ս Cedr., II, p. 208)։

120 Արաբական աղբյուրները, որոնք հիշում են Վասիլի հաղթանակը Սամոսատի տակ, միանգամայն պարզ ցույց են տալիս, որ կայսրր Մալաթիայի տակ պարտություն կրեց (տե՛ս **Васильев**, Византия и арабы, II, стр. 40—41)։

121 Բյուգանդական աղբյուրներում պավլիկյաններր շատ հաճախ հանդես են գալիս մանիքեցիներ անվան տակ և որպես կանոն այդ երկու աղանդները նույնացվում են։ (Փոտ պատրիարքի պավլիկյաններին նվիրված ուսումնասիրությունը վերնագրված է «Պատմություն մանիքեցիների վերածլման մասին»)։ Մանիքեցիների երկրի տակ Միրանածինը նկատի ունի Տիվրիկի շուրջ ընկած երկիրր։

122 Արգաուիր, որ Պետրոս Սիկիլիացու մոտ անվանված է Արդաուս, հայկական Արգովանն է։ Այժմ էլ այդպես է կոչվում։

123 Բնագրում το Κουταχιου, και Στεφανου και Ραγατ։ Ռախատ ամրոցր կեդրինոսի մոտ հիշվում է Արարախ ձևով (Ἀραράχ Cedr., II, p. 209)։ Արարախի առաջին «Ար»-ը հավանաբար արաբերեն է, ար-Արախ։

124 Ասկե դարբասի մասին տե՛ս ծանոթ. 26։

125 Խոսքը Կոստանդնուպոլսի քաղաքացիների մասին է, որոնք ունեին իրենց «կուսակցությունները» («կողմերը»—τὰ μέρη)։ Դեմոսը մինչև Հուստինիանոս կայսրը Բյուզանդիայի քաղաքական կյանքում հսկայական դեր է խաղում։ Բայց 532 թ. «Նիկա»-ի ապստամբության ճնշումից հետո, Հուստինիանոսը նրա իրավունքները խիստ սահմանափակեց։ Հետագայում դեմոսը որևէ էական դեր չէր խաղում։

126 Սուրբ Սոփիայի տաճարը։ Տե՛ս վերը, ծանոթ. 57։

127 Պատրիարք Իգնատիոսը, որ իր երկրորդ աթոռակալությունն էր վարում (23 նոյեմբեր 867—23 հոկտեմբեր 877 թթ.)։ Առաջին աթոռակալությունը տևել է 847 թվականի հուլիսի 3-ից մինչև 858 թ. հոկտեմբերի 23-ը (տե՛ս վերը, ծանոթ. 68)։

128 Գլխավոր հրամանատարին, սպարապետին։ Միրանածինը նրա անունը չի տալիս, բայց այլ աղբյուրներից դիտենք, որ նա Քրիստափորն էր, Վասիլ I-ի փեսան (տե՛ս Sym. Mag., p. 690)։

129 Բնագրում Βαϑυρρύαξ. որ թարգմանաբար նշանակում է «խոր առուն»։ Գենեսիոսը ցույց է տալիս, որ այս արշավանքի ժամանակ (872) Խրիսոքիրն հասավ մինչև Անկյուրա, որ սխոլերի գոմեստիկոսը չէր համարձակվում նրա հետ բացեիբաց կռվի բռնվել և հետապնդում էր նրան մեկ մղոն հեռավորության վրա, (տե՛ս Genesii Regum, p. 122)։ Վաթիռիաքսը հավանաբար գտնվում էր Տիվրիկին մոտիկ տեղում։ Միրանածինը իր «Արարողությունների մասին» աշխատության մեջ, որտեղ մեկ առ մեկ կանգ է առնում արշավանքի գնացող կայսեր զինվորական կայանների վրա, ցույց է տալիս, որ երբ կայսրը արշավանքի է դուրս գալիս դեպի Տեֆրիկե, ապա Արմենիակների բանակաթեմի զորքերը «պարտավոր են հավաքվել Վաթիռիաքս վայրում» (տե՛ս սույն գրքի 135-րդ էջում)։ Ա. Վասիլևը Վաթիռիաքսը նույնացնում է ժամանակակից Ենիխան-ի հետ, Մեբաստիայից հյուսիս-արևմուտք (տե՛ս Васильев, Византия и арабы, II, стр. 32)։ Վաթիռիաքսի տեղադրության մասին տե՛ս նաև Տաշյան, Արևմտյան սահմանը, էջ 459)։

130 Տաքսիարքոսը (ταξίαρχος) հրամանատարն էր մեկ տաքսիսի (τάξις), որ բաղկացած է երկու τετραρχία-ից, ընդամենը 128 մարդ (տե՛ս Sophocles, Greek Lexicon vol. II, p. 1068)։

131 Լոխագոսը (λοχαγός, լատ. curio կամ centurio) համապատասխանում է հարյուրապետին (տե՛ս Sophocles, Greek Lexicon, vol. II, p. 722)։

132 Բնագրում Πουλαδής։ Թվում է, թե այս անունը հունական չէ, այլ պարսկական՝ Pulād (պահլ. polāpatt, հայերեն պողպատ, պողովատ բառից), որ բավական լայն տարածում ուներ (Համմտ. F. Justi. Iranisches Namenbuch, Marburg, 1895, S. 255)։ Հայերի մեջ այդպիսի անուն՝ Փոլատ (նաև Փուլատ) հիշատակվում է ավելի ուշ ժամանակի աղբյուրներում (տե՛ս Աճառյան, Անձնանունների բառարան, հատ. b., էջ 209—210)։ Բացառված չէ, որ տվյալ Պուլադը ծագումով հայ լինի։

133 Այս Դիակոնիցեսը (անվան վերջածանցը -իցես փաղաքշական մասնիկ է։ Տե՛ս նաև ծանոթ. 31։ Տվյալ վերջածանցը հանդիպում է մի ուրիշ հայի անվան վերջում, Հակոբիցես, տե՛ս վերը, ծանոթ. 85) հետագայում մըտ-

նում է բյուզանդական ծառայության և գլխավորում պավլիկյան ռազմագերիներից բաղկացած մի զորամաս, որ կռվում էր Իտալիայում։ Տե՛ս § 71։ Լևոն VI-ի ժամանակ Դիակոնիցեսը ստացավ մենսուրատորի աստիճան (տե՛ս Genesii Regum, p. 125)։ Դիակոնիցես թարգմանաբար նշանակում է Սարկավագիկ։ Հայերի շրջանում կրոնական աստիճանների անձնանուն դառնալը սովորական երևույթ էր։ Մենք ունենք Հայրապետ, Տէրտէր, Տիրացու. Քահանայ, Վարդապետ անձնանունները (տե՛ս Ս.Ճաուշյան, Անձնանունների բառարան, հտ. Դ, էջ 462), որտեղ հիշված է 1129 թ. սկսած 23 «Սարկավագ» անձնանուն։ Մեր Դիակոնիցեսին կարելի է համարել Սարկավագի առաջին հիշատակությունը հայոց մեջ։

134 Ոսկեղջյուրում գտնվող մի թաղամաս, որտեղ կային սլալատ, հասարակաց բաղանիք, բազմաթիվ տաճարներ և վանքեր, այդ թվում և սուրբ Եվփեմիայի վանքը, որտեղ միանձնուհի էին դարձել Վասիլի դուստրերը (Համմտ. Janin. Const. Byz., p. 375—376)։

135 Փոտի երկրորդ աթոռակալությունը (877—886)։

136 Կուրկուասը (Գուրգեն) X դարի առաջին կեսին հանդես եկած նշանավոր դոմեստիկոս Հովհաննես Կուրկուասի պապն էր։ Դավադրությունը թվագրվում է շուրջ 885 թ., Վասիլի թագավորության 19-րդ տարին (տե՛ս Sym. Mag., p. 699)։ Այս Կուրկուասին Գևորգ Վանականի Շարունակողը անվանում է Հովհաննես Կրոկոս (նաև Կորկոաս), հիկանատների դոմեստիկոս (տե՛ս Georg. Mon. Cont., p. 847), իսկ Սիմեոն Մագիստրոսը՝ Հովհաննես Կուրկուաս (տե՛ս Sym. Mag., p. 699. տե՛ս նաև Guilland. Le domestique, p. 30. n. 9)։

137 Այսինքն վանական են ձեռնադրվում։

138 Վասիլի դեմ Հովհաննես Կուրկուասի նյութած դավադրության մասին ավելի մանրամասն խոսում են Սիմեոն Մագիստրոսը և Գևորգ Վանականի Շարունակողը։ Նրանք ցույց են տալիս, որ Վասիլի թագավորության 19-րդ տարում (885) այս Կուրկուասը դավադրություն է կազմակերպում, որին հարում են բազմաթիվ սենատորներ և մեծամեծներ, 66 մարդ, այդ թվում և Միքայել Հետերիարխը (օտարերկրացիներից բաղկացած կայսերական թիկնապահ զորքի հրամանատարը), Կատուդարեսը, Միքսիարեսը (սա անուն չէ, այլ ածական, նշանակում է փսլնքոտ), ինչպես և Բաբուցիկոսը։ Վերջինիս ծագումը կասկած չի հարուցում, նա հայ էր։ Անունը հայկական է (Բաբոց անունը փաղաքշական -իկ վերջածանցով։ Համմտ. Աճառյան, Անձնանունների բառարան, հատ. Ա, էջ 354)։ Բյուզանդական աղբյուրներից հայտնի են Կոստանդին Բաբուցիկը, որ Սոփիայի, Թեոդորա կայսրուհու քրոջ ամուսինն էր և նրա ազգական Թեոդոս Բաբուցիկը, որ 839 թ. դեսպանության գնաց Արևմուտք (տե՛ս Ադոնց, Մամիկոնյան իշխանուհին, էջ 359)։ Վերոհիշյալ դավադիրներին ձերբակալում են, դանահարում ձիարշավարանում, գրավում նրանց ունեցվածքը, խուզում և քաղաքում հրապարակայնորեն խայտառակելուց հետո աքսորում (տե՛ս Sym. Mag., p. 699; Georg. Mon. Cont., p. 847—848)։

139 Լուլոն (Λοῦλον) ամրոցը գտնվում էր Լեռնային Կիլիկիայում, Տարսոն տանող ճանապարհի վրա։ Հայկական աղբյուրներում կոչվում է «բերդն Լուլուայ»։ Առաջին անգամ հիշվում է 832 թ.։ Շատ անառիկ ամրոց էր.

«անհպելի ամուրն Լուլուայ» (տե՛ս Վարդան, էջ 79; Համմտ. Ղ. Ալիշան. Սիսուան, էջ 114)։ Մելիք-Թեվեքելը համաձայն չէ Ալիշանի տեղադրության հետ։ Տե՛ս Մելիք-Թեվեքել, Ո՞ւր կգտնվեր Լուլուայ բերդը, Հանդես Ամսօրյա, 1914, մարտ, սյունակ. 156—162։

140 Մելուոս (Μελοῦος) ամրոցը նույնպես գտնվում էր Լեռնային Կիլիկիայում։ Ղ. Ալիշանը այն նույնացնում է Մոլևոն ամրոցի հետ (Տե՛ս Սիսուան, էջ 114)։

141 Պավլիկյանների Կատաբատալա քաղաքը այլ աղբյուրներից հայտնի չէ։ Կեդրինոսի մոտ համապատասխան տեղում գրված է «մանիքեցիների մայրաքաղաք Կամիա» (Καμεια), որը ինքը Վասիլը անձամբ գրավեց (տե՛ս Cedr., II, p. 213)։

142 Այժմ էրջիաս-դաղ, Կեսարիայից մի փոքր հարավ (տե՛ս Ս. Երեմյան. Հայաստանը, էջ 39)։

143 Կապադովկիայի Կեսարիա քաղաքը, այժմ Կայսերի։

144 Բնագրում Ψιλοκαστελλον։ Կեդրինոսի մոտ Ξυλόκαστρον։ Կեդրինոսը դրա կողքին հիշատակում է մի բերդ ևս՝ Φυρόκαστρον (տե՛ս Cedr., II, p. 213)։

145 Բնագրում Παραμοκαστελλον։

146 Ֆալակրոն կաստրոնը (ճաղատ բերդը) Ս. Երեմյանը տեղադրում է Արգեոս լեռից հարավ, Ծամանդավ գետի աջ ափին, Ֆրակտին (այժմ՝ Ֆրակտին գյուղ) ավանից դեպի հյուսիս-արևմուտք (տե՛ս Հայաստանը, էջ 88)։

147 Ամրրոնը Մելիտենեի (Մալաթիայի) ամիրան էր, լրիվ անունը Օմար իբն Աբդալլահ ալ-Ակտա, որը սպանվեց 863 թ. Պոսոնի հայտնի ճակատամարտում։ Նա հիշվում է նաև բյուզանդական Դիգենիս Ակրիտաս էպոսում, որտեղ հանդես է գալիս որպես Դիգենիսի հոր պապը։ Բյուզանդական աղբյուրներում (Պետրոս Սիկիլիացի) հիշատակվում է միայն իր ավելորդ անունով՝ Մոնոխերարես («Միձեռանի», ալ-Ակտա արաբերեն նշանակում է միձեռանի)։ Նրա արձագանքները գտնում ենք նույնիսկ քրդական Դրմդրմ («Ոսկեձեռնյան խան») էպոսում (Ջոլախ խան)։ Այդ մասին մանրամասն տե՛ս Бартикян. Дигенистика: Ամրրոնի [Օմարի] մասին մանրամասն տե՛ս M. Canard, Un personnage de roman arabo-byzantin. Extrait du Deuxieme Congres National des Sciences Historiques, Alger, 1932; Idem,'Les principaux Personnages du roman de Chevalerie arabe Dāt al-Himma Wa-l-Battāl, Arabica, Revue d'Etudes Arabes, t. VIII, fasc. 2, Mat 1961, p. 158—173; Idem, Dhū l-Himma ou Dhāt al-Himma հոդվածը Encyclopedie de l'Islam-ում։

148 «Կայսոս, այն է՝ Կատասամա» ամրոցը Կեդրինոսի մոտ կոչված է Կասամա (տե՛ս Cedr., II, p. 214)։

149 Բնագրում Ἐνδελεχόνη։ Պրոկոպիոս Կեսարացին (Պարսկական պատերազմի մասին գիրք Ա, գլ. 7) հիշատակում է Ամիդից մեկ օր հեռավորության վրա գտնվող Ἐνδιήλων (Էնդիելոն) ամրոցը, որը հավանաբար նույնանում է Էնդելեխոնի հետ։

150 Անզալի ամրոցը Կեդրինոսի մոտ անվանված է Արդալան (տե՛ս Cedr. II, p. 214)։

151 Բնագրում Ἐρημοσυκαια։ Կեդրինոսի մոտ մեկ ամրոց ավել է, այն կոչված է Կարբան (Καρβάν։ Տե՛ս Cedr., II, p. 214)։

152 Բնագրում Σημας εκεινος ο του Ταήλ։

153 Սարոս գետը համապատասխանում է Սեյխան գետին՝ Կիլիկիայում (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 11)։ Օնոպնիկտեսը (թարգմանաբար նշանակում է «էշ խեղդող») Անտիոք քաղաքի մոտով հոսող գետակ է, որ հիշատակում է նաև Պրոկոպիոս Կեսարացին (տե՛ս Կառուցումների մասին, գիրք երկրորդ, գլ. 10)։ Կուկուսոսը այժմ կոչվում է Գյոքսուն, Արաբիսոսից հարավ (տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը, էջ 59)։

154 Բնագրում Καλλι=πολιν και Παζασιαν։

155 Այժմ Մարաշ, Կիլիկիայում։

156 Բնագրում "Αδατα։ Կեդրինոսի մոտ (Cedr. II, p. 214) Ἀδάπαν։ Արաբ. al-Hadat (տե՛ս Honigmann, Die Ostgrenze, S. 86)։ Այս դրավել է Վարդաս Փոկասի որդի Լևոնը 947—948 թթ.։ Տե՛ս Васильев, Византия и арабы, II, Приложение, стр. 65։

157 Բնագրում πολιχνιον, οπερ εκάλουν Γερονται։

158 Այսինքն հագարացիներին։ Հին Կտակարանի համաձայն արաբները սերում են Աբրահամի հարճ [Հ]ագարից և վերջինիս որդի Իսմայելից (այստեղից և իսմայելացիներ)։ Տե՛ս Ծննդ. ԻՀ, 1, 15։ Ա. Մնաց. ե, 10, 20։

159 Բնագրում πλειστον ὄχλον των Κουρτων։ Նույն բանն է գրված նաև Կեդրինոսի մոտ (Cedr, II, p. 216)։ Մանրամասն տե՛ս Бартикян, Дигенистика:

160 Բնագրում Μηδαίω։

161 Ճիշտ չէ, որ Տեֆրիկեն բնաջնջվեց։ Նույն Սիրանածիներ «Բանակաթեմների մասին» աշխատության մեջ, որ շարադրված է X դ. 30-ական թթ. Կոլոնիայի բանակաթեմի քաղաքների մասին խոսելիս հիշում է և Տեֆրիկեն։

162 Այս Անդրեասին, որը քիչ հետո հիշվում է որպես սխոլերի, գոմեստիկոս, Թեոդորոս Սանդավարինոսը (սրա մասին Սիրանածիներ հիշում է Վասիլի կենսագրության 100-րդ պարբերությունում) ամբաստանել էր, որ նա կայսեր որդի Լևոնի հետ դավադրություն է նյութում Վասիլի դեմ, որի համար կայսրը նրան պաշտոնանկ արեց և նրա պաշտոնը տվեց Կեստա Ստիպպիոտեսին, (տե՛ս Theoph. Cont. p. 355; Georg. Mon Cont. p. 847)։ Սիրանածիներ Անդրեասի անկման հիմնական պատճառ է համարում Տարսոնի մոտ արաբներից պարտություն կրելը։ Լևոն VI-ի թագավորության օրոք Անդրեասը նորից է պաշտոնի կոչվում։

163 Նկատի ունի Ասորեստանի թագավոր Սեննեքերիմին, որ Հին Կտակարանում հանդես է գալիս որպես ամբարտավան։

164 Ժամանակակից Պոդանտրն, Փոքր Կապադովկիայի բանակաթեմում։ Կարևոր բերդ էր՝ Լուլոնից մի փոքր հարավ-արևելք։

165 Նեմեսիսը (Νεμεσις) հին հունական դիցաբանության մի կերպար է, աստվածային ցասման մարմնավորումը։

166 Նրա Ստիպպիոտես մականունը վկայում է, որ նա հավանաբար Ստիպպիոն քաղաքից էր, որն այժմ կոչվում է Իստիպ կամ Ստիպլյե։

167 Գևորգ Վանականի Շարունակողը ցույց է տալիս, որ կայսր Վասիլը Կեստա Ստիպիոտեսին պաշտոնանկ արեց, պարտություն կրելու համար և սպարապետությունը նորից տվեց Անդրեասին (տե՛ս Georg. Mon. Cont., p. 847)։

168 Պանոնիայի մեջ էին մտնում Դանուբից հարավ ընկած ժամանակակից

Հունգարիայի և Ավստրիայի շրջանները, ապա և Բոսնիայի, Խրվաթիայի որոշ մասեր։

169 Ժամանակակից Ռադուլան, սլավոնական Դուբրավան, քաղաք Դալմատիայում, Ադրիատիկ ծովի ափին։ Արարները այն պաշարել էին 868 թ.։ Քաղաքի մասին մանրամասն տե՛ս B. Krekić, Dubrovnik (Raguse) et le Levant au moyen âge, Paris, 1961։

170 Այսինքն Միքայել III կայսեր։

171 Նիկետաս Օորիֆասր Միքայելի սպանությունից անմիջապես հետո փորձեց վրեժ լուծել Վասիլից, բայց հաջողություն չունեցավ։ Հետագայում նոր կայսեր և Օորիֆասի հարաբերությունները այնքան սերտ են դառնում, որ Վասիլը արշավանքի դնալիս Կոստանդնուպոլիսը վստահում էր Օորիֆասին (տե՛ս Sym. Mag., p. 687)։

172 Նահանգ Իտալիայի հարավում։ Կենտրոնն է Բարիս քաղաքը։

173 Այժմ Բարի։ Քաղաք Ադրիատիկ ծովի ափին, Նեապոլսից 230 կմ. հյուսիս-արևելք։ Միրանածինի շարադրության մեջ սխալ կա։ Նա ցույց է տալիս, որ արաբները Վասիլի թագավորության սկզբում պաշարեցին Ռաուսիոնը, բայց իմանալով բյուզանդական նավատորմիղի գալստյան մասին, հեռացան և գրավեցին Բարի քաղաքը։ Բայց արևմտյան ժամանակագիրները Բարիի գրավումը թվարկում են ոչ թե 868 թ., ինչպես կարելի է եզրակացնել Վասիլի կենսագրությունից, այլ 841 թ.։ Սխալը բխում է ղրանից, որ արաբները երկու անգամ հարձակվեցին Ռաուսիոնի վրա, մեկ անգամ 840 թ., իսկ երկրորդ անգամ 867—868 թթ.։ Այդ մասին տե՛ս Васильев, Византия и арабы, I, Приложение, стр. 82 и сл., т. II стр. 13; Համմտ. А. П. Каждан, Из истории виз. хронографии X в., Виз. Вр., т. XIX, 1961, стр. 88—89։

174 Խոսքը ֆրանսիական թագավոր Լուդովիկոս II-ի (846—879) և Հռոմի պապ Ադրիանոս II-ի (867—872) մասին է։

175 Քաղաք Իտալիայում, Նեապոլսից 28 կմ. հյուսիս։ Հնում կոչվում էր Վուլտուրնում։

176 Քաղաք Իտալիայում, Կապուայից մի փոքր հարավ-արևելք։

177 Առակը լայն տարածում ունի։ Հանդիպում է նաև հայերի մոտ։ Հովհաննես Երզնկացու մի քառյակը սկսվում է հետևյալ բառերով.

«Աշխարհս ի տոլապ նըման՝որ ի վեր՝ւ ի վայր թաւալի,
վերինն այլ ի վայր դառնայ, և վարինն ի վեր ոլորի» (տե՛ս Ա. Աբապյան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 157)։

178 «Պունիկյան», այսինքն կարթագենյան։ Բնագրում Φοινικῶν, բայց Փյունիկեի մասին չէ խոսքը։

179 Այսինքն Կարթագենն։

180 Գրեգուարի ենթադրությամբ խոսքը իսլամի խոշորագույն հերոս Yazaman-ի մասին է և ոչ ինչ-որ Օսման անունով մեկի (տե՛ս H. Grégoire La carrière du premier Nicéphore Phocas, Προσφορὰ εἰς Στίλπωνα Κυριακίδην. 1953, σελ. 248)։

181 Էվբիա կղզու ամրոցը, որ Խալկիս էր կոչվում։

182 Այսինքն Հևլլադա բանակաթեմի զորավարը։ Հելլաղա բանակաթեմն իր մեջ

էր ընդգրկում Լարիսայից հարավ ընկած շրջանը՝ Թեսսալիան, Ատտիկան, Էվբիան ու Կիկլադյան կղզիները։

183 «Հեղուկ կրակի» հեղինակ է համարվում Կալլինիկոս անունով մեկը, որ Ասորիքից էր։ Այն կոչվում էր նաև «ծովային կրակ», իսկ հետագայում «հեղուկ կրակ» (ὑγρὸν πῦρ), «մարական կրակ», նաև «հունական կրակ»։ Պատրաստվում էր դյուրավառ նյութերից՝ ծծմբից, կուպրից, նավթից և այլն։ Նրա պատրաստումը Բյուզանդիայում պետական գաղտնիք էր։ «Հեղուկ կրակի» մասին գաղափար ունի դեռ Պրոկոպիոս Կեսարացին։ Նա վկայում է, որ բյուզանդացիները պարսիկների դեմ էին շպրտում «կավե ամաններ՝ լի ծծմբով և կուպրով, և մի հեղուկով, որ մարերը կոչում են նավթ, իսկ հույները՝ Մեդեայի յուղ»։ Հեղուկ կրակի մասին տե՛ս հետևյալ ուսումնասիրությունները. C. Zenghelis, Le feu grégeois et les armes à feu des byzantins, Byzantion, 7 (1932), p. 265 sqq.; A. Dain, Appellations grecques du feu grégeois, Mélanges A. Ernouf, 1940։

184 Կրետեն առաջին անգամ արաբների ձեռքն ընկավ 824 թ.։ Ապոքապ անունը (արաբերեն Աբու Խաֆս) տարածված էր տվյալ ժամանակաշրջանում։ Խնդրո առարկա Ապոքապը Իսպանիայի արաբների առաջնորդն էր, որ Թովմա Գաղիրացու ապստամբության ժամանակ, օգտվելով բյուզանդացիների ներքին խառնակ վիճակից, հարձակվեց և 824 թ. գրավեց Կրետե կղզին (Տե՛ս Theoph. Cont., p. 73 sqq.)։ Ապոքապ էր կոչվում նաև Ռոմանոս Լեկապենոսի ժամանակի Մելիտենեի ամիրան, որին Թեոփանեսի Շարունակողը համարում է Ամերի (այսինքն 863 թ. սպանված Օմար իբն Աբդալլահ ալ-Ակտայի) սերնդից։ Նա պարտություն կրեց Հովհաննես Կուրկուասից։ Եվ վերջապես պետք է ասել, որ Ապոքապ անունը տարածված էր նաև քրիստոնյաների մեջ։ Մատթեոս Ուռհայեցու տվյալներով XI դարի կեսերին Եդեսիայի դուքս էր Ապոքապը (տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, էջ 57, 64, 153)։

185 «Պենտեկոնտորներ» 50 թիերով շարժվող նավեր էին։

186 Խոսքը Իշխանաց կղզիների մասին է, Բոսֆորի մուտքի մոտ։

187 «Տրիերա» էին կոչվում հին հույների նավերը, որովհետև երեք շարք թիեր ունեին։ Բյուզանդական շրջանում այդ նավերը կոչվում էին դրոմոն։ (Համմ. πυρφόρους τε τριήρεις πλείστας ἐπαγόμενος (δρόμωνας ταύτας Ῥωμαῖοι καλοῦσι. Leonis Diaconi Historiae, Bonnae, 1828, p. 7)։

188 Քաղաք Պելոպոնեսում, Մեսսենիայի հարավ-արևմտյան ծայրամասում։

189 Քաղաք Պելոպոնեսում, Աքայայի կենտրոնը։

190 Պելոպոնեսը հնում մայր երկրին էր միացած ցամաքի մի նեղ շերտով, որի վրա հատուկ մի ճանապարհ կար, որով քաշ էին տալիս փոքր նավերը, խուսափելու համար ամբողջ Պելոպոնեսի շուրջը նավարկելուց։ Դեռ անտիկ ժամանակաշրջանում փորձեր են եղել այդ նեղ շերտի վրա ջրանցք փորել, միացնելու համար Կորնթոսի ծոցը Սարոնիկոսի ծոցի հետ, մի բան, որ իրականացավ միայն 1893 թ.։ Այն ունի 6, 3 կմ. երկարություն, և 24,6 մետր լայնություն։

191 Գենեսիոսի տվյալներով այդ 60 նավերից յուրաքանչյուրի տարողությունն էր 200 հոգի (տե՛ս Genesii Regum, p. 118)։

192 Վիգլայի դրունգարը (ὀρσυγγάριος τῆς βίγλας) Կոստանդնուպոլսում գրտ-

նվող չորս գվարդիաներից մեկի՝ Ἀριθμοί կոչվածների հրամանատարն էր։ Այս գվարդիայի հիմնական պարտականությունն էր արքունիքի անվտանգության ապահովումը։ Վիգլայի դրունգարը զբաղվում էր նաև ռազմագերիների հարցով։ Նրա մասին առաջին հիշատակությունը վերաբերում է 791 թ. (տե՛ս Bury, IAS, p. 60—62)։

193 Պրետորիոնը մի շենք էր, որ պատկանում էր քաղաքի պրետորին։ Կոստանդնուպոլսում կար երկու պրետորիոն, բայց տվյալ դեպքում խոսքը Ավգուստեոնի և Կոստանդինի Ֆորումի միջև գտնվող շենքի մասին է։ Հայտնի չէ երբ է կառուցվել, բայց Հուստինիանոս I-ի ժամանակ կար։ Պրետորիոնի շենքում կար և բանտ (ավելի մանրամասն տե՛ս Janin, Const. Byz., p. 163—166)։

194 Գենեսիոսի մոտ էլ է հանդիպում այս պատմությունը, բայց նա չի ասում, որ խոսքը «մահապարտ ոճրագործների» մասին է, այլ 30 հագարացի (արաբ) ռազմագերիների (տե՛ս Genesii Regum, p. 118)։

195 Էպանագոգե կոչված Դատաստանագրքում գրված է, որ նշանավոր ավազակներին պետք է ցցահան անել այն վայրում, որտեղ որ նրանք ոճիրը գործեցին, որպեսզի սարսափեցնեն նրանց, ովքեր նման արարքներ են գործում, ինչպես և նրա համար, որպեսզի տուժողները մահապատժին ականատես լինելով, ինչ-որ ձևով բավարարություն ստանան։ (Epanag., tit. XL, cap. 19)։

196 Մարդայիտները Տավրոսի փեշերին ապրող լեռնցիներ էին, որոնք Կոստանդին Պոգոնատոս կայսեր օրոք (675) առանձին զորամասեր կազմեցին, հաստատվեցին Լիբանանի լեռներում, որտեղից ասպատակություններ էին գործում Պաղեստինում և Ասորիքում ընդհուպ մինչև Մեռյալ ծովը։ X դարում նրանք գտնվում էին Կիբիրեոտների բանակաթեմում և ունեին իրենց կատեպանը (κατεπάνω τῶν Μαρδαϊτῶν)։ Ծառայում էին նաև Հելլադայի բանակաթեմում։

197 Պրոտովեստիարիոսը սկզբնական շրջանում գլխավորում էր կայսեր հանդերձանոցը և կոչվում էր comes sacrorum largitionum։ IX դարում պրոտովեստիարիոսը գլխավորում էր կայսերական գանձարանը և չուներ որևէ առնչություն կայսեր հանդերձանոցի հետ։ Պրոտովեստիարիոսը գրավում էր երկրորդ սեղը՝ նեոքինիների 10 աստիճանից բաղկացած դասում (տե՛ս Bury, IAS, p. 145։ Brehier, Les Institutions, p. 130—131)։

198 Բնագրում Βαϊανός։ Ի. Դուչևը գտնում է, որ Բայան անունը (մոնղ. Բոյան) Բենիամինն է (տե՛ս REB, t. VII, fasc. I, 1949, p. 129)։

199 Բնագրում κουβικουλάριος. սենեկապան։ V դարում կուբիկուլարիոսները արքունիքի ամենակարևոր ծառայողներն էին և գտնվում էին պրեպոզիտոսի հրամանների ներքո։ Նրանք գլխավորում էին կայսերական հանդերձարանը, ննջասենյակը, և մասնակցում կայսերական թափորներին։ Ննջասենյակում ծառայող անձնավորություններր կոչվում էին կիտոնիտներ և ենթարկվում էին պարակիմոմենոսին, իսկ հանդերձարանի ծառայողները, որոնք ժամանակի ընթացքում կազմում են առանձին գործակալություն, անցնում են պրոտովեստիարիոսի իրավասության ներքո։ IX դարում կուբիկուլարիոսը դադարում է կարևոր դեր խաղալուց (Մանրամասն տե՛ս Bury, IAS, p. 120 sq։ Նաև R. Guilland, Les titres auliques, p. 52—75)։

Մանրագրություններ

200 Այս Վարդասի (Վարդի) անունը վկայում է ևևոն Ապոստյուպսի հայկական ծագման մասին։ Անվան առաջին Ապո-ն ըստ երևույթին արաբական Աբու-ն է, հմմտ. հուն. Ապոքապես (Աբու Խաֆս), և այլն։

201 Բնագրում Βαρ-ζα-έδων։ Ամենայն հավանականությամբ հայկական անուն է։ Հայերի մոտ տարածված է Վարդապետ անունը։ Տե՛ս Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, հատ. Ե, էջ 108։ Իհարկե, անհավանական չէ, որ մենք գործ ունենանք հայերեն Վարձ անվան հետ (Ղևոնդ Ալիշեն, էջ 193 և Ղազար Փարպեցին (էջ 86) հիշում են Վարձ Կամսարականին), կամ էլ Վաղի հետ։

202 Բյուզանդական կայսրերը Կոստանդնուպոլսում ունեին շուրջ քսան պալատ։ Բացի այդ, նրանք բազմաթիվ պալատներ ունեին քաղաքից դուրս՝ և՛ եվրոպական, և՛ ասիական ափին։ Հիերիայի պալատը գտնվում էր Կոստանդնուպոլսի ասիական ափին։ Կառուցել էր Հուստինիանոս I-ի կին Թեոդորան։ Ամառ ժամանակ կայսերական ընտանիքը տեղափոխվում էր Հիերիայի պալատը։ Հենց այս պալատում էր, որ 753 թ. Կոստանդին V կայսրը ժողով հրավիրեց և որոշում ընդունեց ընդդեմ սրբապատկերների պաշտամունքի։ Հիերիայի պալատի ավերակները գտնվում են Կոստանդնուպոլսի ժամանակակից Ֆեներբախչե թաղամասում (տե՛ս Janin, Const. byz., p. 147—148)։

203 Էպանագոգե Դատաստանագրքի համաձայն թշնամու կողմը անցնողներին կարելի է աներկյուղ սպանել (տե՛ս Epanag., tit XL, cap. 3, 22)։

204 Քաղաք Բուլղարիայում։ Այժմ կոչվում է Նեսեբըր։

205 Միրանածինը չի պահպանում դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը։ Նա նախ շարադրում է Նասարի և Պրոկոպիոսի Իտալիա կատարած արշավանքի պատմությունը և ապա արաբների կողմից Սիրակուսայի գրավումը։ Իրականում Սիրակուսան գրավվեց 878 թ. մայիսի 21-ին, իսկ Նասարի և Պրոկոպիոսի արշավանքը վերաբերում է 879—880 թթ.։ Տե՛ս Васильев, Византия и арабы, II, стр. 65 сл.; А. П. Каждан, Из истории византийской хронографии X века, стр. 89. Գևորգ Վանականի Շարունակողը Սիրակուսայի գրավման պատճառ է համարում այն, որ բյուզանդական նավատորմիղի նավաստիները, զբաղված լինելով «Նեսա տաճարի կառուցմամբ, չկարողացան մասնակցել պատերազմին արաբների դեմ (տե՛ս Georg. Mon. Cont., p. 843)։

206 Ամանտիա, քաղաք և նավահանգիստ հարավային Իտալիայում։

207 Նշանավոր զորավար էր։ Եթե նկատի ունենանք նրա երկու որդիներից մեկի անունը (Վարդաս-Վարդ), ապա նա ծագումով հայ էր։ Վասիլը նրան Կալաբրիա ուղարկեց 885 թ.։ Նրա մասին ավելի մանրամասն տե՛ս Guilland, Le domestique, p. 25—26)։ Նիկեփոր Փոկասի որդիները ևս (Վարդ և Լևոն) աչքի ընկան որպես քաջ պատերազմողներ։

208 Պավլիկյան Դիակոնիցեսի մասին տես վերը, ծան. 133։

209 Մանին (հուն. (Μάνης) III զարի նշանավոր աղանդապետ էր, մանիքեության հիմնադիրը։ Բյուզանդական աղբյուրներում պավլիկյաններին անվանում են նաև մանիքեցիներ։ «Մանիի հավատքը պաշտողների» տակ ենթադրվում են պավլիկյանները։

210 Բյուզանդիայի՝ արաբների դեմ մղած պատերազմների հերթականությունը

Մյրանածինի մոտ ճիշտ չէ՝ իրականության մեջ դեպքերն ընթացել են հետևյալ կերպ՝ Վասիլը առաջին անդամ արշավեց Տեֆրիկեի դեմ և պարտություն կրեց 871 թ.՝ 872 թ. բյուզանդական զորքերը հաղթում են պավլիկյաններին և արաբներին՝ Այնուհետև սկսվում է պայքար Արևմուտքի արաբների դեմ՝ Նրանց ձեռքում էր գտնվում Սիկիլիայի մեծ մասը և հարավային Իտալիայի կարևոր շրջանները Ֆրանկների թագավոր Լուդովիկոս II-ը պայքար սկսեց նրանց դեմ և գրավեց Բարի քաղաքը՝ Վասիլ I-ը դաշինք է կնքում այս թագավորի հետ, բայց դա երկարատև չի լինում՝ Լուդովիկոսի մահից հետո Բարիի բնակիչները քաղաքը հանձնում են բյուզանդացիներին՝ Այս ընթացքում արաբները շարունակում են իրենց արշավանքները և գրավում են Մալտա կղզին, այնուհետև 878 թ. Սիրակուսա քաղաքը՝ Սկսվում է երկարատև պատերազմ Իտալիայի արաբների դեմ, որ շարունակվում է Վասիլի մահից հետո էլ, Լևոն VI-ի թագավորության ժամանակ՝ Վասիլի թագավորության 11-րդ տարին (878) Վասիլը արշավում է Մելիտենեի արաբների դեմ և մեծ ռազմավարով ու գերիներով վերադառնում՝ Թագավորության 13-րդ (880) տարին կայսրը արշավում է Գեոմանիկիայի (Մարաշ) վրա և գերեվարելով վերադառնում՝ Իր թագավորության 17-րդ տարին (884 թ.) սարակինոսների նավատորմիզր հարձակվում է Իտալիայի և Սիկիլիայի վրա Սոլդանոսի գլխավորությամբ (տե՛ս Sym. Mag., p. 690 sqq.; Georg. Mon. Cont., p. 841 sqq.)՝

211 Դիոմեդեսի վանքի և պելոպոնեսցի կնոջ՝ Դանելիսի մասին տես վերր, գլուխ 9, 11՝

212 Մագնավրա՝ Աղբյուրներում հանդիպում են գրության տարբեր ձևեր. Μαγναῦρα, Μανναῦρα, Μαναῦρα՝ Մագնավրան կազմում էր բյուգանդական կայսրերի Մեծ պալատի բաղկացուցիչ մասր՝ Նա անմիջական կապ ուներ Մեծ պալատի, ինչպես և սբ. Սոֆիայի տաճարի հետ՝ Ավանդության համաձայն այն կառուցել էր Կոստանդին Մեծր՝ Այն պատճառով, որ բյուղանդական կայսրերր այստեղ էին ընդունում օտար երկրների պաշտոնական ներկայացուցիչներին, վերջիններիս կայսրության մեծությունն ու հգորությունր ցույց տալու համար այդ պալատին տվել էին արտակարգ շքեղություն և փայլ՝ Այստեղ էր գտնվում կայսեր գահը, որ կոչվում էր «Սողոմոնի գահ»՝ Բազիլիկ դահլիճ էր՝ Միքայել III կայսեր ժամանակ Մագնավրայի պալատր դառնում է նաև Համալսարան, որտեղ աշխատում էին անվանի գիտնականներ Լևոն Փիլիսոփայի ղեկավարության ներքո (տե՛ս Janin, Const. byz., p. 117—118)՝

213 Բնագրում σχιάστρια՝ ենթադրում են, որ բառը կապ ունի σχιά—ստվեր բառի հետ, և որ սկիաստրիաները մեծ հովհարներ բռնած կանայք էին, որ հով էին անում մեկի, գուցե և կայսրուհու վրա, երր վերջինս թափորով դուրս էր գալիս (տե՛ս Sophocles, Greek Lexicon, vol. II, p. 994)՝ Բյուզանդական աղբյուրներում հանդիպում է և Σκιαστής (ար. սեռ) բառը արդեն որպես ածական՝ Այդպես էր կոչվում հայազգի նշանավոր գիտնական և պատրիարք Հովհաննես Քերականի հայր Բագարատր (Παγκράτιος σκιαστής, Sym. Mag., p. 606), որին Թեոփանեսը որակում է կեղծ մարգարե և աստղաբաշխ (Παγκράτιον τον ψευδοπροφήτην και αστρονόμον. Theoph. Chron., p. 468)՝ Կ. Տեր-Սահակյանը Σκιαστής մականունը

հայերեն Զգաստ բառն է համարում (տե՛ս նրա Հայ կայսերք Բյուզանդիոնի, հատ. Բ, Վենետիկ, 1905, էջ 180), առանց որևէ մեկնարանության տալու։ Ն. Ադոնցը գտնում է, որ եթե տվյալ բառը հունարեն է, ապա պետք է կապել Ապոլոնի Σκιαστής մակդիրի հետ, որ նշանակում է գուշակ, գուշակության ձիրք ունեցող (տե՛ս Ադոնց, Գիտական դեմքեր, էջ 520)։

Վերոհիշյալ սկիաստրիանների կապակցությամբ ավելի հավանական է Կ. Պապարիգոպուլոսի ենթադրությունը, որ նրանք ձեռագործի ապա և կտորեղեն ներկելու մասնագետ կանայք էին (տե՛ս Κ. Παπαρηγοπούλου Ἱστορία τοῦ Ἑλληνικοῦ Ἔθνους, τόμος Γ΄, μέρος Β΄, Ἀθῆναι. 1932, σελ. 305)։

214 Սիդոնական են կոչվել կտավից կամ բամբակից գործված բարակ կտորները, ապա և այդ կտորից կարված հանդերձները։

215 Բնագրում λινομαλωτάρια։ Բարդ բառ է, λινος (կտավ) և μαλλι (բուրդ)։ Խոսքը կտավի և բրդի խառնուրդից գործված կտորի մասին է։

216 Բնագրում ἀμάλια։ Բարակ թելե գործվածքներ։

217 Նկատի ունի դեսպակը, որով ծառաները Դանելիսին տարան Կոստանդնուպոլիս, իսկ նա այժմ նրա վրա վերադարձավ Պելոպոնես։

218 «Նոր բազիլիկ եկեղեցու» մասին տե՛ս ծանոթ. 231։

219 Բնագրում ἀπὸ τῆς εὐχῆς։

220 Այս վանականի մասին տե՛ս վերր, գլ. 11։

221 Նավպակտոս բերդը գտնվում էր Կորնթոսի ծոցի հյուսիսային ափում։

222 Ագոնոթետ (ἀγωνοθέτης) էին կոչվում հին Հունաստանում նրանք, ովքեր իրենց վրա էին վերցնում մարմնամարզական խաղերի կազմակերպման ամբողջ պատասխանատվությունը։ Օլիմպիական խաղերի ագոնոթետները կոչվում էին հելլանոդիկներ։ Աթենքում նրանք ընտրվի էին, տաս հոգի, չորս տարի ժամանակով։ Միրանածինը հին բառն օգտագործում է Վասիլի նկատմամբ, կամենալով ընդգծել նրա կազմակերպական ընդունակությունները։

Միրանածինը ἀγωνοθέτης տերմինը հավանարար վերցրել է էպանագոգե կոչված օրենսգրքից, որտեղ կայսեր մասին ասված է, որ նա ինչպես ագոնոթետ, մրցանակներն է շնորհում. ἀναλογός τις ἀγωνοθέτης τὰ βραβεῖα παρεχόμενος։ Jus Graecoromanum, Leges imperatorum Isaurorum et Macedonum, vol. II, Epanagoge legis Basilii et Leonis et Alexandri, tit. 2, cap. I, Scientia Aalen, 1962։

223 Պեգե (Πηγή) աղբյուր բառից։ Կոստանդնուպոլսում կար և մի ուրիշ պալատ, որ կոչվում էր Πηγαι (հոգնակի թվով)։

224 Սիգմա էր կոչվում կառույցի հատակագծի պատճառով, որ նման էր հունարեն սիգմա (C) տառին։

225 Բնագրում Αὐρηλιαναί։ Կոստանդնուպոլսի թաղամասերից մեկն էր, Կոստանդնի պարիսպների հարավային ծայրամասում։

226 Բնագրում Στροβυλιαναί։ Թաղամասը գտնվում էր Ոսկեղջյուրում, Ֆանարի շրջանում։

227 Կոստանդնուպոլսի այս թաղամասի (Μακεδονιαναί) տեղադրությունը դեռևս ուրոշ չէ (տե՛ս Janin, Const. byz., p. 355)։

228 Բյուզանդագետների շրջանում Դևտերոնի տեղադրության շուրջ բազմաթիվ վեճեր են գնացել։ Ենթադրվում է, որ այն գտնվում էր սբ. Առաքելոց եկեղեցուց հյուսիս, ընդ որում իր մեջ էր ներփակում Կոստանդինի և Թեոդոսի պարիսպների միջև գտնվող մի մեծ մաս (տե՛ս Janin, Const. byz., p. 314—317)։

229 Դոմնինոսի սյունաշարքերը (այսինքն պորտիկներ, կամարակապ ճեմասրահներ) գտնվում էին Թեոդոսի և Կոստանդնի հրապարակների (ֆորումների) միջև։

230 Կոստանդնուպոլսի նավամատույցներից մեկը։

231 Այս նշանավոր եկեղեցին հայտնի է «Նոր» (Νέα) անվամբ։ Նա հիշատակվում է հայկական աղբյուրներում ևս։ Իշխանաց իշխան Աշոտը Վասիլ I-ի դեսպան Նիկիտի միջոցով Կոստանդնուպոլիս «առաքէ և տասն հազար արծաթ ընծայ նորաշէն եկեղեցւոյն» (տե՛ս Վարդան, էջ 85)։ Նեա եկեղեցին կառուցվեց սբ. Սոֆիայի տաճարից մի փոքր հարավ, ժամանակակից Բալըկխանե Կապըսը նավամատույցից հյուսիս։ Ինչպես ցույց է տալիս Սիմեոն Մագիստրոսը, տաճարը սկսեց կառուցվել Վասիլի թագավորության 9-րդ տարին, և ավարտվեց նրա թագավորության 14-րդ տարին, մայիսի 1-ին։ Սրբագործողը Փոտ պատրիարքն էր (տե՛ս Sym. Mag., p. 691—692; Georg. Mon. Cont., p. 845)։ Տաճարի սրբագործման արարողության օրը Փոտ պատրիարքը մի շատ գեղեցիկ ճառ արտասանեց, որը հասել է մեզ (տե՛ս Photii Patriarchae Constantinopolitani Novae sanctissimae Dei Genitricis ecclesiae in Palatio a Basilio Macedone exstructae, descriptio, In Georgii Codini excerpta de antiquitatibus Constantinopolitanis, Bonnae, 1843, p. 194—202)։ Վասիլը նոր տաճարի կառուցման առթիվ բազմաթիվ պղնձե արձաններ հալել տվեց, մետաղն օգտագործելու համար։ Նոր եկեղեցու շինարարության վրա օգտագործելու համար այլ շենքերից և եկեղեցիներից էլ բազմաթիվ մարմարիոններ ու քանդակներ բերեցին, այդ թվում և մի պղնձե սյուն, որը սենատում էր գտնվում և պատկերում էր օձը ձեռքին մի եպիսկոպոսի։ Վասիլը իբրև թե իր մատը դրել է այդ օձի բերանը, բայց ներսում գտնվող մի իսկական օձ խայթել է նրան և հակադեղերով հազիվ են փրկել կայսեր կյանքը (տե՛ս Sym. Mag., p. 691—692; Georg. Mon. Cont., p. 843—844)։

Բյուգանդական արվեստի մեծ գիտակ Շ. Դիլի բնորոշմամբ, Վասիլ I-ի կառուցած Նոր եկեղեցին բյուգանդական արվեստի զարգացման երկրորդ շրջանում, որ սկսվեց Վասիլ I-ով, ունեցավ այն նշանակությունը, ինչ սուրբ Սոֆիայի տաճարը VI դարում։ Նոր եկեղեցին նոր էր իր ձևերով, և այն օրինակ հանդիսացավ հետագայում կառուցված բազմաթիվ այլ եկեղեցիների համար (Տե՛ս Ch. Diehl, L'art chrétien primitif et l'art byzantin, Paris-Bruxelles, 1928, p. 33)։

232 Այս հրապարակը (բակը) որտեղ բյուզանդացի մեծամեծները ձիու վրա նստած գնդակ էին խաղում, կոչվում էր Յուկանիստերիոն (Τζυκανιστηριον կամ Τζουκανιστηριον)։ Վասիլ I-ը նրա տեղում կառուցեց իր Նոր եկեղեցին և Նոր Յուկանիստերիոն կառուցեց մի այլ տեղում։ Կայսրերի և երևելի մարդկանց ձիու վրա գնդակ խաղալը կոչվում էր τζουκανι-

ζειν։ Խաղը պարսկական էր, որովհետև հենց բառը պարսկական ծագում ունի—tshu-qan (տե՛ս Janin, Const. byz., p. 119; Sophocles, Greek Lexicon, vol. II, p. 1080)։ Խաղը մինչև օրս էլ տարածված է Պարսկաստանում և կոչվում է չոգան։ Միջնադարյան հայ հեղինակներից այդ խաղը հիշում է Մատթեոս Ուռհայեցին. «Խաղ գնդին ի մայտաննն» ձևով։ Տե՛ս Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 32։

233 Էնկավսիսը (εγκαυσις) նկարչության մեջ օգտագործվող եղանակ էր, որի էությունն այն էր, որ գույները խառնում էին մեղրամոմի մեջ, որից հետո այդ նյութը քսում այն մակերեսի վրա, որի վրա պետք է նկարեին։

234 «Աստված իմ»-ի փոխարեն Միրանածինը օգտագործում է հին հույների «Ո՛վ Հերակլես» բացականչությունը։

235 Միրանածինը իր շարադրանքի մեջ այստեղ օգտագործում է մեկ ներկա ժամանակը, մեկ՝ անցյալ։ Աշխատել ենք հետևել նրան։

236 Խիմեվսիս (χυμευσις) ձուլածո։

237 Եկեղեցու սուրբ խորանը կոչվում էր նաև ադիտոն (ἄδυτον), որ բարգմանաբար նշանակում է «անմատչելի»։ Աբատոն (ἄβατον) նույն իմաստն ունի մոտավորապես ինչ և ադիտոնը։ Միրանածինը ուզում է ասել իրականությունը հնարավոր չէ խոսքերով արտահայտել։

Աբատոնի մասին տե՛ս H. G. Bech, Kirche und theologische Literatur im Byzantinischen Reich, München, 1959, S. 134։

238 Միրանածինը իր այս նախադասության մեջ դիմել է նմանաձայնության (ալլիտերացիային). „βασιλείων βασίλεια εν αὐτοις τοῖς βασιλείοις βασιλεὺς Βασιλειος ανεδειματο". հինգ անգամ տարբեր ձևերով օգտագործելով βασιλεύς բառը։

239 Խորեգիան (χορηγια) հին Աթենքում գործակալություն էր։ Աթենքի ցեղերից յուրաքանչյուրն ընտրում էր իր հարուստ քաղաքացիներից մեկին որպես խորեգոս, որը հոգում էր Պանաթենական, Բարգելիական կամ Դիոնիսիա տոների ժամանակ տղամարդկանց և պատանիների պարի ծախսերը։ Այդ ծախսը բավական մեծ էր լինում։ Աղբյուրներում հիշվում է խորեգոս, որ մի պարի վրա ծախսել է մինչև 3000 դրախմե։

240 Պրոպոնտիսում (մարմարա) երկու փարոս կար. մեկը կայսերական պալատի մոտ, մյուսը Բոսպորում։ Խոսքը առաջին փարոսի մասին է։

241 Այսինքն հանդերձանոց։

242 «Կողմերի» մասին տե՛ս վերը, ծանոթ. 125։

243 Կոստանդին Միրանածինը ցույց է տալիս, որ Մանգանայի պալատը Վասիլ 1-ն է կառուցել։ Բայց հայտնի է, որ Միքայել I Ռանգաբեն (811—813) ուներ մի շենք հենց Մանգանայում, որ վերջինիս որդի Իգնատիոսը, Կոստանդնուպոլսի պատրիարքը, ապրում էր Մանգանայում իր ընտանեկան բնակարանում։ Հարց է ծագում, Վասիլը վերանորոգեց այդ նույն պալատը, թե՞ այդ անունով մի ուրիշ պալատ կառուցեց, պարզ չէ։ Մանգանա թաղամասը գտնվում էր քաղաքի արևելյան ծայրամասում, ժամանակակից Դեյիրմենկապըի մոտ (տե՛ս Janin, Const. byz., p. 131—132, 277—278, 355—356)։

244 Պեգե (Πηγαι, հոգնակի թիվ), չփոթել Պեգե (Πηγη) մյուս պալատի վայրի հետ (տե՛ս ծանոթ. 223)։

245 Հերակլ կայսրը մեռավ 641 թ. ջրգողությունից (водянка):

246 Հիերիայի ջրավազանը գտնվում էր ժամանակակից Ֆեներբախչեի թերակղզու հյուսիս-արևելյան մասում, Պրոպոնտիսի (Մարմարա) ասիական ափին, որտեղ մինչև օրս կարելի է տեսնել նրա մնացորդները։ Ջրավազանը կառուցել էր Հուստինիանոս կայսրը, Հիերիայի պալատի կարիքների համար։ Նույն տեղում կար և մի այլ ջրավազան՝ բաց երկնքի տակ։ Միրանածինը այս վերջինիս մասին է խոսում (տե՛ս Janin, Const. byz., p. 199)։

247 Ֆորոս (լատ. Forum), խոսքը Կոստանդնի հրապարակի մասին է (Forum Constantini)։ Կառուցել էր Կոստանդին Մեծ կայսրը։ Այն շրջապատված էր կառավարական բազմաթիվ շենքերով, տաճարներով և այլն։ Հրապարակի շուրջ կային սյունաշարքեր (պորտիկներ), որոնց բազմաթիվ սյուները մինչև օրս էլ կանգուն են և թուրքերեն անվանվում են Չեմբերլիտաշ (տե՛ս Janin, Const. byz., p. 67—69)։

248 Բառացի նշանակում է պղնձագործարաններ (Χαλκοπρατεῖα)։ Կոստանդնուպոլսում, ինչպես և Արևելքի քաղաքներում, նույն արհեստով զբաղվող արհեստավորները կենտրոնանում էին մի շրջանում և կամ մի փողոցի վրա։ Վերոհիշյալ արհեստանոցները գտնվում էին Ստամբուլի Չեյներ Սուլթանե մզկիթի շրջանում, սուրբ Սոֆիայի տաճարի արևմտյան գռան դիմաց։ Հենց այնտեղ հնագետները գտել են խալկոպրատիայի աստվածածնի տաճարի ավերակները (տե՛ս Janin, Const. byz., p. 97—98)։

249 Բնագրում Τζῖρος (գրվում էր նաև Στῖρος)։ Թաղամասը գտնվում էր Կոստանդնուպոլսի առաջին բլրի հյուսիսային մասում, Կոստանդնուպոլսի թերակղզու հյուսիս-արևելյան կողմում (տե՛ս Janin, Const. byz., p. 395)։

250 Վայրը Պուլքերիանե էր կոչվում Թեոդոս II-ի քույր Պուլքերիայի անունից, որը և այդ տեղում պալատ էր կառուցել։ Պուլքերիանեն գտնվում էր Ոսկեղջյուրի մոտ (տե՛ս Janin. Const. byz., p. 62, 136, 381—382)։

251 Բնագրում Ἑβδομον (նշանակում է յոթերորդ [մղոն])։ Վայրը գտնվում էր Թեոդոսի պարսպից դուրս, Պրոպոնտիսի ափից ոչ հեռու (Մանրամասն տե՛ս Janin, Const. byz., p. 408—410)։ Այդտեղից դեպի Կոստանդնուպոլիս էր ձգվում նշանավոր էգնատիա ճանապարհը, որ Ոսկե դռների միջով ուղղվում էր քաղաք։ Բոլոր ռազմական շքերթները սկիզբ էին առնում հենց Հերդոմոնում։ Հերդոմոնի տեղում այժմ գտնվում է Բաքըրքյոյ գյուղը (հնում կոչվում էր Մակրիքյոյ)։ Համմտ. նաև Janin, La topographie, p. 213—214։

252 Բնագրում Ῥήγιον։ Կոստանդնուպոլսի թաղամասերից մեկը։

253 Բնագրում Βάθυρσος, որ ուսումնասիրողների կարծիքով գրչական սխալ է և պիտի լինի Βάβυρσος (հանդիպում է նաև Βάρβυσος գրության ձևր)։ Ոսկեղջյուրի կամուրջներից մեկն էր։

254 Բնագրում Στενόν (բառացի նշանակում է «նեղուց», խոսքը Բոսֆորի մասին է։ Կոչվում էր նաև Ῥεῦμα («հոսանք»)։ Այն միացնում է Սև ծովը Մարմարայի հետ։ Միջին երկարությունն է 31 կիլոմետր, լայնությունը՝ 550—3200 մետր։ Սուրբ Փոկասի տաճարը գտնվում էր Բոսֆորի եվրոպական ափում. ժամանակակից Օրթաքյոյում։

255 Սոսթենիոսը տեղադրվում է ժամանակակից Իստինյեում, Բոսպորի եվրոպական ափին, Յենիքյոյից հարավ։

256 Միքայել Հրեշտակապետի տաճարի կառուցումը հիշատակում են և հայկական աղբյուրները։ «Սա (Վասիլը) շինեաց զսուրբ Ջօրավարն» տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 80)։

257 Միրանածինը օգտագործում է հին կտակարանի հետևյալ դարձվածքը. «Եթէ հանցես զպատուականն յանարգէ, զբերան.իմ եղիցես»։ Երեմիա, ԺԵ, 19։

258 Վասիլը քրիստոնյա դարձնելով հերետիկոսներին և հրեաներին, ըստ երեվույթին ուզում էր նրանց զինվորագրել և նրանցով համալրել իր բանակը։ Բյուզանդական օրենքի համաձայն հրեաները, հեթանոսները և հերետիկոսները, զրկված լինելով քաղաքական իրավունքներից, ազատված էին զինծառայությունից։ Տե՛ս Epanagoge, tit. IX, cap. 13 (Ἕλληνες καὶ Ἰουδαῖοι καὶ αἱρετικοὶ οὔτε στρατεύονται οὔτε πολιτεύονται ἀλλ'ἐσχάτως ἀτιμοῦνται)։

259 Համմտ. Բ թուղթ Պետրոսի, Բ, 20—22. «Զի լաւ է նոցա եթէ բնաւ իսկ չէր ծանուցեալ զարդարութեանն ճանապարհ, քան զի ծանեան և յետս կացին ի սուրբ պատուիրանէն, որ նոցա աւանդեցաւ։ Եկեալ ի դէպ նոցա ճշմարիտ առակին զգօնութեան, եթէ շուն դառնայ անդրէն ի փսխած իւր, և խոզ լուացեալ՝ բնդ տիղմ թաւալեալ»։

260 Բնագրում Αἰθίοψ (եթովպացի), թարգմանեցինք «հնդիկ», որովհետև խոսքը սևամորթի մասին է (արաբ)։ Միրանածինն այստեղ ազդված է Աստվածաշնչից։ Համմտ. ծանոթ. 73։

261 Տե՛ս ծանոթ. 20։

262 Պետրոս Սիկիլիացին պավլիկյաններին նվիրած իր ուսումնասիրությունը (գրված 869/870 թթ.) հասցեագրում է Բուլղարիայի արքեպիսկոպոսին։

263 «Քրիստոսի ուրկան» դարձվածքը վերցված է նոր կտակարանից. «Մինչ դեռ գնայր Յիսուս բնդ եզր ծովուն Գալիլեացւոց,ետես երկուս եղբայրս զՍիմովն զկոչեցեալն Պետրոս եւ զԱնդրէաս, եղբայր նորա՝ արկեալ ուրկան ի ծով. քանզի ձկնորսք էին։ Եւ ասէ ցնոսա։ Եկայք զկնի իմ, եւ արարից զձեզ որսորդս մարդկան» (Մատթէոս, Դ, 18—19)։

264 Միքայել III-ի և հատկապես Վասիլ I-ի ժամանակ է, որ քրիստոնեությունն սկսեց ավելի մեծ թափով տարածվել սլավոնական ժողովուրդների մեջ։ Այդ կարևոր գործը Բյուզանդիան վստահել էր Թեսաղոնիկեցի երկու եղբայրներ Կոստանդնին (հոգևորական դառնալուց հետո կոչվեց Կիրիլլ, 827—869) և Մեթոդիոսին (մեռ. 885 թ.)։ Նրանց «Վարքերում» ցույց է տրված, որ Մորավիայի իշխան Ռոստիսլավը դեսպանություն ուղարկեց Միքայել III կայսեր մոտ, խնդրելով, որ իրենց քրիստոնեությունն ամրապնդող քարոզիչներ ուղարկի։ Այդ գործում խոշոր դեր խաղաց և հայազգի Վարդասը, Միքայելի մորեղբայրը, որի մասին արժեքավոր տեղեկություններ են պահպանվել նույնիսկ սլավոնական ավանդություններում (съ Бардою)։ Ամբողջ գործի կազմակերպիչն էր պատրիարք Փոտը, որը Կիրիլլի ուսուցիչն էր։ Կիրիլլն ու Մեթոդիոսը ստեղծեցին սլավոնական ժողովուրդների համար այբուբենն, որը հսկայական նշանակություն ունեցավ այդ ժողովուրդների կուլտուրական հետագա զարգացման համար։ Նորագույն աշխատությունները տե՛ս հետևյալ ժողովածուում. Κυρίλλῳ καὶ

Μεθοδίω τόμος ἑορτιος ἐπι τῇ χιλιοστῇ καὶ ἑκατοστῇ ετηρίδι, Θεσσαλονικη, 1966: *Լիակատար մատենագիտությունը տե՛ս հետևյալ գործերում.* **Г. А. Ильинский**, Опыт систематической кирилло-мефодьевской библиографии, София, 1934; **М. Попруженко-С.Романски**, Кириллометодиевска библиография за 1934—1940 гг., София, 1942: *Տե՛ս նաև* **Ф. М. Россейкин**, Буржуазная историография о византнно-моравских отношениях в середине IX века, Виз. Временник, т. III, 1950, стр. 245—257: **Д. Ангелов**, Кирил и Методий и византийската култура и политика, Хиляда и сто години славянска писменност (863—1963), Сборник в чест на Кирил и Методий, София, 1963.

265 *Հմմտ. Դ. Մակաբայեցւոց, Զ, 5. «Դու՝ և որ յերկրին Բաբելացւոց երէք մանկունքն ինքնակամ զանձինս ի հուրն մատնեցին՝ զի մի՛ երկիր պագցեն սնոտի պաշտամանց, փրկեցեր, զի ի հերոյ վարսից նոցա ոչ մեղանչէր հուրն»։*

266 *Տե՛ս Յովհ. ԺԴ, 14, 12։*

267 *Տե՛ս Երկրորդումն օրինաց, Զ, 16։*

268 *Վասիլի ավագ որդի Կոստանդինը վախճանվեց 879 թ.։ Տապանաքարերից մեկի վրա գրված է, որ այնտեղ է թաղված «Վարդը, որդին Վասիլի, Միրանածինի պապի»։ Ինչպես հայտնի է աղբյուրները հիշատակում են Վասիլ I-ի որդիների հետևյալ անունները. Կոստանդին, Լևոն, Ալեքսանդր, Ստեփանոս։ Վարդաս անունը հիշվում է միայն այս տապանաքարի վրա։ Ն. Ադոնցը ենթադրում է, որ Վարդը կարող է վերոհիշյալ Կոստանդնի հայկական անունը լինել (տե՛ս Ադոնց, Վասիլ Հայազն, էջ 478)։ Ըստ Ադոնցի հաշիվների, Կոստանդինը ծնվել է շուրջ 855 թ.։ Վասիլը ամուսնացավ Եվդոկիա Ինգերինայի հետ շուրջ 865 թ., հետևաբար Կոստանդինը ծնված պետք է լինի Վասիլի առաջին կնոջից՝ Մարիամից (Ադոնց. նույն տեղում, էջ 498)։ Քիչ չեն այն աղբյուրները, որոնք ցույց են տալիս, որ Կոստանդինը իրականում Վասիլի որդին չէր, այլ Միքայել III-ի և ծնվել էր Միքայելի սիրուհուց՝ Եվդոկիա Ինգերինայից, Վասիլի ապագա կնոջից (տե՛ս* Sym. Mag., p. 692; Georg. Mon. Cont., p. 844)։

269 *Խոսքը պետական գանձապահի մասին է (ὁ ἐπι τοῦ γενικοῦ)։ Այս անձնավորության լրիվ տիտղոսն էր ὁ λογοθετης τοῦ γενικοῦ (վաղ շրջանում կոչվում էր* comes sacrorum largitionum)։ *Առաջին անգամ հիշատակվում է Հուստինիանոս II-ի թագավորության օրոք։ Հիշյալ անձնավորության պարտականությունն էր հսկել և հավաքել կայսրության հարկերը։ Նա ուներ իրեն ենթակա ճյուղավորված ապարատ։ (Մանրամասն տե՛ս* Bury, IAS, p. 86—90)։ *Տե՛ս և հաջորդ ծանոթ.։*

270 *Ինագրում ἐπόπται և ἐξισωται։ Խոսքը λογοθετης τοῦ γενικοῦ (պետական հարկերը հավաքողի ու տնօրինողի) ենթակայության մեջ գտնվող անձնավորությունների մասին է։ Կային քաղաքի էպոպտներ, որոնք չորս հոգի էին (տե՛ս* Bury, IAS, p. 72), *և բանակաթեմերի էպոպտներ (ἐπόπται τῶν θεμάτων), նահանգային հարկահավաքները։ Բյուրին ենթադրում է, որ էպոպտների և էքսիստոնների միջև կար տարբերություն, թեև նրանց հիմնական պարտականությունը կապված էր հարկերի հավաքման գործի հետ (տե՛ս* Bury. IAS, p. 87)։ *Սրանք ամրացված չէին մի բանակաթե-*

մում և Կոստանդնուպոլսից ուղարկվում էին որտեղ որ պետք էր։ Գնալով բանակաթեմ, նրանք ենթարկվում էին բանակաթեմի զորավարին։ Կար և հարկահավաքների մի երրորդ խումբ, որը կոչվում էր ὁ ἐπὶ τοῦ κτήματος. Տե՛ս Ahrweiler, Recherches, p. 44)։

271 Պետության երկու մագիստրոսների մասին տե՛ս «Կայսրության կառավարման մասին» աշխատության 43-րդ գլխի 26-րդ ծանոթագրությունը։

272 Սանդավարինոսի լրիվ անունն էր Թեոդորոս Սանգավարինոս։ Նա հռչակվել էր որպես մոգ և նրա հակառակորդները նրան մանիքեցու որդի և մանիքեցի էին անվանում։ Իր գործունեությունն սկսել էր դեռ կեսար Վարդասի ժամանակ, որը նրան մահապատժի պիտի ենթարկեր, եթե նկատի չառներ նրա երիտասարդ հասակը։ Վարդասը նրան Ստուդիոնի վանքն ուղարկեց «ուղղվելու»։ Սանգավարինոսը մերձավորագույն զինակիցն էր Փոտ պատրիարքի, որի առաջին աթոռակալության ժամանակ նշանակվեց այդ Ստուդիոնի վանքի վանահայր և այնտեղից հեռացվեց իր պատրոն Փոտի աթոռազուրկ լինելուց հետո։ Փոտը իր երկրորդ աթոռակալության ժամանակ Սանդավարինոսին նշանակեց Եվխայիտոնի արքեպիսկոպոս։ Լևոն VI կայսեր առաջին գործերից մեկն է լինում Սանդավարինոսին դատի տալը, գանակոծելն ու աքսորելը Աթենք։ Կայսրը դրանով չբավարարվեց և մի քիչ անց նրան կուրացնել տվեց և աքսորեց Արևելք։ Շատ տարիներ հետո Լևոնը թույլ տվեց Սանգավարինոսին գալ Կոստանդնուպոլիս, թոշակ նշանակեց «Նեա» եկեղեցուց։ Սանդավարինոսը վախճանվեց Կոստանդին Միրանածինի և նրա մայր Զոեի թագավորության ժամանակ (տե՛ս Georg. Mon. Cont., p. 850—852; Sym. Mag., p. 693—694)։

273 Կարմիր կոշիկները կայսերական հանդերձանքի անհրաժեշտ մասն էին կազմում։ Ոչ ոք իրավունք չուներ կարմիր կոշիկ հագնել բացի կայսրից։ Նույն սովորությունը կար և Սասանյան Պարսկաստանում։ Պետք է ասել, որ Բյուզանդիայի կազմի մեջ մտնող հարավային Հայաստանի հինգ նախարարությունների սատրապները, այն է Անձիտի, Բալահովիտի, Հաշտյանքի, Ծոփքի և Անգեղտան, մինչև Հուստինիանոս I կայսեր ժամանակը իրավունք ունեին կարմիր կոշիկներ հագնել։ Այդ մասին հետաքրքրական տեղեկություններ է տալիս Պրոկոպիոս Կեսարացին, (տե՛ս նրա «Կառուցումների մասին» աշխատության 3-րդ գրքի 1-ին գլուխը)։

274 Մարգարիտես կոչված շենքը կառուցել էր Թեոփիլոս կայսրը և կազմում էր բյուգանդական կայսրների Մեծ պալատի բաղկացուցիչ մասը (տե՛ս Janin, Const. byz. p. 109, 115)։

275 Այլ աղբյուրներ նշում են, որ պատրիարք Փոտը և այլ սենատորներ արգելում էին Վասիլին կուրացնելու իր որդուն (տե՛ս Sym. Mag., p. 697)։ Գևորգ Վանականի Շարունակողը ավելացնում է նաև հայազգի Ստիլիանոս Զաուցային, որն այն ժամանակ ափոքր հետերիարխ էր։ Ստիլիանոս Զաուցան Վասիլի որդիների խնամակալն էր, որ Լևոն VI-ի թագավորության ժամանակ դարձավ պետության երկրորդ մարդը։ Նա իր դուստր Զոեին կնության տվեց Լևոնին և ինքը ստացավ վասիլեոպատոր (կայսերահայր) հորջորջումը։

276 Վասիլի մահվան մասին մանրամասնություններ են տալիս այլ աղբյուրներ։ Սիմեոն Մագիստրոսը թույլ է տալիս, որ Վասիլը գնացել էր որսի,

որտեղ մի մեծ եղջերու հարձակվում է ձի հեծած Վասիլի վրա, իր եղջյուրները անցկացնում կայսեր գոտու մեջ և նրան ցած գլորում։ Կայսեր ուղեկիցներից մեկը մոտենում, քրով կտրում է կայսեր գոտին և ազատում նրան։ Վասիլը վերադառնալով պալատ հրամայում է գլխատել իր աղատարարին, որպես կայսեր դեմ քուրը մերկացրած։ Ենթադրում են, որ մահվան դատապարտվածը պարզապես մի ա՛նաբեկիչ է եղել, որի նպատակն էր Վասիլին սպանել (Տե՛ս A. Vogt, La jeunesse de Léon *VI* le Sage, p. 427)։ Ահա այս անկումից հետո ունեցած բարդություններից է վախճանվում Վասիլը (տե՛ս Sym. Mag., p. 699; Georg. Mon. Cont., p. 848)։ Նույն պատմությանն ենք հանդիպում «Պսամաթիական ժամանակագրության» մեջ, որտեղ ավելացված է, որ եղջերուն հարված էր հասցրել Վասիլի փորին, կայսրը ունեցել է արյունահոսություն և ինն օր հետո վախճանվել (տե՛ս Псамафийская хроника, стр. 28)։

277 Հոմերոս, Իլիական, Գ, 179։ Հոմերոսի այս տողերը, որոնք օգտագործել է Փիլոն Եբրայեցին իր՝ Մննդոց Գրքի համար գրած մեկնաբանությունների մեջ, ունեն հին հայերեն թարգմանություն. «Ըստ Քերթողին (իմա՛ Հոմերոսի—Հ. Բ.), երկոցունց իրաց թագաւոր՝ քաջ բարի, և արդնաւոր կռուողն»։ Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի Հայս, աշխատասիրությամբ Մ. Ավգերյանի, Վենետիկ, 1826, էջ 384։

ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

1 Կոստանդին Ծիրանածինի «Արարողությունների մասինա սույն աշխատության անավարտ մնացած նոր հրատարակությանը ձեռնարկող A. Vogt-*ը ենթադրում է, որ մեզ չեն հասել առաջին 9 գլուխները։ Դրա համար Յ. Ռեյսկեի հրատարակության 1-ին գլուխը նա համարում է 10-րդ և դրանով սկսում գլուխների թվահամարը։ Այդպիսով սույն 24-րդ գլուխը նա համարում է 33-րդ և այդպես շարունակում։ «Արարողությունների մասինա աշխատության մեզ չ՚հասած գլուխների հարցի վրա կանգ է առել նաև Ն. Ադոնցը (տե՛ս նրա* Notes *II*, p. *319* sqq.)։

2 Բնագրում βέλον *(լատ.* velum*)։ Բառը հանդիպում է և Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» «բեղարա ձևով (էջ 267)։* Βῆλον*-ը ունի բազմաթիվ նշանակություններ. «առագաստ», «վարագույր», «դրոշ»։ Տվյալ դեպքում օգտագործված է «բարձ», «գահ» իմաստով, այսինքն հիերարխիկ աստիճանը, որի համապատասխան բարձրաստիճան պաշտոնյաները մուտք էր գործում կայսեր մոտ (տե՛ս* Vogt. Commentaire, p. *71)։ Հայկական աղբյուրներում ևս «դրոշ» բառը ունի և այդ նշանակությունը։*

Կայսեր թագադրմանը մասնակցում էին 12 վելոն (բարձ), րնդ որում 1) մագիստրոսներ, 2) պատրիկներ և գորավարներ, 3) պրոտոսպաթարներ և այլն (տե՛ս De Cer. *I*, p. *193)։*

*3 Պրեպոզիտոսը (*πραιπόσιτος*, լատ.* praepositus*), կայսեր ներքինապետը։*

*4 Կուբուկլիոն (*κουβούκλιον*, լատ.* cubiculum*) կայսեր ննջասենյակը։ Այստեղ նշանակում է կուբուկլիոնի ծառայող անձնակազմը, այսինքն կուբիկուլարիոսները, սենեկապետն ու սենեկապանները։*

5 Օստիարիոս (լատ. ostiarius*) դռնապան։ Նրանք չորս հոգի էին և կրում էին թանկագին քարերով ագուցված ոսկե գավազաններ, (տե՛ս* De Cer., *I*. p. *10)։*

6 Ծիրանածինը չի տալիս Տարոնի իշխանի անունը։ A. Vogt*-ը գտնում է, որ այս նախադասությունը բնագրում հետագա շրջանի րնդմիջարկություն է, որ 3-րդ ինդիկտիոնը (ինդիկտիոնը 15-ամյա շրջան է) համապատասխանում է 944/945 թթ., երբ նրա կարծիքով այդ րնդմիջարկությունը կատարվել է։* A. Vogt*-ը միաժամանակ նշում է, որ «բարեկամ բուլղարներ» հիշատակությունը մի ապացույց է այն բանի, որ դեպքը պետք է կատարված լինի 927 թվականից հետո, Սիմեոն ցարի մահից հետո, Պետրոս ցարի ժամանակ, որովհետև այն ժամանակ միայն բյուզանդա-բուլղարական հարաբերությունները բարելավվեցին (թեև այս էլ փաստ չէ, որովհետև «բարեկամ բուլղարները» կարող էին լինել նաև բյուզանդա-բուլղարական հարաբերությունների սրման ժամանակ ևս։ Այդ մասին տես*

ներքևում ծանոթ. 9)։ Նա ցույց է տալիս, որ Տարոնի իշխաններից միայն Գրիգորն էր ստացել մագիստրոսի բարձր պատվաստիճանը, հետևաբար նա է Բյուղանգիոն գնացողը, և քանի որ, A. Vogt-ի ասելով, Գրիգորը մահացավ 930 թ. (այս բանը հաստատող և ոչ մի փաստ չունենք, տե՛ս N. Adontz, Notes *II*, p. *337*), ապա մնում է ենթադրել, որ դեպքը տեղի է ունեցել 927—930 թվականների միջև (տե՛ս Vogt, Commentaire, p. *152—154*)։

Ն. Ադոնցը թեև իր Les Taronites աշխատության մեջ 900 թվականն է համարում Գրիգորի Պոլիս գնալու տարեթիվը, հետագայում զանազան պատճառներով փոխեց իր միտքը։ Նա ցույց տվեց, որ Գրիգորը իշխանության՝ գլուխ անցավ 898 թվականին, և ինչպես Միրանածինն է գրում, նա, երկու լարի վրա էր խաղում, Բյուզանդիայի և խալիֆայության, (տե՛ս վերը, էջ 4), բայց իրականում ավելի հակված էր դեպի խալիֆաթը։ Նա Լևոն VI-ի ժամանակ գնում է Կոստանդնուպոլիս, դառնում մագիստրոս, այսինքն 180 աստիճանով փոխում իր քաղաքական կողմնորոշումը։ Ն. Ադոնցի ասելով, դա չէր կարող 900 թվականին կատարված լինել, Գրիգորի իշխանության երկրորդ տարին, որ դա կողմնորոշումը փոխելու համար շատ կարճ ժամանակամիջոց է։ Ն. Ադոնցը մի հարց ևս է առաջ քաշում։ Գրիգորին Կոստանդնուպոլիս ուղեկցեց Կոստանդին Լիպսը, որը հենց այն ժամանակ իր աղջկան ամուսնացրել էր Գրիգորի եղբոր հետ։ Արդ, եթե այդ դեպքը կատարված լիներ 900 թվականին, ապա հետևում է, որ Կոստանդինը պետք է առնվազն 30 տարեկան լիներ (որ ունենար ամուսնացնելու աղջիկ)։ Կոստանդին Միրանածինը ցույց է տալիս, որ այս Կոստանդին Լիպսը դեռևս 951/952 թվականներին դեռ կենդանի էր և վարում էր հետերիարխի պաշտոնը, այսինքն ստացվում է, որ Կոստանդինը շուրջ 80 տարեկան հասակում դեռ հետերիարխ էր։ Ն. Ադոնցի կարծիքով դա պատկառելի մի տարիք է նման պաշտոնը վարելու համար (Ադոնցն այստեղ մոռանում է այն, ինչ գրել էր 1934 թվականին, որ Միրանածինի մոտ չփոթվել են և նույնացվել երկու տարբեր Կոստանդին Լիպսեր, որ առաջինը՝ հայրը սպանվեց 917 թ., իսկ երկրորդը առաջին Կոստանդին Լիպսի որդին էր։ Տե՛ս Les Taronites, p. *223—224*)։ Այդ իսկ պատճառով Ադոնցը ճանապարհներ է որոնում Գրիգորի Կոստանդնուպոլիս գնալու ժամանակը ավելի առաջ տանելու և հարցը լուծում է այսպես. 3-րդ ինդիկտիոնը տղղում է 13-րդի (փոխանակ ἰνδικτιῶνι γ′, ἰνδικτιῶνι <ι>γ′) և ստացվում է 910 թ., երբ, նրա կարծիքով, Գրիգորը գնաց Կոստանդնուպոլիս և ստացավ մագիստրոսի աստիճանը (տե՛ս N. Adontz. Notes, *II*, p. *331—338*)։ Բոլոր դեպքերում հարցը չի կարելի համարել սպառված, և նրա լուծումը շատ կարևոր է իմանալու համար Տարոնի իշխանության կողմնորոշման փոխվելու կոնկրետ տարեթիվը։

7 Բնագրում κατεπάνω τῶν βασιλικῶν. նույն է ինչ πρωτοσπαθάριος τῶν βασιλικῶν։ Արքունիքի զինվորական պաշտոնյա էր։ Նրա մասին ավելի մանրամասն տե՛ս Bury. IAS, p. *111—112*։

8 Բնագրում πρωτονοτάριος τοῦ δρόμου։ Դրոմոսի առաջին նոտարը (լատ. notarius)։ Նշանակում է դպիր, գրագիր, սղագրող, արձանագրող և այլն։

Բառն անցել է և հայոց լեզվին՝ նոտար, որ նշանակում է «նշանագիր, գրիչ, դպիր»։ ՆԲՀԼ, հտ. Բ, էջ 456։

9 Այս բուլղարների մասին տե՛ս նաև վերը, ծանոթ. 6, նաև էջ 44։ «Բարեկամ բուլղարների» մասնակցությունը բյուզանդական արքունիքի արարողություններին ուսումնասիրողները հնարավոր են համարում միայն 927 թ. հետո, Սիմեոն ցարի մահից հետո, որ դրանից առաջ, երբ ծայրահեղ սրված էին բյուզանդա-բուլղարական հարաբերությունները, դա անհնարին էր։ Բայց, ամենայն հավանականությամբ, այդ ենթադրությունը ճիշտ չէ։ Դեռևս VI-րդ դարում Բյուզանդիայի համար կար «բարեկամ արաբների» և «թշնամի արաբների» հասկացողությունը, որի տակ ենթադրվում էր Գասանիդ և Լախմիդ արաբները։ Առաջինները Բյուզանդիային էին հպատակ և դաշնակից ընդդեմ Պարսկաստանի։ Լախմիդները Պարսկաստանին էին հպատակ և դաշնակից ընդդեմ Բյուզանդիայի, այդ թվում և նրանց հպատակ արաբների։ Արդ, շատ հավանական է, որ «բարեկամ բուլղարներ» հասկացողությունը վերաբերում է այն բուլղար ավագանուն, որը բյուզանդական կողմնորոշում ունենալով, ստիպված էր Սիմեոնից փախչել և քաղաքական ապաստարան խնդրել կայսրությունից, իսկ վերջինս, հասկանալի է, պետք էր իր շահերի համար հովանավորեր նրանց։

10 Ենագրում τοὺς προκρίτους ἀνθρώπους τοῦ μαγίστρου καὶ ἄρχοντος τοῦ Ταρῶ։

11 Միրանածինն այստեղ Տարոնի մագիստրոսին անվանում է պարզապես Տարոնացի՝ Ταρωνίτης։ Նույն ձևով մի քանի անգամ նա Տարոնացի է անվանում առանց անունը հիշատակելու Տարոնի իշխան Գրիգորին (Կրիկորիկին)։ (Տե՛ս «Կայսրության կառավարման մասին» աշխատության 43-րդ գլուխը)։ Սա ևս կարող է հաստատել այն ենթադրությունը, որ սբ. Բարսեղի տոնին մասնակցող մագիստրոսը՝ Տարոնի իշխանը ոչ այլ ոք է, քան Գրիգորը։

12 Միրանածինի ժամանակ, հասկանալի է, Բյուզանդիա պարսից դեսպան չէր գնում։ Պարսկաստանը որպես պետություն դադարել էր գոյություն ունենալուց դեռևս VII գարի 30-ական թթ.։ Միրանածինը այստեղ մեջ է բերել Պետրոս պատրիկիոսի մի գործը։ Դեսպանությունները լինում էին երկու տեսակի՝ մեծ և փոքր։ Մեծ դեսպանները միայն լիազորված էին կարևոր նշանակություն ունեցող (օրինակ հաշտություն կնքելու) հարցերը քննարկելու և լուծելու։

13 Իլլյուստրիոս (լատ. illustrius)։ Բառը պահպանված է հայկական աղբյուրներում ևս։ Հմմտ. Ալամանի արձանագրությունը. «Քսան և եւթն ամուլ Հերակղի բարեպաշտ թագաւորի Ներսեհի Շիրակայ և Արշարունեաց տեառն և Թէոփիլոսի [Ա]շարունեաց եպիսկոպոս[ի] ես Գրիգոր եղուստր և Մարիամ իմ կին շինեցաք զսուրբ եկեղեցիս վասն մեր հոգւոցս»։ Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 1։

14 Ենագրում σιλεντιάριος։ Նրանք նախապես պատկանում էին կուբիկուլարիոսների դասին, որը կայսեր սենեկապետությունն էր ներկայացնում։ Գտնվում էին պրեպոզիտոսի ենթակայության մեջ։ Ջորս սիլենտիարիոս ծառայում էին կայսրուհուն։ Կայսերական ընդունելությունների ժամանակ արարողապետության պաշտոնն էին վարում։ Մանրամասն տե՛ս Bury,

IAS, p. 24—25։ Սիլենտիարիոսներին հիշատակում է և Մխիթար Գոշը. «Առաջին դաս պաղատին, որ է դարպասն եղեն Դիարք (սխալ ընթերցում, պիտի լինի [u]իղենտիարք—Հ. Բ.), որք են պահապանք ոսկե վաղարին. զգեստ է նոցա դիպակ ոսկեթելով կաղմաւ և ունին գաւազանս ոսկիս և գործ է նոցա տանել յառաջ զագաւորոզն և զայլս, զոր խնդրէ արքայն»։ Դատաստանագիրք, էջ 261—262։

15 Տրիբունոս (լատ. tribunus), δομέστικος τῶν νουμέρων-ի ենթակայության տակ գտնվող սպաներ, որ հիերարխիկ աստիճանում գալիս էին տոպոտերետեսից և խարտուլարից հետո։ Տե՛ս Bury, IAS, p. 65—66։ Որպես կանոն հիշվում են վիկարիոսների (vicarius) հետ միասին։

16 Բնագրում μαγιστριανός։ Զբաղվում էին դիվանագիտությամբ ու ներքին անվտանգությամբ։ Ենթարկվում էին magister officiorum-ին և կոչվում էին agentes in rebus։ Պաշտոնը հարատևեց մինչև VIII դարը, երբ նրանց անունը անհետանում է աղբյուրներում և նրանց տեղը գրավում են «վասիլիկոս»-ները։ Տե՛ս և «Կայսրության կառավարման մասին» աշխատության 45-րդ գլխի 28-րդ ծանոթագրությունը։

17 Այսինքն Մծբին։ Մծբինը պարսկա-բյուզանդական սահմանի վրա պարսկական հզոր քաղաք-ամրոց էր։

18 Դարան բյուզանդական քաղաք-ամրոց էր պարսկա-բյուզանդական սահմանի վրա։ Կառուցվել էր Անաստասիոս կայսեր ժամանակ, 507 թ. ի խախտումն պարսկա-բյուզանդական հաշտության պայմանագրի, որի համաձայն սահմանամերձ գոտում ամրության շինարարությունը երկու կողմի համար էլ արգելված էր։ Անաստասիոսը, օգտվելով պարսիկների՝ հոների դեմ պատերազմով զբաղված լինելու հանգամանքից, հիմնադրեց այն։ Անաստասիոսը քաղաքին տվեց իր անունը՝ Անաստասիուպոլիս։ Պարսիկները շատ աշխատեցին այն կործանելու, բայց միշտ անհաջողության մատնվեցին։ Դարա քաղաքում նստում էր բյուգանդական զորահրամանատարը, որ ուներ դուքսի աստիճան։ Քաղաքի կառուցման և նրա պատմության մասին արժեքավոր տեղեկություններ է տալիս Պրոկոպիոս Կեսարացին (Պարսկական պատերազմի մասին, Գիրք Ա, գլ. 10)։

19 Հուստինիանոս կայսեր ժամանակ պարսից դեսպան Իսդիգուսնասը (Յազդվշնասպը) այդպիսի մի փորձ կատարեց։ Նա իբրև թե դեսպանությամբ եկավ Դարա։ Նրա նպատակն էր 500 սպառազինված մարդ, որպես իր շքախմբի անդամների, մտցնել քաղաք և գիշերով կրակի տալ քաղաքը։ Երբ բյուզանդացիները զբաղված էին լինելու հրդեհն հանգցնելու գործով, մոտիկ թաքնված պարսից զորքը պիտի հարձակվեր և գրավեր քաղաքը։ Բայց բյուզանդացիները գործեցին Կոստանգին Սիրանածինի մոտ պահպանված հրահանգի համաձայն։ Նրանք Յազդվշնասպի ամբողջ «շքախմբին» թույլ չտվեցին մուտք գործել քաղաք և պարսից խորամանկությունը ապարդյուն անցավ։ Մանրամասն տե՛ս Պրոկոպիոս Կեսարացու Պարսկական պատերազմի մասին աշխատության Երկրորդ գրքի 28-րդ գլխում։

20 «Բարբարոսաց դիվան» (σκρινιον τῶν βαρβάρων), այսինքն այն գիվանը, որտեղ պահվում էին բյուգանդական կայսրության՝ օտար պետությունների

հետ ունեցած փոխհարաբերություններին վերաբերող փաստաթղթեր, ժամանակակից տերմինով «Արտաքին գործոց մինիստրության դիվաններ»։

21 Պրետորների էպարքոս (ἔπαρχος πραιτωρίων), լատ. praetorius-ից։ Հին Հռոմում praetor էին կոչվում ամեն տեսակի կառավարիչներր, քաղաքապետերր, գլխավոր դորահրամանատարներր, գլխավոր դատավորր։

22 Բարբարոսների օպտիոն (ὀπτίων τῶν βαρβάρων)։ Օպտիոնին հիշատակում է Պրոկոպիոս Կեսարացին (Պատերազմների մասին, Գ, գլ. 17), նրա տակ ենթադրելով տնտեսին։

23 Պրիվատների կոմես (κόμης τῶν πριβάτων, լատ. comes privatorum), կամ, ինչպես բացատրում է Միրանածինը, կայսեր սակելլարիոսր։ Խոսքր կայսեր գանձապահի մասին է, որ տնօրինում էր կայսեր անձնական գրամն ու կալվածներր։

24 Բնագրում σακελλαρίους τοῦ βασιλέως։ Կայսեր գանձապետր։

25 Քաղաքի էպարքոս (ἔπαρχος τῆς πόλεως) քաղաքապետր։

Էպանագոգե օրենսգրքի համաձայն էպարքոսր քաղաքում կայսրից հետո ամենաբարձր տեղում էր գտնվում, բայց քաղաքից գուրս իշխանություն չուներ։ (ὁ τῆς πολεως ἔπαρχος ἐν τῇ πολει μειζων πάντων ἐστὶ μετὰ τον βασιλέα. ἐξελθων δὲ τοὺς ὅρους τῆς πόλεως ἐξουσίαν οὐκ ἔχει Epanagoge, tit. IV, cap. II)։

26 Ֆաբրիկիաների [պրեֆեկտներր] (οἱ τῶν φαβρίκων). այսինքն [զինա]գործարանների։

27 Դեկուրիոն (δεκουρίων, կամ δηκουρίων. լատ. decurio)։ Տասնապետ։

28 Սուբադիուվաս (σουβαδιουβας, լատ. subadjuva) օգնական, ծառայող։

29 Ադմիսսիոնալիոս (ἀδμισσιονάλιος. լատ. admissionalis)։ Սիլենտիարիոսների պետր, դեկավարր։

30 Լաբարեսիոս (λαβαρησιος)։ Հավանաբար լաբարոն կրողներր։ Լաբարոն էր կոչվում Կոստանդին I կայսեր դրոշակր, քրիստոնեության խորհրդանշանր։

31 Հոեգիա դարպասր Թեոդոս II-ի պարիսպների վրա գտնվող գարպասներից մեկն էր, գտնվում էր պարիսպների կենտրոնում։ Այժմ կոչվում է Յենիմեվլեվիխանեկապր (Տե՛ս Janin, Const. byz., p. 259)։ Դարպասի վրա կա հյուպարքոս Կոստանդինի 447 թ. արձանագրություն։ Հնարավոր է, որ այս Կոստանդինր և Միրանածինի մոտ մի փոքր առաջ հիշատակված էպարքոս Կոստանդինր նույն անձնավորությունր լինի։

32 Կոնսիստորիոն (κονσιστώριον, գրության ավելի ճիշտ ձևն է κωνσιστώριον, լատ. consistorium)։ Ժողովասրահ։

33 «Բարբարոսաց խարտուլար» (χαρτουλάριος τῶν βαρβάρων) ժամանակակից տերմինով արտաքին գործոց մինիստրության գիվանապետր։

34 Անտիկոնսիստորիոն (ἀντικωνσιστώριον). Կոնսիստորիոնի դիմաց գտնվող սրահր։

35 Սիլենցիում (հուն. σιλέντιον. լատ. silentium) նշանակում է աուդիենցիա, հանդիպում կայսեր հետ, ընդունելություն վերջինիս մոտ։

36 Կանդիդատներր (κανδιδάτοι) մտնում էին բյուգանդական արքունիքի պաշտոնեության («թագավորական մարդիկ» — „βασιλικοὶ ἄνθρωποι“) կազմում, գտնվելով «թագավորական պրոտոսպաթարի» հրամանների ներքո։ Խնդրո առարկա պաշտոնեության մեջ էին մտնում՝ բացի կանդիդատներից,

(որոնք սկիզբ են առնում Գորդիանոս III-ի ժամանակից—238—244 թթ.), նաև սպաթարոկանդիդատները, սպաթարները, ստրատորները և մանդատորները։ Կանդիդատներից էր բաղկացած կայսերական շքերթին մասնակցող ղորախումբը։ Կանդիդատների մասին տե՛ս Bury, IAS, p. 111—112։ Brehier, Les Institutions, p. p. 123, 125, 127, 132—133։

37 Բնագրում παιδας εὐσχήμους։ Բառը հունարեն չէ, այլ լատիներեն pueros.

38 Բնագրում τερτιοκήριος. լատ. tertiocerius (tertius—երրորդ)։ Հազվագյուտ են հանդիպում։ Ավելի հաճախ են հանդիպում Primicerius (primus—առաջին) և Secundicerius (secundus—երկրորդ)-ները։ Դիվանատան աշխատող է (տե՛ս De Cer. II, p. 403—404)։

39 Լեվա (բնագրում λεβά)։ Լատիներեն բառ է։

40 Վեստոսակրա (βεστοσάκρα. լատ. vestis sacra)։ Կայսեր «սրբազան» հանդերձարան։

41 Վեստոսակրայի ծառայողները։

42 Բնագրում STRANFER։ Լատիներեն Transfer-ի աղավաղումը։

43 Ավգուստեոնը Սեպտիմիոս Սևերոսի կառուցած Տետրաստոոնն էր, որը գեղեցկացրեց և ընդարձակեց Կոստանդին I կայսրը, վերանվանելով Ավգուստեոն, իր մայր՝ Ավգուստա Հելենեի պատվին։ Ավգուստեոնի չորս կողմում պորտիկներ (ստոա)-սյունաշարքեր էին և գտնվում էր սուրբ Սոֆիայի տաճարի շատ մոտիկ տեղում։ Ավգուստեոնի շուրջը կային բազմաթիվ կարևոր շենքեր, ինչպես օրինակ Խալկեն, ամառային Մագնավրա պալատը, Սենատը և այլն։ Ավգուստեոնի ավերակները այժմ գտնվում են Այասոֆյամեյդանը հրապարակում (տե՛ս Janin. Const. byz., p. 65—67)։

44 Դեմոսների և կողմերի մասին տե՛ս. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Գիրք 5, Պրոկոպիոս Կեսարացի, էջ 329, ծանոթ. 172։

45 Նիկեփոր II Փոկաս, կայսր հռչակվեց 963 թ. հուլիսի 3-ին, թագավորեց 963 թ. օգոստոսի 10-ից 969 թ. դեկտեմբերի 10-ը։

46 Կոստանդին Մակեդոնացի, այսինքն Կոստանդին VII Միրանածինը։

47 Ռոմանոս II-ը, որ միահեծան թագավորեց 959 թ. նոյեմբերի 10-ից մինչև 963 թ. մարտի 15-ը։ Նրա թագավորության ժամանակ կայսերակից էին հայտարարված նրա դեռահաս որդիներ Վասիլը (Վասիլ II-ը) 960 թ. ապրիլի 22-ից և Կոստանդինը (Կոստանդին VIII) 961 թ. սկսած։

48 Կայսր բառի հոմանիշն էր Ավգուստոս (Օգոստոս), իսկ կայսրուհի բառի՝ Ավգուստա։

49 Բնագրում τάγματα։ Բյուգանդական բանակը բաղկացած էր երկու մասից θέματα-ներից և τάγματα-ներից։ Առաջիններր ներկայացնում էին նահանգների, բանակաթեմերի զորքերը, իսկ տագմաները այն զորքերն էին, որոնք կենտրոնացած լին մայրաքաղաքում կամ նրան մոտիկ նահանգներում՝ Թրակիայում, Մակեդոնիայում և այսպես կոչված Պերատիկա շրջանում՝ Բոսպորի ասիական կողմում։ Բանակաթեմերի զորքերը գլխավորում էին բանակաթեմերի զորավարները, իսկ տագմաները՝ դոմեստիկոսները և ունեին տարբեր կազմակերպություն։ Տագմաները հաճախ է հիշատակում Թեոփանեսը VIII դարի դեպքերի կապակցությամբ։ IX դարում հիշվում են չորս տագմա, այն է 1. Սխոլարիոսներ, 2. Էքսկուբիտոս-

Ներ կամ էքսկուբիտի, 3. Արիթմոսներ և 4. Հիկանատոսներ (տե՛ս Bury, IAS, p. 47—48)։

Տագմաների մասին մանրամասն տեղեկություններ են տալիս արաբական ազբյուրները։ Կուդաման իր «Քիթաբ ալ Խարաջ» աշխատության մեջ գրում է հետևյալը. «Կոստանդնուպոլիս, արքայանիստ քաղաքի կեցող զորաց թիվը 24.000 կհաշվվի, որոնց 16.000-ը ձիավոր և 8000-ը հետևակ են։ Ձիավորները չորս գնդի կբաժանվին։ Առաջինը 4000 հոգով կկացուցանե Սկոլարյան գունդր, մեծ Դոմեստիկի հրամանատարության տակ, միևնույն ժամանակ նաև ընդհ. հրամանատար է բովանդակ բանակին և կարգադիր զորաժողովներու։ Երկրորդ գունդր նույնպես 4000 հոգվով, կկոչվի—Տակսիս։ Դրունգարի մր հրամանին տակ գտնվող՝ նմանապես 4000-է բաղկացած, երրորդ—եկսկուբիտք (ἐξκούβιτοι) գունդր կներկայացնե անձնապահաց դասը։ Չորրորդը Սկուտարյանք՝ 4000 հոգվով, որոնք թագավորին ճամբորդությանցը միշտ կընկերանային։ Հետևակազորն երկուքի կբաժանվի, մին կկոչվի՝ Ոպտիմատես, մյուսը՝ Նումերա յուրաքանչյուրը 4000 հոգվով» (տե՛ս Ἐλληνικά, Սկզբնավորություն, էջ 50, ծանոթ. 1)։

50 Նիկեփոր Փոկասի հոր անունը՝ Վարդաս վկայում է Նիկեփորի հայկական ծագման մասին։

51 Խրիսուպոլիսը Կոստանդնուպոլսի մի արվարձանն էր, այժմ կոչվում է Ուսկյուդար։

52 Ինագրում Μαριανὸς ὁ Ἀπαμβᾶς։ Մականունը հունական չէ։

53 Ինագրում ὁ Τορνίκης Νικόλαος։ Հասկանալի է, որ նա պատկանում է Թոռնիկյանների նշանավոր ընտանիքին։

54 Պատրիարքն այն ժամանակ Պոլիևկտոսն էր (956 թ. ապրիլի 3-ից մինչև 970 թ. փետրվարի 5-ը)։

55 Հունարեն Μίλιον, լատ. Milium։ Աղբյուրների տվյալների համաձայն դա հաղթական մի կամար էր, զարդարված արձաններով ու բարձրաքանդակներով։ Տեղադրվում է սուրբ Սոֆիայի հրապարակի հյուսիս-արևմտյան կողմում (տե՛ս Janin, Const. byz., p. 104—105)։

56 Ինագրում Χρυσῆ πόρτα (նաև Χρυσῆ πύλη)։ Տե՛ս վերր, Վասիլ կայսեր կենսագրության 26-րդ ծանոթագրությունր։

57 Սկարամանգիոնր (σκαραμάγγιο.) մի տեսակ քաֆթան էր, կաստորե սկարամանգիոնր կուղբի (κάστωρ) մորթուց պատրաստված սկարամանգիոն։ Հնարավոր է, որ և այդ կենդանու մորթից եղած չլինի, այլ լինի վափուկ, ինչպես կուղբի մորթին։ Սկարամանգիոնի և Բյուզանդիայում գործածության մեջ եղած արևելյան հանդերձանքի մասին տե՛ս N. P. Kondakov, Les Costumes orientaux à la Cour Byzantine, Byzantion, t. I, 1924.

58 Սեբաստոս (Σεβαστός, բարեպաշտ) կոչումը տրվում էր կայսրերին։ Կայսրուհին կոչվում էր նաև Σεβαστὴ Αὐγούστα։ Ալեքսիոս Կոմնենոս կայսրը (1081—1118) «սեբաստոսների» ազնվականական հատուկ դաս հիմնադրեց։

Սեբաստոսների մասին տե՛ս H. Ahrweiler, Le Sebaste, chef des groupes ethniques, „Polychronion", Festschrift f. F. Dölger, München, 1966, p. 34—38։

59 Մեսե (Μέση, այսինքն Միջին, Կենտրոնական)՝ Կոստանդնուպոլսի գլխավոր պողոտան, որ միացնում էր Ավդուստեոնը Կոստանդնի Ֆորումի (Հրապարակի) հետ՝

60 Ֆորոսի աստվածածնի եկեղեցին կառուցել էր Վասիլ 1-ը (տե՛ս վերր, էջ 112)՝

61 Բնագրում διβητήσιον καὶ καμπάγια καὶ καμπότουβα՝ Դիբետեսիոնը Սոֆոկլեսի ենթադրությամբ պարսկական բառ է և նշանակում է հանդերձանքի մի տեսակ՝ Sophocles, Greek Lexicon, vol. I, p. 376՝ Կամպադիան մի տեսակ կոշիկ է (լատիններեն campagus)՝ Իսկ ի՞նչ է նշանակում կամպոտուբան, հայտնի չէ՝

62 Բնագրում Ὡρολόγια՝ Բառացի նշանակում է ժամացույց՝ Բացի արևի ժամացույցներից, Կոստանդնուպոլսում կային նաև իսկական ժամացույցներ, որոնց կառուցման տեխնիկան դեռևս հայտնի չէ՝ Աղբյուրներից կարելի է եզրակացնել, որ Կոստանդնուպոլսում կային յոթից ոչ պակաս «ժամացույցներ»՝ Գլխավորը գտնվում էր սուրբ Սոֆիայի տաճարի հարավային կողմում (հմմտ. De Cer., I, p. 63)՝

63 Երկու կողմերից, այսինքն ղեմոսների «երկու կողմերից»՝ Հմմտ. ծանոթ. 44՝

64 Բնագրում Ὡραῖα πύλη՝ Իսկական անունն է πόρτα τοῦ Νεωρίου՝ Ժամանակակից Բախչեքապրն, Ոսկեղջյուրի մուտքի մոտ եվրոպական ափին՝ Կոստանդնուպոլսի անկումից հետո այն կոչվում էր նաև Ջիֆութքապր (հրեաների դուռ)՝ Տե՛ս Janin, Const. byz., p. 274—275՝

65 Բնագրում τζιτζάκιον՝ Համարվում էր խաղարական հանդերձանք՝ Ենթադրում են, որ թուրքերեն չիչեք (ծաղիկ) բառն է՝ Ենդրո առարկա հանդերձանքը զարդարված էր ծաղիկների նկարներով՝ Տե՛ս Sophocles, Greek Lexicon, vol. II, p. 1080; G. Moravscik, Происхождение слова τζιτζάκιον, Seminarium Kondakovianum, t. 4, (Praha, 1931), p. 69—76; Idem, Byzantinoturcica, Bd. II, S. 313՝ Ջիչակը հանդիպում է և Վարդան Արևելցու մոտ (էջ 103) «ոսկիակուռ նկարս ծաղկոցի»՝

66 Բնագրում σολαία (գրության ճիշտ ձևը σολέα, լատ. solea)՝ Բյուզանդական եկեղեցիներում բեմի և իկոնոստասի միջև գտնվող տարածությունը, որը որպես կանոն փակված էր լինում ցանկապատով՝

67 Բնագրում lacuna՝

68 «Զինվորական կայան» ենք թարգմանում բնագրի ἀπλήκτα (ավելի ճիշտ գրության ձևն է ἀπλίκτα լատ. applicatus)՝ Կարելի է թարգմանել նաև բանակատեղի»՝

69 Բնագրում Μαλαγίνα՝ Գտնվում էր Օպտիմատոն բանակաթեմում, որի կենտրոնն էր Նիկոմիդիան՝

70 Բնագրում Δορύλαιον, ժամանակակից Էսկիշեհիր քաղաքը Թուրքիայում՝

71 Բնագրում Καβόρκιν՝ Գտնվում էր նախկին Փռյուգիա Սալուտարիայի, ապա Անատոլիկոն բանակաթեմի կազմում՝

72 Այժմ Դազմանա՝ Հենց Դազիմոնում էր կենտրոնացրել իր ուժերը Մելիտենեի ամիրա Օմար իրն Արդալլահ ալ-Ակտան, երբ պետք էր արշավեր Թեոփիլոս կայսեր վրա՝ Նրա հետ էր նաև իշխանաց իշխանը հայերից բաղկացած զորքով (տե՛ս Theoph. Cont., p. 126—127)՝

73 Թրակեսիոն բանակաթեմը հզփոթել Թրակիայի բանակաթեմի հետ՝ Թրակե-

սիոնը գտնվում էր Փոքր Ասիայի արևմտյան ծայրում, Էգեական ծովի ափին։

74 Կոլոնիա, Արմենիակների, Անատոլիկոն, Սելևկիա, Կապադովկիա, Խարսիանոն, Բուկելլարների, Սերաստիա և մյուս բանակաթեմերի մասին ավելի մանրամասն տե՛ս «Բանակաթեմերի մասին» աշխատության մեջ և նրանց վերաբերյալ ծանոթագրություններում։

75 Իմա՛ Տիվրիկի (այժմ Դիվրիգի)։

76 Միրանածինի բնագրի հրատարակության մեջ այստեղ շփոթություն կա։ Այնտեղ տպված է. ὅτε τὰ Ἀρμενιακὰ θέματα ὀφείλουσιν ἀποσωρεύεσθαι εἰς τὸν τοῦον Ῥυακα։ Ընդունում ենք Հ. Գելցերի ուղղումը. Ὅτε εἰς Τε φρικὴν, τὰ Ἀρμενιακὰ θέματα ὀφείλουσιν ἀποσωρεύεσθαι εἰς τὸν Βαθυ-Ῥυακα (Գելցեր, *Սկզբնավորություն*, էջ 64)։

Ռամզեյ գտնում է, որ չորրորդ ἀπὸ τοῦ Ἅλυος-ը գտնվում էր ոչ թե Կոլոնիայում, այլ Սանիանայում, որ Միրանածինի այս ամբողջ հատվածն է աղավաղված։ Նա առաջարկում է հետևյալ վերականգնումը. «Պետք է գիտենալ, որ Օպտիմատոնի զորավարը պարտավոր է կայսեր դիմավորել Մալագինայում, Օպսիկիոնի զորավարը, Ւրակեսիոնի զորավարը՝ Դորիլեոնում, սխոլերի դոմեստիկոսը, Անատոլիկոնի զորավարը և Սելևկիայի զորավարը՝ Կաբորկիոնում։ Եթե [կայսեր] արշավանքը դեպի Տարսոն է, մնացած բանակաթեմերի [զորքերը] պարտավոր են կենտրոնանալ Սանիանայում, իսկ եթե դեպի Արևելք՝ պետք է կայսեր դիմավորեն. Կապադովկիայի, Խարսիանոնի, Բուկելլարների և Պաֆլագոնիայի [զորավարները] Սանիանայում, իսկ Արմենիակների, Սեբաստիայի [զորավարները՝] Կեսարիայում, իսկ եթե [արշավանքը] դեպի Տեֆրիկե է Արմենիակների բանակաթեմի [զորքերը] պարտավոր են կենտրոնանալ Վաթիռիաքսում (տե՛ս Ramsey, HGAM, p. 202—203)։

Վաթիրիաքս վայրը գտնվում էր Տիվրիկին մոտիկ, այնտեղ էր, որ Վասիլ I-ի զորքերը 872 թ. գլխովին ջարդ տվեցին պավլիկյաններին և սպանեցին նրանց զորավար Խրիսոքիրին։ Մանրամասն տե՛ս Վասիլ I-ի կենսագրության մեջ, սույն աշխատության 71-րդ էջում։

77 Խոսքը Ռոմանոս II-ի մասին է, որին Կոստանդին Միրանածինը իբրև կայսերակից հռչակեց դեռևս 948 թ.։

78 Հնարավոր է, որ խոսքը Օպսիկիոն բանակաթեմի զորավարի մասին է, որը գործել է Միքայել III-ի օրոք (տե՛ս Theoph. Cont., p. 53)։

79 Խոսքը Միքայել III-ի մասին է։

80 Լևոն III-ը Իսավրական հարստության հիմնադիրն էր։ Նա և նրա որդի Կոստանդին V-ը սրբապատկերների պաշտամունքի և վանականների դեմ խիստ պայքար ծավալեցին և սկիզբ դրին մի շարժման, որ պատմության մեջ հայտնի է պատկերամարտություն անունով։

81 Կոստանդին I Մեծ (324—337), Կոստանդին II (337—361), Հուլիանոս Ուրացող (361—363), Թեոդոս Մեծ (379—395)։

82 Բնագրում λογοθέτης τῶν ἀγελῶν։ Ֆիլոթեոսի ցուցակում նա գտնվում էր στρατηγὸς -ների շարքում։ Նրա պարտականություններր անմիջականորեն կապված էին բանակի հետ։ Նա հսկում էր արևմտյան Փոքր Ասիայի արո-

տավայրերի վրա, որտեղ բանակին մատակարարելու ձիեր էին բուծվում։ Bury, IAS, p. *111*; *Համմտ. և* Vogt, Basile *Ie*, p. *358*։

83 Բնագրում μητάτων (լատ. metatus)։ Բյուզանդիայում մետատոն էր կոչվում օտարերկրացիներին և շրջող պետական պաշտոնյաներին, զինվորականներին օթևան տալու պարտականությունը։ Տվյալ դեպքում մետատոնը նշանակում է պետական ձիաբուծարան։ *Տե՛ս* J. B. Bury, IAS, p. *111*։

84 Հետաքրքրական է նշել, որ Միրանածինն այստեղ Արմենիական բանակաթեմեր է ասում և ոչ բանակաթեմ (τῶν δὲ Ἀρμενιακῶν θεμάτων), որոնք հակադրվում են Հռոմեական բանակաթեմերին (Ῥωμαϊκὰ θέματα)։ *Համմտ.* Glykatzi, Recherches, p. *47*։ «Արմենիական բանակաթեմերի» տակ նա, իհարկե, նկատի ունի ոչ միայն Արմենիակների բանակաթեմը, այլ հայերով բնակեցված, այն է Արմենիակների հիման վրա ստեղծված Սեբաստիայի, Կոլոնիայի, Խաղտիքի ապա և Միջագետքի և Լիկանդոսի բանակաթեմերը։

85 Բնագրում διβλάτιον։ Βλάτιον-ը (գրության ճիշտ ձևն է βλαττιον. լատ. blatta) ծիրանագույն մետաքսե հանդերձանք էր։ Διβλάτιον-ը ըստ երեվույթին նույն βλαττιον-ն է, զույգ գործված։ *Համմտ.* N. P. Kondakov, Les Costumes orientaux à la Cour Byzantine, Byzantion, t. *I*, *1924*, p. *13*։

86 «Արծիվ» (ἀετός)։ Մանրամասն նկարագրություններ գտնում ենք Թեոփանեսի Շարունակողի մոտ։ Դա կարմիր գույնի, առանց գոտիի զինվորական հանդերձանք էր։

87 Բնագրում βασιλικιον։ Հասկանալի է, ծագում է βασιλικος բառից, արքայական, թագավորական։ Սակայն հայտնի չէ, թե ինչ է նշանակում (*տե՛ս* Sophocles, Greek Lexicon, vol. *I*, p. *302*)։

88 Դեկալիոն բառի սկզբի դեկան (δεκα) նշանակում է տաս։ Բայց ամբողջ բառի նշանակությունը պարզ չէ (*տե՛ս* Sophocles, Greek Lexicon, vol. *I*, p. *349*)։

89 Այն է Ֆորում։ Ֆորումը հիշատակում է նաև Մովսես Խորենացին «Փորոն» ձևով։ Հայոց Պատմություն, Բ, 88, էջ 238։

90 Խոսքը, հասկանալի է, ոչ թե Թեսալիայի Օլիմպոս լեռան մասին է, այլ Պրուսայից հարավ գտնվողի։

91 Բյուզանդիոնում, Պրոպոնտիսում կար երկու Փարոս, մեկը կայսերական պալատին կից, մյուսը՝ Բոսպորում։ Հելիակոն (ἡλιακόν) նշանակում է բակ կամ փոքր հրապարակ, առանց ծածկի, որոնցից Կոստանդնուպոլսում կար երկու հատ՝ Փարոսի Հելիակոն և Խրիստոտրիկլինի Հելիակոն (տե՛ս Беляев, Byzantina, кн. I, стр. 17, 20—21, 27)։

92 Դիետարիոս (ծագում է διαιτα բառից, լատ. atriensis) նշանակում է կայսերական պալատի սպասավոր։

93 Ժամանակակից Մարաշը Կիլիկիայում։

94 Վասիլ I Մակեդոնացին։ Ինչպես հայտնի է, Վասիլ I-ը Տեֆրիկեում 871 թ. պարտություն կրեց և հազիվ փրկվեց գերի ընկնելուց։ Հաղթանակը տարան 872 թ. նրա զորավարները։ Այդ արշավանքին Վասիլ I-ը անձնապես չէր մասնակցում։

Միրանածինն, ըստ երևույթին, նկատի ունի երկու տարբեր արշա-

վանքներ՝ Տեֆրիկեի և Գերմանիկայի։ Վերջինս տեղի ունեցավ 882 թ.։ Քանի որ 882 թ. շքերթը կատարվել էր նախկին՝ Տեֆրիկեի առման կապակցությամբ կազմակերպված շքերթի ծրագրով, Միրանածինը այդ երկուսը մի գլխի տակ է հիշատակում (տե՛ս Васильев, Византия и арабы, II, стр. 34, прим. 3)։

95 Ամբողջ սենեկապետությունը։

96 Բնագրում Βαΐνης։ Հասկանալի է, խնդրո առարկա պրեպոզիտոսը հայ էր, Վահան։ Նա ուներ նաև սակելլարիոս՝ կայսեր գանձապահի պաշտոնը։

ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԻՐՔ ՍՐԿՐՈՐԴ

1 Բյուզանդական կայսրերի դամբարանների վերաբերյալ կա հատուկ ուսումնասիրություն։ Տե՛ս Ph. Grierson, The tombs and obits of the byzantine emperors (337—1042), Dumbarton Oaks Papers, No 16, 1962, p. 1—60։ Հերոոնը (Ἡρῶον) հնում կառույց էր, ձոնված հերոսի, որ հաճախ կանգնեցվում էր հերոսի գերեզմանի վրա։ Միջնադարում ուներ դամբարանի իմաստ։ Սուրբ Առաքելոց եկեղեցին կառուցված էր Կոստանդին Մեծի գերեզմանի վրա, այդ պատճառով էլ կոչվում էր Կոստանդնի Հերոոն։ Հետագայում սուրբ առաքելոց եկեղեցում սկսեցին թաղել բյուզանդական կայսրերին։ Նույն եկեղեցում էր գտնվում նաև Հուստինիանոս կայսեր Հերոոնը։

2 Միքայել III կայսեր սպանությունից հետո, դավադիրները նրա մարմինը դնելով նավի մեջ, անց կացրին դիմացի ափը և թաղեցին քաղաքից դուրս գտնվող սբ. Թովմայի տաճարում։ Վասիլ I-ի մահից հետո վերջինիս որդի Լևոն VI-ը նրա աճյունը տեղափոխեց և ամփոփեց ս. Առաքելոց եկեղեցում։

3 Խոսքը Վասիլ I Մակեդոնացու, նրա երկրորդ կնոջ՝ Եվդոկիա Ինգերինայի և նրանց վաղամեռիկ որդի Ալեքսանդրի մասին է։

4 Բնագրում Σαγαρινός։

5 Բնագրում Πνευμονούσιος։

6 Լևոն VI-ը և Կոստանդին Միրանածինը։ Վերջինիս շիրիմի հիշատակությունը վկայում է, որ «Արարողությունների մասին» աշխատությունը Միրանածինի մահից հետո լրացվել է։

7 Բնագրում βασιλίκιον։ Ծագում է βασιλικός— արքայական, թագավորական բառից։

8 Վասիլ I-ի։

9 Լևոն VI-ի։

10 Բնագրում Βιθυνός։

11 Լևոն VI-ի երկրորդ կին Զոեն, հայազգի Ստիլիանոս Զաուցայի գուստրն էր։ Նրանց ամուսնությունից հետո էր, որ Լևոնը Ստիլիանոսին վասիլեոպատոր (կայսերահայր) հռչակեց։

12 Վասիլ I-ի վարդաս անունով որդի ունենալու մասին ըս միակ հիշատակու-

Թյունն է։ Բոլոր ադբյուրները ցույց են տալիս, որ Վասիլի որդիները կոչվել են Կոստանդին, Լևոն, Ալեքսանդր և Ստեփանոս։ Ն. Ադոնցը այս առթիվ գրում է. «Թե միայն Վարդր Վասիլի որդիներից մեկի՝ Կոստանդնի հայկական անունը չէ, պետք է կարծել, որ խոսքը Վասիլի եղբոր Վարդի մասին է» (տե՛ս Վասիլ Հայազն, էջ 478)։ Ն. Ադոնցի ենթադրությունն անկասկած սխալ է։ Նախ «Արարողությունների մասինն» գրքում հստակ գրված է. καὶ Βάρδας ὁ υἱὸς Βασιλείου τοῦ πάππου αὐτοῦ (i. e. τοῦ Κωνσταντίνου τοῦ Πορφυρογεννήτου)։ Եվ երկրորդ, Վարդր չի կարող Կոստանդինը լինել այն պարզ պատճառաբանությամբ, որ վերոհիշյալ հիշատակությունից մի քանի տող առաջ Վասիլի որդի Կոստանդինն առանձին հիշված է, Κωνσταντῖνος ὁ υἱὸς Βασιλείου, ընդ որում ցույց է տրրված, որ Կոստանդնի դամբանաքարը սպիտակ մարմարից էր, իսկ Վարդասինը՝ սադարոսյան։

13 *Լևոն III Իսավրացի (717—741) պատկերամարտ կայսեր։*

14 *Կոստանդին V (741—775) պատկերամարտ կայսրր։ Պատկերապաշտ հեղինակները ամեն կերպ աշխատում են անվանարկել նրան, թեև Կոստանդին V-ը բյուգանդական նշանավոր կայսրերից մեկն է եղել։ Նույն հեղինակները նրան տվել են և Կավալլինոս ածականը (հունարեն կավալլինա բառից, որ նշանակում է թրիք, իբրև թե մկրտության ավազանում կեղտոտելու համար)։ Նրա մասին մի հետաքրքրական ավանդություն է պահպանել Սամվել Անեցին. «ՉԽԶ (746 թ.) Կ. Պոլսի՝ Կոստանդին՝ ամս լէ. Կոստանդին որդի Լևոնի կոչեցաւ Կաւալինոս՝ այսինքն թրքաժողով, զի զօրքս տաճկաց բանակեալք էին առ ափն Ալիս գետոյ, իսկ նա հրամայեաց թրիք ժողովել և արգանել ի գետն՝ և նոցա տեսեալ՝ ահաբեկ եղեն, կարծեցեալ անթիւ լինել զօրացն՝ և փախեան ի նմանէ։ Պատմի՝ ի միում աւուր զկնի միմեանց ե. առիւծ սպանել սորան»։ Սամուէլի Քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 87—88։*

15 *Միքայել II-ը, Թեոփիլոսի հայրր, Լևոն V Հայկազնին սպանողր և նրանից գահը խլողը, Ամորիական հարստության հիմնադիրր (820—829)։*

16 *Ստոա (Στοά), պորտիկ, սյունաշարք։*

17 *Գաստրիայի վանքի կառուցումր ավանդությունը վերագրում է սուրբ Հելենեին, բայց իրականում որպես վանք կառուցվել է սուրբ Հելենեից հետո (տե՛ս Janin, Const. byz., p. 328—329)։*

18 *Բնագրում στατάρια.*

19 *Հայազգի Թեոդորա Ավգուստան, Միքայել III-ի մայրր, կեսար Վարդասի և սպարապետ Պետրոնասի քույրը։*

20 *Պետրոնասր (տե՛ս և նախորդ ծանոթագրությունր) բյուգանդական նշանավոր զորավար էր։ Իր զինվորական գործունեությունն սկսեց դեռ Թեոփիլոս կայսեր ժամանակ որպես սպաթարոկանդիդատ։ Նրա օրոք դարձավ պրոտոսպաթար (Theoph. Cont., p. 123)։ Միքայել III-ի ժամանակ նա սխոլերի դոմեստիկոս էր (սպարապետ)։ Աչքի րնկավ 863 թ. ճակատամարտում, փայլուն հաղթանակ տանելով Մելիտենեի արաբ ամիրա Օմար իբն Աբդալլահ ալ-Ակտային դեմ (Theoph. Cont., p. 179—184)։ Այդ ճակատամարտից մի փոքր անց հիվանդացավ ու մահացավ։*

Ծանոթագրություններ

21 Բնագրում Προικονήσιος։

22 Բնագրում Πιχριμαῖος։

23 Ինչպես հայտնի է, կեսարդ Վարդասին սրախողխող արեցին, իսկ մարմինը՝ կտոր-կտոր։

24 Սա Վասիլ I-ի մոր անվան միակ հիշատակությունն է։ Բյուգանդական մյուս աղբյուրներր չեն հիշատակում նրա անունը։

25 Ջոե կարբոնոպսիան, Լևոն VI-ի վերջին՝ չորրորդ կինը, որից ծնվեց Կոստանդին Միրանածինը։

26 Կոստանդնուպոլսում կար երկու թաղամաս, որ կոչվում էին Պրոմուտու։ Մեկը գտնվում էր քաղաքի սահմաններում, իսկ մյուսը՝ եվրոպական ափին, ժամանակակից Արնավուտքյոյում։ Խոսքր քաղաքից դուրս գտնվող՝ Արնավուտքյոյի Պրոմուտուի մասին է (տե՛ս Janin, Const. byz., p. 435)։

27 Լևոն VI-ի։

28 Բնագրում Ἡμέριος (նաև Ἰμέριος)։ Արաբների դեմ մղած նրա պայքարի մասին տե՛ս Theoph. Cont., p. 372, 376—377։ Վերջին անհաջողության կապակցությամբ Լևոն VI-ի եղբայր, Ալեքսանդր կայսրր նրան վանք աքսորեց, ուր և նա վեց ամիս անց վախճանվեց (տե՛ս Theoph. Cont,, p. 379—380)։

29 Սխոլարիոսների մասին տե՛ս «Արարողությունների մասին» աշխատության I գրքի 49-րդ ծանոթագրություն։ Սխոլարիոսներին հիշատակում է և Մխիթար Գոշր. «Եօթերորդ դաս պաղատին Սխոլարքն. և զգեստ է նոցա գրատք կտաւիք և թէզն է բերանն դիպակաւ. ունին նիզակս, որ է րռումբ, և սեաւ ասպարս. և ի սոցանէ լինին որք ղդրոշն, այսինքն՝ զնշանակն և զվիշապագլուխան կրեն և կոչին Սիգնայք»։ (Դատաստանագիրք, էջ 266)։

30 Բնագրում Πλατάνιον։ Միրանածինի մոտ գրության ձևր հաստատուն չէ։ Հանդիպում է նաև Πλατίνον ձևը։ Ինչպես պարզվում է շարադրանքի շարունակությունից, Պլատանիոն վայրը գտնվում էր Անատոլիկոն բանակաթեմում։

31 Բնագրում Πρίνη (ճիշտը՝ Πριτήνη)։ Հնագույն քաղաք Հոնիայում, Եփեսոսի և Միլետոսի մեջտեղում, Միկալե լեռան ստորոտում (տե՛ս Ahrweiler, L' Histoire, p. 30, n. 6)։

32 Թեև գումարը կազմում է 4037 հոգի, բայց Միրանածինի մոտ ցույց է տրված 6037։ Սխալը ուղղվում է, եթե նկատի ունենանք շարունակությունը։ Միրանածինր ցույց է տալիս նույն այդ հեծելազորի ստացած ռոճիկի գումարը, որտեղ Թրակեսիոն բանակաթեմի հեծյալների թիվը ցույց է տրված ոչ թե հազար հոգի, ինչպես այստեղ, այլ՝ երեք հազար։ Հետևաբար 6037 դումարր ճիշտ է։

33 Մեկ կենտինարր հավասար է 100 լիտրի, մեկ լիտրր՝ 72 ոսկեդրամի դահեկանի (նոմիզմա)։ Հետևաբար Թրակացի և մակեդոնացի 1037 սխոլարիոսները ստանում էին 9456 դահեկան։

34 Այն է 180 լիտր և 24 դահեկան, այսինքն 12.984 դահեկան։ Ձիավորները ռոճիկ էին ստանում չորս տարին մեկ անգամ։

35 Այսինքն 8160 դահեկան։

36 Վերևում Պրինեի հայերի թիվր Միրանածինր ցույց է տվել 500 հոգի։

37 127 լիտր և 56 դահեկան, այսինքն՝ 9144 դահեկան։

38 Բյուզանդիայում բացի ցամաքային բանակաթեմերից կային նաև ծովային բանակաթեմեր, որոնք կառավարվում էին դրունգարների կողմից։ Այդպիսի բանակաթեմեր էին Կիբիրեոտների բանակաթեմը (սրա դրունգարին Լևոն III-ը բարձրացրեց ստրատեգոսի (զորավարի) աստիճանին), Դոդեկանեզի կամ էգեական ծովի բանակաթեմը և Սամոսի բանակաթեմը, որը հավանաբար ստեղծվել է Միքայել III-ի, Վասիլ I-ի կամ Լևոն VI-ի ժամանակ։ Բոլոր ծովային ուժերը ենթարկվում էին գերագույն ծովակալին, որը կոչվում էր στρατηγὸς τῶν Καραβισιάνων։ (Վերջերս մի բյուզանդագետ հանդես եկավ մի ուսումնասիրությամբ, որտեղ ցույց է տալիս, որ Կարավիսիանների բանակաթեմ գոյություն չի ունեցել, որ ենթադրյալ բանակաթեմի տերիտորիան մաս էր կազմում Քրակեսիոն և Անատոլիկոն բանակաթեմերի։ Տե՛ս **H. Antoniadis-Bibicou,** Études d'histoire maritime de Byzance. A propos du „thème des Caravisiens", Paris, 1966)։

39 Մարդայիտների մասին տե՛ս վերր, Վասիլի կենսագրության 196-րդ ծանոթագրությունը։

40 Բնագրում οὐσία, որի մասին տե՛ս «Կայսրության կառավարման մասին» աշխատության 51 գլխի առաջին ծանոթագրությունը։

41 Խելանդիոնի մասին տե՛ս «Կայսրության կառավարման մասին» աշխատության, 51-րդ գլխի առաջին ծանոթագրությունը։

42 Բնագրում γαλαῖα (ճիշտ ձևը՝ γαλέα), ռազմական փոքր առագաստանավ, կամ թիակներով շարժվող նավ։ Նա մտնում էր դրոմոններից բաղկացած նավատորմիղի մեջ և օգտագործվում էր հետախուզական նպատակներով։

43 Բնագրում Ἀτόμια,

44 Τρίπολις, քաղաք Լիբանանում, Կիպրոսի արևելյան ափի դիմաց։ Այժմ կոչվում է Տրիպոլի։

45 Ռոմանոս I Լեկապենոսի ժամանակ։

46 Բնագրում χαράβια, թեթև նավի տեսակ։

47 Վասիլ I-ի և Լևոն VI-ի ժամանակ Բյուզանդիայում ծառայող օտարերկրացի զինվորները մտնում էին այսպես կոչված հետերիայի (ἑταιρεια) մեջ, որի գլխին էր կանգնած հետերիարխը (ἑταιριάρχης), որը կոչվում էր նաև Մեծ հետերիարխ և գլխավորում էր βασιλικὴ ἑταιρεία-ն, այսինքն գլխավորապես օտարերկրացիներից բաղկացած պալատական գվարդիան։ Նա անմիջականորեն կայսեր էր ենթարկվում։ Առաջին անգամ հիշատակվում է 867 թվականի դեպքերի կապակցությամբ Գևորգ Վանականի Շարունակողի կողմից (Georg. Mon. Cont., p. 817) ոմն Անդրեաս հետերիարխ և ոմն Արտավազդ (նույն տեղում, էջ 838), ամենայն հավանականությամբ հայ (սրան Բյուրին սխալմամբ պարսիկ է անվանում)։ Ինչպես երևում է Միրանածինի համապատասխան վկայությունից, այդ հետերիարխները լինում էին Մեծ, Միջին, Հավանաբար և Փոքր Հետերիայի պարագլուխներ (տե՛ս **Bury, IAS,** p. 106—108)։

48 Վարգանացիներ (բնագրում Φαργάνοι)։ Կա ենթադրություն, որ այստեղ խոսքը ոչ թե վերգանացիների մասին է, այլ վարյագների (варяги)։ Այդ մասին մանրամասն տե՛ս Псамафийская хроника, стр. 86: Վարյագների մասին ընդհանրապես տե՛ս Μ. Δένδιας, Οἱ Βάραγγοι καὶ τὸ Βυζ-

τιον, Δελτίον τῆς Ἱστορικῆς καὶ Ἐθνολογικῆς Ἑταιρείας τῆς Ἑλλάδος. IX, 1926, σελ. 217—218։

49 *Տե՛ս «Արարողությունների մասին» աշխատության I գրքի 49-րդ ծանոթագրությունը։*

50 *Բնագրում* Μουσουλινοι *(մուսուլմա՛ն)։ Մուսուլմաններին Միրանածիներ հիշատակում է* Μουσουλμᾶται *ձևով (տե՛ս* De Cer., *I*, p. *689)։*

51 *Այսինքն հունգարացիներ։*

52 *Բնագրում* μαγγανάριος։ *ժամանակակից տերմինով՝ ինժեներ։ Գլխավորապես զբաղված էին պատերազմական մեքենաներով, բաբաններով։ Տերմինը հանդիպում է և հայկական աղբյուրներում. «ելից քարաւ մանգանային, մինչև կարի վիրեալ նոցին»։ ՆՒՀԼ, հատ. Բ, էջ 203։*

53 *Իտալիայի ռեքսի (*rex*) տակ ենթադրվում է Հուգոն Պրովանսացին, Թեոբալդի (Թիբոյի) որդին։ Իտալիայի թագն ստացավ 926 թ.։ Վախճանվեց 947 թ.։*

54 *Լանդուլֆոսն ու Ատենուլֆոսը Կապուայի և Բենեվենտոսի տերերն էին։*

55 *Բնագրում* Γοϊμαριν καὶ Γοϊφέριν, *այն է* Waimarius *և* Waiferius։ *Սրանք Սալերնոյի տերերն էին։*

56 *Լանգոբարդիայի մասին խոսքն ավարտելուց հետո, Միրանածիներ խոսում է Կրետեի արշավանքին մասնակցողների և նրանց ստացած ռոճիկների մասին։*

57 *Բնագրում* κόμητες τῆς κόρτης։ (Κόρτη, *լատիներեն* Cohors-*ն է,* κοορτα, *թեև այլ ուսումնասիրողներ գտնում են, որ* κόρτη *բառն է, որ նշանակում է «վրան»։ Հետևաբար վրանապահ, մասնավորապես կայսեր, ապա և զորավարի։ Տե՛ս* **Bury**, IAS, p. *43)։ Բանակաթեմի զորավարին էին ենթարկվում հետևյալ աստիճանները. 1. Տուրմարխներ, 2. Մերարխներ, 3. κόρτη-ի կոմեսը, 4. Խարտուլարը, 5. Դոմեստիկոսը, 6. Բանդոնների դրունգարները, 7. Բանդոնների կոմեսները, 8. Սպաթարների կենտարխոսները, 9. Հետերիայի կոմեսը, 10. Պրոտոկանդելլարիոսը, 11. Պրոտոմանդատորը։ Ծովային բանակաթեմերի զորավարներին նաև 12. Պրոտոկարավներ և 13. Կենտարխոսները։*

Կորտեի կոմեսի պարտականությունների մասին գլխավոր աղբյուրը Միրանածինն է. նրա տվյալներով այդ աստիճանը կրող զինվորականների պարտականությունն էր կայսեր վրանը սլատրաստի վիճակում ունենալը։ Նրանք հետևում էին նաև, որպեսզի պահակատեղիները և զորակայանները կազմ ու պատրաստ լինեն (տե՛ս **De Cer.** *I*, p. *489—490)։ Խնդրո առարկա կոմեսներն ունենում էին սպաթարի և կանդիդատի աստիճան (տե՛ս* **Bury**, IAS, p. *43)։*

58 *Բնագրում* χαρτουλάριοι τῶν θεμάτων։ *Բանակաթեմի խարտուլարը (քարտուղարը) զորավարի գրասենյակի պետն էր։ Ավելի մանրամասն տե՛ս* **Vogt**, Basile Ie, p. 343, **Bury**, IAS, p. 44։ *Նաև* **Ahrweiler**, Recherches, p. 43։

59 *Բնագրում* δομέστικοι τῶν θεμάτων։ *Բանակաթեմի դոմեստիկոսը բանակաթեմի զորավարի շտաբի անդամն էր (տե՛ս* **Bury**, IAS, p. *43)։ Հիերարխիկ աստիճանում գտնվում էր 14-րդ տեղում։ Նա զբաղվում էր նաև բա-*

նակի նյութական ապահովության հարցով, ինչպես և բանակաթեմի ֆինանսների (տե՛ս Vogt, Basile *I*-e, p. *344*)։

60 Բնագրում Νέα τοῦ Χαρπεζίκιου։ Արշամաշատը և Ջմշկածագի արևելյան կողմում բնակած շրջանները 934 թվականից հետո կազմեցին երկու բանակաթեմ՝ Ասմոսատոնը և Խարպեզիկիոնը։ Վերջինս 949 թվականից մի փոքր անց վերակազմվեց և նրա հիման վրա կազմվեց Խոզանի բանակաթեմը։ Խարպեզիկիոնի մասին տե՛ս **Honigmann,** Die Ostgrenze. S. 75—77, Խոզանի մասին **Honigmann,** Die Ostgrenze, S. 77—78; **Canard,** Histoire, p. 762, n. 99:

61 Բնագրում ὁ τουρμάρχης τῶν Θεοδοσιακῶν։ Վաղ շրջանում հռոմեական զորքերի առանձին զորամասեր կրում էին կայսեր անունը։ Վաղ շրջանի հիշատակության վերապրուկ է (տե՛ս De Cer. *II*, p. *787*)։

62 Բնագրում οἱ τουρμάρχαι τῶν Βικτόρων։ Սա ևս հռոմեական շրջանի վերապրուկ է և նույնացվում է հռոմեական շրջանի Legi Victrix-ի (հաղթող լեգեոնի) հետ։ De Cer. *II*, p. *787*։

63 Բնագրում πρωτομανδάτωρ։ Առաջին մանդատորը։ Մանդատոր բառը լատիներեն է (mandator), և նշանակում է սուրհանդակ։ Բոլոր զորահրամանատարները ունենում էին մանդատորներ։ Պրոտոմանդատորը համապատասխանում է սխոլերի պրոեքսիմոսին (տե՛ս Bury, IAS, p. *45, 57*)։ Պավլիկյան նշանավոր զորահրամանատար Կարբեասը պրոտոմանդատորի աստիճան ուներ (տե՛ս Theoph. Cont.. p. *166*)։ Լևոն Ջ-ին վերագրվող «Տակտիկա»-ում ասված է, որ «մանդատոր» են կոչվում հրամանատարների կարգադրությունները շտապ կարգով զինվորներին հասցնողները։ Տե՛ս Leonis imperatoris Tactica sive de Re militari liber, col. 704։

64 Բնագրում πρωτοκαγκελλάριος։ Առաջին կանգելլարիոսը։ Կանգելլարիոս (լատ. cancellarius, կանցլեր) համապատասխանում է հունարեն λογοθέτης-ին։ Տե՛ս «լոգոթետի» տակ։ Կանցլեր տերմինը լայն տարածում ուներ կիլիկյան Հայաստանում։ Աղբյուրներում հանդես է գալիս «Ջանցլեր» ձևով. տե՛ս Г. Микаелян, История киликийского армянского государства, Ереван, 1952, стр. 242:

65 Բնագրում πρωτοβανδοφόρος։ Առաջին վանդոֆորոսը։ Պրոկոպիոս Կեսարացին վերջինիս պարտականությունների մասին խոսելիս, ասում է. «Նա, ով սովորաբար զորաշարքում (կամ մարտում) կրում է զորավարի դրոշը»։ (Պատերազմների մասին, Գիրք Դ, *10*)։ Վանդոֆորները ծառայում էին չորս տագմաններից երկուսում՝ Արիթմոսների և Հիկանատների (տե՛ս Bury, IAS, p. *56*)։

66 Բնագրում πρωτοδομέστικος։ Առաջին դոմեստիկոսը։ Տե՛ս «դոմեստիկոս» տակ։

67 Բնագրում πρωτοκένταρχος։ Առաջին կենտարխոսը. հարյուրապետը (լատ. centurio հուն. ἑκατόνταρχος)։

68 Բնագրում πρωελευσιμαῖοι (լատ. viator)։ Որպես հոմանիշ հանդես է գալիս նաև βασιλικοί բառը։ Սրանք սենատորական դասին չէին պատկանում և իրենց կազմում ունեին հետևյալ աստիճանները. մանդատոր, կանդիդատ, ստրատոր, սպաթար, սպաթարոկանդիդատ, պրոտոսպաթար,

պատրիկ, անթիպատ պատրիկ, մագիստրոս, ղոստն պատրիկիա, կուրապաղատ, նորբելիսիմոս, կեսար (տե՛ս Bury, IAS, p. 22—23)։

69 Այս արշավանքը Կրետեի դեմ տեղի ունեցավ 949 թ.։

70 Բնագրում Τουλμάτζοι։ Ենթադրվում են դալմատացիք։

71 Բնագրում τοποτηρητής, (տեղակալ, տեղապահ)։ Վարչական պաշտոնեության երկրորդ դասի՝ դոմեստիկոսների բյուրոյում առաջին տեղում էր գտնվում տոպոտերետեսը, որն համապատասխանում է լատ. vicarius-ին և հնթարկվում էր դոմեստիկոսին։ Կային նաև բանակաթեմերի տոպոտերետեսներ, ովքեր, հասկանալի է, ենթարկվում էին բանակաթեմերի զորավարներին։ Նրանց պարտականությունն էր գավառների և ամրոցների պահպանությունը։ Տոպոտերետեսը առաջին անգամ հիշատակված է Հուստինիանոս I-ի մի օրենքում։ Միրանածինի մոտ հիշատակված տոպոտերետեսների պարտականությունների մասին հստակ գաղափար կազմելն անհնարին է (տե՛ս Bury IAS, p. 51—52)։

72 Բնագրում ἀπὸ τῶν περατικῶν ταγμάτων։ Խոսքը Περατικὰ θέματα - «Բանակաթեմք յայնկոյս Բոսպորի» զորքերի մասին է, որոնց տակ ենթադրվում են նախալևոնյան հին՝ Օպսիկիոն, Անատոլիկոն և Արմենիակների բանակաթեմերը, որոնց վրա գումարվեցին Լևոն Իսավրացու ժամանակ կազմակերպված Թրակեսիոն և Բուկելլարների զորաբաժինները (տե՛ս Գելցեր. Ակղբնավորություն. էջ 34)։

73 Բնագրում ἐξκουβίτωρ (նաև ἐξκούβιτος), տե՛ս ծանոթ. 49-րդ «Արարողությունների մասին» աշխատության I գրքի էքսկուբիտորներին հիշատակում է և Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքում, էջ 263—264, որտեղ կարդում ենք. «Եպիսկոպոսին, որք լինին մեծահասակք և ունին վահան» կմրքաւորս և ասպարս փոքրս. և զգեստ է նոցա կտաւ նստի (աղճատված բառ է—Հ. Բ.) ըղորկ և վարշամակս, որ է փակեղն, և գաւղղեր յոտսն և գօտի ոսկի կրկին և ի սոցանէ լինին որք սկրբունք և սանտատորք»։

74 Հիկանատների զորամասը (հմմտ. և «Արարողությունների մասին» աշխատության I գրքի 49-րդ ծանոթագրությունը) մինչև IX դարը չի հիշատակվում աղբյուրներում։ Նրանց զորամասը կոչվել է Ἰκανᾶτοι, թեև այդ բառի տակ կարող է ենթադրվել նաև Հիկանատների դոմեստիկոսը, ինչպես տվյալ դեպքում է Միրանսածինի մոտ։ Հիկանատների հրամանատարը ունենում էր սպաթարի աստիճան (տե՛ս Bury, IAS, p. 63—64)։

75 Ինչպես մեկ անգամ առիթ ունեցանք նշելու, Կրինիտների ընտանիքը հայկական ծագում ուներ։ Ավելի մանրամասն տե՛ս վերը, «Կայսրության կառավարման մասին» աշխատության 43-րդ գլխի 44-րդ ծանոթագրությունը։ Հմմտ. գլուխ 50, ծանոթ. 7։

76 Բնագրում πρωτοσύγκελλος, «առաջին խորհրդական»։ Իմաստից ելնելով թարգմանում ենք «խալիֆա»։

77 «Առաջնորդ» ենք թարգմանում բնագրի διατάκτωρ բառը։

78 Բնագրում μεγάλη Ἀρμενία։

79 Բյուզանդացիները «Իշխանաց իշխան» (ἄρχων τῶν ἀρχόντων) էին անվանում Հայոց թագավորին, որպես կանոն՝ Բագրատունյաց։ Միրանածինը իշխանաց իշխան է անվանում նաև Վասպուրականի Գագիկ Արծրունուն։ Կեդրինոսը Հայոց թագավորին անվանում է նաև ἐξουσιάρχης, մոտավո-

բապես այնպես, ինչպես Ափխազաց թագավորին (տե՛ս Cedr. II, p. 498։ Համմտ. ստորև, ծանոթ. 81, 95։

80 Բնագրում Ἀσπουρακᾶν, τῆγουν τοῦ Βασπαρακάν։

81 Այսինքն Վասպուրականի թագավորի կոչում է ստացել, խոսքը Գագիկ Արծրունու մասին է, որ 908 թվականին թագավոր հռչակվեց։ Միրանածինը գրում է, որ Վասպուրականի «իշխանը» այժմ «իշխանաց իշխանի» պատվին է արժանացել։ Այդ «այժմ»-ր չէր կարող ասված լինել 908 թ. շատ անց։ Սրանից, գուցե Հարցականի տակ, ենթադրենք, որ Միրանածինն այս «ձևերը» կազմելիս ձեռքի տակ է ունեցել գրավոր աղբյուր, որտեղ Վասպուրականի կապակցությամբ տրված էր նման բացատրություն։

82 Բնագրում Κοκοβίτ։

83 Բնագրում Ταρώ։

84 Բնագրում Μῶεξ։

85 Բնագրում Αὔζαν. ուղղելի՝ Ἀνζαυ. խոսքը Անձևացիքի մասին է։

86 Բնագրում Συνῆς։ Սյունիքի իշխանությունը շուրջ 970 թ. վերածվեց թագավորության։ Տե՛ս Հ. Մ. Ութմազյան, Սյունիքը IX—X դդ., Երևան, 1958, էջ 132; Թ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966, էջ 58։

87 Բնագրում Βαϊτζώρ։

88 Բնագրում Χατζιένης։

89 Բնագրում τῶν Σερβοτιῶν (ճիշտը՝ Σεβορτιῶν՝ ուղղումը Մարկվարտի) τῶν λεγομένων Μαῦρα παιδία։ Միրանածինը տալիս է բառի ճշգրիտ թարգմանությունը։ Ինչպես ցույց է տալիս Հովհաննես Դրասխանակերտցին, Բուղան 852—855 թթ. Հայաստանում գործած ասպատակությունների ժամանակ, գրավում է և Դարդմանը, գերի վերցնում նրա իշխանին «և անտի ևս չուեալ յՈւտի գաւառ՝ ձերբակալ ի Տուս գիւղ առնէ զՍտեփաննոս որում և կոն անուանէին զնա, որ ի նահանջ իւրմէ Սևկոյ՝ Սևորգին ազգին անուանէին» (Դրասխանակերտցի, էջ 127, համմտ. Ասողիկ, էջ 107։ Վերջինս Հազրատն ու Սանահինը ևս դնում է Սևորդյաց իշխանության կազմում, էջ 181)։ Հասկանալի է, Սևորդյաց իշխանության տակ ենթադրվում է Ուտիքի իշխանությունը։ Սևորդիներին հիշատակում է նաև Գրիգոր Մագիստրոսը (տե՛ս թղթեր, էջ 133)։

Սևորդիներին հիշատակում է արաբ պատմիչ Յակուտ ալ-Համավին Սիյավարդ ձևով (Հ. Թ. Նալբանդյան, Արաբական աղբյուրներ, էջ 208), իսկ Մասուդին նրանց երկիրը՝ Սիյավուրդիյա ձևով (համմտ. Минорский. История, стр. 214), որոնց նա համարում է «հայոց մի ճյուղը»։ Նրանք քաջ են և հզոր։ Աչքի են րնկնում տապարների արտադրությամբ, որոնք «սիյավուրդի» են կոչվում։ Կոստանդին Միրանածինն իր «Կայսրության կառավարման մասին» աշխատության 38-րդ գլխում գրում է, որ թուրքերի (իմա՛ հունգարացիների) հին անունը Սաբարտի ասֆալի (Σαβάρτοι ἀσφαλοι) էր, «Սպիտակ սաբարտներ» (VIII—IX դդ.)։ Պեչենեգների ճնշման տակ այս հունգարացիների մի մասը, ըստ Միրանածինի «բնակվեց Պարսից մի վայրում»։ Ուսումնասիրողները գտնում են, որ նրանք քրիստոնեություն րնդունեցին, հայացան և նրանց հետնորդներն են «Սևորդիքը»։ Թեև Սևորդիների մասին կա բավական ստվար գրականություն, այնուամենայնիվ այդ ենթադրությամբ մնում է սոսկ ենթադրություն

և հարցը դեռևս լուծված չէ։ Մանրամասն գրականությունը տե՛ս Gy. Moravcsik, Byzantinoturcica, Bd. II, S. 261—262; *Նաև* J. Marquart, Streifzuge, S. 36, 38; H. Grégoire, L'Habitat "primitif" des Magyars et les Σαβαρτοιάσφαλοι, Byzantion, t. XIII (1938), fasc, 1, p. 266—278. Minorsky, Studies, p. 26, 74; Idem, История, стр. 214. прим. 115. М. И. Артамонов, История Хазар, Ленинград, 1962, стр. 127, прим. 59, 349։

90 *Բնագրում* Βεριασάγ։ *Խոսքը «Վերին աշխարհ վրաց»-ի մասին է, որի մայրաքաղաքն էր Մցխեթան։ Մանրամասն տե՛ս* Ներսիսյան, Հայաստանը, *էջ 83։ Նաև* C. Toumanoff, Studies, p. *949։ Միրանածիներ «վերին» ասելով նկատի ունի տվյալ շրջանի հարավային մասը, իսկ ստորին ասելով՝ հյուսիսայինն։ Օրինակի համար Կապադովկիայի բանակաթեմի մասին ասում է. «Ստորին՝ ծովահայաց շրջանը հայերին մերձակից լինելու պատճառով կոչվեց Արմենիակների, իսկ վերին շրջանը՝ լիկաոնացիներին և Տավրոսին սահմանակից եղողը կոչվեց Փոքր Կապադովկիա»։ Տե՛ս վերը, էջ 168։*

91 *Բնագրում* εἰς τὸν ἄρχοντα τοῦ Καρνατάγς։ *Խոսքը Տայքի մասին է (վրաց. Տաո), որ վրացիները կոչում են նաև Տաոս-Կաո[ն]ի։ Հունարենում տեղի է ունեցել մետաթեսիս և դարձել Կաոնի-Տայս (հունարենը տալիս է Տայքի հայերեն արտասանությունը)։ Համմտ.* C. Toumanoff, Studies, p. *493—494։*

92 *Բնագրում* εἰς τὸν ἄρχοντα τοῦ Κουελ։ *Համապատասխանում է Ջավախքին, որի կենտրոնն էր վրացական Քվելի, կամ Քվելիս-ցիխե ամրոցը։ Վրացերեն Քվելի նշանակում է «պանիր», իսկ Քվելիս-ցիխե՝ «պանրի բերդ»։ Միրանածիներ իր «Կայսրության կառավարման մասին» աշխատության 46-րդ գլխում հիշատակում է այս Քվելիս-ցիխե՝ «Պանրաբերդը», անունը հունացնելով* Τυρόκαστρον։ *Համմտ. վերոհիշյալ աշխատության 46-րդ գլխի 7-րդ ծանոթագրությունը։ Կեդրինոսը հիշում է* Τυροποιὸν κάστρον *որ հավանաբար նույնանում է վերոհիշյալ Տյուրոկաստրոնի հետ։ Տե՛ս* Cedr., *II*, p. *390։*

Ստեփանոս Տարոնացին (էջ 164) հիշատակում է խնդրո առարկա բերդը։ Նրա տվյալներով, Յուսուֆ ոստիկանը «հետամուտ լինի (Սմբատ Բագավորին—Հ. Ք.) մինչև ցամուրն և մարտուցեալ ընդ Կուելայ բերդին՝ առնու գնա։ Եւ յետ այնորիկ ի Տփղիս անցանէ»։

93 *Բնագրում* εἰς τὸν ἄρχοντα τοῦ Ἀτζαρᾶ։ *Աջարայի մասին տե՛ս «Կայսրության կառավարման մասին» աշխատության 46-րդ գլխում։ Համմտ.* C. Toumanoff, Studies, p. *495։*

94 *Բնագրում* ἐξουσιοκράτωρ (ἐξουσία— *իշխանություն* + κρατέω — *կալնուլ*) *իշխանակալ։*

95 *Բնագրում* ἐξουσιαστής։ *Նախորդի իմաստն ունի։ Պարզապես ձևն է փոխված տարբերվելու համար նախորդից։ Արազգիայի տակ ենթադրվում է Ափխազիան, իսկ էքսուսիաստեսի տակ՝ Ափխազիայի թագավորը։ Բյուղանդական աղբյուրներում մոտավորապես նույն տերմինով կոչված է նաև հայոց Բագրատունի թագավորը (*τῆς μεγάλης Ἀρμενίας ἐξουσιάρχης)։

96 *Այն է Աղվանքի։*

97 *Բնագրում* εἰς τὸν ἄρχοντα τῶν Κρεβατάων։

98 Բնագրում εἰς τὸν ἄρχοντα Κηρωνίας։

99 Բնագրում εἰς τοὺς ἄρχοντας Τζαναρίας։ Հայկական աղբյուրների Ծանարքը։ Մասուդին այն տեղադրում է Թիֆլիսի նահանգի և Ալանաց դռների (Դարյալի կիրճ) միջև և այն անվանում «թագավորություն»։ Մինորսկին ծանարներին համարում է չեչենական ցեղ (տե՛ս Минорский, История стр. 210, ծանոթ. 100)։

Ծանարներին հիշատակում է Հովհաննես Դրասխանակերտցին։ Նրա տվյալներով վրաց կուրապաղատ Ատրներսեհը իր պետության սահմանները հասցրեց «մինչև ցստորոտ մեծի լերինն Կովկասու, զԴուգարացիս և զԾանարս մինչև ցԴուռն Ալանաց» (Դրասխանակերտցի, էջ 161)։ Ծանարները քրիստոնյաներ էին և ենթարկվում էին «մեծ քորեպիսկոպոսի» (նույն տեղում, էջ 303)։

100 Բնագրում εἰς τὸν ἄρχοντα Σαρζάν։ Խոսքը Շիրվանի մասին է։ Իսկական անունը հենց Շարվան է։ Շիրվան ձևը առաջին անգամ հանդես է գալիս XVI դարում, սեֆևյանների ժամանակ։ Արաբական բոլոր աղբյուրները տալիս են Շարվան ձևը։ Շարվանը առաջին անգամ հիշատակվում է սասանյանների ժամանակ։ Միրանածինի ժամանակ Շարվանի կառավարիչն էր Մուհամմադ իրն Յաղիդը (տե՛ս Минорский, История, стр. 34)։

101 Բնագրում εἰς τοὺς ἄρχοντας Ἀζιας։

102 Բնագրում εἰς τὸν ἄρχοντα Χρυσα։ Պիտի ուղղել Χύρσα։ Χρυσα գրելով հույն հեղինակը կամ գրիչը ցանկացել է իմաստավորել տեղանունը, Χρυσος ոսկի բառից։ Խոսքը հավանաբար Խուրսան նահանգի մասին է, Շիրվանից մի փոքր հյուսիս, որի կառավարչին արաբ հեղինակները «շահ» են անվանում (տե՛ս Минорский, История, стр. 97, 114—115)։

103 Բնագրում εἰς τὸν ἄρχοντα Βρέζαν (գուցե Βερζαν)։ Նախորդ՝ Խուրսան նահանգի հետ աղբյուրները հիշատակում են և Վարդան գավառը (տե՛ս Минорский, История, стр. 114—115)։ Գուցե այդ Վարդանը նույնանում է Միրանածինի Βρέζαν-ի հետ։ Վարդանը հիշատակվում է նաև Մովսես Կաղանկատվացու Պատմության մեջ։

Կարելի է անել մի շարք այլ ենթադրություններ ևս, որ Միրանածինի Վրեզանի տակ թաքնված է X դարի անանուն տաջիկ աշխարհագրի «Հուդուդ ալ-ալամ» աշխատության մեջ հիշվող Բարզանդը, որ տեղադրվում է Մուկանից հարավ։ Տե՛ս Հ. Փափազյան, Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին (X դար), ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, № 5, 1952, էջ 78։ Եթե Միրանածինի Βρέζαν գրությունը համարել Βερζαν-ի աղավաղում, ապա հնարավոր է քաղաքը նույնացնել նաև Պարտավի (Բերդա, Բերդավ) հետ։

104 Բնագրում εἰς τὸν ἄρχοντα Μωχᾶν։ Հավանաբար Մուխանք գավառը նկատի ունի, որ հիշվում է դեռ VII դարի «Աշխարհացոյց»-ում որպես Արցախի 7-րդ գավառ (տե՛ս Ղեմյան, Հայաստանը, էջ 109)։ Հաճախ է հանդիպում և արաբական աղբյուրներում (նաև Մուկան ձևով) Շարվանի հետ միասին։ Տե՛ս Минорский, История, стр. 68, 96, 100։

105 Ինչպես տեսանք 48-րդ գլխի սկզբում ևս հիշվում է Հռոմի պապին ուղարկվող նամակի ձևը, այն տարբերությամբ, որ այնտեղ ոսկեկնիքը մեկ սո-

լիդանոց էր։ Ըստ երևույթին, տարբեր ժամանակներում ուղարկված նամակներում կցված կնիքներն են արտահայտված։

10ᵉ Հեքսագիոնը (լատ. sextula) ունցիայի 6-րդ մասն էր, ուրեմն եգիպտոսի ամիրային ուղարկված նամակի ռսկեկնիքը կշռում էր 3 ունցիա։ Մեկ ունցիան ֆունտի 1/12 մասն էր կազմում։

107 Իմա՛ հունգարացիների։

108 Այսինքն Լևոն VI-ի ժամանակ։

109 Բնագրում κομμέρκιον (ճիշտը՝ κομμέρκιον լատ. commercium), նշանակում է առևտուր, առուծախ, նաև մաքսատուն և մաքս։ Տե՛ս նաև «Կայսրության կառավարման մասին» աշխատության 43-րդ գլխի 47-րդ ծանոթագրությունը։

110 Բնագրում συνήθειαι (սովորություններ)։ Խոսքը նատուրալ հասույթի մասին է, որից օգտվելու իրավունք ունեին բոլոր ղորավարները (տե՛ս Vogt, Basile I-e, p. 193)։ Նրանց մասին խոսվում է դեռ 726 թ. կազմված «Էկլոգա»-ում՝ Իսավրացիների օրենսգրքում, որտեղ ցույց է տրված, որ այն վճարվում էր վարչական ցածր պաշտոնեությանը։ Տե՛ս История Византии, том II, Москва, 1967, стр. 51։ Այդ «սովորությունների» մասին տե՛ս նաև D. Rouillard, Δόσις. συνήθεια. ἀποσχιδεύμος. Annuaire de l'Institut de philologie et d'histoire orientales et slaves, t. VI, 1938։

111 Խոսքը Փոքր Ասիայի Նիկոպոլիս քաղաքի մասին չէ, այլ Էպիրոսի։

112 Ալբանիայի Դուրոս քաղաքի։

113 Ֆիլոթեոսի սուլն «Կլետորոլոգիոնը» (Գահնամակ), որ ամբողջությամբ տեղ է գտել Միրանածինի «Արարողությունների մասին» աշխատության մեջ որպես II գրքի 52—53-րդ գլուխներ, կազմվել է 900 թ.։ «Կլետորոլոգիոնի» ուղղված բնագիրը արժեքավոր ուսումնասիրությամբ լույս է տեսել J. B. Bury-ի կողմից։ Տե՛ս J. B. Bury, The Imperial Administrative System in the Ninth Century with a revised text of the Kletorologion of Philotheos, London, 1911։ Կլետորոլոգիոնի մասին տե՛ս նաև R. Guilland, Études sur l'histoire administrative de Byzance. Observations sur le Cletorologe de Philothée, Revue des Études Byzantines, t. 20 (1962), p. 156—170։

Ատրիկլին (ἀτρικλίνης. լատ. atriclinio) էր կոչվում բյուզանդական արքունիքի սեղանապետը։

114 Վասիլեոպատորի (կայսերահոր) աստիճանն առաջին անգամ ստացավ Լևոն VI-ի հայազգի աներ Ստիլիանոս Զաուցան։

115 Ռեկտոր (ρέκτωρ. կամ ῥαίκτωρ. լատ. rector)։ Ռազմական աստիճան էր։ Ռեկտորը մտնում էր 8-րդ դասի մեջ, որ կոչվում էր «հատուկ աստիճաններ» (ἄξιαι εἰδικαί)։ Այդ դասում առաջին տեղում էր գտնվում կայսերահայրը, երկրորդ տեղում ռեկտորը։ Աստիճանը առաջին անգամ հիշատակում է Ֆիլոթեոսը։ Ռեկտորի իշխանությունը տարածվում էր կայսերական տնտեսության վրա և հանդես է գալիս պրեպոզիտոսի և կուրուկլիոնի անդամների հետ միասին։ Ռեկտորը մասնակցում էր նաև ռազմական արշավանքներին (տե՛ս Bury. IAS, p. 115—116)։ Ռեկտորին հիշում է և Գրիգոր Մագիստրոսը, «ռեքտաւր»։ Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 104։

116 Սինկելլոս (σύγκελλος, լատ. syncellus)։ Բառացի նշանակում է «խցակից» նույն խցում (κελλίον) ապրող։ Սինկելլոսը պատրիարքից հետո եկեղեցական առաջին անձնավորությունն էր։ Տե՛ս Vogt, Basile Ier, p. 262։ Նա կայսերական պաշտոնյա էր, կայսեր կողմից նշանակվող։ Նրա հիմնական պարտականությունն էր պատրիարքի և կայսեր միջև կապ պահպանելը։ Տե՛ս Bury, IAS, p. 116—117։ Սինկելլոսի մասին տե՛ս նաև H. G. Bech, Kirche und theologische Literatur im Byzantinischen Reich, München, 1959, S. 68—69։

117 Դատավորների (Κριται) մեջ էին մտնում քաղաքապետը (ἔπαρχος τῆς πόλεως), Քվեստորը (Κυαιστωρ, լատ. Quaestor sacri palatii) և ὁ ἐπὶ τῶν δεήσεων կոչված պաշտոնյան, որի պարտականությունն էր նախապատրաստել և կայսեր ներկայացնել դիմումները։ Սեկրետիկոսների մեջ էին մտնում 11 բարձրաստիճան պաշտոնյաներ և նրանց պաշտոնեությունը, որոնք առնչություն ունեին ֆինանսական վարչության հետ, այն է սակելլարիոսը, գենիկոնի լոգոթետը, ստրատիոտիկոնի լոգոթետը, սակելլիոնի խարտուլարը, վեստիարիոնի խարտուլարը, իղիկոնի գլխավոր պաշտոնյան, մեծ կուրատորը, Մանգանոնի կուրատորը և Օրֆանոտրոֆոսը։ Սեկրետիկոսների մեջ էին մտնում և դրոմոսի լոգոթետն ու պրոտոասեկրետիսը, որոնք սակայն ֆինանսների հետ առնչություն չունեին։ Դեմոկրատների մեջ էին մտնում Կոստանդնուպոլսի դեմոսի երկու գլխավոր կուսակցությունների («կողմերի») կապուտների և կանաչների պարագլուխները, որոնք կոչվում էին դեմարխոսներ և աստիճանով անթիպատներ էին։ Նրանք ևս ունեին իրենց ենթակա պաշտոնեություն։ Եվ վերջապես Ստրատարիների մեջ էին մտնում հետերիարխը (նրա մասին ավելի մանրամասն տե՛ս վերը, ծանոթ. 47), նավատորմիղի դրունգարը (δρουγγάριος τοῦ πλωίμου), անասնահոտերի լոգոթետը (λογοθέτης τῶν ἀγελῶν), վասիլիկոնի պրոտոսպաթարը (πρωτοσπαθάριος τῶν βασιλικῶν) և ախոռապետը (κόμης τοῦ σταύλου), իրենց ենթակա պաշտոնեությամբ։ Մանրամասն տե՛ս Bury, IAS, p. 69—114։

118 Ինքնագլուխ ենք թարգմանում բնագրի αὐτοκέφαλ (αὐτοκεφάλων) բառը, ինչպես որ այն թարգմանված է միջնադարյան հայ աղբյուրներում։ Համմտ. Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 249։

119 Բնագրում βασιλικῶν Θερμῶν։

ԲԱՆԱԿԱԹԵՄԵՐԻ ՄԱՍԻՆ

1 *Բանակաթեմերի մասին կա բավական ստվար գրականություն։ Տե՛ս Դ. Մո-*
րավչիկի մանրամասն մատենագիտություն (Byzantinoturcica. Bd. I, S. 385—386). *Նորագուններից են հետևյալ գործերը.* J. Karayannopulos, Die Entstehung der Byz. Themenordung, München, 1959; A. Pertusi, La formation des thèmes byzantins, Berichte zum XI Internat. Byzant. Kongress, I (1958), *նաև Գ. Օստրոգորսկու զեկուցումը, նույն տեղում,* VII, p. 1—8։ *Նորագույն գործերից է նաև* Е. И. Дочанашвили, Материалы к вопросу о византийской фемной организации в «Истории» армянского историка VII века Себеоса, Труды Тбилисского гос. университета, 99, серия востоковедения, III, Тбилиси, 1962, стр. 221—230 *(վրացերեն, ինձ անմատչելի)*։

2 *Դուքս (լատ.* dux*), առաջնորդ, իշխան, զորահրամանատար։ Հանդիպում է և հայկական սկզբնաղբյուրներում։ Կիլիկյան շրջանում հանդիպում են «դուկ» և «տուկ» ձևերը։ Այդ տիտղոսի, ինչպես և կատապանի և պրոնոետեսի մասին տե՛ս* T. Wasiliewski. Les titres de duc, de catépan et de pronoetes dans l'Empire Byzantin du IXe jusqu'au XII siecle, Actes du XIIe Congres International d'Etudes Byzantines, t. II, Beograd 1964, p. 233—239։

3 *Հեգեմոն (հուն.* ἡγεμών*)։ Բառացի նշանակում է առաջնորդ։ Համապատասխանում է լատիներեն պրեֆեկտին։*

4 *Տաքսիարխոս (հուն.* ταξίαρχος*)։ Մեկ տաքսիսի (τάξις) հրամանատարը, հարյուրապետ (=*ἑκατόνταρχος*)։ Մանրամասն տե՛ս* В. Вальденберг, Ταξίαρχος. Виз. Временник, том XXIV, 1923—1926, стр. 134—137:

5 *Խոսր Հերակլ կայսեր մասին է (610—641), որի թագավորության ժամանակ սկսած և լայն ծավալ ստացած արաբական արշավանքները վտանգի տակ դրին Բյուզանդական կայսրության ամբողջականությունը։*

6 *Հունարենում* Θέμα։ *Միրանածինը ճիշտ է ստուգաբանում բառը, բխեցնելով* Θέσις*-ից (*τίθημι *բայից, որ նշանակում է դնել, հաստատել)։ Բյուզանդական սկզբնաղբյուրներում, ինչպես մեկ անգամ առիթ ենք ունեցել նշելու, θέμα-ն ունի մի քանի նշանակություն։ Դա և՛ վարչական և՛ աշխարհագրական հասկացողություն է, և՛ վերջինիս կազմում գտնվող զինված ուժերի անվանում։ Մանրամասն տե՛ս* Ahrweiler. Recherches, p. 2։

7 *Հունարենում* Ἀνατολικόν (ἀνατολή *բառից, որ նշանակում է արևելք։ Բառը պահպանվել է մինչև օրս Անագոլու անվան տակ, թեև թուրք կեղծարարները ճգնում են ստուգաբանել թուրքերեն. անա (մայր) և դոլու (լի) բառերով)։ Անատոլիկոնը Բյուզանդական կայսրության ամենամեծ բանակաթեմն էր։ Նրա կազմի մեջ էին մտնում Դիոկլետիանոս կայսեր սահմա-*

նագծած Ասիա և Լիդիա նահանգները, Կարիայի որոշ մասեր, Պակատյան Փոյուգիան, Փրկավետ (Սալուտարիա) Փոյուգիան, Լիկաոնիան, Երկրորդ Կապադովկիան և Իսավրիան (տե՛ս Գելցեր, Սկզբնավորությունք, էջ 10)։

Անատոլիկոն բանակաթեմը առաջին անգամ հիշատակվում է Թեոփանեսի ժամանակագրության մեջ 669 թ. դեպքերի կապակցությամբ։ Երբ Կոստանդին Պոգոնատոս կայսեր դեմ խռովություն բարձրացավ, խռովարարների թվում էին և οἱ τοῦ θέματος τῶν ἀνατολικῶν (Theoph., p. 352)։

Անատոլիկոն բանակաթեմի զորավարը առաջին անգամ հիշատակվում է նույն Թեոփանեսի ժամանակագրության մեջ 690 թ. դեպքերի կապակցությամբ։ Նա Լեոնտիոսն էր, որ հետագայում կայսր հռչակվեց (695—698)։

Անատոլիկոն բանակաթեմի զորավարի նստոցը նախապես Ամորիոն քաղաքն էր, իսկ ավելի ուշ շրջանում Մարգ ալ-Շահմը (ենթադրաբար ժամանակակից Հասաքյոյր)։ Ֆիլոթեոսի «Դահնամակում» 60 դասից բաղկացած հիերարքիկ աստիճանում Անատոլիկոն բանակաթեմի զորավար գտնվում էր չորրորդ տեղում (վասիլեոպատորից, ռեկտորից և սինկելլոսից հետո) և բոլոր բանակաթեմերի զորավարներից առաջ (տե՛ս Bury. IAS, p. 136)։

Անատոլիկոն բանակաթեմի մասին մանրամասն տեղեկություններ են տալիս նաև արաբական աղբյուրները, առաջին հերթին Իբն Խորդադբեհ, որի «Քիթաբ ալ Մասալիկ վ'ալ Մամալիկ» աշխատությունը բյուգանդական բանակաթեմերի պատմության ուսումնասիրության համար շատ վրստահելի մի աղբյուր է։ Մասնագետների ենթադրությամբ, այդ աշխատությունը գրվել է 840—845 թվականների միջև և ներկայացնում է Լևոն V Հայկազնի (813—820), Միքայել Բլվատի (820—829) և Թեոփիլոսի (829—842 թթ.) իշխանության ժամանակաշրջանի բյուգանդական կայսրության կառուցվածքը։ Իբն Խորդադբեհն այս բանակաթեմի մասին գրում է. «Ան-Նակոլուսը, այսինքն Արևելքը. այս նահանգը հռոմեական պետության ամենամեծ նահանգն է. ունի Ամուրիա քաղաքը 44 աշտարակներով և Ալ-Ալամայն, Մարղ-աշ Շահմ, Բորզուտ, ալ-Միսկանին և երեսուն այլ ամրոցներ։ Նրա ենթակայության մեջ են գտնվում նաև ալ-Բիտինը և ալ-Մոսթաթալինը (տե՛ս Pertusi, p. 114)։ Արաբ մի այլ հեղինակ, Իբն ալ Ֆակիհը, ցույց է տալիս, որ Թրակեսիոն բանակաթեմից սկիզբ է առնում «ալ-Նատուլիկոս նահանգը, որի անվանումը նշանակում է արևելք։ Սա հռոմայեցիների ամենամեծ նահանգն է։ Նրա առաջին սահմանը Օպսիկիոնն է և Բրակիսիսը (Թրակեսիոն), երկրորդը Բուկելարին նահանգը։ Իմտրատիգուսի (ստրատեգոսի) նստոցը գտնվում է Մարգ ալ-Շահմում։ Նրա զորքը բաղկացած է 15 հազար հոգուց։ Նրա [զորավարի] հետ են նաև երեք տուրմուխ (տուրմարխ)։ Այս նահանգում է գտնվում Ամմուրիյան (Ամորիոն), որը ներկայումս ավերակ է, Բալիսը (Բարբալիսոս), Մանրիջը (Հիերապոլիս), Մարաշը (Գերմանիկիա), որը Բուրղութի ամրոցն է» (տե՛ս Brooks, Arabic Lists, p. 74)։

8 Բնագրում ἔθνη։ Բյուզանդական աղբյուրներում «ազգություններին» (ἔθνη) տակ ենթադրվում են ոչ միայն հեթանոսները (հայերեն հեթանոս բառը ծագում է հունարեն ἔθνος, ἐθνικός -ից), այլև բյուզանդական կայսրու-

Մանրագրություններ

Թյան մեջ ապրող ոչ հույն բնակչությունը, որը որպես կանոն քրիստոնյա էր։ Այսպես, հարավային Հայաստանում բնակվող հայերը դեռ VI դարում կոչվելիս են եղել ἔθνη (լատ. gentes)։ Այստեղ ἔθνη բառը գործածված է աշխարհագրական իմաստով, առանձին նահանգի իմաստով, որի մէջ սակայն ենթադրվում է առանձին «ազգության» առկայությունը։

9 *Միրոս գյուղաքաղաքը (բնագրում Μηρός) գտնվում էր Փոյուգիայում։ Այժմ կոչվում է Քումբեթ։ Տե՛ս* Ramsey, HGAM, p. *144, 212։*

10 *Բնագրում Ψυχρὸν ὄρη.*

11 *Օպսիկիոն (Ὀψίκιον) բանակաթեմը գտնվում էր Բյուզանդական կայսրության փոքրասիական շրջանների արևմուտքում և իր մեջ էր բովանդակում Բյութանիան, Հոնորիասը, Պավլագոնիան, Հելլեսպոնտոսի մեծ մասը և Առաջին Փոյուգիան (տե՛ս* Գելցեր, *Սկզբնավորությունը, էջ 11)։*

12 *Բուկելլարների (Βουκελλαρίων) բանակաթեմը ստեղծվեց Օպսիկիոնի արևելյան կեսից։ Գլխավոր քաղաքն էր Անկյուրան։ Բուկելլարների զորավարը առաջին անգամ հիշատակվում է 767 թ. դեպքերի կապակցությամբ (տե՛ս* Գելցեր, *Սկզբնավորությունը, էջ 33)։*

13 *Կիբիրեոտների (Κιβυραιωτῶν) բանակաթեմը կազմվել էր նախկին Կարավիսիանի բանակաթեմի երկու մասի բաժանվելուց հետո։ Տարածվում էր Փոքր Ասիայի թերակղզու հարավային ափում, Կիլիկիայում։*

14 *Բնագրում ἐξαρχος։ Համապատասխանում է նախահուստինիանոսյան ժամանակաշրջանի* magister militum-*ին, զորահրամանատարին (տե՛ս* Pertusi, p. *116)։*

15 *Միրանածինի հիշատակած այս Պուպլիոսի արձանագրության գոյության մասին ժամանակակից ուսումնասիրողները կասկած են հայտնում (տե՛ս* P. de Rohden, H. Dessau, Prosopographia Imperii Romani, III, Berolini, 1898, p. 108*։*

16 *Բելիսարիոսի պաշտոնական տիտղոսն էր* Magister militum per Orientem*։*

17 *Ակրինիարիոսները (Σκρινιάριοι, հունարեն χαρτοφύλαξ — թղթապահ), դիվանի աշխատողներ էին։*

18 *Պրետորյան և քաղաքի հյուպարքոսները համապատասխանում են* Praefectus praetorio *և* Praefectus Urbis*-ին։* Notitia dignitatum, *V դարի սկզբի մի հուշարձան ցույց է տալիս, որ ամբողջ Հռոմեական կայսրությունը քաղաքական տեսակետից բաժանված էր 4 մասի, որոնք գլխավորում էին* Praefecti praetorio*-ները։ Քաղաքի պրեֆեկտները համապատասխանում են քաղաքապետներին։*

19 *Հովհաննես Լյուդոսի գործը պահպանվել է.* Joannis Lydi, De magistratibus populi Romani libri tres, ed. R. Wuensch, Lipsiae, 1903*։*

20 *Արմենիակների հորջորջումը հանդիպում է և հայկական սկզբնաղբյուրներում։ Օրինակ, Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, «որ շուրջ զմեօք են աղգք՝ Արմանեակս զմեզ անուանեն» (Դրասխանակերտցի, էջ 17—18), իսկ Ուխտանեսը գրում է «Արմենեակք» (տե՛ս* Կ. Տաշյան, *Արևմտյան սահմանը, էջ 84, ծան. 7)։*

Պերտուղին կասկածելի է համարում Միրանածինի վկայությունը, թե Արմենիակների բանակաթեմն ստեղծվել է Հերակլ կայսեր ժամանակ, հակառակ որ Թեոփանեսն իր ժամանակագրության մեջ 626/627 թվականների տակ հիշատակում է ոմն Γεώργιος τουρμάρχης τῶν Ἀρμενιακῶν*։*

Պերտուզիի կարծիքով դա վկայությունն է այն բանի, որ այն ժամանակ այդ անունը կրող ինչ-որ զորամաս է եղել։ Կուլակովսկու կարծիքով, Հերակլ կայսեր հետ միասին Հայաստան արշավող զորավար Միղիզիոսը (Մժեժ Գնունի) Արմենիակների բանակաթեմի առաջին զորավարն էր (տե՛ս **Ю. Кулаковский**, История, том III, стр. 396—398: Համմտ. **Pertusi**, p. *118*)։ Առաջին անգամ հանվանե Արմենիակների զորավար է հիշատակվում 667 թ. դեպքերի կապակցությամբ։ Այդ թվականին Կոստանդ կայսեր դեմ ապստամբություն էր բարձրացրել ὁ τῶν Ἀρμενιακῶν στρατηγὸς Σαβάριος Περσογενής։ Արմենիակոնը որպես բանակաթեմ, այսինքն վարչական և ռազմական շրջանի հասկացողություն, հիշվում է միայն 742 թ. դեպքերի կապակցությամբ՝ Թեոփանեսի ժամանակագրության մեջ։

Բանակաթեմի զորավարի պաշտոնական անվանումն էր «Արմենիակների անթիպատ պատրիկ և ստրատեգոս» կամ «Արմենիակների պատրիկ և ստրատեգոս»։ Թեոփիլոս կայսեր ժամանակ Արմենիակների բանակաթեմը բաժանվեց երեք մասի՝ Արմենիակների, Խարսիանոն և Կապադովկիա, ընդ որում Արմենիակների մեջ մտան Հելենոպոնտոս, Պոդեմոնյան Պոնտոսը և Առաջին ու Երկրորդ Հայքերը։ X դարում նրա կազմի մեջ մնաց միայն Հելենոպոնտոսը, որովհետև Պոդեմոնյան Պոնտոսի մեծ մասից կազմակերպվել էր Խաղտիք բանակաթեմը, Առաջին Հայքի մեծ մասից՝ Կոլոնիայի բանակաթեմը, իսկ Երկրորդ Հայքի մեծ մասից՝ Սեբաստիայի բանակաթեմը (տե՛ս **Pertusi**, p. *118*)։ Միրանածինը Արմենիակոնի կազմում ցույց է տալիս 7 քաղաք՝ Ամասիա, Իրորա (այժմ Թուրհալ), Զալիքոս (այժմ Ալաչամ), Անդրապա (այժմ Վեգիր-Քյոփրու), Ամիսոս (Սամսոն), Նեոկեսարիա (Նիկսար) և Սինոպե, որով միանգամայն համապատասխանում է Հելենոպոնտոս նահանգին, որ նույն քաղաքներն ուներ՝ գումարած Զելան (տե՛ս Տաշյան. Արևմտյան սահմանը, էջ 450։ Տաշյանը խնդրո առարկա բանակաթեմի մասին արժեքավոր դիտողություններ ունի նույն աշխատության մեջ, տե՛ս էջ 82 և հտ.)։

Արմենիակների բանակաթեմի մասին տեղեկություններ են տալիս նաև արաբական աղբյուրները։ Իբն Խորդադբեն գրում է. «ալ-Արմինիակ ունի Կոլոնիա և տասնվեց ամրոց» (տե՛ս Գելցեր, Սկզբնավորություն, էջ 38)։ Իբն ալ-Ֆակիհը գրում է. «Այնուհետև նրան սահմանակից է Արմենիակոն նահանգը. նրա առաջին սահմանն է Աֆլագունիայի (Պաֆլագոնիա) նահանգը, երկրորդ [սահմանը]՝ Բուկելլարիոն նահանգը, երրորդը՝ Խարսանան, իսկ չորրորդը՝ Գալդիյան (Խաղտիք) և խազարների ծովը։ Իմտրատիղուսի (ստրատեգոսի) նստոցն է Ամասիա ամրոցը։ Նրա զորքը բաղկացած է 9000 հոգուց, որի հետ են երեք տուրմուխ (տուրմարխ)։ Այդ [նահանգում] կան բազմաթիվ գավառներ և ամրոցներ» (տե՛ս **Brooks**, Arabic Lists, p. *76*)։

Կուդամայի տվյալներով բանակաթեմն ուներ 4000-անոց զորք, մի բան, որ Գելցերն համարում է գրչական սխալ և ուղղում 10.000-ի (տե՛ս **Գելցեր**, Սկզբնավորություն, էջ 47, 48)։

21 Μένιππος. Նկատի ունի հայտնի աշխարհագիր Մենիպոս Պերգամացուն, որ գրել է երեք մայր ցամաքների—Ասիայի, Եվրոպայի և Լիբիայի աշխարհագրությունը։ Նրա մասին մանրամասն տե՛ս Գիզինդերի **Մենիպոս** հոդ-

վածը. Paulys, Real-Encyclopädie der Classischen Altertumswissenschaft-ի 29-րդ հատորում, Stuttgart, 1931, col. 862—888։

22 Σκύλαξ Καρυανδεύς, Այդ անունով հայտնի են երկու հեղինակ։ Մեկն ապրել է Դարեհ Վշտասպյանի ժամանակ։ Գրել է „Περίπλους", որը IV դարում մ. թ. ա. վերամշակվել է և հայտնի է „Γῆς περίοδος" և „Περὶ Ἰνδῶν" անվան տակ։ Երկրորդ Սկյուլաքս Կարյուանդենացին ապրել է Դարեհ Հարմորդու ժամանակ։ Նա ևս եղել է ճանապարհորդ և գրել Περίπλους— Հերակլյան սյուներից այն և այս կողմ և Περίπλους Օկյումենեի, որոնցից հատվածներ են մեզ հասել։ Միրանածինը ամենայն հավանականությամբ նկատի ունի երկրորդ Սկյուլաքսին։

23 Պավսանիասը (Παυσανίας) II դարի հույն ճանապարհորդ է։ Հադրիանոսի և Անտոնիննների ժամանակ շրջեց Հունաստանը, Փոքր Ասիան, Ասորիքը, Եգիպտոսը, Լիբիան, Իտալիան և իր տպավորությունները 160—180 թվականների ընթացքում շարադրեց առանձին գրքերով։ Նրա գործը հասել է մեզ։

24 Պրոկոպիոս Կեսարացին (Προκόπιος Καισαρεύς) բյուզանդական խոշորագույն պատմիչը (VI դար)։ Գրել է «Պատերազմների մասին», «Գաղտնի պատմություն» և «Կառուցումների մասին» կարևոր աշխատությունները, որոնք բոլորն էլ հասել են մեզ։ Նրա գործերի Հայաստանին և հայերին վերաբերող նյութը տե՛ս սույն մատենաշարի 5-րդ գրքում (Բյուզանդական աղբյուրների Առաջին գիրքը), Երևան, 1967 թ.։

25 Ագաթիաս Միրենացին (Ἀγαθίας Μυρηναῖος) ծնվել է շուրջ 536 թ. և մահացել շուրջ 582 թ.։ Բյուզանդական պատմիչ է և բանաստեղծ։ Գրել է «Հուստինիանոսի թագավորության մասին» գործը, որ վերաբերում է 552—558 թթ. գոթերի, վանդալների, ֆրանկների և պարսիկների դեմ հայազգի զորավար Նարսեսի մղած պատերազմներին և շարունակությունն է Պրոկոպիոս Կեսարացու «Պատերազմների մասին» գործի։ Այն պահպանվել է։ Տե՛ս Agathias, Historiarum libri quinque, Bonnae, 1828։ Կա նաև ռուսերեն թարգմանությունը. Агафий, О царствовании Юстиниана, Перевод, статья и примечания М. В. Левченко, Москва-Ленинград, 1953։ Ռնադրի նորագույն հրատարակությունը կազմել է բյուզանդական պատմիչների նոր մատենաշարի երկրորդ հատորը։ Տե՛ս Corpus Fontium Historiae Byzantinae, Volumen II, Agathiae Myrinaii Historiarum libri quinque, recensuit R. Keydell, Berolini, 1967։

26 Մենանդրոսը (Μένανδρος Προτίκτωρ) ծնվել է VI դարի կեսերին Կոստանդնուպոլսում։ Նրա պատմական երկը շարունակությունն է Ագաթիասի գործի և բովանդակում է 558—582 թթ. պատմություն։ Նրա աշխատության առանձին հատվածներ են միայն հասել մեզ։ Տե՛ս Fragmenta Historicorum graecorum, t. IV. p. 220 և հտ.։ Այդ հատվածների ռուսերեն թարգմանությունը տե՛ս հետևյալ գրքում. Византийские историки Дексипп, Эвнапий, Олимпиодор, Малх, Петр Патрикий, Менандр, Кандид, Ноннос и Феофан Византиец, перевод С. Дестуниса, С. Петербург, 1860, стр. 313—470։

27 Հեսիքիոս Միլետացին (Ἡσύχιος Μιλήσιος) ապրել է Անաստասիոս կայսեր (491—518) ժամանակ։ Նրա պատմական երկը կոչվում էր Σύνοψις κοσμικὴ

ιστορίας" կամ „Χρονική ιστορία", որն սկսվում էր Ասորեստանի թագավոր Բելից և հասցվում մինչև Անաստասիոս կայսեր մահը։ Այդ գործի մեծ մասը մեզ հասել է։ Անավարտ մնաց նրա պատմական երկրորդ գործը, որ բովանդակում էր Հուստինոսի, ապա նաև Հուստինիանոսի թագավորության մի քանի տարվա պատմությունը։ Այս վերջինը կորել է։

28 Պոլիբիոսը (Πολύβιος) հին Հունաստանի ամենաերևելի պատմագիրներից մեկն է (201—120 թ. մ. թ. ա.)։ 167 թ. որպես պատանդ ուղարկվեց Հռոմ, որտեղ սերտ կապեր հաստատեց հռոմայեցի մեծամեծների հետ։ Ճանապարհորդեց Իտալիա, Գալատիա և Իսպանիա։ Սկիպիոն Էմիլիանոսի հետ մասնակցեց III Պունիկյան պատերազմին և ծանոթացավ հյուսիսային և արևմտյան Աֆրիկային։ Նրա ամենակարևոր գործն է „Ιστορίαι" 40 գրքից բաղկացած երկասիրությունը, որտեղ քննության է առնում հռոմայեցիների, հույների և Արևելքի պատմությունը 220—146 թթ.։ Այդ գործից մեզ հասել են առաջին 5 գրքերը, վեցերորդ գրքի մի մասը և առանձին հատվածներ մյուսներից։

29 Բնագրում Δαζιμών, հիշատակում է դեռևս Ստրաբոնը «Դազիմոնիտիս հարթավայր» ձևով (ԺԲ, 3, 15)։ Այժմ կոչվում է Դազմանա (տե՛ս Honigmann, Die Ostgrenze, S. 60)։ Անդեբսընը Դազիմոնիտիսը նույնացնում է Կաղ-Օվայի հետ (տե՛ս Անդեբսըն, Ուղևորություն, էջ 83)։ Տաշյանը Դազիմոնը նույնացնում է Եվդոկիայի (Թոքատ) հետ (տե՛ս Տաշյան, Արևմտյան սահմանը, էջ 458)։

30 Բնագրում թեև Հերոդոտոս է գրված, բայց հրատարակիչ Պերտուզին ուղղում է «Ստրաբոն», որովհետև նրանց Ստրաբոնն է հիշատակում։ Ստրաբոնը գրում է (տե՛ս Աշխարհագրություն, ԺԲ, 3, 4), որ «Վևկոսիրոսներին մենք անվանում ենք կապադովկացիներ»։ Ստրաբոնը տարբերություն է դնում Վևկոսիրոսների, որոնք բնակվում են Կապադովկիայում և մյուս «ասորիներիս» միջև, որոնց «մաշկը արևից վառված է» (նկատի ունի Մելանոսիրոսներին)։ Վերջիններիս նա տեղադրում է Տավրոսից այն կողմ (ԺԲ, 3, 9)։

31 Հռոդենդոսի (Արդանդուն), Լուլոնի և Պոդանդոսի (այժմ Բողանտը) մասին տե՛ս Honigmann, Die Ostgrenze, S. 45։

31ա Բնագրում τὸ μὲν μεσόγαιον։ Բառը թարգմանում ենք ինչպես մեր միջնադարյան աղբյուրներում. «Միւսիգիոն, որ թարգմանի Միջերկրեայ»։ Տե՛ս Վևոնդ, Պատմություն, էջ 103։

32 Խարսիանոնի առաջին հիշատակությունը (որպես կլեյսուր) հանդիպում է Իբն Խորդադբեհի մոտ։ «9. Խարսիուն Մալաթիո ճամբուն վրա. բացի Խարշանա գլխավոր քաղքեն ուրիշ դեռ չորս ամրոց ալ ունի» (տե՛ս Գելցեր, Սկզբնավորություն, էջ 38)։ Մի ուրիշ արաբ հեղինակ, Իբն ալ-Ֆակիհը Խարսիանոնի մասին գրում է. «Նրան սահմանակից է Խարշանայի նահանգը. նրա առաջին սահմանն է Ալ-Կույարի (Կապադովկիայի) նահանգը, երկրորդ՝ Մալաթիայի հովիտը, երրորդը՝ Արմենիակների նահանգը, չորրորդ՝ Բուկելլարների նահանգը։ Նրա խոսլիյուգի (կլեյսուրարխի) նստոցն է Խարշանայի ամրոցը։ Նրա զորքը բաղկացած է չորս հազար հոգուց։ Նրա ամրոցների թվում են Խարշանան, Դարիգան (Սարիխա), Ռամհասու (?), Բարուկտա (Բադուկտա (?)... և Մախաթիրի (?)» (տե՛ս Brooks, Arabic Lists, p. 75—76)։

Բյուզանդական աղբյուրներում 863 թ. դեպքերի կապակցությամբ հիշատակվում է խարսիանոնի կլեյսուրարխը, որով պարզվում է, որ այն ժամանակ խարսիանոնը դեռ չէր բարձրացել բանակաթեմի աստիճանին։ 873 թ. է, որ առաջին անգամ հիշատակվում է խարսիանոնի մի զորավար. վկայությունն այն բանի, որ խարսիանոնն արդեն վերածվել էր բանակաթեմի, ըստ երևույթին, 863 թ. ձեռք բերած հաջողությունների կապակցությամբ։ (Վասիլի կենսագրության մեջ ևս արձանագրված է (տե՛ս վերը, էջ 71), որ խարսիանոնը բանակաթեմ էր և ուներ զորավար)։ Ինչպես ցույց է տալիս Ծիրանածինը իր «Կայսրության կառավարման մասին» աշխատության մեջ (գլ. 50), խարսիանոնը կազմում էր Արմենիակների բանակաթեմի մի «զորավորություն»։

Տասներորդ դարում խարսիանոն բանակաթեմի կազմում էին գրեթե ամբողջությամբ Առաջին Կապադովկիան և Երկրորդ Հայքի հարավային կեսը։ Խարսիանոն բանակաթեմի կենտրոնը հայտնի չէ։ X դարում Կեսարիան էր նրա կենտրոնը, որ միաժամանակ եկեղեցական կենտրոն էր (տե՛ս Pertusi, p. 124)։

Ծիրանածինը խարսիանոն բանակաթեմի անունը կապում է ինչ-որ առասպելական Խարսիոս պարսկի անվան հետ։ Ն. Ադոնցը խարսիանոն անունը բխեցնում է Փոքր Հայքի հինգ գավառներից մեկի՝ Օրսեննի անունից, որի կենտրոնն էր Օրսա քաղաքը։ Դեռևս XIX դարի վերջում Ավազի և Կեմիսի միջև, Ալիս գետի ձախ ափին գտնվում էր հայերով բնակեցված Խորսանա գյուղը, որ խարսիանոն բերդն է, նույնանուն բանակաթեմի կենտրոնը (տե՛ս Н. Адонц, Армения, стр. 83)։ Ռամզեյը խարսիանոն բանակաթեմի կենտրոնը (Խարշանան ըստ արաբների, և խարսիանոն բերդը՝ ըստ բյուզանդացիների) տեսնում է ժամանակակից Կալե-Հիսարի մեջ, թեև այլ ուսումնասիրողներ չեն համաձայնվում այդ կարծիքի հետ (տե՛ս Տաշյան, Արևմտյան սահմանը, էջ 450)։

33 Հռոմեական տիրապետության վաղ շրջանում Փոքր Հայքը կազմեց Կապադովկիա պրովինցիայի մի մասը։ III. դարի վերջում, Դիոկղետիանոսի ժամանակ Փոքր Հայքը կազմեց առանձին պրովինցիա։ Թեոդոս Մեծի ժամանակ Փոքր Հայքը բաժանվեց երկու մասի, Առաջին և Երկրորդ Հայքերի։ Հուստինիանոսի ժամանակ Փոքր Հայքի շրջանները նոր բաժանման ենթարկվեցին։ Փոքր Հայքի վարչական սահմաններն անկայուն էին և հաճախ իրենց մեջ էին ընդգրկում հարևան շրջանները, կամ, ընդհակառակը, Փոքր Հայքի առանձին շրջաններ համարվում էին հարևան նահանգների բաղկացուցիչ մասեր (տե՛ս Адонц, Армения, стр. 48 и сл.)։

Եթե «Բանակաթեմերի մասին» աշխատության մեջ Կապադովկիան ցույց է տրված Արմենիակների բանակաթեմի կազմում, ապա «Կայսրության կառավարման մասին» աշխատության մեջ (գլ. 50) Կապադովկիան համարվում է «Անատոլիկոն բանակաթեմի մի տուրման»։ Պերտուզիի կարծիքով հնարավոր է, որ մի ինչ որ ժամանակաշրջանում Կապադովկիան ռազմական տեսակետից կապված լիներ Անատոլիկոնի հետ (տե՛ս Pertusi, p. 118)։ Բայց թվացող հակասությունը վերանում է, եթե նկատի ունենանք, որ Արմենիակների բանակաթեմի մեջ մտնում էր միայն Երրորդ Կապադովկիան, երբ Երկրորդ Կապադովկիան մտնում էր Անատոլիկոն բա-

նակաթեմի կազմում (տե՛ս Տաշյան, Արևմտյան սահմանը, էջ 450, 453)։ Այդպիսով Միրանածինը սխալած չէր լինում երբ և՛ Անատոլիկոն, և՛ Արմենիակների բանակաթեմների մեջ կապադովկական հողեր էր տեսնում։

Կապադովկիա բանակաթեմի սահմաններում էին գտնվում Երկրորդ Կապադովկիան և Առաջին Կապադովկիայի մի մասը, հնարավոր է նաև Երկրորդ Հայքի, որովհետև, ըստ Միրանածինի, նրա սահմաններում էին գտնվում Մոկիսոս քաղաքը, ինչպես և Հոոդենդոս և Լուլոն ամրոցները։ 863 թ. դեպքերի կապակցությամբ հիշատակվում է Կապադովկիայի զորավարը, որն ապացույց է այն բանի, որ նշված ժամանակ Կապադովկիան արդեն կլեյսուրից բարձրացել էր բանակաթեմի աստիճանին։ Այդ բանը հաստատվում է և Ֆիլոթեոսի «Դասնամակով», որտեղ Կապադովկիան հանդես է գալիս որպես առաջին բանակաթեմ, որովհետև հիշատակում է «Կապադովկայի անթիպատ պատրիկ և զորավարին»։

Կապադովկիան որպես բանակաթեմ (սկզբում որպես կլեյսուր) հիշատակում է Իբն Խորդադբեհ, որի տվյալը վերաբերում է 717/829 թթ. միջև ընկած ժամանակաշրջանին. «14. Ալ-Կաբադոք, որուն սահմաններն են՝ Խարսոսի, Ադանայի և ալ-Մասիսայի լեռները։ Այս նահանգին ամրոցները կարգին են՝ Կոռա, Հասին, Անթիգավա, ալ-Աճրաբ և Դուլ Կիլա։ Այս վերջինը ամրոցներով շրջապատված լեռ մըն է։ Արաբացիք ասոր Դուլ Կիլա (Դշխո ամրոցներու) անունը տվին, սակայն իսկական անունն է Ջուսաթրուն, որ կնշանակե «աստղերու մերձեցող»։ Բացի այս վերոհիշյալ ամրոցներեն, դեռ անոնցմե տասնուչորս ուրիշ ալ կա։ Մաթամիր երկրին մեջ կգտնվեն՝ Մաջիդա, Բալանսա, Մալանդասա, Կունիա, Մալակուբիա, Բադալա, Բարբավա և Սալամուն դղյակները» (տե՛ս Գելցեր, Սկզբնավորություն, էջ 38—39)։ Կապադովկիա բանակաթեմի մասին խոսում է նաև Իբն ալ-Ֆակիհը. «Հաջորդ սահմանը,—գրում է նա,—Ալ-Կուբադակ նահանգն է. նրա առաջին սահմանն է Տարսոսի լեռները, Ադանան և Ալ-Մասիսան (Մոպսուեստիան), երկրորդ [սահմանն] է Սելևկիայի նահանգը, երրորդը՝ Տուլիգուսի (Անատոլիկոն) նահանգը, չորրորդը՝ Ալ-Սամալարի (Բուկելլարիոն), Խարսանայի (Խարսիանոն) նահանգը։ Խալիյուգի (կլեյսուրարխի) նստոցը Կուրայի (Կուրոն) ամրոցն է։ Ջորքը բաղկացած է չորս հազար հոգուց։ Այստեղ կան բազմաթիվ անառիկ ամրոցներ։ Նրա սահմաններում են գտնվում Կուրիյան կամ Կունիյան (Իկոնիոն ?) (Պերտուզիի կարծիքով դա կարբալան է և ոչ Իկոնիոնը, նույն տեղում, էջ 121), Մալակունիյան (Մալակոպեան), Գարդիլիյան (?) և ուրիշներ» (տե՛ս Brooks, Arabic Lists, p. 75)։ Հոնիգմանը հետևյալ կերպ է ճշտում արաբական աղբյուրներում հիշատակված տեղանունները. Ալ-Մասիսա=Մոպսուեստիա, Կոռա=«Բանակաթեմների մասին» աշխատության Կորոնը, Հասին-Հասաքյոյ (?), Անթիգավա=հնարավոր է նիգդե, Գոգաստրում (Ջուսաթրուն)=Կիբիստրա, Բալանսա=Վալիսա, Մալանգասա=Մելանդրզ, Բադալա=Անդաբալիս=Անդանալ, Բարբավա=Էսքի Արավան, Սալամուն=Տալ Սելմե (տե՛ս Honigmann, Die Ostgrenze, S. 40, 45, 46—47։ Համմտ. Pertusi, p. 121)։

34 Խոսքը հավանաբար Արիարաթ II-ի մասին է։ Կապադովկիայի թագավորու-

թյան հիմնադրի (270 կամ 260 թ. մ. թ. ա.)։ (Տե՛ս Pertusi, p. 119; նաև Հ. Մանանդյան, Քննական տեսություն, հտ. Ա, էջ 98, 99, 139)։

35 Աղաբեր Արիարաթիա լիճն այժմ կոչվում է Տուղլու Գյոլ։ Այն հիշատակվում է դեռ Ստրաբոնի կողմից «Տատտա լիճ» ձևով։ Նրա ասելով, Տատտան գտնվում է Մեծ Կապադովկիայի մոտ և բնական աղահանք է (տե՛ս Ստրաբոն, ԺԲ, 5, 4)։

36 Բնագրում Մաշ. Մովսես Խորենացին մանրամասն գրում է այդ քաղաքի կառուցման մասին, որ վերագրում է հայերի նախահայր Արամի դինվորականներից մեկի՝ Մշակին, որ ծագումով հայ էր («յազգէ իւրմէ»)։ Այդ շրջանի նվաճումից հետո Արամը հրաման էր տվել տեղի հույն բնակչության ուսանել գիրս և գլեզուս հայկական... եւ դաստակերտն զոր շինեաց յանուն իւր Մշակ կոչմնապետն Արամայ, փոքրագունիւք պարսպեալ որմովք, անուանէին հինք աշխարհին՝ Մաժաք, որպէս ոչ կարելով ուղղախօսել» (Խորենացի, Ա, 14)։ Խորենացին ընդգծելով հույների «ուղղախօսել» չկարողանալու փաստը, նկատի ունի այն, որ նրանք չէին կարողանում Մաժաք (կամ Մշակ) ասել, որովհետև հունարենում չկան «ժ» և «շ» հնչյունները։ Այդ իմաստով ոչ թե «Մաժաք» այլ «Մազաք» պետք է որ հույները ասած լինեին (ինչպես որ գրում է Շիրանածինը), և Խորենացու «Մաժաքը» պիտի ուղղել «Մազաք»։ Թերման (Θερμά) նույնանում է Βασιλικὰ Θερμὰ (տե՛ս Արարողությունների մասին, գիրք Բ, ծանոթ. 119), Թագավորական Ջերմուկների հետ։ Հոեգեպոդանդոսը նույն Պոդանդոսն է։

37 Այն պատճառով, որ պատմական Փոքր Հայքը վարչական իմաստով գտնվում էր Կապադովկիայի սահմաններում, սկզբնաղբյուրներում հաճախ հայ և կապադովկացի հասկացությունները նույնացվել են։ Հայ ասելով ենթադրել են կապադովկացուն, կամ կապադովկացի ասելով՝ հային։ Բյուզանդագետ Գուբերը այդպես է բացատրում Մավրիկիոս կայսեր «հայկական» ծագումը։ Լինելով Կապադովկիայի Արաբիսոս քաղաքից, Մավրիկիոսը համարվել է հայ։ Տե՛ս և հաջորդ ծանոթագրությունը։

38 Այս քաղաքը հանդիպում է նաև IX դարում, կին հեղինակ Կասիայի մոտ, այն տարբերությամբ, որ ուր որ «կապադովկացի» է գրված, Կասիայի մոտ «հայ» է (հմմտ. նախորդ ծանոթագրությունը)։ «Հայոց ղարհուրելի ազգը,—գրում է Կասիան,—պատիր է և չարաբարո վերին աստիճանի. այլ և խելացնոր, փոփոխամիտ և նախանձոտ, խիստ փքված և լի նենգությամբ. շատ տեղն է ասել սոցա մասին մի իմաստասեր, թե՝ «Հայերը չար են, քանի որ հոչակ չունին, ավելի վատ են դառնում, երբ մեծության են հասնում. հարստանալուց, հիմնովին չար, իսկ երբ և՛ մեծ հարստություն, և՛ պատիվներ են ձեռք բերում, չարից ամենաչար են հանդիսանում» (Թրգմ. Ն. Ադոնցի։ Տե՛ս նրա Կասիա միանձնուհին, Հանդես Ամսօրյա, 1901, էջ 130)։ Կասիայի «Հայկական» քաղաքների մասին տե՛ս նաև **Липшиц**, Очерки, стр. 331։ Նաև **K. Krumbacher**, Kasia. In Sitzungsberichte d. b. k. Akademie d. Wissenschaften, philos.-philol. Classe, 1897, S. 305—399։

Կապադովկացիների մասին վերոհիշյալ բանաստեղծությունը հանդիպում է նաև VI դարում Հովհաննես Լյուդոսի մոտ։ Տե՛ս Joann. Ly-

dus, de Magistratibus, ed. Bonn., p. 250։ Հովհաննես Լյուդոսն այն դրել է Հուստինիանոս I կայսեր արատավոր գործիչ Հովհաննես Կապադովկացու կապակցությամբ։

39 Ուսումնասիրողները գտնում են, որ այս «բարեպաշտ և քրիստոսասեր Կոստանդին կայսրը» Միրանածինը չէ, նախ որովհետև նա հանդես է գալիս երրորդ դեմքով, բացի այդ, վերոհիշյալ ածականները մեկն իրեն վերագրել չէր կարող։ Կոստանդին Մեծի մասին էլ խոսք լինել չի կարող, քանի որ նա վախճանվել էր Գրիգոր Աստվածաբանից կես դար առաջ (տե՛ս F. Halkin, Études byzantines et hagiographie, Analecta Bollandiana, t. LXX, fasc. 3—4, Bruxelles, 1952, p. 363)։ Բայց բացառված չէ, որ այս նախադասությունը հետագա շրջանի ընդմիջարկություն լինի և վերաբերի իսկապես Միրանածինին։

40 Խաղտիք բանակաթեմը կազմակերպվել է Արմենիակների բանակաթեմի մասնատվելուց։ Բյուրին ենթադրում է, որ այն ստեղծվել է Թեոփիլոս կայսեր արշավանքի կապակցությամբ, 837 թ.։ Սկզբում դա Արմենիակների բանակաթեմի մի տուրման էր։ Խաղտիքի մեջ էին մտնում Պողեմոնյաս Պոնտոսի մի մասը և հավանաբար Առաջին Հայքի մի մասը (Եկեղյաց գավառը)։ Նրա սահմաններն էին հյուսիսում Սև ծովը, արևելքում արաբական տիրապետությունը, հարավում Կոլոնիայի և Մրջագետքի բանակաթեմերը, իսկ արևմուտքում՝ Արմենիակոնը։ Մայրաքաղաքն էր Տրապիզոնը, որ միաժամանակ եկեղեցական կենտրոն էր։

Խաղտիք բանակաթեմը առաջին անգամ հիշատակվում է արաբ հեղինակների կողմից։ Իբն Խորդադբեհն այդ մասին գրում է. «12. Խալդիա, որ Հայաստանի (Արմինիա) սահմանակից է և վեց ամրոց ունի». (տե՛ս Գելցեր, Սկզբնավորությունք, էջ 38)։ Հիշատակում է և Իբն ալ-Ֆակիհը. «Հաջորդ սահմանը նրա Գալդիայի նահանգն է. սրա առաջին սահմանն է Հայաստանի շրջանը (և նրա բնակիչները հռոմայեցիների հետ թշնամության մեջ են և ավելի մոտ են Հայաստանին). երկրորդ [սահմանն] խազարների ծովը (Սև ծովը), երրորդը՝ Արմենիակոն նահանգը, չորրորդը նմանապես Արմենիակոն նահանգը։ Իմտրատիղուսի (ստրատեգոսի) նրստոցն է Իկրիտան (?)։ Նրա զորքը բաղկացած է տաս հազար հոգուց, և նրա հետ են երկու տուրմարխ։ Այստեղ կան շրջաններ և ամրոցներ» (տե՛ս Brooks, Arabic Lists, p. 76)։ Հոնիգմանն ենթադրում է, որ Իկրիտաս տեղանունը աղավաղումն է ἀκρίται-ի, որ նշանակում է սահմանապահներ (տե՛ս Honigmann, Die Ostgrenze, S. 53)։ Ըստ Կուդամայի (Գելցեր, Սկզբնավորությունք, էջ 47) Խաղտիքի զորքը բաղկացած էր չորս հազար հոգուց, իսկ Իբն Խորդադբեհի՝ տաս հազար։

Ֆ. Ուսպենսկու հրատարակած Τακτικον-ում հանդիպում են Խաղտիքի ղեկավարության մասին երեք տարբեր հիշատակություններ. Խաղտիքի պատրիկն ու զորավարը»։ Երկրորդ վկայության համաձայն Խաղտիքն ուներ դուքս, իսկ երրորդ՝ արխոնտ։ Բյուրին, հակառակ Գելցերի, որը կարծում է, թե Խաղտիքն սկզբում կլեյսուր էր, ենթադրում է, որ նախքան զորավարության դառնալը, Խաղտիքը դքսություն էր (տե՛ս Bury. IAS, p. 43, ծանոթ. 2 և էջ 13։ Համմ. Pertusi, p. 138)։ 863 թ. դեպքերի կապակցությամբ հիշվում է Խաղտիքի զորավարը։

Վրաց գիտնականները անհիմն կերպով աշխատում են ցույց տալ, որ Խաղտիք բանակաթեմը բնակեցված էր գլխավորապես վրացական ցեղերով՝ լազերով և ճաներով, թեև չեն ժխտում հայ և հույն բնակչության առկայությունը (տե՛ս **И. М. Нодия**, Халдийская фема, Седьмая Всесоюзная конференция византиноведов в Тбилиси, Тезисы докладов Тбилиси, 1965, стр. 29)։ Խաղտիք բանակաթեմի հողերը Հուստինիանոս I կայսեր ժամանակ կազմում էին Առաջին կամ Ներքնագույն Հայք նահանգը, որոնք հետագայում մտան Արմենիակների բանակաթեմի կազմում, որից և բաժանվելով կազմեցին առանձին բանակաթեմ։ Ինչպես Միրանածինն է ցույց տալիս, Խաղտիք բանակաթեմի մեջ էին մտնում Եկեղյաց գավառը և Սպերը, որոնք զուտ հայկական շրջաններ էին։

41 Տե՛ս Քսենոփոն, «Անաբասիս», Գիրք Դ, գլ. 8, 22։

42 Խոսքը Սպերի մասին է, Բարձր Հայքի 7-րդ գավառի, Այժմ Իսպիր, որ գրավում է Ճորոխ գետի վերին հոսանքը (տե՛ս Երեմյան, Հայաստանը, էջ 81)։ Կելցենեն Եկեղյաց գավառն է։

43 Բնագրում Գուշάνον։ Գրության ճիշտ ձևն է Ըշάνον և համապատասխանում է Վժանին, Դերջան գավառում, Տրապիզոնից 155 կիլոմետր հարավ, հարավ-արևելք, Երզնկայից 60 կիլոմետր արևելք (տե՛ս Honigmann. Die Ostgrenze. S. 53. ծանոթ. 6)։ Հ. Տաշյանը հարցականի տակ այդ վայրը նույնացնում է Խորձյանի կամ Խոզանի հետ (տե՛ս նրա Հին Հայաստանի արևմտյան սահմանը, էջ 452)։ Միրանածինը դրության ձևն ուղղելով Գուշάνον-ի, ուզում է կապ տեսնել Աստվածաշնչում հիշատակված գետի անվան հետ։ Այնտեղ ասված է. «Եւ արքայ Ասորեստանեայց զՍամարիա և խաղացոյց զիսրայէլ յԱսորեստանեայս, և բնակեցոյց զնոսա յԱղաթ և յԱբովր՝ զգետովն Գովզանայ և զլեռամբքն Մարաց» (Թագաւորութեանց Դ, 17, 6, Դ, 18, 11)։ Միրանածինի սխալ ստուգաբանության մասին տե՛ս Գ. Դարանֆիլյանի ծանոթագրությունը Գելցերի «Սկզբնավորությունք բյուզանդական բանակաթեմներու դրության» աշխատության 56-րդ էջում։ Գելցերը ևս Գոյզանոնը սխալմամբ նույնացնում է Խոզանի հետ (տե՛ս նույն տեղում)։

44 Հոնիգմանն ենթադրում է, որ Խաղտիք անունը առնչություն չունի հին Խալիդա անվան հետ, այլ՝ աղբյուրներում հիշատակվող սահմանամերձ մի ամրոցի, Խաղդոհաուճի հետ (տե՛ս Honigmann, Die Ostgrenze S. 54)։

45 Միջագետք բանակաթեմը հիշատակում է Կոստանդին Միրանածինը «Արարողությունների մասին» աշխատության մեջ (տե՛ս վերը, էջ 154)։ Շրջանի բնակչությունը հիմնականում հայեր և արաբներ էին։ Նա հյուսիսից սահմանակից էր Կոլոնիայի և Խաղտիքի բանակաթեմերին, արևելքից արաբական տիրապետության, հարավում Լիկանդոսի նորաստեղծ բանակաթեմին, իսկ արևմուտքում՝ Սեբաստիայի։ Զորավարի նստոցի մասին կոնկրետ հիշատակություն չկա աղբյուրներում։

46 Կլեյսուր բառը (հունարեն Κλεισοῦρα, լեռան կապան, կիրճ և այնտեղ շինված բերդ, տե՛ս Ադոնց, Արմատական բառարան, հտ. Դ, էջ 1233), հանդիպում է դեռևս Պրոկոպիոս Կեսարացու «Կառուցումների մասին» աշխատության մեջ (գիրք երրորդ, գլ. 3)։ Բայց Պրոկոպիոսից առաջ հիշա-

տակում է Մովսես Խորենացին. «...զլեառնն Տաւրոս, որ և Սիմ, ղկղեսուրն ամենայն» (Բ, 8)։ Հիշատակում են նաև Ասողիկը, Սամվել Անեցին և ուրիշներ։ Տե՛ս Աճառյան. Նույն տեղում։

47 Միրանածինը մի այլ տեղում (տե՛ս վերը, էջ 26) ցույց է տալիս, որ նրանք չորսն էին. Պանգրատուկաս, Յախնուկաս, Մուղաֆար և Հովհաննես, ընդ որում հիշատակում է նաև նրանց հորը՝ Մանվելին։ Հոնիգմանը Տավտուկասին նույնացնում է Մուղաֆարի հետ, իսկ Հովհաննեսի կապակցությամբ գրում, որ Միրանածինը «Բանակաթեմների մասին» աշխատության մեջ պարզապես մոռացել է նրան հիշատակել (տե՛ս Honigmann, Die Ostgrenze. S. 78, հմմտ. Pertusi, p. 140)։ Փուքրիկասը հայերեն փոքրիկն է, իսկ Ταυτούκας-ը Դավիթ անունն է -ուկ (իկ) վերջածանցով, կամ ավելի ճիշտ Դավթակ անունը (տե՛ս Աճառյան, Անձնանունների բառարան, հտ. Բ, էջ 22)։ Նույնը կարելի է ասել նաև Պանգրատուկասի կապակցությամբ։ Աճառյան, նույն տեղում, հատ. Ա, էջ 359։ Թեոփանեսի Շարունակողը ցույց է տալիս, որ 914 թվականի սեպտեմբեր ամսին «Պանգրատուկաս հայը» (Παγκρατούκας ὁ Ἀρμένης) Ագրիանուպոլիս քաղաքը հանձնեց բուլղարների ցար Սիմեոնին (Theoph. Cont., p. 387. հմմտ. Sym. Mag., p. 723, Georg. Mon. Cont., p.880)։ Խոսքը հավանաբար Մանվելի որդի Պանգրատուկասի մասին է։

Գտնվել է մի արճիճե կնիք, որ կրում է հետևյալ մակագրությունը. Κ(ύριε) βοήθ(ει) Ταυτούκα προέδρῳ καὶ κατεπάνῳ Σαμουσάτω(ν) (Տեր օգնեա՛ Տավտուկասին, Սամուսատի պրոեդրոսին և կատապանին)։ Ենթադրում են, որ խոսքը Մանվելի որդի Տավտուկասի մասին է (տե՛ս Honigmann, Die Ostgrenze, S. 78)։

48 Կոլոնիա բանակաթեմը աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է 863 թ. դեպքերի կապակցությամբ, երբ հանգես է գալիս նրա զորավարը։ Ենթադրվում է, որ կազմակերպվել է Խաղտիք բանակաթեմի հետ միասին՝ Թեոփիլոս կայսեր թագավորության ժամանակ։ Նրանից առաջ Կոլոնիան հավանաբար արխոնտություն էր, որովհետև մեզ է հասել IX—X դդ. արճիճե մի կնիք, որտեղ հիշատակվում է ոմն Գրիգոր «Կոլոնիայի արխոնտ» (տե՛ս Панченко, Каталог моливдовуллов, էջ 367, ծանոթ. 211)։

Կոլոնիա բանակաթեմի կազմի մեջ էին մտնում Առաջին Հայքի հարավային կեսը, Պողեմոնյան Պոնտոսի մի մասը։ Հյուսիսում սահմանակից էր Խաղտիք բանակաթեմին, արևելքում՝ Միջագետք, հարավում՝ Սեբաստիա, իսկ արևմուտքում հավանաբար Խարսիանոն և Արմենիակների բանակաթեմերին։ Կոլոնիա բանակաթեմն այսպիսով իր մեջ էր ընդգրկում ամբողջ հարազատ Փոքր Հայքը՝ իր իրական սահմաններով, որի մայրաքաղաքն էր Նիկոպոլիսը (տե՛ս Տաշյան, Արևմտյան սահմանը, էջ 45, 463)։ Բանակաթեմի զորավարի նստոցն էր Նիկոպոլիս քաղաքը։ Լևոն VI-ը Կոլոնիայի զորավար նշանակեց հայազգի Մանվելի որդիներից Յահնուկասին։ Այդ մասին Միրանածինն հիշատակում է «Կայսրության կառավարման մասին» աշխատության մեջ (գլ. 50)։ Կոլոնիան (վայրն իհարկե, և ոչ բանակաթեմը) հիշատակում է և Մովսես Խորենացին. «առ բարձրաւանդակի միոջ բլրով քարագագաթնիւ, որ այժմ ասի Կողընիայ» (Բ, 4)։

49 Կոլոնիա բառին Միրանածինի տված բացատրությունը սխալ է։ Ավելի ճիշտ է այն բխեցնել լատ. colonia — գաղութ բառից, քանի որ II—III դարում այստեղ հռոմեական զորքերը գաղութ էին հիմնադրել։ Պրոկոպիոս Կեսարացին իր «Կառուցումների մասին» աշխատության մեջ (Գ, 4) քաղաքի հիմնադրումը կապում է Պոմպեյոսի անվան հետ, բայց նա շփոթում է տվյալ դեպքում Կոլոնիան Նիկոպոլիս քաղաքի հետ (տե՛ս Jones, The Cities, էջ 428, ծանոթ. 46 և էջ 172։ Համմ. Pertusi, p. 142)։

50 Բնագրում Φαλακρον ὄρος։ Տեղադրությունն անհայտ։ Ռամզեյը կապ է տեսնում Ֆալակրոն լեռան և Ֆալակրոն բերդի միջև (տե՛ս «Վասիլի կենսագրության» մեջ, էջ 75, և ենթադրում, որ պետք է գտնվեր Կոլոնիա բանակաթեմի հյուսիս կամ հյուսիս-արևմտյան սահմաններում (Ramsey, HGAM, p. 276, ծանոթ. 2)։ Պերտուղին նույնպես կապ է տեսնում այդ լեռան և Φαλακροῦ κάστρον— (Ճաղատ բերդ) միջև, որը Հոնիգմանը (Die Ostgrenze, S. 62) նույնացնում է Ֆրակտինի հետ՝ Ազիզյեից 70 կիլոմետր հարավ, հարավ-արևմուտք, Կապադովկիայի բանակաթեմում (համմ. նաև Երեմյան, Հայաստանը, էջ 88)։ Պերտուղին ենթադրում է, քանի որ այդ լեռը և Նեոկեսարիան հիշյալ բանակաթեմի արևմտյան ուհմանն է, ապա այն պիտք է փնտրել այդ քաղաքից հարավ, հավանաբար ժամանակակից Կարսջամ Դաղը-ում (տե՛ս Pertusi, p. 142)։

51 Բնագրում πόλις Ἀραβρακηνῶν։ Ռամզեյը այն տեղադրում է Սատալայից (Սատաղ) 45 մղոն հարավ (տե՛ս Ramsey, HGAM, p. 275, 276։ Հոնիգմանի կարծիքով գտնվում է Երգնկայից 30 կլմ. արևմուտք, ժամանակակից Մելիք-Շերիֆի շրջակայքում (տե՛ս Honigmann, Die Ostgrenze S. 70)։

52 Սուրբ Եվստրատիոսի վարքը հասել է մեզ և հրատարակված է Մինյի «Հայրաբանության» մեջ. Migne, Patrologia Graeca, t. 116, col. 468—505։

53 Պետրոս Սիկիլիացու մոտ՝ Τιβρικη. հայոց Տիվրիկը (այժմ Դիվրիգի)։ Երբ IX դարի 30-ական թվականներից Բյուզանդիայում սկսվեցին պավլիկյան աղանդավորների հալածանքները, վերջիններս սկզբում աղանդապետ Սերգիոսի, ապա ռազմական գործիչ Կարբեասի գլխավորությամբ անցան արաբական տիրապետության տակ և հիմնադրեցին մի քանի ամրոցներ ու քաղաքներ։ Ամենակարևորը Տիվրիկն էր, որ դարձավ աղանդավորների մայրաքաղաքը։ Այն կործանվեց 872 թ. բյուզանդական զորքերի կողմից։ Ավելի մանրամասն տե՛ս Бартикян, Источники:

54 Մանիքեցիների տակ տվյալ ժամանակաշրջանում բյուզանդական հեղինակները ենթադրում են պավլիկյաններին, որոնց նույնացնում են մանիքեցիների հետ, ելնելով նրանց գաղափարախոսության ընդհանրությունից։ Պավլիկյաններին նվիրած ուսումնասիրությունը պատրիարք Փոտը վերնագրել է «Մանիքեցիների վերածլման մասին»։

55 Խրիսոքիրը (Χρυσοχειρ. թարգմանաբար նշանակում է «Ոսկեձեռնյան») Կարբեասի փեսան էր և պավլիկյանների զինված ուժերի ամենից աչքի ընկնող զորավարը։ Նա իր զորքերով ասպատակում է ոչ միայն Բյուգանդական կայսրության սահմանամերձ շրջանները, այլ և հաջող մարտեր մղելով հասնում է մինչև Նիկիա և Նիկոմեդիա։ Վասիլ I կայսրը դիմեց նրան

հաշտություն կնքելու կոչով, որը սակայն մերժվեց Խրիսոքիրի կողմից։ Խրիսոքիրը մի արշավանքից վերադառնալիս, 872 թ., Տիվրիկից ոչ հեռու գտնվող Վաթիոհաքս վայրում րնկնում է բյուգանդացիների դարանը և սպանվում։ Նրա գլուխը կտրում և ուղարկում են Վասիլ I կայսեր, որը երեք նետ է գամում նրա վրա։ Այդ ամբողջ պատմությունը տե՛ս վերը, Վասիլ կայսեր կենսագրության մեջ ինչպես և պատմիչ Գենեսիոսի (Genesii Regum, p. 121—126)։ Խրիսոքիրը ևս իր արտացոլումն է գտել բյուզանդական Դիգենիս Ակրիտաս էպոսում, հանդես գալով որպես գլխավոր հերոսի՝ Դիգենիսի պապը՝ հոր կողմից։ Ամենայն հավանականությամբ, նա իր արտացոլումն է գտել նաև քրդական «Ոսկեձեռնյան խան» էպոսում (տե՛ս Бартикян, Дигенистика, стр. 48—54)։

56 Կարբեասը (Καρβέας) հայկական Կարպիս (Կարապետ) անունն է։ Կարբեասը ղինվորական գործիչ էր, սկզբում ծառայում էր Կոլոնիայի բանակաթեմում որպես պրոտոմանդատոր. հայացքներով հարում էր պավլիկյաններին։ IX դարի 30-ական թվականներին, երբ աղանդավորների կրած հալածանքների ղոհ դարձավ և Կարբեասի հայրը, վերջինս 5000 աղանդավորների գլուխն անցած, դիմեց արաբներին, դաշինք կնքեց խալիֆայի հետ և արաբական ղորքերի հետ դաշնակցած սկսեց ասպատակել Բյուգանդական կայսրության սահմանամերձ շրջանները։ Վասիլևը (տե՛ս նրա Византия и арабы, II, стр. 202), ելնելով այն բանից, որ արաբական աղբյուրների տվյալների համաձայն Կարբեասը վախճանվել է 863 թ., Պոսոնի ճակատամարտի տարին, ենթադրում է, որ Կարբեասը պետք է սպանված լինի այդ մարտում։ Բայց պատրիարք Փոտը ցույց է տալիս, որ Կարբեասը վախճանվեց հիվանդանալով, և ոչ թե սպանվեց ճակատամարտում։ (Այդ մասին տե՛ս Бартикян, Источники, էջ 166, ծանոթ. 147)։ Կարբեասը երգվել է բյուղանդական Դիգենիս Ակրիտաս էպոսում (այնտեղ հանդես է դալիս Կարո-ես անվան տակ), որպես Դիգենիսի հոր մորեղբայրը։

Միրանածինը սխալվում է, երբ ցույց է տալիս, որ Կարբեասին սպանել է Վասիլ I-ը։ Ինչպես հայտնի է, Կարբեասը մահացել է 863 թ., երբ Վասիլը ո՛չ կայսր էր, ո՛չ էլ կայսերակից։

57 Ինչպես ցույց է տալիս ինքը Միրանածինը Սեբաստիան նախապես կլեյսուր էր (տե՛ս վերը, էջ 154)։ Բանակաթեմի աստիճանին բարձրացավ 913 թ. ոչ շուտ։ Նրա սահմանների մեջ էր մտնում Առաջին Հայքը, այսինքն Փոքր Հայքը և Երկրորդ Հայքի մի մասը։ 930—960 թվականների ընթացքում նրա կազմի մեջ էին գտնվում Եփրատեսիայի որոշ շրջաններ, որովհետև սահման ձգվում էր մինչև Սամոսատ։ Սեբաստիայի բանակաթեմը հյուսիսից սահմանակից էր Կոլոնիային, հյուսիս-արևելքում՝ Միջագետքին, արևելքում՝ արաբական տիրապետություններին և Լիկանդոսին, իսկ արևմուտքում՝ Խարսիանոնին։

58 Սեբաստիա անվան ծագման մասին վկայություն ունի Ստրաբոնը և Ստեփանոս Բյուղանդացին։ Ստրաբոնը գրում է, որ «Կաբիրան Պոմպեյոսը դարձրեց քաղաք և վերանվանեց Դիոսպոլիս, իսկ Պիթոդորիսը ավելի շքեղացրեց այն և անվանեց Սեբաստա» (ԺԲ, 3, 31)։ Սեբաստիան Հուստինիանոս I կայսեր բարենորոգումների ժամանակ դարձավ Երկրորդ Հայքի կենտրոնը։ Իրանից առաջ նա Առաջին Հայքի մայրաքաղաքն էր։

59 Ինչպես Միրանածինն է վկայում (տե՛ս վերը, էջ 154) Լիկանդոսը նախապես կլեյսուր էր և կառավարվում էր կլեյսուրարխի կողմից։ Զորավարության աստիճանին բարձրացավ (այսինքն բանակաթեմ դարձավ) Կոստանդին Միրանածինի թագավորության սկզբում, Զոեյի խնամակալության տարիներին (913/914) և նրա առաջին զորավարը նշանավոր Մելիսան (Մլեհ) էր։ Նրա առաջացումը կապվում է Վասիլ I կայսեր ռազմական հաջողությունների հետ, երբ նա գրավելով Տավրոսի և Անտիտավրոսի բոլոր անցումները, արշավեց դեպի Մելիտենե, Տիվրիկ, Զապետրա և Սամոսատ, տիրանալով լայնատարած շրջաններին։

60 Բնագրում Τζαμανδός։ Համապատասխանում է ժամանակակից Ջամանտրսուին։ Հայկական աղբյուրների Ծամնդավր։ Տե՛ս նաև վերը, «Կայսրության կառավարման մասին» աշխատության, 50-րդ գլխի 55-րդ ծանոթագրությունը։

61 Բնագրում Ἀζῶτον (Ազոտ, թե՛ Ազատ)։ Ուսումնասիրողները վերծանում են «Ազոտ» և նրան նույնացնում Թեոփանեսի Շարունակողի ժամանակագրության մեջ հիշատակված (էջ 387, 722, 878) Ազոտի հետ։ Պերտուզին ենթադրում է, որ այս Ազոտը Դավիթ-Արքայիկի որդին էր (տե՛ս Pertusi, p. 146)։

62 Խոսքը նշանավոր Մլեհի մասին է, հայազգի զորավարի։ Նրա կերպարը իր արտացոլումն է գտել նաև բյուզանդական Դիգենիս Ակրիտաս էպոսում (նա այնտեղ կոչվում է Մելեմենաիս (Մլեհ մե[ն]ծ)։ Բացի Ադոնցի հոդվածից, նվիրված բյուզանդական էպոսին, որտեղ խոսվում է Մլեհի մասին ևս, տե՛ս նաև հետևյալ ուսումնասիրությունները. Κυριακίδης, Βυζαντιναὶ μελέται. I, էջ 320—326։ Grégoire, Mélias le Magistre, էջ 78—88։ Մելիսայի մասին Միրանածինը խոսում է նաև «Կայսրության կառավարման մասին» աշխատության 50-րդ գլխում։

63 Խոսքը 917 թ. Ախելոոսի տակ բյուզանդացիների կրած մեծ պարտության մասին է։ Բյուզանդա-բուլղարական բոլոր պատերազմների մասին մանրամասն տե՛ս հետևյալ արժեքավոր աշխատության մեջ. Българското военно изскуство през феодализма, София, 1958։

64 Լևոն VI-ի պրոտովեստիարիոս Թեոդոսին հիշատակում է Գևորգ Վանականի Շարունակողը (տե՛ս Georg. Mon. Cont., p. 855)։

65 Այսինքն ապագա կայսր Հուստինիանոս I-ը (527—565)։

66 Հուստինոս I կայսրը (518—527), Հուստինիանոսի հորեղբայրը։

67 Այս Թովմայի ինքնության մասին կա երկու ենթադրություն։ Մեկը, որ նրա տակ թաքնված է Հուստինիանոս կայսեր զորավարներից մեկը՝ հայազգի Թովման, որ ըստ վերոհիշյալ կայսեր 31-րդ Նովելլայի (536) նշանակվեց երրորդ Հայքի կառավարիչ, և մյուսը, որին հաճախ է հիշատակում Պրոկոպիոս Կեսարացին որպես հայազգի Հովհաննես Գուզեսի հայր Թովմա (տե՛ս «Պարսկական պատերազմի մասին», գիրք Բ, 30, նաև «Գոթական պատերազմի մասին», գիրք Դ, 8, և 9)։ (Տե՛ս Pertusi, p. 146)։ Ն. Ադոնցը սակայն այդ երկու Թովմաներին նույնացնում է (տե՛ս Адонц, Армения, стр. 178)։

68 Խոսքը Մուհամեդ մարգարեի փեսա Արու Բաքրի մասին է, որ 632 թ. հարձակվեց Կիպրոսի վրա, ավարառեց այն, բայց արաբական տիրապետու-

Բյունը չտարածեց։ Արարները 647 թ. երկրորդ անգամ հարձակվեցին կղզու վրա Մուավիայի գլխավորությամբ։ Մուավիայի և բյուգանդական կայսր Կոստանդին Պոգոնատոսի մահից հետո, Հուստինիանոս Բ-ր և ամիրապետ Աբդալմելիքը 686 թ. տաս տարով վերականգնեցին իրենց նախորդների կողմից կնքված պայմանադիրը, ըստ որի ամիրապետն համաձայնվեց բյուզանգացիներին վճարել օրական հաղար դահեկան, մեկ ստրուկ և մեկ ձի, հավասար կերպով բաժանել Կիպրոսից, Հայաստանից և Վրաստանից գանձվող հարկերը։ Տե՛ս Theophanis Chronographia, p. 355, 361, 365։ Կիպրոսը հետագայում էլ բաղմիցս ձեռքից ձեռք անցավ։ 744 թ. այն գրավեց Կոստանդին ե Կոպրոնիմոսը։ 805 թ. Նրան տիրացավ Հարուն ար-Ռաշիդը։ Բյուղանդացիները վերջնականապես տիրեցին կղզուն միայն Նիկեփոր Բ Փոկասի օրոք (964)։

69 Նշանավոր Ալեքսիոսի տակ հավանաբար ենթադրվում է իսկապես մեծ հռչակ ստացած Ալեքսիոս Մուսելեն, Կրինիտեսների ընտանիքից, անթիպատ պատրիկը, ապա և մագիստրոսն ու կեսարը, որը սակայն աչքի ընկավ Թեոփիլոս կայսեր ժամանակ, որի փեսան էր։ Տե՛ս Theoph. Cont., p. 108—109։ Վասիլի ժամանակ Կիպրոսի գրավման մասին այլ աղբյուրներում խոսք չկա։

ՔՐԻՍՏՈՍԻ ԵԳԵՍԻԱՅԻ ԱՐԴԱՐ ԹԱԳԱՎՈՐԻՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԹՂԹԻ ԵՎ ԱՆՁՆԱԳՐԻ ՊԱՏԿԵՐԻ ՄԱՍԻՆ

1 Թարգմանությունը կատարված է Մինյի հայտնի «Հունական հայրաբանության» մեջ հրատարակված բնագրից. Տե՛ս Migne. Patrologia graeca. t. 113, col. 423—454.

2 Խոսքը 944 թ. Եղեսիայից վարշամակի հետ ժամանած մարդկանց մասին է.

3 Այսինքն հռոմայեցվոց (բյուզանդացիների) կայսեր.

4 Բնագրում՝ ՃՂՃՂՂ. Հայկական միջնադարյան բնագրերում այս բառը թարգմանվում է «իշխան աշխարհի».

5 Խորենացու մոտ՝ «Աբգար Արշամայ».

6 Քանի որ Խորենացու «Պատմության» մեջ հանդիպող այս նամակի թարգմանությունը տառացի համընկնում է Միրանածինի բնագրում մեջբերվածին, նպատակահարմար գտանք տալ Խորենացու տեքստը. Վերջին երեք բառերը միայն («խաղաղությամբ բնակվելու այնտեղ») թարգմանեցինք, քանի որ Խորենացու բնագրում բացակայում էին.

7 Թովմա առաքյալի.

8 Այս բառերը Խորենացու բնագրում բացակայում են.

9 Հունարեն բնագրում՝ «հայր».

10 Հայերենը սրանից հետո ունի. «և կեանս քեզ և որոց ընդ քեզ են շնորհեսցէ».

11 Բնագրում՝ Ματιαλ.

12 Տե՛ս Ավետարան ըստ Ղուկասու, ԻԲ, 44.

13 Բաղևոս առաքյալի, Քրիստոսի 72 աշակերտներից մեկի.

14 Գուցե Ամդու.

15 Նկատի ունի Քրիստոսի այլակերպությունը. Տե՛ս Մատթէոս, ԺԷ, 2, Մարկոս, Թ, 1, Ղուկաս, Ի, 29.

16 Խոսքը պարսից արքա Խոսրով Անուշիրվանի մասին է (531—579). Եղեսիայի պաշարման ժամանակ նկարագրությունը տալիս է Պրոկոպիոս Կեսարացին իր «Պատերազմների մասին» աշխատության Բ դրքի 26—27-րդ գլուխներում.

17 Պատկերի առջև եղած ճրագի մասին Միրանածինը նախապես ոչինչ չի ասել.

18 Թեոփիլոս կայսեր ժամանակ Ալեքսանդրիայի պատրիարքն էր Քրիստափորը (817—848 թթ., մելքիտ), Անտիոքի պատրիարք՝ Հոբը (813—844 թթ., մելքիտ), իսկ Երուսաղեմի պատրիարքն էր Բարսեղը (821—839). Միրանածինի մոտ պարզապես շփոթություն կա.

19 Խոսքը ծայրահեղ պատկերամարտ Թեոփիլոս կայսեր մասին է (829—842 թթ.).

20 Այսինքն Կոստանդնուպոլսի.

21 Խոսքը Ռոմանոս Լեկապենոս կայսեր մասին է (920—944 թթ.).

22 Մ. թ. 944 թ.։

23 Հայերեն Ուռհա։

24 Այսինքն Կոստանդնուպոլսում։ ։

25 Բնագրում ὡς ἀπὸ Ῥώμης κατωνομάζετο։ Սույն երկի լատիներեն թարգմանողը խնդրո առարկա բառերը թարգմանել է «cognomento a Roma»։ Իհարկե, սխալ է։ Հունարեն ἀπό-ն այստեղ նախդիր չէ, այլ արաբերեն «Աբու»-ն (հայր, համեմատիր Ապոկապես-Աբու Խաֆս, Ասլոտաղլե-Աբու Տաղլիբ և այլն)։ Հաջորդ՝ Ῥώμης-ը, եթե արաբական որևէ անվան աղավաղումը չէ, ապա պիտի ենթադրել, որ խոսքը «Հռոմի հոր» մասին է (հայտնի է, օրինակ, արաբ գրող «Իբն Ռումի»-ն)։

26 Օպտիմատոն բանակաթեմի կենտրոնն էր Նիկոմիդիա քաղաքը։

27 Այս «մարգարեական» խոսքերը վկայում են այն մասին, որ սույն երկը գրվել է Ռոմանոս Լեկապենոս կայսեր տապալումից (944 թ. դեկտեմբերի 16) անմիջապես հետո։

28 Վլախերնայի շրջանը գրավում էր հին Կոստանդնուպոլսի հյուսիս-արևմտյան մասը։

29 Նավի տեսակ է։

30 Խոսքը Ռոմանոս Լեկապենոս կայսեր որդիներ Ստեփանոսի և Կոստանդնի մասին է, ովքեր Ռոմանոսի կայսերակիցներ էին հռչակված։

31 Այն է Ռոմանոս Լեկապենոսը։

32 Ոսկե Դուռը բյուզանդական կայսրերի՝ ռազմական արշավանքներից հետո քաղաք մտնելու պաշտոնական դարպասն էր։

33 Ավգուստեոնը Կոստանդնուպոլսի հրապարակներից մեկն էր, որտեղ է գտնվում սբ. Սոֆիայի տաճարը, որի պատճառով էլ այն այսօր կոչվում է Այասոֆյամեյդանը։

34 Սբ. Սոֆիայի։

35 Ադիտոնը եկեղեցու այն մասն է, որտեղ հասարակ մահկանացուն մուտք գործելու իրավունք չուներ։

36 Խրիսոտրիկլին (թարգմանաբար նշանակում է Ոսկե սեղան), տոնախմբությունների ամենանշանավոր դահլիճներից մեկը Կոստանդնուպոլսի Մեծ պալատում, որը գտնվում էր սբ. Սոֆիայի մոտ։ Հիշված է և Անանիա Շիրակացու կողմից «Մարկիանու տրիկլին» ձևով։

37 Ռոմանոս Բ-ին (959—963)։

ՀԱՎԵԼՎԱԾ

1 *Բնագիրը տե՛ս* Basilicorum libri LX, ed. **C. G. E. Heimbach**, t. V, Lipsiae, *1850*, p. *164*։

2 *Բյուզանդական տարին սկսվում էր սեպտեմբեր ամսին, հետևաբար տարեվերջը օգոստոս ամիսն էր։*

3 *Բնագրում* Ἀρμενιακὰ ὑγμόσια *կամ* Ἀρμενιακὰ τελέσματα։

4 *«Վասիլիկա» օրենսգիրքը հսկայածավալ մի գործ է, որը օգտագործման համար լինելով շատ անհարմար, անհրաժեշտություն առաջացավ, որ գործածության մեջ դրվեն նրա ոամառոտ տարբերակները, այսպես կոչված սինոպսիսները (Մեծ և Փոքր), որտեղ օրենքները շարադրված են այրուբենական կարգով։ Ինդրո առարկա օրենքի բնագիրը տե՛ս* Synopsis Basilicorum, In Jus graecoromanum, vol. V, cura **J. Zepi** et **P. Zepi**, Scientia Aalen, *1962*, p. *598*։

5 *Բնագրում* Περὶ ὡρειαρίων τῶν (καὶ) ὑποδεκτῶν։ *Խոսքը, հասկանալի է, հարկահավաքների մասին է։*

6 *«Սինոպսիսը» յուրաքանչյուր հոդվածի համար հղում է տալիս բնագրին՝ «Վասիլիկաներին»։ Հղում տված 56-րդ դրքի, 9-րդ տիտղոսի 1-ին, 2-րդ և 3-րդ գլուխները «Վասիլիկաների» Հեյմբախի հրատարակության մեջ բացակայում են։ 11-րդ տիտղոսի յոթերորդ գլուխը նույնությամբ կա։ Տե՛ս* Basilicorum libri LX, ed. **C. G. E. Heimbach**, t. V, Lipsiae, *1850*, p. *171*։

7 *Բնագիրը տե՛ս* Liber juridicus alphabeticus sive Synopsis Minor ex editione **C. E. Zachariae a Lingenthal**, In Jus graecoromanum, cura **J. Zepi** et **P. Zepi**, vol. VI, Scientia Aalen, 1962, lit. A, c. 33, p. 333—334։

8 *Այս բառերը պատկանում են Հուստինիանոս Ա-ի 21-րդ Նովելլայի վերնագրին, որից «Վասիլիկաների» Փոքր Սինոպսիսի հեղինակները հանգել են եզրակացությունների։*

9 *Բնագրում* Περὶ παραβρομῆς πολέμου։

10 *Բնագիրը տե՛ս* De velitatione bellica domini Nicephori Augusti, In Leonis Diaconis Historiae, Bonnae, 1828, p. 183—189, 196—197։

11 *Իմա արաբների։*

12 *Այն է Համդունը, Հալեպի Նշանավոր ամիրան։ Կոստանդին Միրանածինի օրոք դեռևս Արևելից սպարապետ Նիկեփոր Փոկասը նրան, ինչպես և նրա դաշնակից Տարսոնի և Տրիաոլսի ամիրաներին պարտության մատնեց, որից հետո ձեռնարկեց Կրետեի Նշանավոր արշավանքը, որի ընթացքում նշված ամիրաների դեմ պայքարը հաջողությամբ շարունակեց Նիկեփոր Փոկասի եղբայր Լևոն Փոկասը։ Տե՛ս* Cedr., *II*, p. *340*, *341*։

13 Թեոդորա կայսրուհու եղբայրը։ Նրա մասին մանրամասն տե՛ս վերը, Վասիլ Ա-ի կենսագրության 30-րդ ծանոթագրությունը։

14 Տարսոնը արաբների ձեռքում էր և բյուզանդական սահմանին մոտիկ գտնվող ամուր բերդերից ու հենակետերից մեկը։

15 Մալեինոսները բյուզանդական հայտնի ընտանիք էին, ծագումով խարսիանոնից, որ աչքի ընկավ հատկապես X—XI դարերում։ Նրանք ազգակցական կապերի մեջ էին Նիկեփոր Փոկասի հետ։

16 Խոսքը Նիկեփոր Բ Փոկասի մասին է։

17 Այստեղ առաջին դեմքով խոսում է գրիչը։

18 Բյուզանդական աղբյուրներում վիգլա (լատ. vigilia) են կոչվում պահակատեղիները։

19 Վիգլայում ծառայողը։

20 Կամինովիգլիա էին կոչվում այն վիգլաները, որտեղ խարույկների օգնությամբ տեղեկացնում էին թշնամու շարժումների մասին։ Ծիրանածինի «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին» աշխատության մեջ թվարկվում են այն կամինովիգլիաները, որոնք ընկած էին Տարսոնի դիմացից մինչև Կոստանդնուպոլիս։

21 Բնագրում ἐξπιλάτωρ (լատ. expilator). որ ավազակ, դիակապուտ է նշանակում, բայց մեր կոնտեքստում այդ իմաստը չի արդարացվում։

22 Բնագրում τραπεζῖται։ Բառը հունարեն է (τράπεζα նշանակում է սեղան, τραπεζίτης — սեղանավոր, ժամանակակից տերմինով բանկիր), որ հասկանալի է, ձևված է օտար բառի հիման վրա, վերոհիշյալ հունարեն բառին համահնչուն։ Դեռևս Ա. Գրեգուարը կարծիք էր հայտնել, որ դա պարսկերեն «դարբանդ» բառն է, բայց դարբանդը փակ լեռնանցքն է, այնինչ բյուզանդա-արաբական սահմանի վրա որպես կանոն խոսք է լինում կլեյսուրների, բաց կիրճերի մասին, որոնք պարսկերեն դարբանդ չեն կոչվում, այլ «դարվազ» (տես Դոկտոր Ալի-Աքբար Նաֆիսի, Պարսկերեն բացատրական բառարան, Թեհրան, 1318—1334 (1940—1956)։ Բացի այդ «դարբանդ»-ը պահպանող հատուկ զորքի պարսկերեն անվանում հայտնի չէ։ Տրապեզիտես բառի վերջածանցը —ιτης, որ հատուկ զորամասի առկայության մասին է վկայում, չի արդարացնում Գրեգուարի ենթադրությունը։ Բյուզանդական աղբյուրների տրապեզիտեսը —τραπεζίτης անկասկած պարսկերեն «դարվազբան» կամ «գարվազեբան» բառն է (պահպանվել է նույնիսկ հայկական աղբյուրներում դարպասպան ձևով, տե՛ս Նոր Բառգիրք Հայկազյան լեզվի, հատ. Ա, էջ 606), որ հենց լեռնանցքի պահապանն է։ Պարսկերենի -բան վերջածանցը միանգամայն համապատասխանում է հունարեն -իտեսին —ιτης։

23 Բնագրում τασιναρίους։ Հ. Գելցերը (տե՛ս Սկզբնավորությունք, էջ 62, ծանոթ. 1) տասինարիոս-տասինակիայի մասին գրում է. «Այս՝ հայերեն բառագրոց մեջ չգտնվող անծանոթ բառը տասնարf կամ տասնարիf ըլլալու է. եթե վերջինը ճիշտ է, կարելի է թերևս նաև տասնակիս ընթեռնուլ, որ իմաստին շատ լավ կհարմարի։ Ի չգոյե ուրիշ լավագույն մեկնության, զայս իբր լոկ ենթադրություն հոս հառաջ կբերեմ»։

Ն. Ադոնցը մերժում է այս ենթադրությունը։ Նրա կարծիքով տասինա-

րիոս-տասինակիա բառը բխում է հայերեն «տեսանել» բայից, որի վրա էլ նա ձևում է «տեսունակ»—«տեսնակ» բառը։ Տե՛ս Aux confins militaires de l'Orient byzantin, Hussards, trabans, tasnaks. Byzantion, t. XIII (1938), fasc. I, p. 282։

24 *Այն է Բյուզանդական կայսրության։*

25 *Բնագիրը տե՛ս* Nov. XVIII imp. Nicephori Phocae de fundis militum Armenicorum et homicidarum. In Jus graecoromanum, cura J. Zepi et P. Zepi, Novellae et aurae bullae imperatorum post Justinianum, ex editione C. E. Zachariae a Lingenthal, vol. I, Scientia Aalen, 1962, p. 247--248։

26 *Լակապեն գտնվում էր հայերի ստեղծած Լիկանդոս բանակաթեմում։ Լակապենից էր բյուզանդական կայսր Ռոմանոս Ա Լակապենոսը։*

27 *Պետական հիմնարկության։*


28 *Այսինքն վերահսկիչների գրություններ, հուշագրություններ։*

29 *Ասորիք ասելով բյուզանդական հեղինակները հաճախ նկատի ունեն արաբական խալիֆայությունը, ինչպես և այս դեպքում։*

Բ Ա Ն Ա Լ Ի

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ

22—648



Ադոնց, *Բազրատունյաց փառքը*—Ն. Ադոնց, *Բագրատունյաց փառքը, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս. 1948։*

Ադոնց, *Գիտական դեմքեր*—Ն. Ադոնց, *Հայ գիտական դեմքեր Բյուզանդիայում, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948։*

Ադոնց, *Վասիլ Հայազն*—Ն. Ադոնց, *Վասիլ Հայազն (Մեծագործ կայսր, 867—886), Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948։*

Ադոնց, *Վարդ Մամիկոնյան* —Ն. Ադոնց, *Վարդ Մամիկոնյան (856—866), Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948։*

Ակինյան, *Մատ. հետ.*—Ն. Ակինյան, *Մատենագրական հետազոտություններ, հատ. Դ, Վիեննա, 1938։*

Աճառյան, *Անձնանունների բառարան*—Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա—ե, Երևան, 1942—1962։*

Աճառյան, *Արմատական բառարան*—Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան, հատ. Ա—է, Երևան, 1926—1935։*

Անդեոսրն, *Ուղևորություն*—Յ. Կ. Կ. Անդեոսրն. *Հետազոտական ուղևորություն ի Պոնտոս, թարգմ. Հ. Տաշյանի, Վիեննա, 1919։*

Ասողիկ—Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան *Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885։*

Բարթիկյան, *Բյուզանդական վիպերգությունը*—Հ. Բարթիկյան, *Բյուզանդական «Դիգենիս Ակրիտաս» վիպերգությունը և նրա նշանակությունը հայագիտության համար, «Պատմա-բանասիրական Հանդես», 1963, № 1։*

Գրիգոր Մագիստրոս—Գրիգոր Մագիստրոսի *Թղթերը, Բնագիրն առաջաբանով և ծանոթություններով առաջին անգամ ի լույս ընծայեց Կ. Կոստանյանց. Ալեքսանդրապոլ, 1910։*

Գելցեր, *Սկզբնավորությունք*—Հ. Գելցեր, *Սկզբնավորությունք բյուզանդական բանակաթեմերու դրության, թարգմ. Գ. Գարանֆիլյանի, Վիեննա, 1903։*

Գիրք Թղթոց—*Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901։*

Դիվան հայ վիմագրության—*Դիվան հայ վիմագրության, Պրակ 1, Անի քաղաք, Կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966։*

Դրասխանակերտցի—Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ *Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912։*

Երեմյան, *Հայաստանը*— Ս. Տ. Երեմյան. *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի. (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963։*

Այստեղ նշված են ծանոթագրություններում հաճախ հանդիպող աշխատությունների վերնագրերը։ Հաղվադեպ հանդիպող աշխատությունների վերնագրերը ծանոթագրությունների մեջ բերված են լրիվ։

Հապավումների բանալի

Թովմա Արծրունի—Թովմայի վարդապետի Արծրունւոյ *Պատմութիւն Տանն Արծրունեաց, ի լոյս էած Ք. Պ[ատկանյան], Ս. Պետերբուրգ, 1887։*

Հյուբշման, *Տեղվո անունները*—Հ. Հյուբշման, *Հին հայոց տեղվո անունները, Հայոց աշխարհին պատմական տեղագրության մասին ուսումնասիրություններով, թարգմ. Հ. Բ. Պիլեգիկեան, Վիեննա, 1907։*

Հովհաննիսյան. *Դրվագներ*—Ա. Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, Երևան, 1957։*

Ղևոնդ—*Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887։*

Մատթեոս Ուռհայեցի—Մատթէոսի Ուռհայեցւոյ *Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898։*

Մարկվարտ, *Վրական բագրատոնյաց ծագումը*—Հ. Մարկվարտ *Բագրատունյաց ծագումը. Ա. Հայ Բագրատունյաց ճյուղագրությունը։ Բ. Վրական Բագրատունյաց ծագումը, գերմ. թարգմ. Հ. Մ. Հապողյան, Վիեննա, 1913։*

Միխթար Գոշ—Միխիթարայ Գոշի *Դատաստանագիրք հայոց, Իրաւաբանական հետազօտութիւնք հանդերձ ծանօթութեամբ Վահան ծ. վրդ. Բաստամեանց. Վաղարշապատ, 1880։*

Մովսես Խորենացի—Մովսէսի Խորենացւոյ *Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913։*

Ն. Բ. Հ. Լ.—*Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, հատ. Ա—Բ, Վենետիկ, 1836—1837։*

Վարդան—*Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862։*

Տաշյան, *Արևմտյան սահմանը*—Հ. Տաշյան, *Հին Հայաստանի արևմտյան սահմանը, Վիեննա, 1948։*

Տեր-Ղևոնդյան. *Ամիրայությունները*—Ա. Տեր-Ղևոնդյան, *Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965։*

Սամվել Անեցի—Սամուէլի Խահանայի Անեցւոյ *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893։*

Адоиц, Армения—*Н. Адоиц*, Армения в эпоху Юстиниана, С.-Петербург, 1908.

Анчабадзе, Из истории—*З. Анчабадзе*, Из истории средневековой Абхазии (VI—XVII вв.) Сухуми, 1959.

Бартикян, Дигенистика—*Р. М. Бартикян*, Дигенистика в курдском эпосе о Златоруком хане? Вестник Общественных наук АН Арм. ССР. 1967 г., № 1.

Бартикян, Заметки—*Р. М. Бартикян*, Заметки о византийском эпосе о Дигенисе Акрите, Византийский Временник, том XXV, 1964.

Бартикян, Источники—*Р. М. Бартикян*, Источники для изучения истории павликианского движения. Ереван, 1961.

Беляев, Byzantina—*Д. Б. Беляев*, Byzantina, Очерки, материалы и заметки по византийским древностям, т. I—II (=Записки Русского Археологического Общества, V—VI, С.-Петербург, 1891—1893); т. III (=Записки Классического Отдела Русского Археологического Общества, IV, 1907).

Васильев, Византия и арабы, т. I—*А. А. Васильев*, Византия и арабы,

том I, Политические отношения Византии и арабов за время Аморийской династии, С.-Петербург, 1900.

Васильев, Византия и арабы, т. II—*А. А. Васильев*, Византия и арабы, том II. Политические отношения Византии и арабов за время Македонской династии, С.-Петербург, 1902.

Кулаковский, История—*Ю. Кулаковский*, История Византии, том III, Киев, 1915.

Липшиц, Очерки—*Е. Э. Липшиц*, Очерки по истории византийского общества и культуры в VIII—первой половине IX века, М., 1961.

Минорский, История—*В. Минорский*, История Ширвана и Дербенда, М., 1963.

Псамафийская хроника—*Псамафийская хроника*, Предисловие, перевод, комментарий А. П. Каждана. В кн. Две византийские хроники X века, М., 1959.

Adontz, Aŝot Erkatᶜ—*N. Adontz*, Aŝot Erkatᶜ ou de fer, roi d'Arménie de 913 a 929. Études Armeno-Byzantines, Lisbonne, 1965.

Adontz, L'âge—*N. Adontz*, L'âge et l'origine de l'empereur Basile I (867—886). Études Armeno-Byzantines, Lisbonne, 1965.

Adontz, Les fonds—*N. Adontz*, Les fonds historiques de l'epopee byzantine Digenis Akritas, Études Armeno-Byzantines, Lisbonne, 1965.

Adontz, Les Taronites—*N. Adontz*, Les Taronites en Arménie et a Byzance, Études Armeno-Byzantines, Lisbonne, 1965.

Adontz, Notes I—*N. Adontz*, Notes Armeno-Byzantines, Études Armeno-Byzantines, Lisbonne, 1965.

Adontz, Notes II—*N. Adontz*, Notes sur le livre des Cerémonies, Études Armeno-Byzantines, Lisbonne, 1965.

Ahrweiler, Byzance et la mer—*H. Ahrweiler*, Byzance et la mer. La marine de guerre, la politique et les institutions maritimes de Byzance aux VIIe—XVe siècles, Paris, 1966.

Ahrweiler, Recherches—*H. Glykatzi-Ahrweiler*, Recherches sur l'administration de l'Empire Byzantin aux IX—XI siecles, École Française d'Athènes, Paris, 1960.

Ahrweiler, Histoire—*H. Ahrweiler*, Histoire et la géographie de la région de Smyrne, Centre de Recherche d'Histoire et Civilisation Byzantines, Travaux et Mémoires, I, Paris, 1965.

Bartikian, La généalogie—*H. Bartikian*, La généalogie du Magistros Bagarat, Catépan de l'Orient, et des Kékaumenos, Revue des Études Arméniennes, Nouvelle série, tome II, Paris, 1965.

Bréhier, La Civilisation—*L. Brehier*, La Civilisation byzantine, Paris, 1950.

Bréhier, Les Institutions—*L. Brehier*, Les Institutions de l'Empire Byzantin, Paris, 1949.

Bréhier, Vie et mort—*L. Bréhier*, Vie et mort de Byzance, Paris, 1947.

Brooks, Arabic lists—*E. W. Brooks*, Arabic lists of the byzantine Themes, Journal of Hellenic Studies, vol. XXI, 1901.

Հապավումների բացատրություն

Brosset, Additions—*M. Brosset*, Additions et Éclaircissements à l'Histoire de la Géorgie, depuis l'antiquité jusqu'en 1469, St.-Petersbourg, 1851.

Bury, IAS—*J. B. Bury*, The Imperial Administrative System in the ninth century with a revised text of the Kletorologion of Philotheos, London, 1911.

Canard, Histoire—*M. Canard*, Histoire de la dynastie des Hamdanides de Jazira et de Syrie, I. Paris, 1953.

Canard, Les Hamdanides—*M. Canard*, Les Hamdanides et l'Arménie, Annales de l'Institut d'Études Orientales t. VII, 1948.

Cedr. II—*Georgius Cedrenus-Ioannis Scylitzae* ope ab Immanuele Bekkero supletus et emendatus, tomus alter, Bonnae, 1839.

Charanis, The Armenians—*P. Charanis*, The Armenians in the Byzantine Empire, Lisboa, 1963.

DAI I—*Constantine Porphyrogenitus* De Administrando Imperio, Greek, text edited by *Gy. Moravcsik*. English translation by *R. J. H. Jenkins*, Budapest, 1949.

DAI II—*Constantine Porphyrogenitus* De Administrando Imperio, vol. II Commentary by *F. Dvornik, R. J. H. Jenkins, B. Lewis...*, edited by *R. J. H. Jenkins*, London, 1962.

De Cer. I—*Constantini Porphyrogeniti* imperatoris De Cerimoniis aulae byzantinae libri duo graece et latine e recensione *Io. Iac. Reiskii*, vol. I, Bonnae, 1829.

De Cer. II—*Io. Iac. Reiskii* Commentarii ad Constantinum Porphyrogenitum de Cerimoniis aulae byzantinae, Bonnae, 1830.

Epanagoge—Epanagoge legis Basilii et Leonis et Alexandri, In Jus graecoromanum, cura *J. Zepi* et *P. Zepi*, vol. II, Scientia Aalen, 1962.

Genesii Regum—*Genesii* Regum ex recognitione Caroli Lachmani, Bonnae, 1834.

Georg. Mon. Cont.—*Georgii Monachi* Vitae Imperatorum recentiorum, In „Theophanes Continuatus...", ex recognitione Immanuelis Bekkeri, Bonnae, 1838.

Grégoire, Διγενὴς Ἀκρίτας—*H. Grégoire*, Ὁ Διγενὴς Ἀκρίτας. Ἡ Βυζαντινὴ ἐποποιία στὴν ἱστορία καὶ στὴ ποίηση, New York, 1942.

Grégoire, Mélias le Magistre—*H. Grégoire*, Notes epigraphiques VII, Mélias le Magistre, Byzantion, t. VIII, 1933.

Guilland, Le domestique—*R. Guilland*, Études sur l'histoire administrative de Byzance, Le domestique des scholes, Revue des Études Byzantines, t. VIII, 1950.

Guilland, Les titres auliques—*R. Guilland*, Études sur l'histoire administrative de l'Empire Byzantin, Les titres auliques des eunuques. Le protospathaire. Byzantion, t. XXV—XXVI—XXVII (1955—1956—1957), fasc. 2.

Guilland, Proconsul—*R. Guilland*, Études sur l'histoire administrative de

l'Empire Byzantin, Proconsul-Ἀνθύπατος. Revue des Études Byzantines, t. XV, 1957.

Honigmann, Die Ostgrenze—*E. Honigmann*, Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363 bis 1071 nach griechischen, arabischen, syrischen und armenischen Quellen, Bruxelles, 1935.

Honigmann, Une „Scala" geographique—*E. Honigmann*, Une „Scala" géographique copte-arabe et l'emplacement de Romanopolis en Arménie, In Trois Mémoires posthumes d'Histoire et de Géographie de l'Orient Chretien, „Subsidia Hagiographica", No 35, Bruxelles, 1961.

Janin, Const. byz.—*R. Janin*, Constantinople byzantine, Paris, 1950.

Janin, La topographie—*R. Janin*, La topographie de Constantinople byzantine, Revue des Études Byzantines, t. VIII, 1950.

Markwart, Streifzüge—*J. Markwart*, Osteuropäische und ostasiatische Streifzuge, Leipzig, 1903.

Markwart, Südarmenien—*J. Markwart*, Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930.

Minorsky, Studies—*V. Minorsky*, Studies in Caucasian History, London, 1953.

Moravscik, Byzantinoturcica, Bd. I—*Gy. Moravscik*, Byzantinoturcica, Bd. I, Die byzantinische Quellen der Geschichte der Türkvölker. Bd. II, Sprachreste der Türkvolker in den byzantinischen Quellen, Zweite durchgearbeitete Auflage, Berlin, 1958.

Pertusi—Constantino Porfirogenito De Thematibus. Introduzione, testo critico, commento a cura di *A. Pertusi* (Studi e Testi 160), Città del Vaticano, 1952.

Ramsey, HGAM—*W. M. Ramsey*, The Historical Geography of Asia Minor, London, 1890.

Sophocles, Greek Lexicon—*E. A. Sophocles*, Greek Lexicon of the Roman and Byzantine Periods (From B. C. 146 to A. D. 1100), vol. I—II, New York.

Sym. Mag.—*Symeonis Magistri* ac *Logothetae* Annales, In „Theophanes Continuatus...", Bonnae, 1838.

Theoph. Chron.—*Theophanis* Chronographia, ed. C. de Boor, t. I—II, Lipsiae, 1883.

Theoph. Cont.—*Theophanes Continuatus* Chronographia, ex recognitione *Immanuelis Bekkeri*, Bonnae, 1838.

Toumanoff, Studies—*C. Toumanoff*, Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963.

Toumanoff, The Bagratids—*C. Toumanoff*, The Bagratids of Iberia from the Eighth to the Eleventh Century, Le Muséon, t. LXXIV, Louvain, 1961.

Vasiliev, Histoire—*A. Vasiliev*, Histoire de l'Empire Byzantin, t. I, Paris, 1932.

Vita Ignatii—*S. P. N. Ignatii* archiepiscopi Constantinopolitani Vita sive certamen, Auctore Niceta servo Christi cognomento Davide Paphlagone, Migne, Patrologia Graeca, t. 105.


Հապավումների բացատրություն

Vogt, Basile I—*A. Vogt*, Basile I, empereur de Byzance et la civilization byzantine à la fin du IXe siecle, Paris, 1908.

Vogt, Commentaire—Constantin VII Porphyrogénète, Le Livre des Ceremonies, t. I, Livre I, Chapitres 1—46 (37), Texte etabli et traduite par *Albert Vogt*, Paris, 1935, Commentaire.

Zachariae von Lingenthal, Geschichte—*Zachariae von Lingenthal*, Geschichte des griechische-römischen Rechts, Berlin, 1892.

ՅԱՆԿԵՐ



ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաս, տե՛ս Ապասակ
Աբգար թագավոր Ծղեսիայի, 177—185
Աբդելոմնել, 78
Աբդեռահիմ, 11, 12
Աբուբախարոս, արաբ խալիֆա, 173
Աբու Բաֆր, տե՛ս Աբուբախարոս
Աբու-լ-Ասվատ, տե՛ս Ապոլեսֆուետ
Աբու-լ-Համիդ, տե՛ս Ապելհամիտ
Աբու-լ-Վարդ (Ա), տե՛ս Ապելվարտ (Ա)
Աբու-լ-Վարդ (Բ), տե՛ս Ապելվարտ (Բ)
Աբու Սալիմ, տե՛ս Ապոսելմիս
Աբուսաջ, տե՛ս Ապոսաաա
Աբու Սևադա, տե՛ս Ապոսևատա
Աբրահամ, Նահապետ հրեից, 66
Աբրամիոս, Սամոսատի եպիսկոպոս, 190
Ագաթիաս պատմիչ, 167
Ագապիոս Վանական, 20
Ադրանասե (Ադրանասեր), Իբերիայի կուրապաղատ, Աշոտի որդին, 5, 7, 14, 19—23
Ադրանասե մագիստրոս, Ադրանասեի եղբորորդին, 17
Ադրանասե մագիստրոս, Պանգրատի որդին, 19
Ադրիանոս գորավար, 95, 96
Ագոտ (Ագա՛տ, Աղո՛տ), Անգուրիեեի փեսան, 171
Ալեքսանդր Մակեդոնացի, 36
Ալեքսանդր, Վասիլ Ա-ի որդին, 66, 143
Ալեքսիոս հայ, Կիպրոսի գորավար, 173
Ախամետ, տե՛ս Ախմետ
Ախմետ (և Ախամետ) Ապոլեսֆուետի որդեգիրը, 11, 12
Ականիոս վկա, 104
Ամբրոն, Մելիտենեի ամիրա, 75
Ամոու, Աբգար թագավորի մեծամեծներից, 183
Ամեր ամիրա, տե՛ս Ամբրոն
Անանիա, Աբգար թագավորի ծառան, 178, 180, 182
Անաստասիա, Վասիլ Ա-ի դուստրը, 143
Անաստասիա վկա, 103
Անաստասիա, Թեոփիլոս կայսեր դուստրը, 144
Անաստասիոս կայսր, 197
Անդրեաս գորավար, 78—80
Անդրեաս Նախակոչ, 42
Անթեմիոս, պրետորյան էպարխոս, 197
Աննա, Լևոն Չ-ի և Զոեի դուստրը, 143
Աննա, Վասիլ Ա-ի դուստրը, 145
Աննա սուրբ, 42, 103
Անգուրիեե, 171
Անտիգոնոս պատրիկ, կեսար Վարդասի որդին, 43, 48
Աշոտ իշխանաց իշխան (Աշոտ Ա Բագրատունի), 10, 11
Աշոտ (Աշոտ Բ երկաթ) 11, տե՛ս և Աշոտիկ
Աշոտ Կիսկասի (Վխկացի) պատրիկ, Պանգրատի որդին, 19—23
Աշոտ կուրապաղատ, Ադրանասե կուրապաղատի որդին, 22, 23
Աշոտ կուրապաղատ, Դավթի եղբայրը, 19, 20—22
Աշոտ, Պանգրատի որդին, 14
Աշոտ պրոտոսպաթար, պատրիկ, Կրիկորիկի որդեգիրը, 5, 6, 8, 9
Աշոտիկ (Աշոտ Բ երկաթ), 7, տե՛ս և Աշոտ
Ապամբաս, տե՛ս Մարիանոս Ապամբաս

Ապասուկ, Սմբատ Ա-ի որդին, 10, 11
Ապավղելե, Անազարբայի ամիրան, Ամբրոնի որդին, 75
Ապելխամիտ, Ապելվարտ Ա-ի որդին, 10
Ապելմուզե, Ապոսնատայի որդին, 12
Ապելվարտ (Ա), Մանազկերտի ամիրան, 10
Ապելվարտ (Բ), Մանազկերտի ամիրան, 12
Ապոզանեմ, Տարոնի իշխան Կրիկորիկի եղբայրը, 6—10
Ապոլեսֆուետ, Ապոսնատայի եղբայրը, 10—13
Ապոսատա, Ատրպատականի ամիրա, 10, 11
Ապոսելմիս, Ապոսնատայի եղբայրը, 10—13
Ապոսնատա, Մանազկերտի ամիրան, Ապելվարտ Ա-ի թոռը, 10—13
Ապոստյուպես, տե՛ս Լևոն Ապոստյուպես
Ատենուլֆոս, Կապուայի և Բենեվենտոսի տերը, 148
Ատրներսեհ, տե՛ս Ադրանասե
Արիաբար, Կապադովկիայի թագավոր, 168
Արկադիոս կայսր, 165
Արշակ Մեծ (Պարթև), 33—36, 51
Արշակունիներ, 33, 34, 51
Արսեն պրոտոսպաթար, 27, 28
Արտաշես, տե՛ս Արտաքսերքսես
Արտավան, Վասիլ Ա-ի նախահայրը, 34
Արտաքսերքսես, 167
Արրավոնիտես գորավար, 17
Արքայիկ, 5, 6
Արքելայոս, Կապադովկիայի թագավոր, 168
Աֆիլլես, 38

Բաղաամ, 192
Բասիլես, մարտիրոս, 169
Բասիլիսկոս, մարտիրոս, 169
Բարսեղ Մեծ, 123, 169
Բարսեղ պատրիարք, 187
Բելիսարիոս գորավար, 166
Բերսաբե, 13
Բոյիլաս, տե՛ս Պետրոնաս Բոյիլաս
Բրիաբեոս, 62

Գաբրիել հրեշտակապետ, 104
Դսգիկ Արծրունի, տե՛ս Կակիկ
Գեորգիոս մագիստրոս, Աբազգիայի էքսուսիաստես, 19
Գեորգիոս Պեգաս, 65, տե՛ս և Պեգաս պատրիկ
Գոեմար, Սալերնոյի տերը, 148
Գոեֆեր, Սալերնոյի տերը, 148
Գուրգեն, տե՛ս Կուրկեն
Գրիգոր Նազիանզացի Աստվածաբան, 169
Գրիգոր Նյուսացի, Բարսեղ Մեծի եղբայրը, 169
Գրիգոր ՍմաՆչելագործ, 169, 170
Գրիգոր, Տարոնի իշխան, 5, տե՛ս և Կրիկորիկ, Տարոնացի
Գրիգորաս, 7
Գրյուլլոս, 53, 54

Դամիանոս պատրիկ, 47
Դանելիս, պելոպոնեսցի մեծահարուստ, 42, 43, 99, 101
Դանիել, Դանելիսի ազգական, 101
Դավթակ (Դավթուկ), տե՛ս Տավտուկաս
Դավիթ թագավոր հրեից, 13, 48
Դավիթ, իբերների նախահայրը, Սպանդիատի եղբայրը, 13, 14
Դավիթ, Լևոն Ապոստյուպեսի որդին, 93
Դավիթ մագիստրոս (Մեծ), Աշոտ կուրապաղատի եղբայրը, 20—22
Դավիթ Մամպալիս, Սմբատի որդին, 18, 19
Դեմետրիոս վկա, 103
Դիակոնիցես, Խրիսոխիրի բիկնապահր, 72, 73, 97
Դիոկլետիանոս կայսր, 28
Դիոմեղես վկա, 40, 99
Դիոնիսոս, 57

Եղիա Թեսբացի մարգարե, 94, 100, 104, 106, 111
Եղիշե մարգարե, 111
Եճակ, 46
Եպիփան Կիպրացի, 157
Եպիփան պրոտոսպաթար, 147

Սվագրիոս, 187
Սվղոկիա կայսրուհի, Վասիլ Ա-ի կինը, 60, 109, 143
Սվղոկիա, Լևոն Զ-ի և Զոեի դուստրը, 143
Սվղոկիա, Լևոն Զ-ի կին Թեոփանոյի դուսարը, 143
Սվղոկիա Վայրենի, Լևոն Զ-ի երրորդ կինը, 143
Սվլալիոս, Սդեսիայի եպիսկոպոս, 186—188
Սվստաթիոս Արգիրոս, 26, 27
Սվստրատիոս վկա, 170
Սվփեմիա սուրբ, 66, 144

Զաքարիա պապ, 3
Զենոբիոս պրոտոսպաթար, 101
Զենոն կայսր, 34
Զոե (Կարբոնոպսինա), Լևոն Զ-ի չորրորդ կինը, Կոստանդին Միրաճածինի մայրը 27, 145
Զոե սուրբ, 104
Զոե, Ստիլիանոս Զաուցայի դուստրը, Լևոն Զ-ի երկրորդ կինը, 143
Զուրվանելի պրոտոսպաթար, 16

Էմիլիանոս վկա, 103
Էսմահ, Տարսոնի ամիրա, 87
Էրինիաներ, 57
Էրոս, 57

Թադեոս առաքյալ, 182—184
Թեկլա, Թեոփիլոս կայսեր դուստրը, 141
Թեմիստիոս, Խերսոնի տեր, 28
Թեոդոս Մեծ կայսր, 136, 163
Թեոդոս, Լևոն Զ-ի պրոտովեստիարիոս, 171
Թեոդորոս պրոտոսպաթար, Պանգրատի որդին, 147
Թեոդորա կայսրուհի, 46, 58, 143, 144
Թեոդորոս հայ բարգման, 5
Թեոկտիստե, Թեոդորա կայսրուհու մայրը, 144
Թեոկտիստոս, Վրիենիոս պրոտոսպաթար, 23
Թեոփանո, Լևոն Զ-ի առաջին կինը, 113
Թեոփանո կայսրուհի, Ռոմանոս Բ-ի կինը, 131
Թեոփիլակտոս, Բագարատ Տարոնացու աները, 9
Թեոփիլակտոս Բիմբիլիդես, պրոտոսպաթար, 28
Թեոփիլիցես Պեղեոմենոս հայ, 41, 42, 44, 45
Թեոփիլոս կայսր, 23, 58, 136, 143, 144, 187
Թեոփիլոս հայ, տե՛ս Թեոփիլիցես
Թեոփիլոս պատրիկ, Հովհաննես Կուրկուասի եղբայրը, 15, 17
Թոռնիկ, Կրիկորիկի եղբորորդին, Ապոգաճեմի որդին, 7—9
Թոռնիկ, տե՛ս Նիկոլայոս Թոռնիկ
Թովմա առաքյալ, 143, 180, 182
Թովմա մեծատուն (Զ դար), 172
Թովմա պատրիկ, հայ, 44

Իգնատիոս պատրիարք, 53, 54, 73, 115.
Իեզդեկոս, պարսից դեսպան, 128
Ինգեր, 47
Իորդանես պատրիկ, 165
Իսահակ, հաճապետ հրեից, 66
Իսահակ Արշակունի (Սահակ Պարթև), 51
Իսավրացի (Լևոն Գ կայսր), 144
Իսավրացիներ, տե՛ս Լևոն Գ, Կոստանդին ե
Իսմայիլ հայ, 26
Իսմայիլի որդիներ, տե՛ս Իսմայելացիներ
Իրենե կայսրուհի, 3, 35
Իրենե, կեսար Վարդասի դուստրը, 141

Յալակոն պատրիկ, 14
Յանդուխոս Կապուայի և Բենեվենտոսի տերը, 148
Յավրենտիոս վկա, 113
Լևոն Ագելաստոս պրոտոսպաթար, 24
Լևոն Ապոստոլոպես զորավար, 92, 93
Լևոն Ա կայսր, 34
Լևոն Զ կայսր, 5, 7, 8, 13—15, 25—28, 60, 77, 97, 101, 110, 120, 135, 136, 143, 145, 154, 155, 163, 170
Լևոն Կատակիլաս մագիստրոս, 136

Լևոն հայ պրոտոսպաթար, Արսեն պրոտոսպաթարի հայրը, 27, 28
Լևոն հայ, Մսյիկտեսի ընկերը, 35
Լևոն մագիստրոս, Նիկեփոր Բ Փոկասի եղբայրը, 132, 133
Լևոն, որդի Վասիլ Ա-ի (Լևոն Զ), 65, 118, 119
Լևոն, Սմբատիկի որդին, 146, 147
Լևոն փիլիսոփա, 45, 46
Լիկինիոս, 169
Լիկուրգոս օրենսդիր, 38
Լուդովիկոս, Ֆրանկիայի ռեխս, 84

Խամարետոս կուբիկուլարիոս, 93
Խամբլա ամիրա, 199
Խարսիոս, 168
Խոզ, տե՛ս Հեմերիոս պատրիկ
Խոսրով արմա պարսից, 128, 185, 187, 189
Խրիսոխիր, պավլիկյանների առաջնորդ, 67, 70—73, 97, 170

Կալլինիկոս վկա, 113
Կալֆուս, Կարբեոնի արաբների զորավար, 81
Կակիկ (Գագիկ Արծրունի), 7, տե՛ս և Վասպարականիտես
Կապնոգենես, տե՛ս Կոստանդին Կապնոգենես
Կավալլինոս, տե՛ս Կոստանդին Ե կայսր
Կատակալոն մագիստրոս, 14
Կարապետ, տե՛ս Մկրտիչ Կարապետ
Կարբեաս, պավլիկյանների առաջնորդ, 170
Կեսարիոս, Գրիգոր Աստվածաբանի եղբայրը, 169
Կեստա Ստիպպիոտես, 80
Կլեյենես, Վասիլ Ա-ի նախահայրը, 34
Կղեմես վկա, 107
Կյուրոս, պարսից արմա, 39
Կոզմա պատրիկ, 147
Կոստանդ կայսր, 136
Կոստանդ պատրիկ, պրոտոսպաթար և մանգլավիտ, 20—23
Կոստանդին Լիվոս, պրոտոսպաթար, 5, 6
Կոստանդին Ե կայսր, 144
Կոստանդին, Թեոփիլոս կայսեր որդին, 144
Կոստանդին Զ կայսր, 35
Կոստանդին Է Միրանածին կայսր, 14, 27, 28, 33, 77, 131, 135, 143, 145, 149, 151—154, 163, 177, 192
Կոստանդին Կապնոգենես, 56
Կոստանդին Մեծ կայսր, 33, 36, 111, 136, 143, 163
Կոստանդին Մելեհնոս պատրիկ, 199
Կոստանդին պատրիկ հայ, 44
Կոստանդին, պրետորյան էպարխոս, 125
Կոստանդին, որդի Ռոմանոս Բ կայսեր, 131
Կոստանդին, որդի Վասիլ Ա-ի, 60, 65, 74, 77, 116, 118, 143
Կոստաս տրիբուն, 28
Կուրկեն մագիստրոս, Աշոտ Կիսկասիի փեսան, 20—22
Կուրկեն, Պանգրատի որդին, 19
Կուրկուաս, տե՛ս Հովհաննես Կուրկուաս
Կուրկուաս ապստամբ, 74
Կուրտիկ հայ, Լոկանայի տերը, 68
Կրեվատաս, Աղվանից իշխան, 152
Կրիկորիկ, Վասակիոսի և Պազունի եղբայրը, 26
Կրիկորիկ (Գրիգոր), Տարոնի իշխանը, 4—10: Տե՛ս և Տարոնացի, Գրիգոր
Կրինիտես Արոտրաս, պրոտոսպաթար, Պելոպոնեսի զորավար, 24
Կրինիտես պատրիկ, 150
Կրինիտես պրոտոսպաթար և բարգման, 8, 9
Կրիսկոնորոս, Սավրոմատոսի հայրը, 28
Կրում, բուլղարների խան, 36

Հազար, 78
Հելենե, Վասիլ Ա-ի դուստրը, 145
Հելիոն զորահրամանատար, 185
Հեմերիոս պատրիկ, 58, 145
Հեսիխիոս պատմիչ, 167
Հեսպերիոս վկա, 104
Հերակլ կայսր, 14, 34, 111, 112, 164, 167, 173
Հերոդես, Հրեաստանի թագավոր, 168
Հերոդոտոս, 168
Հիսուս Քրիստոս, տե՛ս Քրիստոս

Համայակ, տե՛ս Մայիկտես
Հոբ, 116, 172
Հոբ պատրիարք, 187
Հոմերոս, 77, 120
Հովհան Աստվածաբան, 110, 113
Հովհան Ոսկեբերան, 169
Հովհաննես սպաթար, 17
Հովհաննես, Դանելիսի որդին, 43, 101
Հովհաննես Թալասսոն, Ֆիալայի պրոտոսպաթար, 27, 28
Հովհաննես Լիդոս, 167
Հովհաննես Կուրկուաս, 15, 17, 18
Հովհաննես Կրետացի, Պելոպոնեսի զորավար, 90
Հովհաննես, Մանվել հայի որդին, 26
Հովհաննես պրեպոզիտոս, 133
Հովհաննես Պրոտևոն, պրոտոսպաթար, 23, 24
Հովսեփ պարակիմոմենոս, 131—133
Հուլիանոս կայսր, 136
Հուլիոս Կեսար, 163, 168, 171
Հուստինիանոս Ա կայսր, 112, 113, 143, 144, 165—168, 172
Հուստինոս կայսր, 172

Ղուկաս ավետարանիչ, 103

Մամաս վկա, 52, 59
Մայիկտես (Համայակ), Վասիլ Ա-ի նախահայրը, 35
Մանի, աղանդապետ, 97
Մանուիլ մագիստրոս, 93
Մանվել եպիսկոպոս, 36
Մանվել հայ, Տեկիի տերը, 26
Մավրիկիոս կայսր, 166
Մարիա, Թեոփիլոս կայսեր դուստր, 144
Մարիա, Վասիլ Ա-ի դուստրը, 145
Մարիամ Աստվածածին, 79
Մարիանոս Ապամբաս, 132
Մարիանոս, Վասիլ Ա-ի եղբայրը, 144
Մաքսենտիոս, տե՛ս Ստեփանոս Կապադովկացի
Մելիաս (Մլեհ), Լիկանդոսի զորավար, 26, 27, 171, 172
Մենանդրոս, պատմիչ, 167
Մենիպպոս, պատմիչ, 167
Միքայել (Բ) կայսր, 136, 144
Միքայել Գ կայսր, 23, 41, 42, 44, 47, 48, 50—52, 57, 59, 61, 81, 84, 120, 136, 143, 144
Միքայել կոմմերկիարիոս, 9
Միքայել հրեշտակապետ, 70, 100, 113
Միքայել Ուրանոս պատրիկ, 150
Մլեհ, տե՛ս Մելիաս
Մկրտիչ Կարապետ, 103, 113, 145
Մշակ, կապադովկացիների նախահայր, տե՛ս Մոսոխ
Մոկիոս մարտիրոս, 103
Մոսոխ, կապադովկացիների նախահայր, 168
Մուղաֆար, Մանվել հայի որդին, 26
Մուտաղոն (Օմուրտագ), բուլղարների խան, 36

Յախնուկաս, Մանվել հայի որդին, 26

Նազարիոս վկա, 103
Նասար, ծովակալ, 27, 90—92
Նավկրատիոս, Բարսեղ Մեծի եղբայրը, 169
Նարսես ներքինի, Հուստինիանոս Ա-ի զորավարը, 3, 4
Ներովդ, 46
Նեմեսիս, 80, 81
Ներոն կայսր, 57
Նիկետաս Օորիֆաս, ծովակալ, 82, 84, 88, 89
Նիկեփոր Փոկաս զորավար, 96, 97
Նիկեփոր Բ Փոկաս կայսր, 131—134, 198, 199, 203
Նիկոլաս Թոռնիկ, 132
Նիկողայոս հահանայապետ, 104

Ուրիա, 13

Զորտվանել, տե՛ս Զուրվանելի

Պագուն, Վասակի և Կրիկորիկի եղբայրը, 26
Պան, 54
Պանզրատ, Աշոտ կուրապաղատի եղբայրը, 19

Պանգրատ, Գրիգոր Տարոնացու որդին, 8, 9
Պանգրատ, Թեողորոսի հայրը, 147
Պանգրատ մագիստրոս, Սմբատի որդին, 17—19
Պանգրատ, Սպանդիատի եղբայրը, Դավթի որդին, 14,
Պանգրատուկաս, Մանվել հայի որդին, 26, 170
Պանկալո, Վասիլ Ա-ի մայրը, 144
Պասֆալիոս զորավար, 132
Պավսանիաս Դամասկացի, պատմիչ, 167
Պեգաճ պատրիկ, 50, 51
Պեղևոմենոս, տե՛ս Թեոփիլիցես Պեղևոմենոս
Պետրոնաս, Թեողորա կայսրուհու և կեսար Վարդասի եղբայրը, 144
Պետրոնաս Բոյիլաս, 17
Պետրոս առաքյալ, 102, 107
Պետրոս, Բարսեղ Մեծի եղբայրը, 169
Պլատոն վկա, 103
Պողարոն պրոտոսպաթար, 27, 28
Պոլիբիոս, 167, 168
Պողոս առաքյալ, 102, 107, 110
Պոլադ, 72
Պուլքերիա, Թեոփիլոս կայսեր դուստրը, 144
Պուպլիոս անթիպատոս, 165
Պրոկոպիոս Կեսարացի, 167
Պրոկոպիոս պրոտովեստիարիոս, 92, 93
Ռոմանոս Ա Լեկապենոս կայսր, 7, 8, 14—16, 20, 23, 24, 26, 27, 147—149, 151—154, 189
Ռոմանոս Բ կայսր, 131, 132, 135
Ռոմանոս սուրբ, 103

Սաիդ Ապոֆապս, Կրետեի ամիրա, 88
Սահակ Պարթև, տե՛ս Խահակ Արշակունի
Սամբաս, 81
Սամփսոն, 46
Սանդավարինոս, 118, 119
Սավրոմատոս, Կրիսկոնորոսի որդին, 28, 29
Սատիրոս, 54
Սեմաս, 75
Սենեբերիմ, Ասորեստանի թագավոր, 79
Սիմեոն պատրիկ պրոտոասեկրետ, 20
Սիմեոն, բուլղարների ցար, 171
Սինուտես Ներֆինի, օփսեոս դրոմոսի խաւուալար, 5
Սկլուրոս Կարյուանդենացի, 167
Սմբատ, Դավիթ Մամպալիի որդին, 19
Սմբատ իշխանաց իշխան (Սմբատ Ա Բագրատունի) 5, 10, 11, 13
Սմբատ Մեծ իբերացի, Արտանուջի տերը, 18
Սմբատ պատրիկ և լոգոթետ, կեսար Վարդասի փեսան, 48—51, 65
Սմբատ, Վասիլ Ա-ի եղբայրը, 144
Սմբատիկ, Լեոնի հայրը, 146, 147
Սպանդիատ, իբերների նախահայր Դավթի եղբայրը, 13, 14
Սոլդանոս, Աֆրիկայի ամիրա, 81, 84—87
Սոլոն օրենսդիր, 38
Ստեփանոս Մաթեմատիկոս, 112
Ստեփանոս Մաֆսենտիոս, կապադովկացի զորահրամանատար, 96, 97
Ստեփանոս Նախավկա, 103
Ստիպպիոտես, տե՛ս Կեստա Ստիպպիոտես
Ստրաբոն, 167, 168

Վասեես պրեպոզիտոս և սակելլարիոս, 139
Վասսակիոս, Կրիկորիկի և Պազուճի եղբայրը, 26
Վահան պրեպոզիտոս, տե՛ս Վասեես պրեպոզիտոս
Վայանոս պրոտոստրատոր, 93
Վայինի, տե՛ս Եվդոկիա Վայինի
Վասիլ Ա կայսր, 28, 33, 36—47, 49—52, 55, 56, 60, 61, 64, 65, 67, 73, 74, 77, 81, 82, 97—99, 102, 107, 108, 112, 113, 116, 119, 120, 135, 136, 138, 143—145, 170
Վասիլ, Կոստանդին Միրաճածինի եղբայրը, 143
Վասիլ (Բ), Ռոմանոս Բ կայսեր որդին, 131
Վասիլ Ներֆինի պրոտոսպաթար, 60
Վասիլ պարակիմոմենոս (Ա), 6
Վասիլ պարակիմոմենոս (Բ), 133

Վասիլիկինոս, 50, 57
Վասպրականիտես (Դավիկ Արծրունի), 15
Վարդաս, Վեռն Ապոստյուպեսի որդին, 93
Վարդաս կեսար, 41—43, 47, 136, 144, 199
Վարդաս մագիստրոս, Նիկեփոր Բ Փոկասի հայրը, 132
Վարդաս Պլատիպոդես պրոտոսպաթար, 24
Վարդաս, Վասիլ Ա-ի որդին, 143
Վարվառա վկա, 110
Վարցապեդոն մանգլավիտ, 93

Տայիլ, 75
Տաճատ, 7
Տավտուկաս, Մանվել հայի որդին, 170
Տարոնացի, 5—9, 124: Տե՛ս և Կրիկորիկ
Տիտաններ, 57
Տոբիաս, 182, 183
Տրայանոս կայսր, 163

Փիլիպոս առաքյալ, 103

Փոկաս սուրբ, 113
Փոտ կրետացի, 88, 89
Փոտ պատրիարք, 73
Փուրիկաս, 170
Փուրիկ, տե՛ս Փուրիկաս
Փրկիչ, տե՛ս Քրիստոս

Քիլաս, 58
Քիրոն կենտավրոս, 38
Քսենոփոն, 170
Քրիստափոր պատրիարք, 187
Քրիստոս, 14, 36, 43, 50, 60, 66, 79, 89, 94, 100, 103, 104, 114, 115, 134, 135, 151—153, 177—186, 190, 191, 194, 198

Օգոստոս Սեբաստոս, 163, 168
Օմուրտագ, տե՛ս Մուտրագոն
Օյնիատես, 87
Օրեստես, Խարսիանոնի զորավար, 26

Ֆեղիմոս, Ամասիայի եպիսկոպոս, 169
Ֆիլոթեոս ատրիկլին, 155

ՅԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ասորեստանցիներ, 170
Ասորիներ, 168
Արաբներ, 26, 93, տե՛ս և իսմայելացիներ, կիլիկեցիներ, հագարացիներ, պարսիկներ, սարակինոսներ, տարսոնցիներ
Բոսպորացիներ, 28
Բուլղարներ, 36, 44, 114, 123, 124, 153, 157
Թալմատացիներ, 84
Թիրենեփաններ, 81
Եգիպտացիներ, 164
Երովպացիներ, 164
Ջախումներ, 81
Ջեխեր, 29
Էգերիտներ, 23—25
Թուրքեր (հունգարացիներ), 147, 153
Իբերներ, 13—19, 22
Խազարացիներ, 165
Իսմայելացիներ, 68, 81, 131, 133, 198, տե՛ս և արաբներ, կիլիկեցիներ, հագարացիներ, պարսիկներ, սարակինոսներ, տարսոնցիներ
Լագեր, 28
Լանգոբարդներ, 4, 148
Լիկաոնացիներ, 165
Հազարներ, 147
Խերսոնիտներ, 28
Հոմաոներ, 81, 83
Կանաիտներ, 81
Կաստոդովկացիներ, 167—169
Կիլիկեցիներ (արաբներ), 199
Հագարացիներ, 7, 17, 74, 81, 84, 87, 91, 92, 95, 97, 132, 151—154, 166, տե՛ս և արաբներ, իսմայելացիներ, կիլիկեցիներ, պարսիկներ, սարակինոսներ, տարսոնցիներ
Հայեր, 15, 33—35, 145—150, 167, 168, 171, 172, 198, 202—204
Հնդիկներ, 114, 164
Հույներ, 170—172
Հունգարացիներ, տե՛ս թուրքեր
Հոմայեցիներ, 3—5, 7, 9—13, 15, 21—23, 26—28, 33, 34, 36, 42—44, 50, 70, 72, 81, 83, 87, 94, 99, 125, 131, 135, 138, 150, 151, 166, 168, 171, 173, 184, 189, 198, 199, 202
Հրեաներ, 114, 179, 182, 184
Մակեդոնացիներ, 166
Մարդայիտներ, 91, 96, 146—148, 150
Մարեր, 34, տե՛ս և պարսիկներ (Իրանի)
Միհաճոսիրոսներ, 168
Միլինգներ, 23—25
Նեմիցներ, 152
Պարթևներ, 33, 34
Պարսիկներ (Իրանի), 14, 34, 124, 125, 166, 168, 185, 186, 188, տե՛ս և մարեր
Պարսիկներ (սուրբներ), 11, 13, 15
Պեչենեգներ, 153
Պիսիդացիներ, 165
Ռինոտաններ, 81
Ռոսներ (ռուսներ), 114, 115, 147, 149
Սամարացիներ, 179
Սարակինոսներ, 4, 5, 14, 15, 18, 22, 25—27, 34, 35, 82, 91, 96, 138, 173, 181, 189, 190, տե՛ս և արաբներ, իսմայելացիներ, կիլիկեցիներ,

հագարացիներ, պարսիկներ, տարսոնցիներ
Սարմատներ, 28
Սևորդիներ, 151
Սերբեր, 81, 83, 153
Սլավներ, 24, 25
Սլավոններ, 23—25, 47
Սկլավեններ, 92, 148, 149
Սկյութներ, 4, 36, 81
վարյագներ, տե՛ս ֆարգանացիներ
Տարսոնցիներ (արաբներ), 199
Տերվունիոտներ, 81
Տուլմացիներ, 149, տե՛ս և դալմատացիներ
Փոյուգիացիներ, 165
Քաղդեացիներ, 170, 187
Քրդեր, 78
Ֆարգանացիներ (վարյագներ), 147

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաղգիա, 15, 19, 20, 152, 158
Աբարա ամրոց, 67
Աբարա տուրմա, 27
Աբղելու ամրոց, 69
Ագաւգետոսի տոպոտեբեսիա, 25
Աղանա հաղամ, 168
Աղատա, 76, 77
Ադրիանուպոլիս, 35, 36
Ացիա, 152
Ալանիա, 151, 152
Ալբանիա, 152
Ալեքսանդրիա, 150, 157, 187
Ալիս գետ, 28, 167
Ալցիկե, 11—13
Ականսի, 21
Ականոս, 25
Աղվանք, տե՛ս Ալբանիա
Ամալֆե, 3, 153
Ամանտիա, 96, 97
Ամասիա հաղամ, 158, 167—169
Ամեր ամրոց, 69
Ամինսոս հաղամ, 30, 169
Ամորիոն հաղամ, 164
Անազարբա հռոամ, 75
Անատոլիկա, 165
Անատոլիկոն բանակաթեմ, 25, 135, 137, 138, 147, 154—157, 164—166, 199
Անդալի ամրոց, 75
Անդրասպա հաղամ, 169
Անկյուրա հաղամ, 158
Անծևացիք, տե՛ս Ավղան
Անծիտ, տե՛ս Խանգիտ
Անտիոք հաղամ, 125, 150, 157, 158, 187, 202
Անպիուսի գավառ, 10—12
Ապաքունիք, տե՛ս Ապախունի
Առաջին Հայք, 158, 171
Ասիա, 137, 157, 166, 185
Ասորիք, 4, 19, 74, 93—95, 146, 147, 191, 204
Ասորիք Կյուլե, 202
Ասմոսատ, 25, տե՛ս և Սամոսատ
Ասպոնաս, 25
Ասպուրական (Վասպուրական), 151, տե՛ս և Վասպարական
Ավզան (Անծևացիք), 151
Ավնիկ ամրոց, 15—18
Ավրիլիանե, Կոստանդնուպոլսի թաղամաս, 103
Ավքսենտիոսի լեռ, 138
Ատտալիա հաղամ, 146, 147, 164
Արաբիա Նոջանիկ, 154
Արածանի, տե՛ս Արսինոս
Արգաուբ ամրոց (Արգովան), 70
Արգեոս լեռ, 75, 78, 138
Արևելք, 81, 97, 135, 149, 156, 157, 164—166, 200
Արևմուտք, 81, 83, 85, 93, 96, 97, 137, 146, 155, 156, 200
Արզես, 10—13
Արզիճ, 20
Արիարարիա լիճ, տե՛ս Կարատիա լիճ
Արծկե, տե՛ս Ալցիկե
Արմամենտարիա, Կոստանդնուպոլսի թաղամաս, էջ 46
Արմենիական բանակարեմեր, 201
Արմենիակների բանակարիմ, 14, 25, 29, 30, 71, 135, 137, 138, 154—157, 167—169
Արսինոս գետ, 69

Արտանուջ Ֆաղաք, 18—22
Արցախ, տե՛ս Ղարաբաղ
Ագարա, 19, 151
Անխազիա, տե՛ս Աբազգիա
Ափայա, 42
Ասիազեյա, 25
Ասիկա, 82, 85, 90, 92, 152

Բաբիրսոս գետ, 113
Բալբայոն, 25
Բասեան, տե՛ս Ֆասիանե
Բավարիա, 152
Բաւետա, 25
Բարիս ամրոց, 82, 84
Բենեվենդոս, 3, 85, 86
Բերկրի, տե՛ս Պերկրի
Բյուզանդիա, տե՛ս Հռոմանիա
Բյուզանդիոն, 33, 164, 166, տե՛ս և Կոստանդնուպոլիս
Բյութանիա, 158, 165, 166
Բոսպորոս, 28
Բուլղարիա, 36, 44, 153
Բուկելլարեների բանակաբեմ, 25, 26, 29, 30, 135, 137, 138, 154—157, 165, 168
Բուտոմա, 82

Գալատիա, 125, 158, 165
Գալատիա Երկրորդ, 158
Գալլիա, 152
Գայետե, 3, 153
Գանգրա Ֆաղաք, 158
Գերմանիա, 152
Գերմանիկիա (Մարաշ) Ֆաղաք, 76, 138
Գերոնտ Ֆաղաք, 76
Գոյգանոն գետ, 170
Գոյգանոն (Վժան), 170
Գրիգորասի պրոաստիոն, 7, 9

Դազիմոն, 135, 137, 168
Դալմատիա, 81—83, 155
Դարա Ֆաղաք, 124, 125
Դեգիկ, տե՛ս Տեհի
Դետերոն, Կոստանդնուպոլսի թաղամաս, 103
Դերգենե (Դերջան), 29
Դերջան, տե՛ս Դերգենե
Դիոկլիա, 153
Դյուրախիոն Ֆաղաք, 155
Դոարոն, 159
Դորիլեոն Ֆաղաք, 134, 135
Դվին, տե՛ս Տիվի

Եգիպտոս, 94, 153, 178, 202
Եղեսիա, 177, 178, 182, 184—191
Եկեղյաց դավառ, տե՛ս Կելցենե
Եպիսկոպիոս, 29
Եվդոկիայի տոպոտերեսիա, 25
Եվրոպա, 157, 164
Եվխիթյան պարանոց, 113
Երջանիկ Արաբիա, տե՛ս Արաբիա Երջանիկ
Երկրորդ Հայք, 158, 171
Երուսաղեմ, 13, 14, 150, 157, 179, 187
Եփեսոս, 157
Եփրատ գետ, 68, 69, 191
Եփրատիա, 26, 27

Զալիխոս, 169
Զախլումոն, 153
Զակինթոս, 90
Զապետրա, 68
Զարնուխ գետ, 68
Զեգանեոն, 159
Զեխիա, 29
Զմյուռնիա, 165

Էգեական ծով, 88
Էգեական ծով բանակաբեմ, 146, 155
Էգիլոս ամրոց, 138
Էնդելեխոն ամրոց, տե՛ս Ռոբամի ամրոց
Էոլիս, 165
Էրիպոս, 87
Էրաֆս գետ (Ֆասիս), 17, 18
Էրեմոսիկայայի ամրոց, 75

Թաբոր լեռ, 183
Թագավորական Ջերմուկներ, 159
Թեոդոսուպոլիս (Կարին), 15—18, 159
Թեսաղոնիկե, 155
Թերմա, 169
Թրակեսիոն բանակաբեմ, 48, 49, 135,

137, 138, 145, 147—150, 154—157
Թրակիա, 40, 157, 158
Թրակիա բանակաթեմ, 138, 149, 154—157

Իբերիա, 5, 7, 19, 20, 22, 151
Իթոռա, 169
Իլիրիա (Ադոռի աշխարհ), 18
Իկոնիոն, 158, 164
Իսավրիա, 164, 165
Իտալիա, 3, 81, 82, 84, 91, 148

Լանգոբարդիա, 3, 4, 82, 83, 92, 96, 101, 147, 148, 155
Լազիկա, 158, 159
Լակապե, 204
Լավոդիկիա, 147, 158
Լարիսա, 26, 27
Լեոնտոկոմիս, 154
Լիդիա, 158, 165, 166
Լիկանդոս գաղաթ, 26, 27, 154, 172
Լիկանդոս բանակաթեմ, 171
Լիկաոնիա, 158, 164, 165, 167, 168
Լիկիա, 158, 164
Լոկանա, 68
Լոլոն (Լոլոս) ամրոց, 74, 78, 138, 168

Խազարիա, 153
Խալիատ, տե՛ս Խլիատ
Խախոն ամրոց, 69
Խալկոպրատիա, Կոստանդնուպոլսի թաղամաս, 112
Խաղտիք բանակաթեմ, 6, 9, 14, 15, 20, 26, 69, 138, 154—157, 170
Խամուխ, 29
Խանցիտ, 25, 26
Խաչեն, 151
Խարան, 190
Խարկա, 11, 12
Խարտեզիկի բանակաթեմ, 148—150
Խարսիանոն բանակաթեմ, 25—27, 71, 135, 137, 138, 154—157, 168
Խերսոն, 28—30, 155
Խերտ, 10
Խլաթ, տե՛ս Խլիատ
Խլիատ (և Խալիատ), 10—13
Խոզան, 25
Խորվաթիա, 153
Խրիսովուլլոն, 80
Խրիսուպոլիս, 132
Խրյուսա, 152

Ծամնգավ, տե՛ս Ցամանդոս
Ծանարհ, տե՛ս Ցանարիա

Կաբորիկիոն, 135
Կալաբրիա, 3, 4, 92
Կալլիպոլիս, 76
Կամախա, 26
Կամուլիանոն, 159
Կայսոսի ամրոց, 75
Կանալ, 153
Կապադովկիա, 25, 75, 93, 125, 131, 135, 138, 154—157, 159, 165, 167, 169, 199
Կապադովկիա Առաջին, 168
Կապադովկիա Երկրորդ, 158, 169
Կապադովկիա Երրորդ, 169
Կապադովկիա Մեծ, 165, 167
Կապադովկիա Փոքր, 165, 167, 168
Կապուա, 3, 85, 86, 153
Կասե, 25
Կասպից Դռներ, 152
Կատաբատալա գաղաթ, 74
Կատաոնիա, 167
Կատասամայի ամրոց, տե՛ս Կայսոսի ամրոց
Կարատիա լին, 168
Կարիա, 158, 164, 166
Կարնատայս (Տաոս-Կաոնի), 151
Կարս, 10
Կարթեդոն, 81, 86, 91, 94
Կեդոնիա, 152
Կելցենե, 7, 8, 26, 170
Կենխրեոն, 89
Կեպոյ, 48
Կեսարիա գաղաթ, 25, 75, 78, 131, 135, 137, 157, 159, 168, 169, 171, տե՛ս և Մազակա
Կերամիսիոն, 68
Կեցեոն ամրոց, 15, 16
Կեֆալոնիա, 90, 155

Կիլիկեոտների բանակաթև, 28, 146, 147, 154, 165
Կիլիկիա, 168, 169, 202
Կիկիսոս, 159
Կիկլադյան կղզիներ, 158
Կիպրոս, 146, 173
Կլավդիուպոլիս, 158
Կյուբիստրա, 169
Կյուզիկոս, 158
Կյուլե Ասորիք, տե՛ս Ասորիք Կյուլե
Կյումբալեոս, 26
Կյումենա, 20
Կյուրիզոս լեռ, 138
Կոզովիտ, 151
Կոլոնիա շրջան, 26, 78, 168
Կոլոնիա հայոք, 53, 135, 159, 167
Կոլոնիա բանակաթև, 14, 69, 138, 154—157, 170, 171
Կոլորիս, 19
Կոմանա, 169
Կումմատա, 25
Կոմոդրոմոս, 25
Կոստանդնուպոլիս, 3, 20, 29, 34, 35, 40, 125, 127, 156, 157, 169, 172, 177, 192, տե՛ս և Բյուզանդիոն
Կոտիայոն, 51, 93
Կուրի, 11, 12
Կուրնբոս, 89
Կուրոն ամրոց, 169
Կուսկ, 151
Կուկուսոս, 76
Կուտակիոն ամրոց, 70
Կուրտիկիոսի ամրոց, 69
Կրեվատադես, 152
Կրետե, 47, 88, 145, 148—150, 169

Հադրիանուպոլիս, 158
Հալեպ, 202
Հայաստան, 13, 19, 151, 159, 198
Հարք, տե՛ս Խարկա
Հերդոմոն, Կոստանդնուպոլսի բաղամաս, 113, 138
Հելենոպոլիս, 125
Հելենոպոնտոս, 158
Հելլադա, 24, 87, 155
Հելլեսպոնտոս, 88, 158, 165
Հելոս, 95
Հեմեմոնտոս, 158
Հեպտասկալոն, 104
Հեր, տե՛ս Խերտ
Հերակլիա, 157
Հերակլիուպոլիս, 158
Հիերապոլիս, 158, 181
Հիերամս, նավահանգիստ, 95
Հնդկաստան, 154
Հոնիա, 49, 165, 166
Հոնորիաս, 158
Հուդայի երկիր, 180
Հռեգեդոա, 169
Հռեգեպոդանդոս, 169
Հռեգիոն, 113
Հոոդենդոս, 168
Հոոդոպե, 158
Հոոդոպոլիս, 159
Հոոդոս, 158
Հոոմ, 3, 28, 70, 83, 84, 150, 152, 157
Հրեաստան, 168

Ճաղատ ամրոց, 75
Ճաղատ լեռ, 170

Մաբոտ, տե՛ս Հիերապոլիս,
Մազակա, 168, տե՛ս և Կեսարիա
Մալագինա, 134, 135
Մալեաս, 89
Մակեդոնիա, 33—35, 40, 43
Մակեդոնիս բանակաթև, 138, 147, 149 154—157
Մայինա, 23
Մանազկերտ, տե՛ս Մանցիկիերտ
Մանցիկիերտ, 10—12, 16
Մաստատոն, 17, 18
Մարաշ, տե՛ս Գերմանիկիա
Մարկիանուպոլիս, 158
Մեանդրոս գետ, 48
Մեբոնե, 89—91
Մելիտենե, 25, 26, 68, 69, 158, 167
Մելոես ամրոց, 74
Մեծ Ասիա, 164
Մեծ Հայք, 10, 11, 151
Մեմբիջ, տե՛ս Հիերապոլիս,
Մեոնիա, 165
Մեսեմբրիա, 93
Միդեոն, 78

Միջագետք Ասորվոց, 164
Միջագետք բանակաբեմ, 14, 26, 154, 170
Միսիա, 165
Միսխիոն, 20
Միրիոկեֆալոս, 25
Միրոս, 164, 165
Մծբին, տե՛ս Նիսիբիս
Մյուրոն, 158
Մոխաճք, տե՛ս Մոկան
Մոկան (Մոխաճք), 152
Մոկիսոս, 158, 159, 169
Մոկք, 151
Մոնեմվասիա, 95
Մոպսուեստիա, 168
Մորավիա, 153
Մուկիլոս լեռ, 138
Մուրգուլի, 121
Մուրինիխս ամրոց, 69

Նագիանզոս հաղաք, 159, 169
Նավպակտոս հաղաք, 101
Նեապոլիս, 3, 153
Նեոկեսարիա հաղաք, 158, 167, 169, 179
Նիկե հաղաք, 34
Նիկիա հաղաք, 125, 158
Նիկոմեդիա հաղաք, 20, 125, 158
Նիկոպոլիս (Փ. Ասիայի), 17, 26, 170
Նիկոպոլիս (Հունաստանի), 155
Նիսիբիս հաղաք, 124
Նյուսա հաղաք, 25, 159, 168
Նոր Հռոմ, 81, տե՛ս և Կոստանդնուպոլիս

Շիրվան, տե՛ս Սարվան

Ոլընուտ (Ողնուտ), 9

Պագե, 29
Պադասիա, 76
Պաղեստին, 178, 202
Պամֆիլիա, 158, 164, 166
Պանոնիա, 4, 81
Պանորմոն, 91
Պապագիա, 29
Պապիա, 3, 4
Պատվական Խաչի տոպոտերեսիա, 25
Պատրա հաղաք, 42, 89
Պարամոկաստելլոն ամրոց, 75
Պարնասոս հաղաք, 159, 169
Պարսկաստան, 10, 14, 22
Պաֆլագոնիա, 158, 165, 166
Պաֆլագոնիա բանակաբեմ, 29, 30, 135, 138, 154—157
Պեգե, Կոստանդնուպոլսի բաղամաս, 103, 111
Պելոպոնես, 23—25, 42, 89—91, 99, 100
Պետրա հաղաք, 159
Պետրիոն, Կոստանդնուպոլսի բաղամաս, 73, 104
Պերգե, 158
Պերկրի (Բերկրի), 10—13
Պիսիդիա, 158, 164
Պիսինունտ հաղաք, 158
Պլատանիոն, 145, 146
Պյուլե, 138
Պոդանդոս (Պոդենդոս), 79, 168
Պոնտական ծով, 167, 168
Պոնտոս, 28, 29, 158, 165
Պուլխերիանե, Կոստանդնուպոլսի բաղամաս, 112
Պսիլոկաստելլոն ամրոց, 75
Պսիխրու լեռներ, 164
Պսոմաթեոս, Կոստանդնուպոլսի բաղամաս, 9
Պրիկոնեսոս, 88
Պրինե, 145, 146
Պրոմուտոս, Կոստանդնուպոլսի բաղամաս, 145

Ռախատ ամրոց, 70
Ռապսակիոն ամրոց, 69
Ռաուսիոն, Դալմատիայի մայրաքաղաք, 82, 84
Ռավդոս, Կոստանդնուպոլսի բաղամաս, 103
Ռոբամ ամրոց, 75
Ռոիա, 190, տե՛ս և Եդեսիա
Ռոմանիա, 13, 19, 22, 30, 147, 203
Ռոմանոպոլիս հաղաք, 25, 26
Ռոսա, Դալմատիայի հաղաք, 82
Ռուսիա, 153

Սաեսինոն, 159

Սալամաս, 10
Սալամաստ, տե՛ս Սալամաս
Սալերնո (նաև Սալերինոս), 3
Սամոս լեռ, 138
Սամոս բանակաթեմ, 146, 154
Սամոսատ հաղաք, 8, 190, 191, տե՛ս և Ասմոսատ
Սանիանա, 25
Սապաֆսի, 29
Սապիկիու, 29
Սասիմա, 169
Սարատ, 190
Սարդինիա, 153
Սարդիս, 158
Սարոս գետ, 76
Սարվան (Շարվան-Շիրվան), 152
Սաֆսոնիա, 152
Սեբաստիա հաղաք, 158
Սեբաստիա բանակաթեմ, 26, 27, 135, 145, 146, 154, 171
Սեբաստուպոլիս (Սուխումի), 158
Սևերինայի ամրոց, 97
Սեորղյաց երկիր, 151
Սելևկիա բանակաթեմ, 135, 137, 157
Սիդե հաղաք, 158
Սիկիլիա, 3, 81, 91, 94, 95, 155
Սինոպե, 169
Սիսպիրիտես, 170
Սիրակուսա հաղաք, 94, 95
Սյումպոսիոն, 26, 27
Սյունաղոն, 158
Սյունիք, 151
Սոսթենիոս, Կոստանդնուպոլսի պաղատ, 113
Սալաքե ամրոց, 67
Սալեր, տե՛ս Սիսպիրիտես
Սուեյե, 92
Ստենոն, 113
Սուեիանոս ամրոց, 70
Ստոմիա, 146
Ստորին Դեկատորա, 82
Ստրիմոն, 155
Սուրուիյիանե, Կոստանդնուպոլսի պատաան, 103
Սրեհիսևարաֆս, 29
Սրմանց, տե՛ս Յերմացու

Վաքիոհաֆս, 71, 135
Վայոց ձոր, 151
Վասպարակա (Վասպուրական), 7, 151, տե՛ս և Ասպուրակա
Վասպուրական, տե՛ս Վասպարակա, Ասպուրակա
Վենետիկ, 153
Վերիասախ (Վերին աշխարհ վրաց), 151
Վերին աշխարհ վրաց, տե՛ս Վերիասախ
Վերինուպոլիս, 25
Վժան, տե՛ս Գոյզանոն
Վլախերնա, Կոստանդնուպոլսի պաղատաս, 192
Վրեզան, 152

Տաճատի պրոաստիոն, 7
Տամատարխա, 29
Տաոս Կաոնի, տե՛ս Կարնատայս
Տավիա, 25
Տավրիկե, 167
Տավրոս, 75, 164, 165, 167, 168
Տավրուպոլիս, 158
Տարանտա, 68, 92
Տարոն, 4—7, 9, 123, 124, 151
Տարսիա, 165
Յարսոն, 78—80, 87, 88, 135, 138, 146, 199
Տափակ ֆար, 51
Տեկի, 26
Տեֆրիկե, 67, 68, 72, 73, 78, 97, 135, 138, 170
Տիվի (նաև Տիվիոն)—Դվին, 10, 15
Տիվրիկ, տե՛ս Տեֆրիկե
Տյուանա, 158, 169
Տյուրկաստրոն, 19
Տրաբուզոն, 153
Տրայանուպոլիս, 158
Տրապիզոն, 19, 26, 170
Տրիպոլիս, 146
Տրյուպիա, 26
Տրոպաս ամրոց, 97

Յամանդոս (Ծամնդավ), 27, 171, 172
Յասնաբիա (Ծանարֆ), 152
Յերմացու (Սրմանց), 10, 11
Յիլիապերտ, 29

Ցիրոս, Կոստանդնուպոլսի թաղամաս, 112
Փյունիկե, 202
Փոր Ասիա, 164—166
Փոր Հայք, 165, 170, 172
Փոյուգիա, 137, 158, 165, 166
Փոյուգիա Կապատյան, տե՛ս Փոյուգիա Պակատյան
Փոյուգիա Պակատյան, 158, 164
Փոյուգիա Սալուտարիա, 158, 164

Քաղդիա, 170
Քաղկեդոն, 125—127, 158

Օլիմպոս լեռ (Փ. Ասիայի), 138
Օնոպնիկտես գետ, 76
Օպտիմատոն բանակաթեմ, 191
Օպսիկիոն բանակաթեմ, 50, 135, 137, 138, 149, 154—157, 165

Ֆալակրոն ամրոց, տե՛ս Ճաղատ ամրոց
Ֆալակրոն լեռ, տե՛ս Ճաղատ լեռ
Ֆասիանե (Բասեան), 14—16, 18
Ֆասիս գետ, տե՛ս Էրախս
Ֆասիս քաղաք, 158, 159
Ֆավստինուպոլիս, 169
Ֆաւտիլաճոն լեռ, 26
Ֆիլիպե քաղաք, 35
Ֆիլիտուպոլիս քաղաք, 158
Ֆիլոսպատիոն, 45
Ֆրանկիա, 84—86, 154

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՆԴԻՊՈՂ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ասբատոն—ἄβατον, 107
ագոնոթետ—ἀγωνοθέτης, 102
ագրարիոն—ἀγράριον, 28
այիոն—ἄϊστον, 107, 193
ադմիսիոնալիոս—ἀδμισσιονάλιος, 127, 128
ամալիա—ἀμάλια, 100
ամերմումնի—Ἀμερμουμνῆς, 4, 5, 13, 34, 90, 151
անթիպատոս—ἀνθύπατος, 165, 168
անթիպատոս պատրիկ—ἀνθύπατος πατρίκιος, 5, 48, 157
անտիկոնսիստորիոն—ἀντικωνσιστόριον, 127, 129
ապո տես էվքես—ἀπὸ τῆς εὐχῆς, 100
ավգուստա—Αὔγουστα, 131, 143
ատրիկլին—ἀτρίκλινος, 155
արխոնտ—ἄρχων, 165
բանդոն—βάνδον, 25, 156
գալեա—γαλέα, 88, 146, 148, տե՛ս և պեշտեկոնտարներ
գենիկոն—Γενικόν, 63
դեկալիոն—δεκάλιον, 137
դեկուրիոն—δηκουρίων (δικουρίων), 127—129
դեմոկրատներ—δημοκράται, 156
դեմոս—δῆμος, 70, 130, 133, 139
դեոիմոն—δαιτύμων, 43
դիբեոեսիոն—διβητήσιον, 134
դիբլատիոն—διβλάττιον, 137
դիեոտարիոս—διαιτάριος, 138
դիերա—διήρης, 90, 94
դինատներ—δυνατοί, 51
դոմեստիկոս—δομέστικος, 156
դոմեստիկոս (բանակաթեմերի)—δομέστικοι τῶν θεμάτων, 148, 150, 156
դոմեստիկոս (հյուսլատրգիայի)—δομέστικος τῆς ὑπουργίας, 5, 10, 14, 22, 27, 43
դոմեստիկոս (սխոլերի)—δομέστικος τῶν σχολῶν, 48, 70, 72, 79, 131, 135, 144, 155—157
դրոմոնիոն (դրոմոն)—δρομώνιον (δρόμων), 27, 28, 125, 126, 133
դրոմոս—δρόμος, տե՛ս պրոտոնոտարիոս (դրոմոսի), լոգոթետ (դրոմոսի) խարտուլար (օքսեոս դրոմոսի)
դրունգար—δρουγγάριος, 146, 148—150
գրունգար (բանդոնների)—δρουγγάριος τῶν βάνδων, 156
դրունգար (նավատորմիդի)—δρουγγάριος τοῦ πλωΐμου, 20, 27
դրունգար (վիգլայի)—δρουγγάριος τῆς βιγλας, 90
դրունգարոկոմես—δρουγγαροκόμης, 148
դուքս—δούξ, 27, 153, 163
եվտիքոֆորներ—εὐτυχοφόροι, 156
զոստե պատրիկիա—ζωστὴ πατρικία, 156
էնկավխա—ἐγκαυσις, 107
էպարքոս (պրետորյան)—ἔπαρχος πραιτωρίων, 125, 197
էպարքոս (քաղաքի)—ἔπαρχος τῆς πόλεως, 126, 139
էպոպտ—ἐπόπτης, 117, 118, 204
էքսիստ—ἐξισωτής, 117, 118
էքսկուբիտոր (էքսկուբիտոս)—ἐξκούβιτος, -ωρ, 149, 171
էքսպիլատոր—ἐξπιλάτωρ, 201

էքսուսիաստես—ἐξουσιαστής, 15, 19, 152
էքսուսիոկրատոր—ἐξουσιοκράτωρ, 151, 152
իկիկոն—Εἰδικόν, 61
իլլուստրիս—ἰλλούστριος, 124
ինդիկտիոն—ἰνδικτιών, 14, 49, 50, 131, 133, 147, 149, 155
լաբարեսիոս—λαβαρήσιος, 127, 130
լիբելլներ—λίβελλοι, 204
լիտուրգոս—λειτουργός, 107
լոգոթետ (ագելեի)—λογοθέτης τῶν ἀγελῶν, 137
լոգոթետ (դենիկոնի)—λογοθέτης τοῦ γενικοῦ, 117
լոգոթետ (դրոմոսի)—λογοθέτης τοῦ δρόμου, 48, 49, 123
լոգոթետ (ճավուտորմիդի)—λογοθέτης τοῦ πλωΐμου 145
լոխագոս—λοχαγός, 71, 79
լոնգինոս—λογγῖνος, 164
խարտուլար—χαρτουλάριος, 156
խարտուլար (բանակարեմների)—χαρτουλάριοι τῶν θεμάτων, 148, 156
խարտուլար (բարբարոսաց)—χαρτουλάριοι τῶν βαρβάρων, 127, 128
խարտուլար (օրսեոս դրոմոսի)—χαρτουλάριος τοῦ ὀξέως δρόμου, 5
խելանդիոն—χελάνδιον, 146, 147
խիմևսիս—χύμευσις, 107
խորեգոս—χορηγός, 110
խրիսովուլլ—χρυσόβουλλον, 6—8, 16, 17, 25, 26, 150—154, 204
խրիսոտրիկլին—χρισοτρίκλινος, 54, 110, 193
կամինովիգլատորներ—καμινοβιγλάτορες, 201, 202
կամինովիգլիա—καμινοβίγλια, 201
կամպագիա—καμπάγια, 134
կամպոտուբա—καμπότουβα, 134
կանդիդատներ—κανδιδᾶτοι, 128, 129
կատեպան—κατεπάνω, 17, 123, 146, 147
կատեպան (կայսերական գվարդիայի)—κατεπάνω τῶν βασιλικῶν, 123
կարավան—καράβιον, 16
կարավիա—καράβια, 147
կենաիկար—κεντηνάριον, 58, 60, 145, 146
կենտուրիոն—κεντουρίων, 164
կեսար—καῖσαρ, 41—50, 136, 144, 156, 172
կլեյսուր—κλεισοῦρα, 25, 27, 170, 200
կլեյսուրարխ—κλεισουράρχης, 26, 27, 137, 154
կլետորոլոգիոն—κλητορολόγιον, 155
կոլոնա—κολωνός, 170
կոմբարիա—κομβάρια, 87, 88
կոմես—κόμης, 146, 148, 149, 155, 157, 164
կոմես (կորտեի)—κόμης τῆς κόρτης, 148, 150, 156
կոմես (հետերիայի)—κόμης τῆς ἑταιρείας, 156
կոմես (պրիվատներ)—κόμης τῶν πριβάτων, 126
կոմես (սխոլերի)—κόμης τῶν σχολῶν, 156
կոմմերկիարիոս—κομμερκιάριος, 9
կոմմերկիոն—κομμέρκιον, 19, 20, 154
կոնսիստորիոն—κωνσιστώριον, 127—129
կոնսուլ—κόνσουλος (ὕπατος), 166
կորտե—κόρτη, 148, 150, 156
կուբիկուլյարիոս—κουβικουλάριος, 43
կուբուկլիոն—κουβούκλιον, 123, 124, 139
կուրոպալատ—κουροπαλάτης, 5, 7, 8, 14—22, 151, 156
կուրատորիա—κουρατωρία, 204
հեգեմոն—ἡγεμών, 163, 169
հելիակոս—ἡλιακός, 138
հեստիատոր—ἑστιάτωρ, 43
հետերիա—ἑταιρεία, 48, 147, 156
հետերիարխ—ἑταιρειάρχης, 5
հերոն—ἥρων, 143, 144
հեքսագիոն—ἑξάγιον, 153
հիկանատոս—ἱκανᾶτος, 26, 149
հիմատիոն—ἱμάτιον, 20, 137
հյուպարքոս—ὕπαρχος, 56
հյուպարքոս (պրետորյան)—ὕπαρχος τῶν πραιτωρίων, 166
հյուպարքոս (բուլսի)—ὕπαρχος τῆς πόλεως, 166
հյուպոդեկտներ—ὑποδέκται, 197, 198
հյուպուրգիա—ὑπουργία, տես դոմեստիկոս (հյուպուրգիայի)

ճորխարճիր—ὡριάριοι, 197
ճորոլոգիոն—ὡρολόγιον, 134
մագիստրիանոս—μαγιστριανός, 124, 125
մագիստրոս—μάγιστρος (magister militum), 165
մագիստրոս—μάγιστρος, 6, 9, 10, 11, 14, 15, 17, 19—22, 27, 49, 93, 117, 123—133, 136, 139, 157, 192
մանգանարիոս—μαγγανάριος, 147
մանգլավիտ—μαγγλαβίτης, 20, 22, 27, 45, 93
մանդատոր—μανδάτωρ, 156
մետատոն—μητάτον, 137, 147
մերարխոս—μέραρχος, 137
մերիարխ—μεριάρχης, 150, 156
միլիարիսիա—μιλιαρίσια, 6
ճորբելիսիմոս—νοβελίσσιμος, 156
ուսիա—οὐσία, 146
պախտ (պախտոն)—πάκτον (πάχτον), 8, 30
պատրիկ—πατρίκιος, 3—6, 8—10, 14, 15, 17, 19, 20—23, 27, 43, 44, 47, 49, 50, 58, 79, 88, 125, 124, 128 132, 139, 145, 147, 150, 165, 192, 199
պատրիկիա—πατρικία, 9, տես և գոատե պատրիկիա
պատրոն—πατρών, 72
պարակիմոմենոս—παρακοιμώμενος, 6, 47, 49, 131—133
պենտակուխուկլոն—πενταχούβουκλον, 110
պենտեկոնտորներ—πεντηκόντοροι, 88
պիտակիոն—πιττάκιον, 20, 128
պոուլգ—πρωΐς, 8
պրասինոսներ—πράσινοι, 111
պրեպոզիտոս—πραιπόσιτος, 123, 124, 133, 134, 139, 163
պրետորիոն—πραιτώριον, 90
պրինցեպս—πρίγκιψ, 152, 166
պրիտանեյոն—πρυτανεῖον, 63
պրոտատիոն—προστεῖον, 7—9, 101
պրոելևսիմոս—προελευσιμαῖος, 148
պրոեքսիմոս—προέξιμος, 156
պրոխորոն—πρόχρεον, 146
պրոտելատ—πρωτελάτης, 28
պրոտիկտոր—προτίκτωρ, 156
պրոտոասեկրետ—πρωτασηκρήτης, 20
պրոտոպրոեդրեւտիկոս—πρωτοπροεδρευτικός, 148
պրոտոկանցելլարիոս — πρωτοκαγκελλάριος, 148, 156
պրոտոկարաւլներ—πρωτοκάραβοι, 27, 28
պրոտոկենտուրիոս — πρωτοκένταρχος, 148
պրոտոմանդատոր—πρωτομανδάτωρ, 148, 156
պրոտոնոտար (դրոմոսի) — πρωτονοτάριος τοῦ δρόμου, 123
պրոտոսպաթար—πρωτοσπαθάριος, 5, 6, 8, 9, 17, 20, 22—24, 26, 27, 60, 99, 101, 146, 147, 155
պրոտոսպաթար (Ֆիլիայի)—πρωτοσπαθάριος τῆς φιάλης, 27, 28
պրոտոստրատոր—πρωτοστράτωρ, 41, 45, 46, 93
պրոտովանդոֆորոս — πρωτοβανδοφόρος, 148
պրոտովեստիարիոս — πρωτοβεστιάριος, 92, 93, 171
ռեկտոր—ῥαίκτωρ, 155, 157
ռեքս—ῥῆξ, 84—86, 147, 152, 153
ռոճիկ—ῥόγα, 6—8, 62, 66, 145, 146, 148—150, 154, 155, 202
ռուսիա—ῥουσία, 131
սակելլարիոս (կոյսեր)—σακελλάριος τοῦ βασιλέως, 126, 139
սակուրա—σακτούρα, 88
սեբաստոս—σεβαστός, 133, 134
սեկրետիկոս—σεκρετικός, 156
սենատ (ծերակույտ)—σύγκλητος βουλή, 55, 57, 59, 60, 119, 131, 134
սենատոր (ծերակուտական)—συγκλητικός, 44, 46, 50, 123. 124, 133, 139, 156, 193
սենես—σένες, 100
սիլենտիարիոս—σιλεντιάριος, 124, 128—130, 139
սիլենտիոն—σιλέντιον, 127, 130
սինկելլոս—σύγκελλος, 155, 157
սինոսիս—σύνοψις, 64, 197, 198
սխոլարիոս—σχολάριος, 145, 147, 149
սկարամանգիոն (կաստրե)—σκαραμαγγιον καστρίον, 133
սկեպտրոֆոր—σκηπτροφόρος, 156

սկիսատրիա—σκιαστρια, 100
սկրիճիարիոս—σκριναριος, 166
սոլեա—σολαία, 134
սոլիդ—σολδιον, 150—154
սպաթար—σπαθάριος, 17, 126, 156
ստատարեա—σταταραία, 144, 145
ստոա—στοά, 144
ստրատարխ—στρατάρχης, 156
ստրատելատ—στρατηλάτης, 165
ստրատիոտներ—στρατιῶται 203
ստրատոր—στράτωρ, 45
վասիլեոպատոր—βασιλεοπάτωρ, 155, 156
վասիլիկա—βασιλικά, 197, 198
վասիլիկիոն (դամբարանի)—βασιλίκιον, 143
վասիլիկիոն (հանդերձանք)—βασιλίκιον, 137
վասիլիկոս—βασιλικός, 15, 29, 83
վարդուկիոն—βαρδούκιον, 45
վենետներ—βενετοι, 111
վեստիարիոն—βεστιάριον, 110, 165
վեստոսակրա—βεστοσακρα, 129
վեստոսակրանոսներ—βεστοσακρανοι, 129
վիգլա—βίγλα, 202
վիգլատոր—βιγλάτωρ, 200—202
տագմաներ—τάγματα, 60, 72, 80, 131, 137, 149, 203
տագմատիկոս—ταγματικός, 156
տասինակիա (տասինարիոս)—τασινάκια, 202
տասինարիոս (և տասինակիա)—τασινάριος, 202
տարտաններ—ταξάτοι, 15, 96
տարսիարքոս—ταξίαρχος, 71, 79, 163
տերտիոկերիոս—τερτιοκήριος, 128
տոպարքես—τοπάρχης, 178, 184
տոպոտերեսիա—τοποτηρησια, 25
տոպոտերետես—τοποτηρητής, 156
տոպոտերետես (բանակաթեմի)—τοποτηρητὴς τοῦ θέματος, 149
տոպոտերետես (կայսերական նավատորմիլի)—τοποτηρητὴς τοῦ βασιλικοῦ πλωΐμου, 28
տուրմա—τοῦρμα, 21, 25—27
տուրմարխ—τουρμάρχης, 15, 20, 26, 137, 146, 148—150, 156, 166, 203
տուրմարխ (ծովափի)—148
տուրմարխ (վիկտորների)—τουρμάρχης τῶν βικτόρων, 148
տուրմարխատ—τουρμαρχᾶτον, 27
տրապեզիտներ—τραπεζῖται, 202
տրիբուն—τριβοῦνος, 28, 124
տրիերա—τριήρης, 57, 89, 90, 94, 192, 193
տրիկլին—τρίκλινος, 110, 112
ցիցակիոն—τζιτζάκιον, 134
օբոլոս—ὀβολός, 59, 91
օպտիոն (բարբարոսաց)—ὀπτίων τῶν βαρβάρων, 126
օստիարիոս—ὀστιάριος, 123, 124, 128
օֆֆիկիա—ὀφφικια, 156, 157
ֆաբրիկիացիի—οἱ τῶν φαβρικῶν, 126
ֆալարներ—φαλάριοες, 45

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


	էջ.
Կոստանդին Միրանածինը և նրա գրական ժառանգությունը . .	V—LXV
Կայսրության կառավարման մասին, գլուխ 27	3
Կայսրության կառավարման մասին, գլուխ 43	4
Կայսրության կառավարման մասին, գլուխ 44	10
Կայսրության կառավարման մասին, գլուխ 45	13
Կայսրության կառավարման մասին, գլուխ 46	18
Կայսրության կառավարման մասին, գլուխ 50	23
Կայսրության կառավարման մասին, գլուխ 51	27
Կայսրության կառավարման մասին, գլուխ 53	28
Վասիլ Ա Մակեդոնացի կայսեր կենսագրությունը	31
Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին, գիրք Ա . .	121
Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին, գիրք Բ . .	141
Հանակաթեմերի մասին	161
Կոստանդին Միրանածինի շարադրանքը Քրիստոսի անձեռագործ պատկերի մասին	175
Հավելված	195
Ծանոթագրություններ	207
Կայսրության կառավարման մասին	209
Վասիլ Ա կայսեր կենսագրությունը	250
Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին . . .	294
Բանակաթեմերի մասին	316
Քրիստոսի անձեռագործ պատկերի մասին	332
Հավելված	334
Հանալի ծանոթագրություններում օգտագործված հապավումների . .	337
Ցանկեր	345
Անձնանունների	347
Ցեղանունների	354
Տեղանունների	356
Բյուզանդական տերմինների	363

Աշխարհագրական քարտեզներ

I Փոքրասիական բանակաթեմերի տեղադրությունը VII—IX դդ.՝ **H. Gelzer-ի** Die Genesis der byzantinischen Themenverfassung, Leipzig, 1899, *աշխատության հիման վրա քարտեզը կազմել է* **G. Ostrogorsky-ն**՝ *Տե՛ս Նրա* Histoire de l'Etat Byzantin, Paris, 1956, *աշխատության 136-րդ էջում)*։

II Բյուզանդական կայսրության արևելյան սահմանները շուրջ 960 թ.՝ (Քարտեզի հեղինակ **E. Honigmann:** *Տե՛ս Նրա* Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363 bis 1071 nach griechischen, arabischen, syrischen und armenischen Quellen, Bruxelles, 1935, *աշխատության մեջ)*։

Կոստանդնուպոլիս
Բրիւսսէլ
Ժընեւ
Պաշկեդն
Կիւիկոս
Նիկոմեդիա
Կլավդիոպոլիս
ՕՏՏՄԱՆՑՈՒ
ՊԱՓԼԱԳՈՆԻԱ
Սինոպ
Ամասիա
Ամրոսի
Տրապիզոն
ԽԱՂՏԻՔ
Եւդոկիա
ԿՈՂՈՆԻԱ
ԲՈՒԿԵԼԱՐՆԵՐՈՒ
Սեբաստոպոլիս
Դազիմոն
Ա Ր Մ Ե Ն Ի Ա
Ամասիա
Անկիւրա
Ք Ա Ռ Ա Ս Ա Ն Դ
Ե Ր Կ Ի Ր Ն Ե Ր Ի
Մեքսատիա
Տաւրիկե
Կեսարիա
Մելիտենե
Տիանա
Զապետրա
Գերմանիկիա
Սամոսատ
Ամիդ
Անազարբա
Մոպսուեստրա
Ադանա
Տարսոն
Եդեսիա
Մծբին
Անտիոք
Ա Ս Ի Ա
Ա Ր Ա Բ Ի Ա
Ա Ն Տ Ի Ո Ք Ի Ա
Ա Ր Ա Ս Ա Ն Ի Ա
Ա Ս Ո Ր Ի Ք
Ա Ս Ո Ր Ի Ք
Ա Ս Ո Ր Ի Ք



FINES ORIENTALES IMPERII BYZANTINI C ANNUM 960.

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատ. խմբագիր՝
Ա. Հ. ՇԱՂԱՄՅԱՆ
Նկարչ. ձևավորումը՝
Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆԻ
Տեխ. խմբագիր՝
Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ՝
Փ. Հ. ՄԱԴԱՆՅԱՆ

ՎՏ 03323 Թ2Հ 1167 Հրատ. 3072 Պատվեր 648 Տպաքանակ 3100՛

Հանձնված է արտադրության 9/VII 1969 թ., ստորագրված է
տպագրության 23/II 1970 թ., տպագր. 27,37 մամուլ + 4
ներդիր, հրատ. 24,13 մամուլ, թուղթ № 1, 60 × 90¹/₁₆։ Գինը 1 ռ. 95 կ.։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի
հրատարակչության էջմիածնի տպարան։

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

	էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
	13	15 ն.	սէրուժ	սերուժ
	197	7 ն.	ՍԿԻՉԲԸ Ջ	ՍԿԻՉԲԸ Ջ ՏԱՒԻ
	237	24 ն.	Le	La
Ներդիր	XXXII		Վասիլ I և կոստանդին	Ռոմանոս I Լեկապենոս և կոստանդին VII Ծիրանածին
Ներդիր	XXXIII		Ռոմանոս I Լեկապենոս և կոստանդին VII Ծիրանածին	Վասիլ I և կոստանդին